ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԵՆԴՐՈՒՇ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ 1920 ԹՎԱԿԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԵՆԴՐՈՒՇ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ 1920 ԹՎԱԿԱՆԻՆ

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Խ 988

Հրատարակվում է ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորությամբ

Խմբագիրներ՝ Հ. Բ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ռ. Լ. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ,
ՅՈՒ. Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Խուրշուդյան Լ. Ա.,
Խ 988 Հայաստանի բաժանումը 1920 թվականին/Լ. Ա. Խուրշուդյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2017, 352 էջ + 1 էջ ներդիր:

Հեղինակը ներկայացնում է 1920 թ. աշխարհաքաղաքական բարդ իրավիճակը, ուրվագծում քաղաքական զարգացումների միտումները և այդ համապատկերի վրա շարադրում Հայաստանի առաջին Հանրապետության կործանման գործընթացը:

Մենագրության մեջ օգտագործված և համադրված են հայկական, ռուսական և թուրքական աղբյուրներ, որոնց մի մասն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ:

Նախատեսվում է մասնագետների, ուսանողության և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2256-8

© ԵՊՀ հրատ., 2017 թ.
© Խուրշուդյան Ռ. Լ., 2017 թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայաստանի առաջին Հանրապետությունը հռչակվել է 1918 թվականի մայիսի 28-ին և գոյատևել մինչև 1920 թվականի դեկտեմբերի 2-ը: Այն արարվեց Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերում, որոնց շնորհիվ հայ ժողովուրդը կարողացավ դարեր անց վերականգնել անկախ պետականությունը իր բոլոր անհրաժեշտ հատկանիշներով:

Չլիներ Առաջին Հանրապետությունը՝ Հայաստանը Խորհրդային Միության կազմում չէր ստանալու միութենական հանրապետության կարգավիճակ, ԽՍՀՄ տրոհումից հետո չէր կարող հռչակվել անկախ հանրապետություն և չէր իրականանա հայ ժողովրդի փափագը՝ անկախ պետականության կերտումը:

Առաջին Հանրապետության պատմության հիմնախնդիրները մշտապես գտնվում են ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական ուսումնասիրությունների կիզակետում: Այդ ավանդույթը ձևավորվել և արմատավորվել է շնորհիվ ականավոր գիտնական, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի երկարամյա վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պրոֆեսոր Լենդրուշ Խուրշուդյանի (1927-1999):

Լ. Խուրշուդյանը ստեղծել է առանձնակի պատմագիտական դպրոց-ուղղություն, որին բնորոշ է ընդունված կարծրատիպերից զուրկ, հայեցակարգային, նորարարական մոտեցումներ հայոց պատմության լուսաբանման և վերաիմաստավորման հարցերում:

Հայաստանի առաջին Հանրապետության 100-րդ տարելիցին ընդառաջ՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետը հանրությանն է ներկայացնում Լ. Խուրշուդյանի «Հայաստանի բաժանումը 1920 թվականին» հիմնարար աշխատությունը: Լինելով հեղինակի աշակերտն ու պատմագիտական հայացքների հետևորդը՝ հատուկ զերծ ենք մնում գրքի վերաբերյալ որևէ գնահատականներից՝ հնարավորություն տալով ընթերցողին անաչառորեն արժևորելու սույն մենագրությունը:

Էդիկ Մինասյան
ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան,
պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

«Պատմություն – դա անավարտ վեպ չէ, այլ՝ չավարտված ճակատամարտ»: Նժդեհյան այս թևավոր ասույթը թերևս մեծ մասամբ վերաբերում է նաև պատմագիտությանը: Վերջինիս էջերը նույնպես յուրատեսակ ռազմադաշտ են, որտեղ անհաշտ պայքար են մղում պատմաբանների եկող-անցնող սերունդները:

Պատմագիտական վեճի հին ռազմաբեմ է հանդիսանում մասնավորապես Հայաստանի առաջին Հանրապետության համար բախտորոշ 1920 թվականի ռազմաքաղաքական և դիվանագիտական պատմության հիմնախնդիրը: Երկար ժամանակ այն կուսակցականացված և գաղափարականացված էր, ինչը փակում էր բոլոր ուղիները հիշյալ հիմնախնդրի անաչառ գիտական լուսաբանման համար:

Միայն վերջին տարիներին այդ բնագավառում նկատվեց առաջընթաց. գրվեցին աշխատություններ, որոնցում հիմնահարցի շուրջ վեճը քաղաքական ոլորտից տեղափոխվեց գիտական հարթություն, և վճռորոշ հանգամանքներ դարձան ուսումնասիրողի գիտական մոտեցումն ու մասնագիտական հմտությունը:

Նման ուսումնասիրությունների թվին է պատկանում հանգուցյալ ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդյանի «Հայաստանի բաժանումը 1920 թվականին» գիրքը: Մենագրությունում հեղինակը, օգտագործելով և համադրելով հայկական, ռուսական և թուրքական աղբյուրներ, որոնց մի մասն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ, կիրառելով ուրույն հայեցակարգային մոտեցում, վերարտադրում է 1920 թ. բարդ աշխարհաքաղաքական իրավիճակը, ուրվագծում քաղաքական զարգացումների հիմնական ուղղությունները, բացահայտում բոլշևիկների և քեմալականների ծավալապաշտական ծրագրերը, դրանց իրագործման մեխանիզմները և այդ համապատկերի վրա շարադրում անկախ պետականության անկման գործընթացը:

Կարելի է համաձայնվել կամ համակարծիք չլինել հեղինակի հայեցակարգի հետ, ընդունել կամ մերժել նրա հիմնավորումներն ու եզրահանգումները, բայց չի կարելի չարձանագրել, որ կատարված է մեծ և լուրջ գիտական աշխատանք:

Գրքի ստեղծման հիմնական աշխատանքները կատարվել են 1989 -1992 թթ.: Հեղինակը շարադրանքը հասցրել է մինչև Հայաս-

տանի խորհրդայնացումը ներառյալ: Աշխատանքի 6-րդ գլխի «Ալեքսանդրապոլի պայմանագիրը. Արևմտյան Հայաստանի, Կարսի, Արդահանի և Սուրմալուի շրջանների անցումը Թուրքիային» խորագիրը կրող վերջին ենթագլուխը Լ. Խուրշուդյանը չէր շարադրել՝ ակնկալելով արտասահմանյան արխիվներում նոր նյութերի հայտնաբերում: Նույն պատճառով չգրվեց սկզբնապես չնախատեսված, բայց աշխատանքի ընթացքում անհրաժեշտ դարձած «Հայաստանի բաժանման իրավական ակտերի ընդունումը» խորագրով 7-րդ գլուխը: Վերջինս պետք է ներկայացներ Նախիջևանի, Ղարաբաղի ու Զանգեզուրի համար մղված պայքարը ըստ փուլերի և Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ու Կարսի 1921 թ. հոկտեմբերի 13-ի պայմանագրերի վերլուծությամբ տրամաբանական ավարտին հասցներ հիմնախնդրի շարադրանքը:

1998 թ. վերջին գիրքն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ բոլոր նյութերն ի մի էին բերվել: Բայց վաղաժամ մահը հեղինակին թույլ չտվեց իրագործել մտածածը: Այդ ամենով հանդերձ, հրատարակության ներկայացված աշխատանքն անավարտ գրքի տպավորություն չի թողնում և իր կուռ կառուցվածքով ամբողջական գործ է ներկայացնում: Այն տպագրության նախապատրաստելիս գիտակցաբար ձեռնպահ ենք մնացել ավելորդ ու անհարկի միջամտություններից՝ փորձելով հարազատ մնալ հեղինակի ուրույն ոճին և ինքնատիպ մտածելակերպին:

Գրքի առաջին հրատարակությունից (2002 թ.), որի տպաքանակը վաղուց ամբողջովին սպառված է, անցել է 15 տարի, սակայն այն, ըստ առաջնույն, պահանջարկված է: Նկատի ունենալով, որ հանրության մոտ առկա է մեծ հետաքրքրություն ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ, կապված մեր աշխարհաքաղաքական հարևանների կայսերապաշտական միտումների արդի դրսևորումների հետ, նաև ելնելով նրանից, որ 2017 թ. լրանում է անվանի պատմաբանի 90-ամյակը, ձեռնամուխ ենք լինում Լ. Խուրշուդյանի սույն աշխատության վերահրատարակմանը:

Ռուբեն Խուրշուդյան
Պատմական գիտությունների թեկնածու

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

Օսմանյան կայսրությունն իր հզորության տարիներին, բնականաբար, զբաղված էր նոր նվաճումներով և ոչ թե պետության ամբողջականության պահպանման խնդրով, որին այն ժամանակ վտանգ չէր սպառնում: Սակայն, երբ Օսմանյան կայսրությունը սկսեց վայրէջք ապրել, երբ հրապարակ իջավ Արևելյան հարցը, երբ նվաճված ժողովուրդները դուրս եկան ազգային-ազատագրական պայքարի, երբ միջազգային հարաբերությունների օրակարգի մեջ մտավ Հայկական հարցը, թուրքերը, խիստ անհանգստացած, սկսեցին ուղիներ որոնել կայսրության ամբողջականությունը պահպանելու համար: Այդ նպատակով մշակվեց թուրք ազգայնականության նոր գաղափարախոսությունը՝ օսմանիզմը, որի էությունը կայսրության ոչ թուրք ժողովուրդների թուրքացումը և ձուլումն էր:

Միասնական հայրենիք, միասնական թուրքական պետություն, միասնական օսմանյան ժողովուրդ – այսպիսին էր օսմանիզմի պաշտոնական գաղափարախոսների կողմից առաջ քաշված ծրագրի նպատակը:

Սակայն ժամանակի ընթացքում Թուրքիայի կառավարող շրջանները համոզվեցին, որ պատմության ընթացքն անխուսափելիորեն տանում է դեպի կայսրության քայքայմանը, նվաճված ժողովուրդների ազգային զարթոնքին, ազգային անկախ պետությունների ստեղծմանը: Պարզ դարձավ, որ օսմանիզմի քաղաքականության կենսագործումը չի կարող արգելակել ազգային-ազատագրական պայքարի այն հզոր վերելքը, որը սկիզբ էր առել կայսրությունում: Օսմանիզմի գաղափարախոսությունը նոր պայմաններում քննություն չբռնեց:

Օսմանիզմը Օսմանյան կայսրության նվաճված ժողովուրդների ձուլման, դանդաղ ոչնչացման ծրագիր էր, իսկ 19-րդ դարի վերջին քառորդում ծայր առած ազգային-ազատագրական պայքարի հզոր ալիքը ոչնչացնելու համար անհրաժեշտ էին հիմնահարցը լուծելու ավելի արմատական միջոցներ: Թուրքիայի տիրապետող շրջանները կայսրության տարածքային ամբողջակա-

նությունը պահպանելու համար պետք է մշակեին միանգամայն նոր ազգային քաղաքականության հայեցակարգ, որի միջոցով հնարավոր կդառնար պահպանել կայսրության տարածքների անձեռնմխելիությունը:

Ահա այսպիսի պատմական պայմաններում է ծնունդ առնում Օսմանյան կայսրությունում ազգային, իհարկե, առաջին հերթին Հայկական հարցը, եղեռնի միջոցով լուծելու հայեցակարգը, որի հեղինակը Աբդուլ Համիդն էր:

Եթե սկզբում Աբդուլ Համիդը հույս ուներ Հայկական հարցը լուծել հայերին ձուլելու միջոցով, ապա ավելի ուշ եկավ այն հետևության, որ Հայկական հարցը պետք է լուծել՝ ֆիզիկապես ոչնչացնելով հայերին:

Պատմագիտական գրականության մեջ ընդունված է հայկական եղեռնի կենսագործումը կապել միայն երիտթուրքերի և պանթուրքիզմի քաղաքականության հետ: Այդ կարծիքը մեզ հիմնավորված չի թվում: Օսմանիզմի, այսինքն՝ ձուլման քաղաքականությունից եղեռնի քաղաքականությանն անցնելը կապված չէ միայն երիտթուրքերի և պանթուրքիզմի հետ: Հայկական եղեռնի կենսագործման քաղաքականությունը սկսել է կենսագործվել շատ ավելի վաղ՝ Աբդուլ Համիդի կողմից, դեռևս 19-րդ դարի վերջերից, ավելի ճիշտ՝ 1890-ական թվականների սկզբներից: Միայն 1895-1896 թթ. հայկական ցեղասպանությանը զոհ գնաց շուրջ 300 հազար մարդ: 18 տարի շարունակ, 1890-1908 թթ. Աբդուլ Համիդը Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ շրջաններում կազմակերպում էր հայերի զանգվածային կոտորածներ: 100 հազարավոր հայեր հեռանում էին արտասահմանյան երկրներ, հարյուր հազարներ՝ ընդունում մահմեդականություն, թուրքանում: Տեղի էր ունենում արևմտահայության եղեռն, երկիրը հայազրկվում էր:

Աստիճանաբար հայերի ցեղասպանության գաղափարին են հանգում նաև երիտթուրքերը, որոնք ընդունեցին պանթուրքիզմի գաղափարախոսությունը և այն, 1908 թ. իշխանության գլուխ գալուց հետո, բարձրացրին պետական քաղաքականության մակարդակի:

Պանթուրքիզմի գաղափարախոսության համաձայն՝ պետք է ստեղծվեր Միացյալ և Անկախ Թուրանի կամ Մեծ Թուրանի թուրքական պետությունը, որի կազմում պետք է ընդգրկվեին Բալկաններից մինչև Մանջուրիա ընկած և թուրքալեզու բնակչություն ունեցող տարածքները:

Պանթուրքական պետություն ստեղծելու համար առաջին հերթին պետք է ոչնչացվեին հայ ժողովուրդը և Հայաստանը (և՛ Արևմտյան, և՛ Արևելյան), որոնք սեպի նման խրվել էին Թուրքիայի և Ադրբեջանի միջև՝ արգելակելով Մեծ Թուրանի ստեղծմանը: Հետևաբար, նախ անհրաժեշտ էր ապահովել թուրքական կայսրության ամբողջականությունը, ոչնչացնել արևմտահայությանը, այնուհետև ձեռնամուխ լինել Արևելյան Հայաստանի և կովկասահայության ոչնչացմանը՝ Միացյալ և Անկախ թուրանական պետություն ստեղծելու համար:

Աբդուլ Համիդի կողմից գործնականում սկսված, բայց դեռ պաշտոնապես պետական գաղափարախոսության մակարդակի չբարձրացված հայկական եղեռնի վարդապետությունը երիտթուրքերը փաստորեն դարձրին պանթուրքիզմի անկյունաքարերից մեկը, պետական քաղաքականություն, որը հետագայում, իշխանության գլուխ գալուց հետո, նույնությամբ որդեգրեց Մուստաֆա Քեմալը:

Պանթուրքիզմից բխող առաջին խնդիրը՝ արևմտահայության եղեռնը, պետք է կենսագործեր թուրքական պետությունը, իսկ երկրորդը՝ արևելահայության և կովկասահայության ոչնչացումը՝ Թուրքիան և Ադրբեջանը միասին: 1915 թվականի Մեծ եղեռնով Թուրքիան կենսագործեց պանթուրքիզմի առաջին առաջադրանքը: Արևմտահայության մեծ մասը ոչնչացված էր, Արևմտյան Հայաստանը՝ հայաթափված: 1918-1919 թվականներին սկսվում է արևելահայության և կովկասահայության եղեռնի ծրագրի իրագործումը թուրք-ադրբեջանական կանոնավոր և ոչ կանոնավոր գինված ուժերի կողմից: 1918 թվականի հունվարի վերջերին, խախտելով Երզնկայի զինադադարը, թուրքական զորքերը գրավում են Արևմտյան Հայաստանը, ներխուժում Արևելյան Հայաստան ու Անդրկովկաս և մինչև Սարդարապատ կազմակերպում հայության զանգվածային ջարդեր: 1918 թ. սեպտեմբերին Բաքվում թուրք-մուսավաթական ուժերի կողմից կազմակերպվում է շուրջ 30 հազար հայերի ջարդ: 1918 թ. հոկտեմբերի վերջերին թուրքական զորքերը հեռանում են Անդրկովկասից: Նրանց գործը շարունակում են մուսավաթականները և անօրինական կերպով Անդրկովկասում մնացած թուրքական առանձին զինված խմբերը:

1919 թվականից աստիճանաբար Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը սկսում է իր ձեռքում կենտրոնացնել Մուստաֆա Քեմալը, որի առաջնահերթ խնդիրներից մեկն է դառ-

նում Հայաստանի Հանրապետության ոչնչացման հարցը: Հրապարակայնորեն մերժելով պանթուրքիզմը, Մ. Քեմալը իր բոլոր ջանքերը լարեց այդ գաղափարախոսության կենսագործման հիմնական պայմաններից մեկի՝ հայկական պատնեշի ոչնչացման համար:

1920 թվականի ապրիլի 23-ին Անկարայում բացվում է Թուրքիայի Ազգային մեծ ժողովը, որը ստեղծում է կառավարություն՝ Մուստաֆա Քեմալի ղեկավարությամբ: Սուլթանի և նրա կառավարության բոլոր որոշումներն ու կնքած պայմանագրերը հայտարարվեցին ուժը կորցրած: Մ. Քեմալը իր ձեռքը վերցրեց երկրի ղեկավարությունը:

Քեմալականները դեռևս Էրզրումի (1919 թ. հուլիսի 10-23) և Սվազի (Սեբաստիայի) (1919 թ. սեպտեմբերի 4-12) կոնգրեսներում մշակել էին իրենց ազգային ծրագիրը, որի հիմնական սկզբունքները հրատարակվել են վերոհիշյալ կոնգրեսներում ընդունված որոշումների և մանիֆեստների ձևով:

Էրզրումի կոնգրեսի որոշման քաղաքական մասի առաջին կետում ասվում է. «Փոքր Ասիայի արևելյան վիլայեթները, Տրապիզոնի վիլայեթը և Ջանիկի սանջակը կազմում են մի միասնական, անբաժանելի ամբողջություն և մտնում Օսմանյան կայսրության մեջ, որպես նրա անբաժանելի մասը:

Տրապիզոնի վիլայեթը Ջանիկի սանջակի հետ միասին, ինչպես և Էրզրումի, Սվազի, Դիարբեքիրի, Խարպուտի (Խարբերդի – Լ. Խ.), Վանի և Բիթլիսի վիլայեթները, որոնք անվանվում են Արևելյան Անատոլիայի վիլայեթներ և այս վիլայեթների մեջ մտնող բոլոր անկախ սանջակները, չեն կարող ոչ մի ձևով, ոչ մի պատրվակով և ոչ մի պատճառաբանությամբ անջատվել մեկը մյուսից: Դրանք բոլորը միասին կազմում են մի ամբողջություն...»[1]:

Որոշման երկրորդ կետում արձանագրված է հետևյալը. «Մեր տարածքի ամեն մի գրավում և ամեն կարգի միջամտություն մեր գործերին դիտելով որպես ձգտում՝ ուղղված հունական կամ հայկական համայնքի ստեղծմանը, մենք առաջ ենք քաշում ինքնապաշտպանության ու փոխադարձ աջակցության սկզբունքը»[2]:

Էրզրումի կոնգրեսի վերջին օրն ընդունվում է Մանիֆեստ, որում ամփոփ շարադրվում է ընդունված որոշումների բովանդակությունը:

---

[1] **Мустафа Кемаль**, Путь новой Турции, том 1, М., 1929, с. 374.

[2] Նույն տեղում:

Մանիֆեստի առաջին կետում նորից ընդգծվում է, որ Արևմտյան Հայաստանը Օսմանյան կայսրության անբաժանելի մասն է: Այդ մասին Մանիֆեստում ասվում է. «Տրապիզոնի վիլայեթը, Ջանիկի սանջակը, ինչպես նաև Էրզրումի, Սվազի, Դիարբեքիրի, Խարպուտի, Վանի, Բիթլիսի վիլայեթները և այդ վիլայեթների մեջ մտնող վարչական շրջանները կազմում են միասնական ամբողջություն և ոչ մի պատրվակով չեն կարող անջատվել Օսմանյան կայսրությունից»[1]:

Սվազի կոնգրեսը, կանգնած մնալով Էրզրումի կոնգրեսի որոշման դիրքերում, աչքի է ընկնում իր ավելի ընդգծված հակահունական և հակահայկական դիրքորոշմամբ: Սվազի կոնգրեսի ընդունած որոշման մեջ այդ մասին ասվում է. «Մենք որոշել ենք հնարավոր բոլոր ուժերով, մինչև արյան վերջին կաթիլը, համատեղ պաշտպանել մեր հայրենիքն ամեն կարգի ներխուժումներից և, հատկապես, նրա տարածքի վրա հունական կամ հայկական պետություն ստեղծելու ձգտումներից»[2]:

Սվազի կոնգրեսը ևս ընդունում է Մանիֆեստ, որտեղ ամփոփ կերպով արտահայտություն են գտնում վերը շարադրված որոշումների հիմնական դրույթները:

Ավելի ուշ, 1919 թ. նոյեմբերի 17-ին, Մ. Քեմալը, խոսելով Հայաստանին տարածքային զիջումներ անելու անընդունելիության մասին, Մահմուդ փաշային հեռագրել է. «Ինչպես երևում է Էրզրումի և Սվազի կոնգրեսների որոշումներից, ազգը ոչ մի թիզ հող չի զիջի Հայաստանին, և եթե կառավարությունն անգամ հակվի նման տխուր պարտավորության, ապա ազգը կորոշի պաշտպանել իր սեփական իրավունքները, ինչպես այդ մասին հայտարարել է աշխարհին»[3]:

Էրզրումի և Սվազի կոնգրեսների որոշումների ու մանիֆեստների սկզբունքային դրույթների հիման վրա կազմվում է մի ամփոփիչ փաստաթուղթ, որը «Ազգային ուխտ» անունով Թուրքիայի խորհրդարանի կողմից ընդունվեց 1920 թ. հունվարի 28-ին: Այն քեմալական Թուրքիայի ազգային քաղաքականության ծրագիրն էր, որում Հայաստանի հետ առնչվող հարցերը գրավում էին առանցքային տեղ:

Ընդհանուր առմամբ կրկնելով Էրզրումի և Սվազի կոնգրեսների որոշումների հիմնական դրույթները, այնուամենայնիվ,

---

[1] Նույն տեղում, էջ 381:

[2] Նույն տեղում, էջ 272:

[3] **Мустафа Кемаль**, указ. соч., том II, М., 1932, с. 120.

«Ազգային ուխտի» առաջին երկու կետերը պարունակում էին նոր լուծումներ:

«Ազգային ուխտի» առաջին և երկրորդ կետերում ասվում է.

«1. Օսմանյան կայսրության այն տարածքների ճակատագիրը, որոնք բնակեցված են բացառապես արաբական մեծամասնությամբ, և որոնք 1918 թ. հոկտեմբերի 30-ի զինադադարի պահին գրավված են եղել թշնամական բանակների կողմից, պետք է որոշել տեղական ազգաբնակչության ազատ արտահայտված կամքի համաձայն: Մնացած տարածքների բոլոր մասերը, լինեն դրանք զինադադարով գծված սահմանի այս թե այն կողմը, որոնք բնակեցված են օսմանյան մահմեդական մեծամասնությամբ, որը կապված է կրոնական ու ցեղային կապերով, ոգեշնչված է փոխադարձ հարգանքի ու զոհաբերությունների ձգտումներով և լցված է իր ազգային ու սոցիալական իրավունքները, ինչպես և տեղական պայմանները հարգելու վճռականությամբ, կազմում են մի ամբողջություն, որը ոչ փաստական և ոչ էլ իրավական տեսակետից երբեք բաժանման ենթակա լինել չի կարող:

2. Ինչ վերաբերում է երեք լիվաներին (Կարսի, Արդահանի և Բաթումի շրջաններին – Լ. Խ.), որոնք իրենց ազատագրումից հետո հանրաքվեի միջոցով արդեն արտահայտվել են մայր հայրենիքին միանալու օգտին, անհրաժեշտության դեպքում կարելի է այդ վայրերում նոր ազատ հանրաքվե անցկացնել»[1]:

Ինչպես տեսնում ենք, քեմալականները, նախ՝ հաշվի նստելով ստեղծված իրողության հետ, անգլիական զորքերի կողմից գրավված բնակչության արաբական մեծամասնությամբ տարածքներին հարկադրված ինքնորոշման, այսինքն՝ անկախության իրավունք են տալիս: Երկրորդ՝ Ազգային ուխտում քեմալականներն առաջին անգամ հայտնում են այն մասին, որ Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանները Թուրքիայի անբաժան մասն են կազմում:

Ավելի ուշ, 1920 թ. ապրիլի 24-ին, Ազգային մեծ ժողովում Քեմալը, բնութագրելով Էրզրումի և Սվազի կոնգրեսները, Հայաստանի հետ ունեցած սահմանների մասին ասել է. «Ինչպես Ձեզ հայտնի է, Էրզրումում, հուլիսի 23-ին, տեղի է ունեցել Անատոլիայի արևելյան վիլայեթների ազգային կոնգրեսը...

Էրզրումի կոնգրեսում, ամենից առաջ, լուծվել է սահմանների հարցը: Համաշխարհային պատերազմի ավարտից հետո, պարտության հետևանքով մեր հայրենիքի շատ կարևոր մասեր

[1] **Мустафа Кемаль**, указ. соч., том III, М., 1934, с. 252-253.

զավթվել էին թշնամիների կողմից: Ելնելով իր նյութական և իրական հնարավորություններից, մեր ազգը պետք է ուրվագծեր այնպիսի սահմաններ, որոնք ի վիճակի լիներ պաշտպանելու սեփական ուժերով: Կոնգրեսը որոշեց այդ սահմանները. որպեսզի հեշտ լինի դրանք պաշտպանել, կոնգրեսը որոշեց, որ մեր ազգային սահմանները կլինեն 1918 թ. հոկտեմբերի 30-ի զինադադարով որոշված սահմանները: Հնարավոր է՝ որոշ գործընկերներ բավարար չափով տեղյակ չեն, թե որոնք են մեր երկրի նոր սահմանները: Շմտնելով մանրամասնությունների մեջ կարող եմ ասել հետևյալը. արևելյան սահմանն ընդգրկում է երեք սանջակները»[1]: Քեմալը նկատի ունի Կարսի, Արդահանի և Բաթումի սանջակները:

«Էրզրումի կոնգրեսից հետո,– շարունակում է Քեմալը,– 1919 թ. սեպտեմբերի 4-ին տեղի ունեցավ Սվազի կոնգրեսը՝ Թուրքիայի բոլոր վիլայեթների ներկայացուցիչների մասնակցությամբ: Էրզրումի կոնգրեսը ներկայացնում էր միայն Արևելյան Անատոլիան, իսկ Սվազի կոնգրեսում ներկա էին նաև Արևմտյան Անատոլիայի և Ռումելիայի ներկայացուցիչները: Այդ նշանակում է, որ այստեղ ներկայացված էր ամբողջ երկիրը, և արտահայտված էր հայրենիքի ամբողջ բնակչության կարծիքը:

Սվազի կոնգրեսը ամբողջությամբ, առանց փոփոխությունների, ընդունեց Էրզրումի կոնգրեսի բոլոր որոշումները»[2]:

Կարսի, Արդահանի և Բաթումի սանջակների վերաբերյալ Քեմալը որոշ նոր տեղեկություններ է տալիս նաև օգոստոսի 14-ին, հայտնելով հետևյալը.

«Մայիսի 30-ին և հունիսի 4-ին Արևելյան ճակատի հրամանատարը Կոմիսարների խորհուրդ է մտցրել երեք առաջարկ. առաջին՝ ապահովել Էրզրումում գտնվող մեր պատվիրակության շտապ մեկնումը Մոսկվա՝ Կարս-Բաքու երկաթուղով, երկրորդ՝ միջոցներ ձեռք առնել Հայաստանում մուսուլմանական բնակչության կոտորածները դադարեցնելու համար, երրորդ՝ քանի որ հայկական զորքերը հարմար դեպքում կփորձեն գրավել Էրզրումը, մեր զորամասերը պետք է այդ երեք սանջակների տարածքում գրավեն Սարիղամիշը և Սողանլուի լեռնաշղթան՝ իր լեռնանցքներով, որպեսզի հայկական բանակի դեմ ունենան շահավետ ռազմավարական դիրքեր: Այդ բոլոր երեք առաջարկները և

---

[1] **Кемаль Ататюрк**, Избранные речи и выступления, М., 1966, с. 47.
[2] Նույն տեղում, էջ 49:

հատկապես վերջինը, քննարկվել են Կոմիսարների խորհրդում և գտնվել նպատակահարմար: ***Ձեր բարձր ժողովը Կոմիսարների խորհրդին արդեն լիազորել է հարմար ժամանակ գրավել այդ երեք սանջակները*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.): Դրա հիման վրա հրամանատարի առաջարկն ընդունվել էր, և հունիսի 6-ին մենք Արևելյան բանակի հրամանատարին հրամայել ենք ձեռնամուխ լինել ռազմական գործողությունների նախապատրաստմանը»[1]:

Շարունակելով իր միտքը, Քեմալը հայտնում է, որ տասը օր հետո, հունիսի 16-ին, երբ բանակը զբաղված էր հարձակման նախապատրաստություններով, ինքը ստանում է Չիչերինի նամակը, որտեղ հայտնվում է, որ Հայաստանի, Իրանի և Թուրքիայի սահմանների հարցը կարող է լուծվել միայն դիվանագիտական բանակցությունների ճանապարհով, Խորհրդային Ռուսաստանի միջնորդությամբ: Չիչերինի նամակներից ու գրություններից, հայտնում է Ազգային մեծ ժողովին Քեմալը, պարզ էր դառնում, որ «Խորհրդային կառավարությունը մեր հետագա հարձակումը հայերի վրա համարում է անցանկալի և աննպատակահարմար:

Քանի որ մեր կողմից վերոհիշյալ երեք սանջակների տարածքի ցանկացած մասի գրավումը չպետք է դիտվեր որպես հարձակում Հայաստանի վրա, մենք արգելք չէինք տեսնում ռազմական գործողություններ սկսելու, որի համար արդեն կար համապատասխան որոշում (ընդգծումը մերն է – Լ. Խ.): Այդ պատճառով էլ մենք Արևելյան ճակատի հրամանատարին հրաման տվեցինք՝ ուժեղ թափով շարունակել ռազմական գործողությունները: Սակայն մի քանի օր հետո նոր պաշտոնական հաղորդագրությունից հայտնի դարձավ, որ գնացքով Կարսի վրայով մեզ մոտ է գալիս ռուսական դեսպանությունը: Այդ կապակցությամբ մենք հրամայեցինք մեր Արևելյան բանակին դադարեցնել ռազմական գործողությունները այն պայմանով, որպեսզի դրանք վերսկսենք ռուսական դեսպանության և Կարսում գտնվող մեր պատվիրակության միջև շփման հաստատումից հետո: Դա հունիսի 20-ին էր: Սա էր մեր Արևելյան բանակի գործողությունների դադարեցման պատճառը»[2]:

Այսպիսով, քեմալական Թուրքիան «Ազգային ուխտով» հայտնում էր աշխարհին, որ Արևմտյան Հայաստանը, Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանները Թուրքիայի անբաժան մասն են

[1] Նույն տեղում, էջ 99.
[2] Նույն տեղում, էջ 99-100:

կազմում, որ ոչ մի թիզ հող չի զիջվի հայերին և թույլ չի տրվի այդ տարածքում ստեղծել հայկական պետություն:

Դրա հետ միասին, ինչպես ցույց են տալիս բերված նյութերը, քեմալական Թուրքիան Կարսի, Արդահանի և Բաթումի սանջակ-ները «Ազգային ուխտով» ոչ միայն հայտարարել էր Թուրքիայի անբաժան մաս, այլև արդեն ռազմական գործողություններ էր սկսել դրանք գրավելու համար:

Հարց է առաջանում, բավարարվո՞ւմ էր արդյոք Թուրքիան Արևմտյան Հայաստանով, Կարսի, Արդահանի և Բաթումի տա-րածքներով, թե պետք է շարունակեր իր նվաճողական քաղա-քականությունը Հայաստանի Հանրապետության նկատմամբ: Նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիշյալ տա-րածքների նվաճումը Թուրքիայի նվազագույն ծրագիրն էր: Կար նաև առավելագույն ծրագիր՝ ամբողջ Անդրկովկասի կամ նրա մի շարք կարևորագույն շրջանների գրավումը:

1920 թ. սկզբներին Մ. Քեմալի կողմից ղեկավարվող Ներկայա-ցուցչական կոմիտեն, որը Անկարայի գործադիր իշխանությունն էր, որոշում է.

«Արևելյան ճակատում անցկացնել պաշտոնական կամ ոչ պաշտոնական զորահավաք և սկսել զորքեր կենտրոնացնել՝ Կովկասյան արգելքը թիկունքից ոչնչացնելու համար»[1]: Կովկաս-յան արգելք հասկացության տակ Մ. Քեմալը նկատի ուներ Հայաստանի Հանրապետությունը:

1920 թ. մարտի 16-ին Քեմալը հեռագրում է Քյազիմ Կարա-բեքիրին. «Խնդրում ենք մեզ հաղորդել Ձեր բարձր տեսակետները արևելքի վրա հարձակում կատարելու վերաբերյալ վաղուց ի վեր խոսքի առարկա եղող գաղափարի գործադրման հնարավորու-թյան և ժամանակի մասին»: Կարաբեքիրը պատասխանում է, որ ցուրտ է, ձյուն, ուստի և դեռ պետք է նախապատրաստվել հար-ձակման, մինչև պայմանները դառնան բարենպաստ: Քեմալը հա-մաձայնում է Կարաբեքիրի հետ, գրելով. «Ամբողջությամբ համա-միտ ենք Ձեր տեսակետներին»[2]: Ընդ որում, փետրվար-մարտ ա-միսներին Հայաստանի վրա հարձակման ժամկետ էր համար-վում մայիս ամիսը:

Պատերազմի հարցը 1920 թ. սկզբներին սկզբունքորեն արդեն լուծված էր: Քեմալը պատերազմական նախապատրաստություն-

---

[1] Նույն տեղում, էջ 252-253:

[2] **Մ. Արզումանյան,** Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973, էջ 309:

ներ էր տեսնում Հայաստանի Հանրապետության վրա հարձակվելու համար: Ի՞նչ նպատակ էր հետապնդում նա. նախ՝ իրականացնել իր նվաճողական նվազագույն ծրագիրը՝ գրավել Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանները, երկրորդ՝ եթե հնարավոր է, գրավել ամբողջ Անդրկովկասը, դժվարությունների դեպքում՝ սահմանափակվել Նախիջևանը, Լեռնային Ղարաբաղը և Զանգեզուրը Ադրբեջանին միացնելով: Ընդ որում, նրան հայտնի էր, որ Ռուսաստանը ևս ունի Անդրկովկասի նվաճման ծրագիր: Ռուսաստանի ակտիվության դեպքում Քեմալը, բնականաբար, կհամաձայնվեր Անդրկովկասի մասնատմանը: Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ ամբողջ Անդրկովկասը գրավելու միտումն առանձնապես երևում է Քյազիմ Կարաբեքիրի գրագրություններում: Ինքը՝ Քեմալը, դեմ չլինելով Անդրկովկասի գրավմանը, ինչպես երևում է փաստաթղթերից, ավելի իրական էր համարում Անդրկովկասի բաժանումը Թուրքայի և Ռուսաստանի միջև:

Ստեղծված պատմական իրավիճակում, երբ անողոք պայքար էր ընթանում Արևմուտքի և Խորհրդային Ռուսաստանի միջև, պարզ էր, որ Թուրքիայի ճակատագիրը անխզելիորեն կապվում է բոլշևիկյան կայսրության հետ:

Անգլիական կառավարությունը «Ազգային ուխտի» ընդունումը օգտագործելով որպես պատրվակ, 1920 թվականի մարտի 16-ին ռազմակալեց Ստամբուլը: Սուլթանի կառավարությունը դիմադրություն ցույց չտվեց: Շուտով հրապարակվեց սուլթանի հրամանը պատգամավորների պալատը ցրելու մասին: Քեմալը և նրա կողմնակիցները հայտարարվեցին խռովարարներ: Օրակարգ մտավ ազգային կառավարություն ստեղծելու հարցը, որը և պետք է իր վրա վերցներ Անտանտի դեմ պայքարը կազմակերպելու, «Ազգային ուխտը» կենսագործելու խնդիրները: Ապրիլի 23-ին Անկարայում բացվում է Թուրքիայի Ազգային մեծ ժողովը, որը և ստեղծեց կառավարություն՝ Մ. Քեմալի ղեկավարությամբ:

Մ. Քեմալը լավ էր հասկանում, որ նման պայմաններում, առանց Խորհրդային Ռուսաստանի օգնության, հնարավոր չի լինի հաջողության հասնել արևմտյան տերությունների դեմ մղվող պայքարում և պարտության մատնել Հունաստանին ու Հայաստանին: Այդ պատճառով էլ նա ուղիներ էր որոնում Խորհրդային Ռուսաստանի և նրա ղեկավար Վ. Լենինի հետ կապեր հաստատելու համար:

1920 թվականի ապրիլին Յուսուֆ Քեմալը Մուստաֆա Քեմալին անձնական խոսակցության ժամանակ հարցնում է. «Արդյոք

ռուսները մեր մասին ի՞նչ են մտածում, ռուսների հետ շփում ունեցե՞լ եք»: Մ. Քեմալը պատասխանում է, որ ըստ իրեն հասած լուրերի՝ բոլշևիկները բարյացակամ տրամադրություններ ունեն Թուրքիայի նկատմամբ, սակայն ցարդ որևէ պաշտոնական շփում չի եղել ռուսների հետ: Հենց այդ խոսակցության ընթացքում էլ որոշվում է մի բարձրաստիճան պատվիրակություն ուղարկել Մոսկվա[1]:

Մինչ այդ պատվիրակության Մոսկվա մեկնելը, Մ. Քեմալը ապրիլի 26-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի անունից հետևյալ ծրագրային նամակն է ուղարկում Վ. Լենինին.

«Առաջին. մենք պարտավորություն ենք վերցնում միավորելու մեր ամբողջ աշխատանքը, մեր բոլոր ռազմական գործողությունները ռուսական բոլշևիկների հետ, որոնք նպատակ ունեն պայքարել իմպերիալիստական կառավարությունների դեմ և նրանց իշխանությունից ազատագրել բոլոր ճնշվածներին:

Երկրորդ. եթե խորհրդային ուժերը նախատեսում են ռազմական գործողություններ սկսել Վրաստանի դեմ կամ դիվանագիտական ճանապարհով, իրենց ազդեցության շնորհիվ, հարկադրել Վրաստանին մտնել դաշինքի մեջ և ձեռնարկել Կովկասի տարածքից անգլիացիների վտարումը, թուրքական կառավարությունը իր վրա է վերցնում ռազմական գործողությունները իմպերիալիստական Հայաստանի դեմ և պարտավորվում է հարկադրել Ադրբեջանական Հանրապետությանը՝ մտնելու խորհրդային պետությունների շրջանակի մեջ (ընդգծումը մերն է – Լ. Խ.):

Երրորդ. առաջին հերթին, որպեսզի վռնդենք իմպերիալիստական ուժերին, որոնք գրավել են մեր ժողովրդով բնակեցված մեր տարածքը, և որպեսզի ամրապնդենք մեր ներքին ուժերը իմպերիալիզմի դեմ ընդհանուր պայքարը շարունակելու համար, մենք Խորհրդային Ռուսաստանից խնդրում ենք որպես առաջին օգնություն մեզ տալ հինգ միլիոն թուրքական լիր ոսկով, զենք և զինամթերք այն քանակով, որը կճշտվի բանակցությունների ժամանակ, և բացի դրանից որոշ ռազմատեխնիկական միջոցներ, սանիտարական նյութեր և նույնպես սննդամթերք մեր զորքերի համար, որոնք խորհրդային իշխանության պահանջներին հա-

[1] "Yön" Haftalık gazete, yıl 3, sayı 88,4 Aralık, 1964, Ankara, s. 7.

մաձայն պարտավոր կլինեն գործել արևելքում (Հայաստանի դեմ – Լ. Խ.)»[1]:

Այս նամակը Մոսկվա է հասնում հունիսի 1-ին: Նամակի հետ ուղարկվում է «Ազգային ուխտը»:

Ինչպես տեսնում ենք, Քեմալը Լենինին առաջարկում է Անդրկովկասը բաժանել Ռուսաստանի և Թուրքիայի միջև: Համաձայն այդ ծրագրի՝ Ռուսաստանը պետք է գրավեր Վրաստանը, իսկ Թուրքիան՝ Հայաստանը, և որպես այդ զիջման համար փոխհատուցում Քեմալն առաջարկում էր ստիպել Ադրբեջանին մտնելու Ռուսաստանի կազմի մեջ, հույս ունենալով, որ այդ տարածքի հետ ստանալը հետագայում դժվար չի լինի: Պանթուրքիզմը հասնում էր իր նպատակին: Վերանում էր հայկական պատնեշը, և ստեղծվում էին բարենպաստ պայմաններ Մեծ Թուրանի թուրքական պետության ստեղծման համար:

Մ. Քեմալը Ռուսաստանից պահանջում էր նաև զենք, զինամթերք և ոսկի՝ միջազգային իմպերիալիզմի դեմ պայքարելու համար: Բայց գաղտնիք չէր, որ այդ զենքն առաջին հերթին ուղղվելու էր Հայաստանի և Հունաստանի դեմ, որոնց սահմաններում թուրքերն արդեն խոշոր զորամիավորումներ էին կենտրոնացնում:

Թուրքական այս ծրագիրը շարադրելիս առաջանում է մի կարևոր հարց. Քեմալը միթե՞ այնպիսի ազդեցություն ուներ մուսավաթական Ադրբեջանի վրա, որպեսզի կարողանար նրան ստիպել հրաժարվել իր անկախությունից և մտնել Խորհրդային Ռուսաստանի կազմի մեջ: Դեպքերի ընթացքը ցույց տվեց, որ Քեմալի առաջարկն անհիմն չէր: Դեռ 1919 թ. նոյեմբերի 29-ին Կ. Պոլսում կնքվել էր թուրք-ադրբեջանական գաղտնի պայմանագիր, որն ուղղված էր Հայաստանի Հանրապետության դեմ[2]: Իսկ 1920 թ. ապրիլի 15-ին Էրզրումում, Ադրբեջանի խորհրդայնացման նախօրյակին, Ադրբեջանի զինվորական նախարարի օգնական Ալի Աղա Շիխլինսկին և թուրքական 15-րդ կորպուսի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրը կնքեցին մի նոր պայմանագիր, որն ի նկատի ուներ բոլշևիկների բարեկամությունը և նույնպես ուղղված էր Հայաստանի դեմ: Պայմանագրի 5-րդ հոդվածով

---

[1] Архив внешней политики Российской Федерации (այսուհետև՝ АВП РФ), ф. 132, оп. 3, п. 2, д. 3, л. 3.

[2] **Ս. Վրացյան,** Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի միջև, Պեյրութ, 1953, էջ 41:

Ադրբեջանի կառավարությունը խոստանում էր շարունակել նպաստել Ռուսաստանի և քեմալականների մերձեցմանը, և որ «անհրաժեշտության դեպքում ինքն էլ պետք է հարի այդ միությանը»:

7-րդ հոդվածն ուղղված էր Հայաստանի դեմ, որում ասված է. «Անատոլուի ու Ռումելիայի Իրավունքների Պաշտպանության Կոմիտեն վճռական կերպով խոստանում է, որ այն պարագային, երբ Հայաստանը հարձակում գործի Ադրբեջանի վրա, և Ադրբեջանի կառավարությունը վճռական կերպով խոստանում է, որ այն պարագային, երբ Թուրքիայի արևելյան շրջանները կտրվեն և կմիացվեն Հայաստանին, այս երկու դեպքում էլ համաձայնության եկած երկու կողմերը պաշտպանելու են միմյանց շահերը և գործելու են որպես միացած բանակ»[1]:

Համաձայն թուրքական պատվիրակության ղեկավար Կարաբեքիր փաշայի տվյալների, այդ պայմանագրին միացել էին նաև բոլշևիկները: Կարաբեքիրն այդ կապակցությամբ գրել է. «Մեր, Ադրբեջանի և բոլշեվիկների միջև կնքված պայմանների հիման վրա, մեր սպաների, բժիշկների և պաշտոնյաների մեծ թիվ գնացել է Ադրբեջան: Բոլշևիկները մեզ առաջարկեցին անհապաղ պատերազմական գործողություններ սկսել հայկական սահմանների վրա՝ հայերի դեմ, Կիլիկիայի սահմաններում՝ ֆրանսիացիների դեմ: Դաղստանում կազմված Կանաչ բանակը Էնվերի, Նուրիի և Խալիլի ղեկավարությամբ պետք է ապրիլի սկզբներին աշխատի մտնել Բաքու: Ադրբեջանի զորքերը պետք է ցույց տան կեղծ դիմադրություն, որպեսզի կարողանան իրենց արդարացնել Դաշնակիցների հանդեպ: Միանալով Կանաչ բանակին՝ Ադրբեջանական զորքերը պետք է առիթ որոնեն ընդհարվելու Հայաստանի հետ և Անատոլիայում գտնվող թուրք զորքերի հետ միասին անցնեն Հայաստանի սահմանները և սկսեն զինվորական գործողություններ Հայոց Հանրապետության դեմ»[2]:

Ահա այսպիսին էին քեմալական Թուրքիայի ծրագրերը, որոնց մեծ մասի լուծումը կախված էր Խորհրդային Ռուսաստանի հետ ունենալիք հարաբերությունների բնույթից: Առանց Խորհրդային Ռուսաստանի օգնության Թուրքիան անխուսափելիորեն կճզմվեր Անտանտի աքցանի մեջ: Այդ պատճառով էլ քեմալական Թուրքիայի ղեկավարությունը օգտագործում էր բոլոր հնարավոր

[1] Նույն տեղում, էջ 42:
[2] Նույն տեղում, էջ 42- 43:

միջոցները Ռուսաստանի հետ հակաանտանտյան դաշինք կնքելու համար:

Սակայն, եթե Թուրքիայի՝ Անտանտի դեմ ուղղված պայքարը վայելում էր բոլշևիկյան Ռուսաստանի համակրանքը, ապա, ինչպես ցույց են տալիս փաստաթղթերը, կոմունիստական դիվանագիտությունը դեռևս չէր մշակել իր վերջնական, հստակ ծրագիրը Թուրքիայի հողային պահանջների և Անդրկովկասում տարածքային հարցերը լուծելու բնագավառում վարվելիք քաղաքականության հիմնական սկզբունքների շուրջը:

Քեմալականների իշխանության գլուխ գալով Թուրքիան դառնում էր կարևոր միջազգային գործոն: Եվ Խորհրդային Ռուսաստանը պետք է որոշեր, թե ստեղծված պատմական նոր իրավիճակում այդ գործոնն ինչպիսի դեր է խաղալու ռուսական դիվանագիտության շրջագծում: Հասկանալի է, որ թուրքական գործոնի դերը Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ կարող էր վերջնականապես ճշտվել միայն ռուս-թուրքական և Ռուսաստանի ու Անդրկովկասի հանրապետությունների բարձր մակարդակի բանակցություններից հետո միայն: Պետք է փոխհամաձայնեցվեին բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի նվաճողական ծրագրերը: Եվ անկասկած է, որ բոլշևիկյան կայսրությունն իր բոլոր ջանքերը պետք է գործադրեր Անդրկովկասը նվաճելու և Թուրքիային տրվելիք ռազմական օգնության փոխարեն տարածքային զիջումներ ստանալու, նրա ախորժակը չափավորելու համար:

Այս հիմնահարցերի տեսադաշտի վրա հասկանալի է դառնում, թե ինչու Թուրքիայի և Անդրկովկասի նկատմամբ Խորհրդային Ռուսաստանի արտաքին քաղաքականության սկզբունքները վերջնականապես ձևավորվեցին և ամբողջական հայեցակարգի վերածվեցին միայն 1920 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին:

Մ. Քեմալը դեռևս 1920 թ. ապրիլի 26-ի նամակով ակնկալում էր Վ. Լենինից ստանալ Թուրքիային հուզող հարցերի պատասխանը: Գ. Չիչերինի նույն թվականի հունիսի 3-ի նամակը, որը գրվել էր Լենինի ցուցումներով, տարածքային հարցերում ոչ մի որոշակի պատասխան չէր պարունակում և միաժամանակ զգացնել էր տալիս «Ազգային ուխտի» դրույթները ոչ լիովին բաժանելու մասին: Նամակում Չիչերինն ընդգծում էր, որ խորհրդային կառավարությունը հաճույքով ծանոթացավ թուրքական նոր կառավարության արտաքին քաղաքականության հիմնական

սկզբունքներին: Այնուհետև փաստաթղթում ութ կետերով Չիչերինը շարադրում է Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական դրույթները, որոնք, ըստ նրա, պարունակվում են Քեմալի ապրիլի 26-ի նամակում և «Ազգային ուխտում»: Մեզ հետաքրքրող 4-րդ կետը Չիչերինը ներկայացնում է հետևյալ կերպ. «Ազգային մեծ ժողովի կողմից ընդունված որոշումը՝ Թուրքահայաստանին, Քրդստանին, Լազիստանին, Բաթումի մարզին, Արևելյան Թրակիային և թուրք-արաբական խառը բնակչություն ունեցող բոլոր տարածքների բնակչությանը տրված իրավունքը սեփական ճակատագիրը որոշելու մասին: Խորհրդային կառավարությունը, բնականաբար, դրա տակ հասկանում է, որ այդ վայրերում պետք է անցկացվի ազատ հանրաքվե ժամանակին իրենցից չկախված հանգամանքներով հայրենիքը հարկադրաբար թողած փախստականների և վտարանդիների մասնակցությամբ, որոնք պետք է վերադարձվեն հայրենիք»[1]:

Վերը տեսանք, որ համաձայն «Ազգային ուխտի»՝ Թուրքահայաստանը, Քրդստանը և Լազիստանը համարվում են Օսմանյան կայսրության անբաժան մասեր և այդ տարածքներում հանրաքվե անցկացնելու մասին, բնականաբար, ոչ մի խոսք լինել չէր կարող: Համաձայն «Ազգային ուխտի»՝ հանրաքվե «անհրաժեշտության դեպքում» կարող էր անցկացվել Կարսի, Արդահանի և Բաթումի շրջաններում, այն էլ միայն միջազգային ուժերի ճնշման առկայության պայմաններում:

Հասկանալի է, որ «Ազգային ուխտի» դրույթներից տարբերվող, սեփական «մեկնաբանությամբ» ներկայացնելով Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնադրույթները, Չիչերինը դիտավորյալ տեղ էր թողնում մասնավորապես Թուրքահայաստանի հարցի շուրջ Քեմալի հետ հետագայում բանակցություններ վարելու համար: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության կազմում գտնվող այն տարածքներին, որոնց նկատմամբ Թուրքիան ոտնձգություններ է ցուցաբերում, Չիչերինը պարզապես այդ հարցերին չի անդրադառնում, քանզի դրանք Ռուսաստանի ռազմավարական հետաքրքրությունների շրջանակներում էին գտնվում և, հետևաբար, անընդունելի էին:

Չպետք է անուշադրության մատնել նաև այն, որ Չիչերինն անպատասխան է թողնում Քեմալի ապրիլի 26-ի նամակով ար-

[1] Документы внешней политики СССР (այսուհետև՝ ДВП СССР), т. 2, М., 1958, с. 554-555.

ված առաջարկը՝ Անդրկովկասը Ռուսաստանի և Թուրքիայի միջև բաժանելու մասին:

Այն հանգամանքը, որ Խորհրդային Ռուսաստանը հիշյալ ժամանակահատվածում դեռ վերջնականապես չէր ձևավորել Անդրկովկասի տարածքային հարցերում իր պետական հայեցակարգը, ցույց է տալիս նաև հետևյալ ակնառու փաստը: Վրացական կառավարությունը, Բաթումի մարզը համարելով Վրաստանի անբաժան մասը, Չիչերինի հունիսի 3-ի նամակի կապակցությամբ բողոք է ներկայացնում Ռուսաստանի կառավարությանը: Հունիսի վերջերին Գ. Օրջոնիկիձեին և Ս. Կիրովին հղված հեռագրերում Չիչերինը հայտնում է, որ հունիսի 3-ի նամակում Խորհրդային Ռուսաստանը իր սկզբունքային համաձայնությունն է հայտնել Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների մասին, որն ամենևին չի նշանակում, թե Ռուսաստանը պաշտպանում է Բաթումում հանրաքվե անցկացնելու առաջարկը: Ռուսաստանի կառավարությունը գտնում է, որ Բաթումը Վրաստանի անբաժան մասն է[1]:

Ռուսական արտաքին գործերի ժողկոմատի այդ և հետագա շրջանի գրագրությունները ցույց են տալիս, որ բոլշևիկյան Ռուսաստանի ղեկավարությունը դեռ վերջնականապես չէր որոշել Արևմտյան Հայաստանի ճակատագրի հարցը: Բնականաբար, Արևմտյան Հայաստանի ճակատագիրը լուծելիս բոլշևիկները պետք է ելնեին ռուսական կայսրության շահերից: Տարածքային հարցերում Ռուսաստանը և Թուրքիան ունեին լուրջ տարաձայնություններ: Սակայն տարածքային հակասություններն իրենց ամբողջ մերկությամբ բացահայտվում են ավելի ուշ, իսկ առայժմ առաջին պլան են գալիս Անտանտի դեմ պայքարում համագործակցելու խնդիրները:

Այդ պատճառով էլ ռուս-թուրքական հարաբերություններն աստիճանաբար սկսում են կանոնավորվել: Թուրքիայի Ազգային մեծ ժողովում խոսելով Խորհրդային Ռուսաստանի հետ ունեցած հարաբերությունների մասին, Մ. Քեմալը 1920 թ. հուլիսի 8-ին ասել է. «Ես դեռ ավելի առաջ եմ ասել որ մեզ հաջողվել է շփման մեջ մտնել բոլշևիկների հետ: Վերջին ժամանակներս մեր հարաբերություններն ավելի ամուր և ավելի գործնական են դարձել: Մենք Խորհրդային հանրապետության հետ հաստատել ենք պաշտոնա-

[1] Российский государственный архив социально-политической истории (այսուհետև՝ РГАСПИ), ф. 64, оп. 1, д. 5, л. 258.

կան գրագրություն: Այդ բավականին հաջող ընթացող գրագրության բովանդակությունը ձեզ հայտնի է: Խորհրդային հանրապետությունը մեզ խոստացել է ցանկացած նյութական օգնություն ցույց տալ, որի կարիքը մենք ունենք: Նա մեզ խոստացել է զենք, թնդանոթներ և փող: Եթե մենք մինչև այժմ չենք կարողացել օգտվել այդ նյութական օգնությունից, ապա դրանում ոչ մենք ենք մեղավոր և ոչ էլ Խորհրդային հանրապետությունը: Պատճառը թերևս կայանում է այն թյուրիմացությունների մեջ, որոնք վերջին ժամանակներս տեղ գտան Կովկասում: Այժմ այդ թյուրիմացությունները մոտ են լրիվ վերացման»[1]:

Ինչպես տեսնում ենք, հուլիսի սկզբներին Քեմալն ընդհանուր առմամբ գոհ էր բոլշևիկյան Ռուսաստանի հետ ունեցած հարաբերությունների առկա վիճակից: Բայց նա լավ էր հասկանում, որ Արևմուտքի դեմ պայքարելու համար Թուրքիային անհրաժեշտ է Ռուսաստանի հետ ունենալ ավելի սերտ ու ամուր և, որ ամենակարևորն է, փոխօգնության դաշինք:

Այդ նպատակին հասնելու համար Քեմալը որոշում է՝ դեռևս ապրիլի 26-ի իր նամակի պատասխանը չստացած, իրականացնել այդ նամակի հիմնական դրույթներից մեկը՝ ստիպել Ադրբեջանին կամավոր, առանց դիմադրության, որի մասին խոսվում է Կարաբեքիրի վերը հիշատակված նամակում, մտնել Ռուսաստանի կազմի մեջ: Հասկանալի է, որ Քեմալի նման քայլը պետք է հարկադրեր Ռուսաստանին իր հերթին զիջումներ անելու Թուրքիային՝ Հայաստանի հարցում: Այդ քայլին դիմելիս Քեմալը նկատի ուներ նաև այն հանգամանքը, որ ռուսական զորքերն արդեն մոտեցել են Ադրբեջանի սահմաններին, և այդ հանրապետության նվաճման հարցը մի քանի օրվա խնդիր էր դարձել:

Եվ իրոք, 1920 թվականի ապրիլի 27-ի գիշերվա ժամը 12-ի մոտ Ադրբեջանի խորհրդարանը որոշում ընդունեց իշխանությունը բոլշևիկներին հանձնելու մասին: Ապրիլի 28-ին Ադրբեջանը հռչակվեց Խորհրդային Հանրապետություն: Ադրբեջանական բանակը, որը կռվում էր Լեռնային Ղարաբաղը բռնազավթելու համար, փաստորեն առանց դիմադրության անցնում է նոր իշխանության կողմը: Կատարվում է Քեմալի ծրագիրը, Ադրբեջանը խաղաղ ձևով հանձնվում է Ռուսաստանին:

Խորհուրդների Համառուսաստանյան 8-րդ համագումարին տրված տարեկան հաշվետվության մեջ Գ. Չիչերինը հայտնում է.

[1] "Международная жизнь", М., 1963, N 11, с. 148.

«Քեմալականները մեզ հետ հարաբերությունների մեջ էին մտել Ադրբեջանի միջոցով, որտեղ նրանց համակիրների մի խումբ աջակցել է հեղաշրջմանը և ռուսական կարմիր զորքերի հրավիրմանը ադրբեջանական հեղափոխական կառավարության կողմից»[1]: Օրջոնիկիձեն և Կիրովը մայիսի 4-ին հեռագրում են Լենինին. «Բաքվի հեղափոխության օգտին բավականին ակտիվ դեր է կատարել թուրքական զինվորների և սպաների ջոկատը, որը կտրել է մուսավաթական կառավարության փախուստի ճանապարհը Բաքվից»[2]: Օրջոնիկիձեն և Կիրովը Լենինին հատուկ հայտնում են թուրքական ջոկատի դերի մասին, որպեսզի հետագայում Թուրքիայի և հակահայկական գործունեության կենտրոն դարձած Ադրբեջանի համար ինչքան կարելի է շատ զիջումներ կորզեն Մոսկվայից:

Ադրբեջանի խորհրդայնացմանն անդրադարձավ նաև Քեմալը, ասելով հետևյալը. ***«Խորհրդային հանրապետության կողմից ցուցաբերված նախաձեռնությունն արտահայտվեց նրանում, որ Կովկաս՝ Արևելյան ռազմաճակատ ուղարկվեցին 10-րդ և 11-րդ բանակները: Մեր ազդեցիկ աջակցությամբ և օգնությամբ այդ բանակները դյուրությամբ հաջողեցին անցնել Հյուսիսային Կովկասը և մտան Ադրբեջան: Ադրբեջանցիները ժամանած զորքերին դիմավորեցին լիակատար հանգստությամբ: Խորհրդային բանակները Հայաստանի և Վրաստանի սահմաններում ձեռնարկեցին անհրաժեշտ ռազմական և ռազմավարական միջոցներ և դրա հետ մեկտեղ ձեռնամուխ եղան մեզ հետ անմիջական կապ ստեղծելուն*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.)»[3]:

Վրաստանի մենշևիկյան կառավարությունը մտադիր էր զինված օգնություն ցույց տալ մուսավաթական կառավարությանը, լավ հասկանալով, որ Ադրբեջանից հետո ռուսական զորքերի կողմից նվաճվելու է նաև Վրաստանը: Սակայն այդ օգնությունը ցույց չտրվեց, որի պատճառը Վրաստանի Սահմանադիր ժողովում ապրիլի 30-ին Ն. Ժորդանիան բացատրեց հետևյալ կերպ. «Ցերեկվա ժամը մեկին մենք լուր ստացանք, որ բոլշևիկները մտել են Խաչմաս, իսկ երեկոյան ժամը յոթին նրանք արդեն Բալաջարի մոտ էին, այսինքն՝ վեց ժամում նրանք անցել էին 100 մղոն, միայն այդ ժամանակ մենք հասկացանք, թե բանն ինչումն

---

[1] ДВП СССР, т. 2, с. 724.
[2] РГАСПИ, ф. 85, оп. 13, д. 12, л. 1-5.
[3] **Кемаль Ататюрк,** նշվ. աշխ., էջ 102.

է: Մենք ասացինք, բոլշևիկները գնում են ճեպընթաց գնացքի արագությամբ, առանց կռիվների, նշանակում է՝ Ադրբեջանի համաձայնությամբ: Բոլշևիկները եկան աննշան ուժերով, երկու զրահագնացքով: Մեծ ուժեր չէին պետք զրահագնացքները գրավելու և բոլշևիկներին հետ շպրտելու համար, բայց քանի որ այդպիսի ցանկություն չկար, այդ պատճառով էլ բոլշևիկների մուտքը Ադրբեջան վերածվեց սովորական զբոսանքի»[1]:

Այսպիսով, կատարվեց այն, ինչը Մ. Քեմալը 1920 թ. ապրիլի 26-ին գրված իր նամակում առաջարկել էր Լենինին: Ռուսաստանի և Թուրքիայի փոխադարձ ճնշումների տակ, Ադրբեջանն առանց կռվի նվաճվեց բոլշևիկների կողմից: Դրա փոխարեն Թուրքիան իրավունք էր ստանում հարձակվելու Հայաստանի վրա և Ռուսաստանի հետ կիսելու նրա տարածքները, ստանալու ռազմական օգնություն, իսկ Ադրբեջանը, կորցնելով անկախ պետականությունը, պետք է ստանար Նախիջևանը, Լեռնային Ղարաբաղը և Զանգեզուրը:

Սակայն հասկանալի է, որ զոհաբերելով Ադրբեջանը, Թուրքիան Ռուսաստանի հետ դեռ պետք է համաձայնեցներ Հայաստանի վրա հարձակվելու և նրա տարածքները բաժանելու գործնական ծրագիրը: Հիմնահարցը լուծված էր սկզբունքորեն, բայց այն դեռ չէր ընդունել գործնական բնույթ:

Ահա թե ինչու, քեմալական Թուրքիան սկսեց տենդագին պատրաստվել պատերազմի: Հայաստանի Հանրապետության նկատմամբ հողային պահանջներով հանդես եկավ նաև, այժմ արդեն խորհրդային, Ադրբեջանը՝ հարազատ մնալով մուսավաթական Ադրբեջանի հակահայկական նվաճողական քաղաքականությանը:

Մինչև Թուրքիայի և Ադրբեջանի որոշակի նվաճողական ծրագրերի իրականացման շարադրանքին անցնելը, անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել Քեմալի վերը բերված այն խոսքերի վրա, որ 10-րդ և 11-րդ բանակները մի կողմից Հայաստանի, մյուս կողմից էլ Վրաստանի դեմ հարկ եղած զինվորական միջոցներ ձեռնարկեցին: Այսինքն՝ Խորհրդային Ռուսաստանի բանակն արդեն ձեռնամուխ էր եղել այն խնդիրների կատարմանը, որոնք առաջ էր քաշել Քեմալը իր ապրիլի 26-ի ծրագրային նամակում: Ընդ որում, շատ դեպքերում ռուսական բանակի նվաճողական

[1] Стенографический отчет Учредительного собрания, заседание от 30 апреля 1920 г., Тифлис, 1920, с. 4.

քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ այնպես էր ներկայացվում, որ կարծեք թե 11-րդ բանակը վարում է ինքնուրույն նվաճողական քաղաքականություն և չի կատարում Մոսկվայի հրահանգները:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է ընդգծել, որ բանակը ենթարկվում էր Գ. Օրջոնիկիձեին, որը հլու հնազանդ կատարում էր Վ. Լենինի և մանավանդ Ի. Ստալինի անձնական ցուցումները: Հունիսի վերջին Լենինը հեռագրում է Օրջոնիկիձեին. «Ձեր վրա է դրվում Ադրբեջանի ամբողջ արտաքին ու ներքին քաղաքականության ղեկավարումը և Պարսկաստանի, Հայաստանի ու Վրաստանի վերաբերյալ Կենտկոմի ու Արտգործժողկոմատի դիրեկտիվների հսկողությունը»[1]:

Պատահական չէ, որ Ադրբեջանի խորհրդայնացման հաջորդ օրը 11-րդ բանակի հրամանատարությունը և Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը նոտայով դիմում են Հայաստանի Հանրապետության կառավարությանը, հայտարարելով, որ Լեռնային Ղարաբաղը և Զանգեզուրը Խորհրդային Ադրբեջանի անբաժան մասն են հանդիսանում: Հայաստանի Հանրապետությունից պահանջվում էր անհապաղ զորքերը հանել այդ տարածքներից: Պահանջը չկատարելու դեպքում Ադրբեջանը պետք է համարվեր պատերազմական վիճակում Հայաստանի հետ:

Ի պատասխան այդ նոտայի, Հայաստանի Հանրապետության արտաքին գործոց նախարարությունը մայիսի 12-ին արեց հետևյալ հայտարարությունը. «Ադրբեջանում ձեր կառավարության հաստատման երկրորդ օրն իսկ Հայաստանին նշված առիթով հղված վերջնագրային նոտան իր հարձակողական բնույթով ոչնչով չէր տարբերվում նախկին մուսավաթական կառավարության նույնանման հայտագրերից: Եթե նաև նկատի առնենք հավաստի տեղեկությունները թուրքական իմպերիալիզմի առաջնորդների՝ Կիլիկիայում կոտորածների կազմակերպիչ Մուստաֆա Քեմալի և մյուսների հետ ձեր կառավարության կապի, Կովկասում ու Թուրքիայում կազմակերպված հայերի հրեշավոր կոտորածներով իրենց արդեն վարկաբեկած Էնվերի, Խալիլի և Նուրի փաշայի ձեր երկրի պետական կյանքին մասնակցության վերաբերյալ, ապա բնական է, որ Հայաստանի կառավարությունը չի կարող Ադրբեջանի ներկայիս կառավարությանը ճանաչել ժո-

[1] **Վ. Ի. Լենին,** Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ), հ. 51, էջ 264:

ղովրդավարական և սոցիալիստական»[1]:

Քանի որ Հայաստանի Հանրապետությունը հրաժարվում էր կատարել Ադրբեջանի պահանջները, երկու հանրապետությունները 1920 թվականին գտնվում էին չհայտարարված պատերազմի պայմաններում: Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը փորձում է 11-րդ բանակի ուժերով գրավել Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը:

Մ. Քեմալը ևս օրակարգի մեջ մտցրեց Հայաստանի վրա հարձակվելու խնդիրը: Մայիսի վերջերին կամ հունիսի սկզբներին Թուրքիայի կառավարությունը որոշում է ընդունում Հայաստանի վրա հարձակվելու մասին: Քեմալն այդ մասին գրել է. «Մենք որոշում ընդունեցինք Հայաստանի վրա արշավելու մասին: 1920 թ. հունիսի 9-ին մենք հրամայեցինք արևելյան շրջաններում անցկացնել զորահավաք, 15-րդ զինվորական կորպուսի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշան նշանակվեց Արևելյան ճակատի հրամանատար»[2]:

Քեմալը փաստորեն իրագործում էր իր կողմից ղեկավարվող Ներկայացուցչական կոմիտեի 1920 թվականի սկզբներին ընդունած որոշումը՝ Արևելյան ճակատում պաշտոնական կամ ոչ պաշտոնական զորահավաք անցկացնելու, բոլշևիկների հետ համաձայնության գալու և Հայաստանի դեմ համատեղ հարձակողական գործողություններ ծավալելու մասին:

Թուրք ռազմական պատմաբան Զևդեթ Քերիմն իր «Դասախոսություններ անկախության համար մղած թուրքական պայքարի մասին» գրքում գրում է, որ Թուրքիայի համար այդ ժամանակ առաջնային նշանակություն էր ստացել Արևելյան ճակատը, որտեղ պետք է լուծվեին հետևյալ երկու կենսական հարցերը.

ա) «Ոչնչացնել հայկական բանակը և հայկական պետությունը, որը թարախապալարի նման դեռ մնացել է մեր երկրի մարմնի վրա»:

բ) «Արագացնել կապերի ստեղծումը բոլշևիկների հետ, ստեղծել բարենպաստ պայմաններ մեր ներքին և արտաքին քաղաքականության համար»[3]:

Բոլշևիկյան Ռուսաստանի հետ անմիջական տարածքային

---

[1] Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов, Ереван, 1992, с. 463.

[2] **Мустафа Кемаль**, նշվ. աշխ., հ. III, էջ 117:

[3] Նույն տեղում, էջ 314:

կապերի ճանապարհն իր աշխարհագրական դիրքով փակում էր Հայաստանը: Ռուսաստանը, գրավելով Ադրբեջանը, մոտեցել էր Հայաստանի սահմաններին: Անհրաժեշտ էր ոչնչացնել Հայաստանը՝ Թուրքիայի և Ռուսաստանի միջև անմիջական սահմանային կապեր ստեղծելու համար: Թուրքական կառավարությունը բազմակողմանիորեն մշակել էր Հայաստանի Հանրապետության ոչնչացման ծրագիրը: Անհրաժեշտ էր միայն ապահովել Ռուսաստանի համաձայնությունը որոշակի ծրագիր կազմելու՝ Հայաստանը երկուսի միջև կիսելու մասին կամ էլ հասնել նրա չեզոքությանը թուրք-հայկական պատերազմում:

Քյազիմ Կարաբեքիրն այդ ուղղությամբ ծավալեց լայն գործունեություն: Նա համոզված էր, որ «Այսօր մեր համար ամենամեծ թշնամիներն են՝ արևմուտքում հույները և արևելքում՝ հայերը: Նախ՝ թոթափենք մեր օձիքն այս երկու թշնամիներից, և միայն այդ դեպքում մյուսների դեմ մեր պայքարն ավելի լայն կարելիություններով շարունակելու տերը կլինենք»[1]:

Սակայն Կարաբեքիրը լավ էր հասկանում, որ Հայաստանի վրա հարձակվելուց առաջ պետք է դրա համար ստանա Ռուսաստանի համաձայնությունը:

«Կարաբեքիրն ինչպես ոչնչացրեց Հայաստանը» աշխատության հեղինակ Ջեմալ Քութայը գրում է, որ «...Կարաբեքիրը ամբողջացրել էր իր պատրաստությունները, նրա համար ամբողջ հարցը կայանում էր ապահովել ռուսների չեզոքությունը»[2]:

Կարաբեքիրն իր ռազմական բոլոր պատրաստությունների մասին ծածկագրով տեղյակ էր պահել Ազգային մեծ ժողովի նախագահ Մ. Քեմալին և խնդրել հետևյալը. «Հարձակողականը լինելու է անակնկալ: Խնդրում եմ եղելությունը գաղտնի պահել նույնիսկ ժողովի շրջանակներում»[3]:

Եվ իրոք, հարձակման պատրաստությունները կատարվում էին խիստ գաղտնիության պայմաններում, շատ քչերն էին տեղյակ հարձակման ծրագրերի մասին:

Այդ է ցույց տալիս Վրաստանի կողմից Բաթումի գրավման հարցի քննարկմանը նվիրված Ազգային մեծ ժողովի նիստի նյութերի ուսումնասիրությունը: Կրքերը չափազանց բորբոքված էին:

---

[1] **Cemal Kutay,** Karabekir Ermenistanı nasıl yok etti? "Tarih Konuşuyor", İstanbul, 1956, sayç 4, s. 10.

[2] Նույն տեղում, էջ 13:

[3] Նույն տեղում, էջ 14:

Ժողովը չբավարարվեց ստեղծված իրադրության մասին Քեմալի տված բացատրություններով:

Բաթումի երեսփոխան Ֆեզի Էֆենդին խոսք առնելով, ասաց. «Եթե մենք Բաթումը թողնելու ենք մեր ազգային սահմաններից դուրս, այդ դեպքում որևէ ասելիք չունեմ... Իսկ եթե, հիմնականում և՛ սերնդեսերունդ, և՛ պատմականորեն, և՛ ցեղագրորեն թուրք մեր հողի մի կտորը հանդիսացող Բաթումին չպետք է լքենք, ապա այդ մասին պետք է հայտարարենք աշխարհին: Ինչո՞վ է զբաղվում Մոսկվա մեկնող դեսպանական պատվիրակությունը... Այնտեղ էլ հուսաբեկման չենթարկվենք: Ռուսին չի կարելի վստահել: Վրացուն չի կարելի վստահել: Այդ վայրերում մեր միակ վստահելի ազգը ադրբեջանցիներն են, որովհետև նրանք էլ թուրք են, մուսուլման են... Բացի նրանցից, բոլորն էլ թող ենթարկվեն աստծո փորձանքին»[1]:

Ժողովում հակահայկական և հակավրացական հիստերիա էր սկսվել: Պահանջվում էր հանձնաժողով ստեղծել այդ հարցերը քննելու համար: Եվ բոլորը միասնաբար պահանջում էին հարձակում սկսել Հայաստանի ու Վրաստանի վրա:

Ի վերջո, Մ. Քեմալը Ազգային մեծ ժողովի անդամներին հանգստացնելու համար, չբացելով մանրամասնությունները, հարկադրված էր հայտարարել. «Ընկերներ. Արևելյան ճակատի հրամանատարը տեր է կացությանը: Համոզված եմ, եթե ասեմ, որ Բարձրագույն ժողովը մոտ օրերում երջանիկ լուրեր է հաղորդելու, բոլորդ կներեք, խնդրում եմ մեզ թույլատրեք»[2]:

Այսքանը, կրքերը հանդարտվեցին: Պարզ էր, որ թուրքական բանակը մոտ օրերում պետք է սկսեր հարձակումը:

Հարձակման համար պետք է ընտրվեր «ամենահարմար ժամանակը», ինչպես գրում է Քութայը: Սակայն «ամենահարմար ժամանակի» հարցում Քեմալը և Կարաբեքիրը ունեին տարբեր կարծիքներ:

Կարաբեքիրի ծրագրերին քաջատեղյակ Քութայը գրում է. «Քյազիմ Կարաբեքիր փաշան ավելի վաղ, գարնան ամիսներին իսկ նպատակ ուներ հարձակվելու հայերի վրա: Նա լրացրել էր իր բոլոր ռազմական պատրաստությունները: Հետևաբար, Կարաբեքիրի նպատակն էր, բոլշևիկյան բանակները դեռ Լեհաստանում և Վրանգելի հետ զբաղված ժամանակ, նախ՝ հարձակվել

[1] Նույն տեղում, էջ 13:
[2] Նույն տեղում:

Հայաստանի վրա, հաշվեհարդարի ենթարկել այն, և ապա Գյանջայի շրջանում միանալով Նուրի փաշայի հրամանատարությանը ենթակա Անդրկովկասյան բանակների մնացորդներին, գրավել ամբողջ Կովկասն ու անգլիացիներին վտարելով Բաթումից, հարաբերական իշխանություն ձեռք բերել Սև ծովի վրա»[1]: Ապրիլի կեսերին Կարաբեքիրը հեռագրում է Անկարա. «Մոտակա օրերին ես կկարողանամ տեղեկացնել այն մասին, որ Հայաստանը ջնջված է աշխարհի քարտեզից»[2]:

Քութայը գտնում է, որ «Այդ շրջանում առավելագույն հաջողության բաժին ունեցող սույն ծրագիրը եթե իրականանար, կարելի կլիներ կարևոր քանակությամբ ռազմանյութ և զենք ուղարկել Արևմտյան ճակատ: Այսպիսով, հունական բանակն իր դեմ կգտներ ութսուն հազարանոց կանոնավոր մի բանակ»[3]: Նույն կարծիքին է նաև Ջեբեսոյը: Վերջինիս կարծիքով, մայիս ամիսն ամենաբարենպաստ պահն էր Հայաստանի վրա հարձակվելու համար: «1920 թվականի մայիս ամսին,– գրում է նա,– հայկական բանակը զբաղված էր բոլշևիկյան ներքին ապստամբությունները ճնշելով և հյուսիսում ադրբեջանցիներին կանգնեցնելով: Մենշևիկյան Վրաստանը ի վիճակի չէր Հայաստանին օգնելու: Ահա այդպիսի դժվարին կացության մեջ գտնվող հայերի դեմ կանգնած էր երեք կանոնավոր դիվիզիաներից և կամավորական խմբերից բաղկացած 15-րդ զորամասը: Այդ զորամասը ի վիճակի էր հայերին արագ կերպով պարտության մատնել»[4]:

Սակայն Հայաստանի վրա հարձակվելու պլանը պետք է հաստատեր ոչ թե Կարաբեքիրը, այլ Քեմալը: Ընդհանուր սպայակույտի դիվանը, Քեմալի ղեկավարությամբ, քննելով Հայաստանի վրա մայիսին հարձակում սկսելու Կարաբեքիրի ծրագիրը, մերժեց այն:

Մուստաֆա Քեմալն ուներ երկու հիմնավոր պատճառներ մայիսին հարձակումը չսկսելու համար:

Առաջին պատճառը բացահայտվում է Կարաբեքիրին ուղղված Քեմալի հետևյալ հեռագրում. «Մինչև որ խաղաղության կոնֆերանսում մեր հանդեպ ընդունված որոշումները վերջնա-

---

[1] Նույն տեղում, էջ 35:

[2] **Հր. Ռ. Սիմոնյան,** Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 369:

[3] **Cemal Kutay**, նշվ. աշխ., էջ 36:

[4] **Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան,** Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագիտության մեջ, Երևան, 1963, էջ 49:

կանապես պարզ չդառնան, ներկայումս, ելնելով ներքին և արտաքին իրադրությունից, ձեռնտու չէ զրկվել դաշնակից պետությունների հետ համաձայնության գալու հնարավորությունից... Հայաստանի վրա հարձակումը դաշնակից տերությունների և Ամերիկայի համար առիթ կծառայի մեզ պատերազմ հայտարարելու...»[1]: Սույն հեռագրից հետևում է.

ա) Քեմալը հույս ուներ լեզու գտնել դաշնակից տերությունների հետ:

բ) Սկսելով հարձակումը Հայաստանի վրա, նա վախենում էր, որ այն կարող է Արևմտյան տերությունների համար Թուրքիային պատերազմ հայտարարելու առիթ ծառայել:

Երկրորդ պատճառն այն է, որ նման բարդ իրավիճակում, երբ Թուրքիան կարող էր մեն-մենակ մնալ Արևմուտքի հետ մղվող պայքարում, անհրաժեշտ էր Ռուսաստանի հետ գործնականորեն լուծել փոխօգնության և զենքի, զինամթերքի ու ոսկու առաքման հարցը: Ռուսաստանի հետ այդ հարցերը լուծելու համար մայիսի 11-ին բարձրաստիճան պատվիրակություն էր ուղարկվել Մոսկվա: Մինչև այդ հարցերի վերջնական պատասխանի ստացումը, բնականաբար, Քեմալը չէր համարձակվի հարձակվել Հայաստանի վրա:

Ահա այս պատճառներով Մ. Քեմալը հետաձգեց Հայաստանի վրա հարձակման ժամկետը:

Այսպիսով, Հայաստանի վրա հարձակման հարցը սկզբունքորեն լուծված էր, մնում էր միայն լուծել հարձակման ժամկետի հարցը, որը պայմանավորված էր Ռուսաստանի հետ անմիջական բանակցությունների արդյունքներով:

Այդ պատճառով էլ, ինչպես Թուրքիայի ամբողջ ղեկավարությունը, այնպես էլ մասնավորապես Արևելյան ճակատի հրամանատար Կարաբեքիրը, որի վրա էր դրված Հայաստանը ոչնչացնելու պարտականությունը, բոլոր հնարավոր խողովակներով շոշափում էին Ռուսաստանի տրամադրությունը և փորձում համոզել նրան՝ միասնաբար, երկու կողմից Հայաստանի վրա հարձակվելու: Նման ծրագրի իրականացմանն ակտիվ մասնակցություն էին ցույց տալիս նաև հայկական եղեռնի կազմակերպիչներ, երիտթուրք պարագլուխներ Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Խալիլը և ուրիշներ, որոնք ապաստան էին գտել Ռուսաստանում ու Գերմանիայում և սերտ կապեր էին հաստատել այդ երկրների ղեկա-

[1] Նույն տեղում, էջ 50:

վարների հետ: Այդ են հաստատում Ջեբեսոյի և Քութայի գրքերում բերված փաստերը: Այն օրերին, երբ Թուրքիայում քննարկվում էր Հայաստանի վրա հարձակվելու հարցը, Կառլ Ռադեկը՝ բոլշևիկյան հեղափոխության ճանաչված ղեկավարներից մեկը, գտնվելով Բեռլինում, Էնվերի հետ միասին 9 օր ապրել է Թալեաթի բնակարանում: Ռադեկը շատերին հայտնի էր իր թուրքամետ, հակահայկական տրամադրություններով: Թալեաթը և Էնվերը խորհրդակցելով որոշում են Ռադեկից տեղեկություններ քաղել այն մասին, թե ինչպիսին է բոլշևիկյան Ռուսաստանի վերաբերմունքը Հայաստանի Հանրապետության վերաբերյալ և ճշտել թե նա ինչ դիրք կգրավի, եթե թուրքերը հարձակվեն Հայաստանի վրա:

Ռադեկը Թալեաթի հարցին տալիս է հետևյալ պատասխանը. «***Մենք երբեք հայերին չենք պաշտպանել ձեր դեմ: Թերևս նման զրույցներ նրանց կողմից են տարածվում: Այն հարցերը, որոնք հարկ է լուծել ձեր և հայերի միջև, դուք կարող եք կարգադրել ձեր ուժերով: Մենք որևէ միջամտություն չենք անելու»*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.):

Միայն համոզվեք, որ չկա Սովետ Ռուսիայի մեջ մի անհատ, որը վստահի հայերին: Ոչ Լենինը և ոչ էլ Տրոցկին երբեք չեն սիրել այդ ազգին»[1]:

Թալեաթ փաշան, հենվելով Ռադեկի տեղեկությունների վրա, Կարաբեքիրին հետևյալ հեռագիրն է հղում. «Սիրելիդ իմ Կարաբեքիր փաշա, երբեք հավանական չնկատես, որ բոլշևիկները կպաշտպանեն հայերին: Եթե լրիվ են քո զինվորական պատրաստությունները, իսկույն սկսիր հարձակումը: Անկասկած է, որ արևելքում տարած մի հաղթանակ արևմտյան ճակատի և արևմտյան աշխարհի վրա թողնելու է խոր տպավորություն»[2]:

Նույնատիպ հեռագիր է ուղարկվում Կարաբեքիրին նաև Էնվերի կողմից, որը հավանություն տալով հարձակման ծրագրին, իր ուղերձն ավարտում է հետևյալ խոսքերով. «Սպասելով ձեր հաղթանակի լուրերին, կարոտով համբուրում եմ ձեր աչքերը և հայցում եմ աստծուց, որ մեր ազգին շնորհ և օգնություն պարգևի»[2]:

Ստանալով Հայաստանի վրա հարձակման հետաձգման մասին հրամանը, Կարաբեքիրն անցնում է նոր քաղաքականության, որին նրա կենսագիրները շատ բարձր գնահատական են տալիս:

---

[1] **Cemal Kutay**, նշվ. աշխ., էջ 26:

[2] Նույն տեղում:

Նա ձեռնամուխ է լինում Ռուսաստանի հետ անմիջական հարաբերությունների հաստատմանը և համատեղ ուժերով Անդրկովկասը նվաճելու ծրագրի իրականացմանը:

1920 թվականի հունիսի 23-ին Կարաբեքիրը մի նամակով դիմում է 11-րդ բանակի հրամանատարին: Այդ մասին տեղյակ էին քիչ թվով մարդիկ:

Քութայն այդ նամակի նշանակության մասին գրում է. «Կարաբեքիրը այդ գիշեր բնավ չէր քնել: Մի նոր շրջան էր բացվելու բոլշևիկ բանակին ուղարկվելիք այս նամակով: Կարաբեքիրը խորշում էր Մոսկովներից: Իբրև մի մարդ, որը պատմություն է կարդացել և պատմություն է գրի առել, նա հաստատ գիտեր, որ անկախ այն բանից, թե ինչ քաղաքական վարչակարգերի տակ են ապրում՝ վերջ չի ունենալու Թուրքիայի և Մոսկվայի միջև գոյություն ունեցող տևական և հավիտենական պայքարը: Սակայն այն փափուկ և տագնապալի դրությունը, որին մատնվել էր երկիրը, նրան հիշեցնում էր հետևյալ քաղաքական ասացվածքը. «Նպատակն արդարացնում է միջոցը»[1]:

11-րդ կարմիր բանակի հրամանատարին ուղղված նամակում Կարաբեքիրը գրում էր. «Այսօրվա անկախ Հայաստանը ոչ այլ ինչ է, եթե ոչ անգլիական դիվանագիտության մի գործիք, հուսամ, որ դուք էլ կգնահատեք, որ նա հավիտյան մնալու է որպես ատելության և անհամաձայնության մի տարր՝ ընդմեջ բոլշևիկ Ռուսիայի և Թուրքիայի: Մեզ անհանգստացնում են այն գեշ արարքները, որոնք հետևանք են Թիֆլիսում և Բաքվում գտնվող անգլիացի գործակալների վարած քարոզչության: Նկատի առնելով Թուրքիայի արևմտյան նահանգներում կայսերապաշտ անգլիացիների և Համաձայնականների դեմ մեր վարած պատերազմը և նաև այն, որ հարկ է վերջ տալ Ադրբեջանում անգլիացիների կողմից կատարվող քարոզչությանը, Ռուս Սովետ և թուրք բանակների միջև փութով մի կապի հաստատումը դիտում ենք որպես անհրաժեշտ մի ձեռնարկ, վստահ լինելով, որ ***դուք ևս անհրաժեշտ և ստիպողական կհամարեք Զանգեզուրի և Նախիջևանի գրավումը մեր կողմից՝ այնքան շուտ, որքան կարելի կլինի: Հայտնում եմ բացահայտորեն, որ այս ձեռնարկը անհրաժեշտ նկատվելու դեպքում մեր զինվորները փարվելու են իրենց զենքերին»*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.)[2]:

---

[1] Նույն տեղում, էջ 6:

[2] Նույն տեղում, էջ 7:

Բացատրություններն ավելորդ են: Կարաբեքիրն անթաքույց առաջարկում է ռուսական զորքերի հրամանատարությանը թույլ տալ Թուրքիային գրավելու Զանգեզուրն ու Նախիջևանը, իբր Ռուսաստանի հետ կապ ստեղծելու նպատակով:

Կարաբեքիրը միաժամանակ դիմում է նաև Ադրբեջանի Հանրապետության ռազմական ժողկոմատին, որպես «եղբայր պետության», «ցեղակից և արյունակից ժողովրդի» և առաջարկելով «Մեր այս տագնապալի օրերին մեզ օտարի աչքով չնայել», Թուրքիայի հիմնական առաջարկը ձևակերպում է հետևյալ կերպ. «Խնդրում եմ ձեր սահմանների շրջակայքում զբաղեցնել մեր հասարակաց թշնամուն՝ հայերին, որովհետև մենք մղում ենք այնպիսի մի պայքար, որը կյանքի և մահվան հարց է մեզ համար»[1]:

Հայաստանի վրա հաջող հարձակում կազմակերպելու համար անհրաժեշտ էր չեզոքացնել նաև Վրաստանին, որն իրերի թելադրանքով պիտի լիներ հայերի բնական դաշնակիցը: Այդ նպատակով Յուսուֆ Քեմալի ղեկավարությամբ մի պատվիրակություն է ուղարկվում Թիֆլիս, որը Նախարարների խորհրդի նախագահ Ժորդանիայի և արտաքին գործերի նախարար Գեգեչկորիի հետ վարած բանակցություններում վերջիններիս կողմից հավաստիացում է ստանում, որ «Հայ-քեմալական ընդհարման դեպքում Վրաստանը կհայտարարի իր խիստ չեզոքությունը»[2]:

Բացի վերոհիշյալից, Կարաբեքիրը դիմում է մի քանի անհրաժեշտ քայլերի ևս: Նա, ինչպես գրում է Քութայը, «...այդ ժամանակ Իրաքում՝ անգլիացիների և Ղարաբաղում՝ ռուսների դեմ կռվող մեր Անդրկովկասյան բանակի հրամանատար Էնվեր փաշայի եղբորը՝ Նուրի և հորեղբորը՝ Խալիլ փաշաներին գրել էր մեկական նամակ, որ փոխանակ ցնորական արկածախնդրությունների մեջ մխրճվելու, Մայր հայրենիքի պաշտպանությանը հատկացվի այն բանակը, որ հարուստ է զենքով ու ռազմանյութերով և միաժամանակ թարմ ուժերով»[3]:

Խալիլ փաշային ուղղված նամակում, Կարաբեքիրը գրում էր. «Ձեզ ծանոթ է փողի, զենքի և ռազմանյութի մեր կարիքը: Անհրաժեշտ է ժամ առաջ փութալ Մայր հայրենիքին օգնության: Միջագետքի և հնդկական ուղու համար ձեր կատարած արշավանքներից, մեզանից ավելի ուրիշներն են օգտվում: Այլևս փակենք

---

[1] Նույն տեղում, էջ 8-9:

[2] **Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան**, նշվ. աշխ., էջ 63:

[3] **Cemal Kutay**, նշվ. աշխ., էջ 9:

ժամավաճառ լինելու շրջանը: Բոլոր հրամանատարները, գլխավորաբար Նուրի փաշան, բացառում են այս ճշմարտությունը, որը ներշնչված է խղճմտանքից և հայրենասիրական զգացմունքներից... Այսօր մեր համար ամենամեծ թշնամիներն են՝ Արևմուտքում՝ հույները, Արևելքում՝ հայերը: Նախ՝ թոթափենք մեր օձիքը այս երկու թշնամիներից, միայն այդ դեպքում մյուսների դեմ մեր պայքարն ավելի լայն կարելիություններով շարունակելու տեր կլինենք: Ղարաբաղում մեր ուժերի՝ բոլշևիկների դեմ մղած պայքարի հետևանքով, նրանց կասկածն ենք հրավիրում մեր վրա և այս պատճառով էլ առիթ ենք ընծայում, որ նրանք օժանդակեն հայերին: Շատ եմ խնդրում փաշա, այլևս մի կողմ թողեք զգացումներն ու անձնականությունը, հասել է ժամանակը վիրավոր հայրենիքին օգնության փութալու և միակ ու ճշմարիտ նպատակի համար միայն օգտագործելու մեր բոլոր ուժերը: Ինձ վստահեցեք, որպես մի հին զինընկերոջ»[1]:

Ինչպես ցույց են տալիս փաստաթղթերը, թուրքական ղեկավարությունը գնալով ավելի ու ավելի պահանջկոտ է դառնում: Հուլիսի 29-ին Կարաբեքիրը 11-րդ բանակի հրամանատարությանը գրում է իր վերջին նամակը: Ըստ Ջեմալ Քութայի, այդ նամակով «Կարաբեքիրը վերջնագիր է տալիս ռուս հրամանատարին»[2]: Եվ իրոք, վերջնագրի բնույթ ունեցող այս նամակում Կարաբեքիրը պահանջում էր. «Ձեզանից ուզում եմ իմանալ հետևյալը. Կարմիր բանակը կամենո՞ւմ է բանալ Կարսի երկաթուղին և հետամտո՞ւմ է, արդյոք, ուղղակի հաղորդակցության: Բարեհաճորեն հիշեցնելով, որ հարցը կատարված իրողությունների հանդուրժողականությունից վեր է, խնդրում եմ, ամենակարճ ժամանակամիջոցում ինձ տեղյակ պահել ձեր վճռական որոշման մասին»[3]:

Կարաբեքիրի նման ոճը բացատրվում է նրանով, որ այդ ժամանակ արդեն Մոսկվա էր ժամանել թուրքական պատվիրակությունը և բանակցություններ էր վարում Գ. Չիչերինի հետ: Նա իր նամակով ցանկանում էր ազդել բանակցությունների ընթացքի վրա: Թուրքական պատվիրակությունը Անկարայից դուրս էր եկել մայիսի 11-ին: Պատվիրակության նախագահն էր արտաքին գործերի նախարար Բեքիր Սամին. պատվիրակության կազմում ընդգրկված էին՝ էկոնոմիկայի նախարար Յուսուֆ Քեմալը, բժիշկ

[1] Նույն տեղում, էջ 10:
[2] Նույն տեղում, էջ 12:
[3] Նույն տեղում, էջ 13:

գնդապետ Իբրահիմ Թալին, Լազիստանի երեսփոխան Օսմանը, գլխավոր շտաբի փոխգնդապետ Սեյֆին: Պատվիրակությունը Մոսկվա է հասնում 69 օր անց, հուլիսի 19-ին:

Հայկական պատվիրակությունը Երևանից դուրս է գալիս ապրիլի վերջերին և Մոսկվա է ժամանում մայիսի վերջերին: Հայաստանի հանրապետության պատվիրակության նախագահն էր Լևոն Շանթը, անդամները՝ Համբարձում Տերտերյանը և Լևոն Զառաֆյանը:

Հասկանալի է, որ Կարաբեքիրի կողմից բարձրացված հարցերը լուծվելու էին ոչ թե Բաքվում, այլ Մոսկվայում: Կարաբեքիրը լավ էր հասկանում , որ իր նամակներն անմիջապես ուղարկվում են Մոսկվա: Իսկ մոսկովյան ղեկավարությունը լռում էր և սպասում: Նա իր վերջնական, հստակ ծրագիրը կարող էր ներկայացնել միայն Թուրքիայի, Հայաստանի և Ադրբեջանի հետ բանակցելուց հետո: Եվ բնական է, որ Խորհրդային Ռուսաստանի արտաքին քաղաքականության հիմնադրույթները Թուրքիայի և Անդրկովկասի նկատմամբ ձևավորվեցին և ամբողջական հայեցակարգի վերածվեցին թուրքական պատվիրակության Մոսկվա ժամանելուց հետո միայն, ռուս-թուրքական բանակցությունների ընթացքում, հուլիս-օգոստոս ամիսներին:

Այսպիսիք էին Քեմալական Թուրքիայի նվաճողական ծրագրերը Հայաստանի և Անդրկովկասի նկատմամբ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

Բոլշևիկների կուսակցությունը, 1917 թվականի հոկտեմբերին վերցնելով իշխանությունը, հետապնդում էր մի որոշակի նպատակ. ստեղծել խորհրդային կայսրություն, որի մեջ պետք է մտնեին ցարական Ռուսաստանի բոլոր նվաճած տարածքները: Այդ իմաստով բոլշևիկյան Ռուսաստանը ցարական Ռուսաստանի հարազատ ժառանգորդն էր: Բոլշևիկները գործադրեցին բոլոր ջանքերը ռուսական կայսրության տարածքային ամբողջականությունը պահպանելու համար:

Ընդ որում, ազգերի ինքնորոշման իրավունքի, ժողովրդավարության անունից հանդես եկող բոլշևիկյան կուսակցությունը բոլորովին հաշվի չէր առնում, թե Ռուսաստանի կազմից դուրս եկած, անկախության ուղին բռնած, անկախ պետականություն հռչակած ազգային փոքրամասնություններն արդյո՞ք ցանկանում են լինել բոլշևիկյան կայսրության կազմում, թե ոչ:

Ցարական Ռուսաստանի կազմի մեջ գտնված ազգային փոքրամասնությունների տարածքները հետ նվաճելու համար մշակվեց մի բավականին պարզունակ մոդել, որի իրականացման մեխանիզմը հետևյալն էր.

ա) Բոլշևիկյան կուսակցության ազգային շրջաններում ստեղծած տեղական փոքրաթիվ կազմակերպություններն արհեստական ապստամբություն էին բարձրացնում և Մոսկվայից օգնություն խնդրում իրենց ժողովուրդներին շահագործողների լծից ազատագրելու համար: Եվ, իհարկե, կարմիր բանակը «անձնազոհաբար» ձեռնամուխ էր լինում անկախություն ձեռք բերած ժողովուրդների նվաճման գործին: Բռնի ուժով կործանվում էր այդ ժողովուրդների ազգային պետականությունը, իսկ նրանց տարածքները՝ միացվում կայսրությանը:

բ) Եթե ինչ-ինչ պատճառներով այդ տարբերակը չէր գործում որևէ ազգային շրջանում, ապա Խորհրդային Ռուսաստանը արտաքին և ներքին դավադրությունների միջոցով տվյալ ժողովրդի համար ստեղծում էր մի այնպիսի դժոխային, անելանելի վիճակ, որ վերջինս հարկադրված էր լինում «կամավոր» խորհրդայնանալ և մտնել այդ կայսրության կազմի մեջ:

գ) Եթե այդ տարբերակն էլ չէր գործում, ապա ռուսական բանակը մարքսիզմ-լենինիզմի դրոշով և կարգախոսներով, ստեղծելով որևէ պատրվակ, գնում էր ազատագրելու «տեղական շահագործողների և միջազգային իմպերիալիզմի լծի տակ հեծող ազգային փոքրամասնություններին»:

Ռուսական բոլշևիկների նվաճողական քաղաքականությունը վերլուծելիս անհրաժեշտ է հատկապես ընդգծել հետևյալ հանգամանքը. ռուսական կայսրության ազգային շրջանների նվաճման ծրագրերը մշակվում էին կուսակցության ղեկավար մարմիններում, որոնց փաստաթղթերը հետազոտողներին չեն տրվել:

Բոլշևիկյան կուսակցության ղեկավար մարմինների՝ այդ հարցերի շուրջ ստեղծված փաստաթղթերը խստորեն բաժանվում են երկու խմբի՝

ա) «Խիստ գաղտնի» մակագրությամբ փաստաթղթեր, որոնք ենթակա չէին հրատարակության: Այս խմբի փաստաթղթերում է իր ամբողջ մերկությամբ բացահայտվում բոլշևիկների նվաճողական քաղաքականության էությունը:

բ) Փաստաթղթեր, որոնք նախատեսվում էին հրատարակության համար: Սրանց մեջ բոլշևիկյան կուսակցության նվաճողական ծրագրերը քողարկվում էին տարբեր կեղծ մեկնաբանություններով, որոնք, որպես օրենք, ուղեկցվում էին ժողովուրդների հավասարության, ինքնորոշման իրավունքի և հանրահայտ այլ դեմագոգիկ կարգախոսներով:

Հասկանալի է, որ պատմական իրադարձությունների ներքին ծալքերի բացահայտումը հնարավոր է միայն առաջին խմբի փաստաթղթերի միջոցով: Ռուսաստանի նվաճողական ծրագրերը վերլուծելիս, մենք, գիտական շրջանառության մեջ գտնվող փաստաթղթերին զուգահեռ, կհենվենք նաև առաջին խմբի նյութերի վրա, որոնք հայտնաբերվել են վերջին տարիների ընթացքում և լիովին բացահայտում են բոլշևիկյան Ռուսաստանի ղեկավարության նվաճողական քաղաքականության ձևավորման և իրականացման խոհանոցը:

Բոլշևիկյան Ռուսաստանի նվաճողական ծրագրերում ամենակարևոր տեղերից մեկը գրավում էր Կովկասը՝ իր աշխարհագրական դիրքի և բնական հարստությունների շնորհիվ: Սակայն 1918-1919 թվականներին, զբաղված լինելով քաղաքացիական կռիվների տարբեր ճակատներում, Խորհրդային Ռուսաստանը հնարավորություն չուներ գործնականորեն խառնվելու Կովկասի գործերին:

Դրությունն արմատապես փոխվեց 1920 թ. սկզբներին, երբ «Դենիկինի արագ վերացումը մեզ տարվա սկզբներին մոտեցրեց կովկասյան հանրապետություններին», ասվում է Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինի՝ Խորհուրդների 8-րդ համագումարին ներկայացրած տարեկան հաշվետվության մեջ[1]:

Մոտենալով Կովկասի սահմաններին, Խորհրդային Ռուսաստանի ղեկավարությունը նպատակ էր դնում գրավել ամբողջ երկրամասը՝ և՛ Հյուսիսային Կովկասը, և՛ Անդրկովկասը: Այդ նպատակով 1920 թվականի հունվարի 16-ին Ռուսաստանի Ռազմահեղափոխական խորհրդի կողմից ստեղծվում է Կովկասյան ճակատը, որը համաձայն «Քաղաքացիական պատերազմը և ռազմական ինտերվենցիան ԽՍՀՄ-ում» հանրագիտարանի, նպատակ ուներ ***«ավարտել Դենիկինի հյուսիսային կովկասյան զորքի խմբավորումների վերացումը և ազատագրել Կովկասը»*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.)[2]:

Ինչպես տեսնում ենք, կովկասյան ժողովուրդների անկախ պետականության կործանումը, երկրամասի նվաճումը բոլշևիկները կենսագործում էին նրանց «ազատագրելու» կարգախոսով: Կովկասյան ճակատը Ռուսաստանի Ռազմահեղափոխական խորհրդի կողմից լուծարվում է 1921 թվականի մայիսի 29-ի որոշմամբ, երբ նա արդեն կատարել էր իր առջև դրված խնդիրները՝ գրավել էր ամբողջ Կովկասը:

ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը 1920 թ. ապրիլի 8-ին որոշում է ստեղծել ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրո, որը պետք է ղեկավարեր Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի հանրապետություններում կոմունիստական կուսակցության տեղական կազմակերպությունների պայքարը խորհրդային իշխանության հաղթանակի համար: Կովկասյան բյուրոն փոխարինելու եկավ ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեին, որը ստեղծվել էր Կովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջին համագումարի կողմից (1917 թ. հոկտեմբերի 2-7) և հանդիսանում էր Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների գերագույն ղեկավար մարմինը:

Գ. Օրջոնիկիձեն Կովկասյան բյուրոյի հիմնական խնդիրն էր համարում «***Կովկասում խորհրդային իշխանության հաստա-***

---

[1] ДВП СССР, т. 2, с. 692.

[2] Гражданская война и военная интервенция в СССР. Энциклопедия, М., 1983, с. 245.

տումն ու ամրապնդումը և ամուր կոմունիստական կուսակցության ստեղծումը» (ընդգծումը մերն է – Լ. Խ.)[1]:

Ավելի պարզ ասել չէր կարելի. Մոսկվան նպատակ ուներ Անդրկովկասում հաստատել խորհրդային իշխանություն:

1920 թ. հունիսին Կովկասյան բյուրոյում ստեղծվում է երկու եռյակ. Բաքվի եռյակը Գ. Օրջոնիկիձեի գլխավորությամբ պետք է զբաղվեր Անդրկովկասի, իսկ Արմավիրի եռյակը՝ Հյուսիսային Կովկասի խորհրդայնացման հարցերով:

Ուրվագծվեց Կովկասի գրավման մեխանիզմը: Մի կողմից՝ հանձին Կովկասյան ռազմաճակատի, գործելու էր արտաքին ուժը՝ ռուսական բանակը, մյուս կողմից՝ հանձին Կովկասյան բյուրոյի գործելու էին ներքին ուժերը՝ կուսակցության տեղական կազմակերպությունները՝ ապստամբություններ կազմակերպելու և ռուսական բանակը օգնության հրավիրելու միջոցով:

Կովկասյան երկրային կոմիտեն մեծ փորձ էր ձեռք բերել տեղերում հակապետական բոլշևիկյան ապստամբություններ կազմակերպելու ուղղությամբ: Նման ապստամբություններ կազմակերպվել էին Դաղստանում, Չեչնիայում, Ինգուշեթիայում, Կաբարդայում, Հյուսիսային Օսիայում և Մերձսևծովյան շրջանում: Այդ ապստամբությունները, որպես օրենք, ավարտվում էին կարմիր բանակին հրավիրելով և նրա ուժերով այդ վայրերում բռնի կերպով խորհրդային կարգեր հաստատելով: Կովկասյան բյուրոն կազմակերպվում է 1920 թ. մայիսի 4-ին, բայց գործնականում իր աշխատանքները սկսում է հունիսի սկզբներին: Մինչ այդ Կովկասի խորհրդայնացման գործը ղեկավարում էր Կովկասի երկրային կոմիտեն:

Այսպիսով, 1920 թ. սկզբներին Կովկասը գրավելու համար Խորհրդային Ռուսաստանը ստեղծում է ռազմական մարմին՝ Կովկասյան ճակատը և քաղաքական մարմին՝ Կովկասյան բյուրոն, մինչև վերջինիս ձևավորումը այդ խնդիրը կատարում է Կովկասի երկրային կոմիտեն:

Մինչև Անդրկովկասում ծավալված իրադարձությունների քննարկմանն անցնելը անհրաժեշտ է ծանրանալ մի չափազանց կարևոր հարցի վրա ևս:

Մոսկվայում Կովկասի հետ առնչվող բոլոր առանցքային հարցերի լուծումը, ինչպես ցույց են տալիս փաստաթղթերը, դրված էր Ստալինի վրա, առանց որի Կովկասի հետ կապված ոչ

[1] **Г. К. Орджоникидзе**, Избранные статьи и речи, М., 1939, с. 113.

մի կարևոր հարց չէր լուծվում: Եթե կենտրոնում Կովկասի ճակատագրի բախտորոշ հարցերը լուծում էր Ստալինը, ապա տեղում այդ որոշումների կենսագործման խնդիրը դրված էր Օրջոնիկիձեի վրա: Օրջոնիկիձեն Ստալինի մտերիմներից էր, նրան անձնապես նվիրված մարդկանցից: Ստալինի ջանքերով Լենինը ևս լիովին վստահում էր նրան: Պատահական չէ, որ Օրջոնիկիձեի՝ Լենինին ուղղված 1919 թ. հոկտեմբերի 15-ի նամակի վրա վերջինս մակագրել է. «Թե Ունշլիխտի, թե Ստալինի կարծիքներով, Սերգոն միանգամայն հուսալի ***զինվորական*** աշխատող է: Որ նա անչափ հավատարիմ և ***անչափ գործարար*** հեղափոխական է, ես ինքս նրան ճանաչում եմ ավելի քան 10 տարի»[1]:

Ուրեմն, համաձայն Լենինի, Օրջոնիկիձեն հուսալի ռազմական գործիչ էր, նվիրված և գործնական հեղափոխական: Իսկ բոլշևիկների մոտ կադրերի ընտրության գործում վճռական գործոնն անձնական նվիրվածությունն էր: Խոսելով հեղափոխությանը նվիրվածության մասին, Լենինը և Ստալինը, որպես օրենք, մշտապես նկատի էին ունենում անձնական նվիրվածությունը:

ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոն 1920 թ. հունիսի 18-ին որոշում է. «Հանձնարարել Կազմբյուրոյին համաձայնության գալ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի հետ՝ վերջինիս կազմից առանձնացնել նեղ, մշտապես գործող կոլեգիա... գործունեության շրջան ունենալով ամբողջ Կովկասը: Եթե նեղ կոլեգիայի կազմի մեջ չմտնի ընկ. Օրջոնիկիձեն, ապա Վրաստանին, Ադրբեջանին, Հայաստանին, Թուրքիային և այլ վայրերին վերաբերող բոլոր հարցերը պետք է անպայման լուծվեն նրա ներկայությամբ»[2]:

Օրջոնիկիձեն, որ մինչ այդ գրեթե միանձնյա էր լուծում Կովկասի և Թուրքիայի հետ առնչվող բոլոր հարցերը, հունիսի 18-ի որոշումից նեղացած, դրանում տեսնելով իր իրավունքների սահմանափակում, մի նամակով դիմում է Լենինին, հայտնելով իր խիստ դժգոհությունը:

Ի պատասխան այդ նամակի, Լենինը հունիսի վերջերին (հունիսի 29-ին կամ 30-ին) ծածկագրով Օրջոնիկիձեին հայտնում է հետևյալը. «Ռազմաճակատի միջոցով ու տեղական կուսակցական բարձրագույն հիմնարկի միջոցով Դուք պահպանում եք բոլոր իրավունքներն ու լիազորությունները: Մեկ անգամ ևս խնդրում եմ Ձեզ չնյարդայնանալ և մի փոքր համբերել:

---

[1] **Վ. Ի. Լենին,** ԵԼԺ, հ. 51, էջ 69:

[2] Նույն տեղում, էջ 511:

Բացի դրանից, ***Ձեր վրա է դրվում Ադրբեջանի ամբողջ արտաքին ու ներքին քաղաքականության ղեկավարումը և Պարսկաստանի, Հայաստանի ու Վրաստանի վերաբերյալ Կենտկոմի ու Արտգործժողկոմատի դիրեկտիվների կատարման հսկողությունը»*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.)[1]: Այդ հեռագրով նրան է հանձնարարվում նաև Բաքվում սեպտեմբերին կայանալիք Արևելքի ժողովուրդների համագումարի հրավիրման կազմակերպումը:

Մեզ թվում է, Օրջոնիկիձեի Անդրկովկասում ունեցած դերի հարցը, այս փաստաթղթին ծանոթանալուց հետո, մեկնաբանությունների կարիք չունի:

Անհրաժեշտ է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք ևս: Օրջոնիկիձեն, լինելով Կովկասյան ճակատի Ռազմական խորհրդի և ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի կազմում, Մոսկվայից փաստորեն ունենալով արտակարգ լիազորություններ, իր զեկուցագրերով, նամակներով և հեռագրերով կեղծում էր երկրամասում տիրող իրավիճակը և փորձում արագացնել Կովկասի նվաճումը ռուսական զորքերի կողմից:

Ստալին-Օրջոնիկիձե՝ ահա այն մարդիկ, որոնք մշակեցին և իրականացրին Կովկասը նվաճելու, այն խորհրդայնացնելու և հատկապես Հայաստանը մասնատելու ծրագիրը:

Ե՛վ Ստալինը, և՛ Օրջոնիկիձեն թուրքամետ գործիչներ էին: Օրջոնիկիձեն շրջապատված էր ադրբեջանցի գործիչներով, որոնցից հատկապես Ն. Նարիմանովը նրա վրա մեծ ազդեցություն ուներ: Իսկ Ստալինը, անկախ թուրքամետությունից, նաև ընդգծված հակահայ էր:

Ահա թե ինչու Մուստաֆա Քեմալի պատմական ասպարեզ մտնելուն պես և՛ Ստալինը , և՛ Օրջոնիկիձեն անմիջապես թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության հարցերը լուծելիս իրենց գործունեության հիմքում դրեցին թուրքական գործոնի բախտորոշ լինելու հիմնադրույթը: Հանուն թուրքական գործոնի զոհաբերվեցին առաջին հերթին հայ ժողովրդի շահերը:

Քեմալի պատմական ասպարեզում հայտնվելով՝ Մոսկվա-Բաքու հակահայկական առանցքը վերածվեց՝ Մոսկվա-Անկարա-Բաքու հակահայկական եռանկյունու:

Բնականաբար, և՛ Ստալինը, և՛ Օրջոնիկիձեն իրենց հակահայ գործունեությունը քողարկում էին հայասիրական հայտարարություններով, որոնք իրենց արտահայտությունն էին գտնում հոդ-

[1] Նույն տեղում, էջ 264:

վածներում, մամուլի համար նախատեսված օրագրություններում և հայերի հետ ունեցած մասնավոր խոսակցություններում: Նյութերի հենց այս խմբի վրա են հենվել այն հայ պատմաբանները, որոնք կյանքի են կոչել «հայ ժողովրդի մեծ բարեկամների» անհեթեթ առասպելը: Նման նյութերի հիման վրա հայ ժողովրդի ոխերիմ թշնամիները դարձել են հայ ժողովրդի «մեծ բարեկամներ»:

Հարց է առաջանում, իսկ ինչպիսի՞ վերաբերմունք ուներ Հայաստանի նկատմամբ Լենինը. չէ՞ որ, վերջապես, նա էր պետության ղեկավարը, և առանց նրա ոչ մի կարևոր հարց չէր կարող իր լուծումը ստանալ: Ինչպես ցույց կտա նյութերի հետագա շարադրանքը, Լենինը Հայաստանի հարցում ամբողջովին կանգնած էր Ստալինի ու Օրջոնիկիձեի դիրքերում և մշտապես հավանություն էր տալիս ու հաստատում նրանց հակահայ առաջարկները: Ի վերջո, Լենինի առաջարկով էր Կովկասյան հարցերի լուծումը դրվել Ստալինի և Օրջոնիկիձեի վրա: Եվ ինչպես ցույց են տալիս քաղաքական իրադարձությունների վերլուծությունները և անառարկելի փաստերը, բոլոր կարևորագույն հարցերը լուծելիս այդ երեքի միջև անպայման համաձայնություն էր կայանում: Երբեմն Ստալինի և Օրջոնիկիձեի միասնական ծրագրերի դեմ հանդես էին գալիս Չիչերինն ու Լեգրանը և կարողանում էին ինչ-որ հարցերում հակադիր որոշումներ ընդունել տալ, բայց ի վերջո հաղթանակում էր այդ խումբը, որովհետև վճռական պահին նրանց հետ էր լինում Լենինը: Եվ ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում, Հայաստանի համար ճակատագրական հարցերում վճռական դեր է կատարել Լենինը՝ Թուրքիային թույլ տալով հարձակվել Հայաստանի Հանրապետության վրա:

1920-1921 թվականներին, երբ լուծվում էին հայ ժողովրդի համար ճակատագրական հարցեր, Լենինը մի կողմից հանդես էր գալիս ցարական կայսրության ավերակների՝ վրա բոլշևիկյան կայսրություն ստեղծողի դերում, մյուս կողմից՝ որպես թուրք ժողովուրդների ներկայացուցիչ, ձգտելով չոտնահարել բոլշևիկյան կայսրության շահերը, հնարավորինս ընդառաջում պանթուրքիզմին և պանիսլամիզմին, որի դրոշակակիրը այդ ժամանակ, ոչ բացահայտորեն, քանի որ դրա համար պայմանները բարենպաստ չէին, հանդիսանում էր քեմալական Թուրքիան:

Կովկասի ժողովուրդների պատմության ճակատագրական պահին, 1920-1921 թվականներին, ահա այս մարդիկ էին լուծում բոլոր բախտորոշ հարցերը: Նման դժվարին պատմական պայմաններում, բնական է, որ Հայաստանի Հանրապետությունն ան-

խուսափելիորեն պետք է դառնար Թուրքիայի և Ռուսաստանի հակահայ քաղաքականության զոհը:

Այժմ տեսնենք, թե բոլշևիկյան Ռուսաստանը ինչպես էր նվաճում Անդրկովկասը: Հասնելով Կովկասի սահմաններին, կարմիր բանակի հրամանատարությունն արագ կերպով ձեռնամուխ է լինում երկրամասի նվաճմանը: Լենինը և կոմկուսի Քաղբյուրոն հաճախակի էին անդրադառնում կովկասյան ճակատի, Կովկասը գրավելու հարցերին: Կովկասի գրավման հարցը դարձել էր բոլշևիկյան կուսակցության գլխավոր խնդիրն այդ ժամանակ:

1920 թվականի փետրվարի 17-ին Լենինը հեռագրում է Սմիլգային և Օրջոնիկիձեին. «Չափազանց անհանգստացած եմ Կովկասյան ռազմաճակատում մեր զորքերի վիճակից, Բուդյոննու մոտ լիակատար կազմալուծումից, մեր բոլոր զորքերի թուլացումից, ընդհանուր հրամանատարության թուլությունից, բանակների միջև գժտությունից, հակառակորդի ուժեղացումից: Անհրաժեշտ է լարել բոլոր ուժերը և մի շարք արտակարգ միջոցներ ձեռնարկել հեղափոխական եռանդով: Ծածկագրով մանրամասնորեն հեռագրեցեք, թե հատկապես ինչ եք ձեռնարկում»[1]: Մեկ օր հետո, փետրվարի 18-ին, Լենինը հեռագրում է Խարկով՝ Ստալինին. «...*շտապ կերպով համալրումներ մոտեցնել Կովկասյան ռազմաճակատին: Դա ամենա, ամենագլխավորն է*» (ընդգծումը մերն է – Լ. Խ.)[2]:

Պարզ է, որ Կովկասի գրավումը բոլշևիկյան Ռուսաստանի համար դարձել էր օրակարգի թիվ առաջին հարցը:

Փետրվարի 20-ին Լենինը շտապ հեռագրում է Ստալինին. «Կովկասյան ռազմաճակատում դրությունն ավելի ու ավելի լուրջ բնույթ է ստանում: Այսօրվա դրությամբ չի բացառված Ռոստովը և Նովոչերկասկը կորցնելու հնարավորությունը, ինչպես նաև հակառակորդի փորձերի հնարավորությունը՝ շարունակելու զարգացնել հաջողությունը դեպի հյուսիս, սպառնալով Դոնեցկի շրջանին: Բացառիկ միջոցներ ձեռնարկեցեք քառասուներկուերորդ և լատիշական դիվիզիաների փոխադրումն արագացնելու և նրանց մարտունակությունն ուժեղացնելու ուղղությամբ: Հուսով եմ, որ գնահատելով ընդհանուր կացությունը, Դուք կծավալեք Ձեր ամբողջ եռանդը և կհասնեք լուրջ արդյունքների»[3]:

---

[1] Նույն տեղում , էջ 159:
[2] Նույն տեղում, էջ 160:
[3] Նույն տեղում, էջ 164-165:

Նույն օրը Լենինի կողմից Ստալինին տրվում է երկրորդ հեռագիրը, որտեղ ասվում է. «Ձեզ վրա է ընկնում Հարավարևմտյան ռազմաճակատից Կովկասյան ռազմաճակատին համալրումների մոտենալն արագացնելու հոգսը: Հարկավոր է առհասարակ օգնել ըստ ամենայնի և ոչ թե վեճ բացել գերատեսչական իրավասությունների հարցի շուրջը»[1]:

Հսկայական ուժեր կենտրոնացնելով Կովկասյան ճակատում՝ բոլշևիկները կարողանում են մարտի կեսերից բեկում մտցնել ռազմաճակատում: Օրջոնիկիձեի լավատեսական հեռագրին Լենինը մարտի 11-ին պատասխանում է. «Շատ ուրախ եմ Ձեր այն հաղորդման համար, որ շուտով սպասում եք Դենիկինի լիակատար ջախջախմանը, բայց վախենում եմ ձեր չափից դուրս լավատեսությունից»[2]:

Բայց ուժերն անհավասար էին, Դենիկինի բանակը, կրելով պարտություն պարտության հետևից, սկսում է արագ նահանջել: 11-րդ կարմիր բանակի զորամասերը գրավում են Կաբարդան, Բալկարիան, Հյուսիսային Օսիան, Ինգուշեթիան, Դաղստանը և մոտենում Անդրկովկասին: Ռուսական զորքերը տեղավորվում են Ադրբեջանի սահմանների երկայնքով՝ պատրաստվելով հարձակման:

Երբ արդեն լուծվել էր Հյուսիսային Կովկասի գրավման հարցը, և կարմիր բանակի զորամասերը շարժվում էին դեպի Ադրբեջանի սահմանները, Լենինը դեռ մարտի 17-ին Սմիլգային և Օրջոնիկիձեին հրահանգում է. ***«Բաքուն վերցնելը մեզ չափազանց, չափազանց անհրաժեշտ է:*** Բոլոր ջանքերն ուղղեցեք այդ բանին, ընդ որում պարտադիր է հայտարարությունների մեջ լինել խիստ դիվանագետ և առավելագույն չափով հավաստիանալ տեղական հաստատուն խորհրդային իշխանության նախապատրաստման նկատմամբ: ***Նույնը վերաբերում է Վրաստանին,*** թեև խորհուրդ եմ տալիս նրան վերաբերվել էլ ավելի զգուշորեն: Տեղափոխումների մասին պայմանավորվեցեք գլխավոր հրամանատարի հետ» (ընդգծումները մերն են – Լ. Խ.)[3]:

Ապրիլի 2-ին Լենինը «խիստ գաղտնի» մակագրությամբ հետևյալ հեռագիրն է հղում Օրջոնիկիձեին. «Մեկ անգամ ևս խնդրում եմ գործել զգուշորեն և անպայման առավելագույն բար-

---

[1] Նույն տեղում, էջ 165:
[2] Նույն տեղում, էջ 187-188:
[3] Նույն տեղում, էջ 193:

յացակամություն ցուցաբերել մուսուլմանների նկատմամբ, հատկապես Դաղստան մտնելու ժամանակ: Ըստ ամենայնի և այն էլ ամենահանդիսավոր ձևով ցուցադրեցեք համակրանք մուսուլմանների նկատմամբ, նրանց ինքնավարությունը, անկախությունը և այլն: Գործի ընթացքի մասին հաղորդեցեք ավելի ճշտորեն և ավելի հաճախ»: Այս հեռագիրն ավարտվում է Տրոցկուն ուղղված հետևյալ երկտողով. «Ընկ. Տրոցկի, եթե համաձայն եք, ուղարկեցեք ծածկագրով և ուղիղ գծով, մենք կազմել ենք Ստալինի հետ»[1]:

Ինչպես ցույց են տալիս լենինյան փաստաթղթերը, դեռ Հյուսիսային Կովկասում մղվող թեժ կռիվների պահին արդեն լուծված էր նաև Ադրբեջանի և Վրաստանի գրավման խնդիրը: Լենինը պահանջում էր միայն, որ այդ ազգային տարածքների գրավումը կատարվի զգույշ, դիվանագիտական քողով վարագուրված և, իհարկե, անպայման տեղական բոլշևիկյան կազմակերպությունների նախաձեռնությամբ ու օգնությամբ, որը նշանակում էր՝ տեղերում ապստամբություն բարձրացնել և օգնության կանչել կարմիր բանակի զորամասերին:

Բոլշևիկների կուսակցությունն իր ողջ պատմության ընթացքում խոսել է ժողովուրդների անկախության իրավունքի և հավասարության մասին, սակայն, ինչպես տեսնում ենք, Ռուսաստանում գալով իշխանության գլուխ, նա ոտնահարեց այդ ժողովրդավարական, համամարդկային սկզբունքները և վարեց ազգային փոքրամասնությունների պատմական տարածքները նվաճելու անթաքույց քաղաքականություն:

Դեռ 1920 թվականի հունվարի 16-ին բոլշևիկյան կուսակցության Կովկասի Երկրային կոմիտեն որոշել էր «մոտ ապագայում, հենց որ առկա կլինեն բարենպաստ պայմաններ, Կարմիր բանակի մոտեցումով Ադրբեջանում կազմակերպել հեղաշրջում»[2]: Ապրիլի 22-ին տեղի է ունենում Երկրային կոմիտեի, ԱԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության և Բաքվի կոմիտեի անդամների մասնակցությամբ խորհրդակցություն, որը որոշում է ապրիլի 27-ին զինված ապստամբության դիմել՝ իշխանությունը գրավելու նպատակով: Ապրիլի 27-ի առավոտյան Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմը որոշում ընդունեց մուսավաթական կառավարության տապալման մասին և ստեղծեց ժամանակավոր հեղկոմ՝ Ն. Նարիմանովի նախագահությամբ: Ցերեկվա ժամը 12-ին բոլշևիկները վերջնա-

[1] Նույն տեղում, էջ 206-207:
[2] РГАСПИ, ф. 17, оп. 7, д. 216/1, л. 5.

գիր ներկայացրին կառավարությանը՝ պահանջելով 12 ժամվա ընթացքում հանձնել իշխանությունը: Խորհրդարանի նիստը տևեց մինչև ուշ գիշեր: Գիշերվա ժամը 12-ի մոտ մեկ դեմով և մեկ ձեռնպահով որոշում ընդունվեց իշխանությունը բոլշևիկներին հանձնելու մասին:

Ապրիլի 28-ին Ադրբեջանի հեղկոմը հանդես եկավ Ադրբեջանը խորհրդային հանրապետություն հռչակելու մասին կոչով և դիմեց Խորհրդային Ռուսաստանին, Վ. Լենինին, խնդրելով «անմիջապես իրական օգնություն ցույց տալ՝ ուղարկելով Կարմիր բանակի ջոկատներ»[1]:

Բայց այդ որոշումը՝ ռուսական զորքերին օգնության կանչելու մասին, ձևական բնույթ ուներ: Հարցն այն է, որ ապրիլի 27-ի առավոտյան ժամը 4-ին 11-րդ բանակի զորամասերը 4 զրահագնացքի ուղեկցությամբ արդեն սկսել էին հարձակումը և մտել Ադրբեջանի տարածքը: Ադրբեջանի հեղկոմը նման որոշմամբ դիմեց Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը՝ Ադրբեջան մտած ռուսական զորքերի գործողություններին օրինականություն տալու նպատակով:

Ընդ որում, եթե սկզբում, ինչպես երևում է Լենինի հեռագրից, խոսք էր գնում միայն Բաքուն իր շրջաններով գրավելու մասին, ապա ապրիլի 23-ին Կովկասյան ճակատի հրամանատարությունը հրահանգ է ստանում ամբողջ Ադրբեջանը գրավելու մասին:

Նախորդ գլխում բերված նյութերը ցույց տվեցին, որ Ադրբեջանի խորհրդայնացմանը մասնակցություն բերեց նաև Թուրքիան:

Կատարվեց այն, ինչը Մ. Քեմալը 1920 թվականի ապրիլի 26-ի նամակով առաջարկել էր Լենինին: Ռուսաստանի և Թուրքիայի փոխադարձ համաձայնությամբ, Թուրքիայի ճնշման տակ, Ադրբեջանն առանց կռվի մտավ բոլշևիկյան կայսրության ազդեցության ոլորտը, նվաճվեց բոլշևիկյան զորքերի կողմից, որոնց օգնեցին նաև թուրքական ջոկատներ: Հասկանալի է, որ դրա փոխարեն Թուրքիան պետք է ստանար համապատասխան փոխզիջումներ Ռուսաստանի կողմից:

Ադրբեջանի գրավումը, ինչպես տեսանք, կատարվեց բոլշևիկների կողմից մշակված դասական սցենարով: Կոմունիստական կուսակցության Բաքվի կոմիտեն կազմակերպեց արհեստական, ցուցադրական ապստամբություն, հրավիրեց կարմիր բանակի

[1] "Известия Временного революционного комитета Азербайджана", N 1, 29 апреля 1920.

զորամասերին, որոնք գրավեցին Ադրբեջանը:

Ադրբեջանի նվաճումից հետո հերթը հասավ Վրաստանին և Հայաստանին: Ինչպես հիշատակեցինք վերը, Լենինը իր հեռագրերից մեկում Կովկասյան ճակատի ղեկավարությունից արդեն պահանջում էր գրավել նաև Վրաստանը: Կովկասյան ճակատի և Կովկասյան բյուրոյի ղեկավարությունը Ադրբեջանից հետո ծրագրեր էր մշակում Վրաստանը և Հայաստանը գրավելու ուղղությամբ: Եվ իհարկե, այս երկու հանրապետությունների գրավումն էլ պետք է կատարվեր դասական սցենարով, այսինքն՝ տեղերում ապստամբություններ կազմակերպելու և կարմիր բանակի զորամասերին հրավիրելու միջոցով: «Այն պահից,– գրում է Օրջոնիկիձեն,– երբ խորհրդային իշխանությունը հաստատվեց Ադրբեջանում, Ադրբեջանը մեր ելակետն էր, որտեղից մենք գրոհեցինք մենշևիկների և դաշնակցականների ազգայնական, բուրժուահակահեղափոխական կառավարությունների վրա»[1]:

Վրաստանում և Հայաստանում հեղաշրջում կատարելու համար փորձ է արվում օգտագործել մայիսմեկյան ցույցերը: Մայիսի 1-ին խոշոր ցույցեր են կազմակերպվում Թիֆլիսում և Երևանում: Բոլշևիկները փորձում են դրանք վերածել հակապետական ապստամբության:

Երկրային կոմիտեն, ասվում է «Քաղաքացիական պատերազմը և ռազմական ինտերվենցիան ԽՍՀՄ-ում» հանրագիտարանում, 1920 թվականի մայիսի սկզբներին անհաջող փորձեր արեց ապստամբություններ բարձրացնելու Վրաստանում և Հայաստանում[2]: Մայիսի 2-ին բոլշևիկները փորձում են զինված ուժով գրավել իշխանությունը Թիֆլիսում, սակայն նրանց փորձը վերջանում է անհաջողությամբ: Գ. Օրջոնիկիձեն, որը Անդրկովկասի գրավման ծրագրի անմիջական կազմակերպիչն ու ղեկավարն էր, այդ մասին անմիջապես հայտնում է Լենինին. «Մայիսի 2-ին իշխանության զավթման փորձ է եղել Թիֆլիսում, բայց անհաջող»[3]:

Ապստամբության միջոցով իշխանության գրավման անհաջող փորձից հետո բոլշևիկներն անցան Վրաստանը կարմիր զորքերի միջոցով նվաճելու քաղաքականությանը: Մայիսի 3-ին Օրջոնիկիձեն Բաքվից հեռագրում է Մոսկվա. «Ամեն ինչ հաշվի է

---

[1] **Г. К. Орджоникидзе**, Статьи и речи, М., 1956, т. 1, с. 256.

[2] Гражданская война и военная интервенция в СССР. Энциклопедия, с. 245.

[3] Государственный архив Российской Федерации (այսուհետև՝ ГАРФ), ф. 130, оп. 4, д. 496, л. 43.

առնված և կատարվում է այնպես, որ հույս ունենք Թիֆլիսում լինել մայիսի 15-ից ոչ ուշ»: Մեկ օր հետո Օրջոնիկիձեն նորից է հեռագրում Մոսկվա. «Իրադարձությունները զարգանում են այնպես, որ հույս ունենք 12-ից ոչ ուշ լինել Թիֆլիսում, դրա համար ամեն ինչ արված է: Գործողությունը կանցնի փայլուն»[1]:

Սակայն Վրաստանի գրավման նախապատրաստական աշխատանքների տենդագին շրջանում կտրուկ կերպով փոխվում է միջազգային իրադրությունը: Մայիսի 4-ին Չիչերինը մի նամակով դիմում է Լենինին, որում հայտնում է Քերզոնի ռադիոգրի մասին: Համաձայն այդ ռադիոգրի, առաջարկվում էր ընդհանուր ներում և հաշտվողական վերաբերմունք պարտված սպիտակ գվարդիականների նկատմամբ: Նրանում խոսվում էր Ղրիմում և Կովկասում պատերազմական գործողությունները դադարեցնելու մասին: Ի պատասխան այդ ռադիոգրի, Չիչերինն առաջարկում էր՝ «Համաձայնել Վրանգելին ներում շնորհելուն և ***դադարեցնել հետագա առաջխաղացումը Կովկասում, որտեղ մենք ամեն արժեքավոր բան արդեն գրավել ենք, և կարելի է առանց բոպե անգամ հապաղելու պատասխանել համաձայնությամբ»***[2]:

Ընթերցողի ուշադրությունն ենք հրավիրում Չիչերինի նամակի մեր կողմից ընդգծված տողերի վրա: Ոչ մի տարբերություն չկա իմպերիալիստական պետությունների և Խորհրդային Ռուսաստանի քաղաքականությունների միջև: Չիչերինն առաջարկում է դադարեցնել հարձակումը, քանի որ Անդրկովկասում ամեն արժեքավոր բան արդեն զավթվել է: Այս տողերը լիովին բացահայտում են Խորհրդային Ռուսաստանի նվաճողական, իմպերիալիստական քաղաքականության էությունը Անդրկովկասում: Նման քաղաքականությունը ոչ մի առնչություն չունի սոցիալիզմի գաղափարների և մասնավորապես ազգերի ինքնորոշման իրավունքի հետ:

Չիչերինի առաջարկները հավանության են արժանանում Լենինի կողմից: Նա մայիսի 4-ին դիմում է Տրոցկուն, առաջարկելով. «Ըստ իս, Չիչերինն իրավացի է. իսկույն նեթ պատասխանել՝ համաձայնելով 1) դադարեցնելու պատերազմական գործողությունները (ա) Ղրիմում և (բ) Կովկասում (ճշտորեն կշռադատելով յուրաքանչյուր բառը) և 2) բանակցելու Ղրիմը մաքրելու պայմանների շուրջ սպիտակների ընդհանուր ամնիստիայի և 3) Վրան-

[1] РГАСПИ, ф. 461, оп. 1, д. 33508, л. 1.
[2] **Վ. Ի. Լենին,** ԵԼԺ, հ. 51, էջ 498:

գելի հետ բանակցություններին անգլիական սպայի մասնակցության սկզբունքի (ոչ ավելի) հիման վրա: Չիչերինին տրվող պատասխանի տեքստը հենց այսօր քննարկել քաղբյուրոյում՝ այսօր գիշերը պատասխանելու համար: Ձայները կհավաքենք հեռախոսով»[1]:

Նույն օրը, մայիսի 4-ին Քաղբյուրոն հավանություն է տալիս Չիչերինի առաջարկներին: Նիստից հետո Քաղբյուրոյի հանձնարարությամբ Լենինը և Ստալինը հեռագրում են Օրջոնիկիձեին. «Կենտկոմը Ձեզ պարտավորեցնում է զորամասերը Վրաստանից հետ քաշել դեպի սահմանը և ձեռնպահ մնալ Վրաստանի վրա հարձակվելուց: Թիֆլիսի հետ բանակցություններից հետո պարզ է, որ Վրաստանի հետ հաշտությունը բացառված չէ: Անհապաղ հաղորդեցեք բոլոր ճշտագույն տվյալները ապստամբների մասին»[2]:

Չնայած Քաղբյուրոյի որոշմանը, Օրջոնիկիձեն և Կիրովը այնուամենայնիվ այն կարծիքին էին, որ անգամ հաշտություն կնքելու դեպքում, այն պետք է ուղեկցվի Վրաստանում խորհրդային իշխանություն հաստատելու պայմանով: Նրանք միաժամանակ ցանկանում էին Մոսկվային գործը ներկայացնել այնպես, որ Վրաստանի որոշ շրջաններ կանգնած են անխուսափելի ապստամբության փաստի առաջ, հույս ունենալով կենտրոնից թույլտվություն ստանալ և, զինված ուժով ապստամբներին օգնելու պատրվակով, գրավել այդ հանրապետությունը ևս: Այդ է պատճառը, որ մայիսի 7-ին նրանք Լենինի և Ստալինի հեռագրին պատասխանում են. «Ձեր հրամանը կկատարվի ճշտությամբ... Ապստամբական շրջանը՝ Հարավային Օսիա, Դուշեթի, Լագոդիի գավառ, Աբխազիա և գրեթե ամբողջ Քութայիսի նահանգը: Դեպի սահմանները մեր առաջխաղացման դեպքում ապստամբությունը հիշյալ շրջաններում անխուսափելի է: Ինչ կհրամայեք անել՝ աջակցե՞լ ապստամբությանը, թե՞ ոչ: Մեր կարծիքով, Վրաստանի հետ հաշտության պայմաններում անպայման պետք է պահանջ առաջ քաշել Վրաստանում խորհրդային իշխանություն հայտարարելու մասին»[3]:

Ի պատասխան այդ հեռագրի, Լենինի և Տրոցկու ստորագրությամբ մի հեռագիր է ուղարկվում Օրջոնիկիձեին, որում ասվում

---

[1] Նույն տեղում, էջ 224:
[2] Նույն տեղում, էջ 223:
[3] Ленинский сборник, т. XXXIV, с. 276.

է. «Դա արմատապես հակասում է Կենտկոմի որոշմանը: Կարող է կորստաբեր հետևանքներ ունենալ: Կենտրոնական կոմիտեն ոչ մի դեպքում թույլ չի տալիս: Կտրականապես պահանջում ենք կասեցնել կատարումը և չեղյալ հայտարարել որոշումը»[1]:

Խորհրդային Ռուսաստանի՝ Վրաստանի գրավման ծրագրի կտրուկ փոփոխությունը պայմանավորված էր Լեհաստանի և Վրանգելի զորքերի հաջող հարձակման ծավալմամբ: Մայիսին լեհական զորքերը խոշոր հաջողությունների հասան: Խորհրդային Ռուսաստանը հարկադրված էր իր հիմնական ուժերն ուղարկել Լեհական ճակատ, իսկ Անդրկովկասում ժամանակավորապես դադարեցնել ռազմական գործողությունները:

Բնականաբար, բացի վերոհիշյալից, այդ նվաճողական ծրագրի կտրուկ փոփոխությունն առնչվում էր հիմնականում Քերզոնի ռադիոգրի հետ, որի հիման վրա Քաղբյուրոն, ինչպես հիշատակեցինք վերը, հատուկ որոշում էր կայացրել՝ Կովկասում հարձակումը ժամանակավորապես դադարեցնելու մասին:

Այժմ անդրադառնանք Հայաստանի իրավիճակին: Խորհրդային Ռուսաստանը, ինչպես նշեցինք վերը, Ադրբեջանի և Վրաստանի հետ միասին նպատակ ուներ գրավելու նաև Հայաստանը: Ընդ որում, Հայաստանը ևս պետք է նվաճվեր նույն սցենարով. բոլշևիկյան կազմակերպությունների ապստամբություն, ռուսական զորքերի հրավիրում, խորհրդային իշխանության բռնի հաստատում: Եվ հենց այդ տարբերակով էին ղեկավարվում Հայաստանի բոլշևիկները, երբ մայիսմեկյան ցույցերը վերածեցին ապստամբության: Երկրային կոմիտեին ուղարկված զեկուցագրի մեջ բոլշևիկների Հայաստանի կոմիտեն այդ կապակցությամբ հայտնում է. «Հաշվի առնելով այդ ամենը և նկատի ունենալով Հայաստանի կազմակերպությունների կոնֆերանսի որոշումը, Հայաստանում սովետական զորքերը մոտենալիս, ինչպես նաև հարևան հանրապետություններում հեղաշրջումներ լինելուց հետո, Հայաստանում իշխանությունը գրավելու նպատակով ելույթ ունենալու մասին, Արմենկոմը սկսեց այդ ուղղությամբ աշխատանք կատարել»[2]: Ապստամբությունը պետք է սկսվեր Ղազախից, որը սահմանակից էր Ադրբեջանին: Դա ռուսական

---

[1] **Վ. Ի. Լենին,** ԵԼԺ, հ. 51, էջ 228:

[2] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1960, էջ 332:

զորքերին հնարավորություն կտար հայ բոլշևիկների հրավերով անմիջապես մտնել ապստամբության շրջանը, այն ելակետ դարձնելով ամբողջ Հայաստանը գրավելու համար: Բայց, ոգևորված մայիսմեկյան ցույցերի հաջողությունից, բոլշևիկների Ալեքսանդրապոլի կազմակերպությունն իր վրա վերցրեց շարժման ղեկավարությունը և մայիսի 10-ին Ալեքսանդրապոլում Հայաստանը հռչակեց Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն: Ալեքսանդրապոլին հետևեցին Կարսի, Սարիղամիշի, Նոր Բայազետի, Դիլիջանի, Իջևանի, Շամշադինի և Զանգեզուրի բոլշևիկյան կազմակերպությունները:

Ապստամբները դիմեցին Լենինին, Կովկասյան բյուրոյին, 11-րդ բանակի ռազմահեղափոխական խորհրդին, Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովին՝ խնդրելով զինված օգնություն: Լենինին ուղարկված Դիլիջանի հեղկոմի մայիսի 17-ի հեռագրում ասվում էր. «Պետք է լսվի այն հերոսական ժողովրդի ձայնը, որն օգնության է կանչում Կարմիր բանակին: Հայաստանի ապստամբ, բուրժուական բռնադատիչների լծի դեմ պայքարող բանվորներն ու գյուղացիները օգնություն են սպասում աշխարհի ազատարարից՝ Սովետական Ռուսաստանից»[1]: Մայիսի 18-ին օգնության խնդրանքով Նարիմանովի մոտ եղան Շամշադինի բոլշևիկ ապստամբների ներկայացուցիչները: Դիլիջանի ապըստամբները կապ ստեղծեցին 11-րդ բանակի 20-րդ լեռնահրաձգային դիվիզիայի զորամասերի հետ:

Իջևանի հեղկոմի նախագահը մայիսի 21-ին և 24-ին հեռագրեր է տալիս Օրջոնիկիձեին, խնդրելով ապստամբներին օգնելու համար զորք ուղարկել: Օրջոնիկիձեին ուղղված հեռագրերից մեկում նա գրում է. «Խնդրում եմ կարգադրեցեք անմիջապես 20-րդ դիվիզիայից Քարվանսարա և Դիլիջան ուղարկել թեկուզ մի փոքրաթիվ զորամաս, որի առկայությունը վերջ կդնի սադրանքներին»: Մի այլ նմանատիպ հեռագրում նա ավելացնում է, որ «Հայաստանի տարածքում կարմիր զորամասերի ներկայությունը անհրաժեշտ է բացառապես բարոյական ազդեցություն թողնելու համար և դաշնակցականների սադրանքների դեմ պայքարելու նպատակով»: Ընդ որում, հայ բոլշևիկները Մոսկվային փորձում էին հավատացնել, որ «եթե ռուս կարմիրբանակայինները մեզ հետ լինեն, մենք համոզված կլինենք հաղթանակի մեջ: Մեզ պետք չէ, որ նրանք կռվեն մեր փոխարեն, մեզ անհրաժեշտ է

[1] Նույն տեղում, էջ 322:

միայն տեսնել և իմանալ, որ նրանք իրոք մեզ հետ են»[1]:

Դիլիջանի գավառային հեղկոմի ներկայացուցիչները մայիսի 16-ին լինում են Ղազախում և օգնության խնդրանքով Լենինին ուղղված նմանատիպ մի դիմում հանձնում Կովկասյան բյուրոյին և 11-րդ բանակի շտաբին: Դիմումում խնդրվում էր կարմիր բանակի զորամասերն անմիջապես մտցնել Դիլիջան և շարժվել դեպի Երևան: Եվ իհարկե, փորձ էր արվում Մոսկվային հավատացնել, որ դաշնակցության քաղաքականությունը լիովին սնանկացել է, և զորքն ու ժողովուրդը կանցնեն հեղափոխության կողմը, որ անգամ դաշնակցական զինվորը չի կրակի կարմիր բանակայինի վրա: Դիմումում ասվում էր. «Հանուն արյան մեջ խեղդվող տասնյակ հազարավոր հայ և մահմեդական աշխատավորների կյանքի փրկության և նրանց կեղեքումից ազատագրելու, պետք է լսել ապստամբ հերոս ժողովրդի ձայնը, որը Կարմիր բանակին կոչ է անում օգնության հասնել: Հայաստանի բանվորներն ու գյուղացիները օգնություն են սպասում միայն աշխարհի ազատարար Խորհրդային Ռուսաստանից»[2]:

Բոլոր այն փաստաթղթերը, որոնք այդ ժամանակ բոլշևիկները ուղարկում էին կենտրոն, հետապնդում էին մեկ նպատակ՝ համոզել Ռուսաստանի ղեկավարությանը, որ հայ ժողովուրդը երես է թեքել դաշնակցությունից, պատրաստ է Հայաստանում հաստատել խորհրդային իշխանություն: Կարմիր բանակը, փորձում էին հավատացնել հայ բոլշևիկները, միայն բարոյական գործոն է լինելու, խորհրդային կարգերը հաստատվելու են առանց մի կրակոցի:

Հետաքրքիրն այն է, որ այս հեռագրերն ուղարկելու օրերին 11-րդ բանակի երկու հեծյալ գնդեր արդեն մտել էին Հայաստան, գրավել Իջևանը, Դիլիջանը և շարժվում էին դեպի Երևան: Պարզապես անհրաժեշտ էր կատարվածին օրինական բնույթ տալ, ստանալ Մոսկվայի համաձայնությունը՝ Հայաստան զորք մտցնելու համար: Այդ զորամասերը Հայաստան էին մտել առանց Մոսկվայի գիտության, Օրջոնիկիձեի անձնական նախաձեռնությամբ: Իսկ կենտրոնը, ելնելով արտաքին և ներքին բացասական գործոնների առկայությունից, ***այդ ժամանակ տատանվում էր Հայաստան զորք մտցնել:*** Ռուսական հրաձգային դիվիզիայի հրամանատար Շտեյգերի զեկուցագրում Հայաստան զորք մտցը-

[1] РГАСПИ, ф. 85, оп. 14, д. 1, л. 1.
[2] ГАРФ, ф. 130, оп. 4, д. 496, л. 65-66.

նելու մասին ասվում է, որ 1920 թ. մայիսի 20-ի առավոտյան կարմիր զորքերն անցան Հայաստանի սահմանները՝ Ղազախից և մտան Իջևան, որտեղ ստեղծվեց հեղկոմ, հռչակվեց խորհրդային իշխանություն: Այնուհետև զորքերը շարժվեցին դեպի Դիլիջան, որին տիրացան առանց կռվի:

Ա. Միկոյանը, ստանալով ապստամբ բոլշևիկների օգնության խնդրանքով հեռագրերը, անմիջապես Օրջոնիկիձեին հայտնում է. «20-ի առավոտյան մեզ մոտ կլինեն հայ ապստամբների պատվիրակները, որոնք խնդրում են Ղազախի զավառի ապստամբներին ցույց տալ զինված օգնություն: ***Ապստամբ ժողովրդի խնդրանքով բարենպաստ առիթ կա Կարմիր բանակը Հայաստան մտցնելու համար*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.): Անհապաղ հայտնեցեք՝ ինչպիսի միջոցներ եք նպատակահարմար համարում ձեռք առնել»[1]:

Պատրաստելով բոլոր «օրինական» փաստաթղթերը՝ ռուսական զորքերին օգնության կանչելու մասին, Օրջոնիկիձեն մայիսի 22-ին հեռագրում է Լենինին. «Գիշերը վերադարձա Ղարաբաղից: Թե՛ հայ և թե՛ մուսուլմանական բնակչությունը ուրախությամբ է դիմավորում ռուսական կարմիր զորքին: Կարծում եմ, որ Շուշիի, Նախիջևանի, Օրդուբադի և Ջուլֆայի շրջանները կգրավենք առանց դիմադրության: Հայերի կողմից ամսի տասին Ալեքսանդրապոլում տեղական բանվորները, կայազորը և զրահագնացքը հռչակել են Հայկական խորհրդային հանրապետություն: Խորհրդային իշխանությունը պահպանվել է չորս օր, որից հետո ապստամբությունը ճնշվել է: Դիլիջանի շրջանից եկել են հայ կոմունիստներ՝ խնդրելով աջակցել իրենց...»[2]: Նույն օրը Լենինին և Չիչերինին հղված մեկ այլ հեռագրում Օրջոնիկիձեն գրում է. «Քարվանսարայի համագումարի կողմից հաստատված է Խորհրդային իշխանություն: Հայկական կանոնավոր զորամասերից երկու գունդ անցել են ապստամբների կողմը: Հեղկոմը դիմել է մեզ օգնության համար: Խնդրում եմ Ձեր շտապ և ճշգրիտ պատասխանը»[3]:

Կարախանը Օրջոնիկիձեին ուղղված մի հեռագրում, որը ուղարկել էր մինչև մայիսի 11-ը (օրը ճշտված չէ), Հայաստանում ռազմական գործողություններ սկսելու մասին գրել է. «Իլյիչը

---

[1] РГАСПИ, ф. 85, оп. 14, д. 1, л. 2.
[2] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան..., էջ 323:
[3] ГАРФ, ф. 130, оп. 4, д. 496, л. 72.

հանձնարարել է Ձեզ հաղորդել, որ հարկ չկա մեր հետագա տարածմանը: Անհրաժեշտ է չանցնել հին՝ Ադրբեջանի հետ ունեցած սահմանները»[1]: Կարախանի այս հեռագրից երևում է, որ մինչև մայիսյան ապստամբության սկիզբը՝ այսինքն մայիսի 10-ը, արդեն բոլշևիկների կողմից կենտրոնին դիմում է եղել՝ Հայաստան զորք մտցնելու խնդրանքով:

Ուրեմն, Խորհրդային Ռուսաստանի ղեկավարությունը, Ադրբեջանը գրավելուց հետո, ելնելով արտաքին և ներքին ռազմաքաղաքական բարդություններից, դեռ ապրիլի վերջերին և մայիսի սկզբներին վճռում է ***օրակարգից ժամանակավորապես հանել Վրաստանի և Հայաստանի գրավման հարցը:*** Կարախանը տվյալ դեպքում ղեկավարվում էր Քաղբյուրոյի մայիսի 4-ի որոշմամբ:

Բայց, չնայած այդ որոշմանը, Օրջոնիկիձեն փորձում է կենտրոնին կանգնեցնել կատարված փաստի առաջ, իրականացնել Հայաստանի գրավման ծրագիրը, որին Կարախանը Լենինի հանձնարարությամբ պատասխանում է վճռական մերժումով:

Ռուսաստանի կառավարության որոշման վրա, արտաքին գործոնի հետ միասին, որոշակի ազդեցություն ունեցան Ադրբեջանում ծավալված հակախորհրդային շարժումները, որոնք պոռթկացին մայիսի վերջերին: Մայիսի 25-ին ապստամբեց Գյանջան, հունիսի սկզբներին՝ Զաքաթալան և ապա մի քանի այլ շրջաններ: Այդ պատճառով Հայաստան մտած 11-րդ բանակի զորամասերը շտապ հետ վերադարձան: Այդ դեպքերի հետ է առնչված 1920 թ. հունիսի 2-ին Լենինի Ստալինին ուղարկված հեռագրի այն միտքը, որ զորքեր «Կովկասյան ռազմաճակատից այլևս վերցնել չի կարելի, քանի որ այնտեղ ապստամբություններ են, և դրությունը ծայրաստիճան տագնապալի է»[2]:

Օրջոնիկիձեն մայիսի 22-ի ոչ առաջին և ոչ էլ երկրորդ հեռագրերում Մոսկվային չի հայտնում, որ իր կարգադրությամբ կարմիր բանակի երկու գունդ արդեն մտել են Հայաստան: Օրջոնիկիձեն և Միկոյանը պատրվակ էին որոնում Մոսկվայի կողմից ռուսական զորքերը Հայաստան մտցնելու իրավունք ստանալու համար: Եվ այդ պատրվակները պետք է հանդիսանային բոլշևիկների կողմից կազմակերպված ապստամբությունները, որոնք ուղեկցվում էին խորհրդային զորքերը Հայաստան մտցնելու

---

[1] Российский государственный военный архив, ф. 4, оп. 1, д. 158, л. 169.

[2] **Վ. Ի. Լենին**, ԵԼԺ, հ. 51, էջ 239:

խնդրանքով: Օրջոնիկիձեն փորձում էր Մոսկվային հավատացնել, որ հայ ժողովուրդը ողջունում է կարմիր բանակի մուտքը Հայաստան, որ այն նվաճվելու է առանց կրակոցի: Նրա մայիսի 22-ի հեռագրերը այդ նպատակն էին հետապնդում:

Խորհրդային Ռուսաստանն, իր հերթին, վերը նշված պատճառներով ժամանակավորապես օրակարգից հանելով Հայաստանի գրավման ծրագիրը, միաժամանակ, իհարկե, հաճույքով կիրագործեր այն, եթե անվիճելի ապացույցներ ստանար, որ Հայաստանի Հանրապետությունը կհանձնվի առանց դիմադրության կամ ծայրահեղ դեպքում կպարտվի թույլ դիմադրություն ցույց տալով:

Ահա թե ինչու Օրջոնիկիձեի մայիսի 22-ի հեռագրերին Կարախանը մայիսի 23-ին տալիս է հետևյալ պատասխանը. «Հաստատ որոշում ընդունելու համար, Հայաստանի վիճակի մասին եղած տեղեկությունները Ստալինը համարում է անբավարար և խնդրում է Ձեզ տալ լրացուցիչ տեղեկություններ այն մասին, թե ինչի վրա մենք կարող ենք հույս դնել... Ստալինի համար տվեք ապացույցներ հօգուտ այն բանի, որ Հայաստանի զորքը և բնակչությունը մեզ կդիմավորեն առանց դիմադրության, իսկ եթե դիմադրություն լինի, ապա դուք հաշիվը կմաքրեք առանց դժվարության...»[1]:

Սակայն Օրջոնիկիձեն նոր ապացույցներ չուներ հօգուտ այն բանի, որ Հայաստան զորք մտցնելու դեպքում դիմադրություն չի լինելու: Ընդհակառակը, այդ ընթացքում Հայաստանի տարբեր վայրերում կազմակերպված բոլշևիկների կղզիացած ապստամբությունները, զանգվածային բնույթ չընդունելով, կառավարական զորքերի կողմից անջատ-անջատ հեշտությամբ ջախջախվեցին: Այդ իրադարձությունները ցույց տվեցին, որ մայիսին հայոց բանակն առանց դիմադրության թույլ չէր տա բոլշևիկյան զորքերին գրավելու Հայաստանը:

Հայաստանի գրավման հարցը մտցվեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրո: Ուսումնասիրելով Հայաստանի մասին ստացած բոլոր փաստաթղթերը և ելնելով Ռուսաստանի արտաքին ու ներքին աննպաստ իրավիճակից, Քաղբյուրոն 1920 թ. մայիսի 25-ին քննում է Հայաստան զորք մտցնելու հարցը և որոշում. «Շարունակել բանակցությունները Հայաստանի կառավարության հետ, չվերցնելով ռուսական զորքերի օգնությամբ անմիջապես

[1] РГАСПИ, ф. 85, оп. 14, д. 29, л. 2 и об.

խորհրդայնացման նախաձեռնությունը: Բոլոր միջոցներով Նախիջևանը պաշտպանել Թուրքիայի և Անտանտի ազդեցությունից»[1]:

Այսպիսով, Խորհրդային Ռուսաստանը 1920 թվականի մայիսից պաշտոնապես հրաժարվում է Հայաստանը զինված ուժերի օգնությամբ գրավելու ծրագրից և անցնում հարցերի լուծմանը՝ Հայաստանի Հանրապետության հետ բանակցություններ վարելու միջոցով: Այդ չի նշանակում, իհարկե, թե Ռուսաստանը հրաժարվում էր Հայաստանը գրավելու ծրագրից: Պարզապես ժամանակավորապես փոխվում էին Ռուսաստանի նվաճողական քաղաքականության իրականացման ձևերը:

Չնայած Քաղբյուրոյի 1920 թ. մայիսի 25-ի որոշմանը, 11-րդ բանակը Օրջոնիկիձեի գլխավորությամբ շարունակում էր հայկական տարածքների նվաճումը:

Բաքվում կենտրոնացված թուրքամետ գործիչների հակահայկական գործունեությունն այնպիսի սպառնալից չափեր է ընդունում, որ դա Չիչերինին հարկադրում է հարցը ներկայացնել Քաղբյուրոյի քննարկմանը: Քաղբյուրոյին ներկայացված գրության մեջ Չիչերինը գրում էր. «Բաքվի ընկերների անկարգապահությունը, նրանց գործունեության և Կենտկոմի կողմից հաստատված քաղաքական գծի միջև եղող աղաղակող հակասությունը հարկադրում են միջոցներ ձեռք առնել նրանց սանձահարելու համար: Այդպիսի միջոցառում պետք է լինի այստեղից հեղինակավոր ընկերոջ՝ Ժողկոմխորհի լիազորություններով Բաքվում ներկայացուցիչ նշանակելը, որը կապված չլինի կովկասյան խմբի գործիչների հետ: Այն ժամանակ, երբ Կենտկոմը որոշել է փոխզիջման քաղաքականություն վարել Վրաստանի և Հայաստանի բուրժուական կառավարությունների հետ, դիվանագիտական ճանապարհով այնտեղ արմատախիլ անել Անտանտի ոտքի տակի հողը և մերժել Հայաստանի խորհրդայնացումը, այլևս անժամանակ գտնելով այդ ուղղությամբ մեր ուժերը զբաղեցնելը, Բաքվի ընկերները իրենց գործողություններով տապալում են փոխզիջումները, մերժում են Կենտկոմի կողմից պահանջվող համաձայնագրի կնքումը Հայաստանի հետ, օժանդակում են ապստամբություններին, պնդում են Ադրբեջանին միացնելու այն

[1] Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ), հավ. 1, գ. 2, թ. 43 և հակառակ երես:

վիճելի տարածքները, որոնք որոշված է գրավել մեր ուժերով և որոնց միացումը Ադրբեջանին բացարձակապես անհնարին է դարձնում համաձայնագրի կնքումը Հայաստանի հետ: Բաքվի ընկերների այդ ամբողջ մարտական քաղաքականությունն արմատապես հակասում է Կենտկոմի արդեն հաստատված գծին: Վերջինիս տապալումից կարելի է խուսափել միայն այն դեպքում, եթե Կենտկոմի հեղինակավոր ներկայացուցիչը պարբերաբար զսպի տեղական ընկերներին»[1]:

Չիչերինի գրության հիման վրա հունիսի 22-ին Քաղբյուրոն քննում է «Կովկասում վարվող քաղաքականության մասին» հարցը և ընդունում հետևյալ որոշումը. «Առաջարկել Արտգործժողկոմատին մինչև այժմ ընդունած որոշումների և դրանցից բխող եզրակացությունների հիման վրա, միանգամայն ճշտորեն ձևակերպել հրահանգ՝ Արևելքում մեր առավել պատասխանատու աշխատողների համար...: Ռազմական գերատեսչությանը պարտադրել, Քաղբյուրոյի հավանությունը ստանալուց հետո, այդ հրահանգը ի ղեկավարություն ուղարկել բոլոր պատասխանատու ռազմական աշխատողներին, զգուշացնելով, որ նրանք իրենց բոլոր գործողությունները խստագույնս համաձայնեցնեն այդ ցուցումների հետ: Նմանատիպ հրահանգներ տալ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի բոլոր անդամներին: Հանձնարարել Արտգործժողկոմատին հրահանգը ուղարկել ընկ. ընկ. Կիրովին և Լեգրանին»[2]: Չիչերինի գրությունը հետաքրքիր է նրանով, որ նա քաջատեղյակ լինելով Անդրկովկասում կատարվող իրադարձություններին, որոշում է սանձահարել, կարգի հրավիրել հակահայկական, թուրքամետ խմբին, որը շատ ուժեղ էր: «Բաքվի ընկերներ» արտահայտության մեջ մտնում էին՝ Կովկասյան բյուրոյի թուրքամետ անդամները, Ադրբեջանի հեղկոմը՝ Նարիմանովի ղեկավարությամբ, Ադրբեջանի կոմկուսի ղեկավարությունը, 11-րդ բանակի հրամանատարությունը և ռազմահեղափոխական խորհուրդը: «Բաքվի ընկերները» ղեկավար ցուցումները ստանում էին Ստալինից, իսկ դրանք կենսագործվում էին Օրջոնիկիձեի գլխավորությամբ:

Պայքարի այս փուլում հաղթում է Չիչերինը: Քաղբյուրոն ընդունում է Չիչերինի առաջարկը: Սակայն Քաղբյուրոյի ընդունած որոշումը դեկլարատիվ էր, այն կատարման մեխանիզմ չուներ:

---

[1] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 509.

[2] Նույն տեղում, էջ 508:

Քաղբյուրոն չընդունեց Չիչերինի գրության մեջ պարունակվող այն որոշակի առաջարկը, որի համաձայն, տեղական ընկերներին զսպելու համար պետք է մեծ իրավասություններով Բաքու մշտական աշխատանքի ուղարկվեր Կենտրոնի ներկայացուցիչը:

Այդ է պատճառը, որ Քաղբյուրոյի որոշումը գործնական նշանակություն չունեցավ: Թուրքամետ խումբն այդ որոշումից հետո ևս շարունակեց իր հակահայկական քաղաքականությունը և ակտիվ պայքար ծավալեց Հայաստանի տարածքները նվաճելու ուղղությամբ:

Չիչերինը հարկադրված էր նորից դիմելու Քաղբյուրոյին: Չիչերինը Անդրկովկասում կատարվող քաղաքական իրադարձությունների, թուրքամետ խմբի Հայաստանի դեմ սանձազերծած ռազմական գործողությունների մասին հունիսի 29-ին մի մանրամասն նամակ է գրում Լենինին: Նամակի շարադրանքը և վերլուծությունը մենք կտանք աշխատության հաջորդ գլխում: Չիչերինի նամակի դրույթներն այնքան կարևոր էին, որ Քաղբյուրոն հարկադրված էր նորից անդրադառնալ Հայաստանի հարցին:

Քաղբյուրոն, հունիսի 30-ին, Չիչերինի առաջարկով, քննում է «Դեպի Հայաստան ռուսական զորքերի առաջխաղացումը կանգնեցնելու մասին» հարցը: Քաղբյուրոն որոշում է առաջարկել Չիչերինին հրահանգ տալ այն մասին, որպեսզի ռուսական զորամասերը դադարեցնեն իրենց առաջխաղացումը: Անհրաժեշտ է Կովկասի ընկերներին հասկացնել, ասվում է որոշման մեջ, որ նրանք պատրվակ չստեղծեն Թուրքիայի հարձակման համար[1]:

Ամբողջ Անդրկովկասը, ինչպես ցույց տվեցին մեր կողմից բերված նյութերը, պետք է նվաճվեր Խորհրդային Ռուսաստանի կողմից, դա անկասկած էր: Իսկ մայիսին Ռուսաստանը պարզապես ժամանակ էր շահում Անդրկովկասում իր ունեցած նվաճողական ծրագրերի իրականացման լավագույն լուծումները գտնելու համար: Ռուսաստանի նվաճողական ծրագրերը վերջնականապես ձևավորվեցին, որոշակիացան և ամբողջացան 1920 թ. հուլիս-օգոստոս ամիսներին՝ Թուրքիայի պատվիրակության հետ վարվող բանակցությունների ընթացքում, որտեղ ամբողջ մերկությամբ դրսևորվեցին այդ երկու ծավալապաշտ տերությունների՝ դարերի խորք ունեցող տարաձայնությունները Հայկական հարցում:

Հայաստանի Հանրապետության ճակատագիրը պետք է որոշվեր Ռուսաստանի և Թուրքիայի փոխադարձ համաձայնությամբ:

[1] Նույն տեղում, էջ 515:

Ստեղծված պատմական իրադրությունն այդ էր թելադրում և՛ Ռուսաստանին, և՛ Թուրքիային: Եթե մի կողմ թողնենք երկու պետությունների կառավարությունների կողմից արվող մերկապարանոց հայտարարությունները, ապա հարցը դրված էր միանշանակ. Հայաստանը պետք է նվաճվեր կա՛մ Ռուսաստանի, կա՛մ էլ Թուրքիայի կողմից: Համաձայնություն չկայանալու դեպքում Հայաստանը պետք է մասնատվեր:

Այսպիսի դժվարին պայմաններում Հայաստանի փրկության միակ հույսը պետք է լիներ ամբողջ հայ ժողովրդի միասնությունը, պետական չափազանց ճկուն դիվանագիտությունը և երկրի վերածումը ռազմական հզոր ճամբարի: Ավաղ, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, այդ հույսը իրողություն չդարձավ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

1. ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ (1920 Թ. ՄԱՅԻՍ-ՀՈՒԼԻՍ)

Բոլշևիկյան Ռուսաստանի արտաքին քաղաքականության ղեկավարները լավ էին հասկանում, որ թուրքական պատվիրակության հետ զուգահեռ անհրաժեշտ է Մոսկվա հրավիրել նաև Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը: Երկու կողմերի հետ վարվող բանակցություններում պետք է մշակվեր մի տարբերակ, որն ընդունելի լիներ և՛ Թուրքիայի, և՛ Հայաստանի համար և, որ ամենակարևորն է, բխեր Ռուսաստանի շահերից:

Ապրիլի 8-ին Օրջոնիկիձեն Վլադիկավկազում Հայաստանի ներկայացուցիչ Հ. Սառիկյանին հայտնում է. «Ես, որպես Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ, խնդրում եմ Ձեզ հայտնել Ձեր կառավարությանը, որպեսզի նա անմիջապես բանակցություններ սկսի Ռուսաստանի հետ՝ հաշտության պայմանագիր կնքելու և փոխհարաբերությունները որոշելու համար»[1]: Մայիսին Ռուսաստանի կառավարությունը դիմում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը, առաջարկելով երկու հանրապետությունների միջև հաստատել պայմանագրային հարաբերություններ՝ Հայաստանի Հանրապետության անկախությունը ճանաչելու հիման վրա:

Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը, ի սկզբանե վարելով արևմտամետ քաղաքականություն, Հայկական հարցի լուծման ակնկալությունները կապելով արևմտյան տերությունների հետ, 1920 թվականի սկզբներից, երբ Ռուսաստանը մոտեցավ Անդրկովկասի և Հայաստանի սահմաններին, սպառնալով նրա ազգային պետականության գոյատևմանը, իր հերթին, սկսեց ուղիներ որոնել բոլշևիկների հետ հարաբերությունները

[1] **Ս. Տ. Ալիխանյան**, Գ. Կ. Օրջոնիկիձեն և սովետական իշխանության հաստատումը Հայաստանում, Երևան, 1974, էջ 18:

կարգավորելու համար: «Հայաստանի կառավարությունը,– գրում է Ս. Վրացյանը, ինքն էլ զգում էր նման քայլի անհրաժեշտությունը, մանավանդ, երբ կարմիր բանակը մոտեցավ Ադրբեջանին»[1]:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Խորհրդային Ռուսաստանի հետ բանակցություններ վարելու համար ապրիլի վերջին կազմում է պատվիրակություն հետևյալ կազմով՝ Լևոն Շանթ (նախագահ), անդամներ՝ Համբարձում Տերտերյան և Լևոն Զարաֆյան: Պատվիրակության ստեղծումը Լևոն Շանթը բացատրում է նրանով, որ «բոլշևիկները արդեն տեր էին Ադրբեջանին և անոնց հետ լեզու մը գտնելը դարձեր էր անհրաժեշտ թե վրացիներուն համար և թե մեզի. ***ռուսը նորեն եկեր էր Կովկաս»***[2]:

Համաձայն Վրացյանի տվյալների, պատվիրակության առջև դրված էին հետևյալ խնդիրները.

«1. Խորհրդային Ռուսաստանը պետք է ճանաչէ Հայաստանի անկախությունը՝ ընդունելով Հայաստանի սահմաններում Ղարաբաղն ու Գյուլիստանը,

2. Խորհրդային Ռուսաստանը, գոնե սկզբունքով, պետք է ընդունէ թուրքահայ հողերի կցումը Հայաստանին,

3. Խորհրդային Ռուսաստանը չպիտի միջամտէ Հայաստանի ներքին գործերին, չպիտի Հայաստանում կոմունիստական գործունեություն ցույց տա,

4. Խորհրդային Ռուսաստանը պիտի թույլ տա, որ Հյուսիսային Կովկասում և Ռուսաստանում գտնվող հայ գաղթականները վերադառնան Հայաստան, և մի շարք ուրիշ հարցեր»[3]:

Շանթի պատվիրակությունը ապրիլի 30-ին ուղևորվում է Մոսկվա: Մայիսի վերջին պատվիրակությունը ժամանում է Մոսկվա և անմիջապես սկսում բանակցությունները: Մայիսի 31-ին Շանթը հայտնում է ՀՀ կառավարությանը, որ բանակցություններն արդեն սկսված են:

Մինչ այդ, մայիսի 4-ին, Օհանջանյանը հեռագրում է Չիչերինին. «Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է Ռուսաստանի սոցիալիստական կառավարությանը բանակցությունների մեջ մտնել նրա հետ երկու հանրապետությունների միջև պայմանագրային հարաբերություններ հաստատելու համար՝ Հայաստանի Հանրապետության անկախու-

---

[1] **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 453:
[2] Նույն տեղում, էջ 608:
[3] Նույն տեղում, էջ 453:

թյան ճանաչման և ինքնիշխանության հիմունքների վրա: Իմ կառավարության լիազորված պատվիրակությունն արդեն ձեր հանրապետության սահմաններում է հիշված բանակցությունները ձեր կառավարության հետ վարելու համար»:

Այդ հեռագրին Չիչերինը մայիսի 17-ին պատասխանում է. «Խորհրդային կառավարությունը սրանով հայտնում է իր համաձայնությունը կնքելու Հայաստանի կառավարության հետ պայմանագիր՝ երկու ժողովուրդների միջև բարեկամական հարաբերություններ հաստատելու նպատակով: Խորհրդային կառավարությունը սպասում է ձեր պատվիրակներին, որոնք արդեն ճանապարհվել են դեպի Մոսկվա: Ձեր պատվիրակության Մոսկվայից Երևան հաղորդակցության մեջ մտնելու տեխնիկական դժվարությունները վերացնելու նպատակով տրամադրեցինք մի ուղիղ հեռագրաթել՝ Ռոստովի և Թիֆլիսի վրայով»[1]:

Հայ-ռուսական բանակցությունները տևեցին շուրջ երկու ամիս: Խորհրդային կառավարության կողմից բանակցությունները վարում էր Կարախանը: Պատվիրակությունը հանդիպումներ էր ունենում նաև Չիչերինի հետ:

Սիմոն Վրացյանը, Շանթից ստացված նյութերի հիման վրա, չափազանց լավատեսորեն է բնութագրում բանակցությունների սկիզբը: Նա գրում է. «Բանակցություններն ընթացան շատ հաջող: Խորհրդային պատվիրակությունն ընդունեց Հայաստանի բոլոր պայմանները, և հունիսի 10-ին արդեն Շանթը հաղորդում էր Երևան, որ ռուս-հայկական դաշնագիրը արդեն կազմված է և մի երկու օրից կը ստորագրվի: Խորհրդային Ռուսաստանը անվերապահ պատրաստակամություն հայտնեց ճանաչելու Հայաստանի անկախությունը և չմիջամտելու նրա ներքին գործերին»[2]:

Սակայն իրողությունը այդպիսին չէր: Տաղանդավոր գրողը տաղանդավոր դիվանագետ չէր և այդ պատճառով էլ չէր ըմբռնել բոլշևիկյան դիվանագիտության բազմաձալք խնդիրները:

Հայաստանի հետ պայմանագիր կնքելու համար Խորհրդային Ռուսաստանը նախապես պետք է լուծած լիներ երկու կարևորագույն հարց.

ա) Պետք է իր վերջնական, հստակ դիրքորոշումն ունենար Լեռնային Ղարաբաղի, Նախիջևանի, Շարուր-Դարալագյազի և Զանգեզուրի նկատմամբ, որոնք Ադրբեջանը Թուրքիայի օգնությամբ ցանկանում էր զավթել Հայաստանից:

---

[1] Նույն տեղում, էջ 453-454:

[2] Նույն տեղում, էջ 456:

բ) Պետք է ճշտեր տարածքային հարցերում Հայաստանի և Թուրքիայի ունեցած տարաձայնությունների նկատմամբ իր դիրքորոշումը:

1920 թվականի հունիսին Ռուսաստանն իր համար չէր լուծել ո՛չ առաջին և ո՛չ էլ երկրորդ խնդիրը, հետևաբար, նա դեռ պատրաստ չէր Հայաստանի հետ պայմանագիր կնքելու:

Տարածքային այդ բարդ կնճիռը մի ամբողջական համակարգ էր իրենից ներկայացնում, որը կարող էր վերջնականապես լուծվել միայն Թուրքիայի հետ վարվող բանակցությունների միջոցով, որի ընթացքում, իհարկե, նշանակություն պետք է ունենար նաև Խորհրդային Ադրբեջանի դիրքը: Սակայն ճանապարհային դժվարությունների պատճառով, թուրքական պատվիրակությունն ուշանում էր: Այդ պատճառով էլ Մոսկվան Հայաստանի հետ վարվող բանակցությունների առաջին շրջանում նպատակ ուներ լոկ ծանոթանալ Հայաստանի Հանրապետության դիրքորոշմանը, ձգձգել բանակցությունները և սպասել թուրքական պատվիրակության ժամանմանը:

Այժմ ծանոթանանք բանակցությունների ընթացքին: Բանակցությունների մասնակիցներից միայն Հ. Տերտերյանն է այդ նյութի կապակցությամբ հուշեր գրել, որոնք հրատարակվել են «Հայրենիք» ամսագրի 1954 թվականի համարներում: Բացի դրանից, մեր ձեռքի տակ կան պատվիրակության և Հայաստանի կառավարության որոշ փաստաթղթեր, որոնք լույս են սփռում քննարկվող հիմնահարցի վրա: Հիմնահարցը բազմակողմանիորեն լուսաբանելու համար կարևոր նշանակություն ունեն նաև Ռուսաստանի, Ադրբեջանի և 11-րդ բանակի ղեկավարության պաշտոնական և ոչ պաշտոնական գրագրությունները: Օգտագործել ենք նաև թուրք հեղինակների գրքերում բերված անհրաժեշտ փաստաթղթերը: Այդ բոլոր նյութերի օգտագործումը հնարավորություն է տալիս ընթերցողին ներկայացնելու հայ-ռուսական բանակցությունների ժամանակ քննարկված բոլոր հարցերի լուծումները և դրանց շուրջ եղած տարաձայնությունները:

Տերտերյանն իր հուշերում պատմում է. «Մեր հասնելուն երկրորդ թե երրորդ օրը, գիշերվա ժամը 12-ին, հրավիրեցին արտաքին գործոց կոմիսարիատի գրասենյակը, որտեղ ներկայացրեցինք մեր լիազորաթղթերը:

Խորհրդային Ռուսաստանի կողմից մեզ հետ բանակցում էին արտաքին գործոց կոմիսար Չիչերինը և նրա օգնական հայազգի Կարախանը...

Չիչերինը, բարի գալուստ մաղթելով Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը, իր խնդակցությունը հայտնեց մեր ժամանման առթիվ և հաստատեց Խորհրդային իշխանության «անկեղծ ցանկությունը» բարեկամական հարաբերություններ ստեղծելու Հայաստանի կառավարության ու հայ ժողովրդի հետ: Հետո, անմիջապես անցավ բուն նյութին, որի համառոտ ամփոփումը հետևյալն է.

Տաճիկներն իրենց՝ բոլշևիկներին պետք են: Իրենք համաձայնվել են իրենց զինվորական և տնտեսական օժանդակությամբ դուրս շպրտելու նրանց երկրից եվրոպական աշխարհակալ «զավթիչներին»: Տաճիկները պատրաստ են անմիջապես գործողությունների անցնել, սակայն մտահոգված են, որ Հայաստանի կառավարությունը, որպես Դաշնակիցների կողմնակից, կարող է հարվածել իրենց թիկունքից: Ձեզ հրավիրել ենք, որպեսզի հաշտեցնենք ձեզ տաճիկների հետ և որոշ երաշխիքներ ստանանք, որ Հայաստանի կառավարությունը մեզ դաշնակից տաճիկներին թիկունքից չի հարվածի: Քանի որ ռուս-տաճկական համագործակցությունը այս րոպեիս Խորհրդային Ռուսաստանի համար մահու և կենաց խնդիր է, ուստի անհրաժեշտ է այդ խնդիրների վերաբերմամբ ճշտել Հայաստանի կառավարության դիրքը և վերաբերմունքը:

Չիչերինի այս ամփոփ զեկուցումից հետո հասկացվեց, որ Խորհրդային կառավարությունը պարզապես ուզում է միջնորդի դեր կատարել մեր և տաճիկների միջև, բարիդրացիական հարաբերություններ ստեղծելու համար, պայմանով, որ մենք ձեռք քաշենք Դաշնակիցներից և ամբողջապես Մոսկվայի իրավարարության հանձնենք մեր դատի լուծումը, դուրս բերելով այն օգոստոսի 10-ին Սևրում գումարվելիք խորհրդաժողովի օրակարգից:

Վերոհիշյալ խնդիրների վերաբերմամբ Երևանում բնավ խոսք չէր եղել, և մենք նախապատրաստված չէինք շեշտակի դրված հարցերին որոշ պատասխաններ տալու: Մենք լիազորված էինք միայն՝ «Մոսկվային ընդունելի դարձնել տաճկահայ հողամասերի կցումը Հայաստանին»: Տաճկահայաստանի անկախության և նրա սահմանների վերաբերմամբ Սևրի մեջ հետագային կայանալիք որոշումներից հրաժարվելու մասին խոսք չէր եղել և 1920 թ. պայմաններում չէր էլ կարող լինել: Բացի այդ, մեզանից պահանջվում էր նաև որոշ երաշխիքներ տալ, որ Հայաստանի կառավարությունը թիկունքից պիտի չհարվածի բոլշևիկների դաշնակից տաճիկներին:

Ի՞նչ երաշխիքներ: Անշուշտ, իրական երաշխիքներ և ոչ թե թղթի: Խնդիրը առաջադրված էր պարզ ու շեշտակի: Մեզանից պահանջում էին ճշտել Հայաստանի կառավարության դիրքը ու վերաբերմունքը Խորհրդային Ռուսաստանի և Տաճկաստանի հանդեպ:

Ծրագիրը պարզ էր. տաճիկների նպատակն էր՝ Ռուսաստանի միջոցով մեր կառավարության վրա ճնշում գործ դնել, որպեսզի մենք ձեռք քաշեինք հաղթական Դաշնակիցների օժանդակությունից և Սևրի դաշնագրից:

Անշուշտ, Խորհրդային Ռուսաստանն էլ ուներ իր հաշիվները՝ Տաճկաստանին օժանդակելու համար: Նա էլ հետապնդում էր իր քաղաքական նպատակները: Տաճիկների սպառնալիքով նա մտածում էր ստիպել Եվրոպայի հաղթականներին, որ Խորհրդային իշխանության հետ բանակցությունների մեջ մտնեն և իրեն ճանաչեն, որպես Ռուսաստանի օրինավոր իշխանություն»:

Ամփոփելով վերը շարադրվածը, Տերտերյանը հանգում է այն եզրակացության, որ «Հայաստանի կառավարության և Խորհուրդների հետապնդած նպատակները հիմնովին տարբեր են»:

Տերտերյանն այնուհետև շարունակում է. «Թեև Հայաստանի կառավարության կողմից լիազորված չէինք տաճկահայկական հողամասերի վերաբերյալ բանակցության մեջ մտնելու Մոսկվայի հետ, սակայն բանակցությունները չվիժեցնելու մտահոգությամբ հարկադրանքի տակ գտնվեցանք մեր խոսակցությունները այդ ուղղությամբ շարունակելու Չիչերինի հետ՝ պարզելու համար նաև, թե ի՞նչ կարող ենք ակնկալել Սովետների միջնորդությունից»[1]:

Հայկական պատվիրակությունը բանակցությունների ժամանակ Չիչերինին ծանոթացնում է Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթների՝ Հայաստանին պատկանելու մասին հայկական կառավարության և միջազգային հանրության կողմից ճանաչված պատմաիրավական սկզբունքների հետ: Չիչերինն առարկում է՝ նշելով, որ այդ տարածքում այժմ հայեր չեն ապրում:

Այս խոսակցությունների արդյունքը լինում է այն, որ հայկական պատվիրակությանն առաջարկվում է մեկ շաբաթվա ընթացքում Արևմտյան Հայաստանի մասին վիճակագրական տվյալնե-

---

[1] **Համբարձում Տերտերյան,** Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի բանակցությունները. Լևոն Շանթի պատվիրակությունը, «Հայրենիք» ամսագիր, 1954, N 1, հունվար, էջ 7-10:

ռով հիմնավորված տեղեկագիր ներկայացնել Արտգործժողկոմատին[1]:

Ահա այսպես է ներկայացվում երկու պատվիրակությունների առաջին հանդիպումը Հ. Տերտերյանի հուշերում: Սակայն տարօրինակն այն է, որ Տերտերյանն առաջին հանդիպման կապակցությամբ ոչինչ չի պատմում Ադրբեջանի հետ ունեցած տարաձայնությունների քննարկման մասին՝ առնչված Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի պահանջի հետ: Եթե դրան ավելացնենք այն հանգամանքը, որ այդ ժամանակ Խորհրդային Ադրբեջանը վիճելի էր համարում նաև Շարուր-Դարալագյազի շրջանը, պատկերը պարզ կդառնա: Հասկանալի է, որ այդ հարցերը քննարկվել են և այն էլ չափազանց բուռն կերպով:

Այդ հարցի վրա լույս է սփռում Չիչերինի՝ Օրջոնիկիձեին ուղղված 1920 թ. հունիսի 2-ի հեռագիրը, որը տրվել է հայկական պատվիրակության հետ ունեցած առաջին հանդիպումից հետո: Հեռագրում Չիչերինը գրում է. «Մեզ անհրաժեշտ է փոխզիջման հասնել դաշնակցական կառավարության հետ: Այնինչ ադրբեջանական կառավարությունը վիճելի է հայտարարում ոչ միայն Ղարաբաղն ու Զանգեզուրը, այլև Շարուր-Դարալագյազի գավառը: Վերջինս երբեք որևէ մեկի կողմից չի հայտարարվել վիճելի, անգամ մուսավաթական կառավարության կողմից գավառն ընդունվել է որպես Հայաստանի մաս: Առանց այդ գավառի Հայաստանից համարյա ոչինչ չի մնում: Հայաստանի խաղաղության պատվիրակությունը երկար դիմադրությունից հետո համաձայնվել է վիճելի ճանաչելու Ղարաբաղն ու Զանգեզուրը, բայց նա ոչ մի դեպքում չի համաձայնվում վիճելի համարելու Շարուր-Դարալագյազի գավառը: Մեզ, մյուս կողմից, անհրաժեշտ է համաձայնության հասնել Ադրբեջանի կառավարության հետ, որպեսզի Հայաստանի հետ մեր պայմանագիրը չհակասի Ադրբեջանի պահանջներին: Խնդրում ենք Բաքվում ունեցած Ձեր հսկայական ազդեցությունն օգտագործեք, որպեսզի հասնեք Ղարաբաղի ու Զանգեզուրի վիճելի ճանաչմանը ադրբեջանական կառավարության կողմից, բայց ոչ Շարուր-Դարալագյազի գավառի»: Չիչերինը հայտնում է նաև, որ ռուսական զինվորների փոքրաքանակ լինելու և Նախիջևանի մոտ թուրքական ջոկատներ երևալու պատճառով Ռուսաստանը հարկադրված է հրաժարվել Նախիջևանը և Ջուլֆան գրավելու մտքից: Նա Օրջոնիկիձեին խնդրում

[1] Նույն տեղում, էջ 11:

է Ադրբեջանի կառավարությանը հաղորդել Նախիջևանի և Զուլֆայի գրավման անհնարինության և այն օբյեկտիվ պատճառների մասին, որոնք Ռուսաստանին հարկադրեցին սահմանափակվել ռազմական ստատուս քվոյով[1]:

Հունիսի 3-ին բանակցությունների մասին Հայաստանի կառավարությանն իր հեռագիրն է ուղարկում Շանթը: Նա հայտնում է. «Մեզ հետ բանակցությունները վարում է Կարախանը: Առաջին հանդիպումը եղել է մայիսի 28-ին: Հույս ունենք, որ մեր առաքելությունը հաջող արդյունք կունենա: Գիտակցորեն մանրամասնությունների մասին չենք գրում... Խորհրդային կառավարությունը մշտապես կրկնում է, որ ինքը ոչ մի մտադրություն չունի մեր երկրում խորհրդային կարգեր մտցնելու... Այսօր եղանք Չիչերինի մոտ, գլխավոր դժվարությունը Թուրքահայաստանի արևմտյան սահմանի հարցն է, հատկապես Էրզրումի՝ Քեմալի պատճառով»[2]:

Հունիսի կեսերին, Արևմտյան Հայաստանի մասին տեղեկագիրը ներկայացնելուց մոտավորապես մեկ շաբաթ հետո, Հայաստանի պատվիրակությունը նորից է հրավիրվում տեսակցության:

Հանդիպման մասին Տերտերյանը պատմում է. «Այս տեսակցությունն ավելի արդյունավետ եղավ: Մենք ընդառաջեցինք Խորհրդային կառավարության միջնորդի դեր կատարելու ցանկությանը՝ Հայաստանի կառավարության և Մուստաֆա Քեմալի միջև: Չիչերինը Խորհրդային Ռուսաստանի անունից խոստացավ հայերին բավարարել՝ Տաճկահայաստանի որոշ հողամասերը միացնելով Հայաստանին և նրան ապահովելով ելք դեպի Սև ծով:

Ադրբեջանի հետ ևս մեր սահմանների խնդիրը որոշվեց մոտավորապես կարգադրել հետևյալ ձևով. Նախիջևանի շրջանը և Զանգեզուրը անվերապահորեն պիտի համարվեն հայկական հողամասեր, իսկ Ղարաբաղը պիտի նկատվեր վիճելի, որի իրավական վիճակը որոշվելու էր հետագային ժողովրդական հանրաքվեով (ընդգծումը մերն է – Լ. Խ.): Բացի այդ, բավարարվում էին մեր պատվիրակության մի շարք կարևոր առաջարկները տնտեսական ու մշակութային խնդիրների վերաբերյալ: Մոսկվայում և Ռուսաստանի այլ քաղաքներում կենտրոնացած հայ մշակույթի վերաբերյալ գրականությունը հանձնվում էր Հայաստանին, թույլատրվում էր հայ գաղթականությանը և ընդ-

[1] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 476-477.
[2] Նույն տեղում, էջ 477-478:

հանրապես Ռուսաստանում ապրող բոլոր հայերին իրենց ամբողջ շարժական ունեցվածքով փոխադրվել Հայաստան: Մեր երկրի փոխադրական քայքայված միջոցները մասամբ վերականգնելու նպատակով Հայաստանին ձրիաբար պիտի տրամադրեին մի քանի տասնյակ շոգեշարժեր և վագոններ, ինչպես և պիտի տրամադրվեր բավարար քանակով վառելիք (նավթ) ինքնարժեքով: Խորհրդային Միությունը (պետք է լինի Խորհրդային Ռուսաստանը – Լ. Խ.) հանձնառու էր լինում անվճար փոխանցել Հայաստանին նաև մանարանի և կտոր գործելու երկու գործարան իր սարքուկարգով: Բացի այդ, որպես օժանդակություն հայ ժողովրդին, Խորհրդային Միությունը կանխիկ պիտի վճարեր Հայաստանի կառավարությանը 2.1/2 միլիոն ռուբլի ոսկով, պիտի տրամադրեր երկրագործական գործիքներ, հացահատիկ և այլն:

Չիչերինը խոստացավ շտապ ձևակերպել բանավոր կայացած համաձայնությունը և ռուս-հայկական դաշնագրի բնագիրը մի երկու օրից ներկայացնել ստորագրության:

Կայացած համաձայնության մասին անմիջապես տեղեկացրինք Երևան և սկսեցինք պատրաստություն տեսնել մեկնելու համար:

Անցավ երկու-երեք օր: Բայց դաշնագրի ստորագրությունը ձգձգվում էր՝ մեզ համար անհայտ պատճառներով:

Պարզ էր, որ կայացած համաձայնությունը անակնկալ և անախորժ արգելքների էր հանդիպել թանձր վարագույրի ետևում»[1]:

Մենք հիմքեր չունենք հավատ չընծայելու Տերտերյանի հաղորդած տեղեկություններին: Սակայն հայկական պատվիրակությանը Չիչերինի արած առաջարկները զարմանք են հարուցում: Հունիսի կեսերին Ադրբեջանը պահանջում էր Ղարաբաղը, Զանգեզուրը, Նախիջևանը և Շարուր-Դարալագյազը, իսկ համաձայն Տերտերյանի տվյալների, Ռուսաստանն այդ տարածքներից նրան փաստորեն ոչինչ չէր տալիս: Պարզ էր նաև, որ առանց Ադրբեջանի կառավարության համաձայնության Ռուսաստանն այդ տարածքների հարցը միակողմանի չէր լուծի:

Եվ իրոք, հունիսի 19-ին Օրջոնիկիձեն Չիչերինին հեռագրում է. «Ադրբեջանը հավակնություն ունի Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջևանի և Շարուր-Դարալագյազի գավառների նկատմամբ: Ղարաբաղում և Զանգեզուրում հռչակվել է խորհրդային իշխա-

---

[1] **Հ. Տերտերյան,** նշվ. հոդվածաշարը, «Հայրենիք» ամսագիր, 1954, N 2, փետրվար, էջ 14-15:

նություն, և հիշյալ տարածքները իրենց համարում են Ադրբեջանի Խորհրդային Հանրապետության մաս: Նախիջևանն արդեն մի քանի ամիս է, ինչ գտնվում է ապստամբ մուսուլմանների ձեռքում: Շարուր-Դարալագյազի գավառի մասին ես տվյալներ չունեմ:

Ադրբեջանն առանց Ղարաբաղի և Զանգեզուրի ոչ մի դեպքում յոլա գնալ չի կարող: Ընդհանուր առմամբ, իմ կարծիքով, անհրաժեշտ է Մոսկվա հրավիրել Ադրբեջանի ներկայացուցչին և նրա հետ լուծել Ադրբեջանի և Հայաստանի հետ առնչվող բոլոր հարցերը: Դա պետք է անել մինչև Հայաստանի հետ պայմանագրի կնքումը»[1]:

Նույն օրը, հունիսի 19-ին Չիչերինը հեռագրում է Օրջոնիկիձեին. «Կենտկոմի քաղաքական նպատակամղումներից թելադրված՝ բուրժուական Վրաստանի, դաշնակցական Հայաստանի և ազգայնական Թուրքիայի հետ խաղաղության և փոխզիջումների քաղաքականությունը պետք է անշեղորեն կատարվի...

Ղարաբաղը, Զանգեզուրը, Շուշին, Նախիջևանը, Զուլֆան չպետք է միացվեն ոչ Հայաստանին և ոչ էլ Ադրբեջանին, այլ պետք է գրավվեն ռուսական օկուպացիոն զորքերով» (ընդգծումը մերն է – Լ. Խ.)[2]: Այլ որոշում ընդունելու դեպքում, ավարտում է հեռագիրը Չիչերինը, կտապալվի Խորհրդային Ռուսաստանի ընդհանուր վիճակից ելնող խաղաղության քաղաքականությունը: Զայրացած Չիչերինը նույն օրը մի գրությամբ դիմում է Քաղբյուրոյին, առաջ քաշելով հետևյալ պահանջը. «Բաքվի ընկերների անկարգապահությունը, նրանց գործունեության և Կենտկոմի կողմից հաստատված քաղաքական գծի միջև եղող աղաղակող հակասությունը մեզ հարկադրում է միջոցներ ձեռք առնել նրանց սանձահարելու համար»: Այնուհետև Չիչերինը եզրակացնում է. «Այն ժամանակ, երբ Կենտկոմը որոշել է փոխզիջման քաղաքականություն վարել Վրաստանի և Հայաստանի բուրժուական կառավարությունների հետ, դիվանագիտական ճանապարհով այնտեղ արմատախիլ անել Անտանտի ոտքի տակի հողը, մերժել Հայաստանի խորհրդայնացումը, անժամանակ գտնելով այդ ուղղությամբ մեր ուժերը զբաղեցնելը, Բաքվի ընկերներն իրենց գործողություններով տապալում են փոխզիջումները, մերժում են Կենտկոմի կողմից պահանջվող համաձայնագրի կնքու-

---

[1] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 505-506.

[2] Նույն տեղում, էջ 506:

մը Հայաստանի հետ, օժանդակում են ապստամբություններին, պնդում են Ադրբեջանին միացնելու այն վիճելի տարածքները, որոնք որոշված է գրավել մեր ուժերով, և որոնց միացումը Ադրբեջանին բացարձակապես անհնարին է դարձնում համաձայնագրի կնքումը Հայաստանի հետ»: Այս փաստաթուղթը մենք օգտագործել ենք աշխատության երկրորդ գլխում, բայց այստեղ հիմնահարցի շարադրանքն ամբողջական դարձնելու համար հարկադրված ենք երկու կարևոր քաղվածք նորից օգտագործել:

Եվ այսպես, ինչպես տեսնում ենք, Չիչերինը մարտահրավեր է նետում Ստալինին և Օրջոնիկիձեին և ընդհանրապես ամբողջ թուրքամետ խմբին:

Քաղբյուրոն պայքարի այս փուլում պաշտպանեց Չիչերինին, սակայն կազմակերպական փոփոխություններ չարեց: Այդ նշանակում է, որ պայքարը գնալով ավելի պետք է սրվեր: Պարզ էր նաև, որ Ստալինի դիրքերի ուժեղացումը հանգեցնելու էր Չիչերինի դիրքերի թուլացմանը: Չիչերինի այդ քայլը ապտակ էր Ստալինին, որը նա վերադարձրեց 1921 թ. փետրվար-մարտ ամիսներին:

Բանակցությունների ժամանակ Արևմտյան Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի, Նախիջևանի, Զանգեզուրի մասին Չիչերինի և Կարախանի հայտնած հայանպաստ տեսակետները, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, Լենինը, Ստալինը և կոմունիստական կուսակցության ղեկավարությունը չէին բաժանում:

Հայ-ռուսական բանակցությունների ժամանակ Անդրկովկասի ռազմաքաղաքական իրավիճակն աստիճանաբար սկսում է ավելի ու ավելի շիկանալ, որը, բնականաբար, իր ազդեցությունն է թողնում բանակցությունների ընթացքի վրա, ավելի սրելով հարաբերությունները և օրակարգի մեջ մտցնելով նոր հարցեր: Թուրքերը և ադրբեջանցիները Հայաստանի նկատմամբ սկսում են վարել սանձարձակ նվաճողական քաղաքականություն: Հունիսի 5-ին Շուշիում Նուրի փաշայի ղեկավարությամբ տեղի է ունենում ապստամբություն: Նախկին մուսավաթական բանակի Բաքվի 5-րդ գունդը անցնում է ապստամբների կողմը: 11-րդ բանակի 32-րդ հրաձգային դիվիզիան հրաման է ստանում ճնշել ապստամբությունը: Հունիսի 15-ին այն ճնշվում է: Դիվիզիան շարունակում է իր հարձակումը դեպի Գորիս, որը գրավում է հուլիսի 5-ին:

Կարմիր բանակը նպատակ էր դնում գրավելու այսպես կոչված բոլոր «վիճելի» տարածքները՝ Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը, Նախիջևանը և Շարուր-Դարալագյազը:

Թուրքիան, իր հերթին ևս հավակնություն ունենալով այդ տարածքների, մասնավորապես Նախիջևանի նկատմամբ, ջանալով չսրել հարաբերությունները Ռուսաստանի հետ, տարբեր պատրվակներով փորձում էր զորքեր մտցնել այդ շրջանները: Ղարաբաղում Նուրի փաշայի պարտությունից հետո տեղեկանալով ռուսական զորքերի առաջխաղացման մասին, թուրքական 9 հազար հոգուց բաղկացած դիվիզիան հունիսի վերջերին սկսեց ռազմակալել Նախիջևանի, Ջուլֆայի, Օրդուբադի շրջանները: Այդ դիվիզիայի 3000 հոգուց բաղկացած առաջապահ ջոկատները հուլիսի 2-ին մտան Շահթախտ-Նախիջևան շրջանը[1]: 11-րդ բանակի 32-րդ դիվիզիայի հրամանատար Շտեյգերը հունիսի 27-ին իր ղեկավարությանն ուղարկված զեկույցում հայտնում էր, որ «Նախիջևանի շրջանը և Ջուլֆան ռազմակալված են թուրքական զորքերի կողմից»[2]:

Ռազմաքաղաքական իրավիճակն Անդրկովկասում չափազանց բարդացավ: Պարզ դարձավ. Թուրքիան երբեք չի համաձայնվի, որ Ռուսաստանը մենակ տնօրինի այս տարածքների ճակատագիրը:

Ելնելով ստեղծված բարդ իրավիճակից, Չիչերինը հունիսի 29-ին մի մանրամասն նամակ է գրում Լենինին Անդրկովկասի ռազմաքաղաքական վիճակի, Թուրքիայի գործողությունների մասին և առաջարկում փոխել Ռուսաստանի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ: Այդ նամակում բացահայտվում են մի շարք հիմնահարցեր, որոնց պատասխանները մենք ցայսօր չենք ունեցել: Նամակը չափազանց կարևոր է հատկապես Շանթի պատվիրակության անհաջողությունը բացատրելու համար:

Չիչերինն այդ նամակում Լենինին է ներկայացնում հետևյալ հարցերի պարզաբանումները.

1. Օրջոնիկիձեն, Մդիվանին, Նարիմանովը և ուրիշներ սկզբում ձգտում էին զենքի ուժով խորհրդային կարգեր մտցնել Վրաստան ու Հայաստան և խիստ հիասթափված էին, երբ կոմկուսի Կենտկոմը մերժեց իրենց ծրագիրը: Մոսկվան պետք է ավելի զգույշ վերաբերվի այդ ընկերների հարձակողական ծրա-

[1] Նույն տեղում, էջ 525:
[2] Նույն տեղում, էջ 512:

գրերին: Նարիմանովը մինչև այժմ էլ իր հեռագրերում վերադառնում է Վրաստանի և Հայաստանի անմիջական խորհրդայնացման անհրաժեշտության հարցին: Երբ Բաքվի ընկերները հարկադրված հրաժարվեցին այդ ծրագրից, նրանք այնուամենայնիվ չհրաժարվեցին հարձակողական գործողություններից ընդդեմ Վրաստանի և Հայաստանի: Կենտրոնը շատ ջանք թափեց այդ ընկերներին հարձակողական գործողություններից հետ պահելու համար:

2. «Այդ բախման վերջին փուլը Ադրբեջանի պահանջն է մի քանի հսկայական շրջանների իրեն պատկանելու մասին, որոնք միշտ պատկանել են Հայաստանին և փաստորեն գտնվում են Հայաստանի Հանրապետության կազմում: Ադրբեջանի կառավարությունը պահանջում է Ղարաբաղը, Զանգեզուրը և Շարուր-Դարալագյազը, Նախիջևանի, Օրդուբադի և Ջուլֆայի հետ միասին: Այդ տարածքների մեծ մասը փաստորեն գտնվում է Հայաստանի Հանրապետության կազմում»: Ստեղծված իրավիճակում, շարունակում է Չիչերինը, Ադրբեջանի պահանջներին հագուրդ տալու երկու տարբերակ գոյություն ունի, ա) Ադրբեջանը այդ տարածքները գրավելու համար Հայաստանի դեմ է ուղարկում իր մուսուլմանական զորամասերը, իսկ «թաթարական զորամասերին հայերի դեմ ուղարկելը բացարձակապես անընդունելի է և կլինի մեծագույն հանցագործություն: Այդ չի կարելի առանձնապես այժմ, երբ հարավից հենց այդ մարզերի վրա են հարձակվում թուրքերը, որոնց անմիջապես ձեռք կմեկնեն ադրբեջանական մուսուլմանական զորամասերը, եթե նրանց այնտեղ ուղարկենք», բ) «նշված բոլոր տարածքների գրավումը մեր զորամասերի կողմից և որպես նվեր Ադրբեջանին հանձնելը: Հենց այդ խաղաձևը նկատի ունի Նարիմանովը: Այդ տարբերակի իրականացումը ռուսական զորամասերի ձեռքով բացարձակապես անթույլատրելի է»,– ասվում է նամակում:

3. «Հենց այդ պատճառով,– շարունակում է Չիչերինը,– որոշում ընդունվեց ռուսական զորամասերի կողմից վիճելի տարածքները գրավելու մասին, որոնք պետք է ենթարկվեին ռուսական օկուպացիոն իշխանությանը, որպեսզի այդ տարածքները չտրվեն ոչ Ադրբեջանին և ո՛չ էլ Հայաստանին՝ մինչև այն պահը, երբ կլինի ավելի հարմար քաղաքական իրավիճակ և հնարավոր կլինի գտնել խաղաղ և բոլորին բավարարող ելք»:

Ուրեմն, Շանթի պատվիրակության հետ վարվող բանակցությունների ժամանակ Ռուսաստանի կառավարությունը որոշում

է ընդունում «վիճելի» տարածքները գրավելու մասին և զինված ուժով ձեռնամուխ է լինում այդ խնդրի իրականացմանը:

4. Ռուսական պատվիրակությունը միաժամանակ Շանթից պահանջում է պաշտոնապես համաձայնվել բոլշևիկյան զորքերի կողմից այդ տարածքների ռազմակալմանը: Սակայն «Հայկական պատվիրակությունը ոչ մի կերպ չէր ցանկանում բացի Ղարաբաղից, Հայաստանի կազմում գտնվող տարածքները կամավոր կերպով հանձնել ռուսական օկուպացիոն իշխանություններին: Միայն ռազմական ստատուս քվոյի հիման վրա կարելի է հույս ունենալ Հայաստանի հետ պայմանագիր կնքել»,– ամփոփում է իր միտքը Չիչերինը:

5. «*Թուրքերի հարձակումը,– բացատրում է Չիչերինը,– մեզ հարկադրում է հրաժարվել այդ պլանի հետագա իրագործումից: Հանրապետության ռազմահեղափոխական խորհուրդը վճռականորեն հայտարարում է այնտեղ մեր զորքերի կողմից նոր տարածքներ գրավելու անհնարինության մասին: Թուրքական վտանգը մեզ հարկադրում է սահմանափակվել արդեն ունեցածի պաշտպանությամբ, նկատի ունենալով հիմնականում Բաքվի պաշտպանությունը: Մեր ուժերը այնտեղ անբավարար են, որպեսզի նոր տարածքներ գրավեն և շարժվեն դեպի Հայաստանի խորքերը: Ուրեմն, պարզ է, որ մենք հարկադրված ենք սահմանափակվել արդեն ռազմակալած տարածքներով և հրաժարվել Հայաստանի նոր մասեր գրավելուց, թեկուզ և դրանք համարվեն վիճելի*» (ընդգծումը մերն է – Լ. Խ.):

Եվ այսպես, պարզ է դառնում, որ ռուսական զորքերի առաջխաղացումը առիթ դարձավ թուրքական ուժերի շտապ կերպով Նախիջևան մտնելուն, մի ծրագիր, որի իրագործմանը երկար ժամանակ սպասում էր Կարաբեքիրը: Թուրքերի այդ քայլն էլ Ռուսաստանին հարկադրեց հրաժարվել զինված ուժերով այդ տարածքները գրավելու քաղաքականությունից:

6. Չիչերինը գտնում է, որ «վիճելի» տարածքները զինված ուժով գրավելու քաղաքականությունից հրաժարվելը թեթևացնում է Հայաստանի հետ պայմանագրի կնքումը: «Հայաստանի Հանրապետության հետ մենք պետք է ջանանք հնարավորին չափ շուտ պայմանագիր կնքել»,– առաջարկում է նա:

7. Սակայն պարզ էր նաև այն, որ «վիճելի» տարածքները զինված ուժով գրավելու քաղաքականությունից հրաժարվելը բավարար հիմք չէր Ռուսաստանի և Հայաստանի միջև պայմանագիր կնքելու համար: Երկու երկրների միջև պայմանագիր կնքելու

համար անհրաժեշտ էր, որպեսզի Ռուսաստանը որոշակիորեն ցույց տա իր վերաբերմունքը հայ-ադրբեջանական և հայ-թուրքական սահմանների վերաբերյալ, մի բան, որից Մոսկվան այդ ժամանակ խուսափում էր դրանց վերաբերյալ վերջնական կարծիք չունենալու պատճառով:

Չիչերինն այդ մասին Լենինին հայտնում է. «***Հետագա ռազմակալումից ձեռնպահ մնալը չի վերացնում պայմանագրի կնքման բոլոր արգելքները, որովհետև հայկական պատվիրակությունը ձգտում էր հասնել այն բանին, որպեսզի մենք որոշենք՝ որտեղով է անցնում Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանը, իսկ այդ նշանակում է այնտեղ նշված տարածքներն անմիջապես զիջել կամ Ադրբեջանին, կամ Հայաստանին: Մենք այդ հիմա չենք կարող անել մեծագույն վնաս չհասցնելով մեր քաղաքականությանը թե՛ մեկի և թե՛ մյուսի նկատմամբ: Այդ պատճառով մենք հարկադրված ենք ամեն կերպ օձիքներս թոթափել Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանները որոշելու պարտականությունից*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.)»:

Նման հարցադրման պայմաններում Հայաստանի պատվիրակությունը չհամաձայնեց պայմանագիր կնքել: Բանակցությունները մտան փակուղի: Հենց այդ էր պատճառը, որ Չիչերինը սկսեց ուղիներ որոնել Շանթի պատվիրակությունը հետ ուղարկելու, բանակցությունները Երևանում շարունակելու համար: Առաջարկվեց ստեղծել Ռուսաստանի կառավարության պատվիրակություն՝ Բ. Լեգրանի ղեկավարությամբ: Ռուսաստանն այդ քայլով ժամանակ էր շահում՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերությունները վերջնականապես ճշտելու համար, մի բան, որը նրա համար շատ ավելի կարևոր էր, քան Հայաստանի հիմնահարցը: Թուրքական զորքերի հունիսյան հարձակումը ցույց տվեց, որ այդ երկրի հետ պայմանագրի կնքումը հեշտ չի լինելու: Ռուսաստանը սպասում էր թուրքական պատվիրակությանը, լավ հասկանալով, որ առաջիկայում սպասվում են դժվարին բանակցություններ:

8. Չիչերինը չափազանց մտահոգված էր Թուրքիայի հարձակման կապակցությամբ: Եվ պատահական չէ, որ այս ծրագրային նամակը Չիչերինը սկսում և ավարտում է Թուրքիայի հարձակման և այդ երկրի հետ հարաբերությունները կարգավորելու խնդիրների քննարկմամբ: Խոսելով Թուրքիայի նկատմամբ կենսագործվող քաղաքականության մասին, Չիչերինը գրում է. «Թուրքիայի խնդրում, պարզվում է, դրությունն ավելի բարդ է:

Մինչդեռ մենք անգամ չգիտենք՝ ինչ նպատակ է հետապնդում թուրքական զորքերի առաջխաղացումը, որի մասին հաղորդել է Մդիվանին: Արտգործժողկոմատի կարծիքով, մինչև Թուրքիային զենք տալու մասին վերջնական որոշում ընդունելը, պետք է սպասել ընկ. Էլիավայի Անգորա ժամանմանը և նրանից առաջին զեկուցագրերի ստացմանը: Միայն մեր անմիջական ներկայացուցչի միջոցով մենք հնարավորություն կունենանք բավարար չափով պարզելու դրությունը, որպեսզի որոշում ընդունենք, կարող ենք արդյոք կատարել թուրքերին զենք տալու մասին մեր խոստումը, թե այդ զենքը ուղղակի կամ անուղղակի կերպով օգտագործվելու է մեր դեմ»[1]:

Ուրեմն, ինչպես տեսնում ենք, հունիսի վերջին Ռուսաստանը դեռևս պատրաստ չէր պայմանագիր կնքելու ոչ Հայաստանի, և ոչ էլ Թուրքիայի հետ: Չիչերինը Լենինին առաջարկում է դրությունը վերջնականապես պարզելու համար Անկարա ուղարկել Էլիավային, Երևան՝ Լեգրանին և միայն նրանց զեկուցագրերը ստանալուց հետո, պարզելով դրությունը, այդ երկրների հետ կնքել պայմանագրեր:

Չիչերինի հունիսի 29-ի նամակի թեզերը հունիսի 30-ին քննարկվում են Կոմկուսի Քաղբյուրոյի նիստում: Օրակարգում դրված էր «Դեպի Հայաստան ռուսական զորքերի առաջխաղացումը կանգնեցնելու մասին» հարցը: Քաղբյուրոն, ինչպես արդեն նշել ենք նախորդ գլխում, որոշում է առաջարկել Չիչերինին հրահանգ տալ, որպեսզի ռուսական զորամասերը դադարեցնեն առաջխաղացումը: Անհրաժեշտ է Կովկասի գործիչներին հասկացնել, ասվում է որոշման մեջ, որ նրանք պատրվակ չստեղծեն Թուրքիայի հարձակման համար:

Այդ որոշման համաձայն, Չիչերինը հուլիսի 4-ին Քաղբյուրոյին է ներկայացնում Կովկասյան ճակատի Ռազմահեղափոխական խորհրդի անդամներին և Վրաստանում, Հայաստանում և Թուրքիայում Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչներին ուղղված մի բավականին մանրամասն հրահանգ, որը հաստատվում է Քաղբյուրոյի հուլիսի 7-ի նիստում: Հրահանգի անհրաժեշտությունը բխում էր այն բանից, որ Կովկասյան բանակի ղեկավարությունը և Ռազմահեղափոխական խորհուրդը վարում էին սանձարձակ թուրքամետ և ադրբեջանամետ քաղաքականություն: Ոչ մի ընդհանուր գիծ չկար նաև Ռուսաստանի՝

[1] Նույն տեղում, էջ 515-518:

Հայաստանում, Վրաստանում և Թուրքիայում գործող դիվանագիտական ներկայացուցիչների գործունեության մեջ: Որոշումն ուղարկվում է Կովկասյան ճակատի Ռազմահեղափոխական խորհրդին, պատճենը՝ Նարիմանովին, Կիրովին, Լեգրանին և Էլիավային:

Քաղբյուրոն իր որոշման մեջ տալիս է հետևյալ հրահանգները.

1. Ռուսաստանի և Վրաստանի կառավարությունների կնքած պայմանագիրը պետք է անվերապահորեն կատարվի և գործադրվի իր բոլոր մանրամասնություններով: Բացառություն է կազմում միայն Զաքաթալայի մասին հոդվածը, որը Վրաստանի Հանրապետության կազմի մեջ մտնելու փոխարեն, պետք է համարվի վիճելի տարածք: Այդ տարածքի պատկանելությունն այս կամ այն հանրապետությանը պետք է որոշվի խառը հանձնաժողովի կողմից, որի նախագահը նշանակելու է Ռուսաստանի կառավարությունը:

2. Ռուսաստանը պետք է պահպանի խաղաղ, բարիդրացիական հարաբերություններ Վրաստանի, Հայաստանի և Թուրքիայի բուրժուական հանրապետությունների հետ: «Ոչ մի դեպքում չպետք է փորձ արվի ներկայումս խորհրդային իշխանություն մտցնելու Վրաստանում և Հայաստանում»,– ասվում է հրահանգում, որից երևում է, որ բոլշևիկյան Ռուսաստանը Վրաստանը և Հայաստանը նվաճելու քաղաքականությունից հրաժարվում է ժամանակավորապես:

3. Ելնելով Վրաստանի հետ կնքված պայմանագրից, խորհրդային քաղաքականությունը ձգտելու է այն բանին, որպեսզի հասնի Վրաստանի տարածքից անգլիական և այլ կողմնակի զորքերի հեռացմանը, թույլ չտալ այնտեղ ստեղծելու սպիտակգվարդիական ջոկատներ և վերադարձնել Ռուսաստանին դենիկինյան կազմավորումների զինամթերքի մնացորդները:

4. Ելնելով պայմանագրից, նույնպիսի օրինական միջոցներով պետք է հասնել քարոզչության ազատության և ընդհանրապես Վրաստանում կոմունիստների փաստացի օրինականացմանը: «Օրինական միջոցներով նույն բանին պետք է հասնել նաև Հայաստանում, ընդ որում, քաղաքական իրադրությունը մեզ հնարավորություն կտա ուժեղ ճնշելու դաշնակցական կառավարությանը: Թուրքիան արդեն խոստացել է ազատություն տալ կոմունիստական քարոզչությանը»:

Խոսելով Հայաստանին ճնշելու համար քաղաքական բարենպաստ իրադրության մասին, Քաղբյուրոն, իհարկե, նկատի ուներ թուրքական գործոնի հանգամանքը:

5. Չափազանց կարևոր է «Հրահանգի» 5-րդ կետը, որում ասվում է. «Անհրաժեշտ է անվերապահորեն ձեռնպահ մնալ Վրաստանի, Հայաստանի և Թուրքիայի կառավարությունների դեմ ապստամբություն կազմակերպելու փորձերից: Այդ հանրապետությունների այն տարրերին, որոնք ձգտում են հեղաշրջման, պետք է բացատրել, որ ընդհանուր քաղաքական նկատառումներով՝ նկատի ունենալով ինչպես համաշխարհային իրադրությունը, այնպես էլ մեր ռազմական վիճակը, նրանք չպետք է ***ներկայումս*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.) ձեռնամուխ լինեն իրենց նպատակի իրագործմանը: Նրանք պետք է գործեն պայմանագրի շրջանակներում»:

6. «Արդեն սկսված ապստամբությունները, ինչպես օրինակ, Հարավային Օսիայում, անհրաժեշտ է անհիվանդագին ձևով վերացնել, ելնելով պայմանագրից, այսինքն՝ ներման մասին կետի հիման վրա»:

Այսպիսով, նույն հարցին նվիրված 5-րդ և 6-րդ կետերը ցույց են տալիս, որ ազգային շրջաններում ապստամբությունների միջոցով խորհրդային կարգեր մտցնելը եղել է բոլշևիկյան Ռուսաստանի նվաճողական քաղաքականության էությունը: Տեղական բոլշևիկյան կազմակերպությունները գործիք են եղել Մոսկվայի ձեռքում: Այս կետերից երևում է նաև, որ Խորհրդային Ռուսաստանը, իրոք, ժամանակավորապես էր հրաժարվում Հայաստանը և Վրաստանը գրավելու ծրագրից: Հայաստանում կազմակերպված մայիսյան ապստամբությունն այդ քաղաքականության իրականացման օղակներից մեկն էր:

7. Այս կարևոր կետը վերաբերում է ռուսական զորքերի կողմից Հայաստանի տարածքների ռազմակալմանը: Հրահանգում ասվում է. «Քանի որ մեր ռազմական վիճակը հնարավորություն չի տալիս ռուսական զորքերի կողմից Ղարաբաղի, Զանգեզուրի գավառի, Նախիջևանի, Ջուլֆայի, Շարուր-Դարալագյազի գավառի գրավումը, ռուսական ռազմական իշխանությունները պետք է սահմանափակվեն Հայաստանի և Ադրբեջանի միայն այն վիճելի վայրերի գրավումով, որոնք այժմ նրանց կողմից գրավված են, այսինքն՝ Շուշին և Ջեբրաիլը...»:

Հրահանգում փաստորեն շարադրվում են այն հիմնական դրույթները, որոնք Չիչերինը ներկայացրել էր Լենինին հունիսի

29-ի նամակում: Այստեղ միայն պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ Չիչերինի նամակը գրված է միայն Լենինի և Քաղբյուրոյի անդամների համար, իսկ մեր կողմից քննարկվող հրահանգը պետք է ուղարկվեր նաև Անդրկովկաս՝ թուրքամետ գործիչներին: Այդ պատճառով էլ հրահանգում չի բացահայտվում Անդրկովկասի իրական վիճակը, չի քննադատվում այնտեղ տարվող քաղաքականությունը և ոչինչ չի ասվում թուրքամետ գործիչների հակահայկական գործելակերպի մասին[1]:

Ինչևիցե, համաձայն այս փաստաթղթի, Խորհրդային Ռուսաստանը ժամանակավորապես փոխում էր Անդրկովկասում վարած նվաճողական քաղաքականությունը: Նույնիսկ Շուշիի և Ջեբրաիլի մասին Քաղբյուրոն անհրաժեշտ է գտնում հայտնել տեղական բնակչությանը, որ այդ տարածքները ռուսական զորքերը գրավել են ժամանակավորապես՝ ազգամիջյան կոտորածները կանխելու նպատակով: Հրահանգում ասվում է նաև, որ այդ տարածքների ճակատագիրը պետք է լուծվի Ռուսաստանի ներկայացուցչի նախագահությամբ գործող խառը հանձնաժողովի կողմից, բնակչության ազգագրական կազմի և կամքի հիման վրա:

Քաղբյուրոյի հունիսի 30-ի և հուլիսի 7-ի որոշումները Չիչերինի հաղթանակի վկայությունն են: Պաշտոնական փաստաթղթերում չհոլովելով Ստալինի անունը, Չիչերինն այնուամենայնիվ բացահայտ պայքարի է դուրս գալիս թուրքամետ խմբի դեմ: Դա վտանգավոր խաղ էր, բայց նա ուրիշ ելք չուներ: Չիչերինը լավ էր հասկանում, որ չհաղթահարելով թուրքամետ խմբի դիմադրությունը, չի կարողանալու վնասազերծել վերջինիս՝ Հայաստանի փաստական ոչնչացման, բզկտման ու պատառ-պատառ անելու ծրագիրը:

Սակայն, ցավոք, Քաղբյուրոյում հունիսին և հուլիսի սկզբներին Չիչերինի ձեռք բերած հաջողությունները գործնական նշանակություն չունեցան: Խորհրդային կառավարության թուրքամետ, հակահայկական քաղաքականությունը շարունակվում էր: Գնալով Հայաստանն ավելի էր սեղմվում թշնամական օղակի մեջ:

Թուրքամետ խումբը հուլիսի սկզբներին հարցը դնում է կտրուկ ու որոշակի. մի կողմում Թուրքիան է Ադրբեջանի հետ միասին, մյուս կողմում՝ Հայաստանը, այդ երկրների միջև առաջացած տարածքային հիմնախնդիրը պետք է լուծել հօգուտ Թուր-

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, հավ. 1, գ. 2, թ. 67-69:

քիայի և Ադրբեջանի, զոհաբերելով Հայաստանը: Փոխզիջման ճանապարհով խնդիրը լուծել հնարավոր չէր, քանի որ Թուրքիան ու Ադրբեջանը փոխհամաձայնեցված ծրագրով ոչ մի զիջման չէին գնում: Թուրքամետ խումբը միաժամանակ ոչ պաշտոնական տարբեր ուղիներով Թուրքիային ու Ադրբեջանին հուշում էր տարածքային հարցերում զիջման չգնալ:

Ահա այսպիսի քաղաքական պայմաններում էր ծնունդ առնում Ստալինի ծրագրային նշանակություն ունեցող հեռագիրը, որը նշանակում էր Ռուսաստանի պաշտոնական քաղաքականության շրջադարձը դեպի՝ Թուրքիա և Ադրբեջան:

Օրակարգից աստիճանաբար հանվելու էր Չիչերինի մինչ այդ կենսագործած քաղաքականությունը, որը Ստալինն անվանում է «լարախաղացություն»:

Քաղբյուրոյի վերոհիշյալ նիստից մեկ օր հետո, հուլիսի 8-ին, Ստալինը հեռագրում է Օրջոնիկիձեին. «***Իմ կարծիքն այն է, որ չի կարելի անվերջ լարախաղացություն անել կողմերի միջև, պետք է որոշակիորեն պաշտպանել կողմերից մեկին, ներկա դեպքում, իհարկե, Ադրբեջանին, Թուրքիայի հետ միասին: Ես խոսել եմ Լենինի հետ, նա չի առարկում***» (ընդգծումը մերն է – Լ. Խ.)[1]:

Եթե նկատի ունենանք, որ Խորհրդային Ռուսաստանի արևելյան և մասնավորապես կովկասյան քաղաքականությունը փաստորեն միանձնյա տնօրինում էր Ստալինը, պարզ կդառնա, որ այսուհետև այդ երկրի պետական քաղաքականության հիմնական սկզբունքը լինելու էր թուրքամետությունը և հակահայկականությունը: Հայաստանին սպառնացող աղետի վտանգն ավելի էր մեծանում նրանով, որ Մոսկվայի կովկասյան քաղաքականության կենսագործումը և երկրամասի ռազմաքաղաքական բոլոր գործողությունների ղեկավարությունը պաշտոնապես դրված էր Ստալինի դրածո Օրջոնիկիձեի վրա: Այդ ժամանակ կովկասյան բոլշևիկների և մահմեդականության միջնաբերդն էր դարձել խորհրդային Բաքուն, որտեղ և Նարիմանովի ակտիվ մասնակցությամբ մշակվում էին թուրքամետ, հակահայկական բոլոր ծրագրերը և դրանց իրականացման եղանակները:

Այսպիսով, հուլիսի սկզբներին սկսում է ձևավորվել Խորհրդային Ռուսաստանի հակահայկական քաղաքականության հայեցակարգը, որն ամբողջական տեսք է ընդունում օգոստոսի ընթացքում: Այս ժամանակահատվածում է Ստալին-Օրջո-

[1] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 524.

նիկիձե առանցքին միանում Քեմալը՝ հիմք դնելով Մոսկվա-Բաքու-Անկարա եռանկյունուն:

Թուրքիայի և Անդրկովկասի վերաբերյալ բոլշևիկյան Ռուսաստանի քաղաքականության սկզբունքները և դրանց իրականացման եղանակները մշակվում էին այս եռանկյունու շրջանակներում և հետո միայն, ներկայացվելով Քաղբյուրոյին, դառնում պետական քաղաքականություն:

Հասկանալի է, որ ստեղծված իրավիճակում Հայաստանը փրկելու ուղղությամբ և՛ Չիչերինի, և՛ Լեգրանի ջանքերը դատապարտված էին անհաջողության: Ի վերջո, չպետք է աչքաթող անել այն ճշմարտությունը, որ Չիչերինը և Լեգրանը կայսրության չինովնիկներ էին, որոնք պարտավոր էին կատարել վերևից եկող հրամանները: Նրանք ավելի համարձակ էին գործում, քանի դեռ վերջնականապես չէր ձևավորվել Ռուսաստանի ղեկավարության հակահայկական հայեցակարգը: Սակայն այն բանից հետո, երբ պարզ դարձավ Խորհրդային Ռուսաստանի թուրքամետ քաղաքականության էությունը, և՛ Չիչերինը, և՛ Լեգրանը սկսեցին գործել ավելի զգույշ, վախենալով, որ իրենց կարող են մեղադրել «իմպերիալիստական Հայաստանի» պաշտպանության մեջ, մի բան, որից Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմը հետագայում չկարողացավ խուսափել:

Ահա այդպիսի իրավիճակ էր ստեղծվել Անդրկովկասում, երբ Չիչերինը խորհուրդ տվեց Լենինին՝ Էլիավային ուղարկել Թուրքիա, Լեգրանին՝ Երևան, որպեսզի տեղում դրությունն ուսումնասիրելուց հետո, նրանց ուղարկած զեկուցագրերի հիման վրա, մշակվի այդ երկրների նկատմամբ Ռուսաստանի պաշտոնական քաղաքականությունը: Այդպես էր մտածում Չիչերինը: Սակայն այդպես չէր մտածում թուրքամետ խումբը, որն արդեն անցել էր եռանդուն գործողությունների:

Բայց անկախ այդ բոլորից, պաշտոնական Ռուսաստանը տվյալ ժամանակահատվածում ձգտում էր ժամանակ շահել Թուրքիայի և Հայաստանի նկատմամբ կենսագործվելիք քաղաքականության վերջնական, ամբողջական հայեցակարգ ստեղծելու համար: Իսկ դա, իրոք, կարող էր արվել, տեղերից սեփական ներկայացուցիչների միջոցով ստացված ճշմարիտ զեկուցագրերի հիման վրա միայն:

Թուրքիա մեկնող պատվիրակությունն արդեն պատրաստ էր մեկնելու: Սակայն այդ ժամանակ հիվանդանում է Էլիավան, որին փոխարինում է պատվիրակության անդամ Յա. Ուպմալը:

Ինչպես երևում է դիվանագիտական և քաղաքական բնույթի տարբեր գրագրություններից, Ուպմալը համոզված թուրքամետ էր: Մոսկվայից դուրս գալով հուլիսի 2-ին, հոկտեմբերի 4-ին ռուսական պատվիրակությունը Ուպմալի ղեկավարությամբ, Չիչերինի նամակով, ժամանում է Անկարա: Թե Թուրքիայի համար ինչպիսի կարևորություն ուներ այդ պատվիրակությունը, ցույց է տալիս այն փաստը, որ նույն օրը երեկոյան հանդիպման համար նրանց մոտ է գալիս Մուստաֆա Քեմալը: Պատվիրակության Անկարա ժամանելուց հետո խորհրդային կառավարությունը սկսում է ստանալ առաջին թուրքամետ զեկուցագրերը:

Մինչ այդ, խորհրդային կառավարությունը, ինչպես ցույց տվեցինք վերը, տվյալ պահին ի վիճակի չլինելով պայմանագիր կնքելու Հայաստանի հետ, լայն աշխատանքներ է ծավալում, դիվանագիտական վարվելաձևի սահմաններում, չվիրավորելով Հայաստանի կառավարության արժանապատվությունը, հետ ուղարկել Շանթի պատվիրակությունը և հասնել այն բանին, որ բանակցությունները շարունակվեն Երևանում Լեգրանի կողմից: Զգձգելով պայմանագրի կնքումը, Ռուսաստանը հնարավորություն էր ստանում սպասել թուրքական պատվիրակությանը, որի հետ բանակցությունների ընթացքում վերջնականապես պետք է ճշտվեին տարածքային տարաձայնությունների հարցերը: Իսկ առանց դրա, բնականաբար, Հայաստանի հետ Ռուսաստանի կառավարությունը չէր կարող պայմանագիր կնքել:

Եվ քանի որ թուրքական պատվիրակությունը դեռ չէր ժամանել, օրակարգի հարց է դառնում Շանթի պատվիրակությունը հետ ուղարկելու և բանակցությունները Երևանում շարունակելու գործի կազմակերպումը:

Տերտերյանը պատմում է. «Հուլիսի սկզբներին մեզ նորից հրավիրեցին արտաքին գործոց կոմիսարիատ, որտեղ Չիչերինը Կարախանի ներկայությամբ հայտնեց մեզ, որ Խորհրդային կառավարությունը նպատակահարմար է գտնում բանակցությունները փոխադրել Երևան և այդ իմաստով առաջարկություն է արված Հայաստանի կառավարությանը:

Երևանում բանակցություններ վարելու համար Խորհրդային կառավարությունը նշանակել էր իր լիազոր ներկայացուցիչը՝ հանձին Բ. Լեգրանի, որին հանձնարարված էր տեղում ծանոթանալ Զանգեզուրի բնակչության ցանկությունների հետ և ըստ այնմ կարգադրել Զանգեզուրի խնդիրը: Ինչ վերաբերում էր մյուս երկու վիճելի շրջաններին՝ Ղարաբաղին ու Նախիջևանին,

խորհրդային կառավարության տեսակետը մնում էր նույնը, ինչ որ մեզ արդեն հայտնել էին, այն է՝ Նախիջևանի շրջանը Հայաստանին, իսկ Ղարաբաղը՝ Ադրբեջանին»[1]: Չիչերինը ցանկություն է հայտնում, որպեսզի Հայաստանի պատվիրակությունը հանդիպում ունենա Լեգրանի հետ, նախքան նրա մեկնումը Մոսկվայից:

Այդ հանդիպումը տեղի է ունենում: Տերտերյանը պատմում է. «Համաձայն ընկեր Չիչերինի առաջարկի, որ կառավարության որոշումն է, ասաց նա (Լեգրանը – Լ. Խ.), Նախիջևանը մտնում է Հայաստանի սահմանների մեջ, իսկ Ղարաբաղը հանձնվում է Ադրբեջանին: Ինչ վերաբերում է Զանգեզուրին, որը առայժմ համարում ենք վիճելի, դա զուտ ձևական հայտարարություն է և կարող եմ ձեզ վստահեցնել, որ Զանգեզուրը ճանաչվելու է Հայաստանի Հանրապետության անվիճելի հողամաս: Նույն հավաստիացումները տվեց նաև Սահակ Տեր-Գաբրիելյանը»[2]:

Սրանով էլ փաստորեն ավարտվում է Շանթի պատվիրակության առաքելությունը:

1920 թ. հունիսի 29-ին Չիչերինը հեռագրում է Հայաստանի կառավարությանը. «Հայաստանի Հանրապետությունում լիազոր ներկայացուցիչ է նշանակված ընկեր Լեգրանը, որի խնդիրն է՝ Խորհրդային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատումը, բոլոր վիճելի հարցերի կարգավորումը, նրանց միջև կոնֆլիկտների վերացումը և երկու հանրապետությունների միջև խաղաղության վերջնական ամրապնդումը»: Առաջիկա օրերին, հայտնում է Չիչերինը, խորհրդային պատվիրակությունը Լեգրանի գլխավորությամբ ճանապարհ կընկնի դեպի Երևան: Նա խնդրում է երաշխավորել առաքելության դիվանագիտական լրիվ անձեռնմխելիությունը և նրա անդամների անվտանգությունը: «Մենք,– շարունակում է Չիչերինը,– ենթադրում ենք, որ լիովին նպատակահարմար կլինի, որպեսզի Ռուսաստանի և Հայաստանի միջև պայմանագրի մշակումը տեղի ունենա Երևանում մեր միսիայի և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև»: Փաստաթղթի վրա Հայաստանի Հանրապետության Արտաքին գործոց նախարարությունում ձեռագրով գրված է. «Շատ ուրախ ենք, բայց ցանկալի է կապ հաստատել մեր պատվիրակու-

---

[1] **Հ. Տերտերյան,** նշվ. հոդվածաշարը, «Հայրենիք» ամսագիր, 1954, N 2, փետրվար, էջ 23:

[2] Նույն տեղում, էջ 24:

թյան հետ, նրանից ստանալ զեկուցագիր, որից հետո Ձեր առաջարկին պատասխան կտրվի»[1]:

Հուլիսի 2-ին Հ. Օհանջանյանը պաշտոնապես պատասխանում է Չիչերինին. «Հայաստանի կառավարությունը սկզբունքորեն կարող է միայն ողջունել երկու հանրապետությունների՝ Ռուսաստանի և Հայաստանի միջև դիվանագիտական ներկայացուցչությունների հաստատումը և փոխանակումը...»[2]: Սակայն նա, Մոսկվային այդ հարցի կապակցությամբ սպառիչ և ամբողջական պատասխան տալու համար, անհրաժեշտ է համարում ստանալ Շանթի պատվիրակության զեկուցագիրը: Հայաստանի կառավարությանն անհրաժեշտ էր Շանթի պատվիրակության կարծիքը Չիչերինի առաջարկի մասին:

Հուլիսի 8-ին Շանթը հետևյալ կարծիքն է հայտնում բանակցությունները Երևան փոխադրելու մասին. «Ձեր հեռագրից հետո մենք եղանք Կարախանի մոտ, որը հաստատեց, թե Լեգրանի Երևան ժամանումը հիմք չի ծառայի Ձեր բանակցությունները Մոսկվայում դադարեցնելու համար: Իսկ եթե մենք այստեղ համաձայնության չգանք, Լեգրանը լիազորություն կստանա անմիջականորեն Ձեզ հետ բանակցություններ վարելու համար: Մենք նորից ենք կրկնում, որ բանակցությունների փոխադրումը Երևան կբարդացնի հարցը և անվերջ կձգձգի պայմանագրի կնքումը: Զարաֆյանը ենթադրում է, որ Լեգրանի Երևան ժամանելու դեպքում, կամա թե ակամա բանակցությունները կփոխադրվեն այնտեղ»[3]:

Մինչ Չիչերինը զբաղված էր Շանթի պատվիրակությունը Երևան ուղարկելու հարցերով, իրադարձությունները վիճելի տարածքների շուրջը զարգանում էին սրընթաց արագությամբ:

Հուլիսի 1-ին Շանթը մի հեռագիր է ուղարկում Հայաստանի կառավարությանը, որից հայտնի է դառնում հետևյալը.

1. Ռուսաստանի պատվիրակության հետ ունեցած հենց առաջին հանդիպումներից պարզվել է, որ պայմանագիր կնքելու միակ արգելքը Ադրբեջանի սահմանի հարցն է: Ադրբեջանն ամեն կերպ խանգարում է Ռուսաստանի հետ պայմանագրի կնքմանը,

---

[1] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, N 3, էջ 37-38:
[2] Նույն տեղում, էջ 38:
[3] Նույն տեղում, էջ 38-39:

փորձում է կենտրոնին համոզել, որ Հայաստանը խորհրդայնացման նախօրյակին է և անհրաժեշտ է զորքերով գրավել այն:

2. «*Կառավարությունն այստեղ,– տեղեկացնում է Շանթը,– երկար տատանումներից ու խորհրդակցություններից հետո, երեկ երեկոյան վերջապես մեզ հայտնեց իր որոշումը, որը ըստ էության Բաքվի որոշումն է, այսինքն՝ Ղարաբաղը, Զանգեզուրը, Նախիջևանը և Շարուր-Դարալագյազը համարել վիճելի, ռուսական զորքերով գրավել այդ մարզերը մինչև վեճի վերջանալը՝ խառը հանձնաժողովով Կովկասում որոշել վերջնական սահմանները*» (ընդգծումը մերն է – Լ. Խ.):

3. Հայաստանի պատվիրակությունը, բացի Ղարաբաղից, կտրուկ կերպով մերժել է մյուս տարածքների վիճելի լինելը: Հայաստանի պատվիրակության պատասխանն ուղարկվել է Բաքու, իսկ Մոսկվայինը՝ Երևան:

4. Շանթը հայտնում է, որ Հայաստանի պատվիրակության կարծիքով գոյություն ունի հիմնահարցի լուծման երեք ուղի.

Առաջին. պայմանագիր կնքել, ընդունելով վիճելի Ղարաբաղը և Զանգեզուրը, Ելիզավետպոլի, Ղազախի և Աղստաֆայի հետ միասին, պայմանով՝ որպեսզի զորքերը մնան իրենց տեղերում և առաջ չշարժվեն: Այդ զիջումը, հավանական է, կընդունեն:

Երկրորդ. պայմանագրում Հայաստանի տարածքը հիշատակել ընդհանուր բառերով, Կարսի, Երևանի, Ելիզավետպոլի, Թիֆլիսի և Բաթումի մարզերից, սահմանների որոշման հարցը հանձնելով խառը հանձնաժողովներին, պայմանով, որ զորքերը մնան այնտեղ, որտեղ կանգնած են: Այս դեկլարատիվ ձևն անմիջապես կընդունվի: Կարող է պատահի հնարավոր լինի մի քիչ ավելի որոշակիացնել տարածքը:

Երրորդ. պնդել, որ Ղարաբաղն էլ է վիճելի, որի պատճառով, հավանական է, պայմանագրի կնքումը կհետաձգվի: Պատվիրակությունը կվերադառնա, բանակցությունները կշարունակվեն Երևանում բոլշևիկների կողմից նշանակված ներկայացուցչի հետ:

Այս երեք տարբերակներից Շանթը չարիքների փոքրագույնը համարում է առաջինը: Նա խնդրում է Հայաստանի կառավարությունից հայտնել իր որոշումը քննարկվող հարցի շուրջ[1]:

Շանթի տեղեկությունները ճիշտ չէին: Ռուսական զորքերի կողմից վիճելի բոլոր տարածքների ռազմակալման պահանջը

[1] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 519-520.

գալիս էր ոչ թե Բաքվի, այլ Ռուսաստանի ղեկավարությունից:

Հուլիսի 9-ին Չիչերինը մի չափազանց խիստ հեռագիր է ուղարկում Օրջոնիկիձեին, որում պաշտպանում է Ղարաբաղն ու Զանգեզուրը ռուսական զորքերով ռազմակալելու որոշումը: «Մեզ,– գրում է նա,– բազմիցս հայտարարել են, որ իբր Ղարաբաղն ու Զանգեզուրը Ադրբեջանին տալու փոխարեն, մեր ժամանակավոր օկուպացիոն իշխանություններին թողնելը, կքայքայի Բաքվի խորհրդային իշխանությունը: Հաղորդեցեք պարզ ու որոշակի, ինչո՞ւմն է բանը»: Այնուհետև, նա խստորեն քննադատում է Ղարաբաղն ու Զանգեզուրը Ադրբեջանին տալու կողմնակիցներին[1]:

Հուլիսի 10-ին 11-րդ բանակի հրամանատար Լևանդովսկին տեղեկացնում է Կիրովին՝ գլխավոր հրամանատարությունը հրահանգել է Հայաստանի և Ադրբեջանի միջև վիճելի տարածքների երկարատև գրավման անհրաժեշտության մասին: Նա տեղեկացնում է, որ տվյալ դեպքում խոսքը որոշակիորեն վերաբերում է Զանգեզուրին, Ղարաբաղին, Շուշիին, Նախիջևանին, Օրդուբադին և Ջուլֆային[2]:

Ադրբեջանը եռանդուն գործունեություն է ծավալում վիճելի տարածքները ռուսական զորքերի կողմից ռազմակալելու մասին որոշումը բեկանելու ուղղությամբ:

Հուլիսի 10-ին Ռուսաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմը Բաքվից ստանում է «հույժ գաղտնի» հեռագիր, որի տակ ստորագրել էին Ադրբեջանի հեղկոմի նախագահ Նարիմանովը, ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի անդամ Մդիվանին, Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի անդամներ Միկոյանը, Նանեյշվիլին, 11-րդ բանակի ռազմահեղափոխական խորհրդի անդամներ Վեսնիկը, Լևանդովսկին և Միխայլովը: Ազգային կազմի առումով «ինտերնացիոնալ» այս խումբը, որը հայտնի էր իր հակահայկական գործունեությամբ, հանձնարարություն ուներ ազդել Կենտկոմի վրա՝ տապալելու Ռուսաստանի կողմից վիճելի տարածքները ռազմակալելու կամ էլ Հայաստանին թողնելու ծրագիրը և հարցը լուծել հօգուտ Ադրբեջանի: Կենտկոմին հայտնելով, որ Ղարաբաղը և Զանգեզուրը Ադրբեջանի մասն են կազմում, խումբն այդ տարածքի «մեկուսացումը կամ դաշնակներին տալը» դիտում է որպես դավաճանություն: «Մեկուսացում»

[1] Նույն տեղում, էջ 528:
[2] Նույն տեղում:

հասկացության տակ խումբը նկատի ուներ այդ տարածքի ռազմակալման ծրագիրը ռուսական զորքերի կողմից: «Մուսուլմանական զանգվածները,– գրում են նրանք,– այդ անսպասելի շրջադարձը դեպի հինը և խորհրդային իշխանության անընդունակությունը՝ Ադրբեջանը պահելու հին սահմաններում, կհամարի դավաճանություն, հայամետություն կամ էլ խորհրդային իշխանության թուլություն»: Ղարաբաղում և Զանգեզուրում դաշնակների իշխանության գլուխ գալը, շարունակում են նրանք, խոշոր հարված կհասցնի հեղափոխության զարգացմանը Թուրքիայում, նրան կզրկի խորհրդային օգնությունից ու կապից, հանձին այդ տարածքի ստեղծելով սպառնալից թիկունք»[1]:

Հեռագիրն ուղարկելուց հետո թուրքամետ խումբը հետևողական աշխատանք է ծավալում Ադրբեջանի պաշտոնական պետական պատվիրակությանը, Ադրբեջանի կոմկուսի, ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի և 11-րդ բանակի ռազմահեղափոխական խորհրդի ներկայացուցիչներին Մոսկվա ուղարկելու համար: Տարբեր աղբյուրներից երևում է, որ Ռուսաստանի մայրաքաղաքն այդ ժամանակ հեղեղվել էր թուրքամետ, հակահայկական գործիչներով, որոնք որոշակի ազդեցություն ունեցան բոլշևիկյան կուսակցության արևելյան թուրքամետ քաղաքականության հայեցակարգի վերջնական ձևավորման գործում:

Հետաքրքիրն այն է, որ այդ նույն ժամանակահատվածում Հայաստանի կառավարությունը ևս Ռուսաստանից պահանջում էր զորքերը հանել վիճելի տարածքներից, հույս ունենալով առաջացած տարածքային հիմնախնդիրը լուծել հայ-ադրբեջանական առաջիկա կոնֆերանսում:

Հուլիսի 12-ին Հայաստանի արտգործնախարարությունը դիմում է Չիչերինին, առաջ քաշելով հետևյալ հարցերը.

1. Չնայած խորհրդային կառավարության բարեկամական հավաստիացումներին, ռուսական զորքերը շարունակում են Ղարաբաղի ռազմակալումը և այժմ էլ շարժվում են դեպի Զանգեզուր, Հայաստանի այդ անվիճելի մասը: Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը երկու տարի շարունակ փորձում էր զենքի ուժով նվաճել Ղարաբաղն ու Զանգեզուրը, բայց տեղի բնակչության հերոսական դիմադրությունից հետո հարկադրված էր նահանջել:

[1] Նույն տեղում, էջ 530-531:

2. Այդ ծրագրով իրականացվում է մուսավաթի երազանքը՝ «Հայաստանի կենդանի մարմնի վրայով միանալ Թուրքիայի իմպերիալիստներին»:

3. Վիճելի տարածքների հարցերը կարգավորելու համար Հայաստանի կառավարությունը դիմել է Ադրբեջանին, առաջարկելով հրավիրել հայ-ադրբեջանական կոնֆերանս: Այդ համաձայնությունը ստացված է: Օհանջանյանը Հայաստանի կառավարության անունից խնդրում է Ռուսաստանից ռուսական զորքերը հանել Զանգեզուրից ու Ղարաբաղից և հնարավորություն տալ առաջիկա հայ-ադրբեջանական կոնֆերանսում հանգիստ կերպով քննելու վիճելի սահմանային հարցերը[1]:

Ադրբեջանը, սակայն, պարզապես ժամանակ էր շահում և մտադիր չէր ոչ մի զիջման գնալու: Ադրբեջանը շարունակում էր ռազմական գործողությունները:

Հուլիսի 13-ին Հ. Օհանջանյանը դիմում է Ադրբեջանի արտգործժողկոմատի արտակարգ ներկայացուցչին, պատճենը ուղարկելով Լենինին և Կիրովին: Այդ դիմումով Հայաստանի կառավարությունը բողոքում է այն բանի դեմ, որ չնայած հուլիսի 2-ի համաձայնությանը, Ադրբեջանի զորքերը շարունակում են իրենց ռազմական գործողությունները Ղարաբաղի և Զանգեզուրի շրջաններում: Նա խնդրում է շտապ կարգադրություն անել զորքերը Հայաստանի սահմաններից և Ղարաբաղի վիճելի շրջաններից հանելու մասին, քանի որ այդ հարցերը քննարկման նյութ են դառնալու հայ-ադրբեջանական առաջիկա կոնֆերանսում[2]:

Բայց Ադրբեջանը միայն Ղարաբաղով և Զանգեզուրով չէր բավարարվում, նա աշխատանքներ էր տանում Նախիջևանի շրջանը ևս իր կազմում ընդգրկելու համար:

Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմը հուլիսի 13-ին քննարկում է Նախիջևանի հարցը և որոշում. «Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ադրբեջանի անվիճելի մաս հանդիսացող Նախիջևանի շրջանն այժմ գրավված է թուրքական զորքերի կողմից, անհրաժեշտ է ամեն տեսակի բախումները կանխելու համար, այդ շրջանը մաքրել թուրքական զորքերից»: Այդ հարցը կարգավորելու համար ստեղծվում է հանձնաժողով, որն այդ նպատակով պետք է բանակցություններ վարեր Խալիլ փաշայի հետ: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Նարիմանովը, Միկոյանը, Կարանը,

[1] Նույն տեղում, էջ 532-533:
[2] Նույն տեղում, էջ 536:

Նանեյշվիլին և Հուսեյնովը[1]:

Պետք է նկատի ունենալ, որ ԱԿ(բ)Կ Կենտկոմի հուլիսի 13-ի որոշումը միանշանակ չէր: Ադրբեջանը պայքարում էր Նախիջևանի համար, սակայն անհաջողության դեպքում նա կգերադասեր, որպեսզի այդ տարածքն անցնի Թուրքիային: Այդ հարցադրումը մենք տեսնում ենք Մոսկվայի ռուս-թուրքական բանակցությունների ժամանակ:

Հուլիսի 14-ին Օրջոնիկիձեն և Լեգրանը հեռագրում են Չիչերինին. «Անհրաժեշտ ենք համարում հարցի հետևյալ լուծումը, որը մասնակիորեն կարող է բավարարել Ադրբեջանին. Ղարաբաղը ամբողջությամբ ու անվիճելիորեն միացվում է Ադրբեջանին, Զանգեզուրը հայտարարվում է վիճելի, մնացած մարզերը՝ Նախիջևանը, Շարուր-Դարալագյազը և Օրդուբադը մնում են Հայաստանին»[2]:

Կարող է թվալ, թե Օրջոնիկիձեն և Լեգրանը այդ հեռագրում առաջարկված հիմնախնդրի լուծումը համաձայնեցրել էին Ադրբեջանի և Հայաստանի կառավարությունների հետ: Սակայն դա այդպես չէր: Հեռագիրը Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունների հետ համաձայնեցված չէր:

Այդ հեռագրից մեկ օր հետո, հուլիսի 15-ին, Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի բյուրոն լսում է Հայաստանի հետ հաշտության պայմանագրի կնքման հարցը: Նիստին մասնակցում էին նաև Օրջոնիկիձեն ու Լեգրանը:

Բյուրոն որոշում է.

«1. Ղարաբաղն ու Զանգեզուրը պետք է միացվեն Ադրբեջանին:

2. Նախիջևանից և մյուս շրջաններից հրաժարվել, առաջարկել ռազմակալել ռուսական զորքերով:

3. Ժամանակավորապես, մինչև Հայաստանի դրության մասին լրիվ տեղեկատվության ստացումը, Լեգրանին առաջարկել պայմանագիր չստորագրել:

4. Ժամանակավորապես, Հայաստանի հետ վարվող բանակցությունների ժամանակ, առաջարկել Հայաստանին դադարեցնել բոլոր ռազմական գործողությունները»[3]:

---

[1] Государственный архив политических партий и общественных организаций Азербайджанской республики, ф. 1, оп. 74 , д. 120, л. 43.

[2] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 537.

[3] Նույն տեղում, էջ 537-538:

Ի՞նչն է տարօրինակ: Հայաստանի հետ պայմանագիր կնքելու համար վիճելի տարածքների հարցերը քննարկում և առաջադրանքներ է տալիս Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի բյուրոն: Պարզվում է նաև, որ մեկ օր առաջ Օրջոնիկիձեի և Լեգրանի կողմից Չիչերինին ուղարկված հեռագիրը մերժվում է Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի բյուրոյի կողմից:

Համաձայն ԱԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի որոշման երկրորդ կետի, 11-րդ բանակի հրամանատարությունը հուլիսի 16-ին հրաման է տալիս բանակի զորամասերին Նախիջևան և Օրդուբադ մտնելու՝ թուրքական Բայազետի դիվիզիայի հետ կապ ստեղծելու համար[1]:

Հիշենք, որ 11-րդ բանակի հրամանատարության դեռ հուլիսի 8-ի հրամանի տվյալներով, թուրքական 9 հազար զինվորից բաղկացած Բայազետի դիվիզիան հունիսի վերջերին և հուլիսի սկզբներին ռազմակալել էր Նախիջևան, Ջուլֆա, Օրդուբադ շրջանները: Այդ դիվիզիայի ներկայացուցիչները հուլիսի 7-ին ժամանել էին Գորիս և խորհրդային զորքերի հրամանատարությանը խնդրել «Ռուսաստանյան կարմիր զորամասերը շուտափույթ շարժել դեպի Նախիջևան-Օրդուբադ գիծը՝ Երևանից Նախիջևան շարժվող հայերի դեմ համատեղ գործելու նպատակով»[2]:

Թուրքերը, բնականաբար, ռուսներին կանչեցին ոչ թե նրանց հետ կապ ստեղծելու, այլ միայն դեպի Նախիջևան շարժվող հայկական զորամասերի դեմ համատեղ կռվելու նպատակով: Հակառակ դեպքում նրանք երբեք ռուսական զորքերին Նախիջևան չէին կանչի:

Ե՛վ առաջին, և' երկրորդ փաստաթղթերում որոշակիորեն ընդգծվում է, որ Ռուսաստանը Հայաստանի դեմ պատերազմ չի մղում, որ «Մինչև թուրքական զորքերի և ռուսական կարմիր բանակի միջև քաղաքական փոխհարաբերությունների պարզելը ձեռնպահ մնալ Հայաստանի դեմ թուրքական զորքերին ակտիվ աջակցություն ցույց տալուց...»[3]: Հրամանատարությունը զորամասերին առաջադրանք է տալիս Նախիջևան մտնել հուլիսի 21-ից ոչ ուշ: 11-րդ բանակի հրամանատարության օգոստոսի 5-ի հրամանից իմանում ենք, որ ռուսական զորամասերն արդեն

[1] Նույն տեղում, էջ 538-539:
[2] Նույն տեղում, էջ 525:
[3] Նույն տեղում, էջ 526:

մասնակցում են հայկական զորամասերի դեմ մղվող կռիվներին[1]: Ռուսական զորքերը Նախիջևան են մտնում թուրքերի հետ կապ ստեղծելու և միաժամանակ թույլ չտալու համար, որ նրանք ամրապնդվեն այնտեղ: Ռուսաստանը Թուրքիային թույլ չէր տա զրավել Նախիջևանը և այն մտցնել թուրքական պետության կազմի մեջ:

Սակայն տվյալ պահին թուրքական և ռուսական զորքերի միաժամանակ այնտեղ գտնվելը նշանակում էր, որ Թուրքիան ու Ռուսաստանը ռազմակալել են Նախիջևանը:

Հուլիսի 19-ից, այսինքն՝ այն օրվանից, երբ թուրքական պատվիրակությունը ժամանեց Մոսկվա, Չիչերինը նորից ակտիվ գործունեություն է ծավալում Շանթի պատվիրակությունը Մոսկվայից հետ ուղարկելու, բանակցությունները Երևան փոխադրելու համար:

Խորհրդային կառավարությունը, ինչպես երևում է, բոլորովին ցանկալի չէր համարում Թուրքիայի հետ բանակցություններ վարելիս Մոսկվայում ունենալ ՀՀ պատվիրակությունը, որի հետ վարվող բանակցություններն արդեն փակուղի էին մտել:

Հուլիսի 19-ին Չիչերինը մի հեռագիր ուղարկում է Օհանջանյանին և Կիրովին, մի ուրիշն էլ՝ Լեգրանին: Առաջին հեռագրում, որը պաշտոնական բնույթ ուներ, Չիչերինը հայտնում էր. «Կովկասում Խորհրդային Ռուսաստանի բոլոր գործողությունները նպատակ ունեն բարեկամական ներգործություն ունենալ հայ ժողովրդի, ինչպես նաև Մերձավոր Արևելքի այլ ժողովուրդների հետագա խաղաղ զարգացման վրա»: Բացատրելով «վիճելի» տարածքների ռազմակալման շարժառիթները, Չիչերինը միաժամանակ Ռուսաստանի կառավարության՝ Թուրքիայի հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու փորձերին տալիս է հետևյալ բացատրությունը. «Այն բարեկամական հարաբերությունները, որ խորհրդային կառավարությունը փորձում է հաստատել Փոքր Ասիայի թուրքական ազգային կառավարության հետ, նա, ի միջի այլոց, օգտագործում է, որպեսզի հայ ժողովրդի համար հնարավորություն ապահովի իր զարգացման համար բավականաչափ տարածք ձեռք բերելու Փոքր Ասիայում և, վերջապես, դուրս գալու հարևան մուսուլմանական բնակչության հետ ունեցած մշտական ճակատագրական թշնամանքից»: Շարադրելով ստեղծված իրոք չափազանց բարդ հարաբերու-

[1] Նույն տեղում, էջ 564-565:

թյունների մասին իր կարծիքը, Չիչերինը հայտնում է. «Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Լեգրանի ժամանումը Երևան կնպաստի կուտակված բոլոր թյուրիմացությունները պարզելուն, և խորհրդային կառավարությունը հուսով է, որ իր ներկայացուցիչ Լեգրանի հետ ունեցած մտքերի փոխանակության պրոցեսում հայկական կառավարությունը կհամոզվի այն ուղղու արդարացիությանը, որով ընթանում է խորհրդային կառավարությունը, և հնարավոր կգտնի բոլոր հարցերի շուրջ նրա հետ կնքելու տևական ու վերջնական համաձայնագիր և պայմանագիր ստորագրել նրա հետ խաղաղ բարեկամական հարաբերությունների մասին»[1]: Այս հեռագրում աչքի է զարնում, որ Չիչերինը ծանոթ լինելով «Ազգային ուխտի» բովանդակությանը, այնուամենայնիվ հույս ուներ Թուրքիայից ինչ-որ տարածք պոկել Հայաստանի համար: Շոշափված մյուս բոլոր հարցերն ունեն պաշտոնական դեկլարատիվ բնույթ և նպատակ են հետապնդում հասնել բանակցությունների փոխադրմանը Երևան, միաժամանակ հարաբերությունները չփչացնելով Հայաստանի Հանրապետության կառավարության հետ:

Հուլիսի 19-ին Չիչերինը մի հեռագիր էլ հղում է Լեգրանին: Չիչերինը, բնականաբար, Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Լեգրանին ուղղված հեռագրում անկեղծ է խոսում ստեղծված իրավիճակի և Շանթի պատվիրակությունը հետ ուղարկելու պատճառների մասին: Նա դեռևս Թիֆլիսում գտնվող, Լեգրանին հայտնում է. «Բանակցությունները հայկական պատվիրակության հետ կանգ են առել մեռյալ կետում: Ձեր առաջարկը, որին Ադրբեջանը համաձայն է, կայանում է նրանում, որ Ղարաբաղն անցնում է Ադրբեջանին, իսկ Զանգեզուրը համարվում է վիճելի տարածք: Մնացած բոլորը մնում է Հայաստանին, ընդունելի չէ հայկական պատվիրակության համար: Այդ պատճառով հարցը կարող է լուծվել միայն Հայաստանի կառավարության հետ անմիջական բանակցությունների միջոցով: Մոսկվայի պատվիրակությունը իրեն լիազորված չի համարում նման լուրջ տարածքային զիջումներ անելու: Նրանց հետ բանակցություններն այստեղ այդ ուղղությամբ անհույս են: Այդ բոլորին մենք պետք է հասնենք Հայաստանում»[2]:

Ուրեմն, Չիչերինը համաձայն էր Օրջոնիկիձեի և Լեգրանի այն

---

[1] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, N 3, էջ 39-40:
[2] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 12.

առաջարկին, որի համաձայն Ղարաբաղն անցնում էր Ադրբեջանին, Նախիջևանը՝ Հայաստանին, իսկ Զանգեզուրը հայտարարվում էր վիճելի: Բայց, ինչպես տեսանք, Ադրբեջանը սկզբունքորեն դեմ էր հարցի նման լուծմանը: ԱԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի հուլիսի 15-ի որոշմամբ Ղարաբաղն ու Զանգեզուրն անցնում էին Ադրբեջանին, իսկ մնացածը ոչ թե տրվում էր Հայաստանին, այլ ռազմակալվում էր ռուսական զորքերի կողմից: Հարցի նման լուծմանը դեմ էր նաև Հայաստանի պատվիրակությունը: Փաստաթղթերից պարզ է դառնում նաև, որ Օրջոնիկիձեն ու Լեգրանը ԱԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի որոշման մասին Չիչերինին տեղյակ չէին պահել: Եթե նույնիսկ ենթադրենք, որ Ադրբեջանը համաձայն լիներ Ղարաբաղի ու Զանգեզուրի փոխարեն Նախիջևանը թողնել Հայաստանին, ապա միևնույնն է, այդ որոշումը չէր կարող իրագործվել, քանի որ այդ տարածքը զավթված էր թուրքական զորքերի կողմից:

Օհանջանյանը հուլիսի 19-ին հեռագրում է Շանթին. «Ձեր բոլոր հեռագրերը ստացվել են: Կառավարությունը համաձայն է Ձեր բոլոր առաջարկների և կարծիքների հետ: Կարախանին հաղորդեցեք, որ Լեգրանին կընդունենք ոչ թե որպես դեսպան, այլ պատվիրակություն, որը կժամանի Հայաստանի հետ պայմանագիր կնքելու համար բանակցություններ վարելու: Պատվիրակությունը պետք է լինի փոքրաթիվ և այդ կազմով նա կընդունվի միայն այն դեպքում, եթե Ձեր միսիան ավարտվի անհաջողությամբ, և Դուք վերադառնաք Երևան»[1]:

Հայաստանի կառավարությունը չէր ցանկանում Լեգրանին ընդունել որպես Լիազոր ներկայացուցիչ, քանի որ Ռուսաստանի հետ պայմանագիրը կնքված չէր: Հայաստանի կառավարությունն, ինչպես Մոսկվային հայտնում է Կիրովը, չի ցանկանում Շանթի բանակցություններին զուգահեռ, բանակցություններ վարել Երևանում[2]:

Չիչերինի հուլիսի 19-ի հեռագրին Լեգրանը պատասխանում է հուլիսի 21-ին: «***Տարածքային հարցերի շուրջ Օրջոնիկիձեի հետ ձեռք բերած մեր համաձայնությունը կարող է համառ ընդդիմության հանդիպել Բաքվի կողմից***» (ընդգծումը մերն է – Լ. Խ.),– ասվում է դրանում: Այդ կապակցությամբ Չիչերինին արվում էին հետևյալ առաջարկները, ա) պահանջել Հայաստանից, որ անմի-

[1] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, N 3, էջ 40-41:
[2] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 18.

ջապես դադարեցնի թշնամական գործողությունները Ադրբեջանի և Թուրքիայի դեմ, ճնշում գործադրել Հայաստանի կառավարության վրա, բ) դադարեցնել Շանթի պատվիրակության հետ խաղաղ բանակցությունները Մոսկվայում, որոնք ցույց են տվել իրենց անպտղությունը, և դրանք փոխադրել Կովկաս, որտեղ ավելի հեշտ կլինի հաշվի առնել տեղական իրավիճակի առանձնահատկությունները: Բանակցություններին պետք է հրավիրվի նաև Ադրբեջանի Հանրապետության պաշտոնական պատվիրակությունը: Բանակցությունների տեղի համար կարելի է նկատի ունենալ Վլադիկավկազը: Հեռագիրն ավարտվում է Հայաստանի Հանրապետության հետ տեղում անմիջական բանակցություններ վարելու անհրաժեշտության հիմնավորումով: Նա գրում է. «Բացարձակ անհրաժեշտություն համարելով Մոսկվայում Շանթի հետ բանակցությունների դադարեցումը, ես, այնուամենայնիվ, ցանկալի եմ համարում հնարավորություն ստանալ Հայաստանի կառավարության հետ անմիջական, թեկուզ և կարճատև, կապեր ունենալու»: Ելնելով այդ անհրաժեշտությունից, Լեգրանը դիմել էր Հայաստանի կառավարությանը առաջարկելով, թույլ տալ, որ իրենք «մեկնեն Երևան ոչ թե որպես Լիազոր ներկայացուցչություն և ոչ էլ որպես խաղաղ պատվիրակություն, այլ որպես խորհրդային կառավարության Լիազորված առաքելություն, որը նպատակ ունի Հայաստանի կառավարության հետ անմիջական կապերի միջոցով պարզել հիմնական նախնական հարցերը»: Հեռագրի վերջում նա խնդրում է Չիչերինից հայտնել իր վերաբերմունքը շարադրված ծրագրի նկատմամբ: Հասկանալի է, որ այս հեռագիրը կազմվել է Հայաստանից դուրս, մի մարդու կողմից, որը դեռևս բազմակողմանի ծանոթ չէր Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական իրավիճակին: Հայկական հարցի շուրջ տիրող քաղաքական տրամադրությունների մասին նա խոստանում է առաջիկայում մանրամասն զեկուցագիր գրել[1]:

Հեռագրում պարունակվող քննադատությունը Հայաստանի կառավարության քաղաքականության նկատմամբ արդյունք է այն բանի, որ Լեգրանը դեռևս չէր հասցրել տեղում ծանոթանալու դրությանը և անելու սեփական եզրահանգումներ: Այս հեռագրում առաջ քաշված հարցադրումների վրա զգացվում է Կիրովի ազդեցությունը, որը, ինչպես հայտնի է, պատկանում էր թուրքամետ խմբին:

[1] Նույն տեղում, թ. 17-18:

Նույն օրը Վրաստանում Խորհրդային Ռուսաստանի Լիազոր ներկայացուցիչ Ս. Կիրովը դիմում է Տ. Բեկզադյանին՝ խնդրելով աջակցել Լեգրանի պատվիրակությանը Վրաստանի տարածքով Հայաստան մեկնելու համար[1]:

Հուլիսի 24-ին Բեկզադյանն այդ հարցի շուրջ հեռախոսային խոսակցություն է ունենում Օհանջանյանի հետ: Բեկզադյանը հայտնում է, որ Լեգրանի 14 հոգուց բաղկացած առաքելությունը Աղստաֆայում սպասում է Օհանջանյանի թույլտվությանը Հայաստան մեկնելու համար: Վրաստանն առանց Հայաստանի համաձայնության նրան թույլ չի տալիս Թիֆլիս մտնել: Փաստաթղթից հայտնի է դառնում նաև, որ Բեկզադյանը Կիրովին հայտնել է Օհանջանյանի կարծիքն այն մասին, որ Լեգրանն իր ուղեկիցներով կարող է թույլտվություն ստանալ ժամանել Հայաստան միայն որպես պատվիրակություն՝ Հայաստանի կառավարության հետ բանակցություններ վարելու համար, այլ ոչ որպես ներկայացուցչություն, որպիսին նա կարող է դառնալ միայն բարեկամության պայմանագրի կնքումից հետո: Կիրովը և Լեգրանը համաձայնվել են այդ առաջարկի հետ: Դրանից հետո Բեկզադյանը դիմում է Վրաստանի կառավարությանը, խնդրելով թույլ տալ Լեգրանի պատվիրակությանը ժամանել Թիֆլիս: Բեկզադյանը գտնում է, որ այդ քայլը ոչ միայն ընդունելի է, այլև խիստ անհրաժեշտ: Նա Օհանջանյանից թույլտվություն է խնդրում Լեգրանի պատվիրակությանը Հայաստան թողնելու համար:

Օհանջանյանը պատասխանում է. «Բանակցությունների միաժամանակ վարումը երկու տարբեր կետերից, ինչպես Երևանը և Մոսկվան, ես գտնում եմ անհնարին: Եթե խորհրդային կառավարությունը պնդում է բանակցությունները Երևան փոխադրելու, այդ դեպքում ես պետք է դադարեցնեմ բանակցությունները Մոսկվայում, պատվիրակությանը հետ կանչեմ, լսեմ զեկուցումը և միայն հետո վերսկսեմ բանակցություններն այստեղ: Իսկ եթե նրանք ինչ-որ արտակարգ բան ունեն հայտնելու, ապա Դուք կարող եք մեկնել Աղստաֆա, կամ նրանցից որևէ մեկը կարող է գալ Երևան հաղորդման համար»: Օհանջանյանը հայտնում է նաև, որ «Չնայած Կիրովի խոստումներին և Չիչերինի հավաստիացումներին, խորհրդային զորքերի գործողությունները Ղարաբաղում և Զանգեզուրում շարունակվում են, այնպես ինչպես շարունակվում են նաև հայերի հալածանքները Ադրբեջանում և Խորհրդա-

[1] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, N 3, էջ 41:

յին Ռուսաստանում, ինչպես օրինակ, Սոչիի շրջանում: Խորհրդային զորքերի գործողությունների դադարեցումը մեր սահմաններում և հայերի հալածանքներին վերջ դնելը բարենպաստ հիմք կստեղծի բանակցությունների վարման համար: Այդ մասին հաղորդեցեք Կիրովին և խնդրեցեք շտապ միջոցներ ձեռք առնել»[1]:

Օհանջանյանը, ելնելով Անդրկովկասում ստեղծված չափազանց բարդ իրավիճակից, Չիչերինի հուլիսի 19-ի հեռագրին պատասխանում է հուլիսի 27-ին մի ընդարձակ հեռագրով, որում արծարծում է առանցքային մի քանի հարցեր: Նա Հայաստանի կառավարության և հայ ժողովրդի անունից շնորհակալություն է հայտնում Ռուսաստանի կառավարությանը՝ հայ ժողովրդի հետ բարեկամական կապեր ստեղծելու և Հայաստանի խաղաղ զարգացմանը օգտակար լինելու մասին բարի ցանկություններ արտահայտած լինելու համար: Սակայն, շարունակում է նա, չնայած այդ հավաստիացումներին, այդ բարի ցանկությունները չեն իրագործվում կյանքում: Տեղական խորհրդային իշխանությունները, Ադրբեջանում խորհրդային զորքերի հրամանատարությունը իրականում անընդհատ թշնամական, ռազմական գործողություններ են կազմակերպում Հայաստանի դեմ Ղազախի, Ղարաբաղի և Զանգեզուրի շրջաններում:

Հայաստանը վերոհիշյալ պատճառով հարկադրված է զգալի քանակով զորքեր պահել հայ-ադրբեջանական սահմանում՝ Ադրբեջանի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքները ռուսական զորքերի օգնությամբ զավթելու փորձերին հակահարված տալու համար: Այդ հայկական զորքերը սահմաններում պահելու ծախսերը ծանր բեռ են դարձել հայ գյուղացիության ուսերին և հնարավորություն չեն տալիս կառավարությանը զբաղվել թուրքերի հարձակման ժամանակ քայքայված տնտեսության վերականգնման և մշակույթի զարգացման հարցերով: Այսպիսով, ամփոփում է իր միտքը Օհանջանյանը, Ռուսաստանի խորհրդային զորքերի մնալը Հայաստանի վիճելի, իսկ տվյալ դեպքում անվիճելի շրջաններում, ինչպես, օրինակ Զանգեզուրում, ոչ միայն չեն կանխում հայ-ադրբեջանական արյունալից բախումները, այլև ընդհակառակը, օժանդակում են դրանց բորբոքմանը:

Այս կապակցությամբ վերհիշենք Կարաբեքիրի հեռագիրը Բաքվի խորհրդային իշխանությանը և 11-րդ բանակի հրամանա-

[1] Նույն տեղում, էջ 41-42:

տարությանը՝ հարկադրելու Հայաստանին հայ-ադրբեջանական սահմաններում զորքեր պահելու, որը կթեթևացներ թուրքերի վիճակը արևմտյան ռազմաճակատում: Ադրբեջանի խորհրդային իշխանությունը և 11-րդ բանակի հրամանատարությունը, ինչպես ցույց են տալիս փաստաթղթերը, կատարում էին Կարաբեքիրի խնդրանքը:

Օհանջանյանը հայտնում է նաև, որ Հայաստանի կառավարության նախաձեռնությամբ նախապատրաստվում է հայ-ադրբեջանական կոնֆերանս՝ վիճելի հարցերը քննարկելու համար: Ներկա պահին, շարունակում է նա, երբ վիճելի հարցերը պետք է քննարկվեն հայ-ադրբեջանական կոնֆերանսում, ռուսական զորքերի հետագա մնալը հիշյալ շրջաններում կարող է միայն կործանարար ազդեցություն ունենալ հարաբերությունների կանոնավորման ընթացքի վրա: Ելնելով վերոհիշյալից, գրում է Օհանջանյանը, «...իմ կառավարությունը հույս է հայտնում, որ Ձեր կողմից շտապ կերպով ձեռք կառնվեն բոլոր միջոցները, Հայաստանի դեմ Ձեր զորքերի թշնամական գործողությունները դադարեցնելու համար...»:

Օհանջանյանն այս հեռագրում անդրադառնում է նաև Չիչերինի այն մտքին, թե Ռուսաստանը ձգտում է օգտագործել իր բարեկամական հարաբերությունները Թուրքիայի հետ, այդ երկրի տարածքում Հայաստանին ապահովելու իր զարգացման համար անհրաժեշտ տարածքով: Օհանջանյանը հայտնում է, որ Չիչերինի այդ պնդումը ևս չի համապատասխանում «թուրքական ազգային կառավարության գործողություններին, որն այս օրերին Հայաստանից պահանջել է հայկական զորքերից մաքրել Հայաստանի Հանրապետության անվիճելի մասը՝ Օլթիի շրջանը, իր պահանջը հիմնավորելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրով, որն ընդհանրապես մերժում է կենսունակ Հայաստանի գոյության հնարավորությունը»:

Հեռագրում արծարծվող վերջին հարցը Ռուսաստանի հետ Մոսկվայում վարվող բանակցությունները Երևանում շարունակելու խնդիրն է: Օհանջանյանը ափսոսանք է հայտնում, որ երկամսյա բանակցությունները Մոսկվայում արդյունք չտվեցին, չնայած Հայաստանի կառավարության բոլոր ջանքերին և Մոսկվայի բարեկամության մասին հավաստիացումներին: Եվ չնայած դրան, շարունակում է Օհանջանյանը, «...իմ կառավարությունը դեմ չէ բանակցությունները Մոսկվայից Երևան փոխադրելուն: Հայաստանում բանակցությունների շարունակելը Ձեր պատ-

վիրակ Լեգրանի հետ, իմ կառավարությունը հանձնարարում է Լևոն Շանթի պատվիրակությանը, որին միաժամանակ հրահանգ է ուղարկվում շտապ կերպով Մոսկվայից մեկնելու մասին: Պատվիրակության ժամանումից, նրա մանրամասն զեկուցումը լսելուց հետո՝ քանզի նրան իր կառավարության հետ կապ պահպանելու համար Մոսկվայում բավականաչափ տեխնիկական միջոցներ չեն տրամադրվել, կառավարությունը պատրաստ կլինի հետագա բանակցությունների համար ընդունել ռուսական խորհրդային կառավարության պատվիրակներին»[1]:

Հուլիսի 27-ին Օհանջանյանը հեռագրում է Շանթին. «Ընդառաջ գնալով խորհրդային կառավարության ցանկությանը, կառավարությունը համաձայնել է Խորհրդային Ռուսաստանի հետ բարեկամական փոխհարաբերություններ հաստատելու պայմանագրի կնքման բանակցությունները Մոսկվայից փոխադրել Հայաստան: Բանակցությունների շարունակումը Հայաստանում՝ Լեգրանի կողմից ղեկավարվող պատվիրակության հետ, կառավարությունը դնում է Ձեր և Ձեր կողմից ղեկավարվող պատվիրակության մյուս անդամների վրա: Վերը նշվածի պատճառով, խնդրում եմ Ձեզ և պատվիրակության անդամներին շտապ մեկնել Երևան»[2]:

Իր ձեռքի տակ ունենալով Օհանջանյանի և Լեգրանի հեռագրերը, Չիչերինը հուլիսի 28-ին հեռագիր է հղում Լեգրանին՝ մերժելով նրա առաջարկը՝ Հայաստանին ստիպել դադարեցնելու ռազմական գործողությունները: Խոսքը վերաբերում է Զանգեզուրում և Նախիջևանի շրջանում ծավալված ռազմական գործողություններին: Չիչերինը Լեգրանին տալիս է հետևյալ պաշտոնական հրահանգը. «Թուրքերի սկսած հարձակման պատճառով ստեղծված իրավիճակում, մենք միակողմանի, մանավանդ ռադիոյով, չենք կարող Հայաստանից պահանջել, որ նա միակողմանի դադարեցնի ռազմական գործողությունները: Այդ կարող է տեղի ունենալ միայն որպես արդյունք բոլոր շահագրգռված կողմերի հետ վարած բանակցությունների: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է, որ Դուք, ինչքան կարելի է շուտ, ժամանեք ձեր նշանակված տեղը... Ռազմական գործողությունների դադարեցման հարցն այնքան էլ հեշտ չէ, քանի որ չի կարելի մեկի ձեռքերը կապել, երբ մյուսը հարձակվում է նրա վրա: Անդրկովկասում

[1] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 21-22.
[2] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, N 3, էջ 41:

տիրող քաոսի պայմաններում այժմ այդ վիճակում են գտնվում բոլորը: Այդ պատճառով էլ առաջին հերթին անհրաժեշտ է Ձեր ժամանումը Երևան: Մենք ամենից շատ պետք է պնդենք այդ: Շանթի պատվիրակությունը մենք հետ չենք ուղարկի, դա անհարմար կլինի: Մենք կպնդենք բանակցությունները Երևանում շարունակելու անհրաժեշտության վրա, Շանթի հարցը թողնելով անորոշ: Դրանից անկասկած կհետևի այն, որ Շանթը կցանկանա մեկնել, նա այդ մասին արդեն խոսել է: Մենք նրան չենք պահի, և բանակցություններն այդպիսով կփոխադրվեն Երևան»: Երկրորդ կարևոր հարցը, որ առաջ է քաշվում Չիչերինի հեռագրում, վերաբերում է Հայաստանի տարածքով Թուրքիա բեռների փոխադրման իրավունքին: Չիչերինը հրահանգում է. «անհրաժեշտ է հատկապես պնդել Հայաստանի տարածքով մեզ տրանզիտի իրավունք տալու վրա, առանց որևէ օտար հսկողության: Անհրաժեշտ է, որպեսզի մենք կարողանանք մեր կնքված վագոններով ապրանք տեղափոխել»:

Չիչերինը տվյալ դեպքում Լեզրանից պահանջում էր լուծել մի չափազանց կարևոր հիմնախնդիր, որով խիստ շահագրգռված էին թե՛ Թուրքիան, թե՛ Ռուսաստանը: Մինչև թուրք-հայկական պատերազմն ընկած ժամանակահատվածում դիվանագիտական, քաղաքական և ռազմական պայքարն ընթանում էր հիմնականում այդ հարցի շուրջ:

Չափազանց հետաքրքիր է Չիչերինի հեռագրի վերջին պարբերությունը, որում ասվում է. «Թուրքերը, գրավելով Նախիջևանը, այնտեղ մտցրել են խորհրդային իշխանություն և առաջարկում են, որպեսզի մեր զորքերը մտնեն այնտեղ: Մեր զորքերին Նախիջևանի գրավման հրամանը վաղուց է տրված, այդ մասին ես Ձեզ հայտնել եմ: Բայց, ընդհանուր առմամբ, թուրքերի կամ որևէ այլ ժողովրդի գործը չէ որոշել, թե ո՞ւր և ի՞նչ քանակի ուժերով մենք պետք է գնանք»[1]:

Ռուսաստանն ուներ Անդրկովկասի գրավման սեփական ծրագիրը և, հասկանալի է, մտադիր չէր դրա իրականացմանը մասնակից դարձնելու Թուրքիային: Բայց Թուրքիան էլ, իր հերթին, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, հեշտությամբ չէր հրաժարվելու Անդրկովկասում իր նվաճողական ծրագրերից:

Ինչևիցե, տվյալ փուլում Ռուսաստանը ձեռք է բերում առաջին հաջողությունը՝ հետ է կանչվում Շանթի պատվիրակությունը, և

[1] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 24.

բանակցությունները փոխադրվում են Երևան: Բայց, ինչպես ցույց են տալիս գրագրությունները, Հայաստանի կառավարությունը բանակցությունները կարող էր սկսել Շանթի պատվիրակության վերադարձից հետո միայն: Ընդ որում, Լեգրանի պատվիրակությունը կարող էր ընդունվել Երևանում Շանթի պատվիրակության ժամանումից հետո: Անդրկովկասում ծավալվող դեպքերը, սակայն, չէին սպասում, գնալով իրավիճակն ավելի ու ավելի էր թեժանում: Ձեռք բերելով առաջին հաջողությունը, ռուսական դիվանագիտությունը ձեռնամուխ է լինում երկրորդ քայլի իրականացմանը՝ բանակցությունները սկսել մինչև Շանթի ժամանումը Երևան:

Հուլիսի 29-ին Լեգրանը Թիֆլիսից հեռագրում է Օհանջանյանին՝ մեղադրելով Հայաստանի կառավարությանը, որ նրա կողմից Ռուսաստանի բարեկամական և խաղաղասիրական ջանքերն արձագանք չեն գտնում: Նա Հայաստանի կառավարությանն առաջարկում է. «Խորհրդային կառավարության հետ խաղաղ բանակցությունների դադարից խուսափելու համար, խորհրդային կառավարությունն անհրաժեշտ է համարում չհետաձգել բանակցությունների վերսկսումը Երևանում, մինչև Մոսկվայից Շանթի պատվիրակության ժամանումը, որի Երևան ժամանման համար ձեռք են առնված բոլոր միջոցները: Հայաստանի սահմաններում ստեղծված իրավիճակի պայմաններում, Խորհրդային Ռուսաստանի հետ վարվող բանակցությունների ամեն մի դադար կարող է առաջացնել անցանկալի բարդություններ երկու հանրապետությունների ժողովուրդների միջև, իսկ դրա պատասխանատվությունը կընկնի Հայաստանի կառավարության վրա»[1]:

Նույն օրը, հուլիսի 29-ին, Լեգրանը հեռագրում է Չիչերինին, տեղյակ պահելով, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը համաձայն է հետ կանչելու Շանթի պատվիրակությանը և բանակցությունները փոխադրելու Երևան: Այնուհետև հեռագրում մանրամասնորեն շարադրվում են Օհանջանյանին հղված հեռագրի բոլոր դրույթները[2]:

Հ. Օհանջանյանը օգոստոսի 3-ին Չիչերինին և Լեգրանին հղված հեռագրում, առանց որևէ բան թաքցնելու, մանրամասնորեն շարադրում է Խորհրդային Ռուսաստանի՝ Հայաստանի

[1] Նույն տեղում, թ. 43:
[2] Նույն տեղում:

նկատմամբ իրագործվող քաղաքականության բոլոր հիմնական դրվագները, բացահայտելով դրա հակահայկական բնույթը: Օհանջանյանն այդ հեռագրում առաջ է քաշում հետևյալ հարցերը.

ա) Խորհրդային կառավարության բարեկամական հավաստիացումները չեն համապատասխանում տեղական խորհրդային իշխանությունների և Ադրբեջանում տեղակայված ռուսական խորհրդային բանակի հրամանատարության հակահայկական գործողություններին:

բ) Խորհրդային Ռուսաստանի կառավարության հավաստիացումները հայ ժողովրդին օգնելու, նրա ազատ զարգացման համար պայմաններ ստեղծելու, Հայաստանի սահմաններում կարգ ու կանոն հաստատելու մասին, իրականում ձեռք են բերել Հայաստանի դեմ ուղղված «անընդհատ ռազմական գործողությունների, խորհրդային զորքերի կողմից նրա սահմանների բազմաթիվ խախտումների և անվիճելիորեն Հայաստանի Հանրապետությանը պատկանող մի շարք շրջանների տարածքների գրավման տեսք»: Խորհրդային զորքերի առաջխաղացումը Ղարաբաղում, Զանգեզուրում և Նախիջևանում ոչ մի կերպ չեն համընկնում արտգործժողկոմ Չիչերինի հավաստիացումների հետ: Ի հակադրություն Ռուսաստանի խորհրդային կառավարության հավաստիացումների, թե նա մտադիր է աջակցել Հայաստանի Հանրապետության տարածքի ընդարձակմանը՝ հայ ժողովրդի կենսունակությունն ապահովող անհրաժեշտ շրջանակներում, «գործնականում Հայաստանի տարածքն անընդհատ կրճատվում է խորհրդային իշխանությունների կողմից և զավթվում են նորանոր շրջաններ՝ սկզբից Ղարաբաղը, հետո Զանգեզուրը, իսկ այժմ՝ Նախիջևանը»: Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը, չսպասելով Հայաստանի և Ադրբեջանի սահմանային վեճերը լուծելու հարցում միջնորդի դեր կատարելու մասին իր առաջարկի պատասխանին, «այժմ իր զորքերի օգնությամբ, ուժով Հայաստանին է թելադրում իր որոշումները, որոնք միշտ իր զինակից Ադրբեջանի օգտին են լինում: Այդ որոշումները Ռուսաստանը տարածում է նաև երբեք վիճելի չհամարված Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի վրա»: Իր հերթին, շարունակում է նա, Ադրբեջանում խորհրդային զորքերի առանձին ջոկատների հրամանատարների կողմից Հայաստանին անընդհատ վերջնագրեր են տրվում՝ Հայաստանի այս կամ այն անվիճելի մասը համարվող շրջանից հայկական զորքը հանելու պահան-

ջով, սպառնալով վերջնագիրն իրագործել զինված ուժի միջոցով: Օրինակ է բերվում 11-րդ կարմիր բանակի հրամանատար Վասիլենկոյի վերջնագիրը Հայաստանի զորքերի հրամանատարին, որում պահանջվում է. «Խորհրդային զորքերի անարգել մուտքը Հայաստանի Զանգեզուրի և Նախիջևանի շրջանները, իբր թե այնտեղ թուրքերի, թաթարների և հայերի միջև տեղի ունեցող ազգամիջյան ընդհարումները կանխելու համար: Վերջնագրի կատարման ժամկետը նշանակված է օգոստոսի 5-ը: Հրամանատար Վասիլենկոն սպառնում է Հայաստանին ջախջախիչ հարվածներ հասցնել»:

գ) «Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը,– շարունակում է Օհանջանյանը,– պետք է ընդունի, որ խորհրդային զորքերի հրամանատարների նման գործողությունները և նրանց առաջխաղացումը դեպի Հայաստանի խորքը՝ դեռևս Ադրբեջանի մուսավաթական կառավարության և իմպերիալիստական Թուրքիայի նախագծած ուղիով, հայ ժողովրդի կողմից կարող է դիտվել լոկ որպես խորհրդային զորքերի օգնությամբ Հայաստանի կենդանի մարմնի վրայով իմպերիալիստական Թուրքիային միանալու մուսավաթի հին ծրագրի իրագործման փորձ: Նման պարագաներում *կորչում* է Խորհրդային Ռուսաստանի կառավարության բարեկամական հավաստիացումների անկեղծության մասին ամեն մի նշանակություն ու հավատ և խորհրդային զորքերի բուն գործողություններն էլ ընդունում են Հայաստանի դեմ ուղղված ռազմական գործողությունների տեսք՝ նպատակ ունենալով իրագործել Թուրքիայի և ադրբեջանական հակահեղափոխականների իմպերիալիստական ծրագիրը, որոնք ձգտում են ոչնչացնել ազատ Հայաստանի գոյատևման հնարավորությունն անգամ»:

դ) Ռուսաստանի հարձակողական գործողությունների մասին իր շարադրանքն ավարտելուց հետո Օհանջանյանը հայտնում է, որ հայ ժողովուրդը նման մահացու վտանգի պայմաններում հարկադրված է դիմելու բոլոր հնարավոր միջոցներին՝ իր հայրենիքի անկախությունը և սահմանների անձեռնմխելիությունը պաշտպանելու համար: Նա միաժամանակ ընդգծում է, որ Հայաստանի կառավարությունը, ինչպես և ամբողջ հայ ժողովուրդը, անկեղծորեն ձգտել է և այժմ էլ ձգտում է Խորհրդային Ռուսաստանի հետ բարեկամության փոխհարաբերությունների հաստատմանը: Այդ նպատակով Հայաստանի կառավարությունը դեռ մայիս ամսին Մոսկվա է ուղարկել հատուկ պատվիրակություն՝

Խորհրդային Ռուսաստանի կառավարության հետ բարեկամության պայմանագիր կնքելու համար: Եվ եթե մինչև այժմ այդ պայմանագիրը չի կնքվել, դրա մեղքը համենայնդեպս չի կարելի բարդել Հայաստանի կառավարության և նրա անկեղծ ձգտումների վրա:

«Այժմ ևս իմ կառավարությունը կարող է միայն ջերմորեն ողջունել հիշյալ պայմանագրի կնքումը,– նշում է Օհանջանյանը,– բայց նա իրավունք ունի նաև հույս ունենալու, որ Հայաստանի դեմ թշնամական գործողությունների դադարեցմամբ և խորհրդային զորքերը Հայաստանի սահմաններից հանելով, Ռուսաստանի խորհրդային կառավարությունը Հայաստանին կտա անհրաժեշտ երաշխիքներ, առանց որի հնարավոր չէ իմ կառավարության և Ձեր՝ որպես Ռուսաստանի կառավարության կողմից պայմանագիրը կնքելու համար լիազորված ներկայացուցչի միջև, մտքերի հանգիստ փոխանակությունը»:

Ավարտելով հեռագիրը, Օհանջանյանը հայտնում է, որ շոշափված հարցերի շուրջ Լեգրանի հետ նախնական բանակցություններ վարելու համար Հայաստանի կառավարությունն իր երկու ներկայացուցիչներին հանձնարարել է առաջիկա օրերին մեկնել Թիֆլիս[1]:

Օհանջանյանի օգոստոսի 3-ի հեռագիրը պայմանավորված էր հուլիսի 30-ին Շահթախտի շրջանի հայկական զորքերի հրամանատարից ստացած մի չափազանց կարևոր փաստաթղթով: Օգոստոսի 3-ին Օհանջանյանն այդ փաստաթուղթը ուղարկում է Վրաստանում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Տ. Բեկզադյանին: Օհանջանյանը հաղորդում է. «Երեկ Շահթախտի շրջանի հայկական զորքի հրամանատարը Նախիջևանից ստացել է հետևյալ գրությունը. «1920 թվականի հուլիսի 28-ին Ռուսաստանի կարմիր զորքերը, մեր դաշնակից Կարմիր Թուրքիայի զորքերի հետ միասին, համաձայն սույն հրամանի, հարձակվել են բնակիչների կողմից լիովին լքված Նախիջևանի և նրա շրջանի վրա, նպատակ չունենալով ռազմական գործողություններ վարել Հայաստանի դեմ: Մեր ունեցած տվյալների համաձայն, Ձեր զորքերը մտադիր են հարձակվել Նախիջևան քաղաքի վրա՝ այն հրի ու սրի մատնելու նպատակով: Թյուրիմացություններից և աննպատակ արյունահեղությունից խուսափելու համար, որոնք կարող են առաջ բերել պետական կարևորություն ունեցող հե-

[1] Նույն տեղում, թ. 50-52:

տևանքներ, Ձեզ տեղյակ ենք պահում Նախիջևանը և նրա շրջակայքը մեր կողմից գրավելու մասին: 30-ը հուլիսի, 1920 թվական, Նախիջևան քաղաք, Նախիջևանը և նրա շրջակայքը գրված Ռուսաստանի Խորհրդային Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետության և Կարմիր Թուրքիայի միացյալ զորքերի հրամանատար՝ Թարխանով»: Հաղորդում ենք Կիրովին և Չիչերինին տեղյակ պահելու և բողոքի համար»[1]:

Ստեղծվել էր չափազանց վտանգավոր և պայթյունավտանգ իրավիճակ: Անկախ դիվանագիտական և քաղաքական բնույթ կրող գրագրությունների դեկլարատիվ կարգախոսներից, պարզ էր դառնում, որ Մոսկվան և Անկարան նախնական համաձայնության են եկել, այսպես կոչված վիճելի, բայց Հայաստանի անբաժան մասը հանդիսացող Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի գրավման շուրջը: Այդ համաձայնության իրականացման առաջին քայլը Նախիջևանի նվաճումն էր:

Օգոստոսի 14-ին, Ազգային մեծ ժողովի պատգամավորների ծափահարությունների ներքո, Քեմալը սույն իրադարձության մասին հայտարարեց. «Օգոստոսի 1-ին ռուսական բոլշևիկյան կառավարության կարմիր բանակը և Ազգային մեծ ժողովի բանակը միացան Նախիջևանում: Այդտեղ ժամանած մեր զորքերը կարմիր բանակի կողմից ընդունվեցին հատուկ հանդիսավորությամբ և հարգանքով: Մինչև ուրիշ զորքերի ժամանումը, երկու պետությունների այդ քաղաքում միավորված զորամասերը զբաղվում են անհրաժեշտ միջոցառումների համատեղ մշակմամբ»[2]:

Ամփոփելով իր մտքերը Նախիջևանի համատեղ գրավման և Ռուսաստանի հետ ունեցած հարաբերությունների մասին, Քեմալն ասում է. «...ցանկանում եմ ընդգծել հետևյալը: Առաջին՝ պարզ դարձավ, որ բոլշևիկյան կառավարությունը դիմել է գործնական քայլերի, որպեսզի մեզ հետ հարաբերություններ հաստատի: Նա ուղարկեց իր բանակը: Երկրորդ՝ Արևելքում երկու ամիս տևող խճճված և ոչ պարզ վիճակի պատճառն ամենից առաջ առնչված է լեհական իրադարձությունների հետ: Կարմիր զորքերի տեղափոխումը Լեհաստան հնարավորություն տվեց հայկական, վրացական և ադրբեջանական հակահեղափոխականներին տեղական ապստամբություններ կազմակերպել: Երրորդ՝ չնայած

[1] Նույն տեղում, թ. 53:
[2] **Кемаль Ататюрк**, նշվ. աշխ., էջ 103:

այդ բոլորին՝ այստեղ մնացած կարմիր ուժերի թուլացմանը և ադրբեջանցիների, վրացիների ու հայերի հիշյալ հարձակումներին – ***Կարմիր բանակը, այնուամենայնիվ, զտավ ուղիներ, միջոցներ և հնարավորություն, որպեսզի հասնի Նախիջևան և կապ հաստատի մեզ հետ*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.): Այդ երեք հանգամանքները մեզ հույս են ներշնչում, որ մեր երկու ազգերի, երկու պետությունների, որոնք ձգտում են հաղթանակ տանել ընդհանուր թշնամու դեմ, ապագա հարաբերությունները կձևավորվեն մեզ համար ցանկալի ձևով [...]»[1]:

Ընդ որում, ինչպես նշում է Քեմալը, Ռուսաստանի և Թուրքիայի միջև սահմանային կապը պետք է ստեղծվեր դեռևս մայիս ամսին, երբ կարմիր բանակը, գրավելով Ադրբեջանը, «Հայաստանի և Վրաստանի սահմաններում ձեռք առավ անհրաժեշտ ռազմաստրատեգիական միջոցառումներ և դրա հետ միասին ձեռնամուխ եղավ մեզ հետ անմիջական կապի հաստատմանը:

Դա մայիսին էր: Հենց այդ ժամանակ դրությունը Լեհաստանում սկսում է բարդանալ և դառնում բոլշևիկների համար անբարենպաստ: Բոլշևիկյան կառավարությունը հարկադրված էր հնարավորին չափ ավելի շատ զորք ուղարկել լեհական ճակատ: Այդ պատճառով էլ Կովկաս ուղարկված 10-րդ դիվիզիան ամբողջովին տեղափոխվեց հյուսիս: Հյուսիս ուղարկվեց նաև 11-րդ բանակի մի մասը: Այդ իրավիճակում, անգլիացիների անընդհատ սադրիչ քաղաքականության հետևանքով, անգլիացիներին շողոքորթող մուսավաթական կառավարության և նրա գործակիցների ջանքերով, նույն թվում, իհարկե, վրացական և հայկական, Գյանջայի շրջանում, բոլշևիկյան զորքերի թիկունքում բռնկվեց ադրբեջանական հակահեղափոխականների ապստամբությունը:

Այդ կապակցությամբ 11-րդ բանակի հրամանատարությունը, դադարեցնելով գործողությունները Հայաստանի և Վրաստանի սահմաններում, հետ քաշեց այնտեղից բոլոր ուժերը և մայիսի 22-ին ուղարկեց հակահեղափոխականների դեմ: Ապստամբությունը Գյանջայում լիովին ճնշվեց»[2]:

Հենց այդ էր պատճառը, որ մայիսին կարմիր բանակը չնվաճեց Հայաստանը: Միջազգային իրադարձությունները, ռազմական անհաջողությունները Լեհաստանում և Գյանջայի ապըս-

---

[1] Նույն տեղում, էջ 105:

[2] Նույն տեղում, էջ 102:

տամբությունը բոլշևիկյան Ռուսաստանին հարկադրեցին ժամանակավորապես, ինչպես արդեն ասել ենք, հետաձգել Հայաստանի գրավման ծրագրի իրականացումը:

Թուրքիայի եռանդուն գործելակերպը Ռուսաստանին հարկադրեց արագացնել Հայաստանի նվաճման ծրագրի իրականացման ընթացքը: Ռուսաստանը մտադիր չէր Հայաստանի Հանրապետության տարածքը և վիճելի շրջանները զիջել Թուրքիային, դա անկասկած էր:

Հուլիսի վերջերին Մոսկվա ժամանեց Օրջոնիկիձեն: Այդ ժամանակ Մոսկվայում էին գտնվում և՛ թուրքական, և՛ ադրբեջանական պատվիրակությունները, որոնք փոխհամաձայնեցնում էին իրենց հակահայկական ծրագրերը: Թուրքամետ խումբը, Ստալինի ղեկավարությամբ, վերջնական տեսք էր տալիս իր հակահայկական արևելյան քաղաքականության հայեցակարգին: Թուրքամետ խմբի և Չիչերինի խորհրդակցությունների արդյունքը եղավ վերջինիս կողմից Քաղբյուրոյին ներկայացված մի պաշտոնական գրություն, որում նա առաջ էր քաշում հետևյալ առաջարկը. «Անհրաժեշտ է օգտվել ընկ. Մերգոյի ներկայությունից (Մոսկվայում գտնվելուց – Լ. Խ.) և լուծել Հայաստանի հարցը՝ կապված քեմալականների վիճակի հետ: Վերջիններս զինամթերքի պակասի պատճառով մոտ են կործանման: Նրանք մարդիկ ունեն, առաջնորդներ ունեն, բայց զինամթերքը սպառվելու վրա է, փամփուշտը քիչ է: Դա նրանց վիճակը դարձնում է տագնապալից: Նրանց զինամթերք կարելի է ուղարկել միայն Հայաստանի վրայով, տրանզիտի միջոցով: ***Երեք ամիս առաջ հայերը համաձայն էին մեզ ազատ տրանզիտի իրավունք տալու, սակայն սահմանային վեճերում Ադրբեջանի ցուցաբերած կամակորության պատճառով պայմանագիրը թաղվեց:*** Այժմ հայերը խփում են թուրքերին և խիստ երես են առել: Կիրովի տեղեկությունների համաձայն, դաշնակները փամփուշտ են ստացել Վրանգելից (ավելի ճիշտ կլինի ասել Անտանտից՝ Վրանգելի միջոցով): Ընկ. Մերգոյի խոսքերով, այժմ դաշնակներից Հայաստանի վրայով, առանց որևէ հսկողության, փոխադրումների իրավունք ստանալ անհույս է: ***Մերգոն պնդում է, որ Հայաստանի խորհրդայնացման համար այնքան էլ շատ զորք չի պահանջվում: Նա խոսել է գլխավոր հրամանատարի հետ և պարզել, որ այդ զորքերը կարելի է գտնել: Նման դեպքում Հայաստանի խորհրդայնացումը ստիպողական անհրաժեշտություն է: Առանց դրա մենք Թուրքիայի հետ իսկական շփում չունենք*** (ընդգծումները մերն են – Լ.

Խ.): Քեմալականների կործանումը մեզ ուժեղագույն հարված կհասցնի Արևելքում»[1]:

Հաջորդ օրը, հուլիսի 31-ին, Քաղբյուրոն քննարկելով Չիչերինի առաջարկը, որոշում է. «Չիչերինի առաջարկը Հայաստանի մասին ընդունել»[2]:

Այսպիսով, Խորհրդային Ռուսաստանը մի կողմից բանակցություններ վարելով Հայաստանի Հանրապետության հետ, բարեկամության հավաստիացումներ անելով, մյուս կողմից, նորից օրակարգ է մտցնում Հայաստանը զինված ուժով խորհրդայնացնելու հարցը: Այդ էին պահանջում Ռուսաստանի և Թուրքիայի շահերը: Դա զինված ուժով բոլշևիզմի արտահանում էր: Հայ ժողովրդի կարծիքը ոչ մի կողմի համար հետաքրքրություն չէր ներկայացնում:

Այս փաստաթղթում չափազանց կարևոր նշանակություն ունի մի փաստ ևս: Չիչերինը, ինչպես տեսնում ենք, ընդունում է, որ Մոսկվայում Հայաստանի հետ պայմանագիր չի կնքվել ոչ թե հայերի, ինչպես պնդում են շատերը, այլ ադրբեջանցիների կամակորության պատճառով:

Իրադարձությունների այսպիսի աննպաստ զարգացումը Հայաստանին հարկադրեց համաձայնվել բանակցությունները փոխադրելու Թիֆլիս, չսպասելով Շանթի պատվիրակությանը, որը Մոսկվայից մեկնում է օգոստոսի 11-ին և ժամանում Երևան սեպտեմբերի 14-ին: Պատվիրակությունը Մոսկվայից պաշտոնապես հետ էր կանչվել հուլիսի 26-ին:

Չպետք է մոռանալ, որ թուրքական պատվիրակությունը Մոսկվա էր ժամանել հուլիսի 19-ին, և ռուս-թուրքական բանակցությունների առաջին արդյունքներն իրենց զգացնել են տալիս արդեն հուլիսի վերջերին: Ռուսաստանը հասավ իր նպատակին: Շանթի պատվիրակությունը հետ ուղարկվեց: Հայ-ռուսական բանակցությունները փոխադրվեցին Թիֆլիս, Մոսկվայում սկսվեցին ռուս-թուրքական բանակցությունները: Սկսվեց Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի գրավման ծրագրի իրականացումը: Օրակարգ մտցվեց Հայաստանը զինված ուժով գրավելու խնդիրը: Ռազմավարական ծրագրերը պետք է մշակվեին ռուս-թուրքական բանակցություններում: Այդ խնդիրների լուծման գործում

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, հավ. 1, գ. 2, թ. 74:

[2] Նույն տեղում, թ. 75:

իր որոշակի դերն ուներ նաև Ադրբեջանը, որի ներկայացուցիչ-ները մշտական հարաբերությունների մեջ էին Մոսկվայի և Անկարայի հետ:

2. ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Հուլիսի 26-ին, երկարատև ու լարված բանակցություններից հետո, Հայաստանի կառավարությունը հետ կանչեց Շանթի պատվիրակությանը, համաձայնվելով, որ մինչև նրա Երևան ժամանելը, պայմանագիր կնքելու համար Թիֆլիսում նախնական բանակցություններ վարվեն այլ պատվիրակության հետ:

Հայաստանի կառավարության համաձայնությունը ստանալուց հետո Ռուսաստանի կառավարությունը հուլիսի 28-ին պաշտոնապես Բ. Լեգրանին նշանակում է Հայաստանում Արտակարգ լիազոր ներկայացուցիչ՝ զինադադարի և խաղաղության դաշնագիր կնքելու համար: Լենինի և Կարախանի ստորագրությամբ, հուլիսի 28-ի թվակրությամբ մանդատն ունի հետևյալ բովանդակությունը.

«Արտակարգ լիազորագիր. Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության քաղաքացի Բորիս Լեգրանը Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետության կողմից նշանակված է բանակցություններ վարելու Հայաստանի Հանրապետության կառավարության հետ զինադադարի և խաղաղության դաշնագիր կնքելու համար:

Քաղաքացի Լեգրանը լիազորված է հիշյալ Պետության հետ կնքելու և ստորագրելու զինադադարի ու խաղաղության ակտը: Խաղաղության դաշինքը ենթակա է հետագա հաստատման բանվորների, գյուղացիների ու կարմիր բանակի դեպուտատների խորհրդի Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեի կողմից»[1]:

Օգոստոսի 6-ին Լեգրանի հետ բանակցություններ վարելու համար Թիֆլիս է ժամանում Հայաստանի կառավարության պաշտոնական պատվիրակությունը, որի կազմի մեջ մտնում էին հաղորդակցության նախարար Արշակ Ջամալյանը և խնամատարության նախարար Արտաշես Բաբալյանը:

Նույն օրը սկսվում են բանակցությունները: Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը Լեգրանին է ներկայացնում իր կառավարության առաջարկությունները.

---

[1] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, N 3, էջ 32:

1. Ռուսաստանի Խորհրդային Հանրապետությունը ճանաչում է Հայաստանի Հանրապետության անկախությունը և չի խառնըվում նրա ներքին գործերին:

2. Պայմանավորվող կողմերը դադարեցնում են իրար դեմ ուղղված բոլոր տեսակի ռազմական և այլ գործողությունները:

3. Դադարեցնել բոլոր տեսակի վերջնագրերը և հարձակողական քայլերը ինչպես տեղական խորհրդային իշխանությունների և ռազմական հրամանատարության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կողմից:

4. Խորհրդային զորքերը հանել իրենց կողմից գրավված շրջաններից: Վերականգնել այն վիճակը, որը կար մինչև խորհրդային զորքերի ներխուժումը Հայկական Ղարաբաղ և Իջևանի գավառի սահմանները (նախկին Ղազախի գավառի լեռնային մասը):

5. Հայկական զորամասերը մտցնել Հայկական Ղարաբաղ և Ելիզավետպոլի գավառի լեռնային մասը:

6. Նախիջևանի գավառ մտած խորհրդային զորքերի ջոկատին Հայաստանի կառավարությունը թույլ է տալիս անարգել անցնել Ադրբեջան:

7. Դադարեցնել խորհրդային զորքերի կուտակումը Հայաստանի սահմանների մոտ:

8. Ազատել և թույլ տալ անարգել Հայաստան անցնելու Իջևանի գավառում ձերբակալված Հայաստանի Հանրապետության պաշտոնատար անձանց՝ Ս. Մանասյանին, գեներալ Բաղդասարովին, Ն. Ջաղեթյանին, Մ. Սարատիկյանին և Տեր-Ղուկասյանին[1]:

Բայց քանի որ հուլիսի վերջերին և օգոստոսի սկզբներին փաստորեն չհայտարարված պատերազմ էր սկսվել Ռուսաստանի ու Հայաստանի միջև, և Ադրբեջանում տեղակայված 11-րդ բանակի հրամանատարությունը նպատակ էր դրել ոչնչացնել «Արարատյան Հանրապետությունը», Լեգրանը առաջին հերթին ձեռնամուխ է լինում այդ վտանգավոր իրավիճակի վերացմանը, խորհրդային զորքերի հրամանատարության սանձահարմանը: Բնական է, որ առանց այդ քայլերի հնարավոր չէր լինի որևէ համաձայնագիր կնքել Ռուսաստանի և Հայաստանի միջև:

Ստացած լինելով վերը հիշատակված Թարխանովի կողմից Հայաստանի կառավարությանը հղված վերջնագիրը և այն հա-

[1] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 39.

մարելով ինքնագործունեություն, որը չի բխում Ռուսաստանի այդ ժամանակահատվածում վարվող քաղաքականության սկզբունքներից, Լեգրանը օգոստոսի 6-ին հեռագիր է ուղարկում Չիչերինին, իսկ պատճենը Ռոստով՝ Կովկասյան ճակատի Ռազմահեղափոխական խորհրդին:

Հեռագրում Լեգրանը հայտնում է.

առաջին. 11-րդ բանակի հրամանատարությունը չի կարողացել ապահովել իր զորքերի կողմից Նախիջևան քաղաքի և Շուշի-Գորիս-Էնգելյաուրտ (Անգեղակոթ – Լ. Խ.)-Կարմելինովկա-Նախիջևան ճանապարհի ամուր պահպանությունը,

երկրորդ. 11-րդ բանակի հրամանատարությունը «չկատարելով իր առջև դրված հիմնական խնդիրը, անմիջականորեն Հայաստանի հրամանատարությանը ներկայացնում է վերջնագիր, որը համաձայնեցված չէ մեր ընդհանուր քաղաքական գծի հետ, ընդ որում, վերջնագիրը ուղեկցվում է սպառնալիքներով, որոնց իրականացումը դուրս է գալիս իր իրավասությունների և փաստական հնարավորությունների շրջանակներից: Իսկ մեզ ուղարկված հաղորդագրություններում 11-րդ բանակի հրամանատարությունը վճռական մտադրություն է հայտնում հարձակվելու և «Արարատյան Հանրապետությունը» ոչնչացնելու մասին»:

Հայտնելով վերոհիշյալը, Լեգրանը Չիչերինի առաջ բարձրացնում է հետևյալ երկու հարցերը.

ա) «Անվերապահորեն անհրաժեշտ եմ համարում վճռական միջոցներ ձեռնարկել Նախիջևանը և նշված ճանապարհը ամուր պահելու համար: Եվ բոլորովին անթույլատրելի է, որ բանակային հրամանատարությունը իրեն տրված ուղղակի հրահանգները կատարելու փոխարեն հանդես գա ինքնուրույն քաղաքական գծով»:

բ) Նա խնդրում է Չիչերինին այդ հարցերի շուրջ 11-րդ բանակին տրվող կարգադրությունների մասին իրեն տեղյակ պահել: Միաժամանակ ցուցում տալ Ռազմահեղափոխական խորհրդին, որ Հայաստանի կառավարության հետ բոլոր կապերը պետք է իրականացվեն Հայաստանում Ռուսաստանի լիազոր ներկայացուցչի միջոցով[1]:

Լեգրանը օգոստոսի 6-ին Ջամալյանի միջոցով ստանալով Հայաստանի կառավարության առաջարկները զինադադար և պայմանագիր կնքելու պայմանների մասին, հաջորդ օրը հեռագրում է Չիչերինին:

---

[1] Նույն տեղում, թ. 58:

Հեռագրի բովանդակությունը հանգում է հետևյալին. Հայաստանի կառավարությունը հույս ունի ստանալ խորհրդային կառավարության համաձայնությունը կարմիր զորքերը, այսպես կոչված, վիճելի տարածքներից հանելու մասին, որպես նախապայման Հայաստանի Հանրապետության տարածքում բանակցություններ վարելու համար: «Այսօր ստացել ենք այդ հարցի շուրջ պատվիրակության գրավոր առաջարկը,– հայտնում է Լեգրանը: – Մեր պատասխանը կհաղորդվի վաղը: Հայաստանի կառավարությանը կառաջարկվի համաձայնություն տալ կարմիր զորքերի կողմից ժամանակավորապես գրավելու վիճելի շրջանները՝ Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը»:

Խոսելով Անդրկովկասում գտնվող կարմիր բանակի ինքնագործունեության մասին, Լեգրանը նշում է, որ 11-րդ բանակի հրամանատարությունը բավականին թեթևամիտ վերաբերմունք է ցույց տվել Զանգեզուրը և Նախիջևանը գրավելու մասին հրահանգներին, միջոցներ չի ձեռնարկել Գորիս-Անգեղակոթ-Նախիջևան ճանապարհը ամուր պահելու համար: Այդ բոլորի հետևանքով ռուսական ջոկատը Նախիջևանում կտրվել է թիկունքից, իսկ կարմիրների թուրքական առաքելությունը Անգեղակոթի շրջանում հարձակման է ենթարկվել, ընդ որում ոսկին դարձել է հայկական կողմի ավարը: 11-րդ բանակի այդ ժամանակավոր անհաջողությունները ուղեկցվում են ռուսական հրամանատարության Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված վերջնագրային պահանջներով: Օգոստոսի 2-ին Ռազմահեղափոխական խորհուրդը բանակի հրամանատար Վասիլենկոյի և Ռազմահեղափոխական խորհրդի անդամ Լուկինի ստորագրությամբ գրավոր վերջնագիր է ներկայացրել հայկական զորքերի գլխավոր հրամանատարին՝ պահանջելով դադարեցնել ակտիվ գործողությունները և օգոստոսի 5-ից ոչ ուշ հայտնել այդ մասին, սպառնալով հակառակ դեպքում ջախջախիչ հարվածներ հասցնել: Լեգրանը հայտնում է, որ այդ բոլոր գործողությունները Ռազմահեղափոխական խորհուրդը կատարել է առանց արտգործժողկոմատի իմացության: Կիրովին ուղղված գրության մեջ Ռազմահեղափոխական խորհուրդը հայտնում է իր վճռական տրամադրությունն ամբողջ ճակատով Հայաստանի վրա հարձակվելու և, ինչպես գրության մեջ է ասվում, «ոչնչացնելու Արարատյան Հանրապետությունը»:

Մատնանշելով այնպիսի իրավիճակի անթույլատրելիությունը, երբ բանակի հրամանատարությունը ղեկավարության հրա-

հանգները կատարելու փոխարեն ընդհանուր քաղաքական գծին հակասող ինքնուրույն քաղաքականություն է վարում, Լեգրանը խնդրում է անհապաղ և վճռականորեն աջակցել իրեն, այլապես Հայաստանի հետ պայմանագիրը կձախողվի:

Հեռագիրը եզրափակվում է հետևյալ կարևոր առաջարկությամբ. «Որպեսզի մենք այստեղ կարողանանք հաջողության հասնելու հույսով աշխատել, պետք է վստահ լինենք, որ Մոսկվան երկաթե ձեռքերով վերջ կդնի Ադրբեջանի պարտիզանականությանը և կօգնի պայմաններ ստեղծելու, որոնց առկայությամբ Հայաստանի կառավարության հետ ռազմական գործողությունների դադարեցման պայմանագիրը, երբ դրան հասնեն, փաստորեն պարտադիր կդառնա նաև Ադրբեջանում մեր հրամանատարության համար, որը ներկայումս բոլոր միջոցներով ձախողում է մեր աշխատանքը»[1]:

Լեգրանի այս երկու հեռագրերը չափազանց կարևոր են տվյալ ժամանակահատվածում Հայաստանի նկատմամբ Խորհրդային Ռուսաստանի վարած քաղաքականության ներքին ծալքերը բացահայտելու տեսանկյունից:

Նախ, պարզ է դառնում, որ կարմիր բանակը Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը գրավել է Ռուսաստանի կառավարության պաշտոնական հրահանգի համաձայն և ոչ թե ինքնագլուխ:

Երկրորդ. Կովկասյան ճակատի Ռազմահեղափոխական խորհուրդը և 11-րդ բանակի հրամանատարությունը վերջնագրով սպառնացել էին Հայաստանի կառավարությանն ամբողջ ճակատով հարձակման անցնել և ոչնչացնել Արարատյան Հանրապետությունը: Մինչդեռ հայտնի է թե՛ մեկի և թե՛ մյուսի ղեկավարությունը տնօրինում էր Օրջոնիկիձեն, որն առանց Ստալինի ոչ մի քայլ չէր անում:

Երրորդ. Ռուսաստանի կառավարությունը գործադրում էր բոլոր ջանքերը Հայաստանի հետ կնքվելիք պայմանագրում ամրագրելու Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի ռազմակալումը: Դրանով փաստորեն չեղյալ էր համարվում կոմկուսի Քաղբյուրոյի հուլիսի 7-ի որոշումը, և սկսում էր գործնականում իրագործվել Ստալինի հուլիսի 8-ի հեռագրի հիմնադրույթը՝ ադրբեջանամետ և թուրքամետ քաղաքականություն վարելու մասին:

Չորրորդ. Արարատյան Հանրապետությունը վերացնելու պա-

[1] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 61-62.

հանջով վերջնագիրը ուղարկվել է Վրաստանում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Կիրովին, որը, սակայն, այդ հարցը լռության է մատնել, որովհետև ինքը ևս Ստալինի թուրքամետ դրածոներից էր:

Վերոհիշյալից չպետք է այն հետևությունն անել, թե կենտրոնն անտեղյակ էր այդ իրադարձություններին և նմանատիպ տեղեկություններ ստանում էր միայն Լեգրանից: Օգոստոսի 6-ին Ռազմահեղափոխական խորհրդի և 11-րդ բանակի կողմից երկու հեռագիր է հղվում Մոսկվա, որոնցում խոսվում է տեղի ունեցած իրադարձությունների մասին և բերվում է հայկական բանակի հրամանատարությանն ուղարկված վերջնագրի տեքստը: Հեռագրերում բերվում է ոչ միայն Հայաստանի Հանրապետության բանակի հրամանատարին ուղղված վերջնագիրը, այլև վերջինիս պատասխանը, որում ասվում է. Հայաստանի բանակը պաշտպանում է պետությունն արտաքին և ներքին թշնամիներից: Դա յուրաքանչյուր երկրի զինված ուժերի պարտականությունն է: Ադրբեջանական և թուրքական զորքերը մտել են Հայաստանի սահմանները և հանդիպել հայկական ուժերի քաջարի դիմադրությանը: Ինչ վերաբերում է տարածքային հարցերին, ապա դրանք չեն կարող լուծվել զորահրամանատարների կողմից, այլ պետք է լուծվեն կառավարությունների ջանքերի միջոցով: Հայաստանի կառավարությունն այդ նպատակով պատվիրակություն ունի Մոսկվայում, բացի դրանից մի պատվիրակություն էլ այդ հարցի շուրջ բանակցություններ է վարում Լեգրանի հետ[1]:

Այսպիսով, Ռուսաստանի ղեկավարությունը տեղյակ էր Հայաստանի տարածքում կատարվող ռազմական իրադարձությունների մասին: Դեռ ավելին, բոլոր գործողությունները կատարվում էին Մոսկվայի հրահանգներով ու համաձայնությամբ:

Թուրքամետ խումբը գնալով ավելի ու ավելի էր ուժեղացնում իր հակահայկական գործունեությունը: Դա բացատրվում է նրանով, որ օգոստոսի սկզբներին ռուս-թուրքական բարեկամական հարաբերությունները բավականին խորացել էին: Ռուսաստանը և Թուրքիան պետք է անպայման ունենային ընդհանուր սահմաններ, որպեսզի հնարավոր լիներ զենք և զինամթերք փոխադրել Թուրքիա: Երկու պետություններն էլ իրենց զորքերը շարժում էին դեպի այդ տարածքները: Ռուսները գրավել էին Ղարաբաղի ու Զանգեզուրի մի մասը և թուրքերի հետ գրավել

[1] Նույն տեղում, թ. 55, 56, 59:

Նախիջևանը: Երկու պետություններն էլ իրենց ռազմավարական ծրագրերում ունեին Հայաստանի նվաճման խնդիրը:

Ընդ որում, թուրքական բանակներին թողնելով մտնել Նախիջևան, ռուսական կառավարությունը դրանով ցանկանում էր վախեցնել Հայաստանի կառավարությանը և հարկադրել նրան համաձայնելու ռուսական զորքերի կողմից Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի գրավմանը: Հայաստանի Հանրապետությունը հայտնվեց աքցանի մեջ: Մի կողմից առաջ էր շարժվում ռուսական բանակը, մյուս կողմից՝ թուրքականը: Այդ տարածքները կամ պետք է գրավեին ռուսները, կամ թուրքերը, կամ էլ կիսեին իրար միջև: Դիմադրել միաժամանակ և՛ Ռուսաստանին, և՛ Թուրքիային՝ Հայաստանը չէր կարող:

Ահա այդպիսի անելանելի պայմաններում Հայաստանի կառավարությունը գնաց այդ տարածքները ժամանակավորապես Ռուսաստանին հանձնելու ճանապարհով: Ռուսաստանից դեռ ինչ-որ չափով հույս կար հետ ստանալու այդ տարածքները, ինչը լիովին բացառվում էր դրանք Թուրքիայի կողմից զավթվելու դեպքում:

Հակահայկական խումբը վարում էր նուրբ, ճկուն և խորամանկ քաղաքականություն:

Տարօրինակ է, որ Լեգրանն այդ ժամանակ չէր կռահում թուրքամետ խմբի գոյության մասին և շարունակում էր բողոքել կենտրոնին ու մասնավորապես Չիչերինին Բաքվի խորհրդային իշխանության և 11-րդ կարմիր բանակի հրամանատարության Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված գործողությունների դեմ: Մի՞թե Լեգրանը չէր տեսնում, որ չնայած իր բազմաթիվ բողոքներին, այնուամենայնիվ, Բաքվի իշխանության և 11-րդ բանակի հրամանատարության հակահայկական քաղաքականությունը չի փոխվում:

Այս փուլի փաստաթղթերն ուսումնասիրելիս աչքի է զարնում Լեգրանի համարձակությունը և հետևողականությունը, որն ամենայն հավանականությամբ բխում էր Չիչերինի հետ ունեցած մտերմիկ հարաբերություններից: Հակառակ դեպքում անհասկանալի է, թե նա ինչ իրավունք ուներ պահանջներ ներկայացնել կամ կարգադրություններ անել Օրջոնիկիձեին, Ռազմահեղափոխական խորհրդին և 11-րդ բանակի հրամանատարությանը, որոնք նրան ենթակա չէին: Դեռ ավելին, նա չէր կարող չիմանալ, որ Ռուսաստանի կառավարության կողմից Անդրկովկասի բոլոր առանցքային հարցերի լուծումը պաշտոնապես դրված է Օրջոնիկիձեի վրա:

Ինչ վերաբերում է Չիչերինին, ապա նա արդեն կռահում էր, որ գոյություն ունի հակահայկական խմբավորում, բայց, չնայած դրան, շարունակում էր դիվանագիտորեն պայքարել իր տեսակետների իրագործման համար: Չենք բացառում, որ Չիչերինի հայամետ քաղաքականությունը ձևավորվել է Կարախանի ազդեցությամբ:

Այսպիսի ծանր պայմաններում 1920 թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության միջև կնքվում է համաձայնագիր, որի տեքստը տալիս ենք ամբողջությամբ. «1920 թվականի օգոստոսի 10-ին ՌՍՖԽՀ-ն՝ ի դեմս լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանի, մի կողմից, և Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս իր ներկայացուցիչներ Ա. Ջամալյանի ու Ա. Բաբալյանի, մյուս կողմից, ելնելով Հայաստանի Հանրապետության անկախության և լիակատար ինքնուրույնության ճանաչումից՝ կնքեցին ներկա համաձայնագիրը հետևյալի մասին.

1. 1920 թ. օգոստոսի 10-ի ցերեկվա ժամը 12-ից ռազմական գործողությունները ՌՍՖԽՀ-ի և Հայաստանի Հանրապետության զորքերի միջև համարվում են դադարեցված:

Ծանոթություն. ռազմական գործողությունները, որոնք տեխնիկական պատճառներով կարող են տեղի ունենալ նշված ժամկետից հետո, չպետք է պատճառ դառնան այնպիսի հետևանքների, որոնք հակասեն այս պայմանագրի որևէ կետին:

2. Հայաստանի Հանրապետության զորքերը գրավում են հետևյալ գիծը.

Շահթախտ-Խոկ-Ազնաբերդ-Սուլթանբեկ և այնուհետև Կուկից հյուսիս և Բազարչայից (Բազարքենդ) արևմուտք ընկած գիծը: Ղազախի գավառում՝ մինչև սույն թվականի հուլիսի 30-ը, նրանց կողմից գրված գիծը:

ՌՍՖԽՀ-ի զորքերը գրավում են վիճելի մարզերը. Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը, բացառությամբ ներկա համաձայնագրով Հայաստանի Հանրապետության զորքերի տեղադրման համար որոշված շրջանի:

3. Խորհրդային զորքերի կողմից վիճելի տարածքների գրավումով չի կանխորոշվում այդ տարածքների նկատմամբ Հայաստանի Հանրապետության կամ Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության իրավունքների հարցը: Այդ ժամանակավոր գրավումով ՌՍՖԽՀ նպատակ ունի ստեղծել բարենպաստ պայմաններ՝ Հայաստանի և Ադրբեջանի տարածքային

վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու այն հիմունքներով, որ կմշակվեն մոտ ժամանակներս ՌՍՖԽՀ-ի և Հայաստանի Հանրապետության միջև կնքվելիք հաշտության պայմանագրում:

4. Ռազմական գործողությունները դադարեցնելուց հետո պայմանավորվող կողմերը դադարեցնում են ռազմական ուժերի կենտրոնացումը ինչպես վիճելի, այնպես էլ սահմանային տարածքներում:

5. Մինչև ՌՍՖԽՀ և Հայաստանի Հանրապետության միջև պայմանագրի կնքումը երկաթգծի Շահթախտ-Ջուլֆա հատվածի շահագործման իրավունքը տրվում է Հայաստանի երկաթուղային ճանապարհների վարչությանը, սակայն, պայմանով, որ այն չի կարող ռազմական նպատակներով օգտագործվել:

6. ՌՍՖԽՀ-ն երաշխավորում է Հայաստանի կառավարության խորհրդային զորքերի գրաված գծից այն կողմ հայտնված բոլոր զորամասերի (զենքով և հանդերձանքով) ազատ անցումը Հայաստան:

Սույն համաձայնագիրը ստորագրվում է երկու օրինակից, որոնցից մեկը տրվում է Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչներին, մյուսը՝ ՌՍՖԽՀ Լիազոր ներկայացուցչին»[1]:

Համաձայնագրի տեքստը նույն օրը, օգոստոսի 10-ին Լեգրանը հեռագրով ուղարկում է Չիչերինին:

Օգոստոսի 17-ին Օհանջանյանը հայտնում է Չիչերինին, որ Եղիազար Եղիազարյանը նշանակված է Հայաստանի Հանրապետության ժամանակավոր դիվանագիտական ներկայացուցիչ Մոսկվայում:

Այսպիսով, Ռուսաստան-Թուրքիա մրցակցության առաջին փուլն ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով, որը Հայաստանի Հանրապետության հետ կնքված համաձայնագրով ժամանակավորապես ռազմակալեց Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը:

Թուրքիան նպատակ ունենալով կամ անձամբ գրավել, կամ էլ Ադրբեջանին հանձնել այդ տարածքները, համաձայնագրից մեծ դժգոհություն չհայտնեց, քանի որ, այնուամենայնիվ, վիճելի տարածքներն անցնում էին Ռուսաստանին՝ դրանց վերջնական ճակատագիրը հետագայում որոշելու պայմանով: Թուրքիան հույս ուներ և ոչ առանց հիմքի, որ Ռուսաստանի հետ ձևավորվող իր բարեկամական հարաբերությունները կկարողանա օգտագործել

[1] Նույն տեղում, թ. 63-64:

վիճելի տարածքային հարցերը իր կամ Ադրբեջանի օգտին լուծելու համար:

Ընդհանուր առմամբ, գոհ լինելով համաձայնագրի դրույթներից, Թուրքիան, սակայն, վճռականորեն դեմ արտահայտվեց նրա 2-րդ հոդվածին, որով երկաթուղու Շահթախտ-Ջուլֆա հատվածը մնում էր Հայաստանին: Չնայած Ռուսաստանն այդ տարածքների գրավումով սահմանակից դարձավ Թուրքիային, բայց դրանով հանդերձ չլուծվեց Թուրքիա ռուսական զենքի առաքման հարցը, քանի որ այն պետք է կատարվեր երկաթուղու հենց այդ հատվածով: Թուրքիան և Ռուսաստանի թուրքամետ խումբը եռանդուն պայքար սկսեցին օգոստոսի 10-ի համաձայնագրի 2-րդ հոդվածը բեկանելու համար:

Հայաստանի կառավարության համար օգոստոսի 10-ի համաձայնագիրը միանշանակ չէր: Մի կողմից, իհարկե, այդ համաձայնագիրը Հայաստանի կառավարության արտաքին քաղաքականության լուրջ անհաջողությունն էր, սակայն, մյուս կողմից դրականն այն էր, որ այդ տարածքները չգրավեցին Թուրքիան և Ադրբեջանը, որոնցից հնարավոր չէր լինի հետագայում հետ վերցնել դրանք: Ռուսաստանի կողմից այդ տարածքների ռազմակալումը հույս էր թողնում, որ դրանք վերջնականապես կորցված չեն Հայաստանի համար:

Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի համար մղվող պայքարը մտնում էր նոր և չափազանց բարդ փուլ:

Սակայն չպետք է մոռանալ, որ նույն օրը, օգոստոսի 10-ին ստորագրվեց նաև Սևրի պայմանագիրը, որին երկար ժամանակ սպասում և որի հետ մեծ հույսեր էր կապում հայ ժողովուրդը: Այդ բարդ և հակասական ժամանակներում Հայաստանի կառավարությունը մի կողմից ստորագրում էր Թիֆլիսի համաձայնագիրը՝ Ռուսաստանին հանձնելով, ճիշտ է ժամանակավորապես, վիճելի տարածքները, մյուս կողմից Սևրում ստորագրում մի այլ պայմանագիր, որով պետք է հետ ստանար Արևմտյան Հայաստանի մի մասը:

Դեռ մինչև Սևրի պայմանագրի կնքումը, ելնելով հայ ժողովրդի դժնդակ վիճակից, Թուրքիայի և Ռուսաստանի նվաճողական ծրագրերի կանխման համար Հայաստանի կառավարությունը և հայ քաղաքական ազգային գործիչներն ամեն ինչ արեցին Հայաստանի մանդատը ԱՄՆ-ին հանձնելու համար: Դա Հայկական հարցի լուծման ճանապարհին անհրաժեշտ քայլերից մեկն էր: ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնը Փարիզում 1919 թ. ապրիլի

17-ին ընդունեց Պողոս Նուբարին և Ավ. Ահարոնյանին: Հայաստանի մանդատը ստանձնելու անհրաժեշտության մասին նրանց խնդրանքին Վիլսոնը պատասխանել էր. «Ես էլ ցանկանում եմ, որ Հայաստանի մանդատը Ամերիկան ընդունի: Կարող եմ վստահեցնել ձեզ, որ Ամերիկայի բոլոր լավագույն քաղաքացիների մտածումն ու զգացումն էլ այդ է: Եվ եթե երբևիցե Ամերիկան որևէ մանդատ հանձն առնի, այդ կլինի Հայաստանինը»[1]: 1919 թ. մարտի 28-ին Ավ. Ահարոնյանը Փարիզում հանդիպելով ամերիկյան գործիչ Բաումանի հետ, նորից նույն միտքն է արծարծում. «Եթե Ամերիկան մեզ չօգնի, մենք կորած ենք: Կրկնում եմ, Հայաստանն իբրև պետություն կամ այսօր իսկ պիտի կազմվի Ձեր օգնությամբ, կամ նա կորած է հավետ»[2]:

Եվ իրոք, Վիլսոնն անկեղծորեն ցանկանում էր որպեսզի ԱՄՆ-ը վերցնի Հայաստանի մանդատը: 1919 թ. փետրվարի 26-ին նա Սպիտակ տանն անցկացրեց Հայաստանի մանդատին նվիրված խորհրդակցություն, որտեղ հայտարարեց. «Եթե Ամերիկայի Միացյալ Նահանգները որևէ մանդատ ընդունի Ազգերի լիգայից, ապա առաջին հերթին նա պետք է ընդունի Հայաստանի մանդատը»[3]:

1919 թ. մայիսի 14-ին Անգլիան Չորսի խորհրդին է ներկայացնում Թուրքիայի բաժանման իր նախագիծը: Այն քննարկելուց հետո ընդունվում է հետևյալ որոշումը. 1. Թուրքիային հեռացնում են Եվրոպայից ու Հայաստանից, 2. Հունաստանը ստանում է Իզմիր-Այվալի գոտին և Այդն պրովինցիայի մեծ մասի մանդատը, 3. Իտալիան ստանում է մանդատ Փոքր Ասիայի հարավային մասի համար՝ Մարմարիսից մինչև Մերսին, գումարած Կոնիան. Ֆրանսիան վերցնում է մնացածը: Հայաստանի և Պոլսի մանդատները տրվում են ԱՄՆ-ին: Հայաստանի մանդատի մասին որոշման մեջ ասվում է. «ԱՄՆ-ի նախագահը Ամերիկայի Միացյալ Նահանգների անունից՝ Սենատի համաձայնության պայմանով, ընդունում է. 1. Հայաստանի մանդատը: Նրա սահմանները կորոշվեն ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի ու Իտալիայի պատվիրակությունների համաձայնությամբ: 2. Կոստանդնուպոլսի, Բոսֆոր և Դարդանել նեղուցների, Մարմարա ծովի և ոչ մեծ հարա-

---

[1] **Ավետիս Ահարոնյան**, Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Բոստոն, 1943, էջ 18:

[2] Նույն տեղում, էջ 16:

[3] **В. И. Шпилькова**, Империалистическая политика США в отношении Турции (1914-1920 гг.), М., 1960, с. 66.

կից տարածքի մանդատը, որի սահմանները կորոշվեն ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի ու Իտալիայի պատվիրակությունների համաձայնությամբ»[1]:

Լոնդոնում գտնվող դեսպանների կոնֆերանսը 1920 թ. սկզբին մշակում է Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրի նախագիծը և ապրիլին ներկայացնում Սան-Ռեմոյի կոնֆերանսի քննարկմանը: Սան-Ռեմոյի կոնֆերանսը որոշում է ճանաչել Հայաստանի անկախությունը: Սակայն, եթե 1919 թ. քննարկումների ժամանակ այն կարծիքն էր հայտնվում, որ անկախ Հայաստանի տարածքի մեջ պետք է միավորվեն 7 վիլայեթները և Կիլիկիան, ապա այժմ դրանց քանակը կրճատվում է: Այժմ արդեն մեծ տերությունները Հայաստանի տարածքը սահմանափակում էին Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի վիլայեթներով:

1920 թ. ապրիլի 24-ին Սան-Ռեմոյում ապագա հայկական պետության սահմանների մասին ընդունվում է Լլոյդ Ջորջի նախագիծը, որն ուղարկվեց Վիլսոնին: Նախագծում ասվում էր.

«ա) Դիմել պրեզիդենտ Վիլսոնին, որպեսզի Ամերիկայի Միացյալ Նահանգները ընդունեն Հայաստանի մանդատը այն սահմաններում, որոնք տրված են Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագծի առաջին տարբերակում:

բ) Եթե Ամերիկայի Միացյալ Նահանգները չկամենան ընդունել մանդատը, Միացյալ Նահանգների պրեզիդենտին խնդրվում է հանդես գալ իբրև միջնորդ Հայաստանի սահմանների հարցում, ինչպես ասված է ստորև բերվող նախագծային հոդվածում:

գ) Հետևյալ իմաստով հոդված պետք է մտցվի հաշտության պայմանագրում՝ Հայաստանի վերաբերյալ:

Թուրքիան, Հայաստանը և մյուս բարձր պայմանավորվող կողմերը համաձայն են դիմել Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտի միջնորդությանը Թուրքիայի և Հայաստանի սահմանների հարցում՝ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում և ընդունել այդ առթիվ նրա որոշումը, ինչպես նաև որևէ պայման, որ նա կառաջարկի դեպի ծով Հայաստանի անկախ պետության ելքի մասին»[2]:

1920 թվականի մայիսի 17-ին Վիլսոնը տալիս է իր համաձայնությունը ապագա Հայաստանի սահմանների որոշման արբիտր լինելու մասին: Մայիսի 24-ին նա դիմում է ամերիկյան

---

[1] Նույն տեղում, էջ 76:

[2] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Երևան, 1972, էջ 669:

կոնգրեսին Հայաստանի մանդատն ընդունելու առաջարկով: Հունիսի 1-ին ԱՄՆ-ի սենատը մերժում է Վիլսոնի առաջարկը Հայաստանի մանդատը ստանձնելու մասին:

ԱՄՆ-ը Հայաստանի մանդատից հրաժարվեց հետևյալ պատճառներով.

1. ԱՄՆ-ը սկսել էր վարել չմիջամտելու (իզոլյացիոնիզմի) քաղաքականություն, պաշտոնապես հայտարարելով, որ չի խառնվելու Եվրոպայի գործերին:

Հենց այդ հանգամանքը նկատի ունենալով, Ֆրանսիայի պատվիրակության անդամ պարոն Բերտելոն Սան-Ռեմոյի կոնֆերանսում դեռ ապրիլ ամսին հայտարարեց, որ ԱՄՆ-ը Հայաստանի մանդատը ստանձնելու մասին «որոշակիորեն ժխտական պատասխան է տալու»[1]:

2. Հայաստանի վիճակն ուսումնասիրելու համար այդտեղ էր ուղարկվել Հարբորդի առաքելությունը, որն իր հաշվետվության մեջ հետևյալ առաջարկն էր արել իր կառավարությանը. Հայաստանը թշնամի տարրերով շրջապատված և բնակված երկիր է: Այդպիսի երկրի մանդատը վերցնել նշանակում է ստանձնել թշնամիներով բնակեցված և շրջապատված երկրամասում պետություն հիմնելու դժվարին գործը: Որպեսզի շրջակա երկրների հետ ներդաշնակ քաղաքականություն վարվի, անհրաժեշտ է այդ երկրների մանդատը ևս տալ ԱՄՆ-ին: Հակառակ դեպքում, միմիայն Հայաստանի մանդատը վերցնելը հանձնարարելի չէ: «Հայկական հարցը,– ասվում է զեկուցագրում,– չի կարող լուծվել այլ կերպ, քան լիազորված տերության միասնական մանդատով, տերություն, որի իրավունքները պետք է տարածվեն Կոնստանդնուպոլսից Անատոլիայի, Թուրքահայաստանի և Անդրկովկասի վրա: Առաքելությունն արտահայտում է նաև Մերձավոր Արևելքում նշանակալից դեր կատարող ամերիկացիների ցանկությունը: Նրանք միահամուռ կերպով հայտարարում են, որ Հայաստանին, Անատոլիային, Անդրկովկասին ու Կոստանդնուպոլսին վերաբերող հարցը պետք է դիտվի որպես միասնական ամբողջական հարց»[2]:

Սակայն 1920 թ. օգոստոսին այդ տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակը, Քեմալի իշխանության գլուխ գալը Թուրքիայում գործնականում բացառում էին Հարբորդի առաջարկի

---

[1] Նույն տեղում, էջ 635:

[2] **Б. А. Борьян**, Армения, международная дипломатия и СССР, ч. II., М.- Л, 1929, с. 71.

իրագործման հնարավորությունը: Հետևաբար, ԱՄՆ-ի սենատն ուներ բոլոր հիմքերը չընդունելու Հայաստանի մանդատը:

3. Հայաստանի մանդատը ստանձնելու, Արևմտյան Հայաստանի տարածքը քեմալական զորքերից ազատագրելու համար ԱՄՆ-ը պետք է պատերազմեր, բազմաթիվ զոհեր տար և, բնականաբար, հսկայական միջոցներ վատներ: Ահա թե ինչու ԱՄՆ-ը հրաժարվեց Հայաստանի մանդատից:

Սան-Ռեմոյի կոնֆերանսում մշակված Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրի նախագիծը 1920 թվականի օգոստոսի 10-ին ստորագրվեց Սևրում: Հայաստանի Հանրապետության կողմից պայմանագիրը ստորագրեց Ավետիս Ահարոնյանը: Սևրի պայմանագրի 3-րդ մասի 6-րդ բաժինը (88-93 հոդվածներ) ամբողջովին վերաբերում էր Հայաստանին: Պայմանագրի այդ բաժինը տալիս ենք ամբողջությամբ.

«Հոդված 88. Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը, ինչպես այդ բանն արդեն արել են Դաշնակից տերությունները, որպես ազատ և անկախ պետություն:

Հոդված 89. Թուրքիան և Հայաստանը, ինչպես և Բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանազատումը թողնել Ամերիկայի Միացյալ Նահանգների որոշմանը և ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես և այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու և հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տարածքների ապառազմականացման վերաբերյալ:

Հոդված 90. Այն դեպքում, եթե 89-րդ հոդվածի համաձայն սահմանագիծը որոշելիս հիշյալ վիլայեթների ամբողջ տարածքը կամ նրա մի մասը հանձնվի Հայաստանին, Թուրքիան այսօր արդեն հայտարարում է, որ որոշման օրից սկսած ինքը հրաժարվում է հանձնված տարածքի նկատմամբ բոլոր իրավունքներից և իրավահիմունքներից: Սույն պայմանագրի որոշումները, որոնք կիրառվելու են Թուրքիայից անջատվող տարածքների նկատմամբ, այս պահից սկսած կգործադրվեն նաև այլ տարածքների նկատմամբ:

Հայաստանի սուվերենությանը հանձնվող տարածքի կապակցությամբ նրա վրա դրվող Թուրքիայի ֆինանսական պարտավորությունների բաժինը, և դրանց բնույթն ու այն իրավունքները, որոնցով նա կարող է փաստարկել, կսահմանվեն սույն Պայմա-

նագրի 8-րդ մասի (ֆինանսական դրույթներ) 241-244-րդ հոդվածների համաձայն:

Հաջորդ կոնվենցիաները կկարգավորեն, եթե դա անհրաժեշտ լինի, այն բոլոր հարցերը, որոնք չեն կարգավորվել սույն պայմանագրով և որոնք կարող են ծնունդ առնել հիշյալ տարածքի փոխանցման կապակցությամբ:

Հոդված 91. Եթե 89-րդ հոդվածում նշված տարածքի մի մասը հանձնվի Հայաստանին, ապա Սահմանագծման հանձնաժողովը, որի կազմը կորոշվի հետագայում, կստեղծվի երեք ամսվա ընթացքում այն բանից հետո, երբ արդեն ընդունված կլինի Հայաստանի և Թուրքիայի միջև տեղում սահմանագիծ անցկացնելու վերաբերյալ հիշյալ հոդվածում նախատեսվող որոշումը:

Հոդված 92. Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմաններն ըստ պատկանելույն կորոշվեն շահագրգռված պետությունների ընդհանուր համաձայնությամբ:

Երբ 89-րդ հոդվածում նախատեսված որոշումն արդեն ընդունված կլինի, և եթե դրանից հետո այս կամ այն շահագրգռված պետությունները չեն կարողանա ընդհանուր համաձայնությամբ որոշել իրենց սահմանագիծը, վերջինս կորոշեն Գլխավոր դաշնակից տերությունները, որոնք դրա հետ միասին պետք է հոգ տանեն սահմանազատումը տեղում գծանշելու մասին:

Հոդված 93. Հայաստանն ընդունում է, համաձայնվելով դրանք մտցնել Գլխավոր տերությունների հետ պայմանագրի մեջ, այն որոշումները, որոնք այդ տերություններն անհրաժեշտ կհամարեն Հայաստանում այն բնակիչների շահերը պաշտպանելու համար, որոնք ռասայի, լեզվի և կրոնի առումով տարբերվում են ազգաբնակչության մեծամասնությունից:

Հայաստանը նմանապես համաձայնվում է Գլխավոր տերությունների հետ Պայմանագրի մեջ մտցնել այն որոշումները, որոնք այդ տերություններն անհրաժեշտ կհամարեն տրանզիտի ազատությունը և այլ ազգերի առևտրի համար արդարացի պայմանակարգը պաշտպանելու համար»[1]:

Սան-Ռեմոյի կոնֆերանսի որոշման համաձայն, ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնը 1920 թ. նոյեմբերի 22-ին հայտնում է իր «իրավարարական վճիռը» Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի սահմանագծման մասին: Վիլսոնի վճռով Արևմտյան Հայաստանի տարածքը պետք է

[1] Հայաստանը միջազգային դիվանագիտության ..., էջ 676-677:

կազմեր 90 հազար քառ. կիլոմետր: Ընդ որում, չորս վիլայեթների տարածքների բաժանումը կատարվեց հետևյալ կերպ. «1. Վանի ամբողջ տարածությունը՝ 39.300 քառ. կմ., Հայաստանի մասը՝ 20 հազար, 2. Էրզրումի ամբողջ տարածությունը՝ 49.700 քառ. կմ, Հայաստանի մասը՝ 40 հազար, 3. Բաղեշի (Բիթլիս) ամբողջ տարածությունը՝ 27.100 քառ. կմ, Հայաստանի մասը՝ 15 հազար, 4. Տրապիզոնի ամբողջ տարածությունը՝ 32.700 քառ. կմ, Հայաստանի մասը՝ 15 հազար:

1920 թվականին Արևելյան Հայաստանի տարածքը կազմում էր 71. 330 քառ. կմ:

Այսպիսով, Հայաստանի ընդհանուր տարածքը կազմելու էր 161.330 քառ. կմ[1]: Եթե իրադարձությունները բարեհաջող ընթացք ունենային, ապա հայ ժողովուրդը կկարողանար հայտարարել, որ ինքը լուծեց նախնիների թողած ծանր բեռը՝ Հայկական հարցը:

Սևրի պայմանագրով Արևմուտքը պաշտոնապես ճանաչեց հայ ժողովրդի պատմական իրավունքն Արևմտյան Հայաստանի նկատմամբ: Եթե դրան ավելացնենք, որ 1917 թ. դեկտեմբերի 31-ին «Թուրքահայաստանի մասին» դեկրետով Խորհրդային Ռուսաստանը ևս ճանաչել էր այդ տարածքի նկատմամբ հայ ժողովրդի պատմական իրավունքը, ապա պարզ կդառնա, որ հայ ժողովրդի թափած արյունը, բազմաթիվ սերունդների հերոսական, անձնազոհ պայքարը վերջապես տվեց իր արդյունքը, աշխարհը պաշտոնապես ընդունեց հայ ժողովրդի պատմական իրավունքն Արևմտյան Հայաստանի նկատմամբ և այդ տարածքում հայկական անկախ պետության ստեղծման անհրաժեշտությունը: Հենց սրանում է այդ փաստաթղթերի պատմական նշանակությունը:

Բայց 1920 թվականի օգոստոսին Թուրքիայում տեր ու տնօրեն էր Քեմալի կառավարությունը: Սևրի պայմանագիրը գործադրելու համար անհրաժեշտ էր զինված ուժ: Հայաստանը նոր էր ստեղծում իր բանակը և, բնականաբար, այդ հարցը միայն իր ուժերով չէր կարող լուծել: Ուրեմն, եթե այդ խնդիրը հայերը չէին կարող լուծել, ապա պետք է լուծեին մեծ տերությունները: Ինչպես վկայում են ժամանակի փաստաթղթերը, մեծ տերություններն ուղարկում էին զենք, զինամթերք և դրամական օգնություն՝ հայ-

[1] **Գաբրիել Լազյան**, Հայաստան և Հայ դատը հայ և ռուս յարաբերություններու լոյսին տակ, Կահիրե, 1957, էջ 213-214:

կական բանակ ստեղծելու նպատակով: Օգնության հարցում առանձնապես աչքի ընկավ Անգլիան, որը Հայաստան ուղարկեց 40 հազարանոց բանակի զենք և զինամթերք: Միաժամանակ պարզ էր դառնում, որ ոչ մի խոշոր տերություն զորք չի ուղարկելու Թուրքիայի դեմ կռվելու, Արևմտյան Հայաստանն ազատագրելու համար:

Ալ. Խատիսյանը գրում է. «Երբ ուշի ուշով կ'ուսումնասիրես այն ժամանակվա անգլիական քաղաքականությունը, պարզ կտեսնես, որ Անգլիան կուզէր, որ Հայերը, ինչպես և կովկասյան մյուս ազգությունները, կարենային ետ մղել բոլշևիզմի յառաջխաղացումը և տիրել Թուրքիոյ հայկական վիլայէթներուն: Իրենց ուժերով, իրենց սեփական ուժերով, Հայերը չկրցան ընել այդ: Եվ երբ անգլիացիք սկսան հասկնալ, որ Հայերը չեն կրնար իրագործել առաջադրված նպատակները, սկսան պաղիլ Հայերէն:

Անգլիական Բարձր կոմիսարը այդ առթիվ ըսավ անգլիացիներու համար բնորոշ նախադասություն մը. «***Անգլիան խաղ ըրավ անհաջող ձիու վրա***», այսինքն, որ Հայաստանի և Հայերու վրա դրած թուղթը չշահեցավ, քանի որ հայերը անկարող եղան իրագործել այդ դժվարին խնդիրը...»[1]:

Ուրեմն, զինված ուժերով օգնություն չէր լինելու, Հայաստանն ինքը պետք է լուծեր իր հարցերը, բնական դաշնակից ունենալով Հունաստանին:

Ստեղծված իրավիճակում Հայաստանի Հանրապետությունը ձեռնամուխ էր եղել 40 հազարանոց բանակի ստեղծմանը, որը երկիրը պետք է պաշտպաներ Թուրքիայի, Ռուսաստանի և Ադրբեջանի հարձակումներից և միաժամանակ ազատագրեր Սևրի պայմանագրով անկախություն ստացած Արևմտյան Հայաստանը: Ծանոթ լինելով Թուրքիայի, Ռուսաստանի և Ադրբեջանի նվաճողական ծրագրերին, կարող ենք որոշակիորեն ասել, որ 1920 թվականին, երբ բանակը նոր էր ստեղծվում, այդ խնդիրը հնարավոր չէր իրականացնել:

Եվ չնայած դրան, Հայաստանի կառավարությունը փորձում էր պաշտպանվել Ռուսաստանի ու Ադրբեջանի հարձակումներից և միաժամանակ կազմակերպել Արևմտյան Հայաստանի ազատագրության զորքը: Հայաստանի Հանրապետությունում ծավալված իրադարձությունները մեզ արդեն ծանոթ են, սակայն դրա հետ

---

[1] **Ալ. Խատիսյան**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 183:

մեկտեղ միջոցներ էին ձեռք առնվում Արևմտյան Հայաստանը ազատագրելու ուղղությամբ: «Անգլիական անուան և դրոշակի վարկը շատ բարձր էր, գրում է Ալ. Խատիսյանը, և մենք անոր վրայ յոյսեր կը դնէինք, երբ կը կազմէինք դէպի թուրքաց սահմանը առաջանալու ծրագիրը՝ Սևրի դաշնագրով մեզի տրուած սահմաններուն տիրանալու համար: Զօր. Պիչի, զօր. Նազարբէկյանի և Դրոյի հետ մենք մշակեցինք ծրագիր Թուրքիա մտնելու, որոշեցինք սննդատու կայաններու կէտերը, զորքերու տեսակներն ու կազմը: Առաջին հերթին ենթադրուած էր առաջ շարժել զորաբաժին մը 5000 հոգիէ բաղկացած, 200 անգլիական զինվորներու ուղեկցությամբ, որուն հետևանքով մեր գաղթականները աստիճանաբար պիտի մտնէին իրենց հայրենի երկիրը:

Այդ ծրագիրները բավականաչափ մշակված էին 1920 թ. գարնանը: Բայց անոնց գործադրությունը կը ձգձգվէր Փարիզէն և Լոնդոնէն սպասված կարգադրության բացակայության պատճառով: Երևանի մէջ պարզ կզգայինք, որ մեր առջև կանգնած են հրատապ հարցեր զինվորական ուժի կազմակերպության, թուրքերու հեռացման և գաղթականներու վերահաստատման վերաբերմամբ: Մենք կդիմէինք Դաշնակիցներու և՛ գրավոր, և՛ բերանացի հենց այդ խնդիրներով...»[1]: Դաշնակիցները, սակայն, Հայաստանի կառավարության բազմաթիվ դիմումներին բավարարություն չտվեցին: Օգնության գործը ձգձգվում էր, Դաշնակիցները չհամաձայնվեցին օգնության համար զորքեր տրամադրել Հայաստանին: Իսկ մինչ այդ, մի կողմից ռուսական զորքերը մոտեցան Հայաստանի սահմաններին, մյուս կողմից՝ արդեն բավականին հզորացած քեմալական Թուրքիայինը: Բոլշևիկյան Ռուսաստանը և քեմալական Թուրքիան կարողացան լեզու գտնել Հայաստանի նվաճման հարցում, իսկ դաշնակիցներն ու Հայաստանը չկարողացան որևէ գործնական որոշում ընդունել՝ Սևրի պայմանագիրը կատարելու և Հայաստանի Հանրապետությունը փրկելու համար:

Մենք լիովին համաձայն ենք Ալ. Խատիսյանի այն մտքի հետ, որ «Դաշնակիցները եկան Կովկաս ոչ թե կովկասյան ժողովուրդներու սիրոյն համար և հեռացան այնտեղէն ոչ թէ թշնամութենէ դրդված: Հաշիվը բերավ զանոնք մեզ մոտ. այդ հաշիվը չարդարացավ, և անոնք հեռացան՝ թողնելով մեզ ամենադժուարին

[1] Նույն տեղում, էջ 184:

ռոպէին, միանգամայն անօգնական և մինակ»[1]:

Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ նման բարդ իրավիճակում Հայաստանի կառավարությունը պետք է կարողանար խուսանավել Դաշնակիցների և Ռուսաստանի միջև, մի բան, որը նույնիսկ տեսականորեն հնարավոր չէր, որովհետև շփումը մի խմբի հետ անմիջապես առաջացնում էր մյուսի բուռն դժգոհությունը:

Եվ այսպես, օգոստոսի 10-ին, Սևրի պայմանագրի և Թիֆլիսի համաձայնագրի կնքման օրը, Ռուսաստանն ու Թուրքիան արդեն մտել էին Հայաստան՝ սպառնալով նրա գոյությանը, իսկ Դաշնակիցները ճանաչում էին հայ ժողովրդի պատմական իրավունքը Արևմտյան Հայաստանում, այնտեղ անկախ հայկական պետություն ստեղծելու անհրաժեշտությունը՝ հրաժարվելով օգնության համար զինված ուժեր ուղարկելուց: Ահա թե ինչով էր բացատրվում Հայաստանի կառավարության որոշումը՝ Թիֆլիսում Լեգրանի հետ օգոստոսի 10-ին զինադադարի շուրջ համաձայնագիր կնքելու մասին: Հայաստանի կառավարությունը տեղյակ էր Թուրքիայի ռազմական պատրաստությունների մասին, Թուրքիան, իր հերթին, տեղյակ էր Հայաստանի ռազմական պատրաստությունների մասին:

Հայաստանի կառավարությունը, կնքելով այդ համաձայնագիրը, ցանկանում էր չեզոքացնել Ռուսաստանին, վիճելի տարածքների ճակատագրի լուծումը թողնել ապագային, իսկ մինչ այդ պատրաստվել Թուրքիայի հետ անխուսափելի դարձած ռազմական գոտեմարտին:

Եթե Հայաստանի և Հունաստանի բանակներն իրենց բարձրության վրա լինեին, փոխհամաձայնեցնեին իրենց ծրագրերը, ապա թուրքական բանակը սպասվող պատերազմում դատապարտված էր պարտության: Դաշնակիցները, առավել ևս Ռուսաստանը, սպասում էին այդ պատերազմին և նրա ելքին: Հայաստանի պարտության դեպքում երկիրը կխորհրդայնացվեր, այսինքն, կկենսագործվեր Ռուսաստանի առավելագույն ծրագիրը: Հայաստանի հաղթանակի դեպքում պարտված Թուրքիայից դժվար չէր լինի ազատել նաև Արևմտյան Հայաստանը: Ընդ որում, նման դեպքում և՛ Դաշնակիցները, և՛ Ռուսաստանը կաջակցեին Հայաստանին՝ հույս ունենալով այս նոր հեռանկարում հզոր լինելու տվյալներ ունեցող պետությունը պահել իրենց ազ-

[1] Նույն տեղում, էջ 193:

դեցության ոլորտներում: Իսկ Հայաստանը իրենց ազդեցության ոլորտում պահելը կենսական խնդիր էր թե՛ Դաշնակիցների և թե՛ Ռուսաստանի համար: Ռուսաստանը, բնականաբար, վիճելի տարածքների՝ Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի մասին իր վերջնական կարծիքը կարտահայտեր հաղթողի և ռուսական կողմնորոշում ունեցողի օգտին: Չպետք է մոռանալ, որ Կովկասը ռուսական ազդեցության գոտի էր պատմականորեն, և բոլշևիկյան Ռուսաստանը երբեք թույլ չէր տա Դաշնակիցներին տնօրինելու այդ տարածքի ճակատագիրը: Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանին, ապա այնտեղ անխուսափելիորեն պետք է ընդհարվեին Դաշնակիցների և Ռուսաստանի շահերը:

* *
*

Կողմնորոշման հարցն առանցքային նշանակություն ուներ թե՛ Դաշնակիցների և թե՛ Ռուսաստանի համար: Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընտրել էր Արևմտյան կողմնորոշում: Նման ընտրությունը կապված էր Արևմուտքի կողմից Հայկական հարցի լուծման խոստումների հետ: Սևրի պայմանագիրն այդ քաղաքականության արդյունքն էր: Անդրկովկասում ռազմաքաղաքական վիճակի բարդացումը, Ռուսաստանի հարձակողական քաղաքականության ուժեղացումը Հայաստանի Հանրապետությանը հարկադրեց բոլշևիկների հետ Մոսկվայում բանակցությունների մեջ մտնել և զինադադարի համաձայնագիր կնքել: Այդ համաձայնագիրը, սակայն, խիստ բացասական տպավորություն թողեց դաշնակիցների վրա, որոնք կարծում էին, թե Հայաստանի կառավարությունը փոխել է իր արևմտամետ կողմնորոշումը: Դաշնակիցները բացատրություն էին պահանջում Հայաստանի կառավարությունից: ՀՀ արտաքին գործոց նախարարության տեղեկագրից իմանում ենք, որ օգոստոսի 24-ին Երևան է ժամանել ֆրանսիական առաքելությունը, գնդապետ Կորբելլի ղեկավարությամբ: Նա հանդիպում է ունենում Հայաստանի վարչապետի հետ: «Հայաստանի վարչապետը,– ասվում է տեղեկագրում,– իր պատասխանի մեջ կանգ առավ այն քաղաքական և զինվորական պայմանների վրա, որոնք ստիպեցին նրան կնքել հիշյալ պայմանագիրը, որը միայն ժամանակավոր է և լոկ զինադադարի ակտ է: Հայաստանի կառավարությունը չի փոխել իր օրիենտացիան և շարունակում է մնալ հակաբոլշևիկ: Նա որոշել է բոլոր միջոցներով կռվել յուր անկախու-

թյան համար: Բայց պետք է, որ Դաշնակիցները գան նրան օգնության ավելի գործնական և ռեալ կերպով, քան մինչև այժմ: Այս մեր վերջին ժամանակավոր անհաջողության մեջ մեղք ունեն և Դաշնակիցները, օրինակ՝ Անգլիան, որը ցանկանում է տալ Ղարաբաղը Ադրբեջանին, իսկ մեզ թույլ չէր տալիս զորք մտցնել Զանգեզուր և կազմակերպել տեղական ժողովուրդը»: Ըստ Կորբելլի, բոլշևիկները անկեղծ ցանկություն չունեն հաշտություն կնքելու Հայաստանի հետ: Եթե նրանք այդ բանը չարին Մոսկվայում Շանթի հետ, չեն անելու և Երևանում: Առհասարակ նա չէր հավատում բոլշևիկների դաշինքներին, որ նրանք կապել են Վրաստանի հետ և կապում են Հայաստանի հետ: «Չպետք է հավատալ նրանց և պետք է ամեն կերպ զինվել»[1]:

Կովկասում անգլիական գերագույն կոմիսար Լուկկը ևս մեղադրում էր Հայաստանի Հանրապետության ղեկավարությանը, գտնելով, որ օգոստոսի 10-ի համաձայնագիրը բացել է Հայաստանի դռները բոլշևիկների առաջ և հնարավոր չի լինելու այն փակել, որ նա երես է թեքել Դաշնակիցներից և չպիտի ունենա նրանց աջակցությունը: Իսկ Կովկասում ֆրանսիական բարձրագույն կոմիսար դը Մարտելը գտնում էր, որ այդպիսի պայմանագիր ստորագրելով բոլշևիկների հետ, Հայաստանը դադարում է Անտանտի դաշնակիցը լինելուց և անցնում է նրա թշնամիների բանակը: Նա նույնիսկ կասկած է հայտնել, որ Հայաստանի կառավարության այդ քայլից հետո նրա ներկայացուցիչ Ավ. Ահարոնյանը հազիվ թե հրավիրվի ստորագրելու Սևրի պայմանագիրը:

Դաշնակիցների մոտ նման տրամադրություններ առաջ էին եկել այն բանի հետևանքով, որ Հայաստանի կառավարության բանակցությունները բոլշևիկների հետ տարվել էին առանց Դաշնակիցների գիտության, և զինադադարի պայմանների մասին նրանք իմացել էին մամուլից: Այդ պատճառով էլ առաջացավ այն սխալ կարծիքը, որ Հայաստանի կառավարությունը փոխում է իր կողմնորոշումը:

Ստեղծված իրավիճակում արտաքին գործոց նախարարությունը անհրաժեշտ էր գտնում «Աշխատել պարզել Դաշնակից պետությունների կառավարություններին և, առհասարակ, քաղաքական շրջանակներում, որ Հայաստանի կառավարությունը ստիպված է եղել կնքել այդ պայմանագիրը, որ դա պարզ զինա-

[1] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, N 3, էջ 51-52:

դադար է և ոչ վերջնական դաշնագիր: Հայաստանն այդ զինադադարի պայմանագրով չի հրաժարվում իր իրավունքներից այն հողամասերի վերաբերյալ, որոնք այժմ գրավված են խորհրդային զորքերով: Այդ հարցերը մնում են վիճելի և պիտի վճռվեն վերջնականապես մոտիկ ապագայում կնքվելիք վերջնական պայմանագրով: Ստեղծվել էին այնպիսի աննպաստ պայմաններ, որ մեր կառավարությունը Հայաստանը նոր արյունահեղությունների վայր չդարձնելու և նրան բոլշևիզմից փրկելու համար ստիպված էր կնքելու այդ զինադադարը: Նա չի փոխել իր քաղաքական ուղղությունը, պիտի շարունակի իր կտրուկ քաղաքականությունը դեպի բոլշևիկները, և եթե նրանք չբավարարեն Հայաստանի արդար պահանջները, նա կշարունակի կռվել մինչև վերջին հնարավորությունը... Դաշնակիցները պետք է հասկանան, թե ինչ ծանր քաղաքական և զինվորական պայմանների մեջ էր գտնվում Հայաստանը այդ զինադադարը կնքելու ժամանակ: Սա հակադաշնակից ակտ չէ, քաղաքական ուղղության փոփոխումը չէ: Հայաստանը շարունակում է մնալ հակաբոլշևիկ, գիտի ինչ կարելի է սպասել նրանցից»:

Հայաստանի արտգործնախարարությունը նաև հայտնում է, որ «Հայաստանի կառավարությունը դեռ ամիսներ առաջ նախատեսել էր տաճիկների, բոլշևիկների և Ադրբեջանի միացման վտանգը և այդ մասին հայտնել էր գրավոր կերպով Դաշնակիցներին և խնդրել օգնություն, իսկ այդ օգնությունը կամ չեկավ (Ֆրանսիա), կամ ուշացավ (Անգլիա): Համենայն դեպս, Հայաստանի կառավարությունը մինչև այժմ գործով ապացուցել է, որ իր քաղաքական ուղղությունը հակաբոլշևիկյան է և որ նա անխախտորեն որոշել է կռվել Հայաստանի անկախության համար և այժմ էլ Դաշնակիցները չունեն ոչ մի հիմք որևէ կասկած ունենալու մեր քաղաքականության վերաբերմամբ»:

Կորբելլը Երևան էր ժամանել օգոստոսի 24-ին, իսկ Լուկկը՝ 31-ին: Երկուսն էլ Երևան ժամանեցին խիստ դժգոհ Հայաստանի կառավարության քաղաքականությունից և համոզված, որ նա փոխել է իր կողմնորոշումը: Լուկկը չէր կարողանում հասկանալ, թե «Ինչը ստիպեց կառավարությանը կապել այդպիսի մի պայմանագիր, որը իսկական մի սնանկություն է այն ուժեղ և ամուր քաղաքականությունից հետո, որ բռնել էր Հայաստանի կառավարությունը բոլշևիկների հանդեպ»:

Հայաստանի վարչապետի բացատրություններից հետո, ինչպես ասվում է պաշտոնական տեղեկագրում «Կարծես Լուկկը գո-

հացում ստացավ և երևում է, որ սկզբնական ծանր տպավորությունն այժմ անցել է»[1]:

ՀՀ արտգործնախարարության 1920 թ. սեպտեմբերի 1-ին կազմած սույն տեղեկագրի նյութերից պարզորեն երևում է, որ Հայաստանի կառավարությունը պատրանքներ չի ունեցել Խորհրդային Ռուսաստանի քաղաքականության նկատմամբ և ամիսներ առաջ լիովին պատկերացրել է այն աղետալի վտանգը, որը սպառնում էր հայ ժողովրդին: Ստեղծված պատմական իրավիճակում Ռուսաստանը, Թուրքիան և Ադրբեջանը անխուսափելիորեն պետք է գնային միասնական ճակատի ստեղծմանը՝ ընդդեմ Անտանտի և, հասկանալի է նաև՝ Հայաստանի:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ոչ կարող էր խանգարել այդ խմբավորման ստեղծմանը և ոչ էլ միանալ նրան: Ռուսաստանը գնալով այդ խմբավորման ստեղծմանը, նպատակ ուներ դաշնակիցներ գտնել Անտանտի դեմ մղվող պայքարում՝ իր ծրագրից չհանելով Անդրկովկասի ամբողջական նվաճումը, իսկ Թուրքիային հավասարապես հետաքրքրում էր և՛ Անտանտի դեմ մղվող պայքարը, և՛ Հայաստանի զավթումը: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա նա խորհրդայնացումից հետո, բնականաբար, լիովին պաշտպանում էր բոլշևիկյան Ռուսաստանի քաղաքականությունը, մանավանդ, որ այն հնարավորություն էր տալիս Թուրքիայի հետ միասին իրականացնել Հայաստանի նկատմամբ ունեցած պանթուրքիստական, նվաճողական ծրագրերը:

Հայաստանի կառավարությունը, ինչպես ցույց են տալիս փաստաթղթերը, կարողացավ հարթել Դաշնակիցների հետ օգոստոսի 10-ի համաձայնագրի կնքման կապակցությամբ առաջացած բախումը: Սակայն հարցն այն է, որ այդ համաձայնագրի դեմ մեծ արշավանք սկսեց Թուրքիան՝ Ռուսաստանից պահանջելով չեղյալ հայտարարել նրա 2-րդ հոդվածը, որով երկաթուղու Շահթախտ-Ջուլֆա հատվածը մնում էր Հայաստանին: Իսկ դա այն կետն էր, որտեղից Ռուսաստանը պետք է զենք և զինամթերք առաքեր Թուրքիային:

Թուրքիան Ռուսաստանից պահանջում էր. ա) գրավել այդ տարածքը ռուսական զորքերով կամ թույլ տալ, որ թուրքական զորքերը գրավեն այն, բ) եթե Ռուսաստանը համաձայն չէ այդ տարածքի գրավմանը, ապա լուծել Հայաստանի վրայով տրան-

[1] Նույն տեղում, էջ 53-56:

զիտի հարցը: Հասկանալի է, որ Թուրքիան, առաջին հերթին, նպատակ էր հետապնդում գրավելու այդ տարածքը:

Մինչև թուրք-հայկական պատերազմի սկսվելը այդ հարցը Ռուսաստանի, Թուրքիայի և Հայաստանի բանակցությունների հիմնախնդիրներից մեկն էր:

3. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ. ԲԵՔԻՐ ՍԱՄԻ ԲԵՅԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքական պատվիրակությունը՝ Բեքիր Սամի բեյի ղեկավարությամբ, հուլիսի 19-ին ժամանեց Մոսկվա: Հուլիսի 24-ին պատվիրակությունն ընդունվեց Չիչերինի կողմից: Ընդունելությանը մասնակցում էր նաև Կարախանը: Նույն օրը, գիշերը պատվիրակությունն առանձին հանդիպում է ունենում Կարախանի հետ՝ Չիչերինի կողմից բարձրացված հարցերը բազմակողմանիորեն քննարկելու համար: Սկզբից ևեթ ասենք, որ ռուս-թուրքական բանակցությունների մասին շրջանառության մեջ գտնվող նյութերի քանակը չափազանց անբավարար է: Սակայն Ալի Ֆուադ Ջեբեսոյի «Մոսկվայի հուշեր» վերնագրով գրքում օգտագործված փաստաթղթերը և ռուսաստանյան արխիվային նոր, առ այսօր ընթերցողին անծանոթ նյութերը հնարավորություն են ընձեռում տալու բանակցությունների ամբողջական պատկերը՝ քննարկված հիմնական հարցերը և տարաձայնությունները:

Ի վերջո, պետք է նկատի ունենանք, որ Հայաստանի ճակատագիրը պետք է լուծվեր այդ բանակցությունների ընթացքում, երկու պետությունների նվաճողական ծրագրերի փոխզիջման շրջանակներում:

Հուլիսի 24-ի բանակցությունները Կարախանի հետ տևեցին բավականին երկար: Դրանց ընթացքում թուրքական պատվիրակությունը բարձրացրեց երկու կարևոր հարց, ա) Հայաստանի վրայով ճանապարհի բացումը՝ եթե խաղաղ միջոցներով հնարավոր չէ, ապա զինված ուժի միջոցով, բ) զենքի և զինամթերքի առաքման արագացումը: Ջեբեսոյն այդ հանդիպման ժամանակ քննարկված հարցերի մասին գրում է. «Մեր խիստ կարիքն ունեցած զենքի ու զինամթերքի շտապ կարգով Անատոլիա փոխադրելու համար մերոնք առաջարկել են Հայաստանի փակ ճանապարհի շուտափույթ բացումը, իսկ Կարախանը, Լեհաստանի խնդրի կարևորության վրա կենալով, ասել է, որ դժվար է այնտեղից ուժ փոխադրելով ճանապարհի բացումը. Հայաստանի

վրա առանց պատճառի հարձակումն Արևմուտքի և Ամերիկայի հասարակությունների վրա վատ ազդեցություն պիտի առաջացնի, Հայաստանի կառավարության իր մոտ ուղարկած դեսպանական մարմինը (խոսքը Շանթի պատվիրակության մասին է – Լ. Խ.) սահմանն անցնելուն չի համաձայնվում, բայց քաղաքական ձեռնարկները սկսած լինելով հույս ունի, որ այս մեկ-երկու շաբաթվա ընթացքում ճանապարհը բացվի»[1]: Կարախանը հայտնել է, որ ճանապարհը պետք է բացվի վերջնագրի, իսկ եթե դա չհաջողվի, ապա զինված ուժի միջոցով:

Կարախանը թուրքական պատվիրակությանը տեղյակ է պահում երկու հարցի մասին նս. ա) «Հայաստան ուղարկված պատվիրակության հետ միասին Խալիլ փաշայի և Անկարա գնացող դեսպանական քարտուղարներից մեկի հետ առայժմ 25 փութ ոսկի է ուղարկվել, պատրաստվել է չորսական թնդանոթից բաղկացած երկու մարտկոց, 6 հազար հրացան, հարյուր գնդացիր և մեծաքանակ զինամթերք», բ) «Ղարաբաղը, Նախիջևանում՝ Ալագյոզը և Զանգեզուրը Ադրբեջանի օգտին գրավելու հրաման է տրվել, սակայն մինչև Լեհաստանից ուժ չբերվի, լայն չափով զինվորական շարժում կատարելու համար բավարար ուժ չի գտնվի»[2]:

Այդ ժամանակ վիճելի տարածքները ռուսական զորքերի կողմից գրավելու մասին որոշումը, ինչպես նշել ենք, իրոք ընդունված էր: Դեռ ավելին, ռուսական ուժերն արդեն ձեռնամուխ էին եղել այդ տարածքների ռազմակալմանը: Սակայն փաստաթղթերը ցույց են տալիս, որ այդ ժամանակահատվածում նշված տարածքների ճակատագրի հարցը Ռուսաստանը դեռևս վերջնականապես չէր հստակացրել իր համար:

Ռուսական դիվանագիտությունը վիճելի տարածքների հիմնահարցը Ադրբեջանի օգտին լուծելու հայտարարությամբ պարզապես ցանկանում էր հանգստացնել թուրքերին և դրա փոխարեն ինչքան կարելի է ավելի մեծ զիջումներ պահանջել Թուրքիայից:

Բեքիր Սամին պնդել է արագացնել օգնության ուղարկումը, պատճառաբանելով, որ ներկա կացության մեջ 15 օր սպասելն իսկ աննպաստ է, որ ճանապարհի ժամ առաջ բացումը կենսական անհրաժեշտություն է: Թուրքերը խիստ անհանգստացած

---

[1] **Ali Fuat Cebesoy**, Moskova Hatıraları (21/11/1920-2/6/1922), İstanbul, 1955, s. 63.
[2] Նույն տեղում:

էին հայերի և հույների միաժամանակ հարձակման վտանգից, որը կարող էր ճակատագրական լինել Քեմալի համար: Այդ պատճառով էլ թուրքական պատվիրակությունը նպատակ ուներ Ռուսաստանի միջոցով չեզոքացնել Հայաստանի հարձակման հնարավորությունը: Բանակցությունների ժամանակ Բեքիր Սամին Կարախանին հարցնում է. «Հավանակա՞ն է, որ հայկական բանակը հարձակվի մեզ վրա»: Վերջինս նրան հանգստացրել է, պատասխանելով, որ հայերը չեն համարձակվի նման քայլի դիմել, և որ Օլթիի վրա հայերի հարձակումը խորհրդային իշխանության կողմից Հայաստանի հանդեպ քաղաքական խիստ վերաբերմունքի կարժանանա[1]:

Հուլիսի 24-ի բանակցություններից հետո, հուլիսի 25-ին, Բեքիր Սամին հեռագրում է Անկարա իր առաջին տպավորությունների մասին. «Մեր ժողովի մասին իրենց տեսակետները շատ մտերմական են, իսլամական աշխարհի հանդեպ Ռուսաստանի հետապնդելիք քաղաքականության կարևորությունից խոսելով այս մասին երկար բանակցություններ պիտի վարեն, Անգլիայի հետ հավանականորեն կնքվելիք համաձայնության և հաշտության մեջ Թուրքիայի տեսակետներն էլ պաշտպանելու համար խիստ կարևոր են նկատում ստանալ նաև Անատոլիայի կառավարության կարծիքն ու դիտողությունները»[2]:

1920 թվականի օգոստոսի 4-ին թուրքական պատվիրակությունն իր երկրորդ հանդիպումն է ունենում Կարախանի հետ: Նա, հայտնելով այն մասին, որ հայերի ոչ լուրջ դիմադրությունից հետո խորհրդային բանակը մտել է Նախիջևան և այդ շրջանում կապ է հաստատել թուրք զորամասերի հետ, արել է հետևյալ հայտարարությունը. «Լուր ստացանք, որ Անկարայի կառավարությունը, Հայաստանին հուշագիր ուղարկելով, պահանջել է, որ հայ զինվորներն իրենց գտնված տեղից քաշվեն Բրեստ-Լիտովսկի պայմանագրով որոշված սահմանները: Մի շարք պատճառների բերումով մենք հարմար չենք գտնում, որ Թուրքիան ոչ առանձին և ոչ էլ Խորհրդային Ռուսաստանի հետ միասին, հայերին պահանջներ ներկայացնի: **Նախկին Ռուսաստանի մեջ գտնվող Հայաստանի հետ հարցը մենք կլուծենք: Հայաստանի դեմ պատերազմ չուզենալով հանդերձ, մենք պատրաստ վիճակում ենք գտնվում: Հայաստանի դեմ պատերազմի պատճառների**

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 62:

սարքումը մեզ է վերաբերում (ընդգծումը մերն է – Լ. Խ.): Դրա համար էլ մեր ձեռքում ունենք որոշ փաստեր, դրանք մի ձևի վերածելով պիտի հայտարարենք, օրինակ, թե մեր Թուրքիա ուղարկած 25 փութ ոսկին հայերը հափշտակեցին: Հայաստանի կառավարությանը վերջնագիր տվինք, որպեսզի 48 ժամվա ընթացքում այդ ոսկին վերադարձնի: Հայաստանի կառավարությունը հետ է կանչել այստեղ գտնվող հայկական պատվիրակությանը: Մեծ կարևորությամբ գնահատում ենք Թուրքիային օժանդակություն կատարելու անհրաժեշտությունը. **լավ իմացեք, որ մինչև այս ամսի վերջը ճանապարհը պիտի բացվի: Թող հարցը գաղտնի պահվի** (ընդգծումը մերն է – Լ. Խ.): Դուք այդ կարող եք հաղորդել միայն ձեր կառավարությանը: Դուք պնդում եք Բրեստ-Լիտովսկի սահմանի վրա, սակայն ճիշտ չի լինի ամեն բան կապել ուժը կորցրած պայմանագրի հետ: Ժամանակն անցավ, և շատ բաներ փոխվեցին: Այնուամենայնիվ, հարկավոր է մեր միջև քննարկել այդ պայմանագիրը»[1]:

Կարախանի հետ թուրքական պատվիրակության ունեցած երկրորդ հանդիպման նյութերը ցույց են տալիս, որ բոլշևիկյան Ռուսաստանը Արևելյան Հայաստանը համարում էր իր ազդեցության գոտին և արգելում էր Թուրքիային գրավելու այդ տարածքները: Դրա հետ մեկտեղ Ռուսաստանը վճռականորեն խոստանում էր Թուրքիային Հայաստանի վրայով ճանապարհը բացել մինչև օգոստոսի վերջը: Ընդ որում, Ռուսաստանը, եթե չկարողանար ճանապարհը բացել խաղաղ միջոցներով, պատրաստ էր հարցը լուծելու զենքի ուժով, արդեն հորինված էին անգամ պատերազմի պատճառները: Բայց Կարախանը հայտնում է նաև, որ «պատերազմի պատճառների սարքումը մեզ է վերաբերում», զգուշացնելով թուրքերին չդիմելու նման քայլերի, քանի որ Թուրքիան ճանապարհ բացելու պատրվակով ցանկանում էր գրավել այդ տարածքները:

Մերժելով Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, Կարախանը թուրքերին մերժում էր Կարս, Արդահան և Բաթում մտնելու իրավունքը, քանի որ այդ տարածքները պատկանել էին ցարական Ռուսաստանին: Բայց, լավ իմանալով թուրքերին և ամենայն հավանականությամբ վստահ չլինելով, որ Քաղբյուրոն կպաշտպանի այդ տեսակետը, Կարախանն այնուամենայնիվ տեղ է թողնում իր նահանջի համար, հայտնելով, որ «հարկավոր է մեր միջև

[1] Նույն տեղում, էջ 64:

քննել այդ պայմանագիրը»: Բոլոր դեպքերում Կարախանը, ելնելով Խորհրդային Ռուսաստանի պաշտոնական դիրքորոշումից, մերժում է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, այն համարելով ուժը կորցրած:

* *
*

Թուրքական պատվիրակության Մոսկվա ժամանելու նախօրյակին թուրքամետ խումբն ակտիվ աշխատանք ծավալեց Ադրբեջանի Հանրապետության պաշտոնական պատվիրակությունը Մոսկվա ուղարկելու, երկու թուրքական պետությունների պատվիրակությունների գործունեությունը փոխհամաձայնեցնելու ուղղությամբ: Թուրքիայի և Ադրբեջանի պատվիրակությունները Մոսկվայում պետք է հանդես գային միասնական ծրագրով և համատեղ ուժերով փորձեին այն ընդունելի դարձնել Ռուսաստանի իշխանություններին:

Լեգրանի ջանքերով այդ ժամանակ քննարկվում էր այն տեսակետը, որի համաձայն Լեռնային Ղարաբաղը պետք է թողնվեր Ադրբեջանին, Նախիջևանը՝ Հայաստանին, իսկ Զանգեզուրը կամ պետք է հայտարարվեր վիճելի, կամ էլ տրվեր Հայաստանին: Լեգրանի կարծիքով, Զանգեզուրը պետք է տրվեր Հայաստանին:

Ադրբեջանը թուրքամետ խմբի օժանդակությամբ օգտագործում էր բոլոր միջոցները հիշյալ ծրագիրը տապալելու համար: Քանի որ այդ ժամանակ Նախիջևանը գրավված էր թուրքական զորքերի կողմից, թուրքամետ խումբն իր ուշադրությունը կենտրոնացրել էր հատկապես Ղարաբաղի և Զանգեզուրի վրա:

Հիշեցնենք, որ թուրքամետ խումբը հետևողական աշխատանք էր ծավալում Ադրբեջանի պետական պատվիրակությանը, Ադրբեջանի կոմկուսի, Ռուսաստանի կոմկուսի Կովկասյան բյուրոյի և 11-րդ բանակի ռազմահեղափոխական խորհրդի ներկայացուցիչներին Մոսկվա ուղարկելու համար: Տարբեր աղբյուրներից երևում է, որ Ռուսաստանի մայրաքաղաքն այդ ժամանակ հեղեղվել էր թուրքամետ, հակահայկական գործիչներով, որոնք որոշակի ազդեցություն ունեցան բոլշևիկյան կուսակցության արևելյան թուրքամետ քաղաքականության հայեցակարգի վերջնական ձևավորման գործում:

Թե այդ ինչպես էր կատարվում, ցույց է տալիս հետևյալ փաստաթուղթը. հուլիսի 16-ին Օրջոնիկիձեն Լենինին, Ստալինին և Չիչերինին հեռագրում է. «Բացարձակ անհրաժեշտություն եմ

համարում, որպեսզի Հայաստանի հետ խաղաղության դաշինքի կնքումը հետաձգվի մինչև Ադրբեջանի ներկայացուցչի ժամանումը, որը Չիչերինի հրավերով մեկնում է այսօր»[1]:

Հարցը նրանում է, որ Մոսկվայում վարվող հայ-ռուսական բանակցությունները հուլիսի 16-ին արդեն մտել էին փակուղի և այդ ժամանակ հաշտության պայմանագրի կնքման մասին խոսք լինել չէր կարող: Դեռ հունիսի վերջերից Ռուսաստանի արտգործժողկոմատը ուղիներ էր որոնում Շանթի պատվիրակությունն անհիվանդագին ձևով հետ ուղարկելու և խաղաղության դաշնագրի կնքման համար բանակցությունները Երևանում շարունակելու համար: Օրջոնիկիձեն ի պաշտոնե այդ բոլորը հիանալի գիտեր:

Հարց է առաջանում, իսկ ի՞նչ նպատակ էր հետապնդում Օրջոնիկիձեն, ջանալով Ադրբեջանի կառավարության պատվիրակությանը շտապ ուղարկել Մոսկվա: Ինչպես արդեն ասել ենք, հուլիսի 19-ին Մոսկվա էր ժամանելու թուրքական պատվիրակությունը: Թուրքամետ խումբն ուներ երկու նպատակ. 1. Մինչև ռուս-թուրքական պաշտոնական բանակցությունների սկսվելը հնարավորություն ստեղծել, որպեսզի Թուրքիայի և Ադրբեջանի պատվիրակությունները հանդիպեն և փոխհամաձայնեցնեն իրենց ծրագրերը, 2. Ադրբեջանի պատվիրակության համար հնարավորություն ստեղծել զուգահեռաբար խորհրդային կառավարության վրա ազդելու: Եվ քանի որ Ադրբեջանի պատվիրակությունը հրավիրվել էր Չիչերինի կողմից, այն անկասկած պաշտոնական բնույթ ուներ:

Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը հուլիսի 31-ին իր կառավարությանն ուղարկած զեկուցագրում այդ մասին գրում էր. «Ադրբեջանի ներկա քաղաքականության հիմնական ուշադրությունը կենտրոնացված է այն թույլ և հեռավոր հավանականության վրա, որ ռուս-հայկական բանակցությունների հետևանքով Զանգեզուրը և Ղարաբաղը կարող են անցնել Հայաստանին: Դրա համար ոտքի են կանգնեցնում և՛ ամբողջ Հեղկոմին, և՛ թաթարական ակտիվիստներին, և՛ հայ կոմունիստների մեծ մասին, որոնք ռմբակոծում են Մոսկվան հատուկ պատվիրակություններով, նոտաներով և այլ միջոցներով: Այդ դիվանագիտությունն էլ հարկադրեց արագացնելու Զանգեզուրի գրավումը: Այստեղ համընկնում են մի քանի նկատառում-

[1] РГАСПИ, ф. 85, оп. 14, д. 5, л. 1.

ներ. ամենից առաջ պանթուրքական ծրագիրը՝ Թուրքիայի հետ միանալու համար Նախիջևանի, Շարուրի և Սուրմալուի վրայով ստեղծել մի միջանցք: Այդ ծրագիրը, որ մուսավաթականների իշխանության վերջին օրերին կարծես թե բացարձակապես բարձիթողի էր արված, հիմա կյանքի է կոչվել հսկայական մասշտաբներով և բավականաչափ մեծ թափով: Պարզ է, որ Մոսկվայում և սոցիալիստական շրջանակներում այդ ծրագրի իրականացումը հիմնավորվում է «կարմիր» Անատոլիայի հետ միանալու անհրաժեշտությամբ: Դրան օգնում է նաև Ռուսաստանի ու Թուրքիայի դաշինքը և գործունեության համար նաև բարոյական հիմք է հանդիսանում հայ կոմունիստների շարքերում գոյություն ունեցող բավականին ուժեղ հոսանքը, որը ելնելով տնտեսական նկատառումներից, նպատակահարմար է գտնում Ղարաբաղի և Զանգեզուրի միացումը Ադրբեջանին: Ահա միաժամանակ առաջ եկած այդպիսի հանգամանքները հանգեցրին Զանգեզուրի գրավմանը: Իսկ իրենց տեսակետի պաշտպանության համար Մոսկվա ուղարկեցին մի ամբողջ պատվիրակություն, որի կազմում ընդգրկված են հիմնականում ոչ կոմունիստներ՝ Մամեդ Հասան Գաջինսկու գլխավորությամբ: Այդ պատվիրակությունը հրահանգ ունի Մոսկվայից պահանջել իրականացնելու իրենց տարածքային ծրագիրն, այն պատճառաբանությամբ, որ Ադրբեջանի մուսուլմաններին սիրաշահելու միակ միջոցը ոչ միայն Ղարաբաղի ու Զանգեզուրի, այլև Նախիջևանի, Շարուրի և Սուրմալուի միացումն է Ադրբեջանին: Այդպիսի քարտեզները ներկայումս զարդարում են Հեղկոմի նախագահի և քարտուղարի գրասենյակների պատերը: Նույն նպատակով հանկարծակի Մոսկվա մեկնեց և Հուսեյնովը»[1]:

Ինչպես ցույց են տալիս Բեքիր Սամի բեյի պատվիրակության նյութերը, թուրքամետ խումբը լիովին հասել էր իր նպատակին: Ադրբեջանի պատվիրակությունը, Մոսկվա ուղարկված բազմաթիվ ներկայացուցիչները կատարել էին իրենց պարտականությունները:

Բեքիր Սամի բեյը երկրորդ հանդիպումից հետո մի ընդարձակ զեկուցագիր է ուղարկում Անկարա, տեղեկացնելով բանակցությունների արդյունքների մասին: Զեկուցագրում արծարծվում են վերը շարադրված հարցերը: Բեքիր Սամին հիշյալ զեկուցագրում զետեղել է տվյալներ մի փաստի մասին, որը չափազանց կարևոր

[1] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 557.

է քննարկվող հիմնախնդիրը բազմակողմանիորեն վերլուծելու և հասկանալու տեսանկյունից: Նա Անկարա է հաղորդում հետևյալը. «Վերջին օրերս մեզ այցելեցին Մոսկվա եկած Ադրբեջանի պատվիրակության նախագահ Բեհբութ Շահթախտինսկին, իսկ նախարարներից՝ Գաջինսկին: Տեսակցության ընթացքում հայտնեցին, որ Հայաստանի ներկայացուցիչները նախօրոք խորհրդային կառավարության համաձայնությունն են ստացել Նախիջևանն ու Զանգեզուրը միացնելու Հայաստանին: Հայտնեցին նաև, որ Ադրբեջանի կոմունիստական կուսակցությունը, որի կազմում գտնվում են նաև հայեր, ընդունեց Բեհբութի այն տեսակետը, որ այդ գրավումը հարմար չէ, և որ Նախիջևանը պետք է միանա կա՛մ Ադրբեջանին, կա՛մ Թուրքիային, և կամ էլ պետք է դառնա անկախ պետություն, և որ այդ տեսակետները Մոսկվայում ընդունելի դարձրին Ռուսաստանի խորհրդային պետությանը: Խորհուրդների հետ ունենալիք մեր բանակցություններում մենք էլ առաջ ենք քաշելու այդ տեսակետները»[1]:

Ինչպես տեսնում ենք, Մոսկվան հասել էր իր նպատակին՝ միաժամանակ Ռուսաստանի մայրաքաղաքում էին գտնվում Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի պատվիրակությունները: Պարզելով Հայաստանի կառավարության պաշտոնական տեսակետները, Ռուսաստանն այժմ ձգտում էր ընդհանուր համաձայնության գալ Թուրքիայի և Ադրբեջանի հետ: Ռուսաստանը միաժամանակ հնարավորություն էր ստեղծել թուրքական և ադրբեջանական պատվիրակությունների համար Մոսկվայում բանակցություններ վարելու և միասնական տեսակետներով հանդես գալու համար: Բեքիր Սամիի զեկուցագրից իմանում ենք, որ այդ խնդիրը կատարվել է: Եվ ամենակարևորն այն է, պարզվում է նաև, որ Ադրբեջանի կոմկուսը և Ադրբեջանի պատվիրակությունը Նախիջևանի հարցը «Մոսկվայում ընդունելի դարձրին ռուսական խորհրդային պետությանը»: Նախիջևանի հարցի նման հարցադրումը մի ավելորդ անգամ բացահայտում է երկու թուրքական պետությունների՝ Թուրքիայի և Ադրբեջանի միասնական քաղաքականության հակահայկական էությունը: Այդ տեսանկյունից տրամաբանական է թուրքական պատվիրակության դիրքորոշումն այն հարցում, որ «Խորհուրդների հետ ունենալիք մեր բանակցություններում մենք էլ առաջ ենք քաշելու այդ տեսակետները»: Նախիջևանի հարցի լուծման երեք տարբերակների գաղա-

[1] **Ali Fuat Cebesoy**, նշվ. աշխ., էջ 67:

փարը ծնվեց Ադրբեջանում, սակայն այն մեծ հաճույքով որդեգրեց և իր պաշտպանության տակ վերցրեց նաև Թուրքիան: Բայց անվիճելի է նաև այն, որ այդ առաջարկը փոխզիջումային էր, որովհետև և՛ Թուրքիան, և՛ Ադրբեջանն առանձին-առանձին գտնում էին, որ Նախիջևանը պատկանում է իրենց:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Բեքիր Սամիի զեկուցագրի այն մասի վրա, որտեղ խոսվում է Կարախանի դիրքորոշման մասին. «Տեղեկացանք, որ ծագումով հայ Կարախանը չի ուզում, որ մեր կողմից զորաշարժ կատարվի Հայաստանի դեմ: Կոմունիստական կուսակցության մեջ ազդեցություն ունեցող մի շարք մուսուլման կոմունիստներ մեզ հայտնեցին, որ կարևոր համարվող՝ ռազմական դիրքերի և մեր տնտեսական կյանքի համար անհրաժեշտ եղող Սարիղամիշի մեր կողմից գրավման մեջ ոչ մի անպատեհություն չեն տեսնում»[1]:

Եթե պատմաբանը ելնի ոչ թե քաղաքական իրադրությունից, այլ միայն պատմական իրադարձությունների անաչառ գնահատումից, ապա նա չի կարող չտեսնել, որ Կարախանն իր ուժերի հնարավորությունների շրջանակներում մշտապես պաշտպանել է հայ ժողովրդի շահերը Թուրքիայի և Ադրբեջանի ոտնձգություններից: Այդ է վկայում 1917-1921 թվականների իրադարձությունների անաչառ ուսումնասիրությունը: Ի վերջո, չպետք է մոռանալ, որ Կարախանը բոլշևիկյան կայսրության պաշտոնյա էր, իսկ արտաքին քաղաքականության Անդրկովկասի հետ կապված հարցերը լուծվում էին Ստալին-Օրջոնիկիձե առանցքի կողմից: Պատմական այդ չափազանց բարդ իրավիճակում Կարախանը ձգտում էր առավելագույնն անել Հայաստանի համար, անհաջողության դեպքում ուղիներ էր որոնում կուսակցության Քաղբյուրոյից ստացած տարբերակների մեջ չարիքներից փոքրագույնն իրագործելու:

Ջեմալ Քութայը Կարաբեքիրին նվիրված իր աշխատության մեջ շարադրելով նրա հայաջինջ քաղաքականության պատմությունը, գրել է. «Եվ ո՛չ հայերը, ո՛չ էլ կոմունիստները մինչև վերջ չներեցին Կարաբեքիրին: Նրանք դիմեցին ամեն միջոցի արգելք լինելու համար նրա քաղաքական գործունեությանը: Մի օր, երբ գրվի Թուրքիայում տեղի ունեցող կարմիր գործունեության հայտնի կամ ծածուկ պատմությունը, այդ ժամանակ կիրապարակվեն այս ճշմարտությունները: ***Նույնիսկ հայկական ծագում***

[1] Նույն տեղում:

ունեցող Կարախանը, Թուրքիայում «ձևականորեն» դեսպան գտնվելու տարիներին, իր պատրաստած «սև ցանկի» գլխավերևում իր ձեռքով էր գրել Կարաբեքիրի անունն ու նշել էր, որ «ինչ գնով էլ որ լինի, պետք է ոչնչացնել Կարաբեքիրին»: Այս վավերական վկայագրի լուսանկարչական պատճեն (ֆոտոպատճենը) լույս է տեսել Միլլեթ (Ազգ) ամսագրում» (ընդգծումը մերն է – Լ. Խ.)[1]:

Թվում է, բացատրություններն ավելորդ են: Վերը հիշատակված զեկուցագրում բերված այն փաստը, որ Սարիղամիշը թուրքերի կողմից գրավելու դեպքում թուրքական զորքերը դիմադրության չեն հանդիպի Ռուսաստանի կողմից, նորից վկայում է հակահայկական խմբի հզորության մասին: Եթե Կարախանը բանակցությունների ժամանակ թուրքերին պաշտոնապես արգելում է մտնել այդ տարածքը, ապա Մոսկվայից այլ ճանապարհներով հրահանգում են գրավել այն:

1920 թվականի օգոստոսի 13-ին թուրքական պատվիրակությունը նորից է ընդունվում Չիչերինի կողմից: Քննարկման հիմնական նյութը տրանզիտի խնդիրն էր: Չիչերինը կամենում էր պարզել, թե ինչպիսին է թուրքական պատվիրակության վերաբերմունքը Հայաստանի հետ օգոստոսի 10-ին կնքված համաձայնագրի վերաբերյալ: Միաժամանակ քննարկվում է Արևմտյան Հայաստանից Հայաստանի Հանրապետությանը որոշ տարածք տալու հարցը:

Ալի Ֆուադը գրում է. «Թուրքական պատվիրակությունը օժանդակությունից ժամ առաջ օգտվելու համար համառորեն պնդում էր Հայաստանի ճանապարհի բացման անհրաժեշտության վրա, այդ մեզ համար կենսական հարց էր: Չիչերինն ասաց, որ ճանապարհի բացման նպատակով կատարվում են անհրաժեշտ ձեռնարկներ, սակայն կարելի չպիտի լինի որոշել ժամանակը. այն ոսկին, որի ուղարկման մասին մի քանի օր առաջ հայտնել էր Կարախանը, գրավվել է հայկական իշխանության կողմից, դրա վերադարձման համար Երևանում կատարվում են ձեռնարկներ, ***մինչև ամսի վերջն անպայման պիտի բացվի ճանապարհը*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.)»:

Այնուհետև Չիչերինը հայտնում է. «Մենք հայերի հետ զինադադար կնքեցինք (խոսքը օգոստոսի 10-ի համաձայնագրի մասին է – Լ. Խ.) և բնագիրը այսօրվա թերթերում հրատարակեցինք:

[1] **Cemal Kutay**, նշվ. աշխ., էջ 61:

Զինադադարի այս պայմանագրի համաձայն... Շահթախտ քաղաքը և Ջուլֆա-Շահթախտ երկաթուղային գիծը պիտի մնա Հայաստանի գրավման տակ, բայց և այնպես այս կարգադրությունը ժամանակավոր է»:

Թուրքական պատվիրակներն իսկույն առարկում են՝ ասելով, որ «երբ մենք սպասում ենք ճանապարհի բացմանը, մեր և ռուսների միջև գոյություն ունեցող կապի և հաղորդակցության միակ ճանապարհը կփակվի և կացությունն էլ ավելի կվատանա»: Չիչերինն այդ հարցադրմանը պատասխանել է. «ժամանակավոր բան է, վերջնական չէ»[1]: Բեքիր Սամի բեյը Չիչերինի առաջ բարձրացնում է պատվիրակությանը հուզող մի հարց ևս, թե ի՞նչ հարցերի շուրջ են Մոսկվայում բանակցություններ վարվել Խալիլ փաշայի հետ: Չիչերինը պատասխանել է, որ «բանակցություններ են վարվել հայկական հին նահանգներից՝ Բիթլիսից, Վանից և Մուշից մի մաս հողեր անջատելով տալ Հայաստանին, որը չի կարողանում հանգիստ շունչ քաշել, նույնիսկ բնակիչների փոխանակության շուրջ խորհրդակցություն է եղել: Բեքիր Սամին պատասխանել է. «Թուրքիայում երբեք հայկական նահանգ չի եղել: Հայերը մուսուլմանների հետ ապրած թուրքական նահանգներից ոչ մեկում մեծամասնություն չեն ունեցել, հետևաբար, վճռական կերպով բացատրել էր նա, Հայաստանին հողեր տալու խնդիրը խոսքի նյութ անգամ չի կարող լինել»[2]:

Այսպիսով, Չիչերինի և Կարախանի հետ ունեցած բանակցություններում թուրքական պատվիրակությունը չկարողացավ հասնել իր նպատակին: Օգոստոսի 13-ի հանդիպումը ևս ավարտվեց անարդյունք: Դեռ ավելին, Չիչերինը համառորեն պահանջում էր Արևմտյան Հայաստանի որոշ շրջաններ անպայման տալ Հայաստանի Հանրապետությանը[3]:

Թուրքական պատվիրակությունը, խիստ դժգոհ Չիչերինի հետ ունեցած բանակցությունների արդյունքներից, բողոքով դիմում է Լենինին, խնդրելով ընդունել իրեն: Հաջորդ օրը, օգոստոսի 14-ին, Լենինը ընդունում է թուրքական պատվիրակությանը:

Ջեբեսոյն այդ հանդիպման մասին գրում է. «Թուրք ներկայացուցիչները հայտնեցին, որ մեզ զարմանք և վիշտ է պատճառում, որ ուշանում է խոստացված օժանդակությունը, չնայած բազմա-

---

[1] **Ali Fuat Cebesoy,** նշվ. աշխ., էջ 68-69:
[2] Նույն տեղում, էջ 70-71:
[3] Նույն տեղում, էջ 70:

թիվ խոստումներին մինչև այժմ Հայաստանի վրայով ճանապարհը՝ Թուրքիայի և Ռուսաստանի միջև, դեռ փակ է: Դեռ ավելին, Ռուսաստանի և Թուրքիայի միջև հաղորդակցության և կապի միակ ճանապարհը եղող՝ Նախիջևան-Շահթախտ երկաթգիծը խորհրդային իշխանության կողմից այս անգամ հանձնվել է հայերին»: Լենինը պատասխանում է. «*Այո, այս խնդրում անարդարություն և սխալ կատարվեց, այնուամենայնիվ խնդիրը քննարկվում է և հույս ունեմ, որ երեք-չորս օրից պիտի գտնվի լուծման հարմարագույն եղանակը»: Այս պատասխանից անմիջապես հետո թուրքական պատվիրակությունը Լենինին հայտնել է, որ իրենք Չիչերինին առաջարկել են «համատեղ ուժերով բացել Շահթախտի ճանապարհը»: Լենինը թուրքերին հայտնում է հետևյալը. «Այո, Չիչերինն այդ ինձ հասկացրեց և նկատեց, որ ինքն էլ դրան կողմնակից է. լուծման այդ եղանակը ինձ էլ հարմար է թվում*»[1] (ընդգծումները մերն են – Լ. Խ.):

Հայաստանի վրա հարձակվելու համար կանաչ ճանապարհ էր բացվում: Խորհրդային կառավարության առաջնորդը Թուրքիային թույլ էր տալիս հարձակվելու Հայաստանի վրա:

Թուրքական պատվիրակության անդամ Յուսուֆ Քեմալը Չիչերինի և Լենինի հետ ունեցած հանդիպումների մասին 1964 թվականին հրատարակված մի հուշագրության մեջ պատմում է. «Մեզ շատ վատ դիմավորեցին Մոսկվայում: Արտաքին գործերի կոմիսար Չիչերինը երես էր թեքում մեզանից: Չիչերինը մեզ նույնիսկ հայտնել էր, թե նավահանգիստ էր պահանջում: Կատակելով նրան ասել էի «Իզմի՞րն եք ուզում»: Ասաց՝ «Կարելի է»: «Ձեր ապրանքները Կովկասից ուղտերո՞վ եք փոխադրելու,– ասացի նրան,– դա ձեզ համար թանկ արժե»: Այս խոսքերով ուզում էի հասկանալ նրա մտադրությունը: «Այո» պատասխանեց նա:

Մոսկվա հասնելու օրերին ահա այսպիսին էր կացությունը: Մի օր Չիչերինը մեզ կանչեց և հարց տվեց. «Լրագրերում դաշնագրի մի պատճեն է հրապարակվել, տեսե՞լ եք» (խոսքը Թիֆլիսում կնքված օգոստոսի 10-ի համաձայնագրի մասին է – Լ. Խ.): Չէինք տեսել: Հասկացանք, որ այդ դաշնագրով հայկական կառավարությանն էր թողնվել ռուսների և մեր միջև թողնված ճանապարհը: Մինչդեռ, մեր Մոսկվա այցելության նպատակը եղել էր բացել այդ ճանապարհը: Չիչերինին ասացինք, «ուղղեք»: «Չենք կարող ուղղել»,– ասաց նա: «Ուրեմն, ասացինք, այդ մենք ենք ուղղելու»:

[1] Նույն տեղում, էջ 73:

«Զգույշ եղեք», պատասխանեց նա: Իրենից հետո որոշեցինք գանգատվել Լենինին՝ Չիչերինի մասին: Գնացինք Լենինի մոտ: Լենինը շատ քաղցր մի մարդ էր: Լենինի ընտանիքը թաթար էր, այսինքն՝ թուրք էր: Հարցը ծիծաղով դիմավորեց: Բայց խոսելու ընթացքում ասաց. «***Մենք հասկացել ենք, որ սխալվել ենք այդ հարցում: Այդ դուք ինքներդ ուղղեք***» (ընդգծումը մերն է – Լ. Խ.): Հրճվանքով բաժանվեցինք Լենինից: Ճանապարհին ընկերներիս հարցրեցի, թե Լենինը ում է նմանվում: Բոլորը միասին ասացին, թե Թալեաթին: Լենինի տված այդ ուրախ լուրը հաղորդելու համար Բեքիր Սամի բեյին թողել էի այնտեղ և առանձին բաժանվել էի Մոսկվայից: Մի փոքր շոգեմակույկով հասել էի Տրապիզոն: Տրապիզոնից Լենինի լուրը հասցրել էի Անկարա և Էրզրում: Կարաբեքիրը շարժվել և գրավել էր Հայաստանը»[1]: Յուսուֆ Քեմալը Տրապիզոն է հասել սեպտեմբերի 18-ին և անմիջապես Լենինի դիրքորոշման մասին հաղորդել Քեմալին և Կարաբեքիրին: Հարձակումն, ինչպես հայտնի է, սկսվել է սեպտեմբերի 28-ին:

Հանդիպման ժամանակ պատվիրակության վրա մեծ ազդեցություն էր թողել Լենինի հետևյալ միտքը. «...***Կասկած չկա, որ թե՛ Հայաստանը, թե՛ Վրաստանը շատ մոտ ժամանակներում պիտի ստանան մեր ցանկացած ձևը***» (ընդգծումը մերն է – Լ. Խ.)[2]: Դա նշանակում է, որ Լենինը մտադիր էր մոտ ժամանակներում գրավել Հայաստանն ու Վրաստանը և խորհրդայնացնել այդ հանրապետությունները: Թուրքերն ազդվել էին ոչ թե այդ երկու հանրապետությունները գրավելու ռուսական ծրագրից, այլ միայն այն պատճառով, որ Ռուսաստանը թույլ չի տա իրենց գրավելու այդ տարածքները:

Այնուամենայնիվ, անկախ Անդրկովկասում տարածքներ նվաճելու հարցում Ռուսաստան-Թուրքիա մրցակցությունից՝ այդ հանդիպումից հետո Բեքիր Սամի բեյը պաշտոնական զեկուցագրում Անկարային հաղորդեց. «Լենինը շատ համակրելի դիմագծով, շատ բացսիրտ մի անձնավորություն գտանք, մեր և իսլամական աշխարհի հանդեպ շատ բարյացակամ նկատեցինք»[3]:

Բանակցությունների այս փուլից հետո թուրքական պատվիրակության մոտ կասկած չմնաց, որ ըստ էության ոչ մի տարբերություն չկա ցարական և բոլշևիկյան կայսրությունների նվաճո-

---

[1] „Yön,, Haftalık gazete, yıl 3, sayı 88,4 Aralık 1964, Ankara, s. 7.

[2] **Ali Fuat Cebesoy**, նշվ. աշխ., էջ 73:

[3] Նույն տեղում, էջ 73-74:

ղական քաղաքականությունների միջև: Թուրքերը հասկացան, որ բոլշևիկները շարունակում են ցարական Ռուսաստանի նվաճողական, գաղութատիրական քաղաքականությունը, իսկ այդ նշանակում էր, որ նորից պետք է շարունակվի երկու պետությունների՝ Ռուսաստանի և Թուրքիայի դարավոր պայքարն Անդրկովկասի և Արևմտյան Հայաստանի համար, և որ պայքարի այս փուլում թույլ Թուրքիան պետք է հրաժարվի Անդրկովկասի նկատմամբ ունեցած իր առավելագույն ծրագրից և փորձի իրականացնել նվազագույնը:

Ալի Ֆուադը, պատմելով թուրքական պատվիրակության Լենինի հետ ունեցած բանակցությունների ընթացքի մասին, հատուկ կանգ է առնում Հայաստանը և Վրաստանը խորհրդայնացնելու մասին Լենինի մտքի վրա և իր աշխատության «Ցարական և բոլշևիկյան քաղաքականությունների մեջ կա՞ տարբերություն» վերնագրով ենթագլխում վերլուծում է բոլշևիկյան Ռուսաստանի ազգային, նվաճողական քաղաքականությունը: Նա գրում է. «Ուզում եմ քիչ կանգ առնել Լենինի խոսքերի վրա: Կարմիր հեղափոխության առաջնորդի հայտարարության ամենից ավելի հատկանշական, ուշադրության արժանի կետը Հայաստանի, նույնիսկ Վրաստանի Խորհրդային Ռուսաստանին միացնելու բացահայտումն է:

Եթե այս հայտարարությանը միացնենք Կարախանի պնդումները Բրեստ-Լիտովսկի պայմանագրի սահմանները նկատի չառնելու և այդ պայմանագրով գծված սահմանները մեր միջև քննարկվելու անհրաժեշտության մասին, կհասկանանք, որ բոլշևիկ ղեկավարները, որոնք իբր թե ազգերի անկախությունն ընդունել են որպես սկզբունք, վարում են իմպերիալիստական մի քաղաքականություն, որը երբեք չի զանազանվում ցարական Ռուսաստանի կառավարությունների հետապնդումներից»: «Եթե,– շարունակում է նա,– բոլշևիկների՝ Վանի և Բիթլիսի առաջարկը՝ մեր շատ կարիք զգացած օգնության խնդրում սակարկության առարկա եղած լիներ, անկասկած է, որ մի քիչ ժամանակ անց մեր նահանգներից Տրապիզոնի նահանգն էլ Վրաստանին միացնելու, նույնիսկ պատերազմի ընթացքում ռուսների կողմից գրավման ենթարկված մեր արևելյան նահանգները ռուսներին վերադարձնելու նման առաջարկների հանդեպ պիտի գտնվեինք»:

Ալի Ֆուադն իր միտքն ամփոփում է հետևյալ խոսքերով. «...Ուստի, Խորհրդային Ռուսաստանի բարյացակամության հան-

դեպ հարկավոր է վերաբերվել շատ զգայուն և չցուցաբերել տկարություն»[1]:

Բանակցությունների այս փուլի արդյունքների մասին Բեքիր Սամի բեյն Անկարա է ուղարկել հետևյալ ամփոփագիրը. «Մինչև այս պահը տեղի ունեցած շփումներից և բանակցություններից գոյացած կարծիքն ու համոզումը հասել է այն կետին, որ խորհրդային իշխանությունը հիմնականում ցանկանում է մեզ օգնել և զորավիգ դառնալ, սակայն Լեհաստանի և Վրանգելի ճակատներում զբաղվածության պատճառով, նաև Ադրբեջանի և կազակների վրա լիովին վստահություն չունենալու հետևանքով, նախքան Վրանգելին վնասազերծելը զգուշանում է Հայաստանի վրա հարձակվելուց: Ղրիմում և Կովկասում կացությանը կատարելապես տեր չդարձած, խուսափում են հայկական և վրացական մտահոգություններ ստեղծելուց: Կարախանի, ի նպաստ հայերի դեր կատարելն ակներև լինելով հանդերձ, համոզված եմ, որ ***թե՛ կառավարությունը, թե՛ կոմունիստական կուսակցությունը ուզում են հարվածել դաշնակ կառավարությանը*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.):

Գիտենալով հանդերձ, որ Անատոլիայի վիճակը թույլ չի տալիս նույնիսկ մի բոպե սպասել, այնուամենայնիվ, դեռ գոյություն չունի հուսահատություն առաջացնող պարագա»[2]:

Բայց Թուրքիան ինքն էր ցանկանում գրավել այդ տարածքները և ոչ թե թողնել Ռուսաստանին: Կարաբեքիրը, երբ դեռ 1920 թ. մայիսին որոշել էր հարձակվել Հայաստանի վրա, ասել էր. «որովհետև մոտ ապագայում բոլշևիկները կլանելու են այս բոլոր շինծու պետությունները՝ Վրաստանը, Հայաստանը, նույնիսկ Ադրբեջանը և մեզ հետ դեմ հանդիման են գալու հարյուրավոր կիլոմետրանոց մի սահմանով: Այս ճակատագրական վախճանի հանդեպ պարտավոր ենք մտածել այժմ իսկ, և բոլոր ռազմավարական կետերը պահել մեր ձեռքերում: Իմ խորհուրդն այն է եղել, որ թողնելով Գյումրին մեզ, պնդել այնպիսի մի սահմանի վրա, որ Բաթումի վրայով երկարող հորիզոնական մի գծի վերջավորությունն հանգի դեպի Արաքս: Ահա այս ճակատագրական արդյունքին հանդեպ լցված եմ երկրի ապահովության մտահոգությամբ»: Բերելով Կարաբեքիրի այս խոսքերը, Ջեմալ Քութայն ավելացնում է. «Աստված շատ-շատ ողորմի նրա հոգուն, դեպ-

[1] Նույն տեղում, էջ 74:
[2] Նույն տեղում, էջ 75:

քերն իրավունք տվեցին Կարաբեքիրին... Բոլշևիկները, մի կողմ թողնելով իրենց առաջին օրերի հանգերգը, մեկառմեկ կլանեցին Ադրբեջանը, Վրսատանն ու Հայաստանը և միջազգային կոմունիզմը՝ ցարիզմից ավելի ագահ ու ոխակալ մի աժդահայի նման՝ կքեց աշխարհի վրա»[1]:

Ահա թե ինչու թուրքերը շտապում էին ժամ առաջ սկսել հարձակումը, գրավել Հայաստանի տարածքի մեծ մասը և Ռուսաստանին կանգնեցնել կատարված փաստի առաջ:

Ձեռք բերելով Լենինի համաձայնությունը, Թուրքիան ձեռնամուխ եղավ իր վաղեմի նպատակների իրականացմանը:

Սակայն հանուն ճշմարտության պետք է ընդգծել, որ Լենինը թույլ էր տվել գրավելու միայն երկաթուղու Սարիղամիշ-Շահթախտ հատվածը, նպատակ ունենալով գրավել և Ռուսաստանին միացնել Հայաստանի Հանրապետության տարածքը, իսկ թուրքերը պատրաստություն էին տեսնում ամբողջ ճակատով հարձակում սկսել՝ Հայաստանը նվաճելու և բնակչությանը բնաջնջելու համար: Հատկանշական է նաև այն, որ Լենինը թուրքական պատվիրակության առջև հարց չի բարձրացնում Արևմտյան Հայաստանի տարածքից Հայաստանի Հանրապետությանը հողեր տրամադրելու մասին: Այս հանգամանքը մեզ հիմք է տալիս եզրակացնելու, որ Արևմտյան Հայաստանի տարածքի մի մասի պահանջը բխում էր Չիչերին-Կարախան գործիչների անձնական նախաձեռնությունից:

Այսպիսի ռազմաքաղաքական պայմաններում, երկարատև և ծանր բանակցություններից հետո, պատրաստվեց և օգոստոսի 24-ին երկու կողմերի ներկայացուցիչների կողմից նախաստորագրվեց ռուս-թուրքական Բարեկամության պայմանագրի նախագիծը, որն այնուհետև ուղարկվեց կառավարություններին հաստատման համար:

Պայմանագրի նախագծում Հայաստանի Հանրապետության ազգային շահերի հետ առնչվում էին հետևյալ դրույթները.

ա) Ռուսաստանի համար ընդունելի չի Թուրքիային վերաբերող որևէ միջազգային փաստաթուղթ, որը չի ընդունվում Թուրքիայի Ազգային մեծ ժողովի, նրա կառավարության կողմից,

բ) պայմանավորվող կողմերը համաձայնվում են նախկինում միմյանց միջև կնքված բոլոր պայմանագրերը համարել անվավեր,

---

[1] **Cemal Kutay**, նշվ. աշխ., էջ 61:

գ) պայմանավորվող կողմերը պարտավորվում են ամենասեղմ ժամկետում ապահովել երկաթուղային հաղորդակցություն միմյանց միջև,

դ) «պայմանավորվող կողմերը համաձայնվում են մոտ ժամանակներում կնքել համաձայնագրեր, որոնք կլուծեն բոլոր տնտեսական, ֆինանսական և այլ (այդ թվում ռազմական – Լ. Խ.) խնդիրները...»[1]:

Պայմանագրի նախագիծն Անկարայի կառավարությունը չընդունեց: Ալի Ֆուադ Ջեբեսոյը պայմանագիրը չընդունելու պատճառների մասին հետևյալն է գրում. «Մեր Արևելյան Նահանգներից Հայաստանին հողեր պոկելու համար խորհրդային արտաքին կոմիսար Չիչերինի միջամտության հետևանքով այդ պայմանագրի ստորագրումն անկարելի էր դարձել»[2]:

Պայմանագրի նախագիծը ստորագրելուց չորս օր հետո, օգոստոսի 28-ին, թուրքական պատվիրակությունը նորից է ընդունվում Չիչերինի կողմից: Բանակցությունները տևում են երեք և կես ժամ:

Այդ հանդիպման մասին Բեքիր Սամի բեյը օգոստոսի 30-ին զեկուցել է Ազգային մեծ ժողովի նախագահությանը. «Մանվածապատ դարձվածքներով խոսքը հասել է Հայաստանի ճանապարհի խնդրին: Չիչերինը նշել է, որ նախ պիտի կատարվի քաղաքական ձեռնարկում, ղրանից ոչ մի արդյունք չստացվելու դեպքում պիտի գործադրվի ուժ և ասել էր.

«Միայն ճանապարհի բացումն ուղղված պիտի լինի սոսկ փոխադրությունների ապահովման նպատակին, չպիտի ըմբռնել այլ, տարբեր իմաստով»:

Չիչերինը կտրուկ կերպով ընդունում էր, որ Սարիղամիշն ու Շահթախտը գրավվեն թուրքերի կողմից, բայց ապահովություն էր պահանջում, որ գրավման ընթացքում թույլ չտրվի հայերի ջարդ:

Նույն փաստաթղթում Բեքիր Սամի բեյը մանրամասնորեն պատմում է բանակցությունների ժամանակ Արևմտյան Հայաստանի տարածքի մի մասը Հայաստանին միացնելու առաջարկի շուրջ տեղի ունեցած վիճաբանությունների մասին: Նկատի ունենալով հիմնախնդրի կարևորությունը, զեկուցագրի այդ հատվածը տալիս ենք գրեթե ամբողջությամբ. «Բարեկամության պայ-

---

[1] АВП РФ, ф. 04, оп. 39, п. 322, д. 52997, л. 35-36.

[2] **Ali Fuat Cebesoy**, նշվ. աշխ., էջ 80:

մանագրի նախագծի առաջին հոդվածն այն մասին է, որ Ռուսաստանը չի ընդունի և հաստատի Թուրքիայի Ազգային մեծ ժողովի հավանության չարժանացած ոչ մի հաշտության պայմանագիր և ոչ մի հանձնառություն, և որ Ազգային մեծ ժողովը ներկայացնող Թուրքիան հանդիսանում է այն երկիրը, որը գտնվում է Ստամբուլի պատգամավորական ժողովի կողմից կազմված և ամբողջ աշխարհին հայտարարված «Ազգային ուխտի» սահմաններում:

Խորհրդային արտաքին կոմիսարը գտավ, որ դա շատ խիստ առարկելի հոդված է, և առաջարկեց այդ հոդվածի սահման բառը որևէ կերպ ուղղել: Բեքիր Սամի բեյը մանրամասնորեն բացատրել էր, որ «Ազգային ուխտի» չափավորումն ու փոփոխությունը դուրս է Մոսկվայում գտնվող թուրքական պատվիրակության իրավասությունից և լիազորությունից: Չիչերինը բակլան բերանից դուրս է հանել և ասել. Ռուսաստանի կողմից նման սահմանի հաստատումը պիտի լինի իրենց սկզբունքների ժխտում և համաձայն իրենց սկզբունքների հարկավոր է, որ յուրաքանչյուր ազգ իր ճակատագրի տնօրինման մեջ լինի ազատ, ու ***առաջադրել է Վանի և Բիթլիսի նահանգներից Հայաստանին հող անջատելու անհրաժեշտությունը*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.):

Վանի և Բիթլիսի մեր նահանգներից Հայաստանին հող անջատելու մասին Չիչերինի պահանջի հանդեպ Բեքիր Սամի բեյը հարկ եղած պատասխանը տալուց և Թուրքիայում հայկական նահանգ չլինելու մասին մի անգամ ևս հիշեցնելուց հետո, ասել է.

– Մեր երկրի բոլոր կողմերում հայերը մուսուլմանների հետ ապրել են խառը վիճակում: Հայերը ոչ մի տեղ մեկ երրորդ չափով իսկ մեծամասնություն չեն ունեցել, հետևաբար, այս նահանգներից մեկը կամ մյուսը Հայաստանին թողնել և միացնելը՝ բացարձակ մեծամասնությունը փոքրամասնությանը զոհելու նման անտրամաբանական հանգամանք է, այս պարագան հակառակ պիտի լինի նաև ձեր սկզբունքներին:

Չիչերինը կրկնել է, որ Վանի և Բիթլիսի մի մասն անպայման Հայաստանին կցելը պարտադիր է. այս հիմունքի վրա է հենվում օժանդակությունը, որը արվելու է թուրքերին: Խալիլ և Ջեմալ փաշաների հետ վարած բանակցություններում նրանց կողմից էլ է ընդունվել նույն սկզբունքը (ընդգծումը մերն է – Լ. Խ.): Հայերին թողնվելիք վայրերում կատարվելու է գաղթ:

Բեքիր Սամի բեյ.

– Մենք չգիտեինք, որ խոստացված օժանդակությունը հենած է դրա վրա: Հույներին և հայերին հող չտրամադրելու համար մե-

կուկես տարուց ի վեր համաձայնողական պետությունների հետ պատերազմ մղող մեր ազգն իրավունք ունի մտածելու, որ եթե իրեն բարեկամ ճանաչած պետությունն էլ նույն քաղաքականությունն է սնուցում, ուրեմն այս բարեկամությունից ի՞նչ օգուտ պիտի կարողանա ապահովել: Հետևաբար, մեր երկիրը բաժանելու նպատակից բաղկացած այս երկու քաղաքականությունների միջև ցավոք սրտի ոչ մի տարբերություն մնացած չպիտի լինի, ասելով ավելացրել է.

– Ուզում եմ ասել նաև այն, որ Խալիլ և Ջեմալ փաշաները իրավունք և իրավասություն չունեն թուրք ազգի անունից խոսելու:

Չիչերինն ուզում էր մեզ հիշեցնել, որ համաձայնողական պետությունները կամենում են ստեղծել մինչև Սեբաստիա և Տրապիզոն հասնող մեծ Հայաստան, իսկ իրենք առաջարկում են միայն մի փոքր մասը կցել Հայաստանին, համապատասխան նրանց բնակչության քանակին և այս առումով իբրև թե մեզ հետ ավելի լավ են վերաբերվում:

Երբ թուրքական պատվիրակության նախագահն առարկում է, որ Վանի և Բիթլիսի նահանգներից մի մաս հողերի Հայաստանին թողնելու դեպքում Էրզրումի հետ Բայազետի գավառի կապը պիտի խզվի, իսկ այդ պարագայում Բայազետն ընկնելու է վտանգի տակ, Չիչերինն արել է հետևյալ անտրամաբանական առաջարկը.

– Այս երկու տեղերի միջև կարելի է միջանցք թողնել:

Բեքիր Սամի բեյը նշել է, որ մեր երկրի ամբողջականությանը և տնտեսական շահերին խանգարող նման մի առաջարկ չի կարելի ընդունել և ասել է.

– Մենք միայն կարող ենք հավանություն տալ գաղթական և ապաստանած հայերի վերադարձին, սակայն չենք կարող ընդունել իսկական օսմանցի չեղող ոչ մի հայի: Բոլոր հայերը կարող են գալ իրենց նախկին բնակության վայրերը: Դուք կարող եք վստահ լինել, որ իրենց մենք պիտի վերաբերվենք այնպես, ինչպես ամենաազատ երկրում վերաբերվում են փոքրամասնությունների հանդեպ:

Չիչերինն առաջին հատվածն ընդունել էր, իսկ երկրորդը՝ մերժել և ***կրկին ու կրկին անգամ պնդել էր Վանում և Բիթլիսում հայերին թողնել իրենց բնակչության թվին համապատասխան վայրեր, այդ տեղերի իսլամ ժողովուրդը փոխադրել ուրիշ վայրեր, որ այդ տեղերի բնակչությունը բաղկացած լինի սոսկ***

հայերից և նրանք հասնեն կատարյալ անկախության (ընդգծումը մերն է – Լ. Խ.):

Բեքիր Սամի բեյն ասել է.

– Իմ իրավասության սահմանից դուրս եղող այս պահանջի հանդեպ չպիտի կարողանամ համաձայնվել, դիմելու եմ իմ կառավարությանը և ձեզ պիտի պատասխանեմ ստացած պատասխանի համաձայն:

Նման պատասխանից հետո Չիչերինը Կարսում, Արդահանում և Բաթումում բնակվող իսլամ ժողովրդի մասին այս սկզբունքի չգործադրվելու պատճառներն է հասկացրել և հետևյալ կերպով է արտահայտել իր տեսակետը.

– Նկատելով, որ մենք ընդունել ենք յուրաքանչյուր ազգի ինքնորոշման իրավունքը, հայերի նման փոքրամասնության մեջ մնացող մի ազգի ևս, ըստ իր քանակի հարկավոր է մի տեղի տեր դառնալ, հետևաբար, Թուրքիայից մի տեղ հատկացված հայերն էլ պետք է կատարելապես անկախ դառնան: Նույն սկզբունքը մենք ընդունում ենք նաև Կարսի, Արդահանի մուսուլմանների համար: Առաջիկայում մեր կազմելիք խառն հանձնաժողովը քննելու և լուծելու է այս երկու խնդիրները:

Բեքիր Սամի բեյն այդ տարօրինակ դատողությանը պատասխանել է այսպես.

– Երևանի իշխանության հետ կապ չունեցող և իսլամ ժողովրդի հետ թվական համեմատությամբ շատ աննշան մի քանի հազար հայերի՝ Վանի և Բիթլիսի նահանգներում անկախ պետության ձևով ապրելն անհնարին է, ունի նաև բազմաթիվ անպատեհություններ: Եթե ընդունվի այս սկզբունքը, Թուրքիայի յուրաքանչյուր նահանգում պիտի ստեղծվի փոքր մի Հայաստան կազմելու նման տրամաբանությունից զուրկ մի արդյունք:

Չիչերինը կրկին նույն մտքերն է առաջ մղել և վճռական կերպով հայտնել, որ դաշինքի հաստատումը և խոստացված օգնության ճշտությամբ կատարումը կապված է այս պայմանի հետ (ընդգծումը մերն է – Լ. Խ.): Այսպիսով, կեսգիշերից հետո երեք ու կես ժամ տևող այս տեսակցությունն ավարտվել է առանց արդյունքի: Միայն Բեքիր Սամի բեյը հայտնել է, որ Անկարայից նոր հրահանգի ստանալը կախված է մեկ-երկու ամսվա ժամանակամիջոցից և խնդրել, որ խոստացված օժանդակությունը հապաղման չենթարկվի: Խորհրդային արտաքին կոմիսարն էլ խոստացել է, որ օգնությունը պիտի շարունակվի և ավելի մեղմ արտահայտությամբ ասել էր.

– Մենք պիտի բավարարվենք Բիթլիսից Հայաստանի համար մի փոքր հատվածի անջատումով»[1]:

Սույն տեղեկագրում Բեքիր Սամին, նկարագրելով Չիչերինի հետ ունեցած օգոստոսի 28-ի բանակցությունների ընթացքը, իր շարադրանքն ավարտում է հետևյալ եզրահանգմամբ.

«Այստեղ գործի գլուխ գտնվողները... վախենում են, որ արևմտյան երկրների պրոլետարիատի վրա վատ ազդեցություն պիտի գործի իրենց կողմից հայ ազգը լքված վիճակի մեջ թողնելը և հայկական դատը բացեիբաց ի նպաստ մեզ լուծելը այն պատճառով, որ արևմտյան երկրներում և ամերիկյան աշխարհում նրանք անմեղ և խիստ անիրավված են նկատվում. մյուս կողմից, վստահ լինելով, որ հայերին խորհրդային հավաքականության մեջ մտցնելով Հայաստանը պիտի վերածեն խորհրդային դաշնակցության մի մասը, մտածում են Թուրքիայից քիչ թե շատ հող ձեռք բերելու միջոցով գոհացնել հայ կոմունիստներին, որոնք, կոմունիստական կուսակցությանը պատկանելով հանդերձ, աշխատում են Երևանի կառավարության հետ և դրա շնորհիվ մտածում ժամ առաջ տապալել դաշնակների իշխանությունը: Դրան ավելանում են նաև այնպիսի պատճառներ, ինչպիսիք են՝ ***արտաքին գործերի կոմիսարիատում ամենաազդեցիկ և ներգործուն եղող Կարախանի և Կենտգործկոմի քարտուղար Աթանասովի (պետք է լինի Ավանեսով – Լ. Խ.) հայ լինելը, սրանց շրջապատող հայ խմբի շատ ժրաջան աշխատանքը, Կովկասի և Թուրքեստանի վարչական կազմի ընդհանրապես հայերի ձեռքում լինելը*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.):

Նկատի ունենալով, որ ազգի ճակատագիրն... Ազգային մեծ ժողովի լուծելու խնդիր է, և այդ իրավունքը պատկանում է նրան, ուրեմն ես չպիտի հայտնեմ իմ կարծիքը այն մասին, թե մեր երկրում հայերին մի վայրի հատկացումը մեր ընդհանուր շահերին հարմար է կամ ոչ: Ես միայն իմ անձնական պարտքն եմ համարում հայտնել, որ Ազգային մեծ ժողովի համար ստիպողական անհրաժեշտություն է խնդիրը սառնարյունությամբ քննելը...

Համենայն դեպս, պահին խիստ հարմար եմ նկատում, որ եթե Ազգային մեծ ժողովը նպատակահարմար գտնի մի հանձնաժողովի միջոցով հայկական սահմանների և ուրիշ խնդիրների լուծումն ու կարգավորումը Վանի և Բիթլիսի նահանգներում, թեկուզ ժամանակավորապես՝ Դիարբեքիրի, Ուրֆայի, Սարդինի և

[1] Նույն տեղում, էջ 83-86:

դեռ ուրիշ հարմար վայրերից բազմաթիվ աշիրեթներ և բնակչություն փոխադրելով լցնել այդ տեղերի մեր դատարկ գյուղերը. այս կերպ հանձնաժողովի գործունեության ժամանակ ցույց տալ մուսուլման ժողովրդի ճնշող մեծամասնությունը, իսկ ժամանակը հասնելու պահին, անարդյունք չմնալու համար այժմ իսկ ձեռք առնել հարկավոր միջոցառումներ և համապատասխան մարդկանց տալ անհրաժեշտ հրահանգներ լուրջ ու կանոնավոր ծրագրով»[1]:

Չիչերինի հետ ունեցած օգոստոսի 28-ի բանակցություններով թուրքական պատվիրակությունը փաստորեն ավարտում է իր առաքելությունն ու սպասում Թուրքիայի և Ռուսաստանի կառավարությունների կողմից օգոստոսի 24-ի Բարեկամության պայմանագրի նախագծի պաշտոնական վավերացմանը: Սակայն այդ պայմանագրի նախագիծը Թուրքիայի կառավարությունը չընդունեց: Եվ ինչպես ցույց են տալիս օգոստոսի 28-ի բանակցության նյութերը, ռուսական և թուրքական պատվիրակությունները տարբեր կերպ էին մեկնաբանում օգոստոսի 24-ի պայմանագրի նախագծի առաջին կետը սահմանների վերաբերյալ:

Բանակցությունների այս փուլում Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմատն ուներ հետևյալ դիրքորոշումը.

1. Չէր ընդունում «Ազգային ուխտի» սահմանները, գտնելով, որ Կարսի և Արդահանի շրջանները պետք է պատկանեն Հայաստանին, իսկ Բաթումը՝ Վրաստանին:

2. Պահանջում է Արևմտյան Հայաստանից որոշ տարածքներ հանձնել Հայաստանին:

3. Փոխարենը խոստանում է Հայաստանի վրայով ճանապարհ բացել դեպի Թուրքիա:

4. Խոստանում է շարունակել օգնությունը Թուրքիային՝ զենքով, զինամթերքով և ոսկով:

Այս չորս առաջարկներից Թուրքիան վճռականորեն մերժում է առաջին երկուսը: Չիչերինն, իր հերթին, գտնում էր, որ Բարեկամության պայմանագիրը կարող է վավերացվել այդ չորս առաջարկները Թուրքիայի կառավարության կողմից ընդունվելուց հետո միայն:

Բանակցությունները մտան փակուղի: Ունենալով Լենինի համաձայնությունը՝ Սարիղամիշը և Շահթախտը գրավելու մասին, Քեմալը որոշեց հարձակվել Հայաստանի վրա և գորդյան հանգույցն արձակել զենքի ուժով:

---

[1] Նույն տեղում, էջ 86-87:

Անկասկած է, որ առանց Ռուսաստանի համաձայնության Քեմալը չէր հանդգնի հարձակվել Հայաստանի վրա: Անհրաժեշտ էր Ռուսաստանի հետ մշակել Հայաստանի վրա հարձակման փոխհամաձայնեցված ծրագիր, որի շուտափույթ իրականացմանն էլ ձեռնամուխ եղավ Քեմալի կառավարությունը: Ռուսաստանի արևելյան քաղաքականության սկզբունքները մշակող գործիչները, Ստալինի գլխավորությամբ, օգոստոսի երկրորդ կեսին և սեպտեմբերին տենդագին քննարկում էին տրանզիտի, Հայաստանի վրա հարձակման տարբերակների և այլ հարցեր:

Ի վերջո հաղթանակեց Թուրքիայի հարձակման պայմաններում Հայաստանը խորհրդայնացնելու ծրագիրը:

4. ՏՐԱՆԶԻՏԻ ՀԱՐՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ինչպես արդեն նշել ենք, Լեգրանի հետ Հայաստանի Հանրապետության կնքած օգոստոսի 10-ի համաձայնագրի դեմ մեծ արշավանք սկսեց Թուրքիան, Ռուսաստանից պահանջելով բեկանել այն հոդվածը, որով երկաթուղու Սարիղամիշ-Շահթախտ հատվածը մնում էր Հայաստանին: Օգոստոսի 10-ի պայմանագրով ոչ Ռուսաստանը և ոչ էլ Թուրքիան չհասան իրենց նպատակին: Երկաթուղու այն հատվածը, որով Հայաստանի վրայով զենք ու զինամթերք պետք է առաքվեր Թուրքիա, համաձայնագրով մնաց Հայաստանի Հանրապետության տնօրինության տակ:

Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը դեմ էր տրանզիտին, լավ հասկանալով, որ Ռուսաստանից Թուրքիա փոխադրված զենքն ու զինամթերքն ի վերջո օգտագործվելու են Հայաստանի դեմ: Միաժամանակ, անվիճելի էր նաև այն իրողությունը, որ տրանզիտի իրավունքը կարելի էր օգտագործել Ռուսաստանից և Թուրքիայից տարածքային զիջումներ կորզելու համար: Հայաստանի Հանրապետությունը հույս ուներ տրանզիտի փոխարեն Ռուսաստանից ստանալ վիճելի տարածքների մեծ մասը, Թուրքիայից՝ Արևմտյան Հայաստանի տարածքների մի մասը:

Սակայն դա չափազանց նուրբ և բարդ դիվանագիտական խաղ էր, որի անհաջող ավարտի դեպքում Հայաստանը կարող էր կուլ գնալ երկու մրցակից երկրների՝ Ռուսաստանի և Թուրքիայի նվաճողական քաղաքականությանը:

Թուրքիայի ծրագրերում ևս տրանզիտի հարցը խոշոր դեր էր կատարում: Նա ուներ հետևյալ նպատակները, ա) համոզել Ռու-

սաստանին, որ արևմտյան տերությունների դեմ ընդհանուր ճակատով պայքարելու համար անհրաժեշտ է միացյալ ուժերով վերացնել հայկական պատնեշը, բ) եթե Ռուսաստանը այդ ծրագրին հավանություն չտա, ապա այդ դեպքում լուծել միայն տրանզիտի հարցը՝ թուրքական կամ ռուսական զորքերի ուժերով, գ) կար և երրորդ տարբերակը. Ռուսաստանի հետ համատեղ սկզբնական շրջանում բավարարվել միայն տրանզիտի հարցի լուծմամբ:

Ռուսաստանի նպատակները ստեղծված իրավիճակում ավելի բազմաձալք էին: Նա ձգտում էր լուծել հետևյալ խնդիրները, ա) լուծել տրանզիտի հարցը, Թուրքիային զենք ու զինամթերք մատակարարել արևմտյան տերությունների դեմ պայքարն ուժեղացնելու համար, բ) միաժամանակ՝ նպատակ ունենալով նվաճել Հայաստանը, Ռուսաստանը չէր ցանկանում Թուրքիային մեծ ազատություններ տալ տարածաշրջանում ռազմական գործողություններ ծավալելու իմաստով, գ) նույն ժամանակ հասունանում էր Հայաստանը Թուրքիայի սանձազերծած պատերազմի միջոցով ծնկի բերելու, այն խորհրդայնացնելու ծրագիրը: Սակայն, բնականաբար, այդ ծրագիրն իրականացնելու համար Թուրքիան պետք է տարածքային հատուցում ստանար:

Այս երեք պետությունների շահերի շրջագծում օգոստոսի 10-ի համաձայնագրի ստորագրումից հետո մեծ պայքար ծավալվեց տրանզիտի հարցի շուրջ: Ռուսաստանը, Թուրքիան և Հայաստանը դիվանագիտական մեծ աշխատանք ծավալեցին տրանզիտի հարցն իրենց օգտին լուծելու համար: Այդ հարցը հօգուտ Հայաստանի լուծելու գործում որոշակի աշխատանք էր տանում Լեգրանը, անշուշտ, չանտեսելով Ռուսաստանի շահերը:

Օգոստոսի 17-ին Օրջոնիկիձեն հեռագրում է Լեգրանին. «Չիչերինի հաղորդագրության համաձայն, թուրքերը պնդում են Շահթախտը գրավելու վրա, որովհետև հակառակ դեպքում վերջին կետով անցնող ճանապարհը կտրվում է: ***Հարկադրված ենք, «սխալմամբ» գրավել Շահթախտը»*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.)[1]: Ուրեմն, օգոստոսի 10-ի համաձայնագրով բոլշևիկյան Ռուսաստանի կառավարությունը Շահթախտը թողեց Հայաստանին, իսկ օգոստոսի 17-ին որոշեց «սխալմամբ» գրավել այն՝ թուրքերի համար ճանապարհ բացելու նպատակով:

Ստանալով այդ լուրը, Լեգրանը օգոստոսի 18-ին զայրացած հեռագրում է Չիչերինին.

---

[1] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 68.

1. Վիճակը ռազմաճակատում, իր օգոստոսի 7-ի հուշագրից հետո լավացավ, որի պատճառով հնարավոր եղավ կնքել օգոստոսի 10-ի համաձայնագիրը:

2. Մինչև այդ պահը հայտնի չէ Չիչերինի վերաբերմունքը տեղի ունեցածի վերաբերյալ, որը բարդացնում է վիճակը և վստահություն չի ներշնչում, որ որդեգրված գիծը համարվում է ճիշտ:

3. Օգոստոսի 12-13-ին Բաքվում, Սերգոյի հետ հանդիպման ժամանակ վերջինս հայտնել է «Հայաստանի վերաբերյալ նոր հրահանգի մասին, որի մասին, հակառակ սպասելիքների, Դուք ինձ տեղյակ չեք պահել: Բաքվի խորհրդակցությունում որոշվել էր Հայաստանի նկատմամբ մարտավարության փոփոխության հարցը կախման մեջ դնել իր տարածքով մեզ ազատ տրանզիտի իրավունք տալու Հայաստանի համաձայնությունից»:

4. Չնայած Բաքվի վերոհիշյալ խորհրդակցության որոշմանը, «Այսօր Սերգոյից և Ռազմահեղափոխական խորհրդից ստացվել է տեղեկություն. բանակին հրաման է տրվել գրավել այն գիծը, որը պայմանագրով տրվել էր հայկական զորքերին, վկայակոչելով Ձեր հաղորդումը Շահթախտը գրավելու թուրքերի պահանջի և ամբողջ Նախիջևանի գավառը գրավելու Գլխավոր հրամանատարի հրահանգի մասին»:

5. Լեգրանը Չիչերինին հայտնում է, որ ինքը օգոստոսի 18-ին հեռագրով Օրջոնիկիձեից պահանջել է. «Կասեցնել Ռազմահեղափոխական խորհրդի կողմից 11-րդին տրված հրամանը՝ օգոստոսի 10-ի պայմանագրով հայկական զորամասերին տրված Շահթախտի և Նախիջևանի գավառի մի հատվածի գրավման մասին, ***եթե դուք դեռ ժամանակը չեք համարում ձեռնամուխ լինել այն հրահանգի կատարմանը, որի մասին ինձ հայտնել եք Բաքվում»*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.):

Լեգրանը Օրջոնիկիձեին ուղղված սույն հեռագրով դուրս է գալիս իր իրավասության շրջանակներից: Նա ի պաշտոնե իրավունք չուներ պահանջներ ներկայացնելու ո՛չ Ռազմահեղափոխական խորհրդին և ո՛չ էլ հատկապես Օրջոնիկիձեին: Լեգրանը, սակայն, համոզված լինելով, որ տարածքային գրավումները կատարվում են Բաքվի նախաձեռնությամբ, հույս դնելով Մոսկվայի աջակցության վրա, փորձում է կասեցնել այդ որոշումը:

Լեգրանի հեռագրում ուշադրություն է գրավում նաև մեր կողմից ընդգծված միտքը: Բաքվում Օրջոնիկիձեն Լեգրանին հայտնել էր Հայաստանը խորհրդայնացնելու անհրաժեշտության վերաբերյալ Քաղբյուրոյի որոշման մասին: Օգոստոսի սկզբից օրա-

կարգում էր գտնվում Հայաստանի խորհրդայնացման հարցը:

6. Լեգրանը պնդում է, որ մինչև խաղաղ բանակցությունների ճանապարհով Հայաստանի տարածքով տրանզիտի հարցի լուծելը, որի համար հույսեր ունի, ամեն տեսակ ռազմական գործողություններ օգոստոսի 10-ի պայմանագրի խախտման ուղղությամբ, հատկապես Վրանգելի դեսանտի առկայության պայմաններում, կարող են ունենալ անցանկալի հետևանքներ:

7. «Եթե Դուք,– ավարտում է իր հեռագիրը Լեգրանը,– վճռականապես պնդում եք Ձեր ծրագրի վրա, խնդրում եմ այդ մասին անմիջապես հաղորդել ինձ: Այդ դեպքում ես կհեռագրեմ Երևան՝ Նախիջևանի գավառը հայկական զորքերից մաքրելու անհրաժեշտության մասին, միաժամանակ տեղյակ կպահեմ հետագա բանակցությունները Վլադիկավկազ տեղափոխելու մասին, և, ապա, իմ առաքելությունն ավարտած համարելով, կմեկնեմ Խորհրդային Ռուսաստան»[1]:

Օգոստոսի 20-ին, երբ Լեգրանն արդեն որոշ տեղեկություններ էր ստացել, որ ռուսական զորքերի կողմից Շահթախտի գրավման հրահանգը ոչ թե Բաքվի, այլ Մոսկվայի նախաձեռնությունն է, մի հեռագիր է հղում Չիչերինին, որտեղ հարցը դնում է կտրուկ, կամ օգոստոսի 10-ի համաձայնագիրը պետք է պահպանվի, կամ ինքը հրաժարական է տալիս: Նա գրում է. «Եթե Դուք, խախտելով օգոստոսի 10-ին Հայաստանի կառավարության հետ իմ կողմից ստորագրված խորհրդային կառավարության համաձայնագիրը, իրոք, Մերգոյին հեռագիր եք տվել թուրքերի պահանջով, Շահթախտը գրավելու անհրաժեշտության մասին, ապա ինձ ոչինչ չի մնում անելու, քան խնդրել Ձեզ և Կենտկոմին անմիջապես հետ կանչել ինձ: Ես ենթադրում էի, որ Ձեր որոշ աջակցության դեպքում ինձ կհաջողվի ամրապնդել այն վստահությունը, որը վերջին ժամանակներում առաջացել էր Հայաստանի կառավարության մոտ մեր քաղաքականության նկատմամբ և հայերին հասցնել մինչև Հայաստանի տարածքի վրայով մեր տրանզիտի ազատ իրավունքի ճանաչմանը: Նախիջևանի գավառի հանձնումը քեմալականներին և Շահթախտի գրավումով օգոստոսի 10-ի պայմանագրի բացարձակ խախտումը, հավասարազոր է Հայաստանի հետ խաղաղ հարաբերությունների դադարեցմանը և նախատեսում է մի շարք հետագա գործողություններ Հայաստանի

[1] Նույն տեղում, թ. 72:

նկատմամբ, որը ինձ համենայն դեպս ոչ տեղին և ոչ էլ ժամանակին է թվում: Այդ հիմնական հարցերի կապակցությամբ Ձեր հրահանգների բացակայության պատճառով ստացվել է չափազանց խառնաշփոթ դրություն և պարզ չէ. մե՞նք, թե Բաքուն է անցկացնում կենտրոնի քաղաքականությունը Հայաստանի վերաբերյալ»: Այնուհետև նա խնդրում է հայտնել, թե օգոստոսի 10-ի համաձայնագրի ընդունումից հետո Նախիջևանի վերաբերյալ ինչպիսի հրահանգ է տրվել Գլխավոր հրամանատարին[1]:

Օգոստոսի 20-ին Չիչերինը հեռագրում է Լեգրանին. «***Մենք հարցրել ենք Մերգոյի կարծիքը թուրքերի ցանկության մասին՝ Շահթախտը և Սարիղամիշը մեզանից անկախ գրավելու համար: Դա պայմանագրի խախտում չէ, քանզի մենք պարտավորություն չենք վերցրել այդ վայրերը թուրքերից պաշտպանելու: Թող Մերգոն կրկնի իր կորած ծածկագիրը: Հայտնեցեք Ձեր կարծիքը***» (ընդգծումը մերն է – Լ. Խ.)[2]:

Օգոստոսի 22-ին Չիչերինն ուղիղ գծով խոսակցություն է ունենում Բ. Լեգրանի և Ս. Տեր-Գաբրիելյանի հետ, որոնք նրան մեղադրում էին հայկական տարածքները թուրքերին հանձնելու գործում և եղելությունը բացատրում է հետևյալ կերպ.

1. «Ինչ որ դուք ասում եք, բացարձակ խառնաշփոթություն է... Տեղի է ունեցել Ձեր ասածի հակառակը: Մենք երբեք, ոչ մի խոսք չենք ասել այժմ մեր կողմից Շահթախտը գրավելու մասին: Մեր առջև հարց է դրվել այն մասին, թե մենք ինչպես կվերաբերվենք, եթե թուրքերը մեզանից անկախ, սեփական ուժերով, առանց մեզ հետ որևէ կապի գրավեն Շախթախտը և Սարիղամիշը: Հենց այդ առաջարկն է որոշ փաստական լրացումներով հաղորդվել Սերգոյին: Նա պատասխանել է ծածկագրով, որը մեզ չի հասել: Մենք խնդրել ենք կրկնել ծածկագիրը, բայց չենք ստացել: ***Նրա բաց հեռագրից երևում է, որ գործերի այդպիսի ընթացքը նա համարում է անցանկալի և գերադասում է, որպեսզի մենք ինքներս գրավենք այդ քաղաքները, և այսպիսով, այդ նրա և ոչ թե մեր առաջարկն է*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.): Հանրապետության Գլխավոր հրամանատարը և Ռազմահեղափոխական խորհուրդն անշուշտ հակառակվում են մեր զորքերի ամեն մի հետագա առաջխաղացմանը»:

2. «Ինչպե՞ս եք դուք վերաբերվում հիշյալ վայրերը թուրքերի կողմից գրավելու հնարավորությանը: Արդյո՞ք անհրաժեշտ եք

---

[1] Նույն տեղում, թ. 75:

[2] Նույն տեղում , թ. 76:

գտնում, որպեսզի մենք օգտագործենք մեր ամբողջ ազդեցությունը, հնարավորության սահմաններում թուրքերին խանգարելու համար:

Բանը նրանում է, որ օգոստոսի 10-ի պայմանագիրը Շահթախտը, այսինքն Թուրքիայի հետ կապող կետը, տալիս է Հայաստանին, որի արդյունքում մենք և Ադրբեջանը բացարձակապես կտրվում ենք (Թուրքիայից – Լ. Խ.): Բացի դրանից դաշնակներին են տրվում երկաթուղիները, այնպես որ ճանապարհները դեպի Թուրքիա, Պարսկաստան և Մակվի խանություն դաշնակների ձեռքում են: Մակվի խանության պարենամթերքի անսպառ պաշարները մեր փոխարեն կանցնեն դաշնակների և վրաց մենշևիկների ձեռքը, իսկ մենք դրանցից կզրկվենք: ***Մի՞թե դա անխուսափելի էր*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.)»:

3. Խոսելով Ռուսաստանի զորքերի կողմից Ղարաբաղում, Զանգեզուրում և այլուր կատարվող զանգվածային գնդակահարությունների և բռնությունների մասին, Չիչերինը բացատրություն է պահանջում Լեգրանից, քանի որ այդպիսի իրադարձությունները հայ ժողովրդին կհարկադրեն ատել բոլշևիկներին, իսկ դա իր հերթին բացասական ազդեցություն կունենա «***ապագայում Հայաստանում խորհրդային կարգեր մտցնելու հեռանկարի վրա***» (ընդգծումը մերն է – Լ. Խ.)[1]:

Այս լարված գրագրությունների օրերին Ռուսաստանի ներքին կյանքում ծայր առած ռազմական և քաղաքական իրադարձությունները բոլշևիկյան կառավարությանը հարկադրեցին մեկ անգամ ևս փոխել Հայաստանի նկատմամբ որդեգրված հերթական քաղաքական գիծը: Եթե օգոստոսի սկզբից Ռուսաստանը օրակարգի մեջ էր մտցրել Հայաստանը բռնի խորհրդայնացնելու ծրագիրը, ապա այժմ այն բեկանվում է:

Օգոստոսի 22-ին Գ. Չիչերինը հեռագրում է Վլադիկավկազ՝ Բ. Լեգրանին. «***Հայաստանի վրայով տրանզիտի պետք է հասնել դիվանագիտական ճանապարհներով: Վրանգելի դեսանտը, կուբանցիների ապստամբությունը մեզ համոզեցին օգոստոսի 10-ի պայմանագրից ավելի առաջ գնալու անհնարինության մեջ. այդ պատճառով Մերգոյի այստեղ գտնված ժամանակ ընդունված որոշումը՝ գծի փոփոխության մասին, բեկանվել է***» (ընդգծումը մերն է – Լ. Խ.)[2]:

---

[1] Նույն տեղում, թ. 33-34:

[2] Նույն տեղում, թ. 80:

Հայաստանի բռնի խորհրդայնացման հարցը նորից անորոշ ժամանակով հետաձգվում էր մինչև հարմար պահը:

Նույն օրը, օգոստոսի 22-ին Չիչերինը հեռագրում է Վլադիկավկազ՝ Ս. Տեր-Գաբրիելյանին. «Օգոստոսի 10-ի պայմանագիրն անշեղորեն պետք է պահպանել: Հայաստանի հետ հարաբերությունների որևէ խզում և ռազմական բարդություններ անթույլատրելի է. այդ կառավարության տեսակետն է՝ ամուր և վճռականորեն հաստատված Կենտկոմի կողմից: Լեգրանը պետք է մեկնի Երևան: Անհրաժեշտ է ամենաեռանդուն ջանքերով հասնել Հայաստանի վրայով դեպի Թուրքիա տրանզիտի: Բոլոր դեպքերում անհրաժեշտ է անմիջապես դիվանագիտական սուրհանդակների իրավունք ձեռք բերել, որպեսզի մենք կարողանանք մեր սուրհանդակներին ուղարկել Հայաստան և Հայաստանի վրայով Թուրքիա: Հասեք նաև Անկարայի՝ Քեմալի կառավարության հետ հեռագրային կապի»[1]:

Այսպիսով, օգոստոսի 22-ի գրագրությունները ցույց են տալիս, որ Ռուսաստանը հրաժարվում է ոչ միայն Հայաստանն այդ ժամանակ խորհրդայնացնելու ծրագրից, այլև Սարիղամիշն ու Շահթախտը զինված ուժով գրավելու մտքից:

Բայց չմոռանանք, որ Լենինը օգոստոսի 14-ին թուրքերին արդեն թույլ էր տվել զինված ուժերով գրավելու վերը նշված վայրերը: Եվ այդ է պատճառը, որ չնայած թեժ գրագրությանը, Գ. Օրջոնիկիձեի, Բ. Լեգրանի և Ս. Տեր-Գաբրիելյանի դիմադրությանը, այնուամենայնիվ թուրքերի կողմից Սարիղամիշն ու Շահթախտը գրավելու ծրագիրը օրակարգից չի հանվում:

Օգոստոսի 22-ին Չիչերինի Սարիղամիշն ու Շահթախտը թուրքական ուժերով գրավելու նպատակահարմարության մասին իրեն արված հարցմանը Լեգրանը օգոստոսի 24-ին պատասխանում է. «Այժմ թուրքերի հարձակումը Շահթախտի վրա չափազանց անցանկալի է: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նախիջևանում գտնվող մեր զորքերի հետ միասին կան նաև որոշ թուրքական զորամասեր, թուրքերի գործողությունները կընկալվեն որպես մեր դաշնակից զորքերի գործողություն և մենք կամաակամա ստիպված կլինենք դրա համար պատասխանատվություն կրել: Այդ դեպքում ավելի դյուրին կլինի Շահթախտը գրավել մեր զորքերով: Սակայն մեր կողմից ինչպիսիք էլ որ լինեն ռազմական գործողությունները, դրանք անվերապահորեն

[1] Նույն տեղում, թ. 79:

վաղաժամ եմ համարում այնքան ժամանակ, քանի դեռ չի պարզվել Հայաստանի վրայով մեզ ազատ տրանզիտ տրամադրելու վերաբերյալ հայկական կառավարության համաձայնության հարցը: Մենք, մասնավորապես, առաջին հերթին կարող ենք պնդել մեզ կամ թուրքերին իրավունք տալ՝ օգտվելու Շահթախտի նեղգիծ երկաթուղուց և ազատ տրանզիտից Նախիջևան-Շահթախտ հատվածում: Ինչ վերաբերում է Սարիղամիշը գրավելուն, ապա մինչև Հայաստանի երկաթուղիների մասին հիմնական հարցի լուծումը, Սարիղամիշի գրավումը չի կարող նշանակություն ունենալ: Իսկ թուրքերի հարձակման փաստը և նրանց կողմից հայկական տարածքների զավթումը շատ անբարենպաստ տպավորություն կստեղծի մեր ընդհանուր քաղաքականության մասին: Ենթադրում եմ, որ պետք է օգտագործել մեր ամբողջ ազդեցությունը թուրքերին հանգստացնելու համար»[1]:

Այդ լարված օրերին վարված գրագրությունների մեջ ուշադրություն է գրավում հատկապես Չիչերինին Լեգրանի կողմից գրված մի նամակ, որում լույս է սփռվում ինչպես վիճելի տարածքների, այնպես էլ Շահթախտի գրավման և տրանզիտի հարցերի վրա:

Լեգրանն այդ նամակում գրում է.

1. «Հայաստանի հետ օգոստոսի 10-ի համաձայնագիրը կնքելիս ես ելնում էի վիճելի տարածքների հարցի մասին այն նախնական որոշումից, որ առաջարկել էինք ես և Օրջոնիկիձեն (հեռագիր Բաքվից 14 հուլիսի, համար 4-37) և հավանություն է գտել Ձեր կողմից համար 663 հեռագրով և համար 671 ծածկագրով, ուղարկված Կիրովի միջոցով, որտեղ այսպես է ասված. «Ստացվել է Ձեր հարցումը Ադրբեջանի և Հայաստանի բանակցությունների մասին: Չիչերինը կողջունի, եթե հայերը ընդունեն այդ որոշումը: Եթե նրանք համաձայնվեն անմիջապես հրաժարվելու ամբողջ Ղարաբաղից և Զանգեզուրը ճանաչեն վիճելի, Նախիջևանն իրենց պահելու պայմանով, Չիչերինը ուրախ կլինի հարցի այդպիսի լուծման համար: Ձեր խնդիրն է հասնել դրան Երևանում»:

Ես կարծում եմ, որ այդ խնդիրն, ըստ էության, մեր կողմից արդեն լուծված է, և Հայաստանի կառավարությունն ամբողջովին պատրաստված է նման որոշում ընդունելու համար»:

2. «Ոչ Զեզանից, ոչ Օրջոնիկիձեից, որի հետ ես զրուցել եմ

[1] Նույն տեղում, թ. 86:

համաձայնագիրը ստորագրելուց մի քանի ժամ առաջ, ոչ Կիրովից ես տեղյակ չեմ եղել Շահթախտով անցնող նեղգիծ երկաթուղու մասին, ինչպես նաև Մակվի խանության պարենամթերքի անսպառ պաշարների նկատմամբ Մոսկվայի ունեցած նկատառումների մասին, որոնց մասին Դուք հայտնել եք ընկ. Տերին 20/7-22/8 ուղիղ գծով խոսակցության ժամանակ:

Ես կարծում եմ, որ Հայաստանի հետ խաղաղ բանակցությունների ժամանակ, որոնք կսկսվեն իմ Երևան ժամանելուց հետո, սկզբունքորեն կլուծվի մեզ Հայաստանի երկաթուղիներով ազատ տրանզիտ տրամադրելու և Անկարայի հետ կապի հարցը: Մենք առաջին հերթին կդնենք «Նախիջևան-Շահթախտ» երկաթուղու հատվածի օգտագործման և Շահթախտից գնացող նեղգիծ երկաթգծի շահագործումը և շարժակազմը մեզ կամ թուրքերին հանձնելու հարցը»:

3. Լեգրանն այն կարծիքին էր, որ տրանզիտի հարցը լուծելու դեպքում անհրաժեշտ կլինի վիճելի տարածքներից ավելի շատ մաս թողնել Հայաստանին: Նկատի ունենալով, որ օգոստոսի 10-ի համաձայնագրի ստորագրման ժամանակ խորհրդային կառավարությունը դեռևս վերջնական, հստակ կարծիք չուներ վիճելի տարածքների պատկանելության մասին և Երևանում վարվելիք բանակցությունները՝ Լեգրանը Չիչերինին գրում է. «Այդ բանակցությունների ժամանակ պետք է ունենալ Ձեր վերջնական որոշումը վիճելի տարածքների ճակատագրի մասին: Ես հակված եմ Հայաստանի օգտին ճանաչելու Նախիջևանի մարզը, Ադրբեջանին՝ ամբողջ Ղարաբաղը: Զանգեզուրի հարցն այնքան ամուր է կապված Նախիջևանի հետ, որ Նախիջևանը Հայաստանին տալու դեպքում, ըստ երևույթին, նրան պետք է թողնենք նաև Զանգեզուրը:

Այդ բոլորը, հասկանալի է, հիմնական հարցի՝ տրանզիտի բարենպաստ լուծման դեպքում: Հակառակ դեպքում հարկ կլինի դաշնակների վրա ճնշում գործադրել, մի բան, որը դրա նկատմամբ հիմնովին հակվածություն և բավականաչափ հնարավորություն ունեցող 11-րդ բանակի օժանդակությամբ լիովին իրագործելի է...

Ընդհանրապես, տեղական ուժերի՝ ադրբեջանցիների և 11-րդ բանակի Ռազմահեղափոխական խորհրդի վրա, Հայաստանի նկատմամբ կիրառվող մեր քաղաքականության մեջ կարելի է հույս դնել միայն այն դեպքում, եթե խոսք գնա Հայաստանի դեմ

նվաճողական արշավանք կազմակերպելու մասին»[1]:

Արտաքուստ թվում էր, թե հարցերը կանոնավորվում են, և Հայաստանին այլևս վտանգ չի սպառնում: Հ. Օհանջանյանը սեպտեմբերի 6-ին հեռագրում է Լեգրանին. «Հայկական երկաթուղու վարչությունը սույն թվականի օգոստոսի 10-ի պայմանագրի 5-րդ հոդվածի համաձայն առաջիկա երկու օրվա ընթացքում ձեռնամուխ է լինելու Շահթախտ-Ջուլֆա երկաթուղու շահագործմանը: Հայտնելով վերոշարադրյալի մասին, խնդրում եմ համապատասխան ցուցում Ձեր տեղական իշխանություններին և տեղերում զորամասերին՝ հայկական երկաթուղիների վարչության աշխատանքներին լիովին չխոչընդոտելու մասին: Ձեր կողմից այդ ուղղությամբ կատարված քայլերի մասին խնդրում եմ շտապ հայտնել Հայաստանի կառավարությանը»[2]: Այդ հեռագրին Լեգրանը պատասխանում է ռադիոյով, սեպտեմբերի 11-ին. «Հայաստանի երկաթուղիների վարչությանը անարգել, երկաթուղու շահագործման նպատակով, Շահթախտ-Ջուլֆա տեղամասն անցնելու համար, տեղական իշխանություններին հրահանգ է տրվել օգոստոսի 10-ի պայմանագիրը կնքելուց անմիջապես հետո, և Հայաստանի կառավարությունը նշված տեղամասում ցանկացած ժամանակ կարող է ձեռնամուխ լինել աշխատանքների»[3]: Նույն օրը Լեգրանը հեռագիր է հղում նաև 11-րդ բանակի Ռազմահեղափոխական խորհրդին. «Օգոստոսի 10-ի համաձայնագրի հիման վրա Հայաստանի երկաթուղիների վարչությանը պետք է իրավունք վերապահվի շահագործելու Շահթախտ-Նախիջևան-Ջուլֆա տեղամասը: Խնդրում եմ շտապ կարգադրություն անել՝ հայկական իշխանություններին անարգել թույլ տալ նշված տեղամասում աշխատանքներ կատարել, պայմանով, որ ճանապարհը հայերի կողմից չօգտագործվի զենք փոխադրելու համար: Համաձայնագրի այդ սկզբունքի բարեխիղճ կատարումն անպայման պարտադիր է, որի մասին տեղյակ պետք է պահվի Նախիջևանի մեր հրամանատարությանը»[4]:

Սակայն պարզվում է, որ Օրջոնիկիձեն, այնուամենայնիվ, որոշել էր Կարմիր բանակի ուժերով գրավել Շահթախտ-Սարիղամիշ շրջանը, այն թուրքերի ձեռքը չընկնելու համար: Օրջոնի-

---

[1] Նույն տեղում, թ. 99-100:
[2] Նույն տեղում, թ. 109:
[3] Նույն տեղում, թ. 111:
[4] Նույն տեղում, թ. 114:

կիձեն քաջատեղյակ էր թուրքերի ռազմական պատրաստություններին և գիտեր, որ ունենալով Լենինի համաձայնությունը, նրանք մոտ ժամանակներում հարձակում են սկսելու այդ շրջանը գրավելու համար:

Հարցը նրանում է, որ Չիչերինը Օրջոնիկիձեի և Լեգրանի հետ հեռագրերով՝ Սարիղամիշ-Շահթախտ երկաթուղու հատվածը թուրքերի կողմից գրավելու հնարավորության հարցը քննարկելուց հետո, այնուամենայնիվ, Բեքիր Սամի բեյին տվել էր իր համաձայնությունը, Թուրքիայի կողմից հարձակում սկսելու և հիշյալ տարածքը գրավելու մասին[1]: Չիչերինին գրված օգոստոսի 23-ի նամակում Կիրովը պաշտպանում է հիշյալ տարածքը թուրքերի կողմից գրավելու նպատակահարմարությունը[2]:

Ճիշտ է, միջազգային և ներքին կացության փոփոխությունների պատճառով այդ ժամանակ օրակարգից հանվել էր Հայաստանի խորհրդայնացման խնդիրը, սակայն հենց այդ հանգամանքն էլ Ռուսաստանին ստիպում էր ամուր պահել վիճելի տարածքները և թույլ չտալ որպեսզի դրանք անցնեն Թուրքիային:

Այդ ժամանակ արդեն պարզ էր դառնում, որ Թուրքահայաստանը մնալու է Թուրքիային, Հայաստանի Հանրապետությունը՝ Ռուսաստանին: Վիճելի տարածքները Ռուսաստանին հետաքրքրում էին այնքանով, որ դրանք պետք է լինեին բոլշևիկյան կայսրության կազմում: Այդ հարցում Թուրքիան օգոստոսին պատրանքներ չուներ, պայքարն ընթանում էր այն ուղղությամբ, որպեսզի վիճելի տարածքները տրվեն Ադրբեջանին: Փաստորեն այդ ժամանակ չլուծված էր մնում միայն Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանների հարցը: Սակայն գաղտնիք չէր նաև, որ թուրքական զորքերի հարձակման դեպքում այդ տարածքները դրվելու են հարվածի տակ և անցնելու են Թուրքիային:

Այդ էր պատճառը, որ Օրջոնիկիձեն ջանքեր էր թափում 11-րդ բանակի ուժերով գրավել Սարիղամիշ-Շահթախտ գիծը, լուծել տրանզիտի հարցը և թույլ չտալ թուրքերին գրավել այդ շրջանները:

Ստեղծվել էր մի իրավիճակ, երբ Ռուսաստանը Հայաստանի Հանրապետության հետ պահելով նորմալ պաշտոնական հարաբերություններ, փորձում էր տրանզիտի, Թուրքիայի հետ անմի-

---

[1] **А. Н. Хейфец**, Советская Россия и сопредельные страны Востока в годы гражданской войны (1918-1920). М., 1964, с. 131.

[2] Նույն տեղում:

ջապես կապ ստեղծելու հարցը լուծել թուրքական զինված ուժերի միջոցով, իսկ Օրջոնիկիձեն, ընդհակառակը, տեղում ջանում էր այդ նույն հարցերը լուծել ռուսական զորքերի միջոցով:

Օրջոնիկիձեն դիմելով նման քայլի, ելնում էր բոլշևիկյան կայսրության շահերից: Սեպտեմբերի 14-ին Լեգրանը Բաքվից ստանում է հետևյալ բովանդակությամբ հեռագիրը. «***Օրջոնիկիձեն Բաքվում գտնված ժամանակ ասել է, որ համաձայնագրի երկաթուղու մասին կետը կարելի է չկատարել:*** Ռազմական տեսանկյունից անթույլատրելի է համարվում հայկական զորամասերի ներկայությունը Շահթախտից արևելք՝ մեր տեղանքում, նկատի ունենալով նաև այդ շրջանում թուրքական զորամասերի առկայությունը, որը կարող է պատճառ դառնալ անցանկալի երևույթների: Բացի դրանից, գտնում ենք, որ ճանապարհային աշխատանքների համար կարելի է թողնել որոշ քանակով երկաթուղու ծառայողներ. ***բանվորներ և առավել ևս զինվորական պահակախումբ ոչ մի դեպքում թույլ տալ չենք կարող*** (ընդգծումները մերն են – Լ. Խ.): Անհրաժեշտ է մշակել շարժման հատուկ կանոններ, մեր զորամասերի դիրքերի պահպանության նպատակով: Նոր պայմաններ մշակելու, Հայաստանի կառավարությանը ներկայացնելու համար խնդրում եմ Բաքու գործուղել ընկ. Բոբրիշչևին, որը մեզ կբերի մշակված պայմանները»[1]: Հեռագիրը ստորագրել էր 11-րդ բանակի հրամանատարությունն՝ ի դեմս Ռեմիզովի, Լուկինի և Վորոնկովի:

Լեգրանը լավ էր հասկանում, որ այդ հեռագրով բանակը մերժում էր օգոստոսի 10-ի համաձայնագրի համապատասխան կետը՝ երկաթուղու նշված հատվածի օգտագործման իրավունքը Հայաստանին տալու մասին: Լեգրանը նաև հասկանում էր, որ այդ հեռագիրը տրվել է Օրջոնիկիձեի հրահանգով:

Այդ է պատճառը, որ սեպտեմբերի 15-ին Լեգրանը հեռագրում է Բաքու 11-րդ բանակի Ռազմահեղափոխական խորհրդին, հաղորդելով Չիչերինի հրահանգները.

«***Չիչերինի կողմից ինձ ուղարկված հրահանգի համաձայն Հայաստանի հետ կնքված օգոստոսի 10-ի համաձայնագիրն իր բոլոր մասերով անշեղորեն պետք է կատարվի: Հինգերորդ կետը Հայաստանի երկաթուղու վարչությանն իրավունք է տալիս միայն օգտագործել Շահթախտ-Ջուլֆա երկաթուղին, որից բոլորովին չի հետևում հայկական զորամասերի հայտնվելը մեր տեղանքում*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.):

[1] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 1, л. 119.

Հայկական զորամասերի ցանկացած շարժում համաձայնագրի երկրորդ կետով որոշված գծից այն կողմ, կլիներ պայմանագրի խախտում: Համաձայնագրով Հայաստանի երկաթուղու վարչությանը իրավունք չի տրվում Շահթախտ-Ջուլֆա գծում ունենալ զինված պահակախումբ:

Համաձայնագրով երկաթուղու պահպանությունը և Հայաստանի երկաթուղու վարչության անարգել աշխատանքների ապահովումը, մինչև Հայաստանի և Ռուսաստանի միջև պայմանագրի կնքումը, դրված է Նախիջևանի մարզը ժամանակավորապես գրաված Խորհրդային Ռուսաստանի զորքերի վրա: Դա մեզ փաստորեն հնարավորություն է տալիս կանխել հայերի կողմից երկաթգիծը ռազմական նպատակներով օգտագործելու բոլոր տեսակի փորձերը»: Նկատի ունենալով Նախիջևանում գտնվող թուրքական զորամասերի սադրանքների անխուսափելիությունը հայկական երկաթուղու աշխատանքները խափանելու համար, Լեգրանն առաջարկում է. «Եթե Հայաստանի երկաթուղիների վարչության գործակալների հետ Նախիջևանի թուրքական զորամասերի թշնամական բախումների վտանգ գոյություն ունի, ապա Ռազմահեղափոխական խորհրդի պարտականությունն է գործնական միջոցներ ձեռք առնել այդպիսի հնարավորությունները կանխելու համար: Շատ կարևոր է, որպեսզի Նախիջևանն ամուր գրավված մնա կարմիր զորամասերի կողմից:

Ադրբեջանի սահմանում օգոստոսի 10-ի պայմանագրի կատարման ամբողջ պատասխանատվությունն ընկնում է 11-րդ բանակի Ռազմահեղափոխական խորհրդի և ոչ թե թուրքական զորամասերի հրամանատարների վրա»[1]:

Սեպտեմբերի 15-ին Չիչերինը մի ընդարձակ նամակ է գրում Լեգրանին՝ նրան տեղյակ պահելով Ռուսաստանի արտաքին քաղաքականության ընդհանուր ուղղությունների մասին: Խոսելով Խորհրդային Ռուսաստանի արևելյան քաղաքականության մասին, նա գրում է, որ դրա «կենտրոնում է գտնվում մեր՝ Թուրքիայի նկատմամբ ունեցած հարաբերությունների հարցը: Նրա վրա է փոխադրվել մեր արևելյան քաղաքականության ծանրության կենտրոնը: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի բավարարենք թուրքերի ցանկություններն այնքանով, որքանով թույլ է տալիս մեր սեփական վիճակը: Այդ կապակցությամբ տեղում ավելի շատ բան կարելի է անել, քան

[1] Նույն տեղում, թ. 121:

կենտրոնում: Համաձայնության հիմքերն այստեղ ուրվագծված են, ընդ որում, դրա նախադրյալը հանդիսանում է թուրք հեղափոխականների նոր, լիակատար ժողովրդական քաղաքականությունը, նրանց ժողովրդավարական սկզբունքները, մասնավորապես ազգերի ինքնորոշման ընդունումը և թուրքահայերին անկախություն տալը Թուրքահայաստանում՝ թուրքահայերի համար բավարար տարածքում»[1]:

Չիչերինի սեպտեմբերի 15-ի նամակը լուրջ մտորումների առիթ է տալիս:

Նախ, պարզվում է, որ Մոսկվան իր վերջնական ընտրությունն արդեն արել է: Թուրքիան դարձել էր Ռուսաստանի արևելյան քաղաքականության ծանրության կենտրոնը:

Երկրորդ. Ռուսաստանը հավատում էր Թուրքիայի կեղծ ժողովրդավարական կարգախոսներին և սին հույսեր տածում, որ թուրքերին կկարողանա օգտագործել հեղափոխական, ժողովրդավարական շարժումները Մերձավոր Արևելքում ուժեղացնելու համար:

Երրորդ. Թուրքիային թույլ տալով գրավել Սարիղամիշն ու Շահթախտը, Չիչերինը դեռ հույս ուներ Արևմտյան Հայաստանից որոշ տարածքներ տալ հայերին: Տարօրինակն այն է, որ նամակում Չիչերինը գրում է արևմտահայերին անկախության համար որոշ տարածքներ զիջելու թուրքերի համաձայնության մասին, մինչդեռ Թուրքիան նման համաձայնություն չէր տվել:

Չորրորդ. Չիչերինը վատ էր ճանաչում թուրքերին, նրա մտքովն իսկ չէր անցնում, որ իրավունք ստանալով Սարիղամիշն ու Շահթախտը գրավելու համար, Թուրքիան լայնածավալ պատերազմի է պատրաստվում Հայաստանի դեմ:

Հինգերորդ. ինչպես ցույց են տալիս իրադարձություններն ու փաստաթղթերը, Թուրքիայի հետ առանցքային հարցերը լուծվում էին Ստալինի կողմից, որի վրա էր դրված Կովկասի և Արևելքի նկատմամբ վարվող քաղաքականության մշակումը: Չիչերինն այդ հարցերում որոշիչ դեր չուներ:

Սեպտեմբերի 16-ին Լեգրանը Թիֆլիսից մանրամասն մի նամակ է գրում Չիչերինին, որում բազմակողմանիորեն վերլուծում է տրանզիտի և դրա հետ առնչվող հարցերը: Նախ, նա իր դժգոհությունն է հայտնում Հայաստանի կառավարությունից, որը խոչընդոտում և ձգձգում էր իր Երևան ժամանելը: Լեգրանը հայտնում է,

[1] Նույն տեղում, թ. 126:

որ ինքը Հայաստանի կառավարությունից պահանջել է առաջիկա օրերի ընթացքում լուծել պատվիրակության Երևան մեկնելու հարցը, սպառնալով, որ հակառակ դեպքում բանակցությունները կտեղափոխվեն Խորհրդային Ռուսաստան: Հայկական կողմի փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի կառավարությունը, ձգձգելով Լեգրանի այցը Երևան, հետապնդում էր մեկ նպատակ. բանակցությունները սկսել Շանթի պատվիրակության վերադառնալուց հետո: Իսկ Շանթը Երևան է ժամանել սեպտեմբերի 14-ին: Այնուհետև Լեգրանն անցնում է տրանզիտի հարցերի քննարկմանը: Նա գրում է. «Մեր բանակցությունների հեռանկարները մնում են անորոշ: Մեզ դեպի Թուրքիա ազատ տրանզիտի իրավունք տալու հարցն անկասկած կխորացնի դաշնակցության դեռ օգոստոսի 10-ի պայմանագրի կնքման ժամանակ նշմարված պառակտումը, պայմանագիր, որն անցկացրեց այդ կուսակցության համաձայնողական թևը՝ ռազմական հարձակման իրական վտանգի սպառնալիքի տակ:

Հայաստանի տարածքում դեպի Թուրքիա տանող երկու ուղի կա.

1. Սարիղամիշ-Էրզրում և 2. Նախիջևան-Շահթախտ-Մակու-Բայազետ-Ղարաքիլիսա-Էրզրում: Առաջինն Անատոլիայի, մասնավորապես Անկարայի հետ, ուղիղ կապ է: Այն ավելի քիչ վտանգավոր է Հայաստանի համար, որովհետև պաշտպանված է բնական արգելքներով և Կարսի ամրոցով: Երկրորդ ուղին անցնում է Հայաստանի հարավային սահմանի երկայնքով և Նախիջևանի կողմից Արաքսի հովտով Երևանի ուղղությամբ բացում է ուղիղ մուտք Հայաստան:

Անատոլիայի հետ կապի համար երկրորդ ուղին քիչ է պետքական, որովհետև շրջանց ճանապարհով դուրս է բերում նույն Էրզրումի ուղու վրա: Այդ ուղու որոշ հատվածում նեղգիծ երկաթուղու առկայությունը գործի էությունը չի փոխում, մանավանդ որ նրա վիճակը ճշգրտորեն հայտնի չէ:

Մինչդեռ Փոքր Ասիայի հյուսիսարևելյան մասի և Հայաստանի դեմ ինքնուրույն գործողությունների համար այդ ուղղությունը կարող է վճռական նշանակություն ունենալ: Հավասարապես ճանապարհ է բացվում Պարսկաստան, դեպի Թավրիզ:

Հաղորդակցության ուղիների հարցում Հայաստանին ներկայացվելիք մեր պահանջների կապակցությամբ անհրաժեշտ է քիչ թե շատ ճշտորեն որոշել մեր քաղաքական նպատակները:

Եթե Մոսկվան իր առջև նպատակ է դնելու ինքնուրույն գործո-

դություններ զարգացնել մեզ մերձավոր Թուրքիայում և Պարսկաստանում, ապա տարածքային հարցերի լուծումը պետք է հետաձգել՝ Նախիջևանի հանգույցը մեր ձեռքում պահպանելու և մի շարք քայլեր ձեռնարկել Շահթախտի հանգույցին և նեղգիծ երկաթուղուն տիրելու համար: Ընդ որում պարզ միամտություն կլիներ Կարս-Սարիղամիշ գծով մեզ տրանզիտի հատկացման հարցում Հայաստանի համաձայնությունը ստանալու վրա հույս դնելը:

Եթե խնդիրը Քեմալի կառավարության հետ ուղիղ կապի հաստատումը, նրան անհրաժեշտ պաշարների մատակարարումն է, ինձ թվում է, կարելի է սահմանափակվել Սարիղամիշի ուղղությամբ, մանավանդ, որ նկատի ունենալով Կովկասում ունեցած մեր իրական ուժերը, մեր կողմից Թավրիզի և Բայազետի ուղղության գործնական օգտագործման վրա հույս դնել չի կարելի:

Այդ դեպքում հնարավոր կլիներ որոշ տարածքների զիջումով Հայաստանի հետ հասնել համաձայնության և տրանզիտի հարցը լուծել խաղաղ ճանապարհով:

Հնարավոր թյուրիմացություններից խուսափելու համար խնդրում եմ Ձեզ, այդ հարցի կապակցությամբ տալ ցուցումներ»[1]:

Ինչպես տեսնում ենք սույն նամակից, սեպտեմբերի 16-ին Լեգրանը դեռևս չէր ստացել Խորհրդային Ռուսաստանի կառավարության հստակ հրահանգը Անդրկովկասում և Թուրքիայում վարվելիք քաղաքականության հիմնական հարցերի շուրջ: Բայց, միաժամանակ, ինչպես այս, այնպես էլ նախորդ նամակները և հեռագրերը պարզ են դարձնում, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը վիճելի տարածքները ռազմակալել է ռազմավարական նպատակներով և նրանց ճակատագիրը որոշելու է՝ կապված իր նվաճողական խնդիրների իրականացման հետ:

Պարզ է դառնում նաև, որ Ռուսաստանի բոլշևիկյան կառավարությունը վաղուց է իր համար սկզբունքորեն լուծել Հայաստանը գրավելու և խորհրդայնացնելու հարցը: Չէր լուծված միայն Հայաստանի գրավման ժամկետի հարցը: Ռուսաստանը սպասում էր հարմար պահի, իսկ նման պահ կլիներ թուրք-հայկական պատերազմը և դրա հետևանքով առաջացած Հայաստանի տագնապալից վիճակը, երբ Ռուսաստանը հանդես կգար հայ ժողովրդին թուրքերից ազատագրողի դերում:

Ահա թե ինչու, չնայած Լեգրանի բազմաթիվ փորձերին՝ նա այդպես էլ չկարողացավ ճշտել իր կառավարության տեսակետ-

[1] Նույն տեղում, թ. 128-130:

ները հայ-ադրբեջանական, հայ-թուրքական վիճելի հարցերի շուրջ: Հայաստանում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչը չուներ սեփական կառավարության պաշտոնական տեսակետնե-րը իր պաշտոնավարած երկրում վարվելիք քաղաքականության հիմնական հարցերի շուրջ: Դեռ ավելին, փաստորեն նրա քթի տակ, Բաքվում էին լուծվում Հայաստանի հետ առնչվող բոլոր կարևորագույն հարցերը:

Հակահայկական խումբն ուներ հայկական պետության ոչնչացման իր ծրագիրը, որը և հետևողականորեն իրականաց-նում էր:

Չնայած ստեղծված իրավիճակի բարդությանը, Լեգրանը ճի-գեր էր գործադրում Երևան մեկնելուց և բանակցությունները սկսելուց առաջ ստանալ իր կառավարության որոշակի հրա-հանգները Հայաստանի վերաբերյալ: Եվ կարծեք թե սկսելով հասկանալ, որ այդ հարցերը Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմատը չի լուծում, նա սեպտեմբերի 23-ի հեռագրում դիմում է ոչ միայն Չիչերինին, այլև Լենինին:

Այդ հեռագրում Լեգրանը Լենինին և Չիչերինին առաջարկում է մինչև Երևանում բանակցությունների սկսվելը վերջնական պատասխան տալ հետևյալ երեք հարցերին.

«Առաջին. մնո՞ւմ է ուժի մեջ օգոստոսի 22-ին Չիչերինի կող-մից մեզ հաղորդած Կենտկոմի հրահանգը՝ դիվանագիտական ճանապարհով Հայաստանի հետ համաձայնության հասնելու՝ մեզ դեպի Թուրքիա ազատ տրանզիտի իրավունք տալու և դրա հետ կապված մեր կողմից օգոստոսի 10-ին ստորագրված հա-մաձայնագրի անվերապահ պարտադիր լինելու մասին: Ռազմա-հեղափոխական խորհուրդը նորից համառորեն հարց է բարձրացնում նշված պայմանագրի անցանկալիության մասին, այս անգամ Շահթախտ-Ջուլֆա հատվածը Հայաստանի երկա-թուղիների վարչությանը շահագործման համար թույլտվություն տալու կապակցությամբ: Չնայած իմ առարկություններին, Ռազ-մահեղափոխական խորհուրդը որոշել է մինչև Մոսկվայում Կով-կասյան բյուրոյի անդամների կողմից հարցի պարզելը, օգոստոսի 10-ի պայմանագրի համապատասխան կետը չկատարել:

Ձեր ուշադրությունն եմ հրավիրում ստեղծված աշխատաձևի բացարձակ անհնարինության վրա, երբ ամեն կետի կապակցու-թյամբ նորից ու նորից է բարձրացվում պայմանագրի չկատար-ման հարցը: Պետք է լինի որևէ որոշում՝ պարտադիր և՛ մեր, և՛ Ռազմահեղափոխական խորհրդի համար: Անհրաժեշտ է վճռա-

կան քայլերի դիմել, որպեսզի բանակի հրամանատարությունը հրաժարվի Հայաստանի նկատմամբ ինքնուրույն քաղաքականություն վարելուց, կամ էլ ինձ ազատել իմ վրա դրված առաջադրանքը կատարելուց:

Երկրորդ. մենք անպայմա՞ն պետք է հասնենք երկու ուղիների՝ Սարիղամիշի և Նախիջևան-Շահթախտ-Բայազետի, մեր տնօրինությանն անցնելուն: Կիրովի հետ ուղարկված զեկուցագրում ես նշել եմ, թե ինչքան խնդրահարույց են մեր հաշվարկները Հայաստանի հետ՝ երկրորդ ուղու կապակցությամբ, և Անատոլիայի հետ ուղիղ կապի իմաստով ինչքան քիչ բան է տալիս այդ ուղին:

Այդ ուղուն տիրելու Ադրբեջանի և Ռազմահեղափոխական խորհրդի համառ ձգտումը բացատրվում է ոչ այլ կերպ, քան մեր կողմից գրավված Զանգեզուրի և Նախիջևանի վիճելի մարզերն ամուր զավթելու և Ադրբեջանին միացնելու ձգտումով: Դրա հետ միասին այդ քաղաքականությունը մեզ անխուսափելիորեն հասցնելու է արկածախնդրական գործողությունների Թավրիզի և Բայազետի ուղղություններում: Կարծում եմ, մեր անմիջական նպատակի տեսակետից՝ Հայաստանի վրայով երկաթուղային ուղիղ կապի ստեղծում Էրզրումի և հետո Անկարայի հետ, մենք կարող ենք սահմանափակվել միայն Սարիղամիշի ուղիով:

Երրորդ. Հայաստանին, նրա կողմից տրանզիտի տրամադրման դեպքում, մենք ինչպիսի՞ տարածքային զիջումների ենք պատրաստ: Կարծում եմ, չպետք է վախենալ Զանգեզուրն ու Նախիջևանը Հայաստանին տալուց, որովհետև, նախ, այդ մարզերը մեզ կարող էին պետք գալ միայն որպես ելակետ մերձավոր Թուրքիայում և Թավրիզի ուղղությամբ ինքնուրույն գործողությունների համար, որը, կրկնում եմ, մեր ռազմական և Ադրբեջանի խորհրդային ուժերի վիճակի պատճառով հանդիսանում է մաքուր ուտոպիա, երկրորդ՝ Զանգեզուրը իրոք հանդիսանում է հայկական մարզ, որտեղ մեր իշխանությունը ներկայումս բնակչության համար թշնամական ռազմակալման բնույթ ունի, որն առանձնապես արտահայտվեց գորիսյան իրադարձությունների ժամանակ, երրորդ՝ չի կարելի հաշվի նստել Ադրբեջանի տարածքային հավակնությունների հետ, որովհետև եթե ոչինչ չզիջվի Հայաստանին, ապա նրանից ոչ մի զիջում չի կարելի սպասել տրանզիտի հարցում: Տարածքային հարցում Մոսկվայի քաղաքական օբյեկտիվ հաշվարկներով հիմնավորված ցանկացած որոշում անկասկած ընդունելի կլինի նաև Ադրբեջանի համար: Ինչ վերաբերում է Ղարաբաղին, կարելի է պնդել նրա միացմանը Ադրբե-

ջանին: Իմ կողմից զարգացվող դրույթների ընդունման դեպքում խաղաղ համաձայնության հասնելու հնարավորությունն ավելի հավանական է դառնում: Հակառակ դեպքում, ես գտնում եմ, որ դեպի Թուրքիա տրանզիտի հարցի խաղաղ լուծումը բացարձակապես անհնարին է: Խնդրում եմ, բոլոր երեք հարցերի կապակցությամբ տալ սպառիչ պատասխաններ: Ընկ. Տերը գծի մոտ կըսպասի պատասխանի»[1]:

Ս. Տեր-Գաբրիելյանը մինչ այդ ուղիղ գծով կապվել էր Չիչերինի հետ և նույնպես պահանջել վիճելի տարածքների շուրջը հայտնել որոշակի կարծիքներ[2]:

Լեգրանի նամակից հետևում է, որ չնայած Չիչերինի բազմաթիվ գրություններին, 11-րդ բանակի Ռազմահեղափոխական խորհուրդը և Բաքվի խորհրդային իշխանությունը մերժում էին Ռուսաստանի արտաքին գործոց ժողկոմատի որոշումները և վարում բացարձակ թուրքամետ քաղաքականություն: Հասկանալի է, որ նրանք կատարում էին Օրջոնիկիձեի հրահանգները, որոնք ստեղծվում էին Մոսկվայում Ստալինի կողմից: Ընթերցողի ուշադրությունը կցանկանայինք հատկապես կենտրոնացնել Լեգրանի այն մտքի վրա, որ 11-րդ բանակի Ռազմահեղափոխական խորհուրդը և Ադրբեջանը, ձգտելով գրավել Նախիջևան-Շահթախտ գիծը, նպատակ ունեին զավթել ռուսական զորքերի կողմից ռազմակալված Զանգեզուրն ու Նախիջևանը և միացնել Ադրբեջանին:

Թվում էր, գոնե Երևանում սկսվելիք բանակցությունների նախօրյակին խորհրդային կառավարությունը վիճելի տարածքների մասին իր վերջնական տեսակետները կհայտնի Լեգրանին: Բայց Ռուսաստանի կառավարությունն իր որոշակի կարծիքները չէր հայտնում, սպասելով ինչ-որ իրադարձությունների, որոնց մասին Լեգրանը չէր կռահում:

Սեպտեմբերի 24-ին Չիչերինը Լեգրանի և Տեր-Գաբրիելյանի համառ հարցապնդումներին պատասխանում է.

1. «Ընկ. Տեր-Գաբրիելյանը ցանկանում էր մեզանից իսկույն պատասխան ստանալ չափազանց բարդ հարցի՝ Հայաստանի հետ տրանզիտի կապակցությամբ վարվելիք բանակցություններում Ձեր առաջարկած պայմանների մասին: Դուք հո գիտեք, թե ինչպիսի հսկայական դժվարություններ են կապված վիճելի

[1] Նույն տեղում, թ. 143-144:
[2] Նույն տեղում, թ. 288:

տարածքների հարցի հետ, և ինչպիսի կատաղի հարձակումների ենք ենթարկվում մենք հենց այդ նույն հարցի կապակցությամբ՝ մյուս կողմից: Ձեր առաջարկած իմաստով որոշում ընդունելն այնքան էլ հեշտ չէ, համենայն դեպս պահանջվում են բանակցություններ և մանրամասն քննարկում: Տարօրինակ է, ուղիղ գծի մոտ կանգնած իսկույն պատասխան պահանջել մի այդպիսի բարդ հարցի մասին: Մենք մինչև այժմ անընդհատ հարձակումների ենք ենթարկվում օգոստոսի 10-ի պայմանագրի կապակցությամբ, իսկ Դուք առաջարկում եք ավելի հեռուն գնացող քայլեր անել»:

2. Օգոստոսի 10-ի համաձայնագրի կապակցությամբ Չիչերինը հայտնում է. «Մենք կապվել ենք Ռազմահեղափոխական խորհրդի հետ և պահանջել օգոստոսի 10-ի պայմանագրի ճշգրիտ պահպանում»:

3. Թուրքիայի նկատմամբ վարվող քաղաքականության մասին. «Քեմալականների նկատմամբ բարեկամական քաղաքականությունը համարում ենք մեզ համար չափազանց կարևոր: Նրանք առաջադիմական և ժողովրդավարական տարր են մուսուլմանության մեջ, նրանց կործանումը կարող է հանգեցնել ամենահետադիմական պանիսլամականության և ֆանատիզմի ժամանակավոր, բայց արտակարգ ուժեղ զարգացմանը՝ ուղղված հեղափոխության և մեր դեմ»:

4. Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի մասին. «Ձեր առաջարկների հարցի կապակցությամբ մենք անմիջապես պատասխան տալ չենք կարող...» (ընդգծումը մերն է – Լ. Խ.)[1]:

Այսպիսով, Լեգրանի և Տեր-Գաբրիելյանի հարցումները, ինչպես տեսնում ենք, մնացին անպատասխան:

Նույն օրը, սեպտեմբերի 24-ին, Կարախանը Վլադիկավկազով, Տեր-Գաբրիելյանի միջոցով, Լեգրանին է ուղարկում հետևյալ բովանդակությամբ երկտողը. «Օգոստոսի 10-ի պայմանագրի ճշգրիտ պահպանումը անպայման պարտադիր է, այդ իմաստով Գլխավոր հրամանատարության կողմից հրաման կտրվի Կովկասյան ճակատին: Ինչ վերաբերում է ուրիշ հարցերին, մասնավորապես տարածքային զիջումներին, ապա դրանց կպատասխանեմ վաղը, Կենտկոմի հետ խորհրդակցելուց հետո»[2]:

Կարախանի պատասխանի փոխարեն Լեգրանը սեպտեմբերի 25-ին ստանում է Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմատի

---

[1] Նույն տեղում, թ. 145:

[2] Նույն տեղում, թ. 146:

քարտուղարի հեռագիրը. «Ընկ. Լեգրան, Ձեր պահանջած պատասխանը հիմա ոչ մի դեպքում չի կարող տրվել, որովհետև հարցն արտակարգ բարդ է և պահանջում է Արտաքին գործերի ժողկոմատի կողմից մանրամասն քննարկում: Ընկ. Չիչերինը հենց հիմա ավարտեց այդ մասին Լեգրանին ուղղված նամակը, որում մանրամասն հիմնավորվում է վերը շարադրվածը: Այդ պատճառով ուժի մեջ է մնում Կարախանի երեկվա կարգադրությունը»[1]:

Կարախանը, ինչպես երևում է, չէր կարողացել Կենտկոմից որոշակի հրահանգ ստանալ վիճելի տարածքների մասին, այդ պատճառով էլ Լեգրանին պատասխանում է Արտաքին գործերի ժողկոմատի քարտուղարը: Նկատենք, որ Կենտկոմը ղեկավարվում էր Ստալինի կողմից:

Սեպտեմբերի 26-ին Լեգրանը նորից է հեռագրում Չիչերինին. «Տերը Մոսկվայից վերադարձել է առանց որևէ պատասխանի: Երկու օրից մեկնում եմ Հայաստան, որտեղ անմիջապես կբախվեմ իմ բարձրացրած հարցերին, ընդ որում բավականին գործնական ձևով: Այդ հարցերը բոլոր դեպքերում պետք է լուծվեն, այս անորոշ վիճակն այլևս անհնար է պահպանել, հատկապես սահմաններում չընդհատվող ընդհարումների պայմաններում: Ես պատասխանատվություն չեմ վերցնի, եթե իմ բարձրացրած հարցերի կապակցությամբ Երևանում ընդունված որոշումներս չհամընկնեն Մոսկվայի տեսակետներին, քանի որ, չնայած իմ բոլոր ջանքերին, դրանք մնում են անհայտ»[2]:

Եվ այսպես, Լեգրանը մեկնում էր Երևան առանց որևէ հրահանգի: Մոսկվան մինչև վերջ էլ չհայտնեց իր կարծիքը վիճելի տարածքների և Լեգրանի առաջարկած լուծումների մասին: Մոսկվան Թուրքիային թույլ էր տվել գրավելու երկաթուղու Սարիղամիշ-Շահթախտ հատվածը: Քեմալը պատրաստվում էր հարձակման, ունենալով ավելի հեռու գնացող նվաճողական ծրագրեր, նա ցանկանում էր հարցերը լուծել զենքի ուժով: Վերջանում էր դիվանագիտական պայքարի փուլը, և օրակարգի մեջ էր մտնում պատերազմը:

Թուրքիան ցանկանում էր ծնկի բերել Հայաստանը, գրավել Կարսն ու Արդահանը, լուծել տրանզիտի հարցը: Թուրքիայի

---

[1] Նույն տեղում, թ. 147:

[2] Նույն տեղում, թ. 148:

հաղթանակի դեպքում, բնականաբար, վիճելի տարածքների շուրջը եղած ծրագրերը ևս պետք է ենթարկվեին արմատական փոփոխությունների:

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա նա ցանկանում էր, օգտագործելով Հայաստանի չափազանց ծանր վիճակը, հանդես գալ թուրքերից հայ ժողովրդին փրկողի դերում, նվաճել երկիրը և այնտեղ հաստատել խորհրդային կարգեր:

Ահա թե ինչու, Ռուսաստանի կառավարությունը մինչև պատերազմի սկիզբը, Լեգրանի բոլոր դիմումները թողեց անպատասխան:

Հայ պետականության ճակատագիրը վտանգված էր: Վճռական խոսքը պատկանում էր Հայաստանի Հանրապետության բանակին:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ԽՄԲԻ ՎԵՐՋԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

1. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ ԶՈՀԱԲԵՐԵԼՈՒ ԴԻՐՔԵՐՈՒՄ

Խորհրդային Ռուսաստանը, ինչպես տեսանք, իր ընտրությունը կատարեց, նա Թուրքիային թույլ տվեց հարձակվել Հայաստանի վրա: Պատերազմը դարձավ օրերի հարց: Թվում էր՝ ամեն ինչ պատրաստ է Հայաստանը ծնկի բերելու համար:

Սակայն կային երկու լծակներ ևս, որոնք հակահայկական խումբը պատերազմի նախօրյակին օգտագործեց իր նպատակների իրականացման համար: Դրանցից առաջինը Կոմունիստական ինտերնացիոնալն էր, իսկ երկրորդը՝ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը:

Կոմինտերնի արևելյան քաղաքականությունից բխող, քեմալական Թուրքիայի նկատմամբ կենսագործվող քաղաքական սկզբունքները մշակվել էին բոլշևիկների կողմից և ոչնչով չէին տարբերվում Ռուսաստանի՝ մեր կողմից արդեն ներկայացված պետական դիրքորոշումից:

Երրորդ ինտերնացիոնալին կից ստեղծվել էր Արևելքի ժողովուրդների քարոզչության ու գործողության խորհուրդ[1]: Այդ խորհրդի նախագահությունը սեպտեմբերի 17-ին ընդունում է մի փաստաթուղթ, որը չափազանց կարևոր նշանակություն ունի սույն աշխատությունում բարձրացված հարցերը լուսաբանելու տեսանկյունից: Այդ «հույժ գաղտնի» փաստաթուղթը ենթատեքստեր չունի, նրանում ամեն ինչ ասված է պարզ ու որոշակի, որովհետև այն նախատեսված չէր հրատարակության համար: Փաստաթղթի հիմքում ընկած էին այն սկզբունքները, որոնք առաջ էին քաշել Ստալինը, Օրջոնիկիձեն, Նարիմանովը և թուրքամետ խմբի մյուս գործիչները: Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ

[1] 1-ый съезд народов Востока, Баку, 1-8 сент., 1920 г. Стенографические отчеты, Петроград, 1920, с. 218-220.

այդ փաստաթուղթը ստեղծվել է հակահայկական քաղաքականության կենտրոն դարձած Բաքվում: Մեզ հայտնի չէ, թե իրականում ովքեր են այդ փաստաթղթի անմիջական հեղինակները, սակայն, ելնելով բովանդակությունից, կասկածից դուրս է, որ խորհրդի «հայասեր» անդամներ Օրջոնիկիձեն, Սկաչկոն, Պավլովիչը և Նարիմանովը մասնակցել են այդ գործին:

Այդ փաստաթղթով պահանջվում էր Թուրքիային զոհաբերել ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Հայաստանի Հանրապետությունը:

Ներկայացնում ենք Արևելքի ժողովուրդների քարոզչության ու գործողության Խորհրդի Նախագահության «Եզրակացությունը». «Արևելքի ժողովուրդների քարոզչության ու գործողության Խորհրդի Նախագահությունը, քննարկելով Մերձավոր Արևելքում ներկա պահին ստեղծված քաղաքական դրությունը, եկավ հետևյալ եզրակացությանը.

1. Պարսկաստանում մենք վարկաբեկվել ենք այնտեղ սոցիալիստական հանրապետության հռչակման ձախողված քաղաքականությամբ և իրականում ոչ մի ուժ չունեցող, ամենևին մասսայականություն չվայելող «Ադալյաթ» հենարանով: Որոշ, իբր «կոմունիստական» միջոցառումների հապճեպ անցկացումը, որ ի վերջո պարզապես հանգեցրեց կողոպուտի, մեր դեմ է տրամադրել պարսկական բնակչությանը, ամրապնդել շահական կառավարության քաղաքականությունը և անգլիացիների դիրքը՝ վերջիններիս գիրկը նետելով քաղաքական բոլոր կուսակցությունները, ներառյալ մշտապես մոլի անգլիատյաց դեմոկրատները: Այդ պատճառով մենք Պարսկաստանում զրկվել ենք ամեն կարգի հող ու հենարանից և հայտնվել օտարերկրացի եկվոր-նվաճողի դերում ու դրանով անգլիացիներին հնարավորություն ընձեռել հանդես գալու որպես պարսից ժողովրդի փրկարար... Անգլիացիները, օգտվելով իրենց համար ստեղծված արտակարգ բարենպաստ դրությունից, այժմ մեր դեմ կազմակերպում են զինված ուժեր, որ կոչված են մեզ դուրս մղելու ոչ միայն Պարսկաստանի, այլ նաև մեր կողմից ծնկի բերված Ադրբեջանի սահմաններից: Ըստ մեր ունեցած տեղեկությունների, այդ ուժերն առավելապես կենտրոնանում են Թեհրանում և բավական նշանակալի են:

2. Հայաստանում զինադադարի մեր պայմանագիրը, որը դաշնակցական կառավարության հանդեպ մեր բացահայտ թուլության ապացույցն է, այդ կառավարությանը հնարավորություն է տվել ամրապնդել իր դիրքերը և պաշտպանողականից անցնել

հարձակողական պլանների իրագործման: Ներկա պահին դաշնակցական կառավարությունը եռանդագին պատրաստվում է մեր դեմ պատերազմելու, անգլիացիներից ստանալով զինամատակարարումներ՝ փորձում է ռազմական ուժերով տիրանալ պայմանագրով իրեն անցած Ջուլֆայի երկաթգծին, այն հաշվով, որ ապահովվեն մթերքների փոխադրումը պարսկական Ադրբեջանից ու կապն անգլիաշահական զորքերի հետ, որ հարկադրված են Թեհրանից շարժվել դեպի Պարսկաստանի հյուսիսային սահմանները: Դաշնակցական կառավարության գործակալները, կոմունիստների դիմակի տակ աշխատելով Ադրբեջանում, հատկապես Ղարաբաղում, Զանգեզուրում ու Ղազախում, եռանդագին հող են պատրաստում դաշնակցական հարձակման համար՝ տեղերում զավթելով խորհրդային իշխանությունը և հոգալով մուսուլմանական բնակչության զինաթափումն իրականացնելու մասին:

3. Ադրբեջանում խորհրդային քաղաքականության որոշ սխալներ, կապված տեղական, կենտրոնական ու զինվորական պարենմարմինների կողմից գյուղում բոլոր տեսակի սննդամթերքների լարված կորզման հետ, երբեմն տալիս են նրան թուրքատյաց ու գաղութատիրական բնույթ, խորհրդային իշխանության դեմ հարուցում հսկայական դժգոհություն, որն արդեն դրսևորվել է գյուղացիական մի շարք ապստամբություններով և այնքան հող նախապատրաստել հակահեղափոխության համար, որ Ադրբեջանի տեղական ղեկավարների իսկ խոստովանությամբ, խորհրդային իշխանությունը պահվում է բացառապես ռուսական սվինների վրա:

4. Ուժերի ու միջոցների սպառման հետևանքով Թուրքիայում մարում է ազգային-հեղափոխական շարժումը: Մուստաֆա Քեմալի Ազգային մեծ ժողովի կառավարությունը դժվարությամբ է շարունակում ռազմական գործողությունները: Հունական զորքերը շարժվում են Փոքր Ասիայի խորքերը և արդեն մոտենում են Աֆիյուն-Գարահիսար քաղաքին՝ գրեթե չհանդիպելով թուրքական ազգային զորքերի դիմադրությանը, քանզի վերջիններս ամենևին փամփուշտներ ու արկեր չունեն: Նրանք հարկադրված են գերմանական հրացաններով կրակել թուրքական փոքր «մաուզերների» փամփուշտներ: Օգտագործելով սուլթանի անունը և դրամ չխնայելով՝ անգլիական իշխանությունը Փոքր Ասիայում լայնորեն զարկ է տալիս ազգայնականների դեմ քարոզչությանը: Դրա հետևանքով թուլանում է ազգայնականների ազդե-

ցությունը: Ազգայնականների կառավարությունը՝ առաջվա նման առանց փամփուշտի ու առանց դրամի, առանց արտաքին աշխարհի հետ շփման փորձում է Ռուսաստանի հետ շուտափույթ կապ հաստատելու, ռուս բոլշևիկներից անմիջապես օգնություն ստանալու խոստումներով բարձրացնել զորքերի և բնակչության ընկճվող ոգին, բայց քանի որ խոստումները չեն կատարվում, ապա բնակչությունը դադարում է նրանց հավատալ և սկսում է կորցնել հույսը: Մուստաֆա Քեմալը Խալիլ փաշայի միջոցով որոշակիորեն հայտարարում է, որ նման հանգամանքներում ազգայնականներն ի վիճակի են պայքարը շարունակել մեկ ամսից ոչ ավելի: Եթե այդ ամսվա ընթացքում կապ չհաստատվի Խորհրդային Ռուսաստանի հետ, և վերջինիս կողմից չցուցաբերվեն նյութական օգնություն ու բարոյական աջակցություն, ապա ազգային շարժումը կճնշվի, Ազգային մեծ ժողովի կառավարությունը կտապալվի և նրա ղեկավարներին կմնա միայն փրկություն որոնել՝ փախչելով Խորհրդային Ռուսաստան:

5. Վերը նշված հանգամանքների բերումով Մերձավոր Արևելքում դրությունը խիստ ճգնաժամային է: Մի կողմից պարզ է, որ Անգլիայի կառավարությունը նախապատրաստվում է անգլիապարսկական, Հայաստանի, գուցե և Վրաստանի միացյալ ուժերով հարվածել Խորհրդային Ադրբեջանին: «Ադրբեջանը բոլշևիկյան ճնշումից ազատագրելու» դրոշի ներքո և Բաքուն Խորհրդային Ռուսաստանից պոկելու նպատակով այդ հարվածը կհասցվի մոտ ժամանակներում, ռազմական գործողությունները կսկսվեն՝ հենց որ անգլիաշահական զորքերը մոտենան ռուսական հին սահմանին ու կապ հաստատեն Հայաստանի հետ: Հայկական զորքերի հետ Ադրբեջան մուտք կգործի նաև ներկա պահին Վրաստանում պատսպարվող մուսավաթական կառավարությունը, որի մասնակցության շնորհիվ ադրբեջանական բնակչության նշանակալի մասը, գազազած խորհրդային իշխանության գաղութատիրական ու հակաթուրքական քաղաքականությունից, ոչ միայն չի ցուցաբերի որևէ դիմադրություն, այլև կանցնի հարձակվողների կողմը: Հարձակումը կասեցնող կարմիր՝ ռուսական զորքերը տեղական ապստամբ ջոկատների կողմից կկտրվեն թիկունքից, և նման պայմաններում, անտարակույս, չեն կարող երկար ժամանակ դիմադրել: Մարտական գործողություններից մեկ ամիս անց Բաքուն կընկնի պաշարման մեջ՝ ունենալով միայն մի ելք՝ դեպի ծովը:

Կանխատեսելով անգլիական սավառնակների մասնակցությունը (քանզի ներկա պահին Բաղդադում կենտրոնացված է

Անգլիայի արևելյան օդային ուժերի մոտավորապես 300 միավոր), վստահորեն կարելի է ասել, որ չնայած նավատորմի աջակցությանը, Բաքուն չի կարող դիմադրել և թեկուզ չգրավվի, ապա կայրվի ու կոչնչացվի:

Մյուս կողմից՝ թուրքական ազգային շարժման ճնշումը միաժամանակ կհանգեցնի բոլոր հեղափոխությունների ձախողմանն Արևելքում: Թուրքիան նորից կընկնի Անգլիայի դրածո սուլթանի տիրապետության տակ, իսկ քանի որ նրա սասանվող հեղինակության վերականգնման, ինչպես նաև Հունաստանի ձեռքն անցնելիք Զմյուռնիայի վիլայեթի դիմաց Թուրքիային փոխհատուցելու համար անհրաժեշտ կլինի Թուրքիային տարածք տալ այլ վայրերում, ուստի Անգլիան անպայմանորեն կփորձի Թուրքիային տարածքներ տալ ռուսների հաշվին: Անգլիան Թուրքիային մատնացույց կանի նրա պատմական իրավունքը «ռուսաց լծի տակ» հեծող թուրքերով բնակեցված Ադրբեջանի, Կովկասի և Թուրքեստանի նկատմամբ և կփորձի մեր դեմ հանել մուսուլմանական ամբողջ աշխարհը, որ մենք ենք ձգտում հանել նրա դեմ: Անգլիան փորձում է պանիսլամական հոսանքն Արևմուտքից շրջել Արևելք և ուղղել Խորհրդային Ռուսաստանի դեմ:

Հաշվի առնելով խորհրդային իշխանության տեղական գործակալների անզգույշ ու ոչ խելամիտ գաղութարարական քաղաքականությունից գազազած ռուսական մուսուլմանների տրամադրությունները և նկատի ունենալով Կովկասում ու Թուրքեստանում պանիսլամական հակահեղափոխության աշխուժացումը, որը ի հայտ է գալիս Թուրքիայում սուլթանի իշխանության վերականգնմամբ, պետք է խոստովանել, որ մուսուլմանական աշխարհում նման շրջադարձ իրականացնելն Անգլիայի համար այնքան էլ դժվար չի լինի: Եվ այդ ժամանակ կսկսվի մուսուլմանների «սրբազան պատերազմը» ոչ թե Անգլիայի, այլ Խորհրդային Ռուսաստանի դեմ, Կովկասում և Թուրքեստանում կբացվի անչափ լուրջ նոր ճակատ, որը մեզ կկտրի նավթի ու բամբակի աղբյուրներից, և մենք Արևելքի ժողովուրդների «սրբազան պատերազմ» հայտարարելով Անգլիայի դեմ՝ կնմանվենք ծիծաղելի ու հիմար վիճակի մեջ ընկած այն մարդկանց, ովքեր ստվարաթղթե սրեր ճոճելով՝ իրենց վրա են ընդունում փոթորիկը:

6. Խորհրդային Ռուսաստանի ու համաշխարհային հեղափոխության համար կործանարար այդ հետևանքներից խուսափելու նպատակով մեզ անհրաժեշտ է.

ա) ինչ գնով էլ լինի և ամենայն արտակարգությամբ աջակցել մարող ազգային շարժմանը Թուրքիայում և բ) կանխել անգլիա-

շահական, հայկական ու վրացական զորքերի միավորումը: Ինչպես մեկը, այնպես էլ մյուսը կարող է կյանքի կոչվել միայն թուրքական ազգայնական զորքերի հետ դաշնակցած, Հայաստանի վրա հարձակվելու ճանապարհով՝ իր ժողովրդին ճնշող դաշնակների լուծը թոթափելու դրոշի ներքո և հեղափոխական Թուրքիայի հետ միավորվելու նպատակով:

Այս միավորումը և մեզ ու հեղափոխական Թուրքիային թշնամի դաշնակցական կառավարության ոչնչացումը, նույնիսկ այն պարագայում, եթե մեզ չընձեռեն Մուստաֆա Քեմալի կառավարությանը նյութապես անհապաղ օգնելու հնարավորություն, նրան կաջակցեն արդեն այն բանով, որ, առաջին հերթին, հնարավորություն կտան Հայաստանի սահմանից հանել և դեպի Արևմուտք նետել Էրզրումի կորպուսը, երկրորդ՝ կվերացնեն վտանգն ազգայնականների թիկունքում, նրանց հնարավորություն կտան Անտանտի զորքերից նահանջել ընդհուպ մինչև Կովկաս՝ չկորցնելով կազմակերպվածությունը և պայքարը շարունակելու ու վերջնական հաջողության հասնելու հույսերը, երրորդ՝ կբարձրացնեն Քեմալ փաշայի կառավարության հեղինակությունը, կկայունացնեն նրա դրությունը, կբորբոքեն ազգային շարժումը, անգլիացիների դրածո սուլթանին թույլ չեն տա իրեն հայտարարելու միակ իշխանությունը Թուրքիայում:

Հարձակումը Հայաստանի վրա, թուրքական ազգային շարժումը փրկելուց զատ, մեզ կբերի նաև այն օգուտը, որ մեզ կընձեռի միասին մեր դեմ ելած թշնամիներին առանձին-առանձին ջարդելու հնարավորություն: Հայաստանը պետք է շարքից հանվի ավելի վաղ, քան կմոտենան անգլիաշահական զորքերը, իսկ Վրաստանը, որին այս արշավանքի ժամանակ ձեռք չենք տա, կվախենա խառնվել պայքարին: Բացի այդ, հարձակումը Հայաստանի վրա կլինի շատ ավելի դյուրին, քան նրանից պաշտպանվելը, քանզի Ադրբեջանը բոլշևիկներից ազատագրելու դրոշի ներքո մեզ վրա դաշնակցականների հարձակման պարագայում ադրբեջանական բնակչության մի մասը մեր դեմ կլինի, իսկ դաշնակցականներից ազատագրվելու դրոշի ներքո Հայաստանի վրա մեր հարձակման դեպքում մեզ հետ կլինի ոչ միայն ադրբեջանական ամբողջ բնակչությունը, այլև հայերի մի մասը: Ռազմական գործողությունները մեզնից չեն պահանջի լրացուցիչ ոչ մի ուժ, քանզի դրանք ըստ էության կծավալվեն Թուրքիայի Էրզրումյան կորպուսի կողմից: Մեր հարձակումը կլինի համարյա թե ցուցադրական, որի համար մեր ուժերը բավական են:

Այնքանով, որ թուրքական հեղափոխական կառավարությունն առաջարկում է իր զորքերը տրամադրել մեր հրամանատարությանը և կոմիսարներ նշանակել ում որ հարկ ենք համարում, ուրեմն այդ զորքերի կողմից հայ ազգաբնակչության նկատմամբ որևէ անկարգության դրսևորման երկյուղ չպետք է ունենալ: Այս ամենից բացի դաշնակցական Հայաստանի դեմ պատերազմը կամրապնդի մեր դրությունը Ադրբեջանում, կխլի հողը մուսավաթական հակահեղափոխականների ոտքի տակից: Իսկ ինչ վերաբերում է խորհրդայնացված Հայաստանի կերակրմանը, ապա հնարավոր կլինի նրա համար առատ բաժին հայթայթել Իրանական Ադրբեջանում, որը մեծապես հարուստ է մթերապաշարներով:

Դիվանագիտական առումով Արևմտյան Եվրոպայում հասարակական զայրույթի փոթորիկը կանխելու համար Հայաստանի վրա հարձակումը պետք է իրականացվի հետևյալ կերպ. Թուրքական զորքերը կսկսեն հարձակվել Հայաստանի վրա, իսկ մենք մեր ամբողջ մամուլով և Եվրոպայում հրապարակայնության մեր բոլոր օրգանների օգնությամբ հսկայական աղմուկ կբարձրացնենք հայ-թուրքական նոր կոտորածի և դրան մեկընդմիշտ վերջ տալու անհրաժեշտության մասին, և այդ կոտորածը դադարեցնելու համար մեր զորքերը կմտնեն Հայաստան՝ նրա զորքերից ամայացած արևելյան սահմանից (բնագրային բացթողում) և ազգային պատերազմները կհայտարարվեն տապալված ու դրանց փոխարեն կհաստատվի խորհրդային իշխանություն: Դրանից հետո մենք թուրքական զորքերը դուրս կբերենք Հայաստանի սահմաններից (ինչին թուրքերը կենթարկվեն անվերապահորեն) և հայերի ու թուրքերի միջև հետագա ամեն կարգի հնարավոր բախումները կանխելու համար մեր զորքերով կզբաղեցնենք հայ-թուրքական սահմանը: Այսպիսով, արևմտաեվրոպական պրոլետարիատի աչքին մենք կերևանք այն հաշտարարի արտակարգ ազնվաբարո դերում, որը դեպի Հայաստան է շարժվում միայն այն բանի համար, որ վերջ տա կոտորածին և հայ ժողովրդի մնացորդները փրկի վերջնական ոչնչացումից:

Վկայակոչված բոլոր նկատառումներից ամենագլխավորն այն է, որ պատերազմն անխուսափելի է, և եթե մենք չնախաձեռնենք հարձակումը Հայաստանի վրա, ապա երկու շաբաթ հետո նա նախահարձակ կլինի Խորհրդային Ադրբեջանի վրա, որը մեզ համար կնշանակի Բաքվի կորուստ:

Մերձավոր Արևելքում մեր դրությունն այժմ արդեն այնքան վատ է, որ մենք չենք կարող կանգնել տեղում, և որպեսզի հետ

չփախչենք, պետք է առաջ գնանք: Մենք պետք է անհապաղ շարժվենք, քանզի ևս մեկ ամսվա հապաղում, և հեղափոխությունն Արևելքում լիովին կձախողվի: Արևելքում հեղափոխությունը փրկելու համար անհրաժեշտ են խորհրդային զորքերի անհապաղ հարձակումը Հայաստանի վրա և Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը:

7. Արևելքի ժողովուրդների Խորհրդի Նախագահությունն իր սույն եզրակացությունը ներկայացնում է III Ինտերնացիոնալի Գործկոմի Նախագահությանը և ՌԿԿ-ի Կենտկոմին՝ պատճենը հաղորդելով ՌԽՖՍՀ արտգործժողկոմատին:

8. Սույն եզրակացությունը վերադաս կուսակցական մարմիններից դուրս ոչ մի հրապարակման ենթակա չէ»[1]:

Ինչպիսի՞ եզրակացությունների է հանգեցնում մեզ այս փաստաթուղթը.

1. Փաստաթղթի հեղինակները մարդիկ էին, որոնք քաջատեղյակ էին Ռուսաստանի, Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի ներքին ու արտաքին իրավիճակին և այդ երկրների ղեկավար գործիչների գրագրություններին:

2. Փաստաթուղթը կազմողները եղել են թուրքամետ խմբի ներկայացուցիչները: Նրանք հանձնարարություն են կատարել: Հանուն համաշխարհային հեղափոխության Թուրքիան պետք է փրկվեր, Հայաստանը զոհաբերվեր: Ռուսաստանի բոլշևիկյան իշխանության և պանթուրքիստների ծրագրերն այդ հարցում նույնանում էին:

3. Ադրբեջանի դեմ Անգլիայի, Պարսկաստանի, Հայաստանի և Վրաստանի միացյալ զինված ուժերի հարձակման, Կովկասում և Թուրքեստանում հակառուսական նոր ճակատի բացման առասպելը հորինվել էր միայն այն նպատակով, որպեսզի Ռուսաստանը՝ Բաքվի նավթը և Թուրքեստանի բամբակը կորցնելու վտանգից դրդված, համաձայնվի հայկական պետության ոչնչացման ծրագրի իրագործմանը: Ոչ մի իրական հիմք չունեցող այդ սադրիչ ծրագիրը հետապնդում էր միայն մեկ նպատակ, վախեցնել Ռուսաստանի ղեկավարությանը և հարկադրել ընդունելու առաջարկված ծրագիրը:

4. Փաստաթղթում առաջարկվում է Հայաստանի ոչնչացման մի ծրագիր, որը նախապես առաջ էր քաշվել Քեմալի և Կարաբե-

---

[1] РГАСПИ, ф. 64, оп. 2, д. 29, л. 58-62: ՀՀ Նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՆՊԿՊԱ), ֆ. 113, ց. 3, գ. 7, թ. 1-3: «Գրական թերթ», 8 հունիսի, 1990 թ.:

քիրի կողմից: Այդ ծրագիրն աստիճանաբար ընդունելի դարձավ նաև Ռուսաստանի համար և, ինչպես կտեսնենք, գրեթե անփոփոխ իրագործվեց:

Փաստաթուղթն ընդունվել էր սեպտեմբերի 17-ին և ուղարկվել Մոսկվա՝ հիշյալ երեք հասցեներով: Թուրքերն իրենց հարձակումը սկսեցին սեպտեմբերի 28-ին:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱՐԱՍՅԱՆ ԴԵՐՈՒՄ

Հայաստանի քաղաքական կուսակցությունները, ունենալով միջկուսակցական տարաձայնություններ, հայ պետականության պաշտպանության հարցում վարում էին միասնական քաղաքականություն: Պատերազմի վտանգը նրանց հարկադրում էր համախմբվել մի ճակատում՝ ընդդեմ Թուրքիայի, որովհետև ոչ մեկի համար գաղտնիք չէր, որ թուրքական հարձակումը բերելու է և՛ պետականության, և՛ ժողովրդի ոչնչացում: Հայ քաղաքական բոլոր կուսակցությունները, բացի բոլշևիկներից, իրենց հնարավորության սահմաններում պայքարում էին հայ պետականությունը և հայ ժողովուրդը թուրքական վտանգից փրկելու համար: Այս հարցում իր որոշակի դերն էր խաղում 1918 թվականի մայիսյան հերոսամարտերում կուսակցությունների ճիշտ դիրքորոշման դրական փորձը:

Սակայն Հայաստանի կոմունիստական կուսակցության ղեկավարությունը, որն այդ ժամանակ գտնվում էր Բաքվում, բոլորովին այլ դիրքորոշում ընդունեց: Չմոռանանք, որ կովկասյան մասշտաբի հայ գործիչները ևս (Նազարեթյան, Միկոյան, Միրզոյան և ուրիշներ) այդ ծանր տարիներին իրենց բախտը չկապեցին սեփական ժողովրդի ճակատագրի հետ: Ավելին, այդ մարդկանց կարիերան մշտապես ուղեկցվել է հայ ժողովրդի շահերի զոհաբերությամբ:

Արևելքի ժողովուրդների քարոզչության ու գործողության խորհրդի «Եզրակացության» ընդունումից երեք օր հետո, սեպտեմբերի 20-ին, Բաքվում, Հայաստանի կոմկուսի Կենտկոմը ընդունում է Հայաստանի կուսակցական կազմակերպություններին ուղղված «հույժ գաղտնի» որոշում, որն իր էությամբ ոչնչով չէր տարբերվում սեպտեմբերի 17-ի փաստաթղթից: Դա բնական է, որովհետև և՛ առաջին, և՛ երկրորդ փաստաթղթերը ստեղծվել են նույն կենտրոնի հանձնարարությամբ:

Փաստաթուղթը տալիս ենք ամբողջությամբ.

«Հայաստանի կոմունիստների (բոլշևիկների) կենտրոնական կոմիտեն հրահանգում է կուսակցության բոլոր կազմակերպություններին, թե՛ թիկունքում, թե՛ ռազմական գոտիներում և հատկապես Կարսի գարնիզոն մեկնող բոլշևիկներին, անհատ զինվորների շրջանում և առանձին հավաքույթներում, եթե հնարավոր է, ինչպես նաև թռուցիկների միջոցով ծավալել լայն պրոպագանդա ընդդեմ պատերազմի, հիմնական խնդիր դարձնելով՝

1. Թուրքիան այլևս նախկին Թուրքիան չէ և Հայաստանի նկատմամբ ագրեսիվ նպատակներ չունի:

2. Քեմալական Թուրքիան Խորհրդային Ռուսաստանի դաշնակիցն է և պայքարում է իր ազգային ազատության համար՝ ընդդեմ իմպերիալիզմի (Անգլիայի, Ֆրանսիայի և Հունաստանի):

3. Հանրապետական Հայաստանի հաղթանակը Թուրքիայի վրա՝ կնշանակի իմպերիալիզմի ուժեղացումը Մերձավոր Արևելքում և դրանով իսկ կվտանգի հեղափոխության հաղթանակը Անդրկովկասում, ապա նաև՝ Արևելքի խորհրդայնացումը:

4. Հայ բոլշևիկ կոմունիստների խնդիրը պետք է լինի՝ արագացնել հանրապետական Հայաստանի պարտությունը, որով և կարագացվի Հայաստանի խորհրդայնացումը:

Այս նպատակի համար պետք է.

1. Կազմալուծել հայկական կռվող բանակը բոլոր միջոցներով, այն է.

ա) կազմակերպել դասալքություն և ամեն կերպ խանգարել զորահավաքին,

բ) ռազմաճակատներում հասկացնել զինվորներին, որպեսզի նրանք չկրակեն առաջացող թուրքական զինվորների վրա, այլ լքելով դիրքերը վերադառնան թիկունք,

գ) չենթարկվել սպաների հրամաններին և հարկ եղած դեպքում ոչնչացնել նրանց:

2. Այս ամենի հետ ամենաէականն է հասկացնել հանրապետական Հայաստանի զինվորներին, որ հաղթող թուրքական ասքյարը հեղափոխական ասքյար է, որը ոչ միայն իրեն թույլ չի տա որևէ գործողություն պարտված երկրի վերաբերյալ, այլ կօժանդակի աշխատավոր հայ ժողովրդին ազատվելու իմպերիալիստական գործակալ դաշնակցականների տիրապետությունից:

3. Նորից ու նորից բացատրել, որ դաշնակցականների տիրապետությունից ազատվելով Հայաստանն ընդմիշտ կկապվի Խորհրդային Ռուսաստանի հետ, ընդմիշտ վերջ կտրվի պատե-

ռազմին և սովից ու մշտական ընդհարումներից քայքայված երկիրը կլիանա Ռուսաստանի հացով և մասնակիցը կդառնա համաշխարհային հեղափոխության մեծ գործին:

Ծանոթություն. «Գրությունը կարդալ սահմանափակ ժողովում և կարդալուց հետո անմիջապես այրել»[1]:

Այնուհետև հետևում են ՀԿԿ Կենտկոմի անդամների ազգանունները: Եթե սեպտեմբերի 17-ի փաստաթուղթը տեսականորեն է հիմնավորում Հայաստանի Հանրապետության ոչնչացման անհրաժեշտությունը, ապա սեպտեմբերի 20-ինը՝ այդ նպատակի իրականացման գործնական ուղիներն է նշում: Հայկոմկուսի Կենտկոմի հրահանգի առաջին չորս կետերը սեպտեմբերի 17-ի փաստաթղթի դրույթների վերաշարադրությունն են, մնացածը՝ դրանց իրականացման, գործադրման եղանակները:

Յուրաքանչյուր կուսակցություն ազատ է քարոզելու իր գաղափարախոսական դրույթները, կռիվ մղելու իր քաղաքական հակառակորդների դեմ և պայքարելու իշխանության համար: Այդ հարցերում հայ կոմունիստներին մեղադրել չի կարելի: Սակայն 1920 թ. դաժան պայմաններում, երբ թուրքերի հարձակումը հայ ժողովրդին և հայ պետականությանը կործանում էր բերում, նման որոշում ընդունելը համազոր էր ազգային դավաճանության:

Վերջին շրջանում որոշ կոմունիստ պատմաբաններ փորձում են կասկածի տակ առնել վերոշարադրյալ փաստաթղթի իսկությունը: Եվ դա հասկանալի է: Նման փաստաթուղթ ոչ մի կուսակցության պատիվ չի բերում: Սակայն հարցն այն է, որ հիշյալ հրահանգի իսկությունը հաստատվում է ոչ միայն սեպտեմբերի 17-ի «Եզրակացության» հետ համեմատությամբ, այլև հայկոմկուսի կողմից լույս աշխարհ բերված ուրիշ փաստաթղթերով:

Հոկտեմբերի 8-ին, պատերազմը սկսվելուց մի քանի օր հետո, Հայաստանի կոմկուսի Կենտկոմը հանդես է գալիս Հայաստանի բանվորներին, գյուղացիներին և զինվորներին ուղղված կոչով, որտեղ ասվում է. «Մենք դիմում ենք Հայաստանի բանվորագյուղացիական մասսաներին, նրանց հեղափոխական կորովին ու դասակարգային գիտակցությանը՝ կազմակերպվելու Կոմունիստական կուսակցության դրոշի շուրջը, հավաքելու ցրված հեղափոխական ուժերին, որպեսզի ձեռք-ձեռքի տված Խորհրդային Ռուսաստանի պրոլետարիատի հետ միահամուռ ուժերով խորտակենք միջազգային իմպերիալիզմի հայկական-դաշնակցական

[1] «Հայաստանի Հանրապետություն», 19 մարտի 1991 թ.:

հատվածի լուծը, նորից բարձրացնենք կոմունիզմի դրոշը Հայաստանում:

Կեցցե՛ Խորհրդային Հայաստանը:

Կեցցե՛ Արևելքի հեղափոխությունը:

Կեցցե՛ 3-րդ Ինտերնացիոնալը»[1]:

Այն ժամանակ, երբ Հայաստանի բոլոր քաղաքական կուսակցությունները, մի կողմ թողնելով տարաձայնությունները, համախմբվել էին Միջկուսակցական խորհրդում և գործադրում էին բոլոր ջանքերը հայ ժողովրդին և նորաստեղծ պետականությունը անխուսափելի կործանումից փրկելու համար, Հայկոմկուսը կոչ էր անում տապալել հայոց պետականությունը և ողջունում էր Արևելքի հեղափոխությունը, որի տակ այդ ժամանակ բոլշևիկները գլխավորապես նկատի ունեին քեմալական շարժումը: Իսկ այն հանգամանքը, որ սկսված պատերազմի պայմաններում հայ պետականության կործանումը կարող էր կենսագործվել միայն Հայաստանի Հանրապետության բանակի պարտության, թուրքերի կողմից գրավված շրջաններում հայ բնակչության եղեռնի ճանապարհով, Հայկոմկուսի Կենտկոմը հաշվի չէր առնում:

Հոկտեմբերի 8-ին Բաքվի «Կոմունիստ» թերթում հրապարակվում է մի կոչ ևս, որը մենք նպատակահարմար ենք գտնում ընթերցողին ներկայացնել ամբողջությամբ: Թերթը ձեռքի տակ չունենալու պատճառով հղումը կատարում ենք Վրացյանի «Հայաստանի Հանրապետություն» գրքից:

«Անդրկովկասի ու ամբողջ աշխարհի բանվորներին և գյուղացիներին, Կոմունիստական Ինտերնացիոնալին, Արհեստակցական Միությունների Միջազգային Խորհրդին և Գործունեության ու Պրոպագանդի Խորհրդին.

Ալեկոծվող Արևելքի սրտում, Անդրկովկասի ու ամբողջ աշխարհի բանվորագյուղացիական լայն զանգվածների համար աննկատելի կերպով, միջազգային իմպերիալիզմի գործակալների-դաշնակների ողորմելի ավազակների կառավարությունը զընդակահարում է Հայաստանի լավագույն զավակներին-կոմունիստական կուսակցության և արհեստակցական միության անդամներին: Հայաստանի բանտերը լի են կոմունիստներով և ապստամբված բանվորներով ու գյուղացիներով:

Լայն զանգվածների աչքում սնանկացած, բայց ազգայնական պատերազմների փորձով հմուտ «Դաշնակցություն» կուսակցությունը՝ ժամանակավոր հաղթություն տանելով ապստամբ բան-

[1] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան..., էջ 394-395:

վորագյուղացիական զանգվածների վրա, բռնություններ գործ դնելով մահմեդական խաղաղ զանգվածների դեմ, այժմ հաշիվ է տեսնում Հայաստանի ապստամբած բանվորների ու գյուղացիների և նրանց ղեկավարների՝ կոմունիստների հետ:

Հայաստանի կառավարությունը հաճեց նորից ու նորից տաքանալ արյունով՝ այս անգամ կռվելով նրանց դեմ, ովքեր ուզում էին բանվորագյուղացիական Հայաստանը խլել նրա արյունոտ ձեռքերից, որպեսզի հաղորդակից անեն նրան աշխատանքի և կապիտալի միջև մղվող մեծ կռվին:

Հայաստանի մռայլ ու խոնավ բանտերը, որոնք ոչ քիչ կյանքեր խլեցին արյունալի ցարի օրով, վերածվել են կառավարական տաճարների, ուր մաուզերիստները արյունալի խնջույքներ են սարքում Հայաստանի կոմունիստների նկատմամբ: Հայաստանի ներսում կոմունիստական բանվորական շարժումը հաղթահարելով միայն ***դաշնակները կարողացան Հայաստանը վերածել իմպերիալիստների համար հուսալի մի հենարանի՝ Արևելքի հեղափոխության դեմ կռվելու համար*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.):

Այն ժամանակ, երբ ամբողջ Արևելքը բռնված է ապստամբության բոցով, երբ Արևելքի ժողովուրդների համագումարը երդվեցնում էր արևելյան ժողովուրդներին ոտքի կանգնելու Կոմունիստական Ինտերնացիոնալի դրոշակի տակ, միջազգային իմպերիալիզմի դեմ, վերջին վճռական կռիվը մղելու համար, այդ ժամանակ Հայաստանի սպիտակ ավազակային կառավարությունը, հրով ու սրով չափելով ամբողջ հեղափոխական Հայաստանը, քայքայելով բոլոր բանվորական արհեստակցական կազմակերպությունները, անգլո-ամերիկյան իմպերիալիստների հետ միասին նոր Գողգոթա է պատրաստում Արևելքի հեղափոխական զանգվածներին:

Սակայն, ո՛չ կոմունիստական շարժումը Հայաստանում, ո՛չ էլ, մանավանդ, Արևելքի ժողովուրդների հեղափոխական շարժումը ոչ մի րոպե չեն կասեցնի իրենց հաղթական արշավը: Ընդհակառակը, արհեստով դահիճների ձեռքով ընկած ընկերներ Ալլահվերդովի, Ղարիբջանովի, Ղուկասի և ուրիշ շատ շատերի մահը, տասնյակ ու հարյուրավոր ապստամբների մահացումը Հայաստանի խուլ ձորերում, լավագույն ապացույցն է, որ «խաղաղեցված» Հայաստանը իր մեջ թաքցնում է ներքին հեղափոխական ուժ, որ որոշ պատմական րոպեին դարձյալ կռիվ կսկսի, որպեսզի երկրի երեսից վերացնի պատմության ընթացքը հրով ու սրով կասեցնել ձգտողներին:

Մենք ուխտել ենք տալիս Հայաստանի արյունաքամ եղած

բանվորագյուղացիական զանգվածներին՝ չենթարկվել ավազակային խմբերի ցածրոգի պրովոկացիային, այլ համառորեն ու համբերությամբ հավաքել իրենց ցան ու ցիր եղած ուժերը իրենց դասակարգային մարմինների շուրջը, արթուն ունկնդրել կոմունիստական կուսակցության ձայնին, որի լավագույն անդամները իրենց հերոսական մահով բացին ազատագրման ճամփան:

Մենք դիմում ենք Խորհրդային Ադրբեջանի բոլոր բանվորական կազմակերպություններին, Կոմունիստական Ինտերնացիոնալին, Գործունեության ու Պրոպագանդի Խորհրդին և Արհեստակցական Միությունների Միջազգային Խորհրդին՝ մեզ հետ միասին բողոքի ձայն բարձրացնելու Հայաստանում իշխող սպիտակ տեռորի դեմ:

Թող իմանան դեղին Ինտերնացիոնալի սոցիալ-դավաճանները, որոնք Թիֆլիս եկան և սրտազեղ ընդունելություն գտան իրենց բարեկամների-դաշնակների ու մենշևիկների կողմից, որ այդ երկրների երևութական բարօրությունն ու անդորրությունը պահվում է ահաբեկումով ու հեղափոխականների դաժան սպանումով, Հայաստանի խոնավ բանտերում, կալանավորված հարյուրավոր բանվորների ու գյուղացիների տառապանքներով ու քաղցով:

Մա՛հ Հայաստանի բանվորների ու գյուղացիների վրա բռնություն կատարողներին:

Կեցցե՛ հեղափոխական Արևելքը:

Կեցցե՛ Ինտերնացիոնալը:

Հայաստանի Կոմունիստ. Կուսակց. Կենտր. Կոմիտե:

Ադրբեջանի Արհեստ. Միությունների Խորհրդին կից գտնվող Արհեստակցական Միությունների Արևելյան բյուրո: Նախագահություն Ադրբեջանի Արհեստակցական Միությունների Խորհրդի»[1]:

Այս փաստաթուղթն ընթերցելիս աչքի է զարնում հետևյալը.

Նախ՝ այն ուղղված է նաև Գործունեության և Պրոպագանդայի Խորհրդին (պետք է լինի՝ Արևելքի ժողովուրդների քարոզչության ու գործողության խորհուրդ), այսինքն՝ այն մարմնին, որը կազմել էր հայ պետականության ոչնչացմանը նպատակաուղղված սեպտեմբերի 17-ի փաստաթուղթը:

Երկրորդ. Հայկոմկուսի վերը բերված երկու որոշումներն էլ ընդունվել են այն ժամանակ, երբ թուրքերն արդեն սկսել էին հարձակումը, հայկական բանակը նահանջում էր, և թուրքերի

[1] **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, էջ 474-475:

առաջխաղացումն ուղեկցվում էր հայ բնակչության կոտորածներով: Հայկոմկուսի հիշյալ երկու որոշումներում էլ այդ մասին լռություն է պահպանվում: Ստեղծվում է այնպիսի տպավորություն, թե Հայկոմկուսը հայերից չէր բաղկացած, թուրքերը Հայաստանի տարածքները չէին գրավում և հայ բնակչությանը չէին կոտորում: Ասենք, տարածքի հարցում այդ տարիներին Բաքվում գործող հայ ղեկավար բոլշևիկների դիրքորոշումն արդեն հայտնի էր, քանի որ նրանք մեկ անգամ չէ, որ ստորագրել էին թուրքամետ խմբի Մոսկվա ուղարկած հեռագրերը՝ Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Ադրբեջանին տալու պահանջով:

Երրորդ. երկու փաստաթղթերն էլ ավարտվում են նույն կարգախոսերով՝ «Մահ դաշնակցությանը», «Կեցցե՛ հեղափոխական Արևելքը, այսինքն՝ Թուրքիան», «Կեցցե՛ Կոմինտերնը»:

Այդ բոլորը արդյունք է այն բանի, որ Հայկոմկուսն իր հրահանգները ստանում էր Մոսկվայից, միաժամանակ նա հաշվի էր առնում նաև Ադրբեջանի ղեկավարության կարծիքը: Ավելի որոշակի՝ Հայկոմկուսը գործում էր թուրքամետ խմբի հրահանգներով: Այդ է պատճառը, որ վերը բերված բոլոր փաստաթղթերը գրեթե նույն բովանդակությունն ունեն. մի կողմում հեղափոխական Թուրքիան է, մյուս կողմում՝ հակահեղափոխական, իմպերիալիստական Հայաստանը, առաջինը փրկելու համար երկրորդը պետք է զոհաբերվեր: Տարբերությունն այն է, որ Հայկոմկուսը «զոհաբերել» բառի փոխարեն օգտագործում էր «խորհրդայնացում» բառը:

Հայկոմկուսի Կենտկոմի նման դիրքորոշման կապակցությամբ առաջանում է հետևյալ հարցը, իսկ Հայաստանում գործող բոլոր հայ բոլշևիկները անվերապահորեն կկատարեին արդյո՞ք այդ որոշումը: Եթե հիմք ընդունենք փաստաթուղթը, ապա կարող ենք ասել, որ Կենտկոմի այդ դիրքորոշումը պաշտոնապես պաշտպանել և իրագործել է միայն Կոմկուսի Ալեքսանդրապոլի գավառային կոմիտեն, իսկ Հայաստանի մյուս շրջաններում խոսք կարող է գնալ միայն առանձին կոմունիստների մասին: Պետք է նկատել նաև, որ Հայկոմկուսն այդ ժամանակ չափազանց թույլ էր, փոքրաքանակ և իր հետևից լայն ժողովրդական զանգվածներ չէր տանում:

Սկսված պատերազմի պայմաններում Ալեքսանդրապոլի գավառային կոմիտեն հանդես է գալիս հետևյալ կոչով՝ ուղղված զինվորներին, գյուղացիներին և գաղթականներին.

«Դաշնակցական խայտառակ կառավարության խմբապետնե-

րից կազմված զորքը նահանջում է Քեմալի զորքերի ահավոր հարձակումից: Բավական չէ, որ նրանք թալանի և կողոպուտի մատնեցին ժողովրդի հարստությունները, բավական չէ, որ նրանք հայ աշխատավոր ժողովրդի գլխին չարիք դարձան, այժմ էլ խաբում են ձեզ, գյուղացիներ և զինվորներ, ասելով որ՝ գալիս են թուրքերը հայ աշխատավորությանը թալանելու և կոտորելու: Մենք կոչ ենք անում ձեզ չհավատալ Դաշնակցականների հազարավոր ստերին, որովհետև եկողները ոչ թե թալանի ավազակներ են, այլ հայ գյուղացիների, զինվորների և բանվորների ընկերներ՝ թուրք աշխատավորներն են: Նրանք գալիս են ոչ թե ձեզ կոտորելու, այլ թալանչի Դաշնակների ձեռքից ազատելու: Դուք լավ հավատացեք, որ Կարսում, Ալեքսանդրապոլում, գրավված մյուս տեղերում նրանք ոչ թալանել են և ոչ էլ կոտորել, այլ հաստատել են բանվորագյուղացիական կարգ ու կանոն:

Եկողները ոչ թե թշնամիներ են ձեզ, այլ՝ դաշնակների կառավարության: Ուստի նորից կոչ ենք անում ձեզ տեղերից չշարժվել, մնալ հանգիստ, չգաղթել, որովհետև դուք սոված ու մերկ կկոտորվեք ու կոչնչանաք: Այժմ դուք բոլորովին երես դարձրեք Դաշնակցականներից, որոնք շարունակ խաբել ու ծծել են ձեր արյունը, կոտորելով հայ երիտասարդներին, սարքելով ազգամիջյան կռիվներ: Կոչ ենք անում բոլորիդ այժմ հավաքվելու բոլշևիկների դրոշակի տակ, որոնք միայն կարող են ձեզ փրկել այս ծանր դրությունից: Ուրեմն ընկերներ, խելքի եկեք, բանվորագյուղացիական իշխանություն հայտարարելու համար, որովհետև այդ է պահանջում ներկա ժամանակը և դրանումն է միակ փրկությունը»: Կոմունիստական (Բոլշևիկների) Կուսակցության Ալեքսանդրապոլի Գավառի Կոմիտե[1]:

Այս կոչը հրապարակվել է այն ժամանակ, երբ թուրքական զորքերը, կոտորելով և թալանելով բազմահազար հայերի, արդեն մտել էին Ալեքսանդրապոլ: Թուրքիան սկսել էր կենսագործել Հայաստանի Հանրապետության հայ բնակչության եղեռնի իր վաղեմի ծրագիրը: Նման պայմաններում այսպիսի կոչ կարող էին գրել ազգային նկարագրից բոլորովին զուրկ, բարոյական նորմեր չունեցող մարդիկ միայն:

Ահա թե ինչու, մտնելով Ալեքսանդրապոլ, թուրքերը, ինչպես գրում է Լեգրանը, տեղի բոլշևիկներից ստեղծում են, այսպես կոչ-

[1] **Գաբրիել Լազյան**, նշվ. աշխ., էջ 261-262:

ված, Հայաստանի Հեղկոմ[1]:

Ալեքսանդրապոլի բոլշևիկների խայտառակ գործունեությունը՝ մասնավորապես վերոհիշյալ կոչը նկատի ունենալով, Լեգրանը նոյեմբերի 28-ին Չիչերինին գրում է.

«Հայաստանի դեմ ամեն մի պատերազմ, Կարաբեքիրի զորքերի հարձակում՝ որպես հեղափոխական և կոմունիստական կուսակցության ու խորհրդային իշխանության կողմից բազմակողմանի աջակցության արժանի ակտ դիտելը լավ բան է համարվում: Անգամ Ալեքսանդրապոլի հայ կոմունիստները բաց են թողել թռուցիկ, ողջունելով թուրքական հեղափոխական զորքերի հարձակումը, որոնք գնում են հայ ժողովրդին դաշնակցականներից ազատագրելու և բանվորագյուղացիական կարգեր հաստատելու...»[2]:

Հայ կոմունիստների և Հեղկոմի գործունեության մանրամասն շարադրանքը թողնում ենք աշխատության հաջորդ գլուխներին: Ամփոփենք վերը բերված նյութերը. պատերազմի նախօրյակին թուրքամետ խումբը լիովին հասել էր իր նպատակին: Հայկոմկուսը լծվել էր այդ խմբի հակահայկական քաղաքականության կառքին:

Հայ ժողովրդի պատմության այս օրհասական ժամանակահատվածում հայ բոլշևիկները ոչ միայն պառակտեցին ժողովրդի միասնությունը, հանդես եկան հակապետական ապստամբությամբ, այլև աջակցեցին Ռուսաստանի և Թուրքիայի նվաճողական քաղաքականությանը: Հայ բոլշևիկները աջակցեցին ռուսական բոլշևիկյան կայսրությանը՝ կործանելու դժվարությամբ ձեռք բերված հայկական պետականությունը և խորհրդայնացնելու Հայաստանը: Հայ բոլշևիկները ողջունեցին նաև թուրքական զորքերի մուտքը Հայաստան, աջակցեցին նրանց: Ինչպիսի կարգախոսներով էլ պարուրվի բոլշևիկների քաղաքականությունը, միևնույն է, այն միանշանակ կարող է գնահատվել որպես ազգային դավաճանություն:

Վերը շարադրվածից անխուսափելիորեն առաջանում է այն կարևոր հարցադրումը, թե Հայկոմկուսի նման դիրքորոշումը կարո՞ղ էր արդյոք բախտորոշ նշանակություն ունենալ սկսվող թուրք-հայկական պատերազմում: Նկատի ունենալով, որ Հայկոմկուսն այդ ժամանակ փոքրաքանակ էր, առաջատար կուսակ-

[1] РГАСПИ, ф.64, оп. 1, д. 21, л. 255-256, 259.
[2] Նույն տեղում, թ. 253-254:

ցությունների թվին չէր պատկանում, իր հետևից լայն ժողովրդական զանգվածներ չէր տանում, գալիս ենք այն եզրահանգման, որ սկսվող պատերազմում այդ գործոնն անպայման որոշ ազդեցություն կունենար, բայց վճռորոշ դեր խաղալ չէր կարող: Վերջին հանգամանքն ամենևին չի թեթևացնում հայ բոլշևիկների մեղքը սեփական ժողովրդի նկատմամբ:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

1. ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ

1920 թ. սեպտեմբերի 26-ին Կարաբեքիրը հետևյալ ծածկագիրն է ուղարկում Քեմալին. «Սեպտեմբերի 28-ի առավոտյան հարձակման եմ անցնելու հայկական բանակի դեմ: Մեր պատրաստությունները լրիվ են: Կամոքն աստծո, այն պատերազմը, որին ձեռնարկում ենք մեր գոյության պաշտպանության համար, վստահ եմ, կավարտվի մեր հաղթանակով: Աղոթեցեք մեզ համար»[1]:

Սեպտեմբերի 27-ին Քեմալի առաջարկով հրավիրվեց Ազգային մեծ ժողովի փակ նիստ, որտեղ նա հայտարարեց, «Էֆենդիներ, պատիվ ունեմ բարձրագույն ժողովիդ հաղորդելու այն լուրը, որին երկար ժամանակ է, ինչ սպասում էինք: Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախահարձակման պատրաստ բանակները Հայկական պետությանը և բանակին իրենց չափը ճանաչեցնելու վճռականությամբ, կամոքն աստծո, վաղն առավոտյան լուսաբացին անցնելու են հարձակման»[2]:

Սեպտեմբերի 28-ին Թուրքիան առանց պատերազմ հայտարարելու հարձակվեց Հայաստանի վրա: Սկսվեց թուրք-հայկական պատերազմը: Հայկական բանակը պատերազմի հենց առաջին օրերից դրսևորեց լուրջ պատերազմ մղելու անընդունակություն: Թուրքական բանակը սեպտեմբերի 29-ին գրավեց Սարիղամիշը, իսկ 30-ին՝ Մերդենեկը և Կաղզվանը: Բանակը խուճապի մեջ էր: Այդ տարածքների մեծ մասը թշնամին գրավեց առանց կրակոցի: Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ թուրք-հայկական պատերազմը, ինչպես տեսանք նախորդ գլուխներում, սկսվել էր ավելի վաղ, հունիս ամսից: Սակայն այդ ժամանակահատվածում պատերազմն ուներ սահմանային ընդհարումների և առանձին բնակավայրերի ու ռազմավա-

---

[1] **Cemal Kutay**, նշվ. աշխ., էջ 38-39:
[2] Նույն տեղում, էջ 40:

ական դիրքերի համար մղվող սահմանափակ մարտերի բնույթ: Այդ շրջանում Թուրքիան հետապնդում էր մասնակի նպատակներ: Սեպտեմբերի 28-ին թուրքական հարձակումը Հայաստանի վրա լայնածավալ պատերազմի սկիզբն էր նշանավորում, որը նպատակ էր հետապնդում ոչնչացնել նորաստեղծ հայ պետությունը և նրա հայ բնակչությանը:

Սեպտեմբերի 28-30-ի ռազմական անհաջողություններից հետո «Հայաստանի զորքերը,– գրում է Կ. Սասունին,– թողնելով սահմանային հեռավոր կետերը, կենտրոնացան Կարսի և անկե 20 կիլոմետր հեռու գտնվող և զինվորական նշանակություն ունեցող բարձրունքներու վրա»[1]:

Թուրքական զորքերը, գրավելով հիշյալ շրջանները, Քեմալի հրամանով դադարեցրին հարձակումը: Քեմալն այդ մասին գրում է. «Սեպտեմբերի 29-ին բանակը մտավ Սարիղամիշ: Մերդենեկը գրավվեց սեպտեմբերի 30-ին: Բայց որոշ նկատառումներով բանակը մեկ ամիս, այսինքն մինչև 1920 թվականի հոկտեմբերի 30-ը մնաց Սարիղամիշ-Լալաօղլի գծում»[2]: Ամրանալով այդ գծում, թուրքական բանակը, Քեմալի տեղեկության համաձայն, սպասում էր հետագա հրամանների:

Թուրքական զորքերի հարձակման ժամանակավոր դադարն ուներ մի քանի պատճառներ: Սակայն դրանցից հիմնականն այն էր, որ Քեմալը ժամանակ էր շահում՝ սպասելով Ռուսաստանի վերաբերմունքին: Չէ՞ որ թուրքական զորքերը անցել էին պայմանավորված սահմանը և գրավել չնախատեսված տարածքներ: Մյուս կողմից, հենվելով ռազմական հաջողությունների վրա, գրավելով հայկական նոր տարածքներ, պարտության մատնելով Հայաստանի բանակին, Քեմալը հնարավորություն էր ստանում ավելի հաստատակամորեն հրաժարվելու Վանի և Բիթլիսի վիլայեթներից Հայաստանի Հանրապետությանը որոշ տարածքներ տրամադրելուց, որը, ինչպես տեսանք, Ռուսաստանի արտգործժողկոմատի հիմնական պահանջներից մեկն էր այդ ժամանակաշրջանում:

Ջեմալ Քութայը թուրքական բանակի եռօրյա հաղթանակների նշանակությունը հետևյալ կերպ է բնութագրում. «Կարաբեքիրի ուժերն ավելի մեծաթիվ էին, քան նախատեսել էր թշնամին: Լավ զինված էին: Բավականաչափ փոխադրամիջոցներ ունեին, բա-

---

[1] **Կ. Սասունի**, Հայ-թրքական պատերազմը (1920-ին), Պէյրութ, 1969, էջ 50:
[2] **Мустафа Кемаль**, նշվ. աշխ., հ. III, էջ 118:

ռոյականն էլ բարձր էր: Կատարյալ ղեկավարության տեր էին: ***Վաթսուն ժամ, այո, վաթսուն ժամը բավել էր սրբել, ջնջելու համար «Մեծ Հայաստանի» պատրանքը***» (ընդգծումը մերն է – Լ. Խ.)[1]: Սակայն, Թուրքիան մտադիր չէր սահմանափակվել ձեռք բերածով: Ստեղծվել էին բարենպաստ պայմաններ Հայաստանը նվաճելու համար:

Սկսված պատերազմում, որի առաջին փուլն ըստ էության ուժերի հետախուզման բնույթ ու նպատակ ուներ, ձեռք բերելով առաջին լուրջ հաջողությունները, Քեմալը հոկտեմբերի 6-ին Մոսկվա՝ Բեքիր Սամի բեյին է ուղարկում հետևյալ հեռագիրը.

«Հակառակ Հայաստանի դաշնակ կառավարության և նրան ենթարկվող հրոսախմբերի կողմից թե իրենց քաղաքացի և թե մեր հողերի վրա գտնվող իսլամ բնակչության հանդեպ գործադրված բռնություններին, մեր կողմ ապաստանած գաղթականների թշվառությանը և մեր փոքր ջոկատների դեմ կատարած տնական հարձակումներին, որոնք խիստ հուզման էին մատնում մեր մասնավորապես սահմանամերձ բնակչությանը, Մոսկվայի կառավարության պահանջի և պնդումների պատճառով հրաժարվել էինք ամառվա ընթացքում նրանց դեմ պատժական շարժում կատարելուց: Սակայն դաշնակները՝ չհրաժարվելով Համաձայնության տերությունների սադրանքների գործիք դառնալուց՝ արևմուտքում հույներին օգնություն ընձեռելու, արևելյան ճակատի մեր բանակը ուրիշ գոտիներում գործածելի չդարձնելու նպատակով մեր դեմ շարունակաբար հարձակումների մեջ են գտնվում և խուսափում մեզ հետ հաշտություն կնքելուց: Հենվելով Սևրում Ստամբուլի կառավարության ստորագրած դաշինքի տրամադրությունների վրա, նրանք առիթ են փնտրում գրավելու մեր արևելյան նահանգները, այս կերպով Համաձայնության պետությունների ազդեցության ու հովանավորության տակ... ստեղծելով մի մեծ զանգված, որը կոչված է Թուրքիայի դեմ Կովկասում, Արևելյան Անատոլիայում և Իրանում խաղալ այն դերը, ինչը Հունաստանը՝ Ռումելիայում (Եվրոպական Թուրքիա – Լ. Խ.) և Արևմտյան Անատոլիայում, ***ուստի Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը պարտավորված է դեռ բոլորովին ձմեռը չհասած մի դաս տալ դաշնակներին և ոչնչացնել նրանց նվաճողական հույսերը:***

Մենք հույս ունենք, որ դաշնակների պարտությունից հետո

[1] **Cemal Kutay**, նշվ. աշխ., էջ 43:

հայ ազգը նահանջելու է դեպի բանականության սահմանները, և Հայաստանում գործի գլուխ է գալու ժամանակների պահանջները և Խորհրդային Ռուսաստանի ու Թուրքիայի միջև եղած հարաբերությունները գիտակցող մի կառավարություն. այս խնդրում սպասում ենք նաև Մոսկվայի կառավարության աջակցությունը» (ընդգծումը մերն է – Լ. Խ.)[1]:

Այս փաստաթուղթը չափազանց հետաքրքիր է Թուրքիայի և Ռուսաստանի հետագա քաղաքականության ուսումնասիրության տեսանկյունից:

Քեմալն այդ փաստաթղթում առաջ է քաշում մի քանի կարևոր հարցեր, որոնք նա պետք է լուծեր բոլշևիկյան Ռուսաստանի համաձայնությամբ և աջակցությամբ:

Հեռագրում բարձրացված հարցերից կարևոր են հետևյալները.

1. Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը որոշել էր դեռ ձմեռը չհասած դաս տալ դաշնակցությանը և «ոչնչացնել նրանց նվաճողական հույսերը»: Եթե նկատի ունենանք, որ այս հեռագիրը տրվել է հոկտեմբերի 6-ին, ապա պարզ կդառնա, որ Քեմալի համար սեպտեմբերի 28-30-ի ռազմական գործողություններն ունեին լոկ հետախուզական և դիվանագիտական նշանակություն՝ հայկական բանակի մարտունակությունը և ռուսական դիվանագիտության վերաբերմունքը պարզելու համար: Հասկանալի է, որ Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը Սևրից կարող էր հրաժարվել միայն ջախջախիչ պարտությունից հետո: Իսկ հոկտեմբերի 6-ին այդպիսի պարտություն հայկական բանակը դեռ չէր կրել:

2. Քեմալական Թուրքիան որոշել էր պարտության մատնել հայկական բանակը, փոխել Հայաստանի կառավարությունը: Ընդ որում, Հայաստանում իշխանության գլուխ պետք է գար մի այնպիսի կառավարություն, որը գործեր «բանականության» սահմաններում և գիտակցեր Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերությունների կարևորությունը: Հայաստանում նման դեր կարող էր կատարել միայն բոլշևիկյան կառավարությունը, այն էլ, հասկանալի է, խորհրդայնացված Հայաստանում:

3. Թուրքիան իր վրա վերցնելով Հայաստանին պարտության մատնելու խնդիրը, միաժամանակ, խնդրում էր Ռուսաստանի կառավարությունից աջակցել իրեն այդ երկրում վերոհիշյալ խնդիրները կատարող, հեզ ու հլու կառավարություն ստեղծելու գործում:

---

[1] **Ali Fuat Cebesoy,** նշվ. աշխ., էջ 92-93:

Հղելով այս հեռագիրը, Քեմալը սպասում էր Ռուսաստանի առաջարկներին: Հասկանալի է, որ Թուրքիան ռազմաքաղաքական բարդ իրավիճակի պատճառով երբեք չպիտի համարձակվեր լայնածավալ պատերազմ սկսել Հայաստանի Հանրապետության դեմ, առանց նախապես փոխհամաձայնության գալու Ռուսաստանի հետ:

Բայց, մինչ այդ, տեղի էին ունենում իրադարձություններ, որոնց քննարկումը անհրաժեշտ է հիմնահարցը բազմակողմանիորեն ուսումնասիրելու տեսանկյունից:

Համոզվելով, որ պաշտոնական Ռուսաստանը, Թուրքիայի կողմից հայկական տարածքների գրավման կապակցությամբ բավարարվում է լոկ դիվանագիտական հայտարարություններով, որ գրեթե նույնանման դիրք են գրավում նաև Արևմտյան տերությունները, Քեմալը վճռականորեն մերժում է Վանի և Բիթլիսի վիլայեթներից Հայաստանի Հանրապետությանը որոշ տարածքներ տալու Չիչերինի պահանջը և որոշում շարունակել սկսված պատերազմը:

Իրավիճակը Թուրքիայի համար բարենպաստ էր: Հայկական բանակը մարտունակ չէր, ինչը լիովին բացահայտվեց պատերազմի առաջին օրերին: Արևմտյան տերությունները, որոնք իրենց ծրագրերը ցանկանում էին իրականացնել հայկական բանակի միջոցով, համոզվելով վերջինիս անմարտունակության մեջ, ձեռք քաշեցին Հայաստանից և սկսեցին ուղիներ որոնել Թուրքիայի հետ լեզու գտնելու համար: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա վերջինս, իր հերթին, տեսնելով Արևմուտքի գործոնի բացակայությունը Հայաստանի ճակատագրի հարցում և հայկական բանակի անմարտունակությունը, որոշում է Թուրքիային թույլ տալ շարունակելու պատերազմը, նրան որպես վարձատրություն թողնել Կարսի ու Արդահանի շրջանները, ռազմական գործողությունների ծանր պայմաններում հանդես գալ «ազատարարի» դերում, գրավել և խորհրդայնացնել Հայաստանը: Ռուսաստանը սպասում էր Հայաստան մտնելու հարմար պահի, իսկ այդ պահը պետք է ստեղծեր Թուրքիան:

Քեմալականները շատ լավ էին հասկանում, թե ինչպիսի հեռագնա նպատակներ է հետապնդում Ռուսաստանը: Քութայը գրում է. «Մոսկվայի միակ ցանկությունն այն էր, որ Հայաստանը «ծնկի գա» և «հանձնվի» իրեն: Թուրքական հաղթանակն այս առիթը տվել էր նրան: Նրանք, յուրահատուկ խորամանկությամբ և կեղծավորությամբ, կարողացան օգտվել այս առիթից»[1]:

---

[1] **Cemal Kutay**, նշվ. աշխ., էջ 46:

* *
*

Այժմ փաստաթղթերի հիման վրա հետազոտենք Ռուսաստանի քաղաքականությունը թուրք-հայկական պատերազմի ժամանակ: Ընդհանուր պատկեր ստանալու համար մեր ձեռքի տակ եղած նյութերը շարադրում ենք ըստ օրերի:

Սեպտեմբերի 29-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը քննարկում է երկու հարց (9-րդ և 25-րդ), որոնք անմիջականորեն վերաբերում են մեր կողմից քննարկվող նյութին: Օրակարգի 9-րդ հարցը վերնագրված էր. «Արևելյան գործերի մասին»: Հրատարակված տեքստից միայն իմանում ենք, որ ընդունվել է հետևյալ որոշումը.

«9. ա) Անհրաժեշտ համարել 11-րդ բանակի համալրումը և ուժեղացումը:

բ) Դրամով և զենքով փաստական օգնություն ցույց տալ քեմալականներին:

գ) Ադրբեջանի հետ պայմանագիրը հաստատել»[1]:

ՌԿ(բ)Կ Կենտկոմի սույն որոշումը խիստ հետևողական է, եթե ելնենք Ռուսաստանի՝ Անդրկովկասի և Թուրքիայի նկատմամբ վարվող քաղաքականության իրականացման խնդիրներից: Հայաստանը ծնկի բերելու համար անհրաժեշտ էր երկու կողմից հարձակվել նրա վրա: Թուրքիայի հարձակման պայմաններում համալրված և ուժեղացած 11-րդ բանակը պետք է պատրաստ լիներ հարմար պահին ներխուժելու Հայաստան: Թուրքիան Հայաստանը ծնկի բերելու, նրա խորհրդայնացման պայմաններ ստեղծելու համար պետք է վարձատրվեր Ռուսաստանի կողմից: Այդ վարձատրությունը կատարվում էր ոսկով, զենքով, զինամթերքով և տարածքային զիջումներով: Այդ բոլոր հարցերը սկզբունքորեն լուծված էին: Պլենումի օրակարգի 25-րդ հարցը վերնագրված է. «Ընկ. ընկ. Չիչերինի, Էլիավայի և Կիրովի առաջարկը Հայաստանի հետ բանակցությունների կապակցությամբ»: Այդ հարցի կապակցությամբ Կենտկոմի պլենումը որոշում է. «Ընկ. ընկ. Չիչերինի, Էլիավայի և Կիրովի առաջարկին հավանություն տալ»[2]:

Քանի որ հիշյալ գործիչների առաջարկը հրատարակված չէ, ձեռնպահ ենք մնում այդ հարցի շուրջ ենթադրություններ անելուց, հուսալով, որ ընթերցողը մեր կողմից բերվելիք հետագա նյութերում կգտնի այդ խնդրի պատասխանը:

---

[1] "Известия ЦК КПСС", 1991, N 4, с. 152.

[2] Նույն տեղում, էջ 154:

Սեպտեմբերի 29-ին Լեգրանն անհանգստացած հեռագրում է Չիչերինին.

«Թուրքերը Կարսի ճակատում հարձակում են սկսել, գրավել են Սարիղամիշը: Անմիջապես անհրաժեշտ է խորհրդային կառավարության վճռական դիմումը՝ թուրքերի հարձակումը կանգնեցնելու նպատակով, հակառակ դեպքում մեր վիճակը դառնում է երկիմաստ: Թուրքերի վրա հաջող ազդեցություն ունենալու, նրանց կողմից սկսված ռազմական գործողությունները դադարեցնելու դեպքում, Հայաստանի հետ մեր խնդիրների խաղաղ լուծման հավանականությունը բավականին մեծանում է: Վճռականորեն խնդրում եմ Ձեր կողմից ձեռնարկված քայլերի մասին առանց հապաղման հայտնել ինձ»[1]:

Նույն օրը Չիչերինը հեռագրում է Լեգրանին. «Շահթախտ-Ջուլֆա երկաթուղին թուրք ապստամբների ձեռքում է: Մենք այն չենք գրավի, հայերի համար դրա հետ նվաճումը մեր գործը չէ: Պայմանագիրը մեզանից պատերազմ չի պահանջում թուրքերի դեմ: Քանի որ երկաթուղին մենք չենք գրավում, մենք լվանում ենք մեր ձեռքերը: Անկախ հաջողության հավանականությունից, Հայաստանի վրայով տրանզիտի հարց բարձրացրեք: Վիճելի տարածքները դեռ պետք է մնան մեր ռազմակալման տակ, առանց մեկ կամ մյուս կողմին հանձնելու»[2]:

Եվ այսպես, խաղաքարտերը բացվեցին: Հաղթանակեց Լենին-Չիչերին տեսակետը, թուրքերը Ռուսաստանի համաձայնությամբ գրավեցին երկաթուղու Շահթախտ-Ջուլֆա հատվածը: Չիչերինը Լեգրանին պաշտոնապես հայտնում է, որ Ռուսաստանը հետ չի գրավելու այդ տարածքները:

Սկսված թուրք-հայկական պատերազմի պայմաններում Ռուսաստանի քաղաքականության մասին որոշակի հրահանգները Չիչերինը Լեգրանին է ուղարկում հոկտեմբերի 2-ի հեռագրով, որը ներկայացնում ենք առանց կրճատումների. «Այս անգամ Տեր-Գաբրիելյանի հետ ուղիղ գծով ունեցած խոսակցությունը չէր կարող անմիջապես ցանկալի արդյունքներ տալ, որովհետև նրա կողմից առաջ էր քաշվել չափազանց բարդ հարց: Եթե Դուք հիշեք, թե վիճելի տարածքների հարցը ինչպիսի ողբերգություն առաջացրեց Բաքվում, Դուք կհասկանաք, որ չէր կարելի հինգ րոպեում պատասխանել վիճելի տարածքները, մասնավորապես,

[1] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 149.
[2] Նույն տեղում, թ. 172:

Զանգեզուրն ու Նախիջևանը Հայաստանին տալու հարցին: Ադրբեջանում տիրապետում է այն տրամադրությունը, որ այդ տարածքները Հայաստանին հանձնելը կարող է հանգեցնել որևէ աղետի: Ստիպված էինք օրեր շարունակ, երկար ու հոգնեցուցիչ քննարկել այդ հարցը, ընդ որում, այստեղ եկանք այն բացարձակ որոշակի եզրակացությանը, որ ներկայումս հնարավորություն չկա վիճելի տարածքները Հայաստանին հանձնել և, ընդհանրապես, այդ հարցը պետք է մնա բաց: Հայաստանի վրայով զինամթերքի տրանզիտի հասնելու Ձեր հույսերը Կովկասը իմացող բոլոր ընկերները բացարձակ պատրանքային են գտնում: Հնարավոր է խոսքով դաշնակները համաձայնություն կտան, բայց կասկած չկա, որ դա ծուղակ է: Նրանք կկարողանան այնպես անել, որ այդ տրանզիտը չիրականանա: Ընդհանրապես, այստեղ բավականին տեղեկություններ կան Անտանտի կողմից Հայաստան ուղարկվող բավականին մեծ քանակով զենքի և զինամթերքի մասին: Անտանտը Հայաստանն իր միջնաբերդն է դարձնում և բարեկամական ճանապարհով Հայաստանից ինչ-որ բանի հասնելու հնարավորությունը, անկասկած, փոքրանում է: Այստեղ դիվանագիտական ճանապարհով հնարավոր չէ ոչինչ անել, իսկ ներկայումս այլ ճանապարհով գործելը, մենք անցանկալի ենք համարում:

Ինչ վերաբերում է թուրքական հարձակմանը, ապա քանի որ այն սահմանափակվելու է Սարիղամիշ-Շահթախտ գծով, չի սպառնում Հայաստանի անկախությանը, այն տանում է մեզ հետ ծայրահեղ ցանկալի շփման և ընդհանրապես դաշնակներին կարող է դարձնել ավելի զիջող: Անհրաժեշտ է ասել, որ իրերի փոխված դրության, Արևելքում Անգլիայի ուժեղացման և Հայաստանի, որպես Անգլիայի գործիքի, ընդգծված դերի պայմաններում, Հայաստանի հետ պայմանագրի կնքումը դառնում է շատ ավելի դժվար, քան առաջ:

Թուրքիայի հետ սահմանի հարցը պետք է անպայման թողնել բաց, այն թողնելով խառը հանձնաժողովին: Ադրբեջանի հետ վիճելի տարածքների հարցը ևս պետք է թողնել առկախ (ընդգծումները մերն են – Լ. Խ.):

Երբ դուք բանակցությունները սկսեք, հայտնեցեք մեզ, թե ի՞նչ հեռանկարներ են նշմարվում, և Ձեր հաղորդագրություններից կախված մեզ համար պատկերացում կկազմենք այս գործի հե-

տագա ընթացքի մասին»[1]:

Չիչերինի այս հրահանգ-հեռագրից պարզ է դառնում, որ՝

1. Թուրքերի հարձակումը կատարվել է Ռուսաստանի համաձայնությամբ և պետք է սահմանափակվի Սարիղամիշ-Շահթախտ գծով:

2. Հոկտեմբերի սկզբին Ռուսաստանը դեռ վերջնական կարծիք չուներ վիճելի տարածքների պատկանելության մասին: Ռազմակալելով այդ տարածքները, նա սպասում էր դեպքերի հետագա զարգացմանը:

3. Անվիճելի է դառնում այն ճշմարտությունը, որ Ռուսաստանը վիճելի տարածքների հարցը լուծելու է ոչ թե ազգերի ինքնորոշման կամ պատմական իրավունքի հիման վրա, այլ ելնելով միմիայն բոլշևիկյան կայսրության շահերից:

Սեպտեմբերի 30-ին Հ. Օհանջանյանը հեռագրով դիմում է Չիչերինին, հայտնելով թուրքերի հարձակման լուրը: Հեռագրում ասվում է, որ թուրքերը սեպտեմբերի 28-ին լայնածավալ հարձակում են սկսել Հայաստանի Հանրապետության դեմ: Թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի Հայաստանի խորքերը շարունակվում է: Օհանջանյանը խնդրում է շուտափույթ հայտնել, թե Ռուսաստանի կառավարությունը տեղյա՞կ է արդյոք Հայաստանի Հանրապետության դեմ թուրքական զորքերի սկսած հարձակման մասին և, եթե տեղյակ է, ի՞նչ միջոցներ է ձեռք առել այդ հարձակումը կանգնեցնելու համար[2]:

Հոկտեմբերի 3-ին Լեգրանը նոր հեռագիր է հղում Չիչերինին. «Թուրքերը շարունակում են հարձակումը, ի՞նչ է Ձեզ հայտնի նրանց մտադրությունների մասին, կսահմանափակվե՞ն նրանք արդյոք Սարիղամիշի գրավումով, թե կձգտեն իրականացնել Բրեստի պայմանագիրը՝ զավթել Կարսը և Արդահանը:

Թուրքերի կողմից Կարսի գրավումը օրակարգ կմտցնի Հայաստանի և դրանից հետո Վրաստանի խորհրդայնացման հարցը, որի համար թուրքերի ներխուժումը սպառնալիք է հանդիսանում, մինչդեռ ակնհայտ է, որ դրա համար մենք ուժեր չունենք: Թուրքական բանակի օգնությամբ խորհրդայնացումը կլինի անհեթեթություն: Մյուս կողմից, թուրքերի չպարզված մտադրությունների և Անդրկովկասում մեր ռազմական ուժերի թուլության պայմաններում, թուրքերի կողմից Կարսի գրավումն ընդհանրա-

[1] Նույն տեղում, թ. 158-159:
[2] Նույն տեղում, թ. 150-151:

պես վտանգավոր է: Ցուցումներ տվեք»[1]:

Հոկտեմբերի 3-ին Լեգրանը մի հեռագիր էլ հղում է Օրջոնիկիձեին.

«Ի՞նչ տեղեկություններ ունեք Կարսի շրջանում թուրքերի հարձակման նպատակների մասին, ինչպե՞ս եք վերաբերվում թուրքերի կողմից Կարսի գրավման հնարավորությանը: Մոսկվայից դեռ ոչ մի տեղեկություն չկա»[2]:

Հոկտեմբերի 5-ին Չիչերինը հեռագրում է Լեգրանին, թե քանի դեռ թուրքերը մնում են Սարիղամիշ-Շահթախտ գծի վրա, առանձնապես հարկ չկա միջամտելու, եթե առաջ գնան, պետք է միջոցների դիմել[3]:

Հոկտեմբերի 5-ին Չիչերինը մի հեռագիր էլ ուղարկում է Օրջոնիկիձեին, նրան առաջարկելով Քեմալին հաղորդել հետևյալը. «Ռազմական գործողությունները, որոնք կարող են հրահրել Անտանտի կառավարություններին, մենք համարում ենք ***անժամանակ***» (ընդգծումը մերն է – Լ. Խ.): Նույն հեռագրում հրահանգ է տրվում նաև Հայաստանի և Վրաստանի նկատմամբ վարվելիք քաղաքականության մասին. «Պարբերաբար վարեցեք խաղաղ քաղաքականություն, որպեսզի Անդրկովկասում չառաջանա լուրջ ճգնաժամ: Մենք միաժամանակ հայտարարում ենք Վրաստանին, որ եթե նա ցանկանա, մենք կարող ենք մեր միջնորդությունն առաջարկել նրանց և թուրքերի միջև: Վրացիներին և հայերին մատնանշեք մեր պատրաստակամությունը նրանց և քեմալականների միջև միջնորդ լինելու համար»[4]:

Վերը բերված հեռագրերը անառարկելիորեն խոսում են այն մասին, որ թուրքերը սեպտեմբերի 28-ի հարձակումը սկսել են՝ հենվելով Լենին-Չիչերին պաշտոնական համաձայնության վրա: Թուրքիայի արտաքին գործերի նախարարության բաժնի վարիչ Հիքմեթը այդ մասին գրել է. «***Համաձայն Խորհրդային Ռուսաստանի հետ մեր համատեղ որոշման, մենք հարձակման դեպքում պետք է Սարիղամիշից այն կողմ չանցնենք***» (ընդգծումը մերն է – Լ. Խ.): Այս առնչությամբ քննարկման կարիք ունի մի կարևոր հարց: Խնդիրն այն է, որ թեև Թուրքիան ստացել էր Ռուսաստանի կառավարության պաշտոնական թույլտվությունը գրավելու

---

[1] Նույն տեղում, թ. 159:

[2] Նույն տեղում, թ. 160:

[3] Տե՛ս **А. Н. Хейфец**, նշվ. աշխ., էջ 133:

[4] Նույն տեղում:

հիշյալ տարածքը, սակայն չէր ճշտել հարձակման ստույգ ժամկետը: Թուրքերի կողմից հարձակումը կազմակերպվեց անակնկալ: Նույն Հիքմեթը գրում է, որ թուրքերը իրերի բերումով «հարկադրված էին հարձակվել, հնարավորություն չունենալով Ռուսաստանի հետ քննարկել այդ հարցը»[1]: Թուրքական հարձակումը խորհրդային կառավարությանն անակնկալի բերեց, որովհետև նա համոզված էր, որ քեմալականները պետք է իր հետ ճշտեն հարձակման ստույգ ժամկետը, մի բան, որն Անկարայի կառավարությունը չարեց: Այդ հարձակման մասին գիտեր նաև Բաքուն, իսկ Լեգրանը թուրքական բանակի պատրաստվող գործողությունների մասին ոչ մի տեղեկություն չուներ:

Իրադարձությունները զարգանում էին ծրագրավորված: Թուրքական հարձակումը պետք է հանգեցներ Հայաստանի խորհրդայնացմանը:

Հոկտեմբերի 6-ին Օրջոնիկիձեն դիմում է Լեգրանին Հայաստանի խորհրդայնացման հնարավորության մասին հարցով. «***Իմ կարծիքով, Հայաստանում ստեղծված դրությունը պետք է օգտագործել խորհրդային իշխանություն հռչակելու համար, մեր զորքերով ապահովելով Հայաստանի անձեռնմխելիությունը Թուրքիայից: Ի՞նչ կասես այդ մասին***» (ընդգծումը մերն է – Լ. Խ.)[2]:

Սկսում է նշմարվել Հայաստանի ճակատագրի լուծման երկու ուղի. Բաքուն Օրջոնիկիձեի ղեկավարությամբ ձգտում էր Հայաստանի խորհրդայնացմանը, իսկ Լեգրանը, սկզբունքորեն կողմ լինելով խորհրդայնացմանը, գտնում էր, որ թուրքերի հարձակման պայմաններում այն չի կարելի իրականացնել: Չիչերինին և Օրջոնիկիձեին ուղղված հոկտեմբերի 7-ի հեռագրում Լեգրանը տալիս է հարցի լուծման մասին իր տեսակետը. «Մտադիր եմ առաջարկով դիմել Հայաստանի կառավարությանը՝ պաշտոնապես հրաժարվելու Սևրի պայմանագրի հիման վրա Թուրքահայաստանի մարզերը զինված ուժով գրավելու ամեն մի ձգտումներից: Թուրքիայի հետ սահմանների տարանջատման խնդրում համաձայնություն տալ Խորհրդային Ռուսաստանի միջնորդությանը, Խորհրդային Ռուսաստանին Հայաստանի երկաթուղիներով ռազմական տրանզիտի իրավունք տալ:

Գտնում եմ, որ այս պայմանները, հայերի համաձայնության դեպքում, լավագույն ելքն են ստեղծված դրությունից դուրս գալու

---

[1] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 25, թ. 94:
[2] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 162.

համար: Դա մեզ լրիվ իրավունք կտա պահանջել ու կանգնեցնել թուրքերի ռազմական գործողությունները և մաքրել Հայաստանի տարածքները:

Ինչ վերաբերում է խորհրդայնացմանը, ապա թուրքերի ներխուժման պահին այն չի կարող վայելել զանգվածների համակրանքը, կբերի դաշնակցական հրոսակախմբերի հետ կատաղի պայքարի, որոնք պարտիզանական պայքարում կարող են լուրջ դիմադրություն ցույց տալ: Մեր կողմից բավարար ուժերի բացակայության պատճառով դժվար կլինի խուսափել այդ նպատակի համար թուրքական ուժերի օգտագործումից, որը որոշակիորեն աղմկահարույց բնույթ կտա ամբողջ գործողությանը: Խնդրում եմ, խորհրդային կառավարության կողմից ինձ լիազորել, հայերի համաձայնության դեպքում, շարադրված պայմանները ներկայացնել թուրքական հրամանատարությանը՝ պահանջելով անմիջապես դադարեցնել ռազմական գործողությունները և մաքրել Հայաստանի տարածքը»[1]:

Ելնելով հարցը շուտափույթ լուծելու անհրաժեշտությունից, Լեգրանն ուղիղ գծով խոսակցություններ է ունենում Օրջոնիկիձեի հետ, ջանալով կռահել թուրքամետ խմբի մտադրությունները: Նա արդեն սկսել էր հասկանալ, որ հայ-թուրքական հիմնախնդրի լուծման գործում դրության տերը Մոսկվայում Ստալինն է, Անդրկովկասում՝ Օրջոնիկիձեն: Չիչերինն այդ հարցերում երկրորդական դեր էր խաղում: Ստալին-Չիչերին մրցակցությունում հաղթել էր առաջինը:

Ասենք, Չիչերինն այդ հանգամանքը չէր էլ թաքցնում: Նա հոկտեմբերի 9-ի հեռագրում Լեգրանին տալիս է հետևյալ հրահանգը. «Մշտական կապերի մեջ եղեք ընկ. Օրջոնիկիձեի հետ, որը գտնվում է Կովկասյան քաղաքականության կենտրոնում: Իսկ մոտակա ժամանակներում այդտեղ է գալու ընկ. Ստալինը: Ձեզ անհրաժեշտ է նրա հետ մշտական կապ պահպանել»[2]:

Ուրեմն, Հայաստանի ճակատագրի լուծումը պաշտոնապես տրվել էր թուրքամետ խմբին: Առաջիկայում Կովկաս պետք է ժամաներ Ստալինը, Օրջոնիկիձեի հետ միասին, հայոց պետականության լինել-չլինելու և տարածաշրջանի տարածքային հարցերը լուծելու համար: Թուրքամետ խմբի ծրագրերը դրվում են Ռուսաստանի պաշտոնական քաղաքականության առանցքում :

---

[1] Նույն տեղում, թ. 165:
[2] Նույն տեղում, թ. 174:

Այս կապակցությամբ թուրքամետ խմբի հակահայկական գործունեությունը բացահայտող բավականաչափ նյութ ենք քաղում Լեգրանի և Օրջոնիկիձեի սեպտեմբերի 30-ի և հոկտեմբերի 5-ի ուղիղ գծով ունեցած խոսակցության ժապավենից:

Լեգրանը, ինչպես գրել ենք, բազմիցս դիմել էր Մոսկվա՝ բողոքելով 11-րդ բանակի անօրինական գործողությունների դեմ, հատկապես օգոստոսի 10-ի համաձայնագրի 5-րդ կետի խախտման կապակցությամբ: Ահա այդ առիթով Օրջոնիկիձեն սեպտեմբերի 30-ին Լեգրանի հետ ունեցած խոսակցության ժամանակ հայտնում է. «Ուզում եմ քեզ հետ խոսել Շահթախտ-Ջուլֆա հատվածի մասին: Դու հասկանում ես, որ բանակը չի կատարում պայմանագիրը, իսկ ներկա պահին այն կատարելու փաստական հնարավորություն չկա այդ շրջանում թուրքական զորամասերի և փախստական-մուսուլմանների առկայության պատճառով»:

Լեգրանը Օրջոնիկիձեին տեղեկացնելով թուրքերի հարձակման և Սարիդամիշը գրավելու մասին, առաջարկում է. «Նկատի ունենալով թուրքերի ներկայությունը Նախիջևանում, անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել, որպեսզի անհնարին դարձվի թուրքերի որևէ հարձակում Նախիջևանի կողմից, որը պայմանագրով հանձնված է կարմիր զորքերի պահպանությանը: Դա շատ կարևոր է, խնդրում եմ 11-րդ բանակի ուշադրությունը կենտրոնացնել դրա վրա...

Ձեր զգուշավորությունը ինձ համար հասկանալի չէ, եթե թուրքերը խանգարում են, նրանց պետք է առաջարկել հեռանալ Նախիջևանի գավառից»:

Օրջոնիկիձեն Լեգրանին առաջարկում է Շահթախտի երկաթուղու հարցով Մոսկվա դիմել միայն փոխադարձ համաձայնության հասնելուց հետո: «Թե չէ...,– շարունակում է նա,– ստացվում է տհաճ պատմություն... իսկ Մոսկվան մեզ շշպռում է, իբր թե պայմանագրի 5-րդ կետը չկատարելու համար...»:

Լեգրանը դրան պատասխանում է. «Ինչ վերաբերում է շշպռանքին, ապա եթե այն հասցեագրված է 11-րդ բանակի Ռազմահեղափոխական խորհրդին, անկեղծորեն կասեմ, նրանք դրան լիովին արժանի են»:

Հետևում է Օրջոնիկիձեի պատասխանը. «... 11-րդ բանակին միշտ պաշտպանելու եմ...»[1]:

Այս փաստաթղթում աչքի է զարնում հետևյալ կարևոր հանգամանքը. նախորդ գլուխներում մանրամասն շարադրել ենք 11-

[1] Նույն տեղում, թ. 152-153:

րդ բանակի հակահայկական գործողությունները և Չիչերինի ու Լեգրանի՝ դրա դեմ ուղղված բազմաթիվ գրությունների բովանդակությունը: Եվ չնայած դրան, 11-րդ բանակը, այնուամենայնիվ, հետևողականորեն շարունակում էր իր հակահայկական գործողությունները: Օրջոնիկիձեն, ինչպես տեսանք, նախորդ շրջանում չէր գտնվում առաջին պլանում, մնում էր ստվերում: Բայց հայտնի է, որ բանակը, ինչպես ամենուրեք, այնպես էլ հատկապես բոլշևիկյան պետությունում, չէր կարող ինքնուրույն քաղաքականություն վարել: 11-րդ բանակը փաստորեն ղեկավարվում էր Օրջոնիկիձեի կողմից, որին հրահանգավորում էր Ստալինը: Հոկտեմբերի սկզբին թուրքամետ խումբն արդեն հաղթել էր, Օրջոնիկիձեն միանձնյա էր տնօրինում կովկասյան գործերը, որը և նրան իրավունք տվեց Լեգրանին բացեիբաց հայտարարելու, որ ինքը «միշտ պաշտպանելու է 11-րդ բանակին»:

Հոկտեմբերի 5-ին Լեգրանը և Օրջոնիկիձեն նորից են ուղիղ գծով խոսակցություն ունենում: Լեգրանը ասում է. «Եթե դու հնարավորություն ունես այսօր գիշեր կապվելու Չիչերինի հետ, թախանձագին խնդրում եմ նրանից ստանալ իմ ամսի 3-ին ուղարկված ծածկագրի պատասխանը: Այդ պատասխանն ինձ շատ շտապ պետք է»[1]: Հոկտեմբերի 3-ի հեռագրում Լեգրանն իրոք բարձրացրել էր շատ կարևոր հարցեր, որոնք շուտափույթ պատասխան էին պահանջում: Սակայն Չիչերինն ուշացնում էր պատասխանը: Առաջիկա մի քանի օրվա ընթացքում ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոն պետք է քննարկեր Հայաստանի հարցը: Չիչերինը սպասում էր Քաղբյուրոյի որոշմանը, որպեսզի այն պաշտոնապես հաղորդի Լեգրանին:

Հոկտեմբերի 8-ին Լեգրանը Չիչերինին է ուղարկում հայ-թուրքական բախումը կարգավորելու, իր կարծիքով, միակ ընդունելի ծրագիրը:

Նամակում Լեգրանն արծարծում է հետևյալ հարցերը.

1. Ինքը մինչև այժմ ակտիվորեն չի խառնվել դեպքերի ընթացքին, մասամբ այն պատճառով, որ անհրաժեշտ է համարել այդ կարևոր հարցի կապակցությամբ նախապես պարզել Չիչերինի վերաբերմունքը, մասամբ էլ այն, որ ցանկացել է որոշակիորեն պարզել իրավիճակը և թուրքերի հարձակման նպատակը, որի մասին «... մենք, ինչպես պարզվում է նաև Դուք, չէիք նախազգուշացվել»:

[1] Նույն տեղում, թ. 161:

2. «Ներկա պահին, երբ արդեն հաստատված է, որ դաշնակները, չնայած հաղթանակի մասին իրենց պարծենկոտ հրապարակումներին, ի վիճակի չեն կանգնեցնել թուրքերի հարձակումը, որոնք շրջապատել են Կարսը, եկել է ժամանակը հանդես գալու այն առաջարկով, որի մասին հայտնում եմ իմ ծածկագրում:

Եթե մինչև հիմա դա արված չէ, միայն այն պատճառով, որ ավելի նպատակահարմար եմ համարում այդ վերջնագիրը ներկայացնել Երևանում...»:

«Ներկա պահին իմ առարկությունները Հայաստանի խորհրդայնացման դեմ, որը Աղրբեջանում համարում են բավականին բարենպաստ, գլխավորապես հանգում են նրան, որ մենք մեր ուժերի, 11-րդ բանակի թուլության պատճառով, հարկադրված կլինենք դաշնակցական պարտիզանական խմբերի ճնշման համար օգտվել թուրքական ուժերից:

Անկասկած է, որ Հայաստանի խորհրդայնացումը այն պահին, երբ թուրքական բանակը ներխուժել է նրա տարածքները, երբ դաշնակներն ազգային խանդավառություն են ապրում, կառաջացնի խմբապետների՝ դաշնակների պարտիզանական առաջնորդների կատաղի դիմադրությունը:

Մյուս կողմից, ռազմական գործողությունների փորձը Նախիջևան-Զանգեզուր ճակատում ցույց է տալիս, որ մեր հրամանատարությունը, իր տրամադրության տակ եղած ուժերի անբավարար լինելու պատճառով, օգտվում է մուսուլմանների ազգայնական ապստամբական ջոկատների աջակցությունից: Այդ հատվածում մեր զորքերի առաջին գծում մուսուլման-ապստամբների հենց այդպիսի «վարագույրի» գոյությամբ միայն կարող է բացատրվել այն մշտական լարված վիճակը, որում գտնվում է այդ սահմանը և որը առիթ է տվել դաշնակներին անընդհատ բողոքելու մեր զորքերի կողմից օգոստոսի 10-ի պայմանագրով հաստատված սահմանները խախտելու դեմ:

Նաև միայն դրանով կարելի է բացատրել Ձեր ձեռքում եղած տեղեկությունների ճշմարտանմանությունը, երբ ինձ գրում եք, որ Շահթախտ-Ջուլֆա երկաթուղին մեր տնօրինության տակ չէ և չենք էլ գրավելու, որ այն գրավված է թուրքերի և ապստամբների կողմից: Մինչդեռ, Գլխավոր հրամանատարության հրահանգի և պաշտոնական հաղորդման համաձայն, Նախիջևանը գրավված է մեր ջոկատով և այնտեղ գտնվող թուրքական զորամասերը ենթարկված են մեր հրամանատարությանը:

Թվում է, այդպիսի պաշտոնական տվյալների առկայության պայմաններում վկայակոչել այն, որ Նախիջևանով անցնող եր-

կաթուղին մեր ձեռքում չէ, հնչում է շատ տարօրինակ: Եվ խոսքը առաջին հերթին գնացել է հայերին հենց այդ տեղամասի շահագործման թույլտվություն տալու մասին:

Դրա հետ մեկտեղ, հայերի հետ պայմանագրի համաձայն Նախիջևանի գավառը, որի կազմի մեջ մտնում է և Ջուլֆան, գրավելու իրավունքը, անշուշտ տրված է եղել ոչ թե Թուրքիային, այլ մեզ:

Ստեղծված իրավիճակը, որն առաջացել է այն բանի հետևանքով, որ մենք մեր զորամասերով չգրավեցինք ամբողջ Նախիջևանի գավառը, որն ընկած էր համաձայնագրի հիմքում և այդ վիճելի տարածք թույլ տվեցինք մտնել թուրքական զորամասերին, որոնց ներկայությունը ներկայումս հիմնավորում է հանդիսանում պայմանագրի 5-րդ կետի չկատարման համար, կհանդիսանար բավականաչափ դժվար, եթե վառելիքի բացակայությունը և հետո ռազմական իրադարձությունները հերթից չհանեին այդ հարցը:

Իմ կարծիքն այնուամենայնիվ այն է, որ, ըստ էության, հայերին այդ տեղամասի շահագործումը թույլ չտալու ադրբեջանցիների մերժման միակ հիմքն այն մտավախությունն է, որ դրանով կարող է կանխորոշվել Նախիջևանը հայերին պատկանելու հարցը:

Ես արդեն Ձեզ գրել եմ, որ ելքը ինձ թվում է բնական և ավելի շուտ ցանկալի, քան վտանգավոր»:

3. Ստարկի մոտ են եղել Տրապիզոնի գեներալ-նահանգապետի կողմից գործուղված քեմալականներ, որոնք Վրաստան են ժամանել վրացական իշխանություններին հավաստիացնելու, որ թուրքերի հարձակումը Վրաստանի դեմ չի ուղղված: «*Այդ քեմալականների բացատրությունների համաձայն, թուրքական բանակը նպատակ ունի գրավել դաշնակների տիրապետության տակ գտնվող «վիճելի» մուսուլմանական մարզերը... Դրա հետ միասին, քեմալականներն ասում էին, որ իրենց հարձակման նպատակը նաև դեպի Խորհրդային Ռուսաստան ճանապարհի բացումն է:*

Թուրքերի նվաճողական ազգայնական նկրտումների առկայությունը Կարսի, Ալեքսանդրապոլի, նաև կարող է պատահել Արդահանի, Աջարիայի և Բաթումի նկատմամբ, շատ թե քիչ անկասկած է:

Ամեն դեպքում թուրքերի ներխուժումը Հայաստան խորհրդանշում է ազգային թշնամության սրում և բարդացնում է առանց այն էլ սրությամբ դրված հայ-թաթարական հարաբերությունների հարցը:

Կովկասում մեր ազգային քաղաքականության շահերից ելնելով, անհրաժեշտ է, որքան կարելի է շուտ, վերացնել այդ զինված ընդհարումը» (ընդգծումը մերն է – Լ. Խ.):

4. Այնուհետև Լեգրանը հայտնում է, որ լուրեր են պտտվում Դաշնակիցների Բաթում մտնելու մասին, ինչը կհանդիսանա Դաշնակիցների գործողությունների նախապատրաստում Բաքվի դեմ: Ներկա ռազմահեղափոխական խորհուրդը Լեգրանի կարծիքով շատ թույլ է իր առջև դրված խնդիրները կատարելու համար և «Եթե Լեհաստանի հետ զինադադարը հնարավորություններ ստեղծի, անհրաժեշտ է անմիջապես ուժեղացնել մեր բանակը Անդրկովկասում և, վերջապես, հանձին 11-րդ բանակի Ռազմահեղափոխական խորհրդի, ստեղծել հեղինակավոր ռազմական մարմին»:

5. «Թուրքերի հանկարծակի հարձակումը, ինչպես Դուք գիտեք, մեր դեմ անողոք հարձակումներ առաջացրեց, որպես քեմալականների քաղաքական դաշնակիցների: Սարիղամիշի գրավման առաջին լուրը ստանալուն պես տեղի հայկական դիվանագիտական ներկայացուցիչը եկավ իմանալու, թե Խորհրդային Ռուսաստանն ինչպես է վերաբերվում թուրքերի հարձակմանը»: Լեգրանը պատասխանում է, որ չնայած Խորհրդային Ռուսաստանը հանդես կգա Հայաստանի դեմ թշնամական գործողությունները դադարեցնելու թուրքերին ուղղված առաջարկով, քանզի Խորհրդային Ռուսաստանը չի կարող թուրքերին թույլ տալ խեղդելու Հայաստանը, այնուհանդերձ Խորհրդային Ռուսաստանի միջամտությունը միայն այն դեպքում կարող է հաջողություն ունենալ, եթե՝ ա) Հայաստանի կառավարությունը պաշտոնապես հայտարարի, որ հրաժարվում է Սևրի պայմանագրով իրեն տրված Թուրքահայաստանի տարածքները զինված ուժով գրավելու մտադրությունից, բ) վերջապես կընդունի Չիչերինի առաջարկը հայ-թուրքական տարածքային վիճելի հարցերում Խորհրդային Ռուսաստանի միջնորդության մասին: Լեգրանը միաժամանակ հայտնում է, որ Անկարայի կառավարությունը վաղուց այդ մասին տվել է իր համաձայնությունը:

Լեգրանը Չիչերինին հայտնում է, որ Հայաստանի կառավարությունը խուսափում է իր խորհրդից, երևի հույսեր կապելով ռազմական հաջողությունների հետ: Միաժամանակ նա ընդգծում է, որ այդ պայքարում Հայաստանի կառավարությունը հույսեր չի կապում ո՛չ դաշնակիցների և ո՛չ էլ Վրաստանի հետ: Եզրափակելով նամակը, Լեգրանը հավանական է համարում, որ ստեղծ-

ված պայմաններում հայերը կգնան զիջումների[1]:

Նամակում, ինչպես տեսնում ենք, Լեգրանը, ըստ էության, նոր առաջարկ չի անում, այլ փաստորեն ավելի հիմնավորված է շարադրում նախորդ հեռագրերում ներկայացված տեսակետը: Նա մերժում է Հայաստանի խորհրդայնացման համար Բաքվից արված առաջարկը և գտնում, որ Հայաստանի հետ առնչված հարցերը պետք է լուծել խաղաղ, դիվանագիտական ճանապարհով:

Լեգրանը, միաժամանակ, ինչպես ցույց են տալիս փաստաթղթերը, պատերազմի գրեթե առաջին օրվանից այն կարծիքին էր, որ թուրքերը չեն սահմանափակվելու Սարիղամիշ-Շահթախտ գծի գրավումով: Նա իր ծրագրային բոլոր հեռագրերում և նամակներում Մոսկվային առաջարկում է «որքան կարելի է շուտ վերացնել այդ զինված ընդհարումը»:

Քննարկվող նամակը հետաքրքիր է նաև նրանով, որ առաջին անգամ Լեգրանը քննադատում է Չիչերինին, թուրքամետ խմբից ստացած սխալ տեղեկությունների հիման վրա խրթին հարցերը լուծելու փորձի համար: Դա բացատրվում է նրանով, որ Լեգրանն արդեն նկատում էր Չիչերինի կողմից թուրքամետ խմբին ակնհայտ զիջումների գնալը:

Հոկտեմբերի 9-ին Լեգրանը ստանում է Չիչերինի նամակը, որը նրա հոկտեմբերի 3-ի հեռագրի պատասխանն էր: Նամակի տոնը փոխված էր, բացակայում էր Չիչերինի համարձակությունը և հարցերը հստակորեն դնելու հմտությունը:

Լեգրանի բարձրացրած հարցերին Չիչերինը տալիս է հետևյալ պատասխանները.

1. «Վերջին անգամ ինձ չհաջողվեց պատասխանել Վլադիկավկազ ժամանած Տեր-Գաբրիելյանին, որովհետև Հայաստանի վրայով տրանզիտի և վիճելի տարածքների զիջման հարցը բավականին բարդ է, որպեսզի հնարավոր լինի դրան արագ պատասխան տալ: Ես արդեն գրել եմ Ձեզ, որ մենք թերահավատորեն ենք նայում դաշնակներից տրանզիտի իրավունք ստանալու հնարավորությանը: Լավագույն դեպքում նրանք մեզ կխաբեն և ծուղակը կգցեն: Իհարկե, պետք է հասնել տրանզիտի, բայց ոչ անթույլատրելի գնով»:

2. «Ինչ վերաբերում է վիճելի տարածքներին, հարցը շատ այրող է, որպեսզի հնարավոր լինի գորդյան հանգույցը ջարդել այժմ»:

---

[1] Նույն տեղում, թ.168-171:

3. «Ընդհանրապես վերջին ամիսների ընթացքում իրավիճակը նկատելիորեն փոխվել է: Դաշնակների կառավարությունը վերածվել է Անտանտի հարձակման բացահայտ գործիքի: Անտանտը դաշնակներին մատակարարում է զինամթերք և ինչ-որ բան է պատրաստում»:

4. «Իրադրությունն ավելի կտրուկ փոխվել է թուրքական հարձակման հետևանքով: Սարիղամիշ-Շահթախտ գիծը մոտավոր սահմանն է, բայց եթե թուրքերը ավելի են գնում Հայաստանի խորքերը, նրանք դրանով կհասնեն լուրջ քաղաքական ճգնաժամի:

Մենք պետք է ելնենք այն բանից, որ քանի դեռ զբաղված ենք տարբեր ճակատներում, Անդրկովկասում յուրաքանչյուր ճգնաժամ մեզ համար բացարձակապես անցանկալի է: Մենք պետք է հանդես գանք որպես խաղաղարար, պայքարող տարրերին հանգստացնելու և ճգնաժամերը կանխելու համար:

Թուրքական հարձակումը կարող է սադրիչ դեր խաղալ Անտանտի համար: Դուք երևի արդեն գիտեք, որ Ստարկի միջոցով մեր միջնորդությունն ենք առաջարկել Վրաստանին: Ընդհանրապես ամեն բան, որ կարող է ծառայել հանգստացնելուն, պետք է մեր կողմից աջակցություն ստանա:

Դաշնակների հետ Ձեր հարաբերություններում, նրանց վճռականորեն պատասխանեցեք, որ մենք բոլորովին ցանկություն չունենք, որպեսզի Հայաստանին որևէ վնաս հասցվի: Այդ պատճառով էլ մենք պատրաստ ենք, եթե դաշնակները ցանկանան, հանդես գալ որպես միջնորդ»[1]:

Չիչերինի այս նամակը գրված է Հայաստանի նկատմամբ փոխված քաղաքականության դիրքերից: Թուրքամետ խմբի ճնշման տակ արդեն օրակարգ էր մտել Հայաստանի խորհրդայնացման հարցը: Գրելով Ռուսաստանի հաշտարար դերի և միջնորդ լինելու մասին, Չիչերինը միաժամանակ նախագիծ էր կազմում Քաղբյուրոյի համար՝ առաջարկելով խորհրդայնացնել Հայաստանը: Եվ այդ է պատճառը, որ Չիչերինի նամակում քննարկվող հարցերի ոչ մի որոշակի լուծում չի առաջարկվում:

Ավելին, նամակից երևում է, որ վիճելի տարածքների շուրջ պարզապես ակնհայտ առևտուր է տեղի ունենում: Լեգրանը գտնում էր, որ տրանզիտի իրավունք ստանալու համար Հայաստանին պետք է տալ Զանգեզուրն ու Նախիջևանը, իսկ Մոսկվան,

[1] Նույն տեղում, թ. 173-174:

ընդհակառակը, գտնում էր, որ չի կարելի տրանզիտ ձեռք բերել «անթույլատրելի գնով»:

Հայաստանի խորհրդայնացմամբ տրանզիտի հարցը օրակարգից կհանվեր, իսկ վիճելի տարածքների հարցը բոլշևիկների կողմից «կլուծվեր» անառարկելիության պայմաններում՝ հօգուտ թուրքական շահերի: Ինչպես տեսնում ենք, ազգերի ինքնորոշման, անկախության ու հավասարության մասին բոլշևիկյան կարգախոսները հորինվել էին արտաքին աշխարհին խաբելու համար: Բոլշևիկյան կուսակցությունը վարում էր անթաքույց նվաճողական քաղաքականություն: Վերականգնվում էր ռուսական կայսրությունը: Բոլշևիկյան դիվանագիտությունը ծառայում էր կուսակցության նվաճողական քաղաքականության իրականացմանը:

Թուրքերի հարձակումը բարենպաստ պայմաններ էր ստեղծում Հայաստանի բռնի խորհրդայնացման համար: Այդ պատճառով Ռուսաստանը չէր շտապում կանգնեցնել թուրքերի արշավանքը և զուգահեռաբար գործունեություն էր ծավալել Հայաստանի խորհրդայնացումը իրականացնելու ուղղությամբ: Բացի թուրքական արշավանքից Հայաստանի դեմ էին ուղղվում նաև վիճելի տարածքներում գտնվող թաթարական և քրդական հրոսակախմբերը:

Հոկտեմբերի 10-ին Օհանջանյանը Չիչերինին է ուղարկում հետևյալ դիմումը. օգոստոսի 10-ի պայմանագրով Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի շրջանները ճանաչվել են չեզոք և մինչև վիճելի տարածքների ճակատագրի վերջնական լուծումը պետք է գտնվեն ռուսական օկուպացիոն իշխանությունների տիրապետության տակ: Չեզոք հասկացությունը ենթադրում է, որ Ռուսաստանը պետք է խստագույնս հետևի, որպեսզի այդ տարածքների չեզոքությունը չխախտվի, Հայաստանի թշնամի ուժերին թույլ չտրվի թափանցելու այնտեղ: Չեզոքությունն առավել ևս չպետք է խախտվի ռուսական զորքերի կողմից:

«Մինչդեռ,– շարունակում է Օհանջանյանը,– Խորհրդային Ռուսաստանի զորքերի կողմից հիշյալ շրջանները ռազմակալելու հենց սկզբից ադրբեջանական զորքերը և քուրդ-թաթարական հրոսակախմբերը լայն մուտք են ունեցել ինչպես Ղարաբաղի, այնպես էլ Զանգեզուրի և Նախիջևանի տարածքները: Միաժամանակ նման մուտք է տրվել նաև թուրքական ազգային ուժերին և նրանց գործիչներին՝ Խալիլ փաշայի գլխավորությամբ»:

Օհանջանյանը հայտնում է, որ այդ ուժերը Զանգեզուրի և այլ շրջանների գյուղացիներից պահանջում են ստորագրություններ

Ադրբեջանին միանալու մասին: Այդ պահանջին չենթարկվող հայկական գյուղերը ադրբեջանական ուժերի, քուրդ-թաթարական հրոսակախմբերի և նրանց աջակցող ռուսական զորքերի կողմից ավերվում են և հրդեհվում, իսկ հասարակական գործիչները՝ գնդակահարվում:

Հայաստանի կառավարությունը խնդրում է վերջ տալ հայկական գյուղերի ավերմանը և նշված տարածքները ազատել Հայաստանի Հանրապետության թշնամի ուժերից[1]:

Հոկտեմբերի 11-ին Օրջոնիկիձեն հեռագրում է Լենինին և Չիչերինին. «Լուրերի համաձայն դաշնակները պատրաստվում են հեռանալու իշխանությունից»[2]:

Սակայն այդ լուրը հորինված էր Բաքվում, որովհետև դաշնակցությունն այդ ժամանակ դեռևս իշխանությունից հեռանալու մասին չէր մտածում: Այդ հեռագրով Օրջոնիկիձեն նպատակ էր հետապնդում դեռևս ինչ-որ չափով տատանվող Մոսկվային համոզել արագացնելու Հայաստանի խորհրդայնացման մասին որոշման ընդունումը:

Եվ իրոք, հոկտեմբերի 13-ին Չիչերինը հեռագրում է Լեգրանին. «Օրջոնիկիձեն հաղորդում է դաշնակների հնարավոր հրաժարականի մասին: Անմիջապես հաղորդեցեք, ինչպիսի՞ք են Հայաստանի ներքին հեռանկարները և հնարավո՞ր է արդյոք առանց դրսի հարկադրանքի իշխանության հանձնումը կոմունիստներին, քանզի ներկա պահին մենք պետք է ձեռնպահ մնանք ամեն տեսակի հարկադրանքից»: Այնուհետև հեռագրի տեքստում կան բառերի բացթողումներ: Հեռագրի տեքստն ավարտվում է հետևյալ հրահանգով. «Կապի մեջ եղեք Օրջոնիկիձեի հետ: Նկատի ունեցեք, որ մենք թուրքական հարձակումը սահմանափակելու հնարավորություն չունենք և հարկադրված ենք բոլոր ուղղություններով դիվանագիտություն անել: Խոստումներ մի տվեք, եթե համոզված չեք, որ մենք կարող ենք դրանք կատարել: Մատնանշեք մեր բարեկամությունը հայ զանգվածների նկատմամբ և նրանց օգնելու ցանկությունը»[3]:

Ի դեպ, հոկտեմբերի սկզբներին Բաքվում գործող ՀԿ(բ)Կ Կենտկոմը դիմում է ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյին՝ խնդրելով օգնել հայ ժողովրդին ստեղծված դժնդակ վիճակից դուրս գալու համար:

---

[1] Նույն տեղում, թ. 175-176:

[2] **Р. Казанджян**, Как в Армении была установлена советская власть, "Коммунист", Ереван, 27 мая 1990 г.

[3] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 183.

Օրջոնիկիձեն ՀԿ(բ)Կ Կենտկոմի, ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի և իր կողմից դիմում է ՌԿ(բ)Կ Կենտկոմին առաջարկելով դրականորեն լուծել Հայաստանի խորհրդայնացման հարցը:

Ստացված նյութերի հիման վրա Չիչերինը հարցը մտցնում է Քաղբյուրո:

Հայաստանի կառավարության հնարավոր հրաժարականի և իշխանությունը կոմունիստներին անցնելու մասին Օրջոնիկիձեի հաղորդման կապակցությամբ Չիչերինը հոկտեմբերի 12-ին նամակով դիմում է ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյին՝ խնդրելով քննարկել այդ կապակցությամբ իր կողմից ներկայացվող առաջարկները[1]:

Լենինն այդ նամակի վրա մակագրում է. «Առաջարկում եմ Քաղբյուրոյին հաստատել Չիչերինի բոլոր 3 առաջարկությունները»[2]:

Չիչերինն արել էր հետևյալ առաջարկությունները.

«1) համաձայնել Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելու համար վճռական գործողությունների դիմելու անհրաժեշտության մասին Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի և ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի կարծիքի հետ, 2) նրան քաղաքական օգնություն ցույց տալ թուրքերի հետագա առաջխաղացումը կասեցնելու համար և 3) պաշտպանել նոր, խորհրդային կառավարությունը»[3]:

1920 թվականի հոկտեմբերի 14-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոն ընդունեց Չիչերինի առաջարկությունները[4]:

Եվ այսպես, Բաքուն կարողացավ իր կամքը թելադրել Մոսկվային, որը ինչպես նշել ենք, տատանվում էր այդ քայլին գնալ: Ընդ որում, Մոսկվան տատանվում էր այդ ժամանակ, զգուշանալով Անտանտի ռազմական միջամտությունից: Անդրկովկասում **այդ ժամանակ** իրադարձությունները զարգանում էին սրընթաց, կյանքի կոչելով նոր անակնկալներ, մեծ պետությունների շահերի նոր բախումներ: Այդ ժամանակ չէր բացառվում, որ տարածաշրջանում ծավալված իրադարձությունները կարող են մեծ պատերազմի սկիզբ դառնալ:

Այդ պատճառով էլ ՌԿ(բ)Կ Կենտկոմը գտնում էր, որ խորհրդ-

---

[1] **Վ. Ի. Լենին**, ԵԼԺ, հ. 41, էջ 809:
[2] Նույն տեղում, հ. 54, էջ 517:
[3] Նույն տեղում, էջ 858-859:
[4] Նույն տեղում, էջ 859:

դային կառավարության հեղինակավոր անդամներից որևէ մեկը պետք է երկարատև ժամանակով գտնվի Կովկասում:

ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը սեպտեմբերի 20-ին քննելով Կովկասում և Մերձավոր Արևելքում տիրող դրության հարցը, ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի հիմնական խնդիրներն էր համարում՝

1. Լեռնականների հետ հարաբերությունների լիակատար կարգավորումը,

2. Կովկասում և արևելքում ամբողջ քաղաքականությունը կարգի բերելը[1]:

Ուրեմն, ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը գտնում էր, որ Կովկասում և Արևելքում Ռուսաստանի ***ամբողջ քաղաքականությունն անհրաժեշտ է կարգի բերել:***

Պլենումը որոշում է երկարատև աշխատանքի համար Կովկաս ուղարկել Ստալինին, որը Մոսկվայից մեկնում է հոկտեմբերի 16-ին և նույն ամսվա վերջին ժամանում Բաքու[2]:

Ստալինը ժամանում էր Կովկաս Հայաստանի պատմության ամենաբախտորոշ պահին, երբ վճռվում էին հայ պետականության և վիճելի տարածքների ճակատագրի հարցերը:

Ստալինը ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումի որոշմամբ Կովկաս էր եկել կարգի բերելու Ռուսաստանի ամբողջ քաղաքականությունը:

* *
*

Քեմալականները սեպտեմբերի վերջերին կատարած հարձակումով խոշոր հաջողությունների հասնելով, շուրջ մեկ ամսով դադարեցրին ռազմական գործողությունները՝ պարզելու համար բոլշևիկյան Ռուսաստանի վերաբերմունքը: Ջեմալ Քութայն այդ մասին գրում է. «Այդ ժամանակներին էր, որ Բեքիր Սամի բեյի նախագահությամբ մի պատվիրակություն էր գտնվում Ռուսաստանում: Մուստաֆա Քեմալը մտահոգ էր այն հարցում, թե մեր հաղթանակը ի՞նչ ազդեցություն է թողնելու բոլշևիկների վրա: Մեր զորաբաժինների կողմից Սարիղամիշն ու Օլթին գրավելուց հետո հենց այդ իմաստով էլ նա մի ծածկագիր ստացավ Կարաբեքիրից: Արևելյան բանակի հրամանատարն իր այդ ծածկագրով

---

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, հավ. 1, գ. 2, թ. 91:

[2] Տե՛ս **А. Н. Хейфец**, նշվ. աշխ., էջ 134:

հայտնում էր, թե դադարեցնելու է գործողությունները և անհրաժեշտ է համարում ուշադրությամբ հետևել, թե ինչպես կգործեն բոլշևիկները, և որպեսզի ժամանակ շահի նոր ճակատի կազմակերպման համար, նա ուզում էր, որ Բեքիր Սամի բեյին լիազորություն տրվի Ռուսաստանին բացատրելու այն գրգռությունների մասին, որոնք դրդապատճառ էին հանդիսացել մեր ուժերի հարձակողականին:

Մի քանի օր անց հաստատվեց, թե ինչ պատճառների բերումով էր Կարաբեքիրը հարկադրվել համբերատար շարժվելու: Բոլշևիկների արտաքին գործերի կոմիսար Չիչերինն ընդունելով Բեքիր Սամի բեյին, նրանից «բացատրություն» էր պահանջել թուրքական հարձակման և նպատակների մասին:

Անկարայից ստացված ցուցումների համաձայն, Բեքիր Սամի բեյը 1920 թ. հոկտեմբերի 6-ին պատասխանեց Չիչերինի հարցումներին»[1]:

Քութայի տեղեկություններից երևում է, որ Բեքիր Սամի բեյը որպես «բացատրություն» Չիչերինին ծանոթացրել է Քեմալի հոկտեմբերի 6-ին Մոսկվա ուղարկված հեռագրի տեքստի հետ[2]:

Կարաբեքիրի նվաճողական ծրագրերն ավելի մեծ էին: Քութայը գրում է. «Կարաբեքիրն ուզում էր ժամանակ շահել մինչև հոկտեմբերի վերջերը և բանակցությունների շարունակման ընթացքում նորից մի անակնկալ հարձակումով գրավել Կարսը և դրանով էլ չբավարարվելով՝ հասնել մինչև Արփաչայ:

Նա իր ուժերն ամրացրել էր Սարիղամիշ-Լալաօղլի-Մերդենեկ գծի ուղղությամբ: Արագ առաջխաղացումով Կարսը պաշարելու համար նա հարկադրված էր ամբողջացնել իր պատրաստությունները: Այդ պատճառով էլ շատ ապահով և գաղտնի միջոցով նա հետևյալ լուրը հասցրեց Բեքիր Սամի բեյին. «մի շաբաթ ևս զբաղեցրեք ռուսներին, պիտի գրավեմ Կարսը»:

Բեքիր Սամի բեյից դրական պատասխան էր ստացվել: Չիչերինը, Հայոց արտաքին գործոց նախարարի հետ շփումներից հետո, այնպիսի պնդումների վրա կանգ առավ, որոնք մինչ այդ օրը չէին պարզվել և պահանջում էր, որ Վանի և Բիթլիսի նահանգների մի մասը թողնենք Հայաստանին...

Կարաբեքիրի «ժամանակ շահելու» ցանկությանն ընդառաջելու համար, Չիչերինի պահանջների փոխարեն, նրան հուսադրե-

---

[1] **Cemal Kutay,** նշվ. աշխ., էջ 44-45:

[2] Նույն տեղում, էջ 45:

լու նպատակով, Բեքիր Սամի բեյը ասել էր. «Անկարայից հրահանգ եմ ուզելու»: Եվ իրոք, իրավիճակի մասին տեղեկացրել էր Մուստաֆա Քեմալին: Այդ օրերին էլ բոլշևիկները պարտություն էին կրել Լեհաստանի մերձակայքում: Կարմիր բանակի Վարշավայում կրած պարտությունից հետո Չիչերինը հարկադրված էր զբաղվել Խորհուրդների համար կենսական հարցերով, և այսպես, Կարաբեքիրն իր սպասածից ավելի ժամանակ էր շահել: Բախտը ժպտում էր թուրք ազգին...»[1]:

Հոկտեմբերի առաջին կեսի իրադարձությունները ցույց տվեցին, որ Ռուսաստանն արմատական միջոցների չի դիմելու Հայաստանը թուրքերից պաշտպանելու համար: Իր համաձայնությունը տալով Սարիղամիշ-Շահթախտ գիծը գրավելու համար, Ռուսաստանը նույնիսկ այն բանից հետո, երբ թուրքերն անցան պայմանավորված սահմանը, անհրաժեշտ չհամարեց բողոքի պաշտոնական նոտայով դիմել Թուրքիայի ղեկավարությանը: Դրա փոխարեն Ռուսաստանի արևելյան քաղաքականություն իրականացնողները միայն հոկտեմբերի կեսերից սկսեցին ոչ պաշտոնական գրություններով, բարեկամաբար Քեմալին զգուշացնել, որ Թուրքիայի հետագա հարձակումը կարող է պատճառ դառնալ Անտանտի միջամտությանը:

Քեմալի համար պարզ էր դառնում, որ Ռուսաստանը շարունակվող պատերազմի պայմաններում գնում է դեպի Հայաստանի խորհրդայնացման ծրագրի իրականացմանը: Ուրեմն, Ռուսաստանին ձեռնտու էր, որպեսզի պատերազմական վիճակը շարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանը ծնկի չի եկել: Կովկասին ծանոթ գործիչները շատ լավ գիտեին, որ Քաղբյուրոյի հոկտեմբերի 14-ի որոշումը կարող է կենսագործվել միայն Հայաստանի դեմ մղվող պատերազմի պայմաններում: Սա անվիճելի ճշմարտություն է:

Ռուսաստանի նման քաղաքականությունն ավելի էր ուժեղացնում Քեմալի դիրքերը և բարենպաստ պայմաններ ստեղծում բոլշևիկներից նոր զիջումներ կորզելու համար:

Թուրքերի հաղթանակի, Ռուսաստանի նման քաղաքականության և հայերի համար ստեղծված չափազանց բարդ իրավիճակի պայմաններում, բնականաբար, խոսք չէր կարող լինել Արևմտյան Հայաստանի տարածքներից որոշ շրջաններ հայերի համար առանձնացնելու Չիչերինի առաջարկը կատարելու մասին:

---

[1] Նույն տեղում, էջ 47-48:

Չիչերինի նման պահանջները պարունակող օգոստոսի 24-ի ռուս-թուրքական պայմանագիրը դեռ ստորագրված չէր: Քեմալը չէր շտապում, նա հարմար ժամանակի էր սպասում այդ պայմանագիրը պաշտոնապես մերժելու համար:

Նշված իրադրության պայմաններում Քեմալը որոշում է անել երկրորդ վճռական քայլը: Հոկտեմբերի 16-ին Քեմալի կառավարությունը պաշտոնապես մերժում է օգոստոսի 24-ի պայմանագիրը:

Շուտով Բեքիր Սամի բեյը ստանում է Մ. Քեմալի հրահանգը: Նկատի ունենալով փաստաթղթի կարևորությունը, այն տալիս ենք ամբողջությամբ: Քեմալը գրում էր. «Երկար բանակցություններից հետո ռուս պատվիրակության հետ որոշված և բոլոր ներքոշարադրյալ հոդվածները բովանդակող Բարեկամության դաշնագրի նախագիծը և դրա մասին Ձեր բարձրության դիտողությունները պարունակող տեղեկագիրը, որոնք Տրապիզոնից ստացվել են հեռագրով, Նախարարների խորհրդում մանրամասնորեն քննվեց, ինչպես նաև Յուսուֆ Քեմալ բեյի այստեղ ժամանումով իր տված լայն բացատրություններն էլ լսելով, նախապես կատարված քննությունները մի անգամ ևս խորացվեցին, կողմերի շահերի և նպատակների համար բոլոր կողմերով հարմար նկատված հիշյալ հոդվածների բովանդակությունը վերջնականապես ընդունելու համար: Վանի և Բիթլիսի նահանգների մի որոշ մասն անջատելով հայերին թողնելը պայման լինելու պարագան այս հարցում Ռուսական Խորհրդային Հանրապետության մտածողության և զգացումների անկեղծության վերաբերյալ իրավացիորեն կասկածի մատնեց Անկարայի կառավարությանը, որը իմպերիալիզմի և կապիտալիզմի դեմ դժվարին պայքարի մեջ ներգրավված լինելու պատճառով մինչև հիմա նրան համարում էր իր բնական դաշնակիցը:

Այդ հարցում, իր էությամբ միաժամանակ նաև գործադիր ֆունկցիա ունեցող, Ազգային մեծ ժողովի դիտողություններին ու տրամադրություններին իրազեկ դառնալն իր պարտականությունը համարող Նախարարների խորհրդի արած դիմումին որպես պատասխան Ազգային ժողովի միաձայնությամբ ու բացորոշ հայտնած տրամադրությունն այն է, որ թուրք ազգի համար այդ պայմանները վճռականորեն անընդունելի են:

Արդարև, զինադադարին հաջորդող սպասման շրջանում ծագած հայտնի դեպքերի հետևանքով իմպերիալիստական տերությունների Թուրքիայի դեմ սարքած դավադրությունը բացահայտ-

ված է: Անատոլիայում ծագած կամքի, դիմադրության և պայքարի իմաստը Ազգային ուխտում որոշված, ճշտված և ազգային սահմաններում ամփոփված Թուրքիայի անկախ պետությունը ամեն կերպ պաշտպանելու և պահպանելու սրբազան ուխտն է, որով թե Ազգային մեծ ժողովի և թե նրա վստահությունը վայելող Նախարարների խորհրդի համար աշխարհագրական, ռազմական և տնտեսական ոչ մի սկզբունքով չբացատրվող և անհաշտելի հիշյալ առաջարկը ցանկացած պայմաններում անընդունելի հանգամանք է:

Նայելով այն վիճակագրություններին, որոնք պատրաստվել են օտար մասնագետների և անկողմնակալ հետազոտողների կողմից և ըստ ամենայնի համարվում են արժանահավատ, ապացուցված է, որ թե՛ անցյալում, թե՛ ներկայումս Վան և Բիթլիս նահանգները չեն ունեցել հայկական մեծամասնություն, ընդհակառակը, հայտնի իրողություն է, որ այդ շրջանում բացարձակ մեծամասնություն ունեցողները մուսուլմաններն են: Այդպիսի փոքրամասնություն կազմող հայերին մայր հայրենիքից մի մաս հողեր թողնելու առաջարկը, եթե նույնիսկ Խորհրդային սոցիալիստական հանրապետության կողմից էլ լինի, ոչ մի կերպով չի ազատվում իմպերիալիստական մտքի արդյունք լինելու արատից և ոչ մի մեկնությամբ չի կարելի ընդունել:

Ինչպես վերը նշված է, Անկարայի կառավարության ստեղծումը պայմանավորված է Ազգային ուխտով, ազգն էլ իր կողմից միայն այդ նպատակին հավատարիմ մնալու պայմանով է զորավիգ կանգնում ներկա կառավարությանը, քանզի հիշյալ սահմաններում ընդգրկված տարածքներից մի թզաչափ հողի անջատումն անգամ կնշանակի ամբողջ թշնամական աշխարհի դեմ հաստատակամորեն մեր պաշտպանած սրբազան դատի կործանում, ինչը պատճառ կդառնա ազգային դիմադրական ոգու քայքայման, իսկ այդ հանգամանքը, անկասկած, կհանգեցնի Ստամբուլի հետադիմական կառավարության և նրան իր դավադիր նպատակներին գործիք դարձնող Անգլիայի ազդեցության ծավալմանը և գերիշխանության հաստատմանը Անատոլիայում:

Ինքնահաճ անջատում չընդունող երկրի մի մասնիկից Անկարայի ազգային կառավարության ցանկացած նպատակով, և անգամ հարկադրանքի ներքո, կատարված հրաժարականի դեպքում, այս կառավարությունը տրամաբանորեն ոչ մի տարբերություն չի ունենա արևելքում, հյուսիսում և հարավում մեր մի քանի մեծ նահանգներ առանց պատճառի հայերին ու հույներին

թողնելով ազգի աչքում հավիտենապես նզովված և զզվելի դարձած Ստամբուլի կառավարությունից և կարիք չկա նույնիսկ բացատրելու, որ այսպիսի մի պարագայի իրականացումով կխախտվի ու կվերանա Անկարայի կառավարության նկատմամբ Անատոլիայի ժողովրդի ունեցած հավատն ու վստահությունը:

Այսուհանդերձ, Ռուսաստանի խորհրդային հանրապետության հետ բարեկամական ավելի ամուր կապի հաստատում և տևականացում ցանկացող Անկարայի ազգային կառավարությունը թե՛ Լենինի, թե՛ Չիչերինի կողմից մինչև հիմա արված բարեկամական հայտարարություններից և հավաստիացումներից հաստատապես այն կարծիքին է, որ Ռուսաստանի խորհրդային հանրապետությունն էլ նույն անկեղծ բաղձանքն է սնուցում: Ըստ որում նա մեծ հույս ունի, որ արտաքին գործերի նախարարը (Չիչերինը – Լ. Խ.) մինչև վերջ հավատարիմ կմնա բարեկամական այդ անկեղծ հավաստիացումներին, մեր ներկա կացությունը, նմանապես նաև Ազգային մեծ ժողովի որոշումն ու օրինական տրամադրությունները, ըստ արժանվույն կքննի ավելի մոտիկից և դրանց կարևորությունը նկատի առնելով կհրաժարվի իր արած առաջարկից:

Հետևաբար, Նախարարների խորհուրդը, ներկա վիճակն ու կացությունը մանրամասն քննարկելուց հետո, որոշել է ներքոգրյալ երկու հոդվածներում ամփոփված առաջարկը Ձերդ մեծության միջոցով հաղորդել Չիչերինին :

Հոդված 1. Նայելով տեղացի և օտար մասնագետ հետազոտողների կողմից կազմված Վան և Բիթլիս նահանգներին վերաբերող նախկին և վերջին վիճակագրություններին, հիշյալ նահանգներում հայերը երբևիցե այդտեղի իսլամների համեմատությամբ մեծամասնություն չեն կազմել: Հետևաբար, այդ նահանգների հողերի մի մասը փոքրամասնությանը թողնելու պահանջը իմպերիալիստին հատուկ մտքի արգասիք լինելուց բացի ուրիշ բան չէ: ***Անկարայի ազգային կառավարությունը, իմպերիալիզմի դեմ պաշտպանվելու և պայքարելու դիտավորությամբ կազմված մի կառավարություն լինելով, ստիպված է չընդունել իմպերիալիզմին բնորոշ նման պնդումն ու պահանջը*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.)

Հոդված 2. Անկարայի կառավարությունն իր գլխավոր պարտականությունն է համարում Թուրքիայից գաղթած օսմանցի հայերի իրենց բնակավայրերը վերադառնալուն արգելք չհարուցելը և այս կերպով վերադարձող ժողովրդին, ըստ ամենայնի, ուրիշ

երկրներում փոքրամասնություններին ապահովված իրավունքների շնորհումը:

Երբ տեղ հասնի այս հեռագիրը, խնդրում եմ, առանց ժամանակ կորցնելու, Չիչերինից տեսակցություն պահանջելով հաղորդել հիշյալ որոշումը, և առաջնորդվելով վերոհիշյալ դիտողություններով, դրանք հաստատել նաև բանավոր կերպով:

Մեծ հույս ունենք, որ հիշյալը ընդունելու է Անկարայի կառավարության այս խնդրում ունեցած տեսակետը և պիտի հրաժարվի իր արած առաջարկի վրա պնդելուց՝ այդ դեպքում դուք արտոնված եք երկու տերությունների արտաքին կոմիսարների միջև փոխանակել նշված նամակներն ու հոդվածները և երկու կողմի հանձնաժողովի անդամների միջև ճշտված ու իրենց իրավասությունների հիման վրա նշանագրված Բարեկամության դաշինքը ստորագրել Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության անունից:

Խնդրում եմ շնորհ արեք հեռագրով իսկույն ծանուցել Ձերդ մեծության ձեռնարկների արդյունքները և պայմանագիրը ստորագրելու դեպքում վերադառնալ Անկարա, ***հակառակ դեպքում առանձնապես խնդրում եմ, որ նոր հրահանգների սպասելով միառժամանակ ևս շարունակեք մնալ Մոսկվայում***» (ընդգծումը մերն է – Լ. Խ.)[1]:

Այսպիսին է Քեմալի հոկտեմբերի 16-ի թվակրությունն ունեցող հեռագիրը:

Հոկտեմբերի 22-ին Բեքիր Սամի բեյին նույնանման մի հեռագիր էլ ուղարկվում է Անկարայի կառավարության արտաքին գործերի նախարարության կողմից: Հեռագրում մասնավորապես ասվում էր. «Այսուհետ անհնարին է խոսել Վանի և Բիթլիսի հարցերի մասին: Ակներև է, որ արևմուտքի նենգ պատրանքներով տարված և հեղափոխականությունից չափազանց խրտնող Ստամբուլի ղեկավարների Ռուսաստանի կողմից դաշնագրի ընդունման համար որպես պայման հողեր թողնելու... պարագայի մասին շշուկն անգամ չափազանց մեծ ազդեցություն կներգործի ժողովրդի վրա: Հետևաբար, եթե ռուսական պետությունը ցանկանում է, որ թուրք ազգը իմպերիալիզմի դեմ իր պայքարը շարունակի իր հին հավատով և կամեցողությամբ, պետք է իսկույն հրաժարվի հիշյալ պահանջից և ստորագրի Բարեկամության դաշինքը»[2]:

---

[1] **Ali Fuat Cebesoy**, նշվ. աշխ., էջ 88-90:

[2] Նույն տեղում, էջ 90-91:

Այսպիսով, հոկտեմբերի 6-ին և 22-ին Անկարայի կառավարությունը պաշտոնապես հայտնում է Չիչերինին, որ Վանի և Բիթլիսի նահանգներից Հայաստանի Հանրապետությանը որոշ տարածք հատկացնելու մասին խոսք լինել չի կարող: Միաժամանակ, ինչպես տեսանք, Քեմալը Մոսկվային առաջարկում է Հայաստանի համատեղ նվաճման սեփական ծրագիրը:

Սակայն այդ հեռագրերը դեռևս հիմք չեն տալիս պնդելու, թե Քեմալը Ռուսաստանի հետևողական քաղաքականության դեպքում զիջման չէր գնա: Ընդհակառակը, Քեմալի հեռագրի մեր կողմից ընդգծված վերջին երկու տողերը ցույց են տալիս, որ նա Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերությունների սրման դեպքում կգնար անհրաժեշտ զիջումների:

Ինչևիցե, Քեմալն իր առաջարկն արել էր և սպասում էր Մոսկվայի պատասխանին: Մոսկվան կամ պետք է շարունակեր Չիչերինի քաղաքականությունը, կամ էլ ընդուներ Հայաստանի համատեղ նվաճման ծրագիրը:

Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, Մոսկվան ընտրեց երկրորդ՝ Հայաստանի համատեղ նվաճման ուղին:

Ռուս-թուրքական հարաբերություններում նոր փուլ էր սկսվում: Բեքիր Սամի բեյի պատվիրակությունը կատարեց իր առաքելությունը և շուտով վերադարձավ Անկարա: 1920 թ. նոյեմբերի 21-ին Ալի Ֆուադ Ջեբեսոյը նշանակվեց Քեմալական Թուրքիայի դեսպան Ռուսաստանում:

Ռազմադաշտում պարտված Հայաստանը դատապարտված էր հանձնվելու Թուրքիայի ողորմածությանը, իսկ հայ ժողովուրդը շատ լավ գիտեր, թե դա ինչ է նշանակում: Արևմուտքը գործնականորեն գոյություն չուներ, իսկ ռուսական զորքերը, գրավելով վիճելի տարածքները, հարմար պահի էին սպասում Հայաստան մտնելու և երկիրը խորհրդայնացնելու համար:

Հայաստանի Հանրապետությունն իր գոյության հարցը պետք է լուծեր միայնակ: Հայրենիքը վտանգի մեջ էր: «Երբ հայ զինվորները ստիպվեցան տեղի տալ իրենց առաջին դիրքերին, և թուրքերը մտան Սարիղամիշ, Օլթի, Մերդենեկ և Կաղզվան, թե՛ կառավարությունը և թե՛ հայ ժողովուրդը նոր զգաց, որ հայրենիքը վտանգի մեջ էր»[1],– գրում է Կ. Սասունին:

Հայաստանի կառավարությունը և բանակի հրամանատարությունն այն կարծիքին էին, որ սեպտեմբերի 29-30-ի խուճապային

[1] **Կ. Սասունի**, նշվ. աշխ., էջ 49-50:

նահանջը մասնակի երևույթ է եղել և չի բնորոշում հայոց բանակի մարտունակությունը:

Կ. Սասունին գրում է. «Հոկտեմբերի 14-ին որոշված էր թուրքերուն դեմ հարձակողականի երթալ ամբողջ ճակատին վրա: Ընդհանուր տրամադրությունն այն էր, որ հայկական բանակը պիտի հաղթեր: Բնական է, որ օրվա գործողությունների մասին միայն պաշտոնական պատասխանատու շրջանակները գիտեին: Ժողովուրդը իր ուժերի առավելագույնը տրամադրած էր զինվորական իշխանության և շատ մեծ հավատք ուներ, որ հաղթանակը հայ բանակի կողմը պիտի մնար: Ժողովուրդը անհամբեր կը սպասեր այդ մեծ հարձակողականին, առանց անոր թուականը գիտնալու»[1]:

Այդ կարճ ժամանակում Հայաստանի կառավարությունը և բանակի հրամանատարությունը հասցրել էին համալրել, վերադասավորել ուժերը և բանակին հրամայված էր հոկտեմբերի 14-ին ամբողջ ճակատով հարձակում սկսել կորցրածը հետ բերելու համար: Այդ հաղթանակը պետք է վերջ դներ բանակի խուճապային տրամադրություններին, բարձրացներ նրա մարտական ոգին, առանց որի պատերազմն անխուսափելիորեն կավարտվեր հայերի ծանր պարտությամբ: Բոլոր քաղաքական կուսակցությունները, հոգևորականությունը, քաղաքական-հասարակական կազմակերպությունները, ամբողջ հայ ժողովուրդը միակամ համախմբվեցին Հայաստանի Հանրապետության ղեկավարության շուրջը՝ երկիրը թուրքական հարձակումից փրկելու համար: Պահի ճակատագրական լինելը հասկանում էին բոլորը: Ներքին տարաձայնությունները ժամանակավորապես մի կողմ էին թողնվել: Այս ընդհանուր հունով չէր գնում միայն հայկոմկուսը, որի քաղաքական սկզբունքներն արդեն ներկայացրել ենք ընթերցողին:

Բախտորոշ ճակատամարտը սկսվեց հոկտեմբերի 14-ի առավոտյան, երեկոյան 8-ի կողմերն ամեն ինչ ավարտված էր. հայկական բանակը պարտություն էր կրել:

Հայոց բանակի հոկտեմբերի 14-ի հարձակումը, որի հետ այնքան մեծ հույսեր էին կապել կառավարությունն ու ժողովուրդը, վերջացավ անհաջողությամբ: Ճակատամարտի ավարտից անմիջապես հետո հրամանատար Սիլիկյանն արցունքոտ աչքերով Կ. Սասունուն ասել է. «Սիրելիս, Կարսը վտանգի մեջ է...»: «Ու-

[1] Նույն տեղում, էջ 69:

ռեմն,– գրում է Սասունին,– հոկտեմբերի 14-ի այնքան անձնավստահությամբ սկսված հարձակողականը ձախողված էր և այնպիսի ձևով մը, որ Կարսի բերդն ալ վտանգի կենթարկվեր»[1]:

Հայոց բանակի այդ անհաջողությունը Կ. Սասունին հետևյալ կերպ է բնութագրում. «Առաջին վճռական փուլն էր հոկտեմբերի 14-ը: Այդ ճակատամարտի ձախողումով՝ զորքի մեջ բեկում առաջ եկավ: Կարսի հանձնումը հեշտ ըմբռնում դարձավ: Խուճապային հոգեբանությունը սեփականություն մնաց և՛ զինվորականության, և՛ քաղաքացիներուն»[2]:

Գրեթե նույն եզրակացությանն է հանգել նաև Հակոբ Տեր-Հակոբյանը (Իրազեկ): Նա գրում է. «Հայ բանակը, որ թրքական խուժումին առջև անակնկալի գալով պաշտպանության երկրորդ գիծի մը վրա քաշուած և հոն աշխատած էր ինքզինքը զորացնել, ուզեց հակահարձակումով մը թուրքերը վանել, ժամանակ չտալու համար անոնց, որ ավելի առաջ գան և ուղղակի սպառնան Կարսին»[3]: Սակայն, շարունակում է նա, հոկտեմբերի 14-ի հարձակումը դժբախտաբար ձախողվեց նույն օրն իսկ և «ճակատագրական դեր ունեցավ հետագա դեպքերուն վրա»[4]: «Այս ձախողությունն,– ամփոփում է իր միտքը Հակոբ Տեր-Հակոբյանը,– ցնցեց հայ ժողովուրդը և զինվորական շարքերը: Հայերը որ կը հուսային այդպիսով չափել թշնամիին ուժերը և ի հարկին շեշտակի հարվածով ընկրկել զայն ու ջարդել, դառն հուսախաբություն մը ճաշակեցին»[5]:

Հոկտեմբերի 14-ի հարձակման ձախողումից հետո պարզ դարձավ, որ պատերազմի ճակատագիրը կանխորոշված է: Հայաստանի երիտասարդ բանակը պատմության քննությունը չբռնեց: Քաղցած և վատ զինված հայ ժողովուրդը 1918 թվականի մայիսյան հերոսամարտերում փայլուն հաղթանակներ տարավ և հետ շպրտեց թուրքական զորքերին: Հիանալի զինված, հանդերձավորված ու կուշտ հայոց բանակը 1920 թվականին չկարողացավ հայրենիքի նկատմամբ իր պարտքը կատարել:

Ստեղծված իրավիճակում Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը պետք է շտապ այլ ուղիներ որոներ հայոց պետականությունը և ժողովրդին փրկելու համար:

---

[1] Նույն տեղում, էջ 74:
[2] Նույն տեղում, էջ 80:
[3] **Հ. Տեր-Հակոբյան**, Հայաստանի վերջին աղետը, Կ. Պոլիս, 1921, էջ 100:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում, էջ 103:

2. ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ՆԱԽԱԳԻԾԸ

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ Լեգրանի պատվիրակության հետ բանակցությունները պետք է վարեր Շանթի պատվիրակությունը, որը Մոսկվայից Երևան է ժամանում սեպտեմբերի 14-ին:

Շանթի պատվիրակության ժամանումից հետո, սեպտեմբերի 19-ին, Հայաստանի կառավարությունը դիմում է Լեգրանին՝ նրան հրավիրելով Երևան բանակցությունները սկսելու համար[1]: Լեգրանի պատվիրակությունը Երևան է ժամանում հոկտեմբերի 11-ին:

Ռուսաստանի պատվիրակությունն ուներ հետևյալ կազմը՝ Բ. Լեգրան (նախագահ), անդամներ՝ Օ. Սիլին, Ս. Տեր-Գաբրիելյան, Ա. Բոբրիշչև, քարտուղար՝ Լ. Շիֆֆերս: Հայաստանի կառավարության պատվիրակության կազմը՝ Լ. Շանթ (նախագահ), անդամներ՝ Լ. Զարաֆյան և Հ. Տերտերյան, քարտուղար՝ Յակուլով:

Լեգրանի պատվիրակությունը Երևանի կայարանում հանրապետության քաղաքացիական և ռազմական իշխանությունների կողմից ընդունվեց հանդիսավոր կերպով: Նույն օրը երեկոյան Լեգրանը պաշտոնապես այցելեց հանրապետության վարչապետ և արտաքին գործոց նախարար Հ. Օհանջանյանին, այնուհետև՝ Շանթի պատվիրակությանը: Հոկտեմբերի 14-ին տեղի է ունենում պատվիրակությունների երկրորդ հանդիպումը, որի ժամանակ, համաձայն Լեգրանի հեռագրի, քննարկվել է տրանզիտի վերաբերյալ Ռուսաստանի նախագիծը: Ռուսաստանի կառավարությունն, ինչպես տեսանք, Լեգրանին պաշտոնապես ոչ մի ցուցում չէր տվել, թե ի՞նչ պայմաններով պետք է կնքվի հայ-ռուսական պայմանագիրը: Չիչերինը, չնայած Լեգրանի բազմաթիվ հարցումներին, խուսափեց նրան որոշակի ցուցումներ տալուց: Քննարկման ներկայացված նախագիծը մշակված էր Լեգրանի կողմից նախորդ գրություններում բարձրացված առաջարկների հիման վրա, որոնց արդեն ծանոթ ենք: Հայաստանի կառավարությունն, իր հերթին, քննարկման էր ներկայացրել Շանթի կողմից ստորագրված մի նախագիծ, որը, չնայած «Համաձայնագիր երկաթուղիների մասին» չեզոք անվանմանը, պարունակում էր կնքվելիք հայ-ռուսական պայմանագրի կարևորագույն հիմնադրույթներ:

---

[1] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, N 3, էջ 64:

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը ՌԽՖՍՀ-ին Հայաստանի երկաթուղիներով ռազմական տրանզիտի իրավունք է տալիս: Ընդ որում, Ռուսաստանի կառավարությունը երաշխավորում է, որ ներկա համաձայնագիրը ոչ մի դեպքում չի օգտագործվելու ի վնաս Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավունքների և անկախության:

2. Հայաստանի կառավարությունը Ռուսաստանի կառավարությանը թույլ է տալիս զորամասերը փոխադրել միայն անզեն և 200 հոգուց ոչ ավել թիվ կազմող առանձին խմբերով:

3. Ռուսաստանի կառավարությունը Հայաստանի Հանրապետությանն է հանձնում Հայաստանի տարածքով փոխադրվող ռազմական տրանզիտի 50 տոկոսը:

4. Ռուսաստանի կառավարության կողմից տրանզիտով Հայաստանի տարածքով փոխադրվող ռազմամթերքը, սննդամթերքը, ինչպես նաև զորամասերն առանց կանգ առնելու պետք է ուղարկվեն Տրապիզոն-Երզնկա-Խարբերդ գծից ոչ մոտ ընկած կետերը և ոչ մի դեպքում չպետք է օգտագործվեն Հայաստանի Հանրապետության դեմ:

5. Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը, ինչպես նաև մինչև ռուս-թուրքական նախկին սահմանը և 4-րդ հոդվածում նշված գիծն ընկնող տարածքն ազատվում է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության զորքերից:

6. Ռուսաստանի կառավարությունը սույն համաձայնագիրը ստորագրելուց հետո անմիջապես ինչպես իր, այնպես էլ Ադրբեջանի կառավարության զորքերից ազատում է Նախիջևանի և Զանգեզուրի գավառները և «հանձնում Հայաստանի Հանրապետությանը, որպես վերջինիս տարածքի անվիճելի մասեր»: Ղարաբաղը համարվում է վիճելի և մինչև այդ վեճի լուծումն ազատվում է ռուսական և ադրբեջանական զորքերից ու հանձնվում տեղացի ազգաբնակչության ժողովրդավարական ճանապարհով ընտրված մարմիններին:

7. Համաձայնագրի առաջին և երկրորդ հոդվածներով նախատեսված փոխադրումները կատարվում են տեխնիկական միջոցներով և ռազմական պահպանությամբ: Հայաստանի կառավարությունը Ռուսաստանի կառավարությանը իրավունք է տալիս անարգել օգտվել Հայաստանի Հանրապետության կառավարության հեռագրից և ռադիոհեռագրից: Ռուսաստանի կառավարությունը երաշխավորում է, որ կապի օգտագործումը չի վնասի Հայաստանի Հանրապետության շահերին և անկախությանը:

8. Առաջին և երկրորդ հոդվածներում նշված փոխադրումների կազմակերպման գործնական մանրամասները, ինչպես նաև վճարումների կարգը դրվում էր Ռուսաստանի և Հայաստանի կառավարությունների հավասար քանակով ներկայացուցիչներից կազմված խառը հանձնաժողովի վրա:

9. 4-րդ և 5-րդ հոդվածների ճշգրիտ կատարման երաշխիքները դնել երկու հանրապետությունների հավասար քանակով ներկայացուցիչներից բաղկացած խառը հանձնաժողովի վրա՝ Ռուսաստանի ներկայացուցչի նախագահությամբ:

10. 8-րդ և 9-րդ հոդվածներով նախատեսված հանձնաժողովներն իրենց գործունեությունը պետք է սկսեն սույն համաձայնագիրը ուժի մեջ մտցնելուց երեք օրից ոչ ուշ:

11. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության տարածքը թուրքական զորքերից մաքրելուց և դրանք մինչև 4-րդ հոդվածով նախատեսված գիծը հետքաշելուց անմիջապես հետո:

12. Եթե Թուրքիայի կառավարությունը չկատարի կամ կխախտի սույն համաձայնագրի 4-րդ և 5-րդ հոդվածներով նախատեսված պայմանները, ապա Ռուսաստանի կառավարությունն անմիջապես խզում է իր բոլոր կապերը Թուրքիայի կառավարության հետ[1]:

Լեգրանը հիմնական հարցերի շուրջ առաջարկում էր հետևյալը.

1. Ռուսաստանը ճանաչում է Հայաստանի Հանրապետության անկախությունը. Հայաստանի անվիճելի տարածք էր համարվում Երևանի ամբողջ նահանգը, Կարսի ամբողջ շրջանը, Զանգեզուրի գավառը, հայկական Ղազախն ու Լոռին:

2. Նախիջևանն ու Զանգեզուրը թողնելով Հայաստանին, Ղարաբաղը հանձնվում էր Ադրբեջանին:

Հոկտեմբերի 14-ին այդ հարցերի քննարկման ժամանակ տեղի ունեցան բուռն վեճեր: Նույն օրը Լեգրանը հեռագրով Չիչերինին հայտնում է բանակցությունների ընթացքի մասին: Նա հաղորդում է, որ վերջնական պատասխան դեռ չկա, և դրությունը կպարզվի հոկտեմբերի 16-ից ոչ ուշ: «Խորհրդային Ռուսաստանի միջնորդությունը թուրքական հարցում,– շարունակում է նա,– հայերը պատրաստ են ընդունել Բրեստի պայմանագրի և Բաթումի կոնվենցիայի վրա հիմնված հավակնություններից Թուրքիայի

[1] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 318-319.

հրաժարվելու պայմանով»: Նա նշում է նաև, որ հայերը բողոքում են վիճելի տարածքներում կարմիր բանակի զորամասերը տեղական պարտիզանական ջոկատներով և ադրբեջանական զինված ուժերով փոխարինելու դեմ, այն էլ Նախիջևանում թուրքական կանոնավոր բանակի առկայության պայմաններում, որի հետ գտնվում են պատերազմական վիճակում[1]:

Հոկտեմբերի 14-ին Չիչերինին ուղղված մեկ այլ հեռագրում Լեգրանը տեղեկատվություն էր տալիս թուրք-հայկական պատերազմի ընթացքի մասին. «Արևելյան ճակատում թուրքական բանակի զորամասերի հարձակումը կանգ է առել: Հայերը սկզբնական խուճապից ուշքի են եկել, կազմակերպել են դիմադրություն, պատրաստվում են հարձակման»[2]: Լեգրանը տեղյակ չէր, որ հայկական բանակի հարձակումը նույն օրն առավոտյան արդեն սկսվել էր:

Հոկտեմբերի 14-ին Չիչերինը Լեգրանին հեռագրում է. «Թուրքական հարձակման կապակցությամբ նկատի ունեցեք, որ մենք ոչ մի դեպքում չպետք է ներքաշվենք ռազմական գործողությունների մեջ: Կապվեցեք քեմալականների հետ, նրանց մատնացույց արեք, որ մենք ռազմական գործողությունները համարում ենք անժամանակ և վտանգավոր, որոնք կարող են Անտանտին սադրանքի ենթարկել: Ինչպես քեմալականների, այնպես էլ հայերի հետ հարաբերություններում եղեք ծայրաստիճան զգույշ, մեզ ակտիվ գործողությունների մեջ ներքաշելու հնարավորություն մի տվեք, մշտապես վարեցեք խաղաղության քաղաքականություն, որպեսզի թույլ չտաք, որ Անդրկովկասում լուրջ ճգնաժամ առաջանա: Հայերին հայտնեցեք իրենց և քեմալականների միջև միջնորդ լինելու մեր պատրաստակամությունը»[3]:

Նույն օրը Չիչերինը մի հեռագիր էլ ուղարկում է Օրջոնիկիձեին, տալով հետևյալ հրահանգը. «Թուրքերի շարժումն արդեն առաջ է բերել Անտանտի ուժեղ գործունեություն, և գնդապետ Ստոքսը շրջագայում է Հայաստանում, դիտում է ռազմաճակատը, ուղարկում է զեկուցագիր: Պետք է քեմալականներին մատնացույց անել, որ նրանց կողմից անզգուշություն է Անտանտին այդ տեղերում դեսանտի համար առիթ տալ, որովհետև Անտանտը կարող է կառչել այդպիսի դեպքից: Պետք է հնարավորության

[1] Նույն տեղում, թ. 181:
[2] Նույն տեղում, թ. 180:
[3] Նույն տեղում, թ. 179:

չափ վերացնել ճգնաժամը Կովկասում»[1]:

Օրջոնիկիձեն նույն օրը Ստարկին և Քավթարաձեին հանձնարարում է Անտանտի դեսանտից խուսափելու նպատակով թուրքերի հարձակումը դադարեցնելու մասին Չիչերինի առաջարկը, հաղորդել քեմալականներին[2]:

Հոկտեմբերի 20-ին Չիչերինը նորից է նույն հարցով դիմում Օրջոնիկիձեին. «Թուրքական հարձակման շարունակումը ծայրահեղ աննպատակահարմար է: Ձանացեք նրանց համոզել այդ չանել, դրանով նրանք վնաս են հասցնում, քանզի առիթ են ստեղծում, հրահրելով Անտանտի միջամտությունը»[3]:

Ինչպես տեսնում ենք, Ռուսաստանի ղեկավարությունը հոկտեմբերի կեսերին մեղմ, բարեկամական տոնով կազմված գրություններով քեմալականներին փորձում էր համոզել դադարեցնելու հարձակումը: Փաստաթղթերը ցույց են տալիս, որ Ռուսաստանը հանդես էր գալիս ոչ թե Հայաստանի պաշտպանությամբ, այլ պարզապես ցանկանում էր ժամանակ շահել Հայաստանը խաղաղ խորհրդայնացնելու համար: Ռուսաստանի ղեկավարությունը շատ լավ էր հասկանում, որ Թուրքիան հարձակումը շարունակելու դեպքում ավելի շատ տարածքներ պետք է զավթի: Մինչդեռ այդ տարածքները Ռուսաստանն էր ցանկանում գրավել: Փաստաթղթերում խոսվում է թուրքական հարձակման անժամանակ և վտանգավոր լինելու մասին: Ռուսաստանը թույլ տալով Թուրքիային հարձակվել Հայաստանի վրա, այժմ էլ բարեկամաբար ցանկանում էր դադարեցնել այդ հարձակումը, իր ծրագրերն իրականացնելու համար ժամանակ շահելու նպատակով:

Մոսկվայի իշխանությունները գիտեին, որ արևմտյան տերությունները հրաժարվել են Հայաստանին օգնելուց, նրան թողնելով բախտի քմահաճույքին: Հայաստանը մենակ էր և անպաշտպան: Եկել էր Հայաստանը խորհրդայնացնելու հարմար պահը: Հենց այդ նպատակով էլ շուտով Բաքու էր ժամանելու Ստալինը:

Հարց է առաջանում, ինչո՞ւ Խորհրդային Ռուսաստանը, եթե իրոք անկեղծորեն ձգտում էր փրկել հայ ժողովրդին թուրքական հարձակումից, պաշտոնական նոտայով չդիմեց Թուրքիային՝ պահանջելով անմիջապես դադարեցնել հարձակումը: Գաղտնիք

---

[1] **Մ. Արզումանյան**, նշվ. աշխ., էջ 333:
[2] РГАСПИ, ф. 85, оп. 14, д. 18, л. 1.
[3] Նույն տեղում, գ. 15, թ. 5:

չէ, որ Ռուսաստանի խիստ նոտայի դեպքում Թուրքիան հարկադրված կլիներ անմիջապես դադարեցնել հարձակումը:

Հիշենք, որ 1918 թ. ապրիլին, երբ թուրքական զորքերը շարժվում էին դեպի Հայաստանի խորքերը, Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը բողոքի խիստ նոտայով դիմեց Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանը, նշելով, որ թուրքական զորքերի գրաված շրջաններում հայ բնակչության կոտորածների պատասխանատվությունը, որպես դաշնակցի, ընկնում է գերմանական կառավարության վրա: Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը վճռականորեն բողոքեց ինքնորոշման իրավունքի այն ձևով իրագործման դեմ, որը կատարվել է Արդահանում, Կարսում, Բաթումում և պնդեց, որպեսզի Գերմանիան վճռականորեն խառնվի Կովկասում տեղի ունեցող իրադարձություններին, նպատակ ունենալով կանխել խաղաղ բնակչության հետագա ոչնչացումը և կոտորածը[1]: Հեռագիրը ստորագրել էին Չիչերինը և Կարախանը:

Այդ նոտան ուղարկելու օրվանից անցել էր երկու և կես տարի: Այդ ընթացքում դերերը փոխվել էին: Այժմ Թուրքիայի դաշնակցի դերում հանդես էր գալիս Խորհրդային Ռուսաստանը: Եվ այն, ինչ 1918 թ. Ռուսաստանը պահանջում էր Գերմանիայից, այժմ պետք է կատարեր ինքը: Սակայն Ռուսաստանն այդ խնդիրը չկատարեց, որովհետև այն չէր բխում բոլշևիկյան կայսրության շահերից: Ռուսաստանի խաղն Անդրկովկասում դեռ չէր ավարտվել, այդ խաղում Թուրքիան դեռ դեր ուներ կատարելու: Խաղի հաջող ավարտը պայմանավորված էր երկու դերակատարների՝ Ռուսաստանի և Թուրքիայի փոխհամաձայնեցված, միասնական գործողություններով: ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյի հոկտեմբերի 14-ի նիստում, ինչպես նշեցինք, որոշվել էր վճռական գործողությունների դիմել Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելու համար: Ռուսական դիվանագիտության պայքարն այդ խնդրի իրականացման համար էր մղվում: Հետևաբար, հոկտեմբերի կեսերին Մոսկվայից քեմալականներին ուղարկվող գրությունները՝ Հայաստանի դեմ հարձակումը ժամանակավորապես դադարեցնելու մասին, նպատակ էին հետապնդում բարենպաստ պայմաններ ստեղծել հոկտեմբերի 14-ի որոշումն իրականացնելու համար:

Ահա այսպիսի պայմաններում էին ընթանում հայ-ռուսական

[1] ДВП СССР, т. 1, М., 1957, с. 241.

բանակցությունները Երևանում:

Հայ ժողովրդի «պաշտպանի» դերում հանդես եկող Ռուսաստանը նույնիսկ թուրք-հայկական պատերազմի պայմաններում շարունակում էր զենք ու զինամթերք մատակարարել Թուրքիային:

Այդ կապակցությամբ հոկտեմբերի 20-ին Հ. Օհանջանյանը բողոքի նոտա է ուղարկում Չիչերինին: Նա հայտնում է, որ Ռուսաստանի կողմից Տրապիզոն ուղարկված զենքն ու զինամթերքը տարվել է Արևելյան ռազմաճակատ՝ Հայաստանի դեմ օգտագործելու նպատակով: Ռուսաստանի կառավարությունը բազմիցս հավաստիացրել է Հայաստանի նկատմամբ իր անկեղծ բարեկամական հարաբերությունների մասին: Սակայն Ռուսաստանի կողմից Թուրքիային զենք ու զինամթերք մատակարարելը չի կարող հայ ժողովրդի զարմանքը չառաջացնել և չդիտվել որպես աջակցություն Թուրքիայի իմպերիալիստական մտադրություններին: Հ. Օհանջանյանը Հայաստանի կառավարության անունից խնդրում է դադարեցնել զենքով ու զինամթերքով Թուրքիային օգնություն ցույց տալը[1]:

Հոկտեմբերի 24-ին Լեգրանը Չիչերինին հայտնում է բանակցությունների առաջին արդյունքների մասին.

1. Բանակցությունների հետևանքով պարզվել է, որ հայերը Լեգրանի ներկայացրած տրանզիտի և կապի մասին նախագծի հիմնական կետերի հետ համաձայն են:

2. Հայերը տրանզիտը թույլ տալու համար հիմնական պայման են համարում Զանգեզուրը և Նախիջևանը Հայաստանի անբաժան մաս ճանաչելը: Լեգրանը հայերին հայտնել է, որ այդ հարցն առանց Ադրբեջանի չի կարող լուծվել: Զանգեզուրի և Նախիջևանի հարցը Ռուսաստանը կարող է բարձրացնել Ադրբեջանի առաջ, եթե հայերը համաձայնվեն հրաժարվել Ղարաբաղի նկատմամբ ունեցած պահանջներից: «Երկար քննարկումներից հետո,– եզրափակում է Լեգրանը,– հայերը ոչ էական վերապահություններով հրաժարվեցին Ղարաբաղից»:

3. Մյուս հարցը, որ մեծ ջանքեր պահանջեց, թուրքերի կողմից ռազմական երաշխիքների հարցն էր: Լեգրանը նշում է, որ այդ հարցում հայերն առաջ քաշեցին միանգամայն անընդունելի պայմաններ, թուրքական զորքերը Էրզրումից հետ քաշել Երզնկայի գիծը: Ի վերջո, Լեգրանն առաջարկել է տրանզիտի ըն-

[1] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 186-187.

դունումը պայմանավորել թուրքական զորքերի հետքաշումով 1914 թ. սահմանները և թուրքերի այն պարտավորությամբ, որ սահմանային գոտում կպահվի այնքան զորք, որքան անհրաժեշտ է սահմանների պաշտպանության համար: Սահմանաշերտի լայնությունը պետք է որոշվեր այնպես, որ այն չպետք է ընդգրկեր Էրզրումը:

Լեգրանը հայտնում է, որ հայերի վերջնական պատասխանը հայտնի կդառնա հոկտեմբերի 25-ին, որից հետո նա պետք է մեկներ Բաքու, իսկ այնուհետև՝ հնարավոր է նաև Մոսկվա:

Հեռագիրը նա ավարտում է ստորև բերված մտքերով, որոնց վրա անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հետագա իրադարձությունները քննելու տեսանկյունից: «Կարծում եմ, որ ավելի լավ կլինի մինչև իմ Բաքու հասնելը Զանգեզուրի և Նախիջևանի մասին Ադրբեջանին ոչինչ չհայտնել,– գրում է Լեգրանը,– քանի որ դա կառաջացնի բացարձակապես ավելորդ հուզումներ: Պետք է նկատի ունենալ, որ Երևանի մեր բանակցությունները մեզ չեն կաշկանդում և ոչ մի որոշումով, նրանք միայն սահմանում են այն պայմանները, որոնց հիման վրա Հայաստանը կարող է ընդունել մեր ազատ ռազմական տրանզիտը Թուրքիա: Ընդհանրապես, ներկայումս, երբ Անտանտը լուրջ ջանքեր է գործադրում, որպեսզի տիրի Հայաստանին, մեր կողմից պահանջվում է հատուկ զգույշ և ուշադիր վերաբերմունք հայկական հարցի վերաբերյալ»[1]:

Քանի որ Չիչերինն իր պաշտոնական տեսակետները չէր հայտնել Լեգրանին՝ բանակցությունների ժամանակ քննարկման դնելու համար, այդ պատճառով էլ, որպեսզի պայմանագրի նախագիծը ընդունելի դառնար, պետք է հավանության արժանանար և՛ Ռուսաստանի, և՛ Ադրբեջանի կողմից:

Նույն օրը Լեգրանը երկրորդ կարևոր հեռագիրն է հղում Չիչերինին. «Մեր բանակցությունները գրավել են Անտանտի ուժեղ ուշադրությունը. ժամանեց անգլիական կոմիսար Ստոքսը, որը դրանից քիչ առաջ էր եղել Երևանում: Մեզ հասած տեղեկությունների համաձայն, Ստոքսը առաջարկել է Անդրկովկասյան Համադաշնության ստեղծման ծրագիր, որի մեջ բացի Վրաստանից և Հայաստանից պետք է մտնի նաև Ադրբեջանը, որտեղ Ստոքսի հաշվարկներով մոտ ապագայում իշխանությունը պետք է զավթեն մուսավաթականները, և Դաղստանը: Ըստ երևույթին,

[1] Նույն տեղում, թ. 188:

այդ կապակցությամբ է Վրաստանի նախկին ռազմական նախարար Գեորգաձեն մի քանի զինվորականների հետ ժամանել Երևան: Սպասվում է ֆրանսիական ներկայացուցչի ժամանումը: Ստոքսը Երևանում թողել է իր մշտական ներկայացուցչին, բան, որ նախկինում չէր անում: Բացի դրանից, այստեղ կան իտալական և ամերիկյան ներկայացուցչություններ...»:

Այս հեռագրում, խոսելով Հայաստանում դաշնակիցների գործունեության մասին, Լեգրանը միաժամանակ ընդգծում է. «Հայերը ձեռնպահ են մնում Անգլիայի հետ համաձայնությունից՝ վիճելի տարածքների նկատմամբ Հայաստանի իրավունքը ճանաչելուց անգլիացիների հրաժարվելու կապակցությամբ, որոնք դրանք գերադասում են զիջել մուսավաթականներին: Հայերը հուսով են Խորհրդային Ռուսաստանի հետ հասնել այդ մարզերի հարցի ավելի բարենպաստ լուծման»[1]:

Լեգրանն իր հեռագրով Չիչերինին ցույց տալով դաշնակիցների գործունեության ուժեղացումը Հայաստանում, միաժամանակ ընդգծում է այն հանգամանքը, որ Հայաստանի կառավարությունը ստեղծված ծանր ժամանակներում պահպանելով կապերն Արևմուտքի հետ, անվերապահորեն կմիանա այն ուժին, որն ի վիճակի է լուծելու նրա առջև ծառացած կարևորագույն խնդիրները:

Երևանում վարվող բանակցություններն ավարտվում են հաջողությամբ: Հոկտեմբերի 28-ին ստորագրվեց «Ռուսաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության հաշտության պատվիրակությունների եզրափակիչ որոշման արձանագրությունը»:

Մեր ձեռքի տակ են Լեգրանի երկու հեռագրեր, որոնցից մեկը հոկտեմբերի 24-ի հեռագրի շարունակությունն է, մյուսը՝ լրացումը: Որպես հոկտեմբերի 24-ի հեռագրի լրացում ուղարկված նոյեմբերի 1-ի հեռագրում Բ. Լեգրանը Գ. Չիչերինին հայտնում է՝ բանակցություններն ավարտված են, հայերը համաձայնություն են տվել Հայաստանի բոլոր երկաթուղիներով և բոլոր ուղղություններով զորամասերի ռազմական տրանզիտին, տվել են կապի իրավունք, Հայաստանն ընդունում է նաև Ռուսաստանի բարեկամական միջնորդությունը Թուրքահայաստանի տարածքային հարցերում:

---

[1] Նույն տեղում, թ. 189:

Տրանզիտի դիմաց հայերը դրել են հետևյալ պայմանները.

1. Զանգեզուրի և Նախիջևանի միացումը Հայաստանին, ռուսական զորքերի հետքաշումը այդ գավառներից, Հայաստանի կառավարության հրաժարումը Ղարաբաղից:

2. Հայաստանին պետք է տրվի տրանզիտով փոխադրվող զենքի ու զինամթերքի 25 տոկոսը:

3. Հայաստանին պետք է տրվի երկու և կես միլիոն ռուբլու վարկ՝ ոսկով:

Բացի դրանից, տրանզիտի պայմանագրի ուժի մեջ մտնելը պայմանավորվում է .

ա) թուրքերի կողմից ռազմական գործողությունների դադարեցմամբ,

բ) թուրքական զորքերի մինչև 1914 թ. սահմանները հետքաշմամբ,

գ) թուրքերը պարտավորվում են տրանզիտով առաքված ապրանքներն ուղարկել Տրապիզոն-Էրզրում-Մուշ-Բիթլիս գծից ոչ մոտ ընկած կետերը:

Այդ պայմանների կատարման հսկողությունը դրվում է Ռուսաստանի ներկայացուցիչների նախագահությամբ գործող խառը հանձնաժողովների վրա: Բացի դրանից, հայերը Ռուսաստանի շահագործմանն են հանձնում Շահթախտ-Մակու նեղգիծ երկաթուղին և այդ երկաթուղու գույքը[1]:

Նույն օրը Չիչերինին ուղարկված երկրորդ հեռագրում Լեգրանը հայտնում է. «Մեր կողմից ստորագրվել է արձանագրություն, որը կողմերին պարտավորեցնում է ստորագրել դրան կից հաշտության պայմանագիրը և տրանզիտի ու կապի մասին լրացուցիչ պայմանագրերը, այն դեպքում, եթե Ադրբեջանը համաձայնի վիճելի տարածքների մասին վերը շարադրված որոշմանը, իսկ Ռուսաստանը համաձայնի Հայաստանին տրամադրել երկու և կես միլիոն վարկ ոսկով»:

Ուրեմն, Հայաստանի հետ հաշտության պայմանագիր կարող էր ստորագրվել միայն այն դեպքում, եթե լիներ Ռուսաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի համաձայնությունը, մի բան, որը ստեղծված իրավիճակում գրեթե անհնարին էր:

Սակայն, չնայած դժվարություններին, Լեգրանը հետևողականորեն պայքարում էր Հայաստանի հետ խաղաղության պայմանագրի ստորագրմանը հասնելու համար:

---

[1] Նույն տեղում, թ. 196:

Նա համաձայնագիրը համարում էր ընդունելի և գտնում, որ այն իրական հնարավորություն է տալիս խափանելու Հայաստանն իր գործիքի վերածելու Անտանտի ջանքերը և Ռուսաստանի կողմից ազդելու Թուրքիայի ու Պարսկաստանի քաղաքականության և դրանցում ծավալվող իրադարձությունների վրա: «Նույնիսկ վատագույն դեպքում,– գրում է նա,– եթե քեմալականները չդրսևորեն բավարար խաղաղասիրական ձգտումներ, կարծում եմ, Հայաստանի հետ համաձայնագիրը ձախողում է վրաց-հայկական միություն ստեղծելու Անտանտի մտադրությունը և ամրապնդում մեր դրությունը հարավային Կովկասում, ապահովելով մեր ազդեցությունն այնպիսի կարևոր ռազմավարական հանգույցում, ինչպիսին Հայաստանի կողմից զբաղեցրած շրջանն է»:

Հայտնելով այդ բոլոր տեղեկությունները, Լեգրանը գրում է. «Խնդրում եմ շտապ հայտնել Ձեր գնահատականը և նկատառումները: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ես համոզված եմ, որ եթե Դուք ամուր դիրք գրավեք, մեզ կհաջողվի Ադրբեջանին թեքել դեպի ցանկալի որոշում»:

Ամփոփելով հեռագիրը, Լեգրանն առաջարկում է նկատի ունենալ այն, որ «դաշնակները Հայաստանում շատ ամուր են, կոմունիստները ներկայումս ուժ չեն ներկայացնում, Հայաստանում դաշնակներին (նրանց իշխանությունը – Լ. Խ.) կարող է վերացնել միայն հանրապետության տարածքի ռազմակալումը թուրքական կամ մեր զորքերի կողմից»[1]: Լեգրանի և Հայաստանի Հանրապետության պատվիրակության հոկտեմբերի 28-ին ստորագրած պաշտոնական «Եզրափակիչ որոշման արձանագրությունը» ուներ հետևյալ բովանդակությունը.

«ՌՍՖՍՀ-ի կառավարության լիազոր Բորիս Վասիլևիչ Լեգրանը և Հայկական Հանրապետության կառավարության լիազորներ Լևոն Շանթը, Համբարձում Տերտերյանը և Լևոն Զարաֆյանը 1920 թվականի հոկտեմբերի 28-ին իրենց լիազորագրերը փոխանակելով և դրանք գտնելով պատշաճ ու սահմանված ձևի, համաձայնության եկան հետևյալի շուրջը.

I. Մեկ կողմից ՌՍՖՍՀ-ի կառավարությունը և մյուս կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությունն ստանձնում են սույն արձանագրությանը առդրվող հաշտության պայմանագրի նախագիծը և նրան վերաբերող բոլոր լրացումներն ստորագրելու պարտավորություն, պայմանով՝

[1] Նույն տեղում, թ. 197:

1) Որ ՌՍՖՍՀ-ի և Ադրբեջանի ՍՍՀ-ի կառավարությունները ճանաչում են վիճարկելի մարզերի – Նախիջևանի և Զանգեզուրի գավառների – տերիտորիաների նկատմամբ Հայաստանի Հանրապետության անսասան իրավունքը և այդ գավառների սահմաններից դուրս կբերեն այն բոլոր զորամասերը, որոնք գտնվում են ՌՍՖՍՀ-ի և ԱՍՍՀ-ի հրամանատարության ենթակայության տակ:

2) Որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իրեն հերթին, անվերապահորեն կհրաժարվի որևէ պահանջներից այսպես կոչված Ղարաբաղի մարզի նկատմամբ, բացառությամբ այն անկյունի, որն առաջացնում են Նոր Բայազետի գավառի արևելյան սահմանագիծը և Շարուր-Դարալագյազի գավառի արևելյան սահմանագծի և Զանգեզուրի գավառի հյուսիսային սահմանագծի մի մասը՝ Գիկալդաղ սարից դեպի Չիչաքլի սարն ընթացող պայմանական գծով (քարտեզի մասշտաբը՝ 1 մատնաչափում - 10 վերստ):

3) Որ ՌՍՖՍՀ-ն ուշադրության առնելով Հայաստանի աշխատավոր ժողովրդի աղետալի դրությունը, որպես անվերադարձ փոխատվություն տալիս է ոսկով երկու և կես միլիոն ռուբլի:

II. Հայաստանի Հանրապետությունը, ելնելով Թուրքական Հայաստանի մարզերում վիճարկելի տերիտորիալ հարցերը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության հետ բարեկամաբար լուծելու դիտավորություններից, պատրաստ է այդ հարցերի լուծման գործում ընդունել ՌՍՖՍՀ-ի կառավարության օժանդակությունն այն բանից հետո, երբ՝

1) Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունն իր զորքերը հետ կքաշի մինչև 1914 թ. ռուս-թուրքական նախկին սահմանագիծը:

2) Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը կհրաժարվի Բրեստ-Լիտովսկի պայմանագրից և Բաթումի կոնվենցիայից:

3) Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունն անվերապահորեն ճանաչում է Հայաստանի Հանրապետության անկախությունն այն սահմաններում, որոնք որոշված են ՌՍՖՍՀ-ի և Հայաստանի Հանրապետության միջև կնքված հաշտության պայմանագրով:

Վերոնշյալ պայմանների կատարումից հետո, ՌՍՖՍՀ-ի բարեկամական օժանդակությամբ, լրացուցիչ կմշակվեն վիճար-

կելի տերիտորիալ հարցերի խաղաղ լուծման հիմունքները»[1]:

Հոկտեմբերի 29-ին Չիչերինն անհանգստացած մի հեռագիր է ուղարկում Լեգրանին, որում քննադատում է վերջինիս կոպիտ քաղաքականությունը Հայաստանի հետ վարվող բանակցություններում: Հարցը նրանում է, որ ժամանելով Երևան, Լեգրանը նոտայով դիմել էր ՀՀ կառավարությանը և առաջարկել՝ ա) լուծել տրանզիտի հարցը, բ) հրաժարվել Սևրի պայմանագրից: Այս նոտան առաջացրել էր ինչպես ՀՀ կառավարության, այնպես էլ դաշնակիցների դժգոհությունը: Սակայն, անհրաժեշտ է ընդգծել, որ Լեգրանը ոչ թե վերջնագիր, այլ նոտա էր տվել Հայաստանի կառավարությանը, որում առաջ էր քաշել բանակցություններում քննարկվելիք հարցերը: Մինչդեռ Լեգրանը մեղադրվում էր վերջնագրեր տալու մեջ:

Չիչերինը գրում էր. «Ինչպես ընդհանուր քաղաքական նկատառումները, այնպես էլ մեր ռազմավարական դրությունը և մեր ռազմական ուժերի վիճակը մեզ հարկադրում են Անդրկովկասում վարել հաշտարարի զգույշ քաղաքականություն, ջանալ հարթել և վերացնել բոլոր բախումներն ու ճգնաժամերը և ձեռնպահ մնալ հարցերը կտրուկ սրելուց»: Սակայն Չիչերինին ոչ այնքան դա էր անհանգստացնում, որքան այն, որ «Հենց թուրքական առաջխաղացման ժամանակ մեզ ավելի կարևոր է ձեռնպահ մնալ նման մարտնչող ելույթներից, որպեսզի չթվա թե մենք ինչոր ռազմական համաձայնագիր ունենք թուրքերի հետ և իբր մենք նրանց հետ դաշնակցած ռազմական գործողություններ ենք վարում: Ավելի լավ է ձգձգել բոլոր ընթացիկ հարցերը Հայաստանում, քան նրա հետ ունեցած հարաբերություններում ճգնաժամ առաջացնել»:

Չիչերինը ցանկանում էր Արևմուտքին հիմք չտալ կռահելու Հայաստանի վրա հարձակվելու ռուս-թուրքական համաձայնության առկայության մասին:

Այդ հեռագրում Չիչերինը բարձրացնում է նաև վիճելի տարածքների հարցը: Եթե հոկտեմբերի 28-ի փաստաթղթով Լեգրանը համաձայնվել էր Նախիջևանը և Զանգեզուրը թողնել Հայաստանին, Ղարաբաղն Ադրբեջանին տալու պայմանով, ապա Չիչերինն այդ հարցի կապակցությամբ բոլորովին այլ տեսակետ է պաշտպանում:

Նա գրում էր. «Ինչ վերաբերում է վիճելի տարածքների գրավ-

[1] Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 457-458:

մանը, իհարկե, այնտեղ պետք է լինեն մեր և ոչ թե ադրբեջանական զորքերը: Երբ ես գրեցի այն մասին, որ դեպի Ջուլֆա երկաթուղին գրավված է թուրքերի և ապստամբների կողմից, ես նկատի ունեի, որ նրանք այնտեղ են գտնվել մինչև մեր գալը, և որ մենք հնարավորություն չունենք զենքով այնտեղից դուրս քշել թուրքերին կամ հայ կոմունիստներին: Իսկ մեր կողմից գրված այս կամ այն տարածքը Հայաստանին կամ Ադրբեջանին հանձնելու հարցը, կարծում ենք, դեռ անհրաժեշտ է հետաձգել՝ մինչև բարենպաստ ժամանակները, իսկ մինչ այդ այնտեղ շարունակել մեր ռազմակալումը»[1]:

Ինչպես նկատում ենք, խորհրդային կառավարությունը գտնում էր, որ վիճելի տարածքների ռազմակալումը պետք է շարունակել, իսկ Լեգրանը մեկնում էր Բաքու այլ տեսանկյունից այդ հարցի լուծման իր տարբերակը քննարկման դնելու:

Հասկանալի է, որ Լեգրանի Երևանում ձեռք բերած համաձայնությունը Բաքվում դատապարտված էր ձախողման: Ադրբեջանի ղեկավարությունը գտնում էր, որ վիճելի բոլոր տարածքները պատկանում են Ադրբեջանին և այդ հարցում ոչ մի զիջման չէր գնում:

Թուրքիան, իր հերթին, «Եզրափակիչ որոշման արձանագրության» ստորագրման օրը, հոկտեմբերի 28-ին, սկսեց պատերազմի երկրորդ փուլը՝ նպատակ ունենալով բոլոր հարցերը լուծել զենքի ուժով և վերջնականապես ծնկի բերել Հայաստանը:

Ռուսաստանն էլ, ինչպես ցույց է տալիս Չիչերինի վերոհիշյալ հեռագիրը, այն կարծիքին էր, որ վիճելի տարածքները առայժմ պետք է մնան ռուսական զորքերի ռազմակալման տակ:

Վճռական խոսքը պատկանում էր Ստալինին, որը հոկտեմբերի վերջին լայն լիազորություններով ժամանեց Բաքու: Թուրքամետ խումբը նրա ղեկավարությամբ հավաքվեց Բաքվում: Պետք է լուծվեր հայ պետականության ճակատագիրը, պետք է լուծվեին վիճելի տարածքների հարցերը: Անհրաժեշտ ենք համարում ընթերցողի ուշադրությունը բևեռել հետևյալ փաստի վրա. Ստալինն Անդրկովկասից հեռանալով 1912 թվականին, այնուհետև, մինչև 1926 թվականը, այնտեղ եղել է ընդամենը երկու անգամ՝ 1920 թ. նոյեմբերին և 1921 թ. հուլիսին: Առաջին դեպքում որոշվում էր հայոց պետականության, երկրորդ դեպքում՝ Ղարաբաղի ճակատագիրը: Երկու անգամ էլ Ստալինը բախտորոշ դեր կա-

[1] РГАСПИ, ф. 64, оп 1, д. 21, л. 192-193.

տարեց, հարցերը լուծեց ի վնաս հայ ժողովրդի:

Լեգրանը նոյեմբերի 2-ին մեկնեց Բաքու: Նրա հետ Բաքու մեկնեց նաև Ս. Տեր-Գաբրիելյանը:

Հայ պետականության և հայ ժողովրդի համար բախտորոշ հարցերը լուծվեցին Բաքվում, 1920 թվականի նոյեմբերի 4-ին: Նկատի ունենալով քննարկված հիմնախնդրի կարևորությունը հայ ժողովրդի համար, անհրաժեշտ ենք համարում այդ հարցի մասին Բաքվում ընդունված որոշումն ընթերցողին ներկայացնել ամբողջությամբ:

«Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի Քաղբյուրոյի, Կովկասյան բյուրոյի անդամների համատեղ 1920 թվականի նոյեմբերի 4-ի նիստի համար 4 արձանագրություն

Ներկա են. Քաղբյուրոյի անդամներ ընկ. ընկ. Նարիմանովը, Կամինսկին, Հուսեյնովը և Եգորովը, Կովբյուրոյի անդամներ ընկ. ընկ. Ստալինը, Օրջոնիկիձեն, Ստասովան և ընկ. ընկ. Շեյնմանը, Լեգրանը, Գաբրիելյանը և Կարաևը:

... 2. Ընկ. Լեգրանի զեկուցումը Հայաստանի դրության մասին

Որոշեցին.

2. ա) Մինչև ՌԿԿ Կենտկոմի հետ այդ հարցի շուրջ բանակցություններ վարելը, Հայաստանին ներկայացված պայմանագրի մասին վերջնական որոշում չկայացնել, բանակցությունների վարումը հանձնարարել ընկ. Ստալինին:

բ) Միաժամանակ հայտնել Քաղբյուրոյի կարծիքը, որ առաջարկված պայմանագրի՝ Զանգեզուրը և Նախիջևանը Հայաստանին տալու մասին կետը օգտակար չէ ո՛չ քաղաքական, ո՛չ էլ ռազմավարական առումով և կարող է կատարվել միայն ծայրահեղ դեպքում:

գ) Անհրաժեշտ համարել ընկ. Լեգրանի մեկնումը Մոսկվա՝ Հայաստանի հետ կապված հարցի պարզաբանման համար:

դ) Նախիջևանի և Զանգեզուրի մասին Քաղբյուրոյի կարծիքի հիմնավորումը հանձնարարել ընկ. Նեդի...

ե) Ընկ.Դովլաթովին Հայաստան չուղարկել»[1]: Հարկ է նշել, որ դեռ սեպտեմբերի 20-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը, որոշելով Ստալինին ուղարկել Բաքու «Կարգի բերելու Ռուսաստանի ամբողջ քաղաքականությունն Արևելքում և Կովկասում», նրան մտցրել էր ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի կազմի մեջ: Ստալինը Կովկաս էր ժամանել արտակարգ լիազորություններով: Նման

[1] РГАСПИ, ф. 3, оп 1, д. 1996, л. 5.

պայմաններում, բնականաբար, ո՛չ Չիչերինը և ո՛չ էլ հատկապես Լեգրանը Հայաստանին օգնելու հարցում ոչինչ անել չէին կարող:

Հայոց պետականությունը դատապարտված էր: Նոյեմբերի 4-ի որոշումը նշանակում էր Լեգրանի ներկայացրած պայմանագրի նախագծի մերժում: Այն պետք է համաձայնեցվեր ՌԿ(բ)Կ Կենտկոմի հետ, իսկ այդ հարցի լուծումը վերջինիս կողմից հանձնարարվել էր Ստալինին: Եվ քանի որ Բաքվի նիստը պայմանագրի հարցի շուրջը Կենտկոմի հետ բանակցություններ վարելը հանձնարարել էր Ստալինին, ապա պարզ է, թե Մոսկվայի վերջնական որոշումն ինչպիսին պետք է լիներ: Ավելի ճիշտ կլիներ ասել, որ Մոսկվայի որոշման անհրաժեշտություն չէր էլ լինելու, քանի որ, ըստ էության, Բաքվի նիստի որոշումը վերջնական էր: Ստալինը պարզապես Մոսկվային պետք է հայտներ նոյեմբերի 4-ի նիստի որոշման մասին, որը և կլիներ այդ հարցի վերջնական լուծումը:

Կանգ առնենք մի հարցի վրա ևս: Բաքվի նիստին մասնակցել են 11 հոգի, փաստաթղթի տակ կա 9 ստորագրություն: Երկու հոգի չեն ստորագրել: Փաստաթուղթը չեն ստորագրել Բ. Լեգրանը և Ս. Տեր-Գաբրիելյանը: Ժամանակին լուրեր էին տարածվել, որ այդ նիստում մեծ տարաձայնություններ են եղել: Նիստի արձանագրությունները մեր տրամադրության տակ չունենք, բայց պարզ է, որ երկու հոգու պայքարը 9-ի դեմ չի կարելի համարել մեծ տարաձայնություն, այն էլ այն դեպքում, երբ 9-ի մեջ մտնում էին Ստալինը, Օրջոնիկիձեն և Նարիմանովը:

Միաժամանակ պետք է ընդգծել, որ ի պատիվ իրենց, թեկուզ և ձևական, այնուամենայնիվ Լեգրանն ու Ս. Տեր-Գաբրիելյանն ինչոր հաջողության հասել էին: Որոշման այն կետը, որի համաձայն Լեգրանը պետք է մեկներ Մոսկվա՝ Կենտկոմին Հայաստանին ներկայացված պայմանագրի մասին պարզաբանումներ տալու, ինչպես երևում է, վերջինիս հույս էր ներշնչում այնտեղ հաջողության հասնելու: Նա հատկապես հույսեր էր կապում Չիչերինի հետ: Հեռու լինելով Մոսկվայից, Լեգրանը տեղյակ չէր, որ Արևելյան ու Կովկասյան քաղաքականության կենտրոնական դեմքը Ստալինն էր, և Չիչերինն այդ հարցում վճռորոշ դեր չէր կատարում:

Հարկ է նկատի ունենալ նաև, որ Բաքվի նոյեմբերի 4-ի որոշումն ընդունվեց հոկտեմբերի 28-ին Թուրքիայի սկսած լայնածավալ հարձակման պայմաններում և Կարսի անկումից հետո, որն արմատապես փոխեց ռազմաքաղաքական իրադրությունը Հայաստանում: Ստեղծված պայմաններում Ռուսաստանն ու Թուրքիան հանդես եկան նոր պահանջներով: Այժմ խոսք էր

գնում միայն Հայաստանի բաժանման մասին: Հայաստանի Հանրապետության հետագա գոյությունը ո՛չ Ռուսաստանի և ո՛չ էլ Թուրքիայի համար ընդունելի չէր:

Թուրքիան և Ռուսաստանը փոխհամաձայնեցված գործողություններով իրականացնում էին Հայաստանի բաժանման նախապես մշակված համատեղ ծրագիրը:

Այսպիսով, նոյեմբերի 4-ին թուրքամետ խումբը Ստալինի ղեկավարությամբ մերժեց ռուս-հայկական պայմանագրի նախագիծը և ձեռնամուխ եղավ Հայաստանի բաժանման ու նրա խորհրդայնացման ծրագրի իրականացմանը:

Նոյեմբերի 5-ին Ստալինը, նոյեմբերի 4-ի նիստի որոշման ոգով, հեռագրում է Լենինին. «Հաղորդում եմ կողմնորոշման համար... 2. Դրությունը Թուրքիայում պարզ չէ, այն կարող է վտանգավոր դառնալ, եթե տեղի ունենա Քեմալի համաձայնությունն Անտանտի հետ, քանի որ Քեմալի չեզոքացումը կդյուրացնի Անտանտի արշավանքը դեպի Բաքու: ***Հետևաբար, առանց մանրակրկիտ հետախուզության և Թուրքիայում իրադրության պարզաբանման պետք չէ Հայաստանի հետ պայմանագիր կնքել, որը Հայաստանին, այսինքն՝ Անտանտին կհանձնի մուսուլման ազգաբնակչությամբ ստրատեգիական կարևորագույն մի շրջան և որը մեզ կներքաշի կոնֆլիկտի մեջ Թուրքիայի հետ: Անհրաժեշտ է առայժմ ձգձգել Հայաստանի հետ պայմանագրի կնքումը, ձևացնելով, որ Հայաստանի համար ձեռնտու հաշտություն ենք ցանկանում, իսկ հետո կերևա***»[1] (ընդգծումը մերն է – Լ. Խ.):

Ինչպես և պետք էր սպասել, Ստալինի այս հեռագրով էլ լուծվում է Լեգրանի նախապատրաստած ռուս-հայկական պայմանագրի ճակատագիրը: Մոսկվան պայմանագրի հարցը օրակարգից հանեց, այն քննարկման նյութ չդարձրեց: Հասկանալի է, որ դրանով ավելորդ դարձավ նաև Լեգրանի Մոսկվա մեկնելը:

Բացի վերոհիշյալից, վերը նշված պայմանագրի դեմ Մոսկվա է ուղարկվում նաև Ադրբեջանի Հեղկոմի նոյեմբերի 6-ին ընդունած հետևյալ որոշումը. «***Ադրբեջանի կառավարությունը քննության առնելով Հայաստանում ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցիչ ընկ. Լեգրանի Հայաստանի հետ կնքած պայմանագիրը, գտնում է***

---

[1] **Երվանդ Սարգսյան**, Խորհրդա-Թուրքական անդրկուլիսյան բանակցությունները Մոսկվայում 1921 թ. փետրվար-մարտ ամիսներին և մարտի 16-ի պայմանագիրը, «Հայաստանի Հանրապետություն», 16 մարտի 1991 թ.: Նույնի՝ Правда о договоре, “Коммунист”, 19 апреля 1990.

այն միանգամայն անթույլատրելի, քանի որ Հայաստանի դաշնակցական կառավարության հետ նման կարգի պայմանագրի կնքումը նշանակում է հրաժարում արևելյան քաղաքականությունից, ինչպես նաև Ադրբեջանը հանձնում է դաշնակների ջախջախմանը: Ուստի, ԱԽՍՀ կառավարությունը թախանձագին առաջարկում է հրաժարվել պայմանագրի ստորագրումից»[1] (ընդգծումը մերն է – Լ. Խ.):

Հայաստանը, հայ պետականությունը զոհաբերվում էր Ռուսաստանի արևելյան քաղաքականությանը: Գնալով օղակը Հայաստանի շուրջն ավելի ու ավելի էր սեղմվում: Հակահայկական խումբն օգտագործում էր բոլոր միջոցները, բոլոր լծակները: Միջոցների մեջ խտրություն չէր դրվում:

Նոյեմբերի 6-ին Լեգրանը «հույժ շտապ» հեռագրով Երևանում իրեն փոխարինող Սիլինին հայտնում է. «Բաքվի խորհրդակցությունը Ստալինի մասնակցությամբ մեր պայմանագրի վերաբերյալ ցույց տվեց բացասական վերաբերմունք, որը պատճառաբանվում է հետևյալով, առաջին՝ թուրքական զորքերը 1914 թվականի սահմանները հետ քաշելու կապակցությամբ թուրքերի հետ հարաբերությունները բարդացնելու վախից, երկրորդ՝ վիճելի տարածքների պատճառով, որոնց տիրելը շատ կարևոր են համարվում Պարսկաստանի իրադարձությունների վրա ազդելու տեսանկյունից: Դրա հետ միասին, գտնում են, որ մենք փաստորեն ոչինչ չենք կարող նախաձեռնել թուրքերի հարձակման կապակցությամբ, չնայած մեր վերաբերմունքը դրա նկատմամբ առաջվա պես խիստ բացասական է: Զևականորեն Թուրքիան մեզ հետ պայմանագրով կապված չէ, և մենք նրան չենք կարող պահանջներ ներկայացնել: Ինչ վերաբերում է տրանզիտին, ապա ներկա վիճակում և Թուրքիայից տեղեկատվության բացակայության պայմաններում այդ հարցը կորցնում է իր սրությունը:

Բացի դրանից,– շարունակում է նա,– գտնում են, որ թուրքերը Հայաստանի հետ պայմանագիր կնքելու դեպքում, իրենք առանց դժվարության կհասնեն տրանզիտի, ***իսկ տրանզիտի փոխարեն վիճելի տարածքները Հայաստանին հանձնելը շատ թանկ գին է»*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.): Այնուհետև, նա հայտնում է, որ բոլոր հարցերի վերջնական լուծումը հանձնվում է Մոսկվային՝ Կենտ-

---

[1] **Է. Զոհրաբյան**, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, «Երեկոյան Երևան», 19 նոյեմբերի 1990 թ.:

կոմին, ուր ինքը մեկնելու է հաջորդ օրը[1]:

Այս հեռագիրը, որում Լեգրանը շարադրում է թուրքամետ խմբի նոյեմբերի 4-ի նիստում արտահայտած տեսակետները, ցույց է տալիս, որ Ստալինը՝

ա) Պայքարելու է Կարսն ու Արդահանը Թուրքիային հանձնելու համար:

բ) Պայքարելու է Նախիջևանն ու Զանգեզուրը Հայաստանին չտալու համար:

գ) Եթե Լեգրանը, ելնելով օբյեկտիվ նկատառումներից, ձգտում էր տրանզիտի համար որպես փոխհատուցում Հայաստանին հանձնել Նախիջևանն ու Զանգեզուրը, ապա Ստալինն, ընդհակառակը, գտնում էր, որ «դա շատ թանկ գին է»: Այսպես էր ազգային հարցը լուծում «ազգային հարցի մեծ տեսաբանը»:

դ) Չպետք է միջոցներ ձեռք առներ Թուրքիայի հարձակման դեմ, որպեսզի վերջինիս հնարավորություն տար զենքի ուժով լուծել Կարսի, Արդահանի հարցերը և կանխեր տրանզիտի փոխարեն Նախիջևանի ու Զանգեզուրի Հայաստանին հանձնելը:

Նոյեմբերի 6-ին Լեգրանը, Մոսկվա մեկնելուց մեկ օր առաջ, ստանում է Չիչերինի հետևյալ հեռագիրը. «Այսպիսի լուրջ պահին Ձեր ներկայությունն ավելի անհրաժեշտ է տեղում՝ Հայաստանում: Անմիջապես ուղիղ գծով կապվեցեք մեզ հետ: Հաղորդեցեք գործերի վիճակի մասին: Ստալինի հետ խորհրդակցության արդյունքները: Ձեր մեկնելու նպատակը: Միայն դրանից հետո կարելի կլինի որոշել Մոսկվային [Ձեր] անձնական զեկուցման անհրաժեշտությունը»[2]:

Նոյեմբերի 7-ին Լեգրանը Չիչերինին պատասխանում է, որ իր Մոսկվա մեկնելու նպատակն է՝ Հայաստանի հետ պայմանագիր կնքելու համար ստանալ կառավարության համաձայնությունը կամ էլ՝ նոր հրահանգներ: Ներկայացնելով նոյեմբերի 4-ի նիստում դրսևորված տարաձայնությունները, Լեգրանը հայտնում է, որ որոշել է հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ Ռուսաստանի դիրքորոշման հարցի քննարկումը փոխադրել ՌԿ(բ)Կ Կենտկոմ, որտեղ այդ հարցի շուրջ զեկուցումով պետք է հանդես գա ինքը: Լեգրանն իր հեռագիրն ավարտում է հետևյալ հարցադրումներով. «Իմ ներկայությունը Հայաստանում անհրաժեշտ կլիներ միայն այն դեպքում, եթե ես ստույգ հրահանգ ունե-

[1] РГАСПИ, ф. 64, оп 1, д. 21, л. 203.
[2] Նույն տեղում, թ. 204:

նայի Հայաստանի հետ հաշտության ստորագրման և թուրքական հարձակման վերաբերյալ մեր քաղաքականության մասին»[1]:

Հասկանալի է, որ ստեղծված պայմաններում Լեգրանը Մոսկվայից ոչ մի ստույգ հրահանգ չէր կարող ստանալ: Տարվում էր Հայաստանի Հանրապետության ոչնչացման քաղաքականություն, որը ղեկավարում էր Ստալինը: Թուրքերը հարձակվում էին, հայկական բանակը պարտություն պարտության հետևից էր կրում: Ռուսաստանը չէր միջամտում: Այդ գործընթացը պետք է շարունակվեր այնքան, մինչև որ Հայաստանի կառավարությունը դիմեր Ռուսաստանի օգնությանը՝ համաձայնվելով անկախության կորստի և երկրի խորհրդայնացման մտքի հետ:

Ահա ինչու փակվեց Լեգրանի Մոսկվա մեկնելու հարցը: Մոսկվան Լեգրանի կարիքը չուներ: Նրա համար պայմանագրի հարցը լուծված էր: Օրակարգ էր մտել Հայաստանի բռնի խորհրդայնացման հարցը:

3. ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ. ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց բանակի հոկտեմբերի 14-ի անհաջող հակահարձակումից հետո, մինչև հոկտեմբերի 24-ը, ռազմաճակատում տեղի էին ունենում դիրքային կռիվներ:

Հոկտեմբերի 24-ին թուրքական բանակը ռազմական գործողություններ սկսեց Իգդիրի ուղղությամբ, իսկ 28-ին անցավ ընդհանուր հարձակման:

Սկսվեց թուրք-հայկական պատերազմի երկրորդ փուլը, որի նպատակը Հայաստանի Հանրապետության ոչնչացումը և Հայաստանի բաժանումն էր:

Հոկտեմբերի 30-ին ընկնում է Կարսը: Դեպքերին քաջատեղյակ Հակոբ Տեր-Հակոբյանը գրում է. «Կարսի անկումը առաջ բերավ հուսահատություն և խուճապ ոչ միայն զորքին, այլև ժողովրդին լայն խավերուն մեջ... Բոլորն ալ կ՚զգային պարտությունը: Վերջին ուժերն էր հավաքած կառավարությունը-կամավորական շարժում-փրկելու համար կացությունը, բայց անօգուտ: Այդ ատենները Ալեքսանդրապոլի մեջ գտնվող կառավարության անդամները, խորհրդարանի անդամները, ինչպես նաև հրամանատարական կազմը կը հայտնեն Երևանի կառավարության թէ՝

[1] Նույն տեղում, թ. 214:

պատերազմը շարունակել անօգուտ է և պետք է բանակցությունները սկսիլ թուրքերու հետ՝ որոշ եզրակացության գալու համար»[1]:

Բայց դա հետևանքն էր: Հարցը նրանում է, որ Կարսը հանձնվել էր գրեթե առանց կռվի: Խատիսյանը գրում է, որ «թուրքերը քաղաք էին մտած գրեթե առանց գնդակ արձակելու: Կարսը պահպանող զորքերու բարոյալքումը կատարյալ էր»[2]:

Խատիսյանն այնուհետև շարունակում է. «Կարսի անկումը ամեն տեսակետե սարսափելի աղետ եղավ: Իսկապես, այդ օրեն սկսած՝ Հայաստանի անկախության օրերը հաշված էին: Հաշված էին այն պատճառով, որ զինվորական ուժն այլևս դադրած էր պաշտպան հանդիսանալ Հայաստանի Հանրապետությանը»[3]:

Հայոց բանակը քննություն չբռնեց և թուրք-հայկական պատերազմում ծանր պարտություն կրեց:

Թուրքական կառավարությունը, հասնելով իր նպատակին, ցանկանալով կանխել Ռուսաստանի միջամտությունը, նոյեմբերի 2-ին հաշտության առաջարկով դիմեց Հայաստանի կառավարությանը, որը Երևանում ստացվեց նոյեմբերի 5-ին:

Այդ հեռագրից անկախ, Հայաստանի կառավարությունը նոյեմբերի 3-ին դիմում է Անկարայի կառավարությանը՝ առաջարկելով բանակցություններ սկսել զինադադարի և հաշտության համար: Առաջարկը թուրքական հրամանատարությանն է հանձնվում նոյեմբերի 5-ին:

Թուրքական կառավարության զինադադարի առաջարկին Հայաստանի կառավարությունը տալիս է իր համաձայնությունը:

Նոյեմբերի 6-ին Կարաբեքիրն առաջարկեց զինադադարի հետևյալ պայմանները.

«1.Այժմ Արփաչայից արևմուտք գտնվող հայ զորամասերը Ալեքսանդրապոլը մաքրելով Արփաչայից առնվազն 15 կիլոմետր դեպի արևելք պետք է քաշվեն:

2. Ալեքսանդրապոլ քաղաքը չպիտի գրավվի, միայն թե բերդը և կայարանը մեր կողմից զինվորական գրավման տակ պետք է առնվեն: Ալեքսանդրապոլում հանրային ապահովությունը, կարգի պահպանության տակ գտնվելը Ալեքսանդրապոլի բնակչությանը պետք է հանձնվի:

---

[1] **Հ. Տեր-Հակոբյան,** նշվ. աշխ., էջ 116:
[2] **Ալ. Խատիսյան,** նշվ. աշխ., էջ 279:
[3] Նույն տեղում, էջ 280:

3. Ի նկատի ունենալով, որ Ալեքսանդրապոլն ունի մեծ նշանակություն, որպես Թիֆլիս-Երևան երկաթուղու միացման կետ, արգելք չպետք է լինել, որ Ալեքսանդրապոլի շրջանը, տաճիկ բանակի վստահության համար, գրավվի զորամասերի կողմից:

4. Զինադադարի տևողության միջոցին՝ տաճկական զորքերի վրա ոչ մի կողմից և ոչ մի պատրվակի տակ հարձակում չպետք է արվի և կրակ չպետք է բացվի:

5. Վերի հոդվածները վաղը (7 նոյեմբերի 1920 թ.), կեսօրից հետո, մինչև ժամը 5-ը, ամբողջապես գործադրել և Արփաչայի արևմուտքը գտնված հողամասը և Ալեքսանդրապոլը հիշված կեսօրից առաջ մինչև ժամը 10-ը ամբողջապես պարպել»[1]:

Հայաստանի կառավարությունն ընդունեց Կարաբեքիրի առաջարկները, որոնք իրագործվեցին նոյեմբերի 7-ին: Նույն օրը թուրքական զորքերը մտան Ալեքսանդրապոլ: Հայկական զորքերի մի մասը նահանջեց դեպի Ջաջուռ, մյուս մասը՝ դեպի Աղին:

Սակայն, համաձայն Ջեմալ Քութայի, Կարսի գրավումից հետո, հետագա ծրագրերի կապակցությամբ, Քեմալի և Կարաբեքիրի միջև առաջացան լուրջ տարաձայնություններ: Կարաբեքիրը ցանկանում էր մի կողմից խորանալ դեպի Հայաստանի խորքերը, մյուս կողմից՝ գրավել նաև Բաթումի մարզը:

Քութայը գրում է. «Կարսի գրավումից հետո բարոյապես զորացած Արևելյան բանակն առաջանում էր Արփաչայի ուղղությամբ: Կարաբեքիրն ուզում էր, գրավելով Գյումրին, Ղազընջրգ (Ղազանչի)-Էսկիարթիկ (Արթիկ)-Մահմուդջուք (Պեմզաշեն) ուղղությամբ շրջանցելով Ղարաբուրունն ու Ղարաքիլիսան (Ազատան)՝ իջնել Արաքս գետ: Կարաբեքիրի համար, որի կատարյալ ռազմագետ լինելն ապացուցվել էր պատմության առջև, այդպիսով հավիտենապես ապահովված կլիներ մեր արևելյան սահմանների ամրությունը: Այդ գծին թիկունք էին կանգնում բարձրաբերձ լեռներ: Շատ մեծ էր դրա ռազմագիտական կարևորությունը: Այդ մասին նա մի ծածկագրով իր կարծիքը հայտնել էր Մուստաֆա Քեմալ փաշային: Սակայն Մուստաֆա Քեմալ փաշան առարկել էր, որ բոլշևիկները հաղթահարել են Լեհաստանում կրած իրենց ցնցումը, որ նրանք երբեք չեն հանդուրժի թուրքական նման մի հաղթանակ, որ Արևմտյան ճակատում դրությունը շատ փափուկ է, որ երկու սրի միջև մնալը հավանական աղետների պատճառ կհանդիսանա: Այս գաղտնի թղթակցու-

[1] **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, էջ 482:

թյունների փոխանակման ընթացքում Կարաբեքիրը, հաջողությամբ կոտրելով վերջին հայկական դիմադրությունները և առաջանալով Արփաչայի ուղղությամբ, գրավեց նաև Գյումրին:

Հայկական հարցն ամբողջապես լուծվելուց հետո Կարաբեքիրի համար մնում էր մի նպատակ՝ Բաթումը ետ առնել վրացիներից:

Որովհետև՝ Չիչերինն ու Բեքիր Սամի բեյը մեր սահմանների հարցում դեռ նստում էին սեղանի շուրջ և այնպիսի մի շրջան էր, երբ ստեղծված իրողություններն ընդունվում էին որպես ավարտված եղելություններ, այդ հարցի առնչությամբ արևելյան ճակատի հրամանատարն իր գաղափարները բոլոր մանրամասնություններով գրել էր Մուստաֆա Քեմալին և իր բացատրություններն ավարտել հետևյալ եզրակացությամբ. «Ես վստահ եմ, որ այսպիսի մի հնարավորություն էլ ոչ մի անգամ չի ընկնի մեր ձեռքը»:

Կարաբեքիրի ցանկությունն էր ազգային սահմանների մեջ ներգրավել այս հողերը, որոնք մեր կայսրությունից բաժանվել էին 1878-ի Սան-Ստեֆանոյի դաշնագրով, ապա հաստատվել՝ Բեռլինի դաշնագրով և ունեին 36 հազար քառակուսի կիլոմետր տարածք: Նրա նպատակը սոսկ հողային տարածքը չէր, այլ այս կերպ կապահովվեր մեր արևելյան սահմանների ամրությունը, որովհետև, անկախ ռեժիմից, նա ռուսներին ամենևին չէր վստահում: Կարաբեքիրը, իբրև մի մարդ, որը «պատմություն էր կարդացել ու գրել» գիտեր, թե որպես ցեղային, պատմական, կրոնական հարկադրանք՝ տարբեր ժամանակաշրջաններում և սերնդից սերունդ թուրք-մոսկովյան կռիվները ճակատագրական էին:

Սակայն Անկարան պնդում էր իր տեսակետը: Այս կացության առջև, և հակառակ այն բանին, որ այլևս չկար «հայ-վրացական մի բանակ», որը կկարողանար դիմադրություն կազմակերպել, նա իր ուժերին դադար տվեց Արփաչայ-Գյումրի գծից այն կողմ»[1]:

Աշխատության առաջին գլխում շարադրելով Թուրքիայի նվաճողական ծրագրերը Հայաստանում և Անդրկովկասում, մենք նշել էինք, որ այդ հարցերում Քեմալն ու Կարաբեքիրը լուրջ տարաձայնություններ ունեին: Երկուսն էլ կողմնակից էին Անդրկովկասի նվաճմանը: Սակայն Քեմալն ավելի զգույշ էր: Նա ցանկանում էր փոխհամաձայնեցնել Թուրքիայի և Ռուսաստանի նվաճողական ծրագրերը, գտնել խնդրի լուծման փոխզիջումային

[1] **Cemal Kutay,** նշվ. աշխ., էջ 51-52:

տարբերակներ: Կարաբեքիրն, ընդհակառակը, ցանկանում էր ինչքան կարելի է ավելի շատ տարածքներ նվաճել և կանգնեցնել կատարված փաստի առաջ:

Թուրք-հայկական պատերազմի երկրորդ փուլում, ելնելով Ռուսաստանի հետ ունեցած փոխհարաբերությունների բնույթից և համաձայնությունից, Քեմալը պետք է բավարարվեր 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի գրաված տարածքների հետ գրավումով, իսկ Կարաբեքիրն, ընդհակառակը, ձգտում էր նվաճել նոր տարածքներ և առաջին հերթին՝ ամբողջ Հայաստանը:

Սակայն Ռուսաստանից ունեցած վախը Թուրքիային հարկադրեց, երկար տատանումներից հետո համաձայնել Հայաստանի բաժանման բոլշևիկյան տարբերակի հետ:

Նոյեմբերի 8-ին Կարաբեքիրը ներկայացնում է զինադադարի նոր, ավելի ծանր պայմաններ: Կարաբեքիրն այդ քայլը բացատրեց նրանով, որ իբր զինադադարի առաջին փաստաթուղթը ներկայացվել է իր, իսկ երկրորդը՝ Անկարայի կողմից: Սակայն հարցը նրանում է, որ Կարաբեքիրը պարզապես որոշել էր օգտվել ստեղծված բարենպաստ իրավիճակից, Հայաստանի կառավարությանը ներկայացնել ավելի ծանր պայմաններ և, վերջինիս չհամաձայնելու դեպքում, շարունակել ռազմական գործողություններն ու գրավել ամբողջ Հայաստանը:

Կարաբեքիրի ներկայացրած նոր զինադադարի պայմանները հետևյալն էին. «Առ այժմ, ***24 ժամվա ընթացքում*** հանձնել Ալեքսանդրապոլում, բոլորովին գործածելի վիճակի մեջ 2000 արագահարված հրացան, սարքով և կենդանիներով միասին, 20 հատ ծանր և 40 հատ արագահարված գնդացիր, երեք մարտկոց թնդանոթ, 4000 ջորի, 1000 սնդուկ հրացանային ռազմամթերք, 6000 թնդանոթի ռումբ, 2 շոգեշարժ մեքենա և 50 վագոն պիտի հանձնվի մեզ: Կանոնավոր և անկանոն հայկական զինվորական ուժերը Արփաչայի ընթացք-Ալագյազ կայարան-Կիրմիզլի-Կոլիջան, Նալբանդ կայարան-Վարանցովկա գծից արևելք պիտի քաշվեն. այս գծից արևմուտք գտնվող երկաթուղագիծը չքանդված և անվնաս պիտի թողնվի:

Երկրորդ՝ առ առավելն 3 օրվա ընթացքում դարձյալ հայկական կանոնավոր և անկանոն զինված ուժերը Սուրմալու-Արաքս կայարան-Կիզիլչի-Արէթ-Ալագեոզ լեռան լանջը-Տանագերմազ-Նովո-Միխայլովկա-Լոռիքենդ-Շերմուտ Եալվանդաղ գծից արևելք պիտի քաշվեն:

Երրորդ՝ զինադադարի կնքումից անմիջապես հետո Սանահին կայարանի և Ալեքսանդրապոլի միջև երկաթուղագծի վրա ամեն տեսակ ռազմական պիտույքների փոխադրությունը պիտի կանգ առնի: Այս փոխադրությունները ստուգելու համար Սանահին կայարան և Ղարաքիլիսէ մեկ-մեկ հանձնախմբեր պիտի ուղարկվեն, և հայկական կառավարությունը վերոհիշյալ հանձնախմբերի անձեռնմխելիությունը և Ալեքսանդրապոլի շրջանում նրանց արևելյան ճակատի հրամանատարության հետ կանոնավորապես և ապահովապես կապ ունենալը պիտի երաշխավորի:

Չորրորդ՝ մինչ զինադադարի երրորդ օրը երեկոյան, երկու կողմի պատվիրակները հաշտության բանակցություններ սկսելու համար Ալեքսանդրապոլ պիտի գտնվեն և այս ժամանակի ընթացքում եթե առաջին և երկրորդ պայմանների բովանդակությունը իրագործված է՝ իսկույն հաշտության բանակցությունները պիտի սկսվեն:

Հինգերորդ՝ զինադադարի ժամանակի ընթացքում մեր զորամասերը Ալեքսանդրապոլի շրջանում առաջին պայմանում հիշված Արփաչայ հոսանք-Նալբանդ կայարան-Վարանցովկա գծից արևելյան կողմը և մյուս շրջաններում իրենց գտնված գծից առաջ չպիտի անցնեն:

Վեցերորդ՝ զինադադարի կնքումից անմիջապես հետո երկու կողմից թշնամական գործողություններին վերջ պիտի տրվի:

Սույն զինադադարի պայմանները Ալեքսանդրապոլի շրջանում գտնվող հայկական առաջավոր մասերին հանձնվելու ժամից գործադրության մեջ են մտնում և պայմանաժամը, ի վերջո, եթե կարիք զգացվի, երկարաձգելու պայմանով, յոթ օր է»[1]:

Հայաստանի կառավարությունը մերժեց զինադադարի նոր պայմանները: Նոյեմբերի 10-ին Հայաստանի կառավարությունը Կարաբեքիրին առաջարկեց Ալեքսանդրապոլում հրավիրել խաղաղության խորհրդաժողով՝ նոյեմբերի 7-ի պայմանների հիման վրա: Նույն օրը Կարաբեքիրը պատասխանում է. «Քանի որ Հայաստանի կառավարությունը չ՚ընդունիր Էնկյուրիի կառավարության պայմանները, ան ստիպված է վերսկսիլ պատերազմական գործողությունները»[2]:

Նոյեմբերի 11-ին պատերազմը վերսկսվեց: Թուրքական բանակը սկսեց իր հարձակումը: Հայկական բանակը, անընդունակ

---

[1] **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, էջ 482-483:
[2] **Ալ. Խատիսյան**, նշվ. աշխ., էջ 283:

գտնվելով կանգնեցնելու թուրքերի հարձակումը, նահանջում էր, նորանոր տարածքներ թողնելով թշնամուն:

Հակոբ Տեր-Հակոբյանը գրում է. «Կազմալուծված և լքված բանակը հնարավորություն չունեցավ դիմանալու և 3-4 օրվա նոր կռիվներն ալ իրական որևէ արդյունք չտվին: Թուրքերը նորից սկսեցին առաջխաղացումը: Կացությունը օրե օր ավելի սպառնալից կը դառնար և հայ ժողովրդի մեջ առաջ կուգար կոտորածի, ավերածության մղձավանջը, զոր կսպասեին քեմալականներեն և որու պատճառով ալ կը հեռանային այն վայրերեն ուր կը բնակեին և կը մոտենային Վրաստանի սահմաններուն:

Կացությունը պարզ էր: Թուրքերը հաղթական էին: Երկրի ներսը հուսահատություն կտիրեր»[1]:

Ստեղծված իրավիճակին նույն գնահատականն է տալիս նաև Ա. Խատիսյանը. «Պատերազմական գործողությունները վերսկսվելեն մեկ քանի օր անցած՝ արդեն բոլորի համար պարզ դարձավ, որ հաշտությունը պետք է կնքել ինչ գնով ալ որ ըլլայ»[2]: «Պատերազմական գործողությունները վերսկսան,– գրում է նա,– բայց այս անգամ անոնք տևեցին միայն մեկ շաբաթ: Զինվորական իշխանությունները, զինվորական նախարարը, կառավարությունը, Խորհրդարանի անդամները օր ավուր կը համոզվեին, որ անօգուտ է ավելի երկար շարունակել պատերազմական գործողությունները: Դիմադրական ոգին մեր զորքերուն մեջ ինկած էր, և պետք էր նորեն մտածել հաշտության մասին»[3]:

Այսպիսով, եթե Կարաբեքիրը զինադադարի նոյեմբերի 8-ի ծանր պայմաններով նպատակ էր հետապնդում գրավել ամբողջ Հայաստանը, ապա իրենից անկախ, օբյեկտիվորեն, հայոց բանակի համար էլ հնարավորություն էր ստեղծում մեկ անգամ ևս ցուցաբերել 1918 թ. մայիսյան հերոսամարտերի հրաշքը: Սակայն հայոց բանակը չկռվեց, հրաշքը տեղի չունեցավ:

Հայաստանը պարտված էր, պետականության կործանումը՝ օրերի հարց:

---

[1] **Հ. Տեր-Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 118-119:
[2] **Ալ. Խատիսյան**, նշվ. աշխ., էջ 288:
[3] Նույն տեղում, էջ 286:

* *
*

Սույն աշխատության խնդիրների մեջ չի մտնում թուրք-հայկական պատերազմի ընթացքի և, մասնավորապես, հայոց բանակի պարտության պատճառների ուսումնասիրությունը: Դա առանձին ուսումնասիրության նյութ է:

Մեր խնդիրը չենք համարում նաև հայոց բանակի առանձին զորամասերի, զորահրամանատարների և զինվորների հերոսական կռվի վերհանումը, որն անպայման դրսևորվել է պատերազմի ընթացքում: Ներկա պահին մեզ ոչ թե առանձին զինվորն ու զորամասն են հետաքրքրում, այլ Հայաստանի Հանրապետության բանակը, որպես ամբողջական մի գործոն, որն այդ ժամանակ հայ ժողովրդի միակ հույսն ու ապավենն էր: Լիովին բաժանում ենք Կ. Սասունու՝ տվյալ խնդրին վերաբերող հետևյալ կարծիքը. «Երբ հայ-թուրքական պատերազմի հետևանքները կը գնահատենք, արդարությունը կը պահանջե, որ շեշտենք, թե հայ զինվորը, վաշտն ու գունդը, այնինչ հրամանատար սպան կամ խմբապետը հերոսություններ գործած են և այնպիսի հերոսություններ, որոնք պատիվ կրնան բերել որևէ քաղաքակրթված ու կորովի ազգի: Բայց խոսքը անհատներու կամ զինվորական բաժիններու մասին չէ, այլ հայկական բանակի **ամբողջության**, որն իր ներքին կազմով ու ոգիով թույլ էր»[1]:

Տարբեր շարժառիթներով գրված բազմաթիվ հոդվածներում տարբեր տվյալներ են բերվում հայկական և թուրքական բանակների թվաքանակի մասին, փորձելով արդարացնել կամ էլ մեղադրել հայկական բանակին կրած պարտության համար:

Սակայն հարցը բանակի թվաքանակի մեջ չէ: Սարդարապատի հերոսամարտում հայերը թվաքանակով չէ, որ հաղթանակ տարան: 1920 թ. աշնանը հայերի ռազմական պատրաստության վիճակն անհամեմատ լավ էր, քան 1918 թվականին: Թուրքական և հայկական գործող բանակների զինվորների թվաքանակի միջև արմատական տարբերություն չի եղել: Սա անվիճելի փաստ է: Ս. Վրացյանը և Ալ. Խատիսյանը, հենվելով ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանի զեկուցագրի վրա, գրում են, որ հայոց բանակի ընդհանուր թվաքանակը եղել է 40 հազար, որից գործող բանակում գտնվել են 25 հազար զինվորներ: Թուրքական կանոնավոր զորքերի թիվը հաշվվում է 20 հազար սվին: Ոչ կանոնավոր

[1] **Կ. Սասունի**, նշվ. աշխ, էջ 200:

ուժերի հետ միասին, թուրքական բանակի ընդհանուր թիվը կազմում էր 30 հազար[1]: «Ահա մրցակից կողմերի անկողմնապահ թվահամարը»,– եզրափակում է Վրացյանը[2]:

Հարցին քաջատեղյակ Հակոբ Տեր-Հակոբյանը գրում է. «Հայ բանակը լավ սպառազինված, զգեստավորված և պարենավորված էր շնորհիվ անգլիական օժանդակության: 1920 թ. հունիս-հուլիս ամիսներուն Անգլիայեն ստացված էր 40 հազար ձեռք համազգեստ և 25 հազար հրացան մեծաքանակ ռազմանյութով... Պատերազմը սկսած պահուն հայ բանակն ուներ 22 հազար բերան, այսինքն այդչափ զորք, պատերազմիկ կամ ոչ: Բայց նորանոր զորահավաքներու հետևանքով բարձրացավ այդ թիվը, այնպես որ, Կարսի անկման ժամանակ ուներ 55 հազար բերան, ասոնցմե կռվող ուժն էր 32 հազար սվին և մնացյալը թիկունքային ուժեր էին: Այս 32 հազարեն 23 հազարը կգտնվեր Կարսի ճակատը»: Նույն հեղինակի տվյալներով «թրքական կանոնավոր զորքը կհասներ շուրջ 25 հազար հետևակի և 3 հազար հեծյալի, որոնց վրա ավելցնելով անկանոն ուժերն ալ, թուրք հավանական զորությունը կհասներ 40-45 հազարի: Ուրեմն, թուրքերը թվով շատ ալ գերազանց չէին հայերեն, միայն ռազմական առավելությունը թուրքերու կողմը մնաց, որովհետև ունեցան ոչ միայն բարոյականի և ոգիի գերազանցություն, այլ գիտցան իրենց հարձակման եղանակը պատշաճեցնել քաղաքական և բրոբականտի խաղերու»[3]:

Ռազմական ուժերի այսպիսի մոտավոր հարաբերակցության պայմաններում Հայաստանի Հանրապետությունը ճակատագրական պարտություն կրեց:

Դարձյալ համաձայն ենք Կ. Սասունու հետևյալ եզրահանգման հետ. «Ծագելիք պատերազմը արգելելը Հայաստանից կախված չէր: Քաղաքական կացությունը ցույց է տալիս, որ այն անպայման պետք է պայթեր, բայց ինչ որ աչքի կը զարնե, այդ այն է, ***որ Հայաստանը իր ներքին կյանքը պետք եղածին չափ չէր կրցած կազմակերպել և զինվորականապես անպատրաստ էր Տաճկաստանին դիմագրավելու***» (ընդգծումը մերն է – Լ. Խ.)[4]:

Եվ այսպես, ճակատագրական պահին միակ հույսը բանակն

---

[1] Տե՛ս **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, էջ 484-485, **Ալ. Խատիսյան**, նշվ. աշխ., էջ 289-290:

[2] **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, էջ 485:

[3] **Հ. Տեր-Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 86, 88, 93:

[4] **Կ. Սասունի**, նշվ. աշխ., էջ 40:

էր, որը, ցավոք, չկարողացավ կանգնեցնել թուրքերի հարձակումը:

Այս կապակցությամբ առաջանում է մի կարևոր հարց ևս. եթե հայկական բանակը 1920 թ. աշնանը հաղթանակեր, հայկական պետականությունը կպահպանե՞ր իր գոյությունը, թե, այնուամենայնիվ, դատապարտված էր կործանման:

Անդրկովկասը գտնվում էր բոլշևիկների նվաճողական ծրագրերում, նրանք ցանկանում էին վերականգնել ռուսական կայսրությունը՝ իր բոլոր նվաճած տարածքներով: Անկախ այդ պետությունների ղեկի մոտ կանգնած կուսակցությունների քաղաքականությունից, Անդրկովկասի հանրապետությունները գոյատևման հեռանկար չունեին: Անդրկովկասի նվաճման հարցը Ռուսաստանի քաղաքականության հիմնական օղակներից մեկն էր: Եթե Հայաստանի Հանրապետությունը չընկներ 1920 թ. դեկտեմբերին, միևնույնն է, կնվաճվեր 1921 թվականին: Այդ է ցույց տալիս Ադրբեջանի և Վրաստանի փորձը:

Բոլորովին այլ հարց է, որ եթե Հայաստանը պետք է նվաճվեր, ապա հայ ժողովուրդը, որն ուներ ռուսական կողմնորոշում, զրկվելով անկախ պետականությունից, միանշանակ պետք է պայքարեր Ռուսաստանի կազմի մեջ լինելու համար:

* *
*

Հայկական բանակի նոյեմբերի 11-15-ի ընթացքում կրած պարտությունները Հայաստանի կառավարությանը բերեցին այն վերջնական եզրահանգման, որ պետք է շուտափույթ դիմել թշնամուն՝ ընդունելով զինադադարի ծանր պայմանները: Նոյեմբերի 16-ին կառավարությունը նորից քննեց հաշտության խնդիրը և որոշեց ընդունել թուրքերի առաջարկած ծանր պայմանները: Ալեքսանդրապոլում բանակցություններ վարելու համար ստեղծվեց պատվիրակություն հետևյալ կազմով. Ա. Խատիսյան (նախագահ), նախարար Ա. Գյուլխանդանյան, Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանյան, խորհրդարանի անդամներ Վ. Մինախորյան և Լ. Զարաֆյան:

Ա. Խատիսյանը գրում է. «Ընդունելով կառավարության առաջարկը՝ թուրքերի հետ հաշտության բանակցություններ վարելու մասին՝ ես նպատակ ունեի նախ և առաջ պարզել, թե ինչպիսի աջակցություն կրնա սպասել Հայաստանը Դաշնակիցներեն, այսինքն՝ Անգլիայեն, Ֆրանսիայեն և Իտալիայեն: Ասոր համար

պետք էր երթալ Թիֆլիս: Նոյեմբերի 17-ին գիշերվա ժամը 2-ին ՀՀ Կառավարությունը համաձայնություն տուավ իմ տեսակետին, և նոյեմբերի 18-ին առավոտյան ժամը 6-ին ես մեկնեցա Թիֆլիս»[1]:

Խատիսյանը նոյեմբերի 19-ին Թիֆլիսում հանդիպում է Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Հունաստանի և Վրաստանի ներկայացուցիչների հետ: Վրաստանի կառավարությունն իրեն չեզոք էր հայտարարել: Հունաստանի կառավարությունը բավարարվեց իր համակրությունն արտահայտելով: Անգլիական կառավարությունը Լորդ Քերզոնի հեռագրով հայերին խորհուրդ էր տալիս, որ «ավելի լավ է հաշտվել թուրքերի հետ քան թե Սովետների», «քանի որ Խորհրդային Ռուսաստանի հետ դաշնագիրը անկասկած կլինի ավելի վատ ելք»: Խատիսյանը ճիշտ է նկատում, որ այդ խորհուրդը թելադրված էր Անգլիայի շահերից: Ֆրանսիան և Իտալիան «համակրություն հայտնեցին, բայց ոչընչով օգնել չէին կրնար կամ չէին ուզեր»[2]:

Հայաստանի կառավարությունը օգնության խնդրանքով ամբողջ աշխարհին էր դիմել դեռևս հոկտեմբերի 8-ին, հայտնելով, որ Թուրքիան հարձակվել է Հայաստանի վրա, «որպեսզի վերջնականապես ոչնչացնի զայն»: Փաստաթղթում ասվում էր. «Հայաստանի կառավարությունն այս ճգնաժամային րոպեին ամբողջ հայ ժողովրդի անունով կը դիմե ամբողջ աշխարհի քաղաքակիրթ ժողովուրդներուն և անոնց կառավարություններուն, վճռական բողոք հայտնելով թուրք ազգայնականներու սև մտադրության դեմ և ջերմ կոչ ուղղելով օգնել Հայաստանին իր հայրենիքի պատուի, ազատության ու անկախության համար հայ ժողովրդի սրբազան կռուին: Յուրաքանչյուր ժողովրդի անկապտելի իրաւունքներուն համար մղվող այս վճռական կռվի մեջ՝ Հայ ժողովուրդը վստահ է, որ չի մնար առանց ամբողջ քաղաքակիրթ աշխարհի օժանդակության»[3]:

Թուրք-հայկական պատերազմի առաջին օրերին Հայաստանի կառավարությունը հանձնարարում է Վրաստանում Հայաստանի ներկայացուցիչ Տ. Բեկզադյանին՝ հանդիպել Դաշնակիցների ներկայացուցիչների հետ և խնդրել միջոցներ ձեռք առնել թուրքերի հարձակումը դադարեցնելու համար: Բեկզադյանը հանձնարարությունը կատարում է: Դաշնակիցներն օգնության

---

[1] **Ալ. Խատիսյան**, նշվ. աշխ., էջ 288:
[2] Նույն տեղում, էջ 290-291:
[3] **Հ. Տեր-Հակոբյան,** նշվ. աշխ., էջ 80-81:

խոստումներ են տալիս, որոնք, սակայն, չեն կատարվում: Պատերազմի երկրորդ փուլում, Կարսի անկումից հետո, դրությունն արմատապես փոխվում է: Դաշնակիցները հրաժարվում են անգամ խոստումներից և հայ ժողովրդին թողնում բախտի քմահաճույքին:

Նոյեմբերի 5-ին Բեկզադյանը Թիֆլիսից գրում է Օհանջանյանին. «Ձեր շիֆրով հեռագիրը Ղարսի անկման մասին ստացա ամսույս 3-ին, երեկոյան, իսկույն տեսակցություն խնդրեցի Ստոքսից և, հայտնելով այդ լուրը, հարցրի իրենցից սպասվելիք օգնության մասին: Ինչպես որ Ձեզ հեռագրել էի այդ մասին, նրա պատասխանը շատ պարզ էր այս անգամ, նա իսկույն հանեց սեղանի արկղից մի ամբողջ գործ, ցույց տվեց հեռագրերի մի կույտ և ասաց, որ ինքը շարունակ հեռագրում է օգնության մասին և մինչև հիմա ոչ մի պատասխան չի ստացել, իր կարծիքով դա նշանակում է, որ ***Եվրոպան*** կամ ***անկարող է*** և կամ ***չի ուզում օգնել*** մեզ, երկու դեպքում էլ սակայն հետևանքը մեզ համար նույնն է,– ասաց նա,– և որովհետև այդ այդպես է, ուրեմն դուք ազատ եք անելու այն ամենը, ինչ որ հարկավոր կգտնեք Ձեր ժողովուրդը փրկելու համար»[1]:

Կովկասում անգլիական գերագույն կոմիսար Ստոքսից հետո Բեկզադյանը հանդիպում է նաև Եվրոպայի այլ պետությունների՝ Թիֆլիսում գտնվող ներկայացուցիչների հետ:

Բեկզադյանն այդ հանդիպումների արդյունքներն ամփոփում է այսպես. «Այդպիսով, Եվրոպայի գոնե այստեղի ներկայացուցիչները, որոնց մեջ Ստոքսին պիտի համարել ամենաազդեցիկը, պարզ և կտրուկ կերպով մեզ հայտարարեցին, որ Եվրոպան կամ չի ուզում, կամ չի կարող մեզ օգնել, և մենք պիտի մեր գլխի ճարը տեսնենք»[2]: Նույն դիրքն է գրավում նաև ԱՄՆ-ի կառավարությունը:

Ա. Ահարոնյանի օգնության մասին անմիջական խնդրանքը Անգլիայի և Ֆրանսիայի կառավարություններին նույնպես մերժվում է:

Ա. Խատիսյանն այսպես է բնութագրում իրավիճակը. «Ես քայլ առ քայլ և օրը օրին ուսումնասիրած եմ արտաքին քաղաքականության բոլոր ազդեցությունները և փաստերը: Ես եկած եմ այն անխախտ համոզման, որ Դաշնակիցները լքեցին Հայաստանը,

---

[1] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, N 3, էջ 60:
[2] Նույն տեղում:

որ թուրքերը ատկե լայնորեն օգտուեցան, բայց թուրքերու գլխավոր զինակիցները բոլշևիկներն էին, որ ուժ և հնարավորություն տվին թուրքերուն հարձակվելու Հայաստանի վրա: Այդ՝ անվիճելի փաստ է: Փաստ է նույնպես, որ իրար օգնելե ետքը իրար մեջ բաժնեցին Հայաստանը: Եվ բոլշևիկները ըրին այդ ոչ թե առանձին թշնամութենեն դեպի Հայաստանը, այլ դրդուած իրենց «համաշխարհային» քաղաքականութունեն, որուն համար անոնք պետք կը զգային շահելու թուրքերու բարեկամությունը՝ զոհաբերելով Հայաստանը»[1]:

Եվ այսպես, Արևմուտքը խաղից դուրս եկավ: Հայաստանը մնաց մենակ: Նրա ճակատագիրը պետք է տնօրինեին Թուրքիան և Ռուսաստանը:

Խատիսյանը, հույսը Արևմուտքից կտրելով, մեկնեց Ալեքսանդրապոլ, որտեղ հաղթողը պետք է թելադրեր իր պայմանները:

Սակայն Ռուսաստանը ևս այս փուլում չափազանց ակտիվ գործունեություն ծավալեց իր ծրագրերը իրականացնելու նպատակով:

[1] **Ալ. Խատիսյան**, նշվ. աշխ., էջ 292-293:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՄԱՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՓՈՒԼԸ

Դեռ հոկտեմբերի 26-ին Լեգրանը հայտնում է Չիչերինին և Տրոցկուն, որ թուրքերը նպատակ են հետապնդում գրավել Կարսը և Ալեքսանդրապոլը[1]: Կարսի անկումից հետո, հոկտեմբերի 31-ին, Հայաստանի կառավարությունը պաշտոնապես Ռուսաստանի կառավարությունից խնդրում է միջնորդ հանդիսանալ՝ թուրքերի հարձակումը կանգնեցնելու և հաշտության պայմանագիր կնքելու համար: Փաստաթղթում ասվում էր, որ «Ալեքսանդրապոլի վիճակն անհույս է համարվում, իսկ անկախ Հայաստանինը՝ օրհասական»[2]:

Այն պահին, երբ կործանվում էր Հայաստանը, երբ զանգվածաբար բնաջնջվում էր հայ ժողովուրդը, երբ սրի էր քաշվել շուրջ 200 հազար մարդ, Ստալինը նոյեմբերի 3-ին հեռագրում էր Չիչերինին. «***Թուրքերի հարձակման չափերի մասին լուրերը չափազանցված են... Ահա թե ինչու այդ լուրերին պետք է վերաբերվել հանգիստ***...» (ընդգծումը մերն է - Լ. Խ.)[3]:

Ստալինի հաշվարկները պարզ էին. ինչքան թուրքական զորքերը առաջ էին գնում դեպի Հայաստանի խորքերը, և օրհասական էր դառնում Հայաստանի վիճակը, այնքան մեծանում էր հավանականությունը, որ Հայաստանի կառավարությունը երկիրը թուրքերից փրկելու մտահոգությամբ հարկադրված կլինի իշխանությունը հանձնել բոլշևիկներին:

Իսկ թուրքերը ծրագրված իրականացնում էին ամբողջ հայ ժողովրդի ցեղասպանության պանթուրքական ծրագիրը: Այդ է ցույց տալիս Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեդ Մուխտար փաշայի նոյեմբերի 8-ին Կարաբեքիրին ուղարկված դիմումը, որում ասվում էր. «***Հայաստանը գտնվում է խիստ լայնատարած մուսուլմանական հողատարածքի վրա, հետևաբար, անհրա-***

[1] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 294.
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, ֆ. 558, ց. 1, գ. 1985, թ. 1:

ժեշտ է նրան ինչպես քաղաքականապես, այնպես էլ փաստականորեն ոչնչացնել: Հարկ է հաշվի առնել, որ քաղաքական ընդհանուր իրադրությունն ու մեր հզորությունը բարենպաստ են այդ մտադրությունն իրականացնելու համար» (ընդգծումը մերն է – Լ. Խ.)[1]: Թուրքերի դիրքորոշումը Հայաստանի հարցում հենց սկզբից էլ պարզ էր, այն փոփոխություն չէր կրել: Ռուսաստանի ռազմավարական դիրքորոշումը ևս փոփոխություն չէր կրել, սակայն իրականացման ձևերը կախված էին բազմաթիվ ներքին և արտաքին գործոններից, որոնք բոլշևիկները հաշվի չառնել չէին կարող:

Նոյեմբերի 5-ին Լեգրանը ստանում է Չիչերինի նամակը, որում վերջինս քննարկում է հենց այդ գործոնների հարցը: Նա գրում է. «Ավելի դժվար խնդիր է մեր առաջ կանգնած Հայաստանի կապակցությամբ, այն բանից հետո, երբ նա Կարսի անկման տպավորության տակ դիմել է մեր միջնորդությանը: Այս պահին, երբ գրում եմ նամակը, այդ հարցի հետ կապված հիմնական խնդիրները դեռ լուծված չեն: Չի լուծված, թե ինչքան հեռու պետք է գնանք մեր պահանջներում, եթե վերցնենք միջնորդությունը, և ինչքան հեռու պետք է գնանք մեր վրա վերցվելիք պատասխանատվության հարցում: Այստեղ միախառնվում են և՛ ընդհանուր քաղաքական, և՛ հատուկ ռազմական նկատառումներ: Պետք է պարզել, թե ինչքան ենք մենք ուժեղ և պետք է պարզել նաև, թե Հայաստանի կողմից մեր պահանջներն ընդունելու, թուրքի դեմ մեր վճռական հանդես գալու դեպքում, մեր ընդհանուր քաղաքականությունը և դրանում թուրքական ազգայնականների դերը ինչքանով կարող է բարդանալ: Եթե օրինակ, Հայաստանն ընդունի խորհրդայնացումը, մեր վրա կընկնի պատասխանատվություն և պարտավորություն, որը մենք պետք է կատարենք»: Շարունակելով իր միտքը, Չիչերինը գրում է. «Ներկա պահին մեզ դեռ պարզ չէ, թուրքերը հարձակվում են խորհրդային կողմնորոշման հիման վրա, նպատակ ունենալով մոտենալ մեզ, թե՞ հարձակվում են իրենց քաղաքականությունը փոխելու և Անտանտի հետ անդրկուլիսյան համաձայնության հիման վրա, որպեսզի 1918 թվականի օրինակով նվաճողական քաղաքականություն սկսեն Կովկասում, արևմուտքում կրած կորուստների դիմաց փոխհատուցում ստանալու համար»: Այդ վտանգը, ամփոփում է նամակը Չիչերինը, «մեզ հարկադրում է միաժամանակ լրջորեն հաշվի

[1] **Ե. Սարգսյան**, նշվ. հոդվածներ:

առնել Հայաստանի և Վրաստանի դերը որպես պատնեշի թուրքերի հարձակողական քաղաքականության վերսկսման դեմ: Այս նամակը ստանալու պահին Դուք, անկասկած, ձեր ձեռքում ծածկագրերի ձևով արդեն կունենաք այստեղի խորհրդակցությունների արդյունքները, որոնք կպարունակեն այստեղի որոշումները»[1]:

Սակայն թուրքերը գործում էին չափազանց օպերատիվ և ճկուն: Նրանք շատ շուտով փարատեցին Մոսկվայի կասկածները, հավաստիացնելով, որ իրենք ռուսների նվիրյալ դաշնակիցներն են:

Նոյեմբերի 3-ին 11-րդ բանակի Ռազմահեղափոխական խորհուրդը ստանում է Կարաբեքիրի հեռագիրը, որում արվում է հետևյալ առաջարկը. «...***անհրաժեշտ է Հայաստանը շտապ ազատագրել դաշնակների տիրապետությունից: Մեր դաշնակից Խորհրդային Ռուսաստանին անհրաժեշտ է վճռական միջոցներ ձեռք առնել դաշնակների տիրապետությանը վերջ տալու և իշխանության սանձերը այն կուսակցությանն հանձնելու, որն ազնվորեն կհոգա հայ ժողովրդի իրական կարիքները: Թուրքական հեղափոխական բանակն իր կողմից պատրաստ է դաշնակցին ցույց տալ ամեն տեսակի աջակցություն***» (ընդգծումը մերն է – Լ. Խ.)[2]:

Այդ առաջարկը 11-րդ բանակի ղեկավարությունը միանգամայն ճիշտ հասկացավ: Այն նոյեմբերի 6-ին հեռագրում է Մոսկվա, հարցնելով՝ կարելի՞ է արդյոք Թուրքիայի համար նախատեսված, բայց չուղարկված զենքն ու զինամթերքը հանձնել հասցեատիրոջը՝ Օսմանին: Այդ հեռագիրը տրվում է 11-րդ բանակի հրամանատարությանը՝ Կարաբեքիրի արած հետևյալ առաջարկի կապակցությամբ՝ «համատեղ պայքարել Հայաստանը դաշնակների իշխանությունից ազատագրելու համար, ընդ որում, թուրքական հեղափոխական բանակը պատրաստ է իր դաշնակցին ամեն տեսակի աջակցություն ցույց տալ»[3]:

Ինչպես նկատեցինք, Չիչերինի Լեգրանին ուղարկված նոյեմբերի 5-ի նամակում Հայաստանի հիմնահարցի ոչ մի որոշակի լուծում չի առաջարկվում: Գոյություն ունեին հիմնահարցի լուծման մի քանի տարբերակներ, սակայն դրանք ըստ էության չէին քննարկվելու: Հայաստանի հարցերը պետք է պաշտոնական լու-

---

[1] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 199-200.

[2] Նույն տեղում, թ. 1:

[3] Նույն տեղում, թ. 202:

ծում ստանային Բաքվի նոյեմբերի 4-ի խորհրդակցության որոշումների և Ստալինի՝ Լենինին ուղարկած հեռագրի դրույթների հիման վրա:

Նոյեմբերի 6-ին Չիչերինը հեռագրում է Բաքու՝ Ստալինին, հայտնելով Հայաստանի մասին Մոսկվայի որոշումները: Փաստաթուղթը տալիս ենք առանց կրճատումների.

«***Թուրքերի շարունակվող հարձակման հետևանքով Հայաստանը դիմել է մեր միջնորդությանը, իսկ Վրաստանը խիստ անհանգստացած է:***

Տրոցկին պատասխանել է, որ ռազմական առումով մենք Կովկասում ուժեղացել ենք, նա չի առարկում Հայաստանի խորհրդայնացման համար զորք ուղարկելուն, հարցին պետք է քաղաքական լուծում տալ: Մենք գտնում ենք, որ Դուք պետք է տեղում լուծեք հարցը: Կա հարցի լուծման երկու հնարավորություն, առավելագույն՝ Հայաստանը փրկել խորհրդայնացման գնով, չնայած այստեղ հարց է առաջանում... (պակասում են բառերը) և հայ կոմունիստները կսկսեն պնդել, տեղի կունենան ապստամբություններ, մենք հարկադրված կլինենք կենդանացնել սվիններով, ***մյուս հնարավորությունը նվազագույնն է՝ մեր միջնորդության համար պահանջել տրանզիտ, Հայաստանի անջատում Անտանտից և նրա պայմանագրի չեղյալ հայտարարում: Երկու հնարավորությունների մասին որոշումների իրականացումն էլ կախված է բարեպատեհ իրավիճակից: Կարծում ենք, Դուք պետք է անմիջապես որոշում ընդունեք*** (ընդգծումները մերն են – Լ. Խ.): Միջնորդություն՝ նշանակում է զորք ուղարկել, որովհետև եթե զորք չլինի, կուղարկեն սիրալիր պատասխաններ, բայց կանեն իրենց ցանկացածը, իսկ եթե թեկուզ մեկ կարմիր բանակային լինի, թուրքերը նրան ձեռք չեն տա: Անհրաժեշտ է շտապ գործել, քանի Անտանտը չի խցկվել: Պետք է Ռուսաստանյան կոմունիստներ ուղարկել Հայաստան, որպեսզի հայկականներին այլանդակություններից հետ պահենք: Կորկմասովի և Շահթախտինսկու մանդատները* կուղարկենք: Մենք Մդիվանուն դեմ ենք պարսկական իրադարձությունների պատճառով, այստեղից որևէ մեկին կուղարկենք»[1]:

---

* Նոյեմբերի 5-ին Ստալինը և Օրջոնիկիձեն Լենինին և Չիչերինին հեռագրում են այն մասին, որ Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի հետ համատեղ նախատեսել են քեմալականների հետ բանակցություններ վարելու համար ուղարկել Մդիվանուն, Կորկմասովին և Շահթախտինսկուն (ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, հավ. 1, գ. 2, թ. 133):

[1] Նույն տեղում, թ. 205:

Ինչպես և պետք էր սպասել, Մոսկվան Ստալինին է հանձնարարում լուծել հայ պետականության լինել-չլինելու հարցը, իսկ այդ խնդիրը Ստալինի համար վաղուց էր լուծված:

Թե Ռուսաստանն ինչպիսի գերլարվածությամբ էր գործում Անդրկովկասում, ցույց են տալիս այդ օրերին Կովկասյան քաղաքականության կենտրոնում կանգնած գործիչների բազմաթիվ «հույժ գաղտնի» հեռագրերը, որոնք հնարավորություն են տալիս բազմակողմանիորեն ներկայացնել Հայաստանի նկատմամբ վարվող քաղաքականության բոլոր կողմերը:

Ամբողջական պատկերացում կազմելու համար, նպատակահարմար ենք գտնում մեր ձեռքի տակ եղած նյութերը շարադրել ըստ օրերի:

Նոյեմբերի 7: Ստալինը Բաքվից հեռագրում է Լենինին և Չիչերինին (ծածկագիր N 164). «Զորակայանը հաղորդում է, որ Կարսն իրոք գրավված է, Ալեքսանդրապոլը հավանաբար կգրավվի, ընդ որում, թուրքերը իբր չեն անցնի Մոսկվային հայտնի գիծը: Կարծում եմ, այս տեղեկություններն ուշացած են, քանի որ թուրքերն արդեն անցել են գիծը...: Դրությունը Հայաստանում այնպիսին է, որ եթե կորցվի Ալեքսանդրապոլը, չի բացառվում դաշնակների կողմից իշխանության փոխանցումը մեզ Ադրբեջանի տարբերակով»[1]:

Ուղիղ գծով խոսակցություն Լեգրանի և Չիչերինի միջև.

«Լեգրան-Սպասում եմ իմ գրությանը Ձեր պատասխանին:

Չիչերին-Ստալինի 164 ծածկագիրը վերծանված չէ:

Լեգրան-Ընկեր Չիչերին, ես խնդրում եմ Ձեր պատասխանը՝ իմ գրությանը և ոչ թե Ստալինի ծածկագիրը. Ապարատի մոտ Լեգրանն է:

Չիչերին-Ապարատի մոտ ընկեր Չիչերինն է: Լսեք-տալիս եմ. Ստալինի 164 ծածկագիրը դեռ վերծանված չէ: 158,159,160 ծածկագրերն աղավաղված են և չեն տալիս ամբողջ նախագիծը: Հայաստանի հետ Ձեր պայմանագրի նախագիծը հնացել է: Իրադարձությունն երն առաջ ընկան, մնում է միայն միջնորդությունը, որպեսզի կանգնեցվի թուրքերի հարձակումը: Երբ թուրքերը կանգնեն, մնացածը աստիճանաբար կքննարկենք: Պետք է անհապաղ թուրքերի մոտ պատվիրակներ ուղարկել: Պարսկական զորքերի պատճառով Մդիվանուն մերժում ենք: Ուղարկում եմ Կորկմասովի և Շահթախտինսկու հեռագրային մանդատները: Հետո ճեպընթաց

[1] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, հավ. 1, գ. 2 , թ. 135:

գնացքով կուղարկենք գրավոր մանդատները, և կուղարկենք նաև ռուս պատվիրակին: Բայց սպասել չի կարելի: Թուրքերին պետք է դիմել մեր բարեկամությամբ, որը նրանց դեռ պետք է գալու: Պնդում ենք հարձակումը դադարեցնելու վրա: Հայերին ներկայացվելիք պայմաններն իմ կողմից մանրամասն շոշափվել են ծածկագրում, որը դեռ չեն հասցրել Ձեզ հանձնել: ***Զանգեզուրի և Նախիջևանի հարցը դեռ պետք է թողնել առկախ*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.): Վրաստանին պետք է հանգստացնել մեր բանակցությունների մասին հաղորդումով, որպեսզի նա չնետվի Անգլիայի գիրկը: Հաղորդեցեք Շեյնմանին. թուրքերին մեր ապագա օգնությունը կախման մեջ ենք դնում նրանց հարձակման դադարեցումից: Հին ծածկագրերը կկրկնենք հետո:

Լեգրան-Ընկեր Չիչերին. Ձեր գրության մեջ որոշակի հրահանգներ չեն նախատեսվում:

Մոսկվա-(ընդհատում է) Ներեցեք: Ծածկագրերը կկրկնենք: Ահա-ընդունեցեք ծածկագրերը:

Լեգրան-Ընկեր Չիչերին, Ձեզ խնդրում եմ մնալ ապարատի մոտ...

Մոսկվա -... Իսկ նա արդեն գնացել է»[1]:

Լեգրանի ուղիղ գծով գրությունը Չիչերինին.

«Ընկեր Չիչերին, երկար ժամանակ Ձեզ սպասեցի գծի մոտ: Ձեր գրության մեջ ինձ համար որոշակի հրահանգներ չկան: Ձեր ցուցումը պայմանագրի հնացածության մասին և դրա հետ մեկտեղ դիտողությունները՝ որ հայերից պետք է պահանջել տրանզիտ, հրաժարում Սևրի պայմանագրից և Անտանտից, ինձ հասկանալի չեն: Այդ պահանջներն իրականացված են հայկական կառավարության հետ մեր համաձայնագրով: Խնդրում եմ տալ որոշակի և ճշգրիտ առաջադրանք, հակառակ դեպքում մեզ ոչինչ չի մնում անել: Նկատի՞ ունեցեք, պահանջվում է որոշակի պատասխան, շարունակու՞մ ենք մենք բանակցությունները հայկական կառավարության հետ և ի՞նչ պայմաններով: Միայն այդ պայմանով ես կարող եմ հարաբերության մեջ մտնել հայկական կառավարության հետ, հակառակ դեպքում ես բացարձակապես ոչինչ չունեմ անելու ոչ միայն Երևանում, այլև Բաքվում: Խնդրում եմ սպառիչ պատասխան տալ»[2]:

Այս երկու փաստաթղթերը ցույց են տալիս Լեգրանի համարձակ և շիտակ բնավորությունը: Նա հետևողականորեն պաշտ-

---

[1] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 207.

[2] Նույն տեղում, թ. 210:

պանում էր ճշմարտությունը: Իսկ Չիչերինն ընկել էր ծանր դրության մեջ: Նա Լեգրանին չէր կարող հայտնել, թե ինչ է տեղի ունենում Մոսկվայում, այդ պատճառով էլ խուսանավում էր, որը նրան, ինչպես տեսնում ենք, ոչ միշտ էր հաջողվում:

Լեգրանի՝ Չիչերինին ուղիղ գծով հաղորդած գրությունից մի հատված. «Իմ ներկայությունը Հայաստանում անհրաժեշտ կլիներ միայն այն դեպքում, եթե ես ճշգրիտ հրահանգներ ունենայի հաշտություն կնքելու և թուրքական հարձակման վերաբերյալ մեր քաղաքականության մասին:

Ժամանել Հայաստան առանց այդ հարցերի ուղղակի պատասխաններն ունենալու, համարում եմ բացարձակապես անհնարին:

Ստեղծվել է չափազանց ծանր վիճակ, մեր քաղաքականության տեսանկյունից միակ ընդունելի ելքը, ես առաջվա նման համարում եմ հաշտության պայմանագրի կնքումը և մեր միջնորդությունը՝ թուրքերի ռազմական գործողությունները դադարեցնելու և մինչև 1914 թ. սահմանները տարածքների մաքրման նպատակով (ընդգծումը մերն է – Լ. Խ.):

Սակայն վախենում եմ, որ մենք ուշացել ենք մեր հանդես գալով և կարող ենք կանգնել ծանր և անսպասելի որոշումներ ընդունելու անհրաժեշտության առաջ»[1]:

Չիչերինի գրությունը Լեգրանին.

«Թուրքերին զենքի հետագա բացթողման համար երկու պայման, առաջին՝ զինադադար Հայաստանի հետ, եթե Հայաստանն ընդունի միջնորդություն մեր պայմաններով, երկրորդ՝ թուրքերը պետք է պարտավորվեն Անտանտին դուրս քշել Բաթումից, եթե նա մտնի Բաթում:

Զինվորականներին կկարգադրվի զենք տալ կամ չտալ՝ կախված ընկ. Ստալինի ցուցումներից: ***Դեռ պետք չէ խոսել 1914 թվականի սահմանները նահանջելու մասին, այլ միայն՝ հարձակումը դադարեցնելու և զինադադարի***» (ընդգծումը մերն է – Լ. Խ.)[2]:

Չիչերինի սույն գրությունից պարզ է դառնում, որ Ռուսաստանը համաձայնել է թուրքերին թողնելու Կարսի և Արդահանի շրջանները: Չիչերինի ուղիղ գծով խոսակցությունը Լեգրանի հետ:

Այս խոսակցության ժամանակ Չիչերինը Լեգրանին մանրամասն ծանոթացնում է Հայաստանի մասին Կենտրոնի ընդունած

---

[1] Նույն տեղում, թ. 214-215:

[2] Նույն տեղում, թ. 211:

որոշումների հետ: Նա մեկ օր առաջ այդ որոշումների մասին տեղյակ էր պահել Ստալինին: Տեքստը տալիս ենք ամբողջությամբ.

«Մոսկվա. ահա գրությունն ընկ. Լեգրանին.

Ցուցումներն այն մասին, թե ինչպիսի պահանջներ ներկայացնել Հայաստանին, պարունակվում են ընկ. Ստալինին ուղարկված իմ 463-472 ծածկագրում: Ձեր առաջվա նախագիծը, նոր իրադարձությունների պատճառով, արդեն կորցրել է իր այժմեականությունը: Նշված ծածկագիրը պարունակում է Ձեր գրության պատասխանը: Վերծանվա՞ծ է արդյոք հիշյալ ծածկագիրը: Եթե վերծանված չէ, հաղորդեցեք անմիջապես, քանի որ ժամերը թանկ են:

Բաքու, ծածկագիրը նոր է հանված ապարատից:

Մոսկվա. շարունակում եմ հաղորդել- Ձեզ ուղղված իմ առաջին գրությունը պարունակում էր երկու հնարավոր պահանջներ Հայաստանին՝ նվազագույն և առավելագույն: Թերասումներն ընկ. Ստալինին, որպես Կենտկոմի նիստի մասնակցի, պետք է հասկանալի լինեն: Չեմ հասկանում, Դուք ինչպե՞ս կարող եք հարցնել, թե պետք են արդյոք Հայաստանի հետ բանակցություններ, երբ ես ասել եմ այն պահանջների մասին, որոնք մենք պետք է ներկայացնենք Հայաստանին: Մենք թուրքերից պահանջում ենք դադարեցնել ռազմական գործողությունները միայն այն դեպքում, եթե Հայաստանը, համաձայն վերը նշված ծածկագրի, ընդունում է մեր միջնորդության պայմանները:

Այդ դեպքում մենք պահանջում ենք թուրքերից, որպեսզի նրանք կանգ առնեն, և այդ պահանջը նրանց կտանեն Մդիվանին, Կորկմասովը և Շահթախտինսկին:

Մենք շարունակում ենք թուրքերին զենք տալ միայն այն դեպքում, եթե նրանք՝ առաջին. դադարեցնեն հարձակումը, բայց դա այն դեպքում, եթե Հայաստանն իր կողմից կընդունի մեր միջնորդության պայմանները, և երկրորդ. պարտավորվում են Անտանտին դուրս քշել Բաթումից, եթե վերջինս գրավի այն, այսպիսին են թուրքերին զենք տրամադրելը շարունակելու երկու պայմանները:

Մենք ընկ. Սկլյանսկուն խնդրում ենք հաղորդել Ռոստով և Տուապսե, որպեսզի թուրքերին զենքի հետագա հանձնումը կատարվի ընկ. Ստալինի ցուցումներով:

Եվ այսպես, Հայաստանի հետ պետք է որոշել միջնորդության պայմանները, որի մասին վերը նշված ծածկագրում հաղորդվել է ընկ. Ստալինին: Պետք է ընկ. Շեյնմանին հաղորդել, որ մենք

քայլեր ենք անում միջնորդությունն իրագործելու համար, թող նա այդ մասին հայտնի Վրաստանին, նրան հանգստացնելու համար: Երբ Մդիվանու հանձնաժողովը լինի թուրքերի մոտ, նա շփման մեջ պետք է լինի Հայաստանում մեր ներկայացուցչի հետ, որովհետև թուրքերի հետ Մդիվանու բանակցությունների ընթացքը կախված է լինելու Հայաստանի վարքից:

Մդիվանին թուրքերի մոտ կմեկնի Թիֆլիսով ու Երևանով և ճանապարհին Հայաստանից կստանա պատասխանն ու կպարզի, ընդունո՞ւմ է նա արդյոք մեր պայմանները:

Թուրքերը կոչ են հրապարակել այն մասին, որ ազատագրում են Հայաստանը դաշնակներից: Եվ այսպես, նրանք մտադրված են զավթել ամբողջ Հայաստանը:

Մդիվանու հանձնաժողովը, որպեսզի դրան խանգարի, պետք է անմիջապես մեկնի թուրքերի մոտ և ճանապարհին Հայաստանից ստանա համաձայնություն մեր պայմանների մասին: Դրա համար մենք Մդիվանու հանձնաժողովին մանդատ ենք ուղարկել հեռագրով, իսկ գրավոր մանդատները կուղարկենք հետո, սուրհանդակի միջոցով:

Սպասում եմ Ձեր հաղորդմանն այն մասին, վերծանվե՞լ է արդյոք իմ 463-472 ծածկագիրը և ի՞նչ է ասելու ընկ. Ստալինը:

Ե՞րբ և ի՞նչ ճանապարհով է ուղարկվել ընկ. Ստալինի ծածկագիրը՝ Ձեր պայմանագրի բովանդակության շարադրանքով, մենք այն չունենք: Համար 164-ում այն չկա, իսկ 160-ում՝ միայն համառոտ ցուցումներ:

Գնա՞լ արդյոք, առավելագույն պահանջների, կախված է վաղվա օրվա բարեպատեհությունից»[1]:

Այս գրագրություններին ծանոթանալիս, բազմաթիվ կարևոր հարցերի հետ միասին, պետք է ուշադրություն դարձնել նաև արտաքնապես աչք չծակող, բայց քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից չափազանց մեծ նշանակություն ունեցող մի հանգամանքի վրա:

Հարցն այն է, որ Ստալինի կողմից ղեկավարվող թուրքամետ խմբի կազմում էին գտնվում նաև Վրաստանի կոմկուսի երկու ճանաչված անդամներ՝ Մդիվանին և Էլիավան: Ստալինն իր թուրքամետ ծրագրերն իրականացնելիս անմիջականորեն հենվում էր այդ երկու անձնավորությունների վրա՝ նրանց պաշտոնապես հանձնարարելով այս կամ այն կարևոր խնդրի կատա-

[1] Նույն տեղում, թ. 212-213:

ռումը: Այդ մարդիկ, ստանալով պաշտոնական հանձնարարություններ, ղեկավարվում էին միայն Ստալինի ցուցումներով, որոնք չէին համընկնում Չիչերինի տեսակետներին:

Տվյալ դեպքում կարևոր նշանակություն էր ստանում այն հանգամանքը, թե ո՞վ պետք է մեկնի Ալեքսանդրապոլ՝ Կարաբեքիրի հետ բանակցություններ վարելու: Ստալինը ցանկանում էր Ալեքսանդրապոլ ուղարկել Մդիվանուն, որը լինելով թուրքամետ և հակահայ, կհամագործակցեր թուրքերի հետ և ճշգրտորեն կկատարեր իր հանձնարարությունները՝ հայոց պետականությունը կործանելու ուղղությամբ: Չիչերինը, պատրվակ ունենալով Մդիվանու անհաջող գործունեությունը Պարսկաստանում, մերժում է վերջինիս թեկնածությունը:

Սակայն Ստալինը չէր ցանկանում Ալեքսանդրապոլի բանակցությունների ղեկավարությունը թողնել Չիչերինին և այդ պատճառով էլ հետևողականորեն պաշտպանում էր Մդիվանու թեկնածությունը:

Այդ նպատակին հասնելու համար Ստալինն առաջին հերթին անհրաժեշտ է համարում մի հեռագիր ուղարկել Լենինին, որում անուղղակի կերպով արդարացվում է Մդիվանու քաղաքականությունը Պարսկաստանում: Հեռագրում Ստալինը ներկայացնում է Պարսկաստանում տիրող իրավիճակը և Ռուսաստանի դրանից բխող խնդիրները[1]:

Մյուս կողմից, Ստալինը գրություն է ուղարկում Չիչերինին՝ հիմնավորելով Մդիվանուն Ալեքսանդրապոլ ուղարկելու անհրաժեշտությունը[2]:

Բաքվից Արտաքին գործերի ժողկոմատին Ստալինի քարտուղարի ուղարկած գրությունը. «Ապարատի մոտ է ընկ. Ստալինի քարտուղար Բրեզանովսկին: Ես խոսում եմ ընկ. ընկ. Ստալինի և Օրջոնիկիձեի հանձնարարությամբ: Ընկ. Չիչերինին անմիջապես զեկուցեցեք հետևյալը. Պարսկաստանից Բաքու է ժամանել Մդիվանին, նրան պետք է անմիջապես ուղարկել Թուրքիա՝ թուրքական ազգային հրամանատարության հետ բանակցություններ վարելու համար: Մդիվանուց բացի ուրիշ մարդ չունենք ուղարկելու: Էլիավան հիվանդ է և կարող է աշխատանքի անցնել ոչ շուտ, քան մեկ և կես ամիս հետո, իսկ լիազորված անձի Թուրքիա ուղարկելը հետաձգում չի հանդուրժում (այդ մասին Ստա-

[1] Նույն տեղում, թ. 208:
[2] Նույն տեղում, թ. 285:

լինի գրությունը Չիչերինին ուղարկվել է երեք ժամ առաջ): Կարո՞ղ եք Դուք, արդյոք, հեռագրով անմիջապես վերոհիշյալի մասին հաստատել Մդիվանու անվամբ մանդատը: Եթե դա հնարավոր չէ, ապա անհրաժեշտ է մանդատը շտապ կերպով ուղարկել: Ապարատի մոտ սպասում եմ պատասխանի: Առայժմ այսքանը: Անմիջապես տվեք պատասխան»[1]:

Ահա այսպես էր գործում Ստալինը: Նա անսահմանափակ իրավունքներ ուներ և միանձնյա էր լուծում Ռուսաստանի արևելյան քաղաքականության հետ կապված բոլոր հարցերը:

Նորից պարտված Չիչերինը նույն օրը հեռագրում է Ադրբեջանում Ռուսաստանի ներկայացուցչին. «Նոյեմբերի 7: ՌՍՖԽՀ-ի արտաքին գործերի կոմիսարիատը լիազորում է ընկերներ Մդիվանուն, Կորկմասովին և Շահթախտինսկուն բանակցություններ վարելու և համաձայնագիր կնքելու թուրքական ազգային կառավարության ներկայացուցիչների հետ՝ Թուրքիայի և Հայաստանի միջև ռազմական գործողությունները դադարեցնելու մասին: Գրավոր մանդատները ուղարկվում են սուրհանդակի միջոցով»[2]:

Չիչերինի գրությունը Լեգրանին.

«Նոյեմբերի 7-ի քննարկումով հետ ենք վերցնում Մդիվանու դեմ առարկությունները: Ուղարկում եմ Մդիվանու, Կորկմասովի և Շահթախտինսկու հեռագրային մանդատը:

Թուրքերը հայտարարում են, որ իբր ուզում են Հայաստանն ազատագրել դաշնակներից, դա խաբեբայություն է, պետք է դադարեցնել նրանց զենք բաց թողնելը, քանի զինադադար չեն կնքել: Այդ բոլորը հայերի կողմից մեր պայմանները ընդունելու դեպքում» (ընդգծումը մերն է – Լ. Խ.)[3]:

Այսպիսով, Ստալինը հասավ իր նպատակին: Ալեքսանդրապոլ էր ուղարկվում նրա հակահայկական թիմը: Երեքն էլ թուրքամետներ էին և հայերի նկատմամբ կենսաբանական ատելություն էին տածում: Ընդ որում, եթե քաղաքական դեմք հանդիսացող Մդիվանին գործում էր զգուշաբար, Կորկմասովը պարզապես գործիք էր, ապա Շահթախտինսկին մուսուլմանական, պանթուրքիստական գաղափարախոսության հաղթանակի համար անթաքույց պայքարող ճանաչված գործիչներից էր: Մոսկվան այդ շատ լավ գիտեր:

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, թ. 314:
[3] Նույն տեղում, թ. 209:

Այս մարդիկ պետք է Ալեքսանդրապոլում պաշտպանեին հայ ժողովրդի շահերը: Գոնե պաշտոնապես այդպես էր ներկայացվում Չիչերինի կողմից:

Չիչերինի ուղիղ գծով գրությունը Լեգրանին.

«Հաղորդեցեք Ստալինին, որ այլ ռազմաճակատներում մեր դրության բարելավման, Կովկասում մեր ուժեղացման պատճառով, զինվորականներն այլևս չեն առարկում Կովկասում մեծ ակտիվության դեմ:

Հայկական կառավարության մեզ ուղղված դիմումը, հարկադրում է մեզ խառնվել, դնելով՝ նվազագույն կամ առավելագույն պայմաններ: Դա քաղաքական հարց է, որը պետք է լուծել տեղի իրավիճակին մոտիկից ծանոթ լինելու պայմաններում:

Կոմիտեի (պետք է լինի Կենտկոմի – Լ. Խ.) որոշումը հնարավորություն է բացում թե՛ մեկի, թե՛ մյուսի համար, պետք է գործել արագ: Պետք է հաշվի նստել ոչ միայն այսօրվա հետ, այլև այն դժվարությունների հետ, որոնք կառաջանան վաղը:

Նվազագույնը մենք համարում ենք՝ տրանզիտը, Անտանտից անջատվելը, Սևրի պայմանագրից հրաժարվելը»[1]:

Նոյեմբերի 7-ը Ստալինի հաղթանակի օրն էր: Նրա տնօրինությանը հանձնվեց Հայաստանի ճակատագրի լուծման հարցը: Մդիվանին նշանակվեց Ալեքսանդրապոլ մեկնող պատվիրակության ղեկավար: Մերժվեց պատվիրակության մեջ ռուս ընդգրկելու մասին Չիչերինի առաջարկը: Ալեքսանդրապոլ էր մեկնում Ստալինի կազմած միասնական թուրքամետ թիմը:

Նոյեմբերի 8: Չիչերինը խիստ անհանգստացած էր Ստալինին ուղարկված այն ծածկագրի ճակատագրով, որում խոսվում էր Հայաստանին ներկայացվելիք առավելագույն և նվազագույն պահանջների մասին: Նա ցանկանում էր իմանալ, ծածկագիրը վերծանվե՞լ է, թե ոչ, ծանո՞թ է արդյոք Ստալինն այդ հեռագրի բովանդակությանը, և եթե այո, ապա ի՞նչ կարծիք ունի:

Չիչերինի գրությունը Լեգրանին.

«Դուք գնացիք, չվերջացնելով խոսակցությունը: Ինձ չափից ավելի կարևոր է իմանալ, վերծանվե՞լ է, արդյոք, Ստալինին ուղարկած իմ 463-472 ծածկագիրը, կա՞ն արդյոք առարկություններ կամ հարցեր, և ինչ է ասել Ստալինը: Հոկտեմբերի 28-ի իմ ծածկագիրը նա չի վերծանել, այդ մասին հայտնել է միայն այսօր, վախենում եմ նույնը կրկնվի, իսկ հարցը շատ կարևոր է: Ձեր պայ-

[1] Նույն տեղում, թ. 216:

մանագրի բովանդակության մասին, որը ես համարել եմ հնացած, իմացել եմ Ստալինի և Օրջոնիկիձեի համար 159 հեռագրից, այն տարբերվում է մեր ներկա առաջարկներից: Մդիվանին Թուրքիա է մեկնելու Երևանով, Ձեզ անհրաժեշտ է նրա հետ մեկնել մինչև Երևան, որպեսզի այնտեղ, հիշյալ ծածկագրի համաձայն, ամեն ինչ կարգավորեք»[1]:

Չիչերինի հեռագիրը Լեգրանին.

«Մինչև այժմ չգիտեմ վերծանվե՞լ է արդյոք իմ՝ Ստալինին ուղղված համար 463-472 ծածկագիրը, ի՞նչ որոշում է ընդունվել, ե՞րբ են ճանապարհվում Մդիվանին, Կորկմասովը և Շահթախտինսկին, հանձնվա՞ծ է արդյոք նրանց իմ հեռագրային մանդատը: Ես Ձեզ ասել եմ, որ նրանք պետք է գնան Թիֆլիսով և Երևանով, նրանք պետք է գնան Ձեզ հետ և պետք է հայկական կառավարությանը հասցնել մեր կողմից միջնորդությունն ընդունելու պայմանները, որի մասին ասվում է իմ 463-472 ծածկագրում: Հայկական կառավարության պատասխանից էլ կախված կլինի թուրքերի հետ բանակցությունների բովանդակությունը: Այդ պայմանները դրվում են Ձեր պայմանագրի նախագծի փոխարեն: Զանգեզուրի և Նախիջևանի հարցը թողեք առկախ»[2]:

Չիչերինի գրությունը Լեգրանին.

«Թուրքերը Հայաստանում երկդիմի խաղ են խաղում: Քյազիմ Կարաբեքիրի՝ մեր հրամանատարությանն ուղղված դիմումում ու նրա կոչում ասվում է, որ թուրքերը ցանկանում են ազատագրել ամբողջ հայ ժողովրդին դաշնակներից և առաջարկվում է այդ գործում համագործակցել նրանց հետ, իսկ Թիֆլիսում թուրքական ներկայացուցչի հայտարարության մեջ ասված է, որ թուրքերը պայմանավորված գծից այն կողմ չեն գնա, չնայած նրանք արդեն այն անցել են:

Օհանջանյանի մեզ տված նոտայում մատնացույց է արվում, որ մեզանից ստացված զենքը թուրքերն օգտագործում են հայերի դեմ, չնայած եղել է պայմանավորվածություն, որ այն արևմտյան ճակատի համար է... Եթե մեր միջնորդությունը Հայաստանի կողմից մեր պայմաններով ընդունվի, նա պետք է հենվի զոնե որոշ զինված ուժերի վրա»[3]:

Ստալինի հեռագիրը Չիչերինին, պատճենը՝ Լենինին.

---

[1] Նույն տեղում, թ. 218:
[2] Նույն տեղում, թ. 219:
[3] Նույն տեղում, թ. 221:

«Ձեր համար 463-472 ծածկագիրը վերծանված է: Հիմնական թուլությունը կապի ու ստուգված տեղեկությունների բացակայությունն է, վաղը Մդիվանուն Լեգրանի հետ ուղարկում ենք, վերջինս կմնա Երևանում, իսկ Մդիվանին ուղիղ գծով կկապվի Անկարայի հետ՝ թուրքերի արևելյան ճակատի շտաբի միջոցով:

Եթե Ալեքսանդրապոլը վերցվի, ամենահավանականը համարում եմ առավելագույն պահանջների կոմբինացիան, բոլոր դեպքերում, կգործենք, ելնելով իրադրությունից (ընդգծումը մերն է – Լ. Խ.): Ամեն ինչ կախված է այն բանից, թե կապված Անտանտի հետ բանակցություններից, ինչ դիրք են գրավելու թուրքերը... Մի բան անկասկած է. զորամասերը պետք է անհապաղ շարժել դեպի Հայաստանի սահմանները և անհրաժեշտության դեպքում նրանց հետ միասին մտնել Երևան, այդ ոգով, որպես Ռազմահեղափոխական խորհրդի անդամ, նախապատրաստական աշխատանքներ է տանում Օրջոնիկիձեն:

Այդչափ էլ անկասկած է, որ այժմ պետք է ուժեր կուտակել Վրաստան ներխուժելու համար այն պահին, երբ Բաթումը ռազմակալվի Անտանտի կողմից, եթե ընդհանրապես այն ռազմակալվելու է»[1]:

Ստալինն, ինչպես տեսնում ենք, իր որոշումն արդեն կայացրել էր: Պետք է իրագործվեր Հայաստանի վերաբերյալ Մոսկվայի առավելագույն ծրագիրը: Օրջոնիկիձեն հրահանգ էր ստացել զորքեր կենտրոնացնել Հայաստանի սահմանների մոտ: Բաքվում մշակված էր նաև Հայաստանի նվաճման գործնական ծրագիրը:

Թուրքերին պետք է թույլ տրվեր Հայաստանը հասցնելու այնպիսի վիճակի, որպեսզի նրա կառավարությունը հարկադրված լինի հրաժարվել պետականությունից, ընդունել երկրի խորհրդայնացման անհրաժեշտությունը և հրավիրել ռուսական զորքերին: Դեռ ավելին, անհրաժեշտ էր Հայաստանում ստեղծել այնպիսի ծանր իրավիճակ, որպեսզի հայ ժողովուրդը, նոր եղեռնի վտանգից սարսափահար, ռուսական զորքերին գրկաբաց ընդուներ՝ որպես ազատարարների:

Ստալինի և Օրջոնիկիձեի կողմից մշակված այդ ծրագրի վերջին փուլի իրականացման հիմնական դերակատարը լինելու էր Մդիվանու Ալեքսանդրապոլ մեկնող պատվիրակությունը:

Արտաքուստ ամեն ինչ լավ էր հաշված: Թուրքերը հարձակվում են, Արևմուտքը Հայաստանին չի օգնում, և այդ ծանր պահին

[1] Նույն տեղում, թ. 220:

միայն բոլշևիկյան Ռուսաստանն է նեցուկ կանգնում հայ ժողովրդին, նրան փրկելով անխուսափելի կոտորածներից: Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի քաղաքականությունը պաշտոնական փաստաթղթերում այդպես էլ ներկայացվում է:

Չիչերինը և Լեգրանը իրադարձությունների զարգացման այս փուլում Հայաստանին որևէ գործնական օգնություն ցույց տալ չէին կարող: Հիմնախնդրի լուծման բոլոր լծակները կենտրոնացված էին Ստալինի ձեռքում: Այդ պատճառով էլ չի կարելի Չիչերինի կամ Լեգրանի գրությունները հիմք ընդունել Խորհրդային Ռուսաստանի քաղաքականությունը և Հայաստանի նկատմամբ ունեցած վերաբերմունքը ներկայացնելու համար: Ստալինը և Լեգրանը Հայաստանի հարցերում միանգամայն տարբեր մոտեցումներ ունեին, իսկ Չիչերինը, վերջին շրջանում տեսնելով Ստալինի հզորացումը, սկսել էր խուսանավել:

Այն ժամանակ, երբ Ստալինը որոշել էր զինված ուժով գրավել Հայաստանը, Լեգրանը Չիչերինին գրում էր. «***Ես միայն ցանկանում եմ, որպեսզի Դուք հաստատեք Մոսկվայի թույլ տված հիմնական սխալը. անհրաժեշտ էր որոշում ընդունել միջամտության մասին և ներկայացուցիչներ ուղարկել թուրքերի հետ բանակցություններ վարելու այն ժամանակ, երբ Դուք մեզանից ստացաք առաջին տեղեկությունները Սարիղամիշի գրավման և թուրքերի դեպի Կարս առաջխաղացման մասին:***

Դրա փոխարեն, Մոսկվան թույլ տվեց իրեն քնեցնել քեմալականների հեքիաթներով այն մասին, որ նրանք Սարիղամիշից այն կողմ չեն անցնի և գործողության համար կորցրեց մեկ ամսից ավելի: Հիմա ինչպե՞ս կդասավորվի դրությունը: Կհաջողվի՞ արդյոք մեզ ենթարկել թուրքերի գործողությունները և նրանց հետ մղել Կարսի գծից այն կողմ (որը շուտով մեզ համար կդառնա անվիճելի անհրաժեշտություն), դա մեծ հարց է» (ընդգծումը մերն է – Լ. Խ.)[1]:

Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Մուխտար փաշան Կարաբեքիրին ուղղված նոյեմբերի 8-ի դիմումում, որի մասին խոսել ենք վերը, ընդգծելով Հայաստանի ոչնչացման անհրաժեշտությունը, գրում էր. «...մենք հաշտության սովորական պայմանագիր չպետք է կնքենք ու մեր զորքերը դուրս բերենք Հայաստանից: Հայերին խեղդամահ անելով, միաժամանակ, մենք պետք է ջանանք չսրել հարաբերությունները Եվրոպայի հետ, որի դաշ-

[1] Նույն տեղում, թ. 223:

նակիցն է Հայաստանը, և այդպիսով պետք է հասնենք մեր նպատակներին: Այժմ մեզ պետք է նկրտենք վերջնականապես ոչնչացնել հայկական բանակը, զենքերը հայերից բռնախլել և բաժանել մուսուլմաններին, հայերին զրկել նոր բանակ ստեղծելու իրավունքից, տիրել երկաթուղիներին և անմիջական կապ հաստատել ադրբեջանական թուրքերի ու նրանց կառավարության հետ: Ահա այն հիմնական կետերը, որոնք պետք է դրվեն հաշտության պայմանագրի հիմքում»[1]:

Եթե Կարաբեքիրը ցանկանում էր գրավել ամբողջ Հայաստանը, ապա, ինչպես տեսնում ենք, պաշտոնական Անկարան նպատակ ուներ, ձևականորեն պահպանելով Հայաստանի անկախությունը, այնպիսի պայմաններով պայմանագիր կնքել նրա հետ, որ այդ անկախությունից իրականում ոչինչ չմնա: Մուխտար փաշան այդ դիմումում գրելով, «որ քաղաքական ընդհանուր իրադրությունն ու մեր հզորությունը բարենպաստ են այդ մտադրությունն իրականացնելու համար», նկատի ուներ այն հանգամանքը, որ Արևմուտքը լքել էր Հայաստանը, իսկ Ռուսաստանը գործակցում էր իրենց հետ:

Սակայն, դրա հետ մեկտեղ, երկու կողմերն էլ մտորումների շատ առիթներ ունեին: Անդրկովկասը և՛ Ռուսաստանի, և՛ Թուրքիայի համար կարևոր նշանակություն ուներ: Ռուսաստանը և Թուրքիան դարավոր թշնամիներ էին և չէին վստահում իրար: Մի կողմից, ելնելով օրվա մարտավարական խնդիրներից, դաշնակցելով և ձգտելով բաժանել Հայաստանը, մյուս կողմից էլ, չվստահելով իրար, երկու կողմն էլ ժամանակ առ ժամանակ մտածում էին հանձին կովկասյան հանրապետությունների ստեղծել անջրպետ: Ի վերջո, պատմության այս փուլում հաղթեց բաժանելու տարբերակը:

Անկախ դրանից, Ռուսաստանի և Թուրքիայի պատվիրակությունները Ալեքսանդրապոլում ունեին որոշակի ծրագրեր, որոնց իրականացման համար, արտաքնապես սիրալիր պայմաններում, պետք է հետևողականորեն պայքարեին: Պարտված Հայաստանի պատվիրակությունը հանդիսատեսի դեր էր կատարելու: Թուրքիան և Ռուսաստանը պետք է թելադրեին իրենց պայմանները: Բայց, մինչև պայմաններ թելադրելը, նրանք իրար միջև պետք է վերջնականապես լուծեին վիճելի հարցերը:

Մի բան անկասկած էր, որ Ստալինի հանձնարարությամբ Ալեքսանդրապոլ մեկնող Մդիվանու պատվիրակությունը միայն

---

[1] **Ե. Սարգսյան**, նշվ. հոդվածները:

մի խնդիր ուներ՝ հասնել Թուրքիայի օգնությամբ Հայաստանի խորհրդայնացմանը: Թուրքիայի կողմից գրավված տարածքները Հայաստանին վերադարձնելու պահանջը նրա խնդիրների մեջ չէր մտնում:

Նման լարված պայմաններում Լեգրանը ստանում է Հայաստանի կառավարության հետևյալ գրավոր բողոքը. «Հայաստանի կառավարությունը վերջին օրերի ընթացքում պաշտոնական զեկույցներ է ստացել, որոնցից երևում է, որ խորհրդային զորքերը, տեղական թաթարների հետ միասին, հարձակվում են մեր զորքերի վրա Շահթախտի ուղղությամբ: Օգոստոսի 10-ի պայմանագրի համաձայն այդ շրջանների հսկողությունը հանձնված է խորհրդային հրամանատարությանը և այդ շրջանից ցանկացած ագրեսիվ գործողություն պետք է դադարեցվի խորհրդային զորքերի ուժերով»[1]:

Հայաստանի վիճակն անելանելի դարձնելու նպատակով ռուսական զորքերը, տեղի ադրբեջանական ուժերի հետ միասին, ծրագրված հարձակումներ էին սկսել՝ նպատակ ունենալով Հայաստանի Հանրապետության ղեկավարությանը հարկադրել հրաժարական տալու և իշխանությունը հանձնելու բոլշևիկներին:

Մինչև Ալեքսանդրապոլում բանակցությունների սկսվելը, կողմերը նախապատրաստական աշխատանքներ էին կատարում: Մդիվանու պատվիրակությունը ձգձգում էր Ալեքսանդրապոլ մեկնելը, որպեսզի թուրքերը վերջնականապես ծնկի բերեն Հայաստանին: Միայն այդ դեպքում Թուրքիան և Ռուսաստանը կկարողանային անարգել պայմաններ թելադրել և իրականացնել իրենց ծրագրերը:

Ինչպես արդեն գրել ենք, նոյեմբերի 8-ին թուրքերը Հայաստանին զինադադարի նոր, ավելի ծանր պայմաններ են առաջարկում: Հայաստանի կառավարությունը դրանք չի ընդունում: Պատերազմը վերսկսվում է: Այն տևում է մի քանի օր: Հայկական բանակը, նորից պարտություններ կրելով, նահանջում է:

Թվում էր, գոնե պատերազմի այս փուլում, Ռուսաստանը պետք է ակտիվորեն միջամտի իրադարձություններին, քանի որ Հայաստանը նման խնդրանքով պաշտոնապես դիմել էր բոլշևիկյան կառավարությանը: Սակայն Ռուսաստանը լռություն էր պահպանում, բողոքի ոչ մի նոտա, ոչ մի վերաբերմունք:

---

[1] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 217.

Հայ ժողովրդի «ազատարարները» սպասում էին իրենց ժամին: Լեգրանն այդ ժամանակ գտնվում էր Բաքվում, նրան փոխարինում էր Սիլինը:

Նոյեմբերի 9-ին Սիլինը հեռագրում է Լեգրանին և հայտնում, որ հոկտեմբերի 31-ին, Կարսի անկման հաջորդ օրը, Հայաստանի կառավարությունը դիմել է Խորհրդային Ռուսաստանին՝ միջնորդության խնդրանքով, որի մասին ինքն արդեն հաղորդել էր Լեգրանին: Նոյեմբերի 2-ին թուրքական հրամանատարությունը Հայաստանի կառավարությանն առաջարկել է զինադադար կնքել և բանակցություններ սկսել հաշտության դաշնագիր կնքելու համար: Այդ առաջարկին նոյեմբերի 5-ին Հայաստանի կառավարությունը տվել է իր համաձայնությունը: Հենց նույն օրն իր մոտ է եկել Շանթը՝ միջնորդության մասին խնդրանքով: Նոյեմբերի 8-ին թուրքերը զինադադարի նոր պայմաններ են ներկայացրել, որոնք Հայաստանի կառավարությունը մերժել է: Թուրքերն ընդունում են Հայաստանի անկախությունը Բաթումի պայմանագրի սահմաններով: «Հայերը,– գրում է Սիլինը,– նորից խնդրում են մեր միջնորդությունը: Մեր կարծիքով, միջնորդությունը չընդունելը՝ նշանակում է բանակցությունների նախաձեռնությունը հանձնել Անտանտին: Հստակ ցուցումների բացակայությունը մեզ ծանր դրության մեջ է դնում և կարող է հասցնել թուրքերի կողմից հայերի ջախջախմանը»[1]: Այս եզրակացությամբ է ավարտվում Սիլինի ռադիոյով հաղորդած գրությունը:

Նոյեմբերի 10-ին Սիլինը նորից է հեռագրում Լեգրանին այն մասին, որ Հայաստանի Հանրապետության կառավարության կարծիքով Խորհրդային Ռուսաստանի միջամտությունը պետք է ունենա հետևյալ նպատակը՝

ա) դադարեցնել ռազմական գործողությունները, բ) թուրքական զորքերը հետ քաշել 1914 թ. սահմանները, գ) միջնորդություն Թուրքահայաստանի հարցը լուծելու գործում:

Ստալինի համար վերջին երկու պայմաններն ընդունելի չէին: Ինչ վերաբերում է առաջինին, ապա այն կարող էր ընդունելի դառնալ միայն թուրքերի վերջին հարձակումից հետո:

Սիլինը, քննադատելով Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի քաղաքականությունը, գրում էր. «Մեր դրության հետագա երկդիմությունը մենք համարում ենք ծայրահեղ անօգուտ: Խընդրում ենք ուշադրություն դարձնել Բաքվի ռադիոկայանի բացա-

[1] Նույն տեղում, թ. 222:

հայտ սաբոտաժի վրա»[1]: Բաքվի ռադիոն Երևանից հաղորդած կարևորագույն տեղեկությունները կամ չէր ընդունում կամ էլ չէր հանձնում հասցեատիրոջը: Լեգրանը նոյեմբերի 9-ին դեռ չէր ստացել Երևանից հոկտեմբերի 31-ին տված հեռագիրը՝ Ռուսաստանի միջնորդությունն ընդունելու խնդրանքով: Ադրբեջանը Հայաստանի դեմ մղվող պայքարում օգտագործում էր բոլոր միջոցները:

Նոյեմբերի 11-ին, երբ սկսվեց թուրքերի վերջին հարձակումը, Ռուսաստանի կառավարությունը հետևյալ հեռագիրն ուղարկեց Թուրքիա և Հայաստան. «Անգորա. թուրքական ազգային կառավարության նախագահ Մուստաֆա Քեմալ փաշային:

Էրզրում. Թուրքիայի արևելյան ճակատի հրամանատարին

Էրիվան. Հայաստանի կառավարության նախագահին

Էրիվան. Խորհրդային առաքելությանը

Մոսկվա, 11 նոյեմբերի: Նկատի ունենալով այն, որ հայկական կառավարությունը դիմել է Հայաստանի ու Թուրքիայի միջև Խորհրդային Ռուսաստանի միջնորդության մասին և թուրքական ազգային կառավարության ներկայացուցչությունը համաձայն է դրան, Խորհրդային կառավարությունը տեղեկացնում է Ձեզ, որ ստանձնում է միջնորդությունը և այդ նպատակով ռազմական գործողությունների շրջանն է ուղարկում իր լիազոր ներկայացուցիչ Մդիվանուն: Խորհրդային կառավարությունը հույս ունի, որ հետագա ռազմական գործողությունները կդադարեցվեն: ՌՍՖԽՀ Արտգործժողկոմ՝ Չիչերին»[2]:

Ստանձնելով միջնորդությունը, խորհրդային կառավարությունը լոկ «հույս է հայտնում», որ ռազմական գործողությունները կդադարեցվեն: Այս հեռագրում հավասարության գիծ է անցկացվում հարձակվողի և պաշտպանվողի, դահճի և զոհի միջև: Ռուսաստանը ոչ մի արմատական միջոց չի ձեռնարկում թուրքերի հարձակումը կանգնեցնելու համար, նա իր դաշնակցին անգամ բողոքի նոտա չի ուղարկում:

Նոյեմբերի 11: Լեգրանի ռադիոհեռագիրը Սիլինին. «Չիչերինի ռադիոհեռագիրը խորհրդային կառավարության միջնորդության մասին շտապ հաղորդեցեք Էրզրում և Անկարա: Ձեր ճեպագրերը հեռագրով չենք ստացել: Հաղորդեցեք որոշակի՝ ա) ու՞մ ձեռքում է Ալեքսանդրապոլը, բ) կանգնեցվել է արդյո՞ք թուրքերի հարձա-

[1] Նույն տեղում, թ. 225:
[2] Նույն տեղում, թ. 229:

կումը, գ) վերջնագիրը երկարաձգվե՞լ է... Պատասխանեցեք անմիջապես»: Նա հայտնում է նաև, որ ինքն ու Մդիվանին մեկնում են նոյեմբերի 11-ի երեկոյան[1]: Սիլինը նույն օրը պատասխանում է Լեգրանին. «Էրզրումի համար Չիչերինի ռադիոհեռագիրը ստացել ենք, Ալեքսանդրապոլի կայարանը թուրքերի ձեռքում է, քաղաքում իշխանությունը հայկական կառավարությանն է, բայց հայկական զորքերը քաղաքից հանված են... Նոյեմբերի 11-ին ռազմական գործողությունները վերսկսվել են»[2]:

Չիչերինի հեռագիրը նույն օրն ուղարկվում է և՛ Քեմալին, և՛ Կարաբեքիրին: Կարաբեքիրն այն ստանում է նոյեմբերի 12-ին[3]:

Հայաստանի կառավարությունը Չիչերինի հեռագիրը ստանում է նոյեմբերի 11-ին: Օհանջանյանը նոյեմբերի 12-ին Սիլինին պատասխանում է, որ թուրքական հրամանատարությունը նոյեմբերի 8-ին ներկայացրել է զինադադարի անընդունելի պայմաններ, որոնք մերժվել են Հայաստանի կառավարության կողմից: Նա հայտնում է, որ Հայաստանը պատրաստ է դադարեցնելու ռազմական գործողությունները, եթե Թուրքիան ևս նույն քայլին դիմի[4]:

Նոյեմբերի 11-ին Չիչերինը Լատվիայում և Լիտվայում խորհրդային ներկայացուցիչներին ցուցում է տալիս. «Հրապարակեցեք մամուլում, որ մենք միջնորդության մասին առաջարկությամբ դիմել ենք Թուրքիային և Հայաստանին»[5]:

Չիչերինին ուղարկված նոյեմբերի 14-ի պատասխան նոտայում Ահմեդ Մուխտարը շնորհակալություն էր հայտնում թուրք-հայկական պատերազմին վերջ տալուն ուղղված մարդասիրական առաջարկության համար, բայց Ռուսաստանի միջնորդության առաջարկին ուղղակի պատասխան չէր տալիս1[6]:

Եվ դա պատահական չէր: Թուրք-հայկական պատերազմում Թուրքիայի տարած հաղթանակն արմատապես փոխել էր ռազմաքաղաքական իրավիճակը և ուժերի փոխհարաբերությունն Անդրկովկասում:

Պատերազմի ավարտի պայմաններում, երբ Թուրքիան իր կամքն էր թելադրում Հայաստանին, Ռուսաստանի միջնորդու-

---

[1] Նույն տեղում, թ. 226:
[2] Նույն տեղում, թ. 228:
[3] Նույն տեղում, թ. 233:
[4] Նույն տեղում, թ. 230:
[5] **А. Н. Хейфец**, նշվ. աշխ., էջ 144:
[6] Նույն տեղում, էջ 145:

թյան կարիքը չուներ: Թուրքիան ցանկանում էր պարտված Հայաստանից ինչքան հնարավոր է շատ տարածքներ պոկել և մի փոքր հողակտորի վրա թողնել թեկուզ ձևական, բայց անկախ հանրապետություն: Եթե Ռուսաստանը Հայաստանի վերաբերյալ ուներ առավելագույն և նվազագույն ծրագրեր, ապա Թուրքիան էլ կատարելով իր հիմնական խնդիրը՝ նվաճելով Կարսն ու Արդահանը, որը սկզբնական շրջանում նվազագույն պահանջ էր համարում, այժմ միտում ուներ կամ գրավել ամբողջ Հայաստանը, կամ էլ այնտեղ խրտվիլակային հանրապետություն ստեղծել: Բոլոր դեպքերում, մի բան պարզ էր, որ Թուրքիան հրապարակայնորեն Ռուսաստանի դեմ չէր կարող գնալ և պետք է ելներ դեպքերի ընձեռած հնարավորություններից:

Ալեքսանդրապոլում բարդ ու նուրբ խաղ էր գնալու: Դեպքերը զարգանում էին սրընթաց արագությամբ, թուրքական զորքերն առաջ էին շարժվում, սակայն Մդիվանին բոլորովին չէր շտապում: Նոյեմբերի 9-ին Ադրբեջանում Հայաստանի կառավարության ներկայացուցիչը զեկուցում է Օհանջանյանին. «Վերջին րոպեին դրությունը միանգամայն փոխվեց, որի մասին շտապ և համառոտ կերպով ցանկանում ենք Ձեզ տեղեկացնել: Լեգրանը կարգադրություն է ստացել Մոսկվայի կառավարությունից Բաքվից վերադառնալ Թիֆլիս, հավանորեն Հայաստան գալու համար:

Հայաստան է ուղևորվում Լեգրանի հետ Մդիվանին իր երեք ուղեկիցներով, որ հանձնարարություն ունի կասեցնելու Քեմալի շարժումը դեպի Հայաստան:

Հայաստանի հետ կնքվելիք Լեգրանի մշակած հաշտության պայմանագիրը ամսի 5-ին այստեղ՝ Ադրբեջանի Ցեկայի քննության առարկա է դարձել և ***ձայների բացարձակ մեծամասնությամբ բացասվել է: Ասում են, որ Ցեկայի այդ վճռից դժգոհ մնալով հայ կոմունիստ անդամները թողել են ժողովն ու հեռացել, որոշելով այդ վճռի դեմ բողոք ներկայացնել Մոսկվայի կառավարությանը***» (ընդգծումները մերն են – Լ. Խ.)[1]:

Այս զեկուցագրի կապակցությամբ անհրաժեշտ է կանգ առնել հետևյալ կարևոր փաստի վրա. Չիչերինի նոյեմբերի 11-ի հեռագրում խոսվում է թուրք-հայկական պատերազմում Ռուսաստանի միջնորդության մասին և հույս է հայտնվում, որ ռազմական գործողությունները կդադարեցվեն: Հեռագրում ոչ մի խոսք չկա

[1] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, N 3, էջ 76:

այն մասին, որ Ռուսաստանը պետք է կասեցնի թուրքերի առաջխաղացումը դեպի Հայաստանի խորքերը: Ընդհակառակը, Մդիվանու պատվիրակությունը, ինչպես նկատեցինք, չէր շտապում Ալեքսանդրապոլ, թուրքերի համար հնարավորություն ստեղծելով մինչև իրենց ժամանումը, զենքի ուժով լուծելու բոլոր հարցերը: Ռուսաստանը մտադիր էր որպես միջնորդ հանդես գալ պատերազմական գործողություններն ավարտվելուց հետո, խաղաղության պայմանագիր կնքելու բանակցությունների ժամանակ:

Ինչ վերաբերում է Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի կազմում ընդգրկված հայ կոմունիստների բողոքին, ապա, ցավոք, այդ մասին մեր ձեռքի տակ լրացուցիչ փաստաթղթեր չունենք: Մենք չգիտենք, հայ կոմունիստների հեռանալու մասին լուրերն իրականությանը համապատասխանում են, թե ոչ, և եթե ճիշտ են, ապա ովքեր են հեռացել: Մի բան անկասկած է, որ եթե հայ կոմունիստները հեռացել են, ապա դրանց մեջ ո՛չ Միկոյանը և ո՛չ էլ Միրզոյանը տեղ գտնել չէին կարող: Իսկ, որ կոմունիստների շարքերում հայրենանվեր մարդիկ եղել են, դա ևս անհերքելի փաստ է: Բայց պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա ևս, որ եթե հայ կոմունիստները անգամ հեռացել են Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի նիստից Ռուսաստանի կառավարությանը բողոքելու նպատակով, ապա նրանք իրենց մտադրությունը չեն կատարել, Մոսկվայի արխիվներում նման փաստաթուղթ չի պահպանվել:

Լեգրանը և Մդիվանին Բաքվից Թիֆլիս են մեկնում նոյեմբերի 11-ի երեկոյան, Թիֆլիսից դուրս են գալիս նոյեմբերի 17-ի գիշերը, Երևան ժամանում նոյեմբերի 19-ին:

Մինչև Երևանի խորհրդակցությանը և Ալեքսանդրապոլի բանակցություններին անցնելը, անհրաժեշտ ենք համարում կանգ առնել մի շարք փաստերի վրա ևս, որոնք ավելի բազմակողմանի են դարձնում մեր պատկերացումները տեղի ունեցող իրադարձությունների մասին:

Չիչերինը, Արևմուտքի հետ բախումներ ստեղծելուց խուսափելու և համաշխարհային հասարակական կարծիքի վրա ազդելու նպատակով, նաև խնդիր ունենալով Ռուսաստանին ներկայացնել որպես հայ ժողովրդի ազատարար, նոյեմբերի 11-ին «խիստ շտապ» ռադիոհեռագրով դիմում է Լոնդոն՝ Կրասինին.

«Խորհրդային Ռուսաստանը առաջարկել է իր միջնորդությունը Թուրքիային և Հայաստանին: Թուրք ազգայնականների

վերջին հաջողություններից հետո Հայաստանի դրությունը խիստ օրհասական է, և Ռուսաստանի միջնորդությունը ճիշտ ժամանակին է: Խորհրդային Ռուսաստանը երբեք մտադրություն չի ունեցել բռնազավթելու Նախիջևանը, Ջուլֆան, Զանգեզուրը և Ղարաբաղը: Ռուսական բանակը այդ վիճելի մարզերը գրավել է մինչև առաջիկայում նրանց հարցի լուծումը Հայաստանի և Ադրբեջանի միջև: Այդ պետություններից յուրաքանչյուրը հայտարարում է իր իրավունքը այդ մարզերի վրա: Նախիջևանում բնակչությունը մուսուլմանական է, Զանգեզուրում՝ խառը, ինչը և բարդացնում է հարցը»[1]:

Չիչերինը վիճելի տարածքներին անդրադառնում է, որովհետև այդ ժամանակ Արևմուտքում տիրապետում էր այն կարծիքը, որ Ռուսաստանը բռնազավթել է Հայաստանի տարածքները:

Նոյեմբերի 12-ին Տ. Բեկզադյանը հեռագրում է Օհանջանյանին. «Թուրքերի վերջնագրի կապակցությամբ երեկ հանդիպեցի Շեյնմանի և Ստոքսի հետ: Վերջինս վերջապես պատռեց իր դիմակը և հայտարարեց, որ եթե ինքը Անգլիայի կառավարողը լիներ, կաջակցեր քեմալական շարժմանը, քանի որ այն հակաբոլշևիկյան շարժում է և, աջակցելով Քեմալին, Անգլիան կբարձրացներ իր ընկած հեղինակությունը մուսուլմանական աշխարհում: Պարզ է, որ անգլիացիներից մենք ոչինչ չենք կարող սպասել:

Շեյնմանը պատասխանեց, որ Չիչերինը թուրքական հարձակման հակառակորդ է և հրահանգ է տվել հարձակումը դադարեցնելու մասին, ինչպես երևում է, Քեմալը դավաճանում է բոլշևիկներին, անպայման ուրիշ հենարան ունենալով: Նա խոստացավ վերջնագիրն անմիջապես ուղարկել Մոսկվա՝ կառավարությանը: Միսիան գործնական օգնություն ցույց տալ չի կարող: Այսօր մյուսների հետ կհանդիպեմ միայն խոսակցությունների համար, նրանց հետ ոչ մի հույս չկապելով»[2]:

Նոյեմբերի 13-ին Սիլինը հայտնում է Լեգրանին, որ Հայաստանի կառավարությունը համաձայն է անմիջապես դադարեցնել ռազմական գործողությունները: Նոյեմբերի 12-ին ամբողջ օրը թուրքերը շարունակել են հարձակումը: Համաձայն հայկական բանակի հրամանատարության տեղեկությունների՝ Նախիջևանի կողմից Հայաստանի վրա է հարձակվում թուրքերից, թաթարներից, հայ բոլշևիկներից և ռուս զինվորներից բաղկացած մի ջո-

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 77:

կատ, որն անցել է օգտոստոսի 10-ի պայմանագրի գիծը: Դա վարկաբեկում է խորհրդային միջնորդության առաջարկը: Անհրաժեշտ համարելով հարձակման դադարեցումը, Սիլինն առաջարկում է այդ մասին համապատասխան կարգադրություն անել[1]:

Նույն օրը Չիչերինը պատասխանում է, որ համաձայն բանակի շտաբի տեղեկությունների, այդ լուրը չի համապատասխանում իրականությանը. «Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի շրջանում գործում են միայն ռուսական զորամասեր և դրանք մուսուլմաններով չեն փոխարինվել: Ապստամբներին դաշնակցականները զինում են մեր դեմ, բայց մենք չենք դիմում հակաապստամբների օգնությանը, եթե մեզ միանում են աննշան ջոկատներ, ապա դրանք հայ կոմունիստներն են»[2]:

Նոյեմբերի 14-ին Սիլինը հեռագրով Չիչերինին տեղեկություններ է հաղորդում ընդհանուր իրավիճակի մասին: Նա գրում է, որ սեպտեմբերի վերջին կրած պարտություններից հետո Հայաստանի կառավարությունը միջոցներ է ձեռնարկել վիճակը բարելավելու ուղղությամբ, սակայն հայ ժողովրդի ընդհանուր հոգնածությունը, դրսից օգնություն ստանալու անհուսությունը, հրամանատարական կազմի անպետքությունը այն աստիճանի զցեցին բանակի մարտունակությունը, որ թուրքերն առանց մեծ դժվարության հոկտեմբերի 30-ին գրավեցին Կարսը: Շարունակելով իր միտքը, նա գրում է, որ Կարսի անկումն ուժեղ տպավորություն է գործել հայերի վրա, զգացվում է ընդհանուր շփոթվածություն, ավելի է ընկել բանակի մարտունակությունը, կառավարության անգույն կոչերը չեն ոգևորել ժողովրդին, սկսվել են դրսի օգնության որոնումներ, և հոկտեմբերի 31-ին հայերը դիմել են Խորհրդային Ռուսաստանի միջնորդությանը: Նա հայտնում է նաև, որ Չիչերինի՝ Ռուսաստանի միջնորդության առաջարկով նոյեմբերի 11-ի հեռագիրն անմիջապես հանձնվել է հայկական և թուրքական իշխանություններին[3]:

Հայաստանի կառավարությունը խիստ անհանգստացած էր: Թուրքերը մոտենում էին Ղարաքիլիսային: Նոյեմբերի 14-ին Հ. Օհանջանյանը Տ. Բեկզադյանին ուղիղ գծով հայտնում է. «...տասնմեկին Չիչերինից ստացվեց մի հեռագիր՝ ուղղված մեզ և Անգորայի կառավարությանը, որով հայտնում է, որ Սովետական

[1] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 236-237.
[2] Նույն տեղում, թ. 235:
[3] Նույն տեղում, թ. 231-232:

Ռուսաստանը ընդունում է Տաճկաստանի և Հայաստանի մեջ միջնորդի դերը և ուղարկում է այդ նպատակով իր լիազոր ներկայացուցիչ Մդիվանուն ռազմական գործողությունների վայրը, հուսալով, որ կռիվները կդադարեն: Մենք համաձայնվեցինք: Մդիվանին և Լեգրանը նույն գիշերը պիտի մեկնեին Բաքվից Հայաստան Թիֆլիսի վրայով: Նույն գիշերը այստեղից Չիչերինի հեռագիրը հանձնվեց ռադիոյով և մեծամասնականների սուրհանդակի միջոցով տաճկական հրամանատարությանը Ալեքպոլում: Սակայն կռիվները դեռ շարունակվում են»[1]:

Օհանջանյանի խնդրանքով հաջորդ օրը Սիլինը և Բոբրիշչևը ուղիղ գծով Վրաստանում Ռուսաստանի ներկայացուցչությանը հայտնում են, որ թուրքերը շարունակում են հարձակումը, գրավել են Ջաջուռի դիրքերը և շարժվում են առաջ: «Հայաստանի վարչապետը,– տեղեկացնում են նրանք,– խնդրում է լուր տալ, թե ինչ վիճակում է մեր միջնորդության հարցը և արագացնել բանակցությունների սկսելը: Խնդրում է հաղորդել, որտե՞ղ է Մդիվանին»: Շիֆֆերսը Թիֆլիսից հայտնում է, որ Մդիվանին իրենց հետ միասին մեկնում է Երևան և «շուտով Մդիվանու հետ միասին կլինենք Ձեզ մոտ»[2]:

Նոյեմբերի 15-ին Օհանջանյանը ուղիղ գծով խոսակցություն է ունենում Բեկզադյանի հետ: Վերջինս հայտնում է. «Այսօր երկու ժամ խոսեցի Լեգրանի հետ: Խոսակցությունից պարզվեց, որ միջնորդությունը լինելու է, բայց ռեալ հետևանք չենք սպասում: Առաջարկում են, որ մենք դիմենք իրենց՝ խնդրելով զինվորական միջամտություն այն պայմանով, որ հրաժարվենք Սևրի պայմանագրից և մտնենք իրենց հովանավորության տակ: Դրա դիմաց խոստանում են առաջարկել Թուրքիային վերադառնալ մինչև Ռուսաստանի պետական սահմանները: Խոստացավ, որ անկախությանը ձեռք չեն տա և սովետիզացիայի չեն ենթարկի: Միայն պատասխանը պետք է տալ շտապ: Այսօր տեսնվելու եմ Քյազիմ բեյի հետ ժամը 7-ին, մասնավոր տան մեջ: Հետևանքը կհաղորդեմ վաղը: Նրանից ուզում եմ իմանալ իրենց ցանկությունները և ապա հարցնել՝ կարող ենք համաձայնության գալ առանց միջնորդի, թե ոչ»:

Օհանջանյանն առաջարկում է. «Խնդրեցեք Լեգրանին դուրս գալ այսօր, որովհետև վաղը Ղարաքիլիսը կարող է ընկնել և ճա-

---

[1] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, N 3, էջ 78:
[2] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 238-240.

նապարհը կկտրվի: Երկրորդ. խնդրեցեք Մդիվանուն անցնել ֆրոնտ ուղղակի Ղարաքիլիսայով, որովհետև եթե առաջ հասնի Երևան՝ կուշանա և ճանապարհը դժվար է, շնորհիվ ձների»[1]:

Նոյեմբերի 15-ին Օհանջանյանն ուղիղ գծով մի խոսակցություն էլ է ունենում Բեկզադյանի հետ, որից անհրաժեշտ ենք համարում առանձնացնել երկու հարց: Առաջին. Օհանջանյանը Բեկզադյանին հայտնելով Ռուսաստանի միջնորդությունն ընդունելու կապակցությամբ ռազմական գործողությունները դադարեցնելու անհրաժեշտության մասին, տալիս է հետևյալ հրահանգները. «Ստեղծվում է ծանր վիճակ, և ես խնդրում եմ Ձեզ Լեգրանի հետ պարզել ի՞նչ վիճակում է միջնորդության հարցը, որտե՞ղ է միջնորդ Մդիվանին, ի՞նչ միջոցներ է ձեռք առել ռազմական գործողությունների իրական դադարեցման և միջնորդությունը սկսելու համար, ե՞րբ է Մդիվանին մեկնում ռազմական գործողությունների շրջանը, մենք պե՞տք է արդյոք հույս դնենք նրանց միջնորդության միջոցով ռազմական գործողությունները դադարեցնելու վրա, թե՞ ձեռնարկենք մեր միջոցները»:

Երկրորդ. «Շարուրի ուղղությամբ լրիվ արժանահավատությամբ հաստատված է, որ գործում են ինչպես թուրքական զորքեր, այնպես էլ ռուս բոլշևիկները, որոնցից մեկը սպանվել է և թողնվել մարտի դաշտում: Ի՞նչ միջոցներ է ձեռնարկում Լեգրանը օգոստոսի 10-ի մեր համաձայնագրի այդ խախտումը դադարեցնելու համար»: Օհանջանյանը նորից է խնդրում, որ Լեգրանը և Մդիվանին հենց նույն օրը մեկնեն[2]:

Նոյեմբերի 15-ին Բեկզադյանի հետ ուղիղ գծով Օհանջանյանի ունեցած խոսակցությունից երևում է, որ Հայաստանի կառավարությունը, թուրքերի հարձակումից խիստ վախեցած, տենդագին փորձեր էր անում ամեն կերպ արագացնել Մդիվանու Ալեքսանդրապոլ մեկնելը: Սակայն Մդիվանին գործում էր Ստալինի ցուցումներով և դիտավորյալ ձգձգում էր Ալեքսանդրապոլ մեկնելը: Չմոռանանք, որ դեռ նոյեմբերի 7-ի հեռագրում Չիչերինը հրահանգում էր, որ Մդիվանու հանձնաժողովը «պետք է անմիջապես մեկնի թուրքերի մոտ»: Չիչերինի գրությունները, ցավոք, Մդիվանու համար որևէ արժեք չունեին: Այս կապակցությամբ ավելորդ չէ ընդգծել, որ Լեգրանի Բեկզադյանին տված խոստումը՝ Հայաստանը չխորհրդայնացնելու և 1914 թվականի սահմանները պահ-

[1] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, N 3, էջ 78-79:
[2] Նույն տեղում, էջ 80-81:

պանելու մասին, միանգամայն անհիմն էր: Այդ հարցերի մասին Ստալինն այլ կարծիքի էր: Իսկ Ստալինի տեսակետն արդեն դրվել էր Ռուսաստանի պաշտոնական քաղաքականության հիմքում:

Տեսնելով, որ Ռուսաստանը գործնական միջոցներ չի ձեռնարկում թուրքերի հարձակումը կանգնեցնելու և Ղարաքիլիսայի անկումը կանխելու համար, Հայաստանի կառավարությունը որոշեց ընդունել նոյեմբերի 8-ին թուրքերի առաջարկած զինադադարի պայմանները: Այդ որոշումն ընդունվեց նոյեմբերի 15-ի լույս 16-ի գիշերը:

Սիլինը նոյեմբերի 18-ին հեռագրում է Ստալինին. «Նոյեմբերի 15-ին Հայաստանի կառավարությունը Քյազիմ Կարաբեքիրին է ուղարկել իր համաձայնությունն Անկարայի կառավարության նոյեմբերի 8-ի զինադադարի պայմանները ընդունելու մասին... 17-ի՝ լույս 18-ի գիշերը հայերը տեղեկություն ստացան, որ թուրքերը համաձայն են զինադադարի հաստատմանը: Ռազմական գործողություններն այսօր դադարեցվեցին: Այսպիսով, հայերը պետք է զորքերը հետ քաշեն Սուրմալու-Ալագյազ-Նովոմիխայլովկա գծից այն կողմ: Մդիվանին և Լեգրանն այսօր Դիլիջանում են և նախատեսում են ժամը 15-ին ավտոմեքենայով մեկնել Երևան»[1]:

Օհանջանյանը նոյեմբերի 15-ին Բեկզադյանին հայտնում է. «Զևականորեն կառավարությունը որոշեց ընդունել տաճիկների վերջին պայմանները: Ըստ էության այսօր ուղարկում ենք ներկայացուցիչներ Կարաբեքիրի մոտ իբր փորձ անմիջական համաձայնության գալ տաճիկների հետ առանց որևէ միջնորդի: Ձեր կողմից շարունակեցեք բանակցությունները առանձին-առանձին թե տաճիկների, թե մեծամասնականների և թե անգլիացիների հետ... Ի պատասխան զինադադարի պայմանների մեր համաձայնության, այսօր ստացանք Կարաբեքիրից պատասխան, որով նա հաղորդում է, որ հրաման է տվել դադարեցնել թշնամական գործողությունները բոլոր ֆրոնտներում և սպասում է Ալեքսոլում մեր ներկայացուցչին բանակցելու համար պայմանների տեխնիկական դժվարությունները հարթելու խնդրում: Արարատյանը Անի կայարանից արդեն մեկնել է Ալեքսոլ»[2]:

Նոյեմբերի 16-ին զինադադարի մասին Հայաստանի կառավա-

---

[1] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 241.

[2] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, N 3, էջ 79:

ության որոշումը կատարելու համար ռազմաճակատ է ուղարկվում ներքին գործերի նախարար Ս. Արարատյանը, որը տանում էր նաև Նազարբեկյանի՝ Կարաբեքիրին ուղղված նամակը: Կառավարության որոշումը և Նազարբեկյանի նամակը Կարաբեքիրին անձամբ հանձնելու համար նոյեմբերի 17-ին Ալեքսանդրապոլ է մեկնում կապիտան Յաբլոկովը:

Նոյեմբերի 18-ի առավոտյան Անի կայարանից Արարատյանը հեռագրում է Օհանջանյանին. «Այսօր ժամը 9-ին Ալեքսանդրապոլից վերադարձավ կապիտան Յաբլոկովը, որը մեր ծրարները անձամբ հանձնել է մեր դեմ ուղղված գործողությունները անմիջականորեն ղեկավարելու համար Ալեքսանդրապոլ ժամանած Քյազիմ Կարաբեքիր փաշային: Կապիտան Յաբլոկովին շատ սիրալիր ընդունելություն է ցույց տրվել և հանձնվել ծրար մեր գլխավոր հրամանատարի անունով: Քանի որ Քյազիմ Կարաբեքիր փաշան ինձ այսօր սպասում է Ալեքսանդրապոլում, ես հենց հիմա մեկնում եմ: Չնայած կապիտան Յաբլոկովի հայտարարությանը, որ ռազմական գործողությունների դադարեցման մասին հրամանը պետք է տրվի երկու կողմից միաժամանակ, Քյազիմ Կարաբեքիր փաշան իսկույն նեթ հրամայել է իր զորքերին դադարեցնել հարձակումը: Նկատի ունենալով Շարոտում գործող թուրքական բանակի զորամասերի հետ կապի բացակայությունը, Քյազիմ Կարաբեքիր փաշան մեզ խնդրել է անհապաղ բանագնացներ ուղարկել և թուրքական զորամասերին տեղեկացնել զինադադարի կնքման մասին»[1]:

Արարատյանը միաժամանակ Օհանջանյանին հաղորդում է նաև Կարաբեքիրի պատասխանը Նազարբեկյանին, որում ասվում է. «Ստացա նոյեմբերի 15-ի Ձեր նամակը, որտեղ հայկական պետությունը իր բարի ցանկությունն է հայտնում երաշխավորել երկարատև խաղաղություն երկու պետությունների միջև: Դրա համար հայտնում եմ իմ շնորհակալությունը: Ձեր կառավարության նամակը՝ հանձին արտաքին գործերի նախարարի, որում հայտնվում է, որ Ձեր կողմից նոյեմբերի 8-ի նոտայում շարադրված զինադադարի պայմաններն ընդունված են, և վերը հիշատակված Ձեր նամակը, ես անհապաղ հեռագրով հաղորդել եմ Անգորա՝ արտաքին գործերի պ. կոմիսարին: Նկատի ունենալով, որ Հայաստանի կառավարության կողմից ընդունումը երաշխավորված է, ես իմ կողմից հրամայել եմ ամբողջ ճակատով դադա-

[1] Նույն տեղում, էջ 83:

ռեցնել ռազմական գործողությունները: Խնդրում եմ Ձեր կողմից համապատասխան հրաման արձակեք հայկական զորքերին»[1]:

Բեկզադյանը նոյեմբերի 18-ին հեռագրում է Օհանջանյանին. «***Լեգրանը գնաց երեկ գիշեր: Ես նրան չտեսա, բայց իմացա, որ նա ասել է՝ թե մենք միշտ ուշանում ենք ժամանակին ընդունելու նպաստավոր առաջարկներ, իսկ հետո ստիպված ընդունում ենք ավելի աննպաստավորը*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.):

Քյազիմ բեյը ձգձգում է տեսակցությունն ինձ հետ: Երևում է՝ չի ուզում, շնորհիվ հաջողությանց...:

Ստոքսը ու դաշնակիցները խուսափում են տեսակցությունից: Նորից պնդում եմ, որ նրանցից այժմս ոչ մի օգնություն չենք ստանա»[2]:

Լեգրանի կարծիքի կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ Ռուսաստանի կողմից 1920 թվականին ոչ մի ընդունելի առաջարկ Հայաստանին չի արվել: Թուրքիան պահանջում էր Կարսի և Արդահանի շրջանները, Ադրբեջանը՝ բոլոր վիճելի տարածքները: Թուրքիան և Ադրբեջանը ոչ մի զիջման չէին գնում: Մոսկվան պաշտպանում էր նրանց: Տարածաշրջանի բոլոր հիմնահարցերն ի պաշտոնե լուծում էր Ստալինը: Ստեղծված իրավիճակում Չիչերինի և Լեգրանի խոստումներն ու առաջարկությունները ոչ մի գործնական արժեք չունեին:

Ահա այսպիսի պայմաններում Հայաստանի կառավարությունը, երկրին սպառնացող աղետից խուսափելու համար, չսպասելով Մդիվանու Ալեքսանդրապոլ ժամանելուն, որոշեց թուրքերի հետ առանձին բանակցություններ սկսել: Եթե Հայաստանի կառավարությունն այդ քայլին չդիմեր, ապա մինչև Մդիվանու Ալեքսանդրապոլ ժամանելը երկիրը կռազմակալվեր թուրքերի կողմից: Դա հարկադրական քայլ էր:

2. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՌՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

Երբ հայտնի դարձավ, որ Հայաստանի կառավարությունը զինադադար է կնքել թուրքերի հետ և պատրաստվում է պատվիրակություն ուղարկել Ալեքսանդրապոլ՝ հաշտության պայմանագիր կնքելու համար, Մդիվանին շտապեց Երևան: Նա և Լեգրանը նո-

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 82:

յեմբերի 19-ին ժամանեցին Երևան: Նոյեմբերի 20-ին Թիֆլիսից Երևան ժամանեց նաև Ալ. Խատիսյանը:

Հաշտության բանակցությունները Հայաստանի և Թուրքիայի պատվիրակությունների միջև պետք է սկսվեին նոյեմբերի 24-ին, Ալեքսանդրապոլում:

Նոյեմբերի 19-ին բանակցություններ են տեղի ունենում Հայաստանի կառավարության և Ռուսաստանի լիազոր ներկայացուցչի միջև: Բանակցությունների արձանագրությունն անհրաժեշտ ենք համարում ներկայացնել ամբողջությամբ, քանի որ դրանում բազմակողմանիորեն արտացոլվում են երկու կողմերի տեսակետները:

Հայաստանի Հանրապետության կողմից բանակցություններին մասնակցում էին՝ նախարար-նախագահ Հ. Օհանջանյանը, ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանը. քաղաքական բաժնի պետ Ն. Յակուլյանը, Հայաստանում ՌՍՖԽՀ-ի լիազոր ներկայացուցչության կողմից՝ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը, թուրքերի հետ բանակցություններ վարելու լիազոր ներկայացուցիչ Մդիվանին, քարտուղար Շիֆֆերսը:

Ներկայացնում ենք արձանագրության տեքստը.

«***Լեգրան*** – Երևանի ճանապարհին մենք իմացանք, որ Ձեր կողմից զինադադար է կնքվել թուրքերի հետ: Մեզ հետաքրքիր է իմանալ ինչպես այդ զինադադարի ճշգրիտ պայմանները, այնպես էլ պատճառները, որոնք Հայաստանի Հանրապետությանը հարկադրել են ընդունել դրանք: Եթե չեմ սխալվում, այդ որոշումը կայացվել է նոյեմբերի 14–16-ը ընկած ժամանակահատվածում, երբ կառավարությունը սպասում էր Ղարաքիլիսայի անկմանը:

Նախարար-նախագահ – Նկատառումները, որոնք Հայաստանի Հանրապետությանը հարկադրեցին ընդունել թուրքերի նոյեմբերի 8-ի զինադադարի պայմանները, թելադրված էին այն ծայրահեղ ծանր դրությամբ, որը ստեղծվել էր ռազմաճակատում մեր զորքերի կողմից Ջաջուռի բարձունքները թողնելուց հետո: Անհրաժեշտ էր անմիջապես ելք գտնել: Թուրքերի հետագա հաջողությունը կարող էր մեր երկիրը դնել գրեթե անելանելի վիճակի մեջ:

Դրա հետ մեկտեղ, Վրաստանում մեր դիվանագիտական ներկայացուցիչ Բեկզադյանից մենք իմացանք, որ թուրքերի հետագա հարձակումը կանգնեցնելու գործում ձեր միջնորդությունից Դուք իրական հետևանքներ չեք սպասում:

Այդ բոլոր նկատառումները հարկադրեցին Հայաստանի կառավարությանը գնալ զինադադարի: Միաժամանակ, կառավարությունը ջանաց մի փոքր ձևափոխել այդ զինադադարի պայմանների մարտավարական կողմը:

Լեգրան – Բեկզադյանը մի քիչ աղավաղել է իմ միտքը: Ես կրկնում եմ այն, ինչ նրան ասել եմ Թիֆլիսում, Երևան մեկնելուց առաջ:

Մեր միջնորդությունը կարող էր իրական հետևանքներ ունենալ միայն որոշ հենարանի առկայության դեպքում: Այդ հենարանն ամենից առաջ պետք է հանդիսանա հայ ժողովրդի հարաբերական ռազմական կայունությունը, հանձին հայկական բանակի կամ որևէ այլ ուժի:

Թուրքերը շատ իրատես քաղաքագետներ են և եթե իրենց զինված ուժերին չհակադրվի որոշ ռազմական սպառնալիք, ապա միայն դիվանագիտական ելույթներով դժվար կլինի հասնել որևէ դրական արդյունքի: Ես Բեկզադյանին դեռ սեպտեմբերի 29-ին, թուրքերի հարձակման հենց սկզբում, մատնանշել եմ, որ եթե Հայաստանի կառավարությունը հրապարակայնորեն հրաժարվի Սևրի պայմանագրի հիման վրա Թուրքահայաստանի հարցը լուծելուց և դիմի Ռուսաստանի միջնորդությանը, ապա դա կարող է հսկայական դեր խաղալ Թուրքահայաստանի հարցի բարենպաստ լուծման գործում: Ներկայումս Սևրի պայմանագրի իրական նշանակությունը հավասարվել է զրոյի և Հայաստանի կառավարությունը, իմ կարծիքով, սխալ է թույլ տվել պահը բաց թողնելու իմաստով: Ներկա պահին Սևրի պայմանագրից հրաժարվելն արդեն կորցնում է իր նախկին արժեքը:

Նախարար-նախագահ – Մեզ թվում է, որ թուրքերի հարձակման հենց սկզբում Չիչերինին հասցեագրված մեր հեռագրում, եթե ոչ բացահայտ, ապա անուղղակի, մեր կողմից այդ միջնորդության խնդրանքը Ռուսաստանին եղել է: Ստույգ է նաև, որ ձեր կողմից հիշյալ միջնորդությունը ընդունելու մասին որոշակի ցուցումներ կան մեր և ձեր հաշտության պատվիրակությունների կողմից ստորագրված համաձայնագրում: Մենք հիմա կանգնած ենք հարկադրական զինադադարի փաստի առաջ, և մեզ հետաքրքիր է պարզել, ինչպիսի արտահայտություն պետք է ունենա ձեր միջնորդությունը ներկայումս:

Լեգրան – Թույլ տվեք Ձեզ նախապես մի քանի հարց տալ: Ձեր կողմից զինադադարն արդեն ստորագրվա՞ծ է, ինչպիսի՞ք են նրա վերջնական պայմանները և ի՞նչ ժամկետում դուք պետք է ձեռնամուխ լինեք դրանց կատարմանը:

Նախարար-նախագահ – Երկու ժամ առաջ ես հեռագիր ստացա ներքին գործերի նախարար Արարատյանից: Նա հայտնում է զինադադարի պայմանների ստորագրման մասին: Այսօր երեկոյան մենք նրան սպասում ենք Երևանում: Այն ժամանակ էլ կպարզվեն մանրամասնությունները: Առայժմ համառոտակի հայտնվում է, որ մեր զորքերի հետքաշումը պետք է կատարվի երկու ժամկետում:

Լեգրան – Զորքերի հետքաշման հրամանը, նշանակում է, դեռ տրվա՞ծ չէ:

Ռազմական նախարար – Դեռ ոչ:

Լեգրան – Ինչպե՞ս եք դուք հասկանում այն գիծը, դեպի որը, համաձայն նոյեմբերի 8-ի պայմանների, պետք է հետ քաշվեն ձեր զորքերը: Մնու՞մ է, արդյոք, Ղարաքիլիսան ձեր ձեռքում:

Ռազմական նախարար – Մենք հասկանում ենք այնպես, որ Ղարաքիլիսան կմնա մեզ:

Լեգրան – Անցնելով այն հարցին, թե ինչպես ենք մենք պատկերացնում մեր միջնորդությունը, ես պետք է ասեմ, որ այն կարող է ցույց տրվել տարբեր միջոցներով: Դրանց ընտրությունը թողնվում է Հայաստանի կառավարությանը:

Մեր ընդհանուր խնդիրը մնում է նույնը՝ ուժերի փոխհարաբերության ավելի ձեռնտու փոփոխությունը հօգուտ Հայաստանի: Դրա համար, ամենից առաջ, անհրաժեշտ է դիվանագիտական բանակցություններն ամրապնդել հայտնի իրական ուժով: Այդ իրական ուժը պետք է լինեն կամ հայկական զորքերը, կամ, եթե նրանք այնպիսի վիճակում են, որ Դուք հարկադրված եք ընդունել նոյեմբերի 8-ի պայմանները, որևէ այլ ուժ: Ես Վրաստանի ձեր ներկայացուցիչ Բեկզադյանին արդեն մատնանշել եմ, որ եթե Հայաստանի կառավարությունը դիմի Խորհրդային Ռուսաստանին ռազմական օգնության խնդրանքով, այդ օգնությունը, ես վստահ եմ, ցույց կտրվի: Համաձայնությունը դիվանագիտական օգնություն ցույց տալու մասին, ինչպես ձեզ հայտնի է, արդեն տրված է: Ռուսաստանի միջնորդության մասին Հայաստանի կառավարության դիմումները իմ կողմից անմիջապես Մոսկվա հաղորդելուց հետո, արտգործժողկոմ Չիչերինը՝ խոսելով Մոսկվայում Քեմալի ներկայացուցիչների հետ, այդ միջնորդության հարցում ստացել է նաև նրանց համաձայնությունը:

Ներկայումս մեզ անհրաժեշտ է իմանալ Հայաստանի կառավարության հաշտության ծրագիրը թուրքերի հետ առաջիկա բանակցություններում: Վստահություն ունե՞ք, որ զինադադարի

պայմանները թուրքերի կողմից նորից չեն խախտվելու, և ինչ-պիսի՞ միջոցներ է ենթադրում ձեռնարկել կառավարությունն այդ դեպքում:

Նախարար-նախագահ – Կառավարության կողմից ձեռք են առնվում բոլոր անհրաժեշտ միջոցները ռազմաճակատի առողջացման և ամրապնդման համար: Ինչ վերաբերում է կառավարության հաշտության ծրագրին, ապա այն որոշվում է սահմաններով, որոնք Հայաստանը կենսունակ կդարձնեին: Հոկտեմբերի 8-ին մեր հատուկ լիազոր ներկայացուցիչը Կոստանդնուպոլսում ոչ լրիվ պաշտոնական հանդիպում է ունեցել Քեմալի ներկայացուցիչների հետ: Վերջիններս մատնանշում էին այն, որ թուրքերը կարող են հաշտվել Վանի և Էրզրումի վիլայեթների մի մասը, Կոնի մոտ նեղ միջանցքով դեպի ծովը, Հայաստանին հանձնելու հետ:

Լեգրան – Դա հիմա կարելի է համարել առավելագույն ծրագիր: Ներկա պահին այդ պահանջները ֆանտաստիկ են: Մեզ անհրաժեշտ է իմանալ այն նվազագույնը, որից հետո կառավարությունը կմերժի թուրքերի առաջարկը և կգերադասի նորից զենքի դիմել:

Նախարար-նախագահ – Այդ պահանջները չի կարելի ֆանտաստիկ համարել: Դուք ինքներդ եք մատնանշել, որ թուրքերը խոշոր դիվանագետներ են և իրատես քաղաքագետներ: Նրանք պետք է պարզապես հաշվի առնեն, որ ապագայում ուժերի փոխհարաբերությունը, ինչպես նաև ընդհանուր միջազգային իրավիճակը, կարող է զգալիորեն փոխվել ոչ իրենց օգտին: Այդ պատճառով, եթե թուրքերը Հայաստանի հետ իրենց հաշտության պայմանները այժմ կառուցեն ոչ թե իրենց զենքի ժամանակավոր հաջողության անցողիկ սկզբունքների, այլ ավելի ամուր հիմքերի վրա, որը Հայաստանին կենսունակ գոյության հնարավորություն կտա, այդ պահանջները լրիվ իրական են դառնում:

Ինչ վերաբերում է նվազագույնին, որին կառավարությունը կարող է համաձայնել, ապա այդ հարցը դեռ չի քննարկվել: Հնարավոր է, որ թուրքերն իրենց պահանջներում կհենվեն Բրեստ-Լիտովսկի պայմանագրի, Բաթումի կոնվենցիայի կամ այլ որևէ պայմանների վրա: Դրանք հիմա լրիվ կանխատեսել հնարավոր չէ:

Լեգրան – Ինչպես Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, այնպես էլ Բաթումի կոնվենցիան, որը մենք դիտում ենք որպես Բրեստի պայմանագրի իրավաբանական շարունակություն, մենք համա-

ռում ենք չեղյալ հայտարարված: Այդ պատճառով թուրքերի նման պահանջները մեր կողմից վճռականապես կմերժվեն: Այստեղ ծագում է ուրիշ հնարավորություն, և մենք կցանկանայինք Հայաստանի կառավարությունից ստանալ այդ հարցի որոշակի պատասխանը, կհամաձայնի արդյո՞ք Հայաստանի կառավարությունը Կարսը զիջել թուրքերին: Ես այդ հարցը համարում եմ արմատական: Եթե Հայաստանի կառավարությունը դրան համաձայնի, ապա վերանում է ձեր ռազմաճակատի հետագա ուժեղացման կամ Ռուսաստանին ռազմական օգնության խնդրանքով դիմելու որևէ անհրաժեշտություն, որովհետև թուրքերը, ես համոզված եմ, այդ պայմաններով Հայաստանի հետ միշտ էլ հաշտություն կկնքեն:

Նախարար-նախագահ – Մեզ հետաքրքիր է իմանալ, կհամաձայնե՞ր Խորհրդային Ռուսաստանը Կարսի այդպիսի զիջմանը թուրքերին, եթե ստեղծված պայմաններում Հայաստանը հարկադրված լինի դրան տալ իր համաձայնությունը: Ներկա պահին, երբ Խորհրդային Ռուսաստանը, որպես ռուսական կայսրության իրավաժառանգ, դեռ պաշտոնապես Հայաստանին չի հանձնել այն հողի իրավունքը, որն ինչ-որ ժամանակ պատկանել է Ռուսաստանին, այդ հողերի նկատմամբ թուրքերի պահանջները պետք է համարել դիպչող իր՝ Ռուսաստանի հիմնական իրավունքներին:

Լենին – Մենք հարցին չենք մոտենում այդպիսի զուտ ձևական տեսակետից: Մենք փաստորեն ընդունել ենք ձեր անկախությունը և ձեր իրավունքները նշված հողերի նկատմամբ: Կարսի ճակատագրով դուք ավելի շահագրգռված պետք է լինեք, քան մենք: Բայց այդ հարցը կարող է լուծվել և այլ ճանապարհով:

Ես կրկնում եմ, որ ձեր խնդրած ռազմական օգնությունը, ես համոզված եմ, Խորհրդային Ռուսաստանի կողմից ձեզ կհասցվի: Կարմիր բանակի Հայաստան մտցնելը մեր դիվանագիտական միջամտությանը անհրաժեշտ ամրություն կտա թուրքերի հետ վարվող բանակցություններում և, միաժամանակ, վերջիններիս կպարզաբանի Խորհրդային Ռուսաստանի, որը պատրաստ է զենքի ուժով պաշտպանել պահանջները, մտադրությունների լրջությունը: Առանց այդպիսի իրական հենարանի՝ հանձին Հայաստանի բանակի կամ էլ որևէ այլ ուժի, ես կրկնում եմ, մեր միջնորդության նշանակությունը թուրքերի վրա ճնշում գործադրելու իմաստով դառնում է կասկածահարույց:

Ռազմական նախարար – Արդեն մի անգամ մենք մեր հյուսիսային կողմնորոշման համար վճարել ենք մեր ժողովրդի միլիո-

նավոր կյանքերով: Այն ժամանակ ռուսական զորքերի օգնությունը ուշացած էր: Ինչո՞ւ տվյալ դեպքում ևս չենթադրել նույն հնարավորությունը:

Մեր դրությունը վատթարանում է նաև նրանով, որ մեզ բոլորովին պարզ չեն թուրքերի նպատակները: Անկասկած է, որ տվյալ դեպքում թուրքերի ռազմատենչությունը հենվում է ոչ միայն իրենց սեփական ուժի վրա, այլ ունի մեկ այլ հիմք: Այդ հիմքը կարող է լինել կա՛մ Խորհրդային Ռուսաստանը, կա՛մ էլ Անտանտը:

Մեզ բոլորովին անհասկանալի է, օրինակ, այն, թե ինչու են թուրքերը զինադադարի պայմանների մեջ մտցնում թեկուզ Վորոնցովկայի հանձնումը իրենց: Հայաստանի դեմ գործելու համար այդ կետի գրավումը ոչ մի արժեք չի ներկայացնում:

Դա մեզ ստիպում է ենթադրել, որ տվյալ դեպքում թուրքերը գործիք են հանդիսանում ինչ-որ կողմնակի ուժի ձեռքում, որը հետապնդում է իր ավելի լայն խնդիրները: Տվյալ դեպքում այդպիսի ուժ կարող է լինել Անտանտը: Նման պայմաններում լիովին հնարավոր է, որ թուրքերը կհրաժարվեն ձեր միջնորդությունից:

Մյուս կողմից, հանուն ինչի՞ պետք է Ռուսաստանը հիմա պատերազմ սկսի Թուրքիայի հետ, պատերազմ, որը կարող է նրա դեմ հանել մուսուլմանական աշխարհը, որի վրա նա ցանկանում է հենվել Անտանտի դեմ մղվող պայքարում: Մեր կողմից, մենք չենք ցանկանում խաղալիք դառնալ ուրիշների ձեռքերում և մեր երկիրը վերածել երկու համաշխարհային մեծությունների՝ Ռուսաստանի և Անտանտի հսկայածավալ պայքարի ասպարեզի: Մեր ներկա դրության մեջ շատ բանում անուղղակի մեղավոր է Ռուսաստանը:

Գուցե սխալ է, բայց մեր զորքերի և ժողովրդի մեջ ստեղծված է այն պատկերացումը, որ Թուրքիան գործում է Ռուսաստանի հետ փոխհամաձայնեցված: Շարուրի ուղղությամբ ռուսական զորքերի մասնակցությունն ավելի է ամրապնդել ժողովրդի այդ կարծիքը: Այդպիսի պատկերացումը ճակատագրական կերպով է անդրադարձել բանակի մարտունակության վրա և պատճառ է դարձել հոգեբանական բեկման, որը նրան հանգեցրել է հակառակորդների ահեղ ուժերի հետ համեմատած իր ուժերի աննշանության գիտակցությանը: Եթե այդ պատկերացումն այժմ ցրվի, իսկ դրա համար բավական է Ռուսաստանի կողմից 1914 թվականի սահմանների նկատմամբ մեր իրավունքների ճանաչումը,

մեր ռազմական ուժերը լիովին բավական են Թուրքիայի չափազանց մեծ պահանջներին դիմակայելու համար:

Միայն անհրաժեշտ է, որպեսզի մեր ժողովուրդը համոզվի այն բանում, որ Ռուսաստանն այդ հարցում թուրքերին չի պաշտպանում: Ձեր կողմից այդպիսի վճռական հայտարարությունը Թուրքիայի հասցեին, անգամ առանց կարմիր զորքեր մտցնելու, լրիվ բավարար է այն բանի համար, որպեսզի Թուրքիան չհամարձակվի անցնել ձեր կողմից մատնանշված սահմանները:

Լեզրան – Ձեր երկյուղն այն բանի կապակցությամբ, որ Ռուսաստանի օգնությունը կարող է ուշանալ և դրանով հայ ժողովրդի ֆիզիկական գոյության համար սպառնալիք ստեղծել, ինձ թվում է անհիմն: Հայաստանում կարմիր զորքեր երևալու փաստն իսկ բավարար երաշխիք է այն բանի, որպեսզի Թուրքիան չհամարձակվի հետագա ռազմական գործողությունների դիմելու: Այդպիսի քայլի Թուրքիան կարող է դիմել միայն Բաքուն գրավելու հաստատ վճռի դեպքում: Նա Հայաստանի համար Ռուսաստանի դեմ չի պատերազմի:

Մյուս կողմից, Թուրքիայի համար պետք է լիովին պարզ լինի, որ Ռուսաստանը Բաքուն կպաշտպանի մինչև վերջին կարմիրբանակայինը: Այդպիսի պայմաններում Թուրքիան, բնականաբար, չի կարող հույս դնել պայքարի հաջողության վրա, անգամ Անտանտի պաշտպանության դեպքում: Մենք տեսել ենք, թե ինչ իրական արժեք ունի Անտանտի նման աջակցությունը: Նախիջևանում մենք, բացի 200 հոգանոց ջոկատից, ուրիշ բան չունենք: Զանգեզուրի ապստամբության շնորհիվ այդ ջոկատը բացարձակապես կտրված է: Մեր մոտակա զորամասերը գտնվում են Գորիսում, և եթե մեր կողմից ոչ մի քայլ չի ձեռնարկվում Զանգեզուրի ապստամբությունը ճնշելու համար, ապա բացառապես Հայաստանի առանց այն էլ ծանր դրությունն ավելի չխորացնելու ցանկությամբ:

Ադրբեջանի սահմանների ամբողջ երկայնքով, դուք գիտեք, նույնպես լրիվ հանգիստ է տիրում: Այդ պատճառով էլ միամտություն կլինի ենթադրել, որ Ռուսաստանը Հայաստանի նկատմամբ որևէ ագրեսիվ նպատակ ունի և նրա դեմ Նախիջևանի կողմից հարձակում է նախապատրաստում: Այդ անհրաժեշտ է բացատրել ձեր զինվորներին:

Ինչ վերաբերում է Ռուսաստանի նպատակներին, որոնք նրան հարկադրում են իր վրա վերցնել միջնորդի դերը և հետաքրքրվել Հայաստանի ու Թուրքիայի միջև սահմանների հարցերի այս կամ

այն լուծումով, ապա դրանք կայանում են հետևյալում: Բացի ընդհանուր խնդիրներից, որոնք Ռուսաստանը դնում է իր առաջ՝ Արևելքի ժողովուրդներին ազատագրելու պայքարում Քեմալի քաղաքականության վրա ազդելու իմաստով, Ռուսաստանը չի կարող անտարբեր մնալ Քեմալի Հայաստանի վրա հարձակվելու կապակցությամբ, քանի որ այդ հարձակումը սկսում է ձեռք բերել թուրքերի զուտ կայսերապաշտական ձգտումները բավարարելու բնույթ, սպառնում է քեմալականների միջավայրում կայսերապաշտական միտումների հետագա աճով, ինչն, իր հերթին, կարող է լիովին փոխել այդ շարժման, որպես ազատագրականի, նախնական բնույթը: Կարսը Հայաստանի ձեռքում Հայաստանը չի վերածի կայսերապաշտական երկրի: Թուրքիայի ձեռքում, քեմալականների փոխված տրամադրությունների պայմաններում, այն կարող է այդ հենակետի դերը կատարել: Լիովին ակնհայտ է, որ այդպիսի հենակետի ստեղծումը հայտնի սպառնալիք է Ռուսաստանի համար և չի բխում Խորհրդային Ռուսաստանի շահերից:

Նախարար-նախագահ – Նման պայմաններում ինչո՞ւ Ռուսաստանը, վաղօրոք ստացած միջնորդության մեր դիմումի կապակցությամբ, ոչ մի քայլ չձեռնարկեց Հայաստանի վրա հարձակումը կանգնեցնելու գործում Քեմալի վրա ճնշում գործադրելու համար:

Լեգրան – Պատճառը կայանում էր նրանում, որ այն ժամանակ մենք բավարար քանակով ազատ ուժեր չունեինք: Հիմա, լեհական ճակատը վերացնելուց և Վրանգելին հաղթելուց հետո, պատկերը բացարձակապես փոխվում է:

Մդիվանի – Ռազմական նախարարի մատնանշումն այն հանգամանքի վրա, որ հայ ժողովուրդը և նրա բանակը հոգեբանորեն ճնշված են գոյության համար մղվող պայքարում մենակության գիտակցությունից, միանգամայն հասկանալի է և ակնհայտ: Բայց ռազմական նախարարի կողմից արված եզրահանգումը ինձ թվում է ոչ ճիշտ: Պատճառը ժողովրդի ու բանակի մոտ ստեղծված պատկերացումը չէ, որ Խորհրդային Ռուսաստանը գործում է քեմալականների հետ փոխհամաձայնեցված ծրագրով: Այդ պատճառն ավելի խոր է:

Բոլորի համար արդեն ակնհայտ է, որ Անտանտը չի ցանկանում և անուժ է Հայաստանին օգնել: Ժողովուրդն իր համար ստեղծված սպառնալից դրությունից ելք է փնտրում: Նա հենարան է փնտրում դրսում, իսկ այդ հենարանը կարող է լինել միայն

Խորհրդային Ռուսաստանը: Ժամանակն է այդ գիտակցել և այժմ ևեթ ընդունել խորհրդայնացումը, միակ բանը, որ կարող է փրկել հայ ժողովրդին և Հայաստանը վերջնական կործանումից:

Լեզրան – Ընկեր Մդիվանին խորհրդային իշխանության համոզված կողմնակից է: 3-րդ ինտերնացիոնալի որոշումներում իրոք կետ կա, որը խորհրդային սկզբունքների վրա հիմնված բոլոր պետական միավորումներին պարտադրում է փոխադարձորեն և ակտիվ կերպով աջակցել մեկը մյուսին: Մենք, իհարկե, կարող ենք միայն ողջունել խորհրդային իշխանության հաստատումը Հայաստանում: Սակայն, տվյալ դեպքում, միջնորդության հարցի մասին Մդիվանուն տրված հրահանգները կախված չեն Հայաստանի կառավարության այս կամ այն որոշումից և բոլոր կոմբինացիաների դեպքում մնում են նույնը:

Նախարար-նախագահ – Կարելի՞ է իմանալ այդ հրահանգները:

Մդիվանի – Պնդել Ռուսաստանի հին պետական սահմաններից այն կողմ՝ 1914 թվականի սահմանները թուրքերի հետքաշման վրա:

Լեզրան – Վերջում մենք Հայաստանի կառավարությանն ունենք մի առաջարկ ևս. դա Հայաստանում բանտարկված բոլոր կոմունիստներին անհապաղ ներում շնորհելն է: Մեր տեղեկություններով ձերբակալվածները 400 մարդուց շատ չեն: Նրանք բոլորը երիտասարդներ են, ոչ անվանի, բացարձակապես անվնաս, պարզապես կոմունիզմի գաղափարների համակիրներ: Այդպիսի ներումը չի կարող սպառնալ Հայաստանի ներքին պետական անդորրին և, ըստ էության, զուտ սկզբունքային բնույթ ունի: Ընկեր Մդիվանուն այդ կազատի կեղծ դրությունից և թուրքերի կողմից կշտամբանք ստանալու հնարավորությունից այն բանի համար, որ ինքը պաշտպանում է մի կառավարության շահեր, որը կոմունիստներին պահում է իր բանտերում: Ես դրա համար էլ խնդրում եմ, այդ հարցը դնել ձեր կառավարության քննարկմանը և մեզ, մինչև ընկեր Մդիվանու մեկնելը, հստակ պատասխան տալ ինչպես այդ, այնպես էլ մեր կողմից շոշափված մյուս հարցերի մասին:

Նախարար-նախագահ – Դուք ներման մասին հարցը դիտո՞ւմ եք որպես նախապայման թուրքերի հետ բանակցությունների միջնորդության համար:

Լեզրան – Անձամբ ես, այո: Պետք է ասեմ, որ մենք ընդհանրապես չենք պատկերացնում այս հարցում Հայաստանի կառավա-

ության մերժման հնարավորությունը, եթե մենք այն պաշտոնապես առաջ ենք քաշում:

Նախարար-նախագահ – Այդ հարցը իմ կողմից կդրվի կառավարության քննարկմանը, բայց ոչ այն հարթության մեջ, ինչպես դուք եք դնում: Ձեր միջնորդությունը թուրքերի հետ բանակցություններում չի հանդիսանում կառավարության, որպես կուսակցության, շահերի պաշտպանություն, այն վերաբերում է հայ ժողովրդի շահերին ամբողջությամբ»[1]:

Ինչպես ցույց են տալիս փաստաթղթերը, Լեգրանը և Մդիվանին Բաքվում հանձնարարություն էին ստացել հասնել Հայաստանի խորհրդայնացմանը և ստանալ կարմիր բանակի ջոկատները Հայաստան մտցնելու համար Հայաստանի կառավարության համաձայնությունը:

Ի՞նչ են ցույց տալիս առաջին բանակցությունների նյութերը.

1. Լեգրանը և Մդիվանին գործադրեցին բոլոր միջոցները համոզելու Հայաստանի կառավարությանը, որպեսզի վերջինս պաշտոնապես հրավիրի կարմիր բանակին և խորհրդայնացնի Հայաստանը:

2. Եթե Լեգրանը փորձում էր Հայաստանի կառավարությանը համոզել խորհրդայնացնելու Հայաստանը, ապա Մդիվանու առաջարկները վերջնագրի բնույթ էին կրում:

3. Մդիվանին՝ իր կառավարությունից պաշտոնապես հրահանգ չէր ստացել՝ թուրքական զորքերը 1914 թվականի սահմանները հետքաշելու մասին պահանջ դնելու: Ընդհակառակը, բոլոր փաստաթղթերը ցույց են տալիս, որ Մոսկվան այդ ժամանակ արդեն որոշել էր Կարսը թողնել թուրքերին: Մդիվանին դրան քաջատեղյակ էր: Հետևաբար, Լեգրանի կողմից Հայաստանին տրվող խոստումները իրական չէին:

4. Չպետք է մոռանալ, որ Լեգրանը Ռուսաստանի պաշտոնական դիվանագիտական ներկայացուցիչն էր և պարտավոր էր հրապարակայնորեն արդարացնել իր պետության քաղաքականությունը: Իր գրագրություններում նա խստորեն քննադատում էր Մոսկվայի քաղաքականությունը, իսկ բանակցությունների ժամանակ հարկադրված էր պաշտպանել այն: Հոկտեմբերի սկզբին ռազմական իրադարձություններին չխառնվելը Լեգրանը համարում էր Ռուսաստանի կոպիտ սխալը, մի բան, որը նա չասաց և չէր էլ կարող ասել բանակցությունների ժամանակ: Ընդհա-

[1] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, N 3, էջ 85-91:

կառակը, նա փորձեց կռվաններ գտնել Ռուսաստանի չխառնվելն արդարացնելու համար:

Լեգրանը մի կողմից բանակցություններ էր վարում Հայաստանի կառավարության հետ, փորձելով պաշտոնապես հասնել Հայաստանի խորհրդայնացմանը, մյուս կողմից՝ ոչ պաշտոնական հանդիպումներ ունենում Դաշնակցություն կուսակցության շարքերում ձևավորվող տարբեր խմբերի հետ, ջանքեր թափելով նրանց միջոցով իրականացնել Հայաստանի խորհրդայնացման ծրագիրը:

Խորհրդարանի դաշնակցության ֆրակցիայի նիստում վարչապետ Հ. Օհանջանյանը նոյեմբերի 20-ի գիշերը հայտնում է հրաժարական տալու մասին իր որոշումը: Ընդհանուր կարծիքն այն էր, գրում է Ալ. Խատիսյանը, որ թուրքերի հետ բանակցություններ պետք է վարի ոչ այն կառավարությունը, որը պատերազմել է նրա դեմ[1]: Նոյեմբերի 23-ին խորհրդարանն ընդունում է Հ. Օհանջանյանի կառավարության հրաժարականը:

Հ. Օհանջանյանը խորհրդարանում հանդես եկավ հետևյալ հայտարարությամբ. «Հայաստանի խորհրդարանի հարգելի պատգամավորներ, խորհրդարանի վերջին նիստից հետո անցել էր 10-12 օր: Այդ ժամանակամիջոցում մեր կյանքում այնպիսի մեծ փոփոխություններ են առաջ եկել, որ կառավարությունը նորից դիմում է խորհրդարանին: Հաղթող թշնամին մեզ առաջարկել էր զինադադարի այնպիսի պայմաններ, որոնք անհնար էր ընդունել, և կռիվը շարունակվեց: Հետագա դրությունը, որ ստեղծվեց ռազմաճակատում, ցույց տվեց, որ արյունահեղությունն անիմաստ է: Եվ մենք ստիպված եղանք ընդունել զինադադարի պայմանները և անցնել հաշտության բանակցություններին: Ամսիս 18-ին իրագործվեցին զինադադարի պայմանները: Վաղը երեկոյան Ալեքսանդրապոլում հաշտության բանակցությունները սկսվելու են պաշտոնապես:

Կառավարությունն առանց սպասելու խորհրդարանի նիստին, ընտրել և ուղարկել է հաշտության պատվիրակություն հետևյալ կազմով, նախագահ՝ Ալ. Խատիսյան, անդամներ՝ Աբր. Գյուլխանդանյան և Ստ. Ղորղանյան, որպես խորհրդականներ մեկնել են խորհրդարանի անդամներ՝ Լ. Զարաֆյանը և Վ. Մինախորյանը և մի շարք մասնագետներ: Պատվիրակությունն Ալեքսանդրապոլ մեկնեց երեկ գիշեր, ուր թշնամու պատվիրակները

[1] **Ալ. Խատիսյան**, նշվ. աշխ., էջ 293:

սպասում են նրանց: Թե ինչ վախճան կունենա, դժվար է ասել:

Անցյալ անգամ ես այստեղ կարդացի մեր և հակառակորդի միջև փոխանակված գրությունները, որոնց մեջ հոգատարության պայմաններ կային ընդհանուր գծերով: Այժմ բացվում է նոր շրջան, քաղաքական ուժերի նոր սիտուացիա, և որպեսզի Հայաստանի խորհրդարանը ազատ լինի ինքն իր վերաբերմունքը ցույց տալու, իմ կառավարությունը ներկայացրեց իր հրաժարականը՝ ի նկատի ունենալով հանրապետության շահերը»[1]:

Օհանջանյանի հրաժարականն ընդունվում է, վարչապետ է ընտրվում Ս. Վրացյանը, որին և հանձնարարվում է կազմել նոր կառավարություն: Նոյեմբերի 24-ի երեկոյան խորհրդարանի նիստում հաստատվեց Վրացյանի ներկայացրած կառավարության կազմը, որը բաղկացած էր դաշնակցականներից և երկու սոցիալիստ-հեղափոխականներից:

Դա Հայաստանի Հանրապետության խորհրդարանի վերջին նիստն էր:

Նոր վարչապետ Ս. Վրացյանը, խոսելով կառավարության տարաբնույթ խնդիրների մասին, հատկապես ընդգծում է այն, որ «պատմական այդ վայրկյանին հայության մեծ մասի աչքերը հառած էին դեպի հյուսիս. փրկությունը Ռուսաստանից էր սպասվում: Եվ, հետևաբար, նոր կառավարությունը թե իր կազմով և թե քաղաքական ուղղությամբ պետք է աշխատեր ընդհանուր լեզու գտնել Ռուսաստանի հետ»[2]:

Երևան ժամանելուց հետո Լեգրանն ու Մդիվանին իրոք գտնվում էին ուշադրության կենտրոնում: Նոյեմբերի 19-ի բանակցություններից հետո, դեռ Հ. Օհանջանյանի վարչապետության ժամանակ, նրանք հրավիրվում են մասնակցելու Հայաստանի կառավարության նիստին, որին մասնակցում էին նաև Ալեքսանդրապոլ մեկնող պատվիրակության անդամները: Ալ. Խատիսյանն այդ նիստի մասին պատմում է. «Մենք խնդրեցինք Խորհրդային Ռուսիոյ ներկայացուցիչներէն ազդեցություն գործ դնել թուրքերու վրա մեզ համար նպաստավոր մտքով: Մենք ծանօթացուցինք Լեգրանը և Մդիվանին մեր ցանկություններուն և պատասխան լսեցինք խոստում օգնելու: Այդ միջոցին էր, որ Լեգրանը թույլտվություն խնդրեց մեր կառավարութենէն Ատրպէջանէն Հայաստանի սահմանները մտցնել երկու գունդ կարմիր

---

[1] **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, էջ 488-489:

[2] Նույն տեղում, էջ 490:

զորքեր, որպէսզի, ինչպէս ինքը կըսէր, «ավելի իրական ուժ ունենար թուրքերու հետ խոսելու համար»: Այդ առաջարկը մեր կառավարությունը չընդունեց, որովհետև կը վախնար, թէ այդ պիտի նշանակէ Հայաստանի զինվորական գրավում բոլշևիկներու կողմէ: Նիստի մէջ որոշվեցավ, որ խաղաղության պատվիրակությունը և Մդիվանին երթան Երևանէն Ալեքսանդրապոլ զանազան գնացքներով և իրար ետևէ»[1]:

Եվ այսպես, երկու կողմերի մոտեցումները լիովին պարզվեցին: Հայաստանի կառավարությունը Ռուսաստանից օգնություն էր խնդրում՝ երկրի անկախությունը պահպանելու և հնարավորին չափ քիչ տարածքային կորուստներ տալու համար, իսկ Ռուսաստանն այդ օգնության դիմաց պահանջում էր Հայաստանի խորհրդայնացում, այսինքն՝ Հայաստանի անկախ հանրապետության ոչնչացում:

Բայց պատերազմն արդեն ավարտված էր: Անհրաժեշտ էր պարզել, թե որոշակիորեն ինչո՞ւմն է կայանալու Ռուսաստանի օգնությունը, ի՞նչ տարածքային պահանջներ են առաջ քաշում թուրքերը: Հայաստանի կառավարությունը երկրի անկախությունը կարող էր կամավոր զոհաբերել միայն այն դեպքում, եթե համոզվեր, որ թուրքերը պահանջում են այնպիսի տարածքներ, որոնք կարելի կլիներ պահպանել միայն ռուսական զորքերի օգնությամբ:

Նման պայմաններում Հայաստանի կառավարությունը գալիս է հետևյալ եզրակացությանը՝ ա) առավելագույն զիջումների գնով, առանց երրորդ ուժի, թուրքերի հետ լեզու գտնել և հաշտության պայմանագիր կնքել, բ) թուրքերի հետ լեզու չգտնելու դեպքում նոր միայն դիմել Ռուսաստանի զինված օգնությանը, այսինքն՝ համաձայնել Հայաստանի խորհրդայնացմանը, գ) Ռուսաստանի դիվանագիտական միջնորդությունից չհրաժարվել, այն պահել՝ երկրորդ տարբերակին անցնելու դեպքում օգտագործելու համար:

Նոյեմբերի 23-ին Թիֆլիսում գտնվող Ա. Թոփչյանը ուղիղ գծով խոսակցություն է ունենում Ս. Վրացյանի հետ, որը լիովին բացահայտում է Հայաստանի կառավարության այդ փուլում վարվող քաղաքականության հիմնական հարցերը:

Խոսակցության տեքստը տալիս ենք առանց կրճատումների. «Թոփչյան – ***Առաջին***, ի՞նչ պայմաններ են առաջարկում տաճիկ-

[1] **Ալ. Խատիսյան**, նշվ. աշխ., էջ 295:

ները. ***երկրորդ***, ցանկություն և հնարավորություն ունե՞ք, արդյոք, մաքսիմալ զիջումներով համաձայնության գալ տաճիկների հետ, առանց ռուսների մասնակցության. ***երրորդ***, ի՞նչ պայմաններով են մտնում ռուսական զորքերը և ինչ գարանտիա մեր անկախության. ***չորրորդ***, ժողովրդի տրամադրությունը. ***հինգերորդ***, մեծամասնականների վերաբերմունքը դեպի Վրացյանի կաբինետը. ***վեցերորդ***, ու՞մ ես ենթադրում հրավիրել կաբինետի մեջ:

Մեր տեղեկություններով Բաքվում կազմակերպվում է Հայաստանի համար մեծամասնական կաբինետ հետևյալ կազմով՝ Մռավյան, Կասյան, Տեր-Գաբրիելյան, Արշավիր Մելիքյան:

Ս. Վրացյան – ***Առաջին***, որոշակի պայմաններ դեռ չկան, դրվում են ընդհանուր սկզբունքներ, ազգերի ինքնորոշում, առևտրական ելք դեպի ծով, Սևրի պայմանագրի վերացում, Անտանտայից հրաժարում. ***երկրորդ***, գերադասում ենք մաքսիմալ զիջումներով համաձայնվել տաճիկների հետ, առանց երրորդ ուժի մասնակցության, ծայրահեղ դեպքում՝ ռուսների միջամտությունը. ***երրորդ***, ռուսական զորքի մտցնելը առայժմ կառավարությունը մերժել է, օգտվելու է դիվանագիտական միջամտությունից. ***չորրորդ,*** ժողովրդի բաղձանքը հաշտությունն է. ***հինգերորդ***, չնայած վճռականորեն պնդում են հակառակը, այստեղի մեծամասնականները, մեր տեղեկությունների համաձայն, նույնպես ձգտում են դրան, այդ են վկայում և նրանց համառ պնդումները զորք մտցնելու վրա: Սովետիզացիան այս պայմանների մեջ մենք համարում ենք վտանգավոր:

Մդիվանին նույնպես մեկնում է Ալեքպոլ: Մեծամասնականները առաջարկում են դիվանագիտական քայլերը խստացնելու համար ուղարկել Հայաստան կարմիր զորքերը: Մենք առայժմ ընդունում ենք միայն նրանց դիվանագիտական աջակցությունը: Ռուսական առաջարկի մասին հաղորդեցեք Ստոքսին և ասացեք, որ Խատիսյանը սպասում է խոստացած պատասխանին: ***Վեցերորդ***, մեծամասնականների կարծիքն այն է, որ իրենց զորքերի ներկայությունը Հայաստանում կստիպե տաճիկներին կրճատել իրենց պահանջները, հակառակ դեպքում պատրաստ են կռվել առանց որևէ կոմպենսացիայի: ***Յոթերորդ,*** կառավարությունը կազմվում է դաշնակցականներից և Հայաստանի էսէռներից»[1]:

Լեգրանը և Մդիվանին գիտեին, թե ստեղծված պայմաններում ինչպիսի դիրքորոշում է ընդունել Հայաստանի կառավարությունը և ինչպիսի քաղաքականություն է վարելու Ալեքսանդրապոլում:

---

[1] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, N 3, էջ 67-68:

Սակայն, ձգտելով նույն նպատակին՝ Հայաստանի խորհրդայնացմանը, Լեգրանն ու Մդիվանին, գործում էին միանգամայն տարբեր մեթոդներով և բարոյական սկզբունքներով:

Լեգրանը հայ ժողովրդի բարեկամն էր, նա հարկադրված էր կատարել իր կառավարության հրահանգը, բայց, միաժամանակ, գործադրում էր բոլոր ջանքերը Թուրքիայի նվաճողական ծրագրերը խափանելու, հայ ժողովրդին այդ դժոխային վիճակից հանելու համար:

Մինչդեռ Մդիվանին թուրքամետ էր, հակահայ: Նա ոչ միայն Ստալինի կամակատարն էր, այլև համախոհը: Մդիվանին Ալեքսանդրապոլում եռանդուն գործունեություն ծավալեց, լեզու գտավ Կարաբեքիրի հետ և ամեն ինչ արեց Թուրքիայի պահանջները բավարարելու, Հայաստանը ծնկի բերելու համար:

Մդիվանու գործունեությունն Ալեքսանդրապոլում կվերլուծենք հետագա շարադրանքում, իսկ այժմ անդրադառնանք Լեգրանի գործունեությանը:

Նոյեմբերի 20-ին Լեգրանը Չիչերինին, Օրջոնիկիձեին և Ստալինին հայտնում է. «Հայերը հետագա նահանջի և Ղարաքիլիսան թողնելու վտանգից երկյուղած, նոյեմբերի 15-ին ընդունեցին թուրքերի նոյեմբերի 8-ին առաջարկած զինադադարի պայմանները: 18-ին Ալեքսանդրապոլում տեղի ունեցավ ռազմական գործողությունների դադարեցման մասին համաձայնությունը, որը 19-ին՝ մեր Երևան ժամանելու օրը, ուժի մեջ մտավ: Անգորայի կառավարության Կարաբեքիրի միջոցով մեզ հաղորդած պատասխան նոտայում, որն այսօր երեկոյան ռադիոյով տրվել է Բաքու՝ Օրջոնիկիձեին, Չիչերինին հաղորդելու համար, նկատվում է թուրքերի խուսափողական վերաբերմունքը մեր միջնորդության նկատմամբ, դաշնակների վարքագծից նմանապես երևում է, որ նրանք վախենում են մեր միջամտությունից և ձգտում են առավելագույն զիջումների ճանապարհով թուրքերի հետ հասնել ինքնուրույն համաձայնության՝ իրենց իշխանությունը փրկելու համար: Երևանում բանակցություններ են վարվում, կաբինետի փոփոխության և մենշևիկների ու էսէռների հետ կոալիցիոն կառավարություն ստեղծելու մասին, որոնք ավարտված չեն: Կոալիցիան իրական ուժ չներկայացնող մենշևիկների և էսէռների հետ դաշնակների համար, որոնց հեղինակությունը բանակում և ժողովրդի մեջ զգալիորեն ընկել է, քող է՝ իրենց իշխանությունը պահպանելու համար: Երեկ դաշնակցական պատվիրակությունը վերադարձավ Ալեքսանդրապոլից, հաջողվե՞լ է նրան, արդյոք,

հասնել նոյեմբերի 8-ի պայմանների որևէ մեղմացման, առայժմ հայտնի չէ:

Եթե թուրքերի հետ ձեռք բերված համաձայնությունն ամրապնդվի, և թուրքերի կողմից ռազմական գործողությունների վերսկսման վտանգը վերանա, դաշնակները համաձայնություն չեն տա կարմիր զորքերը մտցնելուն: Պետք է սպասել նոր բարդությունների, որոնք ծագելու են նոյեմբերի 24-ին Ալեքսանդրապոլում բացվող բանակցությունների ընթացքում:

Հայկական կառավարությունը լիակատար շփոթության մեջ է, որոշակի ծրագիր, թուրքերի հետ հաշտության համաձայնագրի պայմաններ, դեռ չունի:

Համաձայնողական թևը պատրաստ է տարածքային անսահման զիջումների, մյուս մասը՝ հույս ունի դնել Կարսի ու 1914 թ. սահմանների հարցը և դրանց իրականացման գործում հենվել Խորհրդային Ռուսաստանի օգնության ու միջնորդության վրա: Այդ խմբավորումների բնույթը և ուժերի հարաբերակցությունը դեռ բավարար չափով պարզված չեն: Երեկ, Օհանջանյանի հետ ունեցած հանդիպման ժամանակ, իմ կողմից Հայաստանի կառավարությանն առաջարկվել է մեր կողմից միջնորդության ընդունման կապակցությամբ բանտերից ազատել կոմունիստներին, պատասխանը դեռ չի ստացվել»[1]:

Այս փաստաթղթից պարզ երևում է, որ Լեգրանը հիանալի ծանոթ էր իրադարձություններին, գիտեր, թե ինչպիսի ընթացք են ունենալու հայ-թուրքական բանակցություններն Ալեքսանդրապոլում: Եվ բոլորովին պատահական չեն Լեգրանի խոսքերն այն մասին, որ «պետք է սպասել նոր բարդությունների, որոնք ծագելու են նոյեմբերի 24-ին Ալեքսանդրապոլում բացվող բանակցությունների ընթացքում»: Լեգրանը տեղյակ էր Ալեքսանդրապոլում Մդիվանու գործադրելիք ծրագրերին, իսկ դրանք հետապնդում էին մեկ նպատակ՝ բարդացնել հայ-թուրքական հարաբերությունները և հարկադրել Հայաստանի կառավարությանը՝ կամավոր խորհրդայնացնել Հայաստանը: Այդ ուղղությամբ մեծ աշխատանք էր կատարվում նաև Երևանում:

Նոյեմբերի 21-ին Լեգրանը և Մդիվանին հեռագրում են Բաքու՝ Ստալինին և Օրջոնիկիձեին. «Կոալիցիոն կառավարության ստեղծումը չհաջողվեց, դաշնակների շարքերում առաջանում են խմբեր, որոնք պատրաստ են ընդունել Հայաստանի խորհրդայնացման ծրագիրը: Խմբերից մեկի գլուխ կանգնած է Դրոն: Խմբե-

[1] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 242.

ը միավորելու միջոցներ ենք ձեռք առնում՝ նրանց կողմից իշխանությունը զավթելու նպատակով: Խորհրդային կառավարությունը ստեղծելիս ստիպված կլինենք դաշնակներին ավելի շատ տեղ տալ, քան ենթադրվում էր Բաքվում: Բաքվում ընդունված որոշումների հիման վրա երաշխիք ենք տալիս անհապաղ Հայաստան մտցնել կարմիր զորքերը, հենց որ նոր, խորհրդային կառավարությունն այդ մասին խնդրանքով դիմի մեզ»[1]:

Նոյեմբերի 22-ին Լեգրանը հեռագրում է Բաքու՝ Օրջոնիկիձեին, Մոսկվա՝ Չիչերինին.

«Կառավարական ճգնաժամը դեռ լուծված չէ, պայքարը կուսակցության մեջ շարունակվում է: Ծայրահեղ հոսանքը, որը ձգտում էր առանց Խորհրդային Ռուսաստանի միջնորդության թուրքերի հետ հաշտության հասնել, անհաջողություն է կրել, սակայն կուսակցության մեծ մասն առաջվա պես ծայրահեղ երկյուղով է վերաբերվում Խորհրդային կառավարության կողմից ռազմական օգնությանը...

Մդիվանին գիշերը մեկնում է Ալեքսանդրապոլ, որտեղ վաղը ժամանելու է նաև հայկական պատվիրակությունը՝ Խատիսովի գլխավորությամբ:

Հայտնեցեք, ավարտվել է, արդյո՞ք, զորամասերի կենտրոնացումը Ղազախում և ի՞նչ քանակությամբ»[2]:

Հայաստանի խորհրդայնացումը, ինչպես ցույց են տալիս փաստաթղթերը, դարձել էր օրերի հարց:

Հայաստանի գրավումը բոլշևիկյան Ռուսաստանը ցանկանում էր իրականացնել կա՛մ հայ կոմունիստների, կա՛մ էլ Երևանում կազմավորվող նոր կառավարության միջոցով: Երկու դեպքում էլ գործելու էր նույն մեխանիզմը. կարմիր բանակը պետք է հրավիրվեր Հայաստան, և երկրում պետք է հռչակվեր խորհրդային իշխանություն: Առաջին տարբերակը պատրաստվում էր Երևանում, երկրորդը՝ Բաքվում:

Նոյեմբերի 11-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն՝ Օրջոնիկիձեի, Մդիվանու և Ստասովայի մասնակցությամբ, քննելով ՀԿ(բ)Կ Կենտկոմի կազմի հարցը, որոշում է ՀԿ(բ)Կ Կենտկոմի կազմում լրացուցիչ ընդգրկել Ս. Կասյանին, Ա. Բեկզադյանին և Ս. Տեր-Գաբրիելյանին: ՀԿ(բ)Կ Կենտկոմի լրիվ կազմը ստանում է հետևյալ տեսքը՝ Ա. Նուրիջանյան, Հ. Կոստանյան, Ի. Դովլաթով,

[1] Նույն տեղում, թ. 243:
[2] Նույն տեղում, թ. 244:

Ս. Տեր-Գաբրիելյան, Ա. Բեկզադյան, Ս.Կասյան և Ա. Խանջյան[1]:

Օրջոնիկիձեն այս փոփոխությունները կատարում է Հայաստանում խորհրդային իշխանություն մտցնելու գործընթացն արագացնելու համար: Հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ ՀԿ(բ)Կ Կենտկոմը համալրվում էր ազգային դեմք ունեցող քաղաքական գործիչներով: Խորհրդայնացման ծրագիրը գործնականում իրականացնելու համար ստեղծվում է Հայաստանի հեղկոմ հետևյալ կազմով՝ Ս. Կասյան (նախագահ), անդամներ Ա. Մռավյան, Ս. Տեր-Գաբրիելյան, Ի. Դովլաթով, Ա. Բեկզադյան և Ա. Նուրիջանյան:

ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն, ՀԿ(բ)Կ Կենտկոմի թարմացված կազմի հետ միասին, եռանդուն գործունեություն է ծավալում Հայաստանում խորհրդային իշխանություն մտցնելու համար: Այդ աշխատանքներին ակտիվ մասնակցություն է ունենում նաև ԱԿ(բ)Կ Կենտկոմը, մասնավորապես Նարիմանովը: Տեղի են ունենում մի շարք նիստեր: Կովկասյան բյուրոն և ՀԿ(բ)Կ Կենտկոմը, ԱԿ(բ)Կ Կենտկոմի անդամների մասնակցությամբ, քննարկում են Հայաստանն անհապաղ խորհրդայնացնելու հարցը: Որոշվում է Հայաստանի խորհրդայնացման հարցը տեղափոխել ՌԿ(բ)Կ Կենտկոմ:

Նոյեմբերի 23-ին Օրջոնիկիձեն Վլադիկավկազում գտնվող Ստալինին հաղորդում է նախորդ օրն ընդունված որոշման մասին և համաձայնություն խնդրում՝ Հայաստան զորք մտցնելու համար: Օրջոնիկիձեն ցանկանում էր Ստալինի միջոցով ստանալ ՌԿ(բ)Կ Կենտկոմի թույլտվությունը:

Ուղիղ գծով տեղի ունեցած այդ խոսակցության ընթացքում քննարկվող հարցի նոր երանգներ են բացահայտվում:

Օրջոնիկիձեն հայտնում է Թուրքիայի և Անտանտի ներկայացուցիչների գաղտնի բանակցությունների, Թուրքիայի ու Վրաստանի ենթադրվող համաձայնության մասին, եթե Թուրքիան հարձակվի Ադրբեջանի վրա: Նշելով, որ իրադրությունը շատ բարդ է դառնում, նա գրում է. «Ես մտածում եմ, որ մենք կանգնում ենք կովկասյան մեծ պատերազմ սկսվելու առաջ: Երեկ հարցը քննեցինք Հայաստանի Կենտկոմի և ընկ. Նարիմանովի հետ: Մեր կարծիքն է՝ այլևս չսպասել և հենց հիմա սեպաձև խրվել...»[2]:

---

[1] Նույն տեղում, ց. 2, գ. 7, թ. 29:

[2] **Г. А. Галоян**, Рабочее движение и национальный вопрос в Закавказье (1900- 1922 гг.), Ереван, 1969, с. 372.

Օրջոնիկիձեն հորինել էր իրականության հետ ոչ մի առնչություն չունեցող, միանգամայն կեղծ սցենար, որի հետագա գործողությունները կանխելու համար առաջարկում էր զորք մտցնել Հայաստան:

Հարցը նրանում է, որ՝ ա) այդ ժամանակ Անտանտի հետ կապեր ստեղծելու Քեմալի փորձերը դեռևս ոչ մի գործնական նշանակություն չունեին: Ռուսաստանը Թուրքիային դեռ պետք էր: Այդ պատճառով էլ նա Ռուսաստանի հետ գործում էր փոխհամաձայնեցված ծրագրերով, բ) Թուրքիայի կողմից Ադրբեջանի վրա հարձակվելու ոչ մի ծրագիր նոյեմբերին չի եղել և չէր էլ կարող լինել, գ) Անտանտի կողմից Անդրկովկաս և, մասնավորապես, Ադրբեջան զորք մտցնելու մասին խոսակցությունները ոչ մի իրական հիմք չունեին, դ) Ռուսաստանն ու Թուրքիան էին այն իրական ուժերը, որոնք պետք է որոշեին Անդրկովկասի ճակատագիրը, իսկ նրանք էլ գործում էին փոխհամաձայնեցված:

Օրջոնիկիձեի հարցադրմանը Ստալինը պատասխանում է. «Բոլոր տվյալները խոսում են այն մասին, որ Անտանտի կողմից մեծ մասշտաբով լուրջ նախապատրաստական աշխատանք է գնում»: Սեպաձև խրվելը նա համարում է վաղաժամ, քանի դեռ օժանդակ ռազմական ուժերը տեղ չեն հասել «Վախենում եմ,– նշում է Ստալինը,– որ առաջ շարժված ուժերը վրացական զորամասերի կողմից կկտրվեն իրենց թիկունքից...»: Թուրքիայի ու Վրաստանի դաշինքը և Ադրբեջանի վրա միացյալ հարձակումը հնարավոր համարելով, Ստալինն առաջարկում է առաջին հերթին հարվածել Վրաստանին, այնտեղ հաստատել խորհրդային իշխանություն, բացել երկաթգիծը դեպի Հայաստան և նոր միայն սեպաձև մտնել Հայաստան: «Եթե դու,– շարունակում է Ստալինը,– այնուամենայնիվ պնդելու ես, հենց այսօր ես կխոսեմ կենտրոնի հետ և համաձայնություն կպահանջեմ քո առաջարկության ոգով: Նկատի ունեցիր, որ մեր տրամադրության տակ չկա ոչ մի ռազմական և երկաթուղային ճանապարհ, բացի Աղստաֆա-Դիլիջան խճուղուց, որի պատճառով մեր զորքերը կարող են հայտնվել անբարենպաստ պայմաններում ինչպես ռազմավարական տեսակետից, այնպես էլ մատակարարման իմաստով»[1]:

Օրջոնիկիձեն, պնդելով իր միտքը, նշում է. «Քո թվարկած բոլոր դժվարությունները և երկաթուղու բացակայությունը ճիշտ են,

[1] Նույն տեղում:

բայց այդ դժվարությունները հետագայում կարող են ավելի վատթարանալ, եթե Դիլիջանը գրավվի թուրքերի կողմից, Ղարաքիլիսան նրանց կողմից արդեն գրավվում է: Հայկական բանակ այլևս գոյություն չունի: Բնակչության տրամադրությունները, կարծում եմ, չեմ սխալվի, եթե ասեմ, որ ավելի շատ մեր կողմն է, քան որևէ ուրիշ մեկի կողմը: Ղազախի շրջանի սահմանում հայ զինվորները, սպաները և բնակչությունը դիմում են մեզ՝ ցույց տալ, թե ինչ անեն իրենք: Մեր կողմից հետագա սպասողականությունը հայ ժողովրդի մեջ կստեղծի այն տպավորությունը, որ մենք էլ ենք լքել նրան, թողնելով բախտի քմահաճույքին և նորից բեկում կսկսվի հոգուտ դաշնակների...»: Նա Ստալինից խնդրում է արագացնել Հայաստանի ռազմական գործողությունների համար օժանդակ զորամասերի փոխադրումը, զենքի և զինամթերքի առաքումը, հայտնելով. «...այդ պայմանով երաշխավորում եմ, որ բոլոր ուղղությունների գործողություններն էլ կավարտվեն հաջողությամբ, թեև այս շատ համարձակ է...»[1]:

Նույն օրը, նոյեմբերի 23-ին, Ստալինը Լենինին տեղեկություններ է հաղորդում Հայաստանի և Վրաստանի շուրջը ստեղծված իրավիճակի մասին. «Հայերը բանակ չունեն, թուրքերը ցանկության դեպքում առանց դժվարության կարող են գրավել ամբողջ Հայաստանը, Թիֆլիսում Քեմալի ներկայացուցիչ Քյազիմ բեյը իրեն պահում է ավելի քան կասկածելի»[2]: Այնուհետև բերվում է Օրջոնիկիձեի հետ ունեցած խոսակցության բովանդակությունը: Օրջոնիկիձեի կարծիքով, ամփոփում է Ստալինը, «...***մենք կանգնած ենք կովկասյան մեծ պատերազմի առջև, որը Անգլիան նախապատրաստում է Վրաստանի միջոցով, թուրքերի չեզոքությամբ՝ լավագույն դեպքում, իսկ վատագույն՝ թուրքերի հետ դաշնակցած մեր դեմ, նախ և առաջ բոլշևիկյան Ադրբեջանի դեմ, սրանում ես Օրջոնիկիձեի հետ միանգամայն համաձայն եմ*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.)»[3]:

Ստալինն այնուհետև շարունակում է. «Ինձ համար պարզ է, որ զորամասերի տեղափոխման հարցում մենք այլանդակորեն ուշացել ենք, մինչդեռ իրադարձությունները զարգանում են արագ և թուրքերի կողմից Ադրբեջանի դեմ ուղղված սպառնալիքն օրեցօր աճում է: Համենայն դեպս, մենք ուրիշ ելք չունենք: Իմ

---

[1] **U. S. Ալիխանյան,** նշվ. աշխ., էջ 33-34:
[2] **Г. А. Галоян,** նշվ. աշխ., էջ 373:
[3] **U. S. Ալիխանյան,** նշվ. աշխ., էջ 34:

կարծիքով, պետք է կարճ ժամկետով հետաձգել Օրջոնիկիձեի նախագծած գործողությունը: Ի դեպ, ես պետք է ասեմ, որ անհապաղ գործողությունն, իր ամբողջ վտանգավորությամբ հանդերձ, այնուամենայնիվ մի շատ կարևոր դրական գիծ ունի՝ այն անմիջապես պարզություն կմտցնի: Գուցե հենց դրա համար էլ արժե ռիսկի դիմել»[1]:

Իր նկատառումները ներկայացնելուց հետո Ստալինը Լենինին առաջարկում է Հայաստանի նկատմամբ գործողությունները հետաձգել մինչև նոր օգնական զորամասերի ժամանումը և վերջիններիս վրացական սահմաններում կենտրոնացնելուց հետո միայն շարժվել դեպի Երևան:

Լենինն ուղիղ գծով անմիջապես պատասխանում է նրան. «Առանց քաղբյուրո հրավիրելու ես չեմ կարող ոչ մի պատասխան տալ: Խորհուրդ եմ տալիս Ձեզ կամ իսկույնևեթ կոնկրետ առաջարկություն մտցնել և անհապաղ դնել քաղբյուրոյում, կամ ինքներդ գործեցեք Ստալինի ունեցած լիազորությունների ճիշտ հիման վրա, կամ, վերջապես, արագացրեք ձեր գալը Մոսկվա կովկասյան հարցը ամբողջությամբ լուծելու համար: Համենայն դեպս, անհրաժեշտ է ուժեղացնել ու արագացնել օգնական ուժերի մոտեցումը, և հադորդեցեք, թե ո՞րն է հատկապես Ձեր որոշումը»[2]:

Նույն օրը, Ստալինի հետ ունեցած խոսակցության ժապավենի վրա, Լենինը թողնում է հետևյալ գրությունը. «Ընկ. Տրոցկի: Կարգադրեցեք, խնդրում եմ, անմիջապես ուժեղացնել և **արագացնել** տեղափոխումը, իսկ ապա խնդրում եմ հենց այսօր դա ուղարկել Չիչերինին»[3]:

Ստալինը՝ Լենինին. «Այսօր գիշերը մեկնում եմ Մոսկվա: Օրջոնիկիձեին կարգադրություն եմ անում նախապատրաստական աշխատանք կատարել և սպասել ցուցումների Մոսկվայից: Ռազմաճակատի հետ կխոսեմ տեղափոխությունն արագացնելու մասին»:

Ստալինը՝ Օրջոնիկիձեին. «Հենց նոր խոսեցի Լենինի հետ, նա խնդրեց արագացնել իմ մեկնումը Մոսկվա: Ես մեկնում եմ այսօր: Մի երեք օրից կստանաս հրահանգ: Առայժմ որոշված է տանել նախապատրաստական աշխատանք քո առաջարկության ոգով և

---

[1] **Г. А. Галоян**, նշվ. աշխ., էջ 373:
[2] **Վ. Ի. Լենին**, ԵԼԺ, հատ. 52, էջ 15-16:
[3] Նույն տեղում, էջ 16:

արագացնել նոր համալրումների փոխադրումը ինչ գնով էլ լինի»[1]:

Այսպիսով, Ստալինը և Օրջոնիկիձեն, նպատակ դնելով ռազմակալել Հայաստանն ու Վրաստանը, հորինում են կեղծ վարկած այն մասին, որ՝ ա) Կովկասը կանգնած է մեծ պատերազմի առջև, որը նախապատրաստում է Անգլիան, բ) Անգլիան պատրաստվում է ռազմակալել Բաթումը, գ) Թուրքիան գրավում է ամբողջ Հայաստանը և պատրաստվում է հարձակվել Ադրբեջանի վրա, դ) Վրաստանը պատրաստվում է հարձակվել Ադրբեջանի վրա, ե) այդ ծրագրերի իրականացման համար Թուրքիայի և Վրաստանի միջև գոյություն ունի համաձայնություն:

Ստալինի և Օրջոնիկիձեի «Կովկասյան մեծ պատերազմի» վարկածը ոչ մի իրական հիմք չուներ, այն ամբողջովին հորինված էր: Թուրքիան, ինչպես արդեն նշել ենք, նոյեմբերին Ադրբեջանը գրավելու ծրագրեր չուներ, և այդ բանը Ռուսաստանի արտաքին քաղաքականության ղեկավարները շատ լավ գիտեին: Ադրբեջանի համար Քեմալը երբեք չէր համարձակվի պատերազմի մեջ մտնել Ռուսաստանի հետ, լավ հասկանալով, որ նման պատերազմում Թուրքիան հաղթանակի որևէ հույս ունենալ չէր կարող, բայց կզրկվեր օգնության միակ աղբյուրից և անխուսափելիորեն կկորցներ թուրք-հայկական պատերազմում նվաճած տարածքները:

Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա նրա ղեկավարներն այդ ժամանակ մտահոգված էին սեփական երկիրը ռուսական ներխուժումից փրկելու հարցով, որի վտանգն ակնհայտ էր: Նման պայմաններում անհեթեթություն էր խոսել Ադրբեջանի վրա Վրաստանի հարձակման մասին: Փոքրիկ Վրաստանը երբեք չէր կարող մտածել Ադրբեջանի վրա հարձակվելու մասին, ինչը կնշանակեր պատերազմ Ռուսաստանի դեմ: Մնում է պարզել, թե որքանով էին լուրջ անգլիացիների կողմից Բաթումը ռազմակալելու մասին լուրերը: Նոյեմբերի 25-ին Ռուսաստանի արտգործժողկոմատը ստանում է Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության նոտան, որում ասված էր. «Չնայած խորհրդային իշխանությունների բազմիցս արված հարցումները և բողոքները, այն բանի վերաբերյալ, որ բրիտանական կամ դաշնակից կառավարությունները իբր ցանկանում են ռազմակալել Բաթումը, ամենափոքր հիմքն իսկ չունեն, դրանք ստիպում են ենթադրել, որ այդ

[1] **Ս. Տ. Ալիխանյան**, նշվ. աշխ., էջ 35:

կետը, որը հանդիսանում է վրացական անկախ պետության մասը, որոշ վտանգի մեջ է գտնվում: Նորին Մեծության կառավարությունն ուրախ կլիներ խորհրդային կառավարությունից համապատասխան հավաստիացում ստանալ այն մասին, որ այդպիսի կասկածների համար ոչ մի հիմք չկա և որ նա ոչ մի մտադրություն չունի ինքը ռազմակալելու Բաթումը»[1]:

Նոյեմբերի 26-ին Չիչերինն անգլիական կառավարության այդ նոտային պատասխանում է: Ռուսաստանի կառավարությունը բողոք է հայտնում Անգլիայի կողմից Բաթումի ենթադրվող ռազմակալման դեմ, որի վկայությունը բրիտանական ռադիոկայանների հաղորդումներն էին այն մասին, որ անկախ Վրաստանի մաս կազմող Բաթումը վտանգի մեջ է: Նոտայում ասվում է, որ մայիսի 7-ին Ռուսաստանի և Վրաստանի միջև պայմանագիր է կնքվել, որով Ռուսաստանը ճանաչել է Վրաստանի անկախությունը և իրեն երբեք թույլ չի տա ոտնձգություն կատարել Վրաստանի անկախության դեմ: Նոտան ավարտվում է Ռուսաստանի արտգործժողկոմատի հավաստիացումներով, որ «Ռուսաստանի կառավարությունը միշտ հավատարիմ կմնա Վրաստանի անկախության ճանաչմանը և ոչ մի դեպքում թույլ չի տա նրա ինքնիշխան իրավունքների խախտում ոչ Բաթումը ռազմակալելու և ոչ էլ որևէ այլ ձևով»[2]:

Այսպիսով, Ռուսաստանի կառավարությունը ոչ մի լուրջ հիմք չուներ մեղադրելու Անգլիային, որ նա ռազմակալելու է Բաթումը և Կովկասում մեծ կռիվ է նախապատրաստում: Ընդհակառակը, Ռուսաստանն էր պատրաստվում զավթել Վրաստանը և Հայաստանը, ինչը և խիստ անհանգստացնում էր Անգլիային ու Դաշնակիցներին: Անգլիական ռադիոհաղորդումները նպատակ ունեին Ռուսաստանին հետ պահել այդ քայլից: Իսկ որ Ռուսաստանն իրոք ցանկանում էր զավթել այդ տարածքները և գործնական աշխատանքներ էր տանում այդ ուղղությամբ, համոզվեցինք վերը բերված փաստաթղթերից:

Ռուսաստանը և Անգլիան նոտաների փոխանակությամբ հավաստիացրին միմյանց, որ փորձ չեն անելու Կովկասում նվաճողական քաղաքականություն վարել: Եթե Անգլիայի համար, որն արդեն լքել էր Հայաստանը և ոչ մի լուրջ մտադրություն չուներ պաշտպանել Վրաստանը, այդ հավաստիացումն ուներ սիմվոլիկ

---

[1] ДВП СССР, т. 3, М., 1959, с. 345.

[2] Նույն տեղում, էջ 344-345:

նշանակություն և միայն ինչ-որ չափով Ռուսաստանի նվաճողական քաղաքականության դեմ ուղղված սպառնալիք էր, ապա Ռուսաստանն, ընդհակառակը, պետք է սրբագրեր Հայաստանի և Վրաստանի նվաճման արդեն գործողության մեջ գտնվող ծրագրերը: Կովկասում բոլշևիկների քաղաքականության սրբագրումը, սակայն, չափազանց դժվարացել էր, որովհետև Օրջոնիկիձեն, հատկապես Ստալինի հետ ունեցած խոսակցությունից հետո, ձեռնարկել էր մի շարք լուրջ քայլեր, որոնցով Հայաստանի նվաճման գործնական ծրագիրը օրակարգ էր մտել:

Նոյեմբերի 24-ին Օրջոնիկիձեն հեռագրել էր Ստալինին. «Հայ ընկերների և Նարիմանովի կարծիքով, այլևս կարիք չկա սպասել: Թուրքերը, ըստ երևույթին, ցանկանում են հաշվեհարդար տեսնել հայերի հետ և այդ առումով ուզում են անկաշկանդ ձեռքեր ունենալ: Դաշնակներն, անկասկած, կորցրել են ամեն մի հեղինակություն, դա երևում է նաև Լեգրանի հաղորդումներից, մի բան, որը նախկինում նա ժխտում էր: Մեր անվերջ սպասողական դրությունը հայ զանգվածներին վերջնականապես կհասցնի բոլորի կողմից լքվածի դրության, իսկ հիմա նույնիսկ «Մշակն» է սպասում մեր գալստյանը»[1]:

Նոյեմբերի 25-ին Բաքվից հատուկ գնացքով Ղազախ են մեկնում ՀԿ(բ)Կ Կենտկոմի և Հեղկոմի մի քանի անդամներ, որպեսզի կարմիր բանակի ջոկատների միջոցով կազմակերպեն Հայաստանի խորհրդայնացումը: Ղազախում պատրաստվեցին Հեղկոմի բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ Հայաստանը խորհրդային հռչակելու հռչակագիրը, թռուցիկներ ու կոչեր:

Նոյեմբերի 26-ին Օրջոնիկիձեն հեռագրում է Կովկասյան ճակատի Ռազմահեղափոխական խորհրդի անդամ Տրիֆոնովին. «Հայաստանի վրա Քեմալի հարձակման կապակցությամբ ամենից հավանական է, որ մենք հարկադրված կլինենք խառնվել՝ Հայաստանը փրկելու համար, կարող է պատահել հարկ լինի խորհրդայնացնել, որի համար անհրաժեշտ է հեծելազոր»[2]:

11-րդ բանակի Ռազմահեղափոխական խորհուրդը ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի որոշմամբ, մի քանի զորամասեր է դնում Հայաստանի Հեղկոմի տրամադրության տակ:

Նոյեմբերի 27-ին Օրջոնիկիձեն հեռագրում է Մոսկվա. «Վաղը Կասյանը սկսում է»: Հեղկոմը Հայաստան պետք է մտներ նո-

---

[1] РГАСПИ, ф. 85, оп. 14, д. 30, л. 1.
[2] Նույն տեղում, գ. 32, թ. 2-3.

յեմբերի 28-ի գիշերը[1]:

Նույն օրը, նոյեմբերի 27-ին, ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոն քննարկում է «Կովկասյան գործերի մասին» հարցը, որի վերաբերյալ ընդունված որոշման նախագիծը գրել էր Լենինը:

Քաղբյուրոն, ամենայն հավանականությամբ, ելնելով անգլիական կառավարության վերը հիշված հեռագրի կապակցությամբ ստեղծված նոր իրադրությունից, որոշում է. «Վրաստանի, Հայաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի նկատմամբ ընդունել առավելագույն չափով հաշտարար, այսինքն՝ ամենից ավելի այն բանին ուղղված քաղաքականություն, որպեսզի խուսափենք պատերազմից:

Խնդիր չդնել արշավելու ո՛չ Վրաստանի, ո՛չ Հայաստանի, ո՛չ էլ Պարսկաստանի վրա: Գլխավոր խնդիրը համարել Ադրբեջանի պաշտպանությունը և ամբողջ Կասպից ծովին հաստատապես տիրելը:

Դրա համար ամեն կերպ ուժեղացնել և արագացնել ոչ պակաս, քան 7 դիվիզիայի փոխադրումը Ադրբեջան»: Փոխադրումների բարձրագույն խորհրդին հանձնարարվում է օրական 8 շարժակազմից ոչ պակաս զորք փոխադրել Բաքու[2]:

Տրոցկին թուրքերի հարձակումն Ադրբեջանի վրա համարում էր քիչ հավանական և այդ պատճառով էլ առաջարկում էր զորքերի Կովկաս տեղափոխումը դանդաղեցնել: Սակայն Լենինը պնդում էր Քաղբյուրոյի ընդունած որոշման վրա:

Օրջոնիկիձեի նոյեմբերի 27-ի այն հեռագրին, որ «վաղը Կասյանը սկսում է», նոյեմբերի 28-ին Ստալինը պատասխանում է. «***Շտապել պետք չէ, պետք է սպասել համաձայնությունների: Դաշնակների համար կռվել թուրքերի հետ, պետք չէ*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.), բայց ամեն ինչում զիջել թուրքերին նույնպես անթույլատրելի է, պետք է թուրքերից պոկել Ալեքսանդրապոլը Հայաստանի համար, Կարսի հարցը դեռ թողնելով առկախ: Ամենայն հավանականությամբ, թուրքերը Հայաստանում գործում են Անտանտի գիտությամբ, այդ պատճառով էլ նրանց վստահել չի կարելի, նրանց պետք է կտրել Անտանտից, պետք է հրահրել Վրաստանի դեմ և փորձել՝ կգնա՞ն արդյոք նրանք Վրաստանի դեմ»[3]:

Ինչպես տեսնում ենք, այն դեպքում, երբ խոսք է գնում կարմիր

---

[1] **Ս. Տ. Ալիխանյան**, նշվ. աշխ, էջ 37:
[2] **Վ. Ի. Լենին**, ԵԼԺ, հատ. 42, էջ 56:
[3] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 260.

բանակի միջոցով Հայաստանը գրավելու, այն խորհրդայնացնելու մասին, բոլշևիկներն անպայման հանդես են գալիս «հայ ժողովրդին ազատագրելու» կարգախոսներով, իսկ երբ Հայաստանը գրավելու հարցը ժամանակավորապես օրակարգից հանվում է, պարզվում է, որ «պետք չէ դաշնակների համար թուրքերի հետ կռվել»: Այս դեպքում արդեն բոլշևիկները «մոռանում են» հայ ժողովրդին:

Այսպիսով, չնայած Հայաստանի գրավումը օրակարգից հանելու մասին Քաղբյուրոյի որոշմանը, Ստալինը մնում է նախկին դիրքերում, խնդրի լուծումը հետաձգելով մինչև համալրումների տեղ հասնելը:

* *
*

Բանակցություններն Ալեքսանդրապոլում: Բ. Մդիվանու և Ալ. Խատիսյանի պատվիրակություններն Ալեքսանդրապոլ են ժամանում նոյեմբերի 24-ին: Նույն օրը Մդիվանին հեռագրում է Ստալինին և Օրջոնիկիձեին. «Ժամանեցինք այսօր ժամը 5-ին: Ժամը 11-ին խոսեցինք Կարաբեքիրի հետ: Նա հայտնեց, որ Անգորայի կառավարությունը մեր միջնորդությունը համարում է ավելորդ, որովհետև հայերը թուրքերի բոլոր պայմաններն ընդունել են: Կարաբեքիրը հայտարարեց, որ ինքն Անգորայից հրահանգ է ստացել բանակցություններ վարել անմիջականորեն միայն հայերի հետ:

Այնուհետև, Կարաբեքիրը հայտարարեց, որ Մոսկվան թուրքական հրամանատարությանը խոստացած է եղել Ադրբեջանի կողմից խորհրդային զորքերի միաժամանակյա հարձակում, բայց դա ցավոք չի կատարվել (ընդգծումը մերն է – Լ. Խ.): Զրույցի ավարտին, որն ընդհատվեց հայկական պատվիրակության այցով, Կարաբեքիրն ասաց, որ մեր բացակայությունը հայերի հետ թուրքերի բանակցություններում, ամենևին չի բացառում անմիջականորեն թուրքերի հետ մեր բանակցությունների հնարավորությունը, որպես մեկ նպատակի ձգտող բարեկամների: Նա նաև մատնանշեց Թիֆլիսի գրավումով մենշևիկյան Վրաստանի, որպես կայսերապետական հենակետի, ոչնչացման անհրաժեշտությունը: Այն հարցին, թե ո՞ւմ կողմից պետք է գրավվի Թիֆլիսը,

նա պատասխանեց՝ խորհրդային զորքերի»[1]:

Աշխատության նախորդ մասերում տեսանք, որ Ռուսաստանը Թուրքիային թույլ էր տվել հարձակվել Հայաստանի վրա՝ երկու երկրների միջև անմիջական սահմանային կապ ստեղծելու համար: Մդիվանու վերը բերված հեռագրից պարզ է դառնում նաև, որ Մոսկվան հարձակման թույլտվության հետ միասին Անկարային խոստացել էր Ադրբեջանի կողմից միաժամանակյա հարձակում Հայաստանի վրա:

Կարաբեքիրն այդ մասին իր հուշերում գրում է. «Որոշած էի աշնան Հայաստան արշավիլ: Այս որոշումիս առնչությամբ, կարմիր բանակի հրամանատարության հետ հասկացողության եկա: Անոնք ալ ինծի իրենց զինվորական շարժումներուն մասին բացատրություն տվին: Ասօր վրա Անկարա գրեցի. «***Կարմիրները արևելքեն, մենք ալ արևմուտքեն բոլորս միասին դեպի Հայաստան արշավելով, մինչև Կարսի դռները պիտի երթանք: Այլևս ըսելիք մը ունի՞ք***»: Օգոստոսի 20-ին Անկարան Կարաբեքիրին պատասխանում է. ***«Մեր տեսակետը այն է, թե կարմիր բանակը հարձակումի անցնելե ետք, երբ քաջությանը վստահ ըլլանք, անկե ետք մենք ալ մինչև Արաքս յառաջանալու ենք»***[2]:

Ալեքսանդրապոլի բանակցությունների ժամանակ Կարաբեքիրը Խատիսյանին հայտնել է նաև հետևյալը. «***Դուք պետք է գիտնաք, պ. Խատիսյան, որ մենք նախապես համաձայնած ենք Մոսկվայի հետ ստանալու Կարսի նահանգը, ավելին մեզ չեն տար: Բայց եթե այժմ դուք չընդունեք մեր պայմանները, ես կը քալեմ ավելի առաջ, փույթ չէ, թե վաղը ստիպված ետ դառնամ***» (ընդգծումը մերն է – Լ. Խ.)[3]:

Հենց այդ փոխադարձ համաձայնությամբ է բացատրվում այն հանգամանքը, որ, ինչպես արդեն նշել ենք, Ռուսաստանը թուրքական զորքերի հարձակման ամբողջ ժամանակամիջոցում ոչ մի անգամ պաշտոնական բողոքի նոտայով չդիմեց Թուրքիային՝ պահանջելով դադարեցնել հարձակումը Հայաստանի վրա:

Այս փաստաթղթերի լույսի ներքո հասկանալի է դառնում նաև այն, թե ինչու Ստալինի, Չիչերինի և Օրջոնիկիձեի հեռագրերում այդ ժամանակ մշտապես դրվում էր թուրքերի հետ բանակցությունների ժամանակ Կարսի հարցը չքննարկելու հանձնարարականը:

---

[1] Նույն տեղում, թ. 245:

[2] «Զարթոնք», Բեյրութ, 6 օգոստոսի 1966:

[3] «Ժողովրդի ձայն», Կ. Պոլիս, 24 փետրվարի 1921:

Նման իրավիճակում Ռուսաստանին անհրաժեշտ էր հնարավորություն ստեղծել խորհրդայնացման միջոցով Հայաստանի նվաճման իր ծրագիրն իրականացնելու համար: Անկարայի կառավարության արտաքին գործերի նախարարության բաժնի վարիչ Հիքմեթը իր զեկուցագրում այդ մասին գրում է. «Ընկ. Մդիվանին Ղարաքիլիսայից ժամանելով թուրքերի կողմից գրաված Ալեքսանդրապոլ, որտեղ Քյազիմ փաշան հաստատել էր գրեթե խորհրդային կառավարչություն, Քյազիմ փաշային խորհուրդ էր տալիս ավելի ուժեղ ճնշել հայերին, որպեսզի այնտեղ իբր թե հեղափոխություն բռնկվի՝ խորհրդային կարգեր մտցնելու նպատակով»[1]:

Հայաստանի բռնի խորհրդայնացումն իրականացնելիս թուրք-հայկական բանակցություններում Ռուսաստանի կողմից միջնորդի դեր ստանձնելը Ստալինի համար ստանում էր բացասական նշանակություն: Եթե Ռուսաստանի միջնորդությունն ընդունվեր Թուրքիայի և Հայաստանի կողմից, ապա բոլշևիկները դրանով պարտավորություն էին վերցնում Քեմալից տարածքներ պահանջել Հայաստանի համար, մի բան, որը նախնական պայմանավորվածության համաձայն, նրանց ծրագրերի մեջ չէր մտնում: Միջնորդությունը կխանգարեր Ստալինի ծրագրերի իրականացմանը: Այն ավելորդ բեռ էր Ռուսաստանի համար:

Բայց միջնորդության պահանջը պաշտոնապես չհանվեց օրակարգից՝ հայ ժողովրդի համակրանքը շահելու համար: Մդիվանին գործնականում վիժեցրեց դրա ընդունումը:

Պաշտոնական վարկածով Մդիվանին Ալեքսանդրապոլ էր ժամանել ռազմական գործողությունները դադարեցնելու համար: Երևանի բանակցությունների ժամանակ նա հայտարարեց, որ հրահանգ ունի պահանջել թուրքական զորքերի հետքաշումը մինչև 1914 թ. սահմանները, չնայած դա հաստատող որևէ փաստաթուղթ չկա:

Բայց Մդիվանին Ալեքսանդրապոլ ժամանեց այն ժամանակ, երբ ռազմական գործողություններն արդեն դադարել էին, հետևաբար, այդ բնագավառում նա այլևս անելիք չուներ, ինչ վերաբերում է երկրորդ խնդրին, ապա այստեղ իրավիճակն ավելի բարդ էր: Ներքին զրագրություններում, ինչպես ասացինք, Ստալինը, Չիչերինը և Օրջոնիկիձեն հրահանգ էին տվել բանակցությունների ժամանակ Կարսի հարցը չդնել: Այդ է ապացուցում

[1] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 25, թ. 95 :

նաև Կարաբեքիրի գրքից վերը բերված մեջբերումը: Մդիվանու Երևանում արված հայտարարությունը, որ ինքը հրահանգ ունի 1914 թվականի սահմանները պահանջել, մեղմ ասած իրականությանը չէր համապատասխանում: Եթե Մդիվանին այդ հայտարարությունը չաներ, ապա Ալեքսանդրապոլում անելիք չպետք է ունենար: Իսկ եթե, որպես միջնորդ, Ռուսաստանը Կարսի խնդրում Հայաստանին չէր պաշտպանելու, ապա այդ դեպքում, Հայաստանի կառավարությունն ընդհանրապես ավելորդ կնկատեր Ռուսաստանի ներկայությունն Ալեքսանդրապոլում:

Եթե Մդիվանին չէր դադարեցնելու ռազմական գործողությունները, որոնք արդեն ավարտվել էին, եթե նա չէր պահանջելու Կարսի շրջանը, որի ճակատագիրն արդեն որոշված էր, ապա ի՞նչ նպատակ էր հետապնդելու Ալեքսանդրապոլում:

Եզրակացությունը միանշանակ է. Մդիվանին ժամանել էր Ալեքսանդրապոլ, թուրքերի միջոցով ուժեղացնելու ճնշումը Հայաստանի վրա, որպեսզի արագացվի հայ պետականության կործանումը, Հայաստանի խորհրդայնացումը և Թուրքիային թույլ չտրվի տարածքներ կորզել Ռուսաստանին հասանելիք հայկական հողերից:

Հասկանալի է, որ նման պայմաններում Ռուսաստանի պաշտոնական միջնորդության ընդունումը ոչ Ռուսաստանին էր պետք և ոչ էլ Թուրքիային: Միջնորդությունը չընդունելը և՛ Ռուսաստանի, և՛ Թուրքիայի ձեռքերն ազատ էր թողնում, առանց որևէ պարտավորության Հայաստանը մասնատելու հարցում:

Այդ է ապացուցում Մդիվանու գործունեությունն Ալեքսանդրապոլում: Փաստաթղթերն այդ հարցում որևէ կասկած չեն թողնում: Ալեքսանդրապոլից տրված նրա առաջին հեռագրին արդեն ծանոթացանք: Այդ հեռագրով նա հայտնում է, որ թուրքերը չեն ընդունում Ռուսաստանի միջնորդությունը: Պատահական չէ, որ նա չի բողոքում թուրքերի որոշման դեմ: Ավելին, Ալեքսանդրապոլում նա ոչ միայն հանդես չի գալիս Հայաստանի շահերի պաշտպանությամբ, այլ, ընդհակառակը, լիովին հավանություն է տալիս Հայաստանի նկատմամբ քեմալականների ծրագրերին և օժանդակում դրանց գործադրմանը: Մդիվանին անգամ Թուրքիայի կողմից Ռուսաստանի միջնորդությունը մերժելուց հետո մնում է Ալեքսանդրապոլում և համակարգում Հայաստանի նվաճման՝ թուրք-ռուսաստանյան ծրագրերի իրականացման գործընթացը: Քանի որ Մդիվանին ուղարկվել էր թուրքամետ խմբի հակահայկական ծրագրերը իրականացնելու հա-

մար, այդ պատճառով Ալեքսանդրապոլից ուղարկված նրա բոլոր հեռագրերը ուղղված են միայն Ստալինին և Օրջոնիկիձեին: Ընդ որում, հեռագրերից առաջինը հղվում է պարզապես «Կոբային և Սերգոյին»: Այդ հեռագրերում պարունակվող կարևոր տեղեկությունները չեն ուղարկվում ոչ Լենինին և ոչ էլ Չիչերինին:

Նոյեմբերի 25-ին, Մդիվանին Ստալինին և Օրջոնիկիձեին հայտնում է. «Երեկ երեկոյան ինձ այցելեց Կարաբեքիրը: Զրույցի ընթացքում նա նորից պնդում էր Կարմիր բանակի կողմից Թիֆլիսը շտապ գրավելու անհրաժեշտության վրա, խոստանալով իր ուժերով սպառնալ անգլիացիներին և Բաթումի կողմից վերջիններիս հարձակման դեպքում՝ կտրել նրանց ճանապարհը: Նա խնդրում է նաև անհապաղ իրական օգնություն ցույց տալ զենքով և զինամթերքով: Իրեն հասած լուրերը՝ Անգորայի և Անգլիայի համաձայնության մասին, նա բացատրում է իրենց՝ անգլիացիների խարդավանքներով: Նա համառորեն խնդրում է մեր վստահությունը, մատնանշելով արևելքում մեր և իրենց իրական շահերի պարզ համընկնումը»[1]:

Նոյեմբերի 26-ին Մդիվանին նորից հեռագրում է Ստալինին և Օրջոնիկիձեին. «Այստեղ գոյություն ունի հեղկոմ, որն անվանվում է «Հայաստանի խորհրդային հանրապետության հեղկոմ»: Կազմը թույլ է, աջակցություն է գտնում թուրքական հրամանատարության կողմից: Անհրաժեշտ է այստեղ հրավիրել հեղինակավոր ընկերների, նկատի ունենալով թուրքերի հակումը չհավատալ հայ կոմունիստներին: Մինչև համահայկական մասշտաբով հեղկոմի ժամանումը, հնարավոր եմ համարում այդ հեղկոմը օգտագործել, հենվելով այս հեղկոմի խնդրանքի վրա մեր զորամասերը մտցնել Հայաստան՝ խորհրդային կարգեր հաստատելու համար: Նույն կարծիքն ամբողջովին պաշտպանում է նաև թուրքական հրամանատարությունը, իր զորքն արևմուտք փոխադրելու համար»[2]:

Հեղկոմը, որի մասին հայտնում է Մդիվանին, առաջարկելով նրա հրավերով զորք մտցնել Հայաստան, ստեղծվել էր թուրքերի կողմից և գտնվում էր նրանց հովանավորության ներքո: Այդ հեղկոմը դեռ նոյեմբերի 17-ին հռչակել էր խորհրդային իշխանություն: Ալեքսանդրապոլի հեղկոմի իշխանության քողի տակ Կարաբեքիրի զորամասերն իրականացնում էին հայ բնակչության կոտորածներ ու կողոպուտ:

---

[1] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 246.

[2] Նույն տեղում, թ. 251:

Նոյեմբերի 27-ին Մդիվանին նորից է հեռագրում Ստալինին և Օրջոնիկիձեին. «Երեկ Կարաբեքիրի հետ միասին խոսեցի Անգորայի ազգային մեծ ժողովի երկու ազդեցիկ անդամների հետ: Նրանք պնդում են մեր միջև անհապաղ ձևական պայմանագիր կնքելու վրա: Նրանք մեզանից միայն զենք են պահանջում: Իրենց կողմից պարտավորվում են անզիջում պայքար մղել անգլիացիների դեմ, մեր քաղաքականությունն անցկացնել արևելքում: Հենվելով նրանց Հայաստան և Վրաստան մեր զորամասերը մտցնելու մասին պայմանագիր կնքելու և Բաթումի կողմից անգլիական հարվածը կանխելու համար իրենց աջակցության մասին առաջարկների վրա, գտնում եմ, որ նրանք առայժմ Անգլիայի հետ որևէ համաձայնություն չունեն: Պնդում եմ առաջին երկու առաջարկների անհապաղ կատարման վրա: Պայմանագիր կնքելու համար պետք է Ալեքսանդրապոլ ուղարկել համապատասխան լիազորություններով հանձնաժողով: Նրանք, մեր համաձայնության դեպքում, անմիջապես կհայտնեն Անգորային, և այնտեղից կժամանի նույնանման հանձնաժողով: Սպասում եմ ձեր անհապաղ պատասխանին»[1]:

Մդիվանին իր հեռագրերով հետապնդում է հետևյալ նպատակները.

ա) Ապացուցել, որ Թուրքիան Անտանտի կողմը չի անցել, նա Ռուսաստանի հավատարիմ դաշնակիցն է: Նա Կարաբեքիրի գովքն է անում՝ նրան համարելով «ժողովրդական», «Անգլիայի համոզված հակառակորդ», «անկեղծ ռուսամետ և անբասիր ազնիվ մարդ», ռուս-թուրքական բանակցություններում «մեզ համար ցանկալի թեկնածու»[2]:

բ) Նա համերաշխվում է Կարաբեքիրի այն կարծիքի հետ, որ իբր թուրքերին «հայերն այնքան չարիք են պատճառել, որ նրանց զիջումներ չպետք է անել»[3]:

գ) Եվ քանի որ Թուրքիան ու Կարաբեքիրն արժանի են վստահության, ուրեմն նրանց օգնությամբ կարելի է գրավել Վրաստանն ու Հայաստանը:

դ) Մոսկվային համոզել վերսկսել զենքի առաքումը դեպի Թուրքիա:

ե) Ռուս-թուրքական պայմանագիրը կնքել Ալեքսանդրապոլում:

---

[1] Նույն տեղում, թ. 246:

[2] Տե՛ս **Մ. Արզումանյան**, նշվ. աշխ., էջ 347-348:

[3] Նույն տեղում:

Մդիվանին իր հեռագրերում, բնականաբար, ներկայացնում էր Կարաբեքիրի տեսակետները: Նա լիովին գտնվում էր Կարաբեքիրի ազդեցության տակ:

Սակայն, այդ բոլորով հանդերձ, Մդիվանու և Կարաբեքիրի տեսակետների միջև մի կարևոր հարցի կապակցությամբ կար արմատական տարբերություն:

Մդիվանին խնդիր ուներ ռուսական զորքերի միջոցով, թուրքերի աջակցությամբ, գրավել Վրաստանն ու Հայաստանը: Այդ պահին դա էր ռուսական դիվանագիտության հիմնական խնդիրն Անդրկովկասում: Իսկ Կարաբեքիրն, ընդհակառակը, ռուսներին հրահրելով ներխուժել Վրաստան ու Հայաստան, հեռագնա ծրագիր ուներ՝ օգտվել ստեղծված իրավիճակից և գրավել Բաթումը: Նա կարծում էր, որ ինչպես Հայաստանը ծնկի բերելու համար Թուրքիան ստացավ Կարսը, այնպես էլ Վրաստանի խորհրդայնացմանը օժանդակելու համար թույլտվություն կստանա գրավել Բաթումը:

Ի պատիվ Լեգրանի, պետք է ասել, որ նա բոլորովին չէր հավատում ո՛չ Կարաբեքիրին և ո՛չ էլ Մդիվանուն:

Նոյեմբերի 26-ին Լեգրանը Չիչերինին և Օրջոնիկիձեին հեռագրում է. «Կառավարական ճգնաժամը լուծվել է փոխզիջման հիման վրա, կաբինետի մեջ մտել են ռուսական կողմնորոշման կողմնակիցները, նույն թվում Տերտերյանը և Դրոն: Մդիվանու հաղորդումներից երևում է, որ նա ընդհանրապես անհրաժեշտ չի գտնում Հայաստանի կապակցությամբ թուրքերին որևէ պայման դնել միջնորդությունից թուրքերի հրաժարվելու պատճառով:

Այդ համարում եմ սխալ, անհրաժեշտ է Մդիվանուն անհապաղ ցուցում տալ Հայաստանի հետ հաշտության պայմանագրի ընդունելի պայմանների վերաբերյալ, կարծում եմ, Ալեքսանդրապոլը և երկաթուղին, բացառությամբ Կարսի ճյուղի, ամեն դեպքում պետք է թողնել Հայաստանին: Թուրքերի կողմից այս պայմանները կատարելու դեպքում միայն, նրանց և՛ Վրաստանի, և՛ Բաթումի վերաբերյալ ծրագրերին կարելի է վստահել»[1]:

Լեգրանը խիստ անհանգստացած էր Ալեքսանդրապոլում Մդիվանու վարած թուրքամետ քաղաքականությունից: Նա նամակներով ու հեռագրերով ռմբակոծում էր Չիչերինին և Օրջոնիկիձեին: Ընդ որում, Լեգրանի նամակներն ու հեռագրերը դիվանագիտական բնույթ չէին կրում, դրանցում բացեիբաց քննադատվում էր Մդիվանու թուրքամետ քաղաքականությունը:

[1] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 249.

Այդ առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում Լեգրանի նոյեմբերի 28-ին կազմած երկու փաստաթղթերը:

Նախ, անդրադառնանք նոյեմբերի 28-ին Չիչերինին ուղարկված նամակին, որում Լեգրանը փայլուն վերլուծում է Հայաստանի ներքին իրադարձությունները, Ադրբեջանի ազգայնական, թուրքամետ քաղաքականությունը և, որ ամենակարևորն է, մատնանշում քեմալականության վտանգը:

Լեգրանը գրում է.

1. «Բանակը (Հայաստանի – Լ. Խ.) դրսևորել է մարտունակության լիակատար բացակայություն: Հենց կառավարության խոստովանությամբ, ռազմական գործողությունների ընթացքում, որոնք հանգեցրին Կարսի հանձնմանը և հետագա գործողությունների ընթացքում, գրեթե կորուստ չի տրվել, բանակը նահանջել է առանց կռվի, պաշտոնական անձինք լքում էին իրենց պաշտոնները: Հրամանատարությունն ու կառավարությունը խուճապի են մատնվել:

Աղետի արդյունքում դաշնակցություն կուսակցության մեջ նշմարվում է բեկում, նրանք գիտակցում են Թուրքահայաստանը զավթելու իրենց քարոզչության, դեպի Սևրի պայմանագիրը կողմնորոշվելու սխալականությունը և այլն»:

Լեգրանը նշում է, որ ընթացիկ քաղաքականության խնդիրների կապակցությամբ դաշնակցության մեջ ստեղծվել է երկու հոսանք: Դրանցից առաջինը ունի Օհանջանյանի աջակցությունը և մերժում է Խորհրդային Ռուսաստանի օգնությունը, վախենալով, որ զինված ուժերով Ռուսաստանի ամեն մի իրական աջակցություն կհանդիսանա Հայաստանի խորհրդայնացման լոկ առաջին փուլ: Բացի դրանից, նրա ներկայացուցիչները ենթադրում են, որ շուտով Անտանտը, քեմալականների հետ դաշինքի մեջ մտած, Ռուսաստանին դուրս կմղի հարավային Կովկասից, և Հայաստանը Թուրքիայի հետ կմնա մեն-մենակ: Այդ պատճառով էլ նշված հոսանքը «ձգտում է ամենալայն զիջումների գնով թուրքերի հետ ինքնուրույն պայմանագիր կնքել և առաջ է քաշել նախագիծ՝ բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներից կազմել կառավարություն, որը, հրաժարվելով նախկին կառավարության մեծ հավակնություններից, կարժանանա թուրքերի վստահությանը և նրանց կհաշտեցնի իր ուժեղ հարևանի՝ Թուրքիայի հետ խաղաղ ապրել ցանկացող Հայաստանի գոյության փաստի հետ: Այդ հոսանքը կուսակցության ներսում պարտություն է կրել, թուրքամետ կոալիցիայի մտահղացումը մերժվել է, և նոր կառավարու-

թյունը, որի փաստական ղեկավարը Դրոն է, իրեն համարում է ռուսամետ, ցանկանում է հենվել Խորհրդային Ռուսաստանի օգնության վրա: Նա չի վախենում Հայաստանի ինքնուրույնության կորստից, համենայն դեպս խոսքով ընդունում է, որ Հայաստանը կարող է գոյություն ունենալ միայն որպես Խորհրդային Ռուսաստանի դաշնային մաս: Որքանով է ամուր և անկեղծ այդ տրամադրությունը, առայժմ դժվար է ասել: Բոլոր դեպքերում, ես գտնում եմ, որ դաշնակցություն կուսակցության մեջ խոր խմորումների նշանները առկա են, պարզորոշ ուրվագծվում է պառակտման գիծը, և կուսակցության հետագա ճակատագիրը շատ բանով կախված է լինելու մեր վարքագծից»: Ամփոփելով իր միտքը, Լեգրանը նշում է, որ այդ հոսանքների կողքին, դեռ ավելի վաղ, առաջ է եկել դաշնակցությունից անջատված երիտասարդների մի խումբ, որը բացահայտորեն կանգնած է Խորհրդային Հայաստանի պլատֆորմի վրա: Այն իրեն անվանում է «Զախ ինտերնացիոնալիստ դաշնակցականներ»: Զախ դաշնակցականները կազմակերպություններ ունեն բանվորների շրջանում և զորամասերում, բայց խորհրդարանում՝ ազդեցություն չունեն:

2. Այնուհետև Լեգրանն անցնում է Ադրբեջանի և Թուրքիայի նկատմամբ վարվող քաղաքականության վերլուծությանը. «Ադրբեջանում մեր ռազմական քաղաքականությունը շարունակում է իր սխալները, որոնք ես մշտապես հարկադրված եմ եղել մատնանշել, որոնց վերացման ուղղությամբ, սակայն լուրջ միջոցներ ձեռք չեն առնվել: Զանգեզուր են նետվել թաթարական (ադրբեջանական – Լ. Խ.) զորամասեր, չմտածված կերպով ուղարկվել են նաև թուրք գերիների ջոկատներ, որոնք ավերել են գյուղերը: Արդյունքը եղավ ամբողջ բնակչության ապստամբությունը, որը շատ դժվարությամբ ճնշվեց... Նախիջևանում մեր ջոկատը երկար ժամանակ թուրքերի հետ համատեղ գործել է զանգեզուրցիների դեմ նաև Օրդուբադի շրջանում: Ներկայումս, ըստ համառոտ տվյալների, դարձյալ թուրքերի հետ միասին Շահթախտ կայարանի շրջանում մասնակցում են Հայաստանի դեմ հարձակմանը և դա կատարվում է հենց այն ժամանակ, երբ մենք հանդես ենք գալիս որպես միջնորդներ:

Դժբախտությունն այն է, որ մեր հրամանատարությունը ենթարկվում է Ադրբեջանի ազգայնական շրջանների ազդեցությանը, և դրա հետ մեկտեղ բանակն էլ զուրկ է լավ կոմիսարական կազմից»:

Անդրադառնալով Թուրքիայի նկատմամբ վարվող քաղաքա-

կանությանը, Լեգրանը գրում է. «Մեզ սպառնում է հաղթական քեմալականացման գործընթացում խեղդվելու վտանգը՝ նախ Հայաստանում, իսկ հետո՝ կարող է պատահել և Վրաստանում: Անգամ ընկ. Մդիվանին, չնայած քեմալականների մոտ կարճատև գտնվելուն, վստահությամբ է համակվել Հայաստանի խորհրդայնացման նրանց ծրագրերի նկատմամբ և առաջարկում է այսօր օգտագործել թուրքերի կողմից ստեղծված «Խորհրդային Հայաստանի հեղկոմը»:

Հայ-թուրքական հարցում մենք չունենք որոշակի գիծ կամ նման որևէ բան և քարշ ենք գալիս դեպքերի պոչից»[1]:

Լեգրանը վերջին փորձերն էր անում կանխելու թուրքամետ խմբի հակահայկական ձեռնարկումներն Ալեքսանդրապոլում:

Նույն օրը՝ նոյեմբերի 28-ին, Լեգրանն ավելի խիստ հեռագիր է ուղարկում Չիչերինին և Օրջոնիկիձեին. «Այսօր սպասում ենք թուրքերի կողմից հաշտության պայմանների հայտարարմանը, ուղիղ գծով Մդիվանուց ստացած նախնական տեղեկությունները հարկադրում են սպասել, որ դրանք ծանր են լինելու: Նկատի ունենալով միջնորդությունից թուրքերի հրաժարվելը, անհրաժեշտ է անհապաղ հրահանգ տալ Մդիվանուն՝ ինչպե՞ս վարվել, ինչպիսի՞ պահանջներ ենք մենք հօգուտ Հայաստանի պաշտպանելու: Մեր շահերից ելնելով, հրամայական անհրաժեշտություն եմ համարում Ղարաքիլիսա-Ալեքսանդրապոլ-Էրիվան-Նախիջևան երկաթգիծը Հայաստանին մնալը: Խնդրում եմ անհապաղ հայտնել, եթե թուրքերն իրոք առաջարկեն ծանր պայմաններ, Հայաստանի կառավարության խնդրանքի դեպքում, որն անկասկած կլինի, Հայաստանին ցույց կտրվի՞ ռազմական օգնություն՝ մեր զորքերն այնտեղ մտցնելով: Համաձայն Բաքվում Ստալինի եղած ժամանակ մշակված հրահանգների, իմ կողմից հայերին համապատասխան հավաստիացումներ են արվել: Օհանջանյանի կառավարությունը և նրան աջակցող խումբը, որը ձգտում էր Խորհրդային Ռուսաստանի թիկունքում ինքնուրույն համաձայնության գալ թուրքերի հետ, պարտություն է կրել: Իշխանության ղեկի մոտ է Դրոյի կառավարությունը, որն իրեն հայտարարել է Ռուսաստանի հետ Դաշնության և Հայաստանում խորհրդային կարգերի ստեղծման կողմնակից: Դրոն համաձայնություն է փնտրում մեզ հետ: Կարո՞ղ ենք մենք, արդյոք, զինված ուժերի անհրաժեշտության դեպքում, Դրոյին երաշխավորել Խորհրդային

[1] Նույն տեղում, թ. 252-253:

Ռուսաստանի աջակցությունը, եթե Հայաստանը պահանջի այն տարածքները, որոնց մեջ կմտնի իմ նշած երկաթուղին, պայմանով, որ կազմվի Հայաստանի խորհրդային կառավարություն՝ կոմունիստական մեծամասնությամբ և մի քանի հոգի Դրոյի խմբից:

Մդիվանու 26-ի և 27-ի այսօր ստացված հաղորդագրությունները կասկած են առաջացնում, անգլիացիների դեմ անզիջում պայքարի ֆրազները քիչ են համապատասխանում հունական զորքերի հարձակումը դադարեցնելու մասին Անտանտի հրամանի հետ:

Հրաժարումը միջնորդությունից, թուրքերի կողմից հայկական հեղկոմի ստեղծումը, երեկ հայկական հրամանատարությանը ներկայացված նրանց նոր պահանջը՝ զորքերը հետ քաշել Շահթախտ կայարանին սահմանակից Շարուրի գավառի հարավարևելյան մասից՝ այդ ամենը վկայում են, որ թուրքերը ձգտում են մեկուսացնել մեզ և նախաձեռնությունը պահել իրենց ձեռքում:

Իրադրությունը պահանջում է արագ և հաստատուն որոշումներ: Կովկասում մեզ անհրաժեշտ է ինքնուրույն գործողությունների ծրագիր, որի հետ թուրքերը հարկադրված կլինեն հաշվի նստել: Այդ կապակցությամբ Մդիվանու վարքագիծը բոլորովին անորոշ է, և նա ամբողջովին գտնվում է թուրքական ծրագրերի ազդեցության տակ, որոնց մասին նրան իրազեկ են պահում:

Ավարտվե՞լ է արդյոք զորքերի կենտրոնացումը սահմանում, ի՞նչ ուժերով և ի՞նչ ժամկետում մենք կարող ենք մտնել Հայաստան, որտե՞ղ են Հեղկոմի մեր թեկնածուները, կա՞ արդյոք նրա կազմում փոփոխություն»[1]:

Այս փաստաթուղթը պարզաբանումների կարիք չունի: Միայն նկատենք, որ Լեզրանի առաջարկի համաձայն Նախիջևանը պետք է մնար Հայաստանի կազմում: Մինչդեռ, ինչպես հաղորդում էր Մդիվանին, թուրքերը գտնում էին, որ Նախիջևանը չի կարելի տալ Հայաստանին և նախապատրաստվում էին գրավել այն[2]:

Լեզրանի նոյեմբերի 26-ի հեռագրի կապակցությամբ Չիչերինը նոյեմբերի 27-ին հեռագրում է Օրջոնիկիձեին. «Անհապաղ հայտնեցեք, ինչպե՞ս են ընթանում բանակցություններն Ալեքսանդրապոլում, ինչու՞մն է արտահայտվում Մդիվանու մասնակցությունը, թող նա հայտնի վերջին տեղեկությունները: Մեզ առանձնա-

[1] Նույն տեղում, թ. 255-256:
[2] Նույն տեղում, ֆ. 85, ց. 14, գ. 50, թ. 1:

պես անհրաժեշտ է հասնել այն բանին, որ հայ-թուրքական սահմանագծումները հանձնվեն մեր մասնակցությամբ կազմված հատուկ հանձնաժողովի լուծմանը: Թող Մդիվանին մեզ տեղյակ պահի այն ամենի մասին, ինչ կատարվում է այնտեղ»[1]:

Չիչերինի հեռագրում դրված հարցերը հետևանք են այն բանի, որ Մդիվանին իր գրությունները Լեգրանի միջոցով (Բաքվի և Մոսկվայի հետ Ալեքսանդրապոլից կապ չկար) ուղարկում էր միայն Ստալինին և Օրջոնիկիձեին: Նրա հեռագրերը վերնագրված են այսպես. «Հայաստանում Ռուսաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցչություն՝ Ստալինի և Օրջոնիկիձեի համար»[2]: Չիչերինը ոչ մի տեղեկություն չուներ, թե Ալեքսանդրապոլում ինչ է կատարվում:

Նոյեմբերի 29-ին Լեգրանը հեռագրում է Մդիվանուն՝ պատճենը ուղարկելով Օրջոնիկիձեին և Չիչերինին.

«Ստացե՞լ եք Դուք, արդյոք, թուրքական կառավարության պաշտոնական ծանուցումը մեր միջնորդությունից հրաժարվելու մասին, ի՞նչ պայմաններով են թուրքերը մտածում հաշտություն կնքել Հայաստանի հետ, ի՞նչ են նրանք հաղորդել Ձեզ այդ մասին, ի՞նչ հայտարարություններ են արվել Ձեր կողմից: Չի կարելի կրավորական վերաբերվել Հայաստանի հարցից մեզ մեկուսացնելու թուրքերի ձգտմանը: Կարաբեքիրը լրացուցիչ պահանջել է զորքերը հետ քաշել Շահթախտի շրջանից և Շարուրի գավառի մի մասից՝ թուրքերն իրենց համար ազատում են Նախիջևանը: Տեղեկություններ կան Անտանտի հրամանով հույների հարձակումը դադարեցնելու մասին, հաջողվե՞լ է Ձեզ արժանահավատ տեղեկություններ ստանալ հունական ճակատի, Կիլիկիայի և Միջագետքի մասին: Կարաբեքիրի բանակի կազմում կա ինչ-որ մուսավաթական զորամաս, ի՞նչ է Ձեզ հայտնի այդ մասին: Ո՞վ է մտնում թուրքերի կողմից կազմված հեղկոմի կազմի մեջ, տեղական հայ կոմունիստնե՞րը, թե այն կազմված է այլ կերպ: Պետք է նկատի ունենալ, որ մեր ընկերներն այդ հեղկոմ չեն կարող ուղարկվել, ընդհանրապես, հեղկոմի կապակցությամբ թուրքերի հորինածը նվազագույն վստահության իսկ արժանի չէ, քանի դեռ նրանք շարունակում են Հայաստանում վարել բացարձակ ինքնուրույն քաղաքականություն և չեն ցանկանում ընդունել մեր

---

[1] **Ս. Տ. Ալիխանյան**, Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Երևան, 1964, էջ 175:

[2] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 246, 251, 259:

միջնորդությունը: Դա հարկավոր է այս կամ այն ձևով ի ցույց դնել: Դրոն հայտարարել է, որ առաջիկա օրերի ընթացքում կառավարությանը կստիպի որոշում ընդունել Հայաստան խորհրդային զորքեր մտցնելու մասին»[1]:

Մդիվանին, Խորհրդային Ռուսաստանի, Ստալինի կողմից երաշխավորված պաշտոնական ներկայացուցիչն էր Ալեքսանդրապոլում: Լեգրանն ի պաշտոնե իրավունք չուներ նման հեռագիր տալ, դա դուրս էր գալիս նրա իրավասության շրջանակներից: Լեգրանն այդ հեռագրով մեկ անգամ ևս մարտահրավեր էր նետում Ստալինի խմբին:

Ոչ Չիչերինի և ոչ էլ Լեգրանի հեռագրերին Մդիվանին չի պատասխանում: Նոյեմբերի 29-ին նա Օրջոնիկիձեին գրում է, որ ինքը Չիչերինին չորս ծածկագիր է ուղարկել թուրքերի ծրագրերի մասին, Ալեքսանդրապոլում ավարտել է իր անելիքները և ցանկանում է մեկնել այնտեղից[2]:

Մդիվանու տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը: Նա Չիչերինին ոչ մի ծածկագիր չէր ուղարկել: Նրա բոլոր ծածկագրերն ուղարկվել էին միայն Ստալինին և Օրջոնիկիձեին: Լեգրանն իրեն իրավունք չէր վերապահել Երևանով Ստալինին և Օրջոնիկիձեին ուղարկված գրությունները հաղորդել Չիչերինին:

Չնայած Մդիվանու խնդրանքին, նրան հետ չկանչեցին: Նա Ալեքսանդրապոլում դեռ անելիքներ ուներ: Նոյեմբերի 29-ին կարմիր բանակը պետք է սկսեր Հայաստանի ռազմակալումը: Այդ կարևոր պահին Մդիվանու Ալեքսանդրապոլում գտնվելը Ռուսաստանի համար անհրաժեշտություն էր: Նա պետք է կարգավորեր հայկական տարածքների բաժանումը, ռուս-թուրքական հարաբերությունները, թույլ չտար որպեսզի բախումներ առաջանան ռուսական և թուրքական զինված ուժերի միջև: Այդ խնդիրը, իհարկե, կարող էր դրվել նաև Լեգրանի վրա, և դա միանգամայն ճիշտ կլիներ, սակայն տվյալ դեպքում, թուրքամետ խմբի ծրագրերի իրականացման տեսանկյունից, Ստալինը նպատակահարմար համարեց այդ խնդրի իրականացումը թողնել Մդիվանուն:

Մդիվանու խնդիրների մասին քաջատեղյակ էր նաև Հայաստանի Հանրապետության Ալեքսանդրապոլում գտնվող պատվի-

---

[1] Նույն տեղում, թ. 259:

[2] **Ս. Տ. Ալիխանյան**, Սովետական Ռուսաստանի դերը..., էջ 175:

ռակությունը: Նոյեմբերի 29-ին Ալ. Խատիսյանը հեռագրում է իր կառավարությանը. «Մդիվանու դերն այստեղ վնասակար է մեր շահերի համար: Նա գործում է բացառապես իբրև կուսակցական, Հայաստանը սովետացնելու նպատակով»[1]:

* *
*

Ռուսական զորքերի կենտրոնացումը Հայաստանի սահմաններում նոյեմբերի 28-ին արդեն ավարտված էր: Հարձակումը պետք է սկսվեր Ղազախից: Մանրամասն մշակված էր Հայաստանի գրավման ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքական ծրագիրը: Հայաստան մտնելու համար առանձնացվում է չորս գնդերից բաղկացած առանձին առաջապահ զորամիավորում, որի հրամանատար է նշանակվում 11-րդ բանակի 18-րդ հեծելազորային դիվիզիայի հրամանատար Պ. Կուռիշկոն: Դրա կազմի մեջ էր մտնում նաև հայկական առանձին հրաձգային գունդը:

Նոյեմբերի 28-ին 11-րդ բանակի հրամանատար Ա. Գեկկերն արձակում է հետևյալ հրամանը. «Հայաստանում հեղափոխական իրադարձություններին աջակցելու համար այդ ճակատի զորամասերի խումբը 18-րդ հեծելազորային դիվիզիայի հրամանատար ընկ. Կուռիշկոյի ընդհանուր հրամանատարությամբ և բանակի հրամանատարի անմիջական ղեկավարությամբ օգնության է գնում ապստամբներին»[2]:

Հայաստանը գրավելու գործում հայկական հրաձգային գնդին առանձնահատուկ նշանակություն էր տրվում: Այդ մասին Գեկկերի հրամանում ասվում է. «Հրամայում եմ. 1. Հատուկ խնդիր ունեցող գունդը (Հայկական) առանձնացնել և դնել Ռազմհեղխորհրդի լիազոր ընկ. Ավիսի տրամադրության տակ՝ ստացված վերջին քաղաքական հրահանգների համաձայն օգտագործելու համար: 2. Այն դեպքում, եթե Հայկական գնդի համար անհնարին լինի կատարել իր վրա դրված խնդիրը, նրան աջակցություն ցույց տալ՝ Ձեզ վստահված խմբից ըստ Ձեր հայեցողության զորամասեր առանձնացնելով: 3. Հատուկ գնդի առաջխաղացման և ստեղծվող իրադրության մասին անհապաղ զեկուցել ուղիղ հաղորդալարով: 4. Ամբողջ խմբին՝ լինել լիակատար մարտական

---

[1] **Մ. Արզումանյան**, նշվ. աշխ., էջ 346:

[2] **И. Таирян**, XI Красная Армия в борьбе за установление и упрочение Советской власти в Армении, Ереван, 1971, с. 145.

պատրաստության մեջ անհապաղ հարձակման անցնելու հատուկ հրահանգի համաձայն, որը կտրվի՝ նայած Ձեր խմբի ճակատամասի մարտական ու քաղաքական իրադրությանը: 5. Ստացված և տրված կարգադրությունների մասին զեկուցել»[1]:

Հայկական գնդի գործոնը պայմանավորված էր քաղաքական հանգամանքներով: Բոլշևիկները ցանկանում էին Արևմուտքին ցույց տալ, որ Հայաստանի խորհրդայնացումը կատարվում է հայ ժողովրդի ցանկությամբ և հայկական զորքերի միջոցով, առանց Ռուսաստանի մասնակցության, որպեսզի Անտանտն առիթը չօգտագործի Անդրկովկաս զորք մտցնելու համար:

Միջազգային բախումներից խուսափելու համար Ռուսաստանը պաշտոնապես զորք չէր մտցնում Հայաստան: Ռուսաստանի զինված ուժերը հանդես էին գալիս Հայկական գնդին ոչ պաշտոնապես աջակցողի դերում:

Գործողություններն սկսվում են նոյեմբերի 29-ի առավոտյան ժամը 6-ին: Հարվածող զորամասը Կուռիշկոյի հրամանատարությամբ անցնում է Հայաստանի սահմանը: Բանակի հետ միասին Հայաստան մտավ նաև Հայհեղկոմը: Նույն օրը ռուսական զորամասերը գրավեցին Իջևանը: 11-րդ բանակի հրամանատարության զեկուցագրում այդ մասին ասվում է, որ, առանց հակառակորդի կողմից դիմադրության, Հայկական առանձին և 178-րդ հրաձգային գնդերը զավթել են Քարվանսարան (Իջևան): Ռուսական զորքերը հարձակվում էին երեք ուղղությամբ: Հայկական բանակը, որը, ինչպես վերը տեսանք, լիովին բարոյալքված էր, ոչ մարտունակ, երկիրը գրեթե առանց դիմադրության զիջել էր թուրքերին, բնականաբար, այս ճակատում ևս անզոր գտնվեց հայրենիքը պաշտպանելու գործում:

Գրավելով Իջևանը՝ Հայհեղկոմը նոյեմբերի 29-ին Հայաստանի աշխատավորությանն ուղղված մի հռչակագիր է ընդունում, որում ասվում էր. «Հայաստանի ապստամբ աշխատավոր ժողովրդի կամքով ու ցանկությամբ Հայաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցությունն այսօրվանից Հայաստանը հայտարարում է ***Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն***»[2]:

Նույն ժամանակ, երբ ռուսական զորքը, գրավելով Իջևանը, շարժվում էր դեպի Դիլիջան, Լեգրանը Երևանում եռանդուն գոր-

---

[1] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան..., էջ 399:
[2] Նույն տեղում, էջ 403:

ծունեություն է ծավալում Հայաստանն անարյուն խորհրդայնացնելու համար:

Նոյեմբերի 29-ին նա վերջնագրի ձևով Հայաստանի կառավարությանն անում է հետևյալ հայտարարությունը. «Ռուսաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն որոշել է Հայաստանում մտցնել խորհրդային կարգեր: Հայաստանի Հեղկոմն արդեն ոտք է դրել Հայաստանի հողի վրա: Դանդաղելը հղի է ծանր հետևանքներով: Ես ուզում եմ իմանալ՝ ի՞նչ է լինելու ձեր դիրքը»: Հաջորդ օրը ներկայացվեց Հայաստանի խորհրդայնացման գրավոր պահանջ[1]:

«Այսպես, ուրեմն, մի կողմից թուրքերն էին սպառնալիքով և վերջնագրերով խոսում, մյուս կողմից՝ հայ և ռուս բոլշևիկները,– գրում է Վրացյանը,– Հայաստանն ընկել էր երկու կրակի միջև: Կառավարությանն ուրիշ ելք չէր մնում, բայց եթե ընտրելով փոքրագույն չարիքը, տեղի տալ և հասկացողության գալ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի հետ: Հայաստանի խորհրդայնացումը այլևս դառնում էր անխուսափելի»[2]:

Այսպիսով, չնայած Քաղբյուրոյի Հայաստան զորք չմտցնելու մասին նոյեմբերի 27-ի որոշմանը, այնուամենայնիվ, ռուսական զորքերը Օրջոնիկիձեի կարգադրությամբ նոյեմբերի 29-ին մտան Հայաստան:

Նոյեմբերի 29-ին Օրջոնիկիձեն հեռագրում է Լենինին և Ստալինին. «Կենտկոմի որոշումը հենց նոր ստացա, նախապատրաստական աշխատանքների համար Ղազախի շրջան ուղարկված Հայհեղկոմը, Քարվանսարայի և Դիլիջանի շրջանների գյուղացիներից ստանալով զանգվածային համախոսականներ, Հայաստանը հռչակել է Խորհրդային»[3]: Նույն օրն Օրջոնիկիձեն ուղիղ գծով խոսակցություն է ունենում Տրիֆոնովի հետ, հայտնելով հետևյալը. «Հենց նոր լուր ստացա, որ Հայհեղկոմն այսօր առավոտյան անցել է Հայաստանի սահմանը»: Նա նաև հայտնում է, որ բնակչությունը հրճվանքով է ընդունում Հայհեղկոմին, նախապես զանգվածային հրավերների դիմումներ է ուղարկել և մատնանշում, որ իշխանությունները փախել են, բանակը՝ ցրվել[4]:

Օրջոնիկիձեն Տրիֆոնովին ցուցումներ է տալիս անհրաժեշտ

---

[1] **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, էջ 500:
[2] Նույն տեղում:
[3] РГАСПИ, ф. 85, оп. 14, д. 33, л. 2.
[4] Նույն տեղում, գ. 32, թ. 1:

զինված ուժերով Հայհեղկոմին օգնություն ցույց տալու մասին: Տրիֆոնովի հետ ուղիղ գծով ունեցած խոսակցությունը Օրջոնիկիձեն ամփոփում է հետևյալ կերպ. «... Ուրեմն, մենք Հայաստանի Հեղկոմին օգնելու մասին այստեղ ռազմահեղափոխական խորհրդի հետ մասնավոր կարգով կընդունենք այս կամ այն որոշումը, այն դեռ պաշտոնապես չձևակերպելով... Հայաստանի Հեղկոմին ոչ-պաշտոնական օգնություն ցույց տալու հարցը կհամարենք ռազմաճակատի ռազմահեղափոխական խորհրդի որոշումը: Դա կբացառի ամեն տեսակի խոսակցություն»[1]:

Այսպիսով, ինչպես ցույց են տալիս փաստաթղթերը, կարմիր բանակի զորամասերը Հայաստան մտցնելու ծրագիրն իրագործվում էր Օրջոնիկիձեի անձնական ղեկավարությամբ և պատասխանատվությամբ:

Հայաստան զորք մտցնելու որոշումը պաշտոնական բնույթ չուներ: Իրադարձությունների հետագա բարդացումների դեպքում Մոսկվան իր համար հնարավորություն էր թողնում այդ որոշումը հայտարարելու տեղական հրամանատարության ինքնագործունեության արդյունք և պատժելու «մեղավորներին»: Իսկ դա կարող էր տեղի ունենալ միայն այն դեպքում, եթե Անտանտն այդ միջադեպն առիթ դարձնելով որոշեր զորք մտցնել Անդրկովկաս: Լեգրանն այդ ծրագրի մասին ոչ մի տեղեկություն չուներ: Հակահայկական խաղի կազմակերպիչները նրան չէին վստահում:

Նոյեմբերի 29-ին Լեգրանը ստանում է Օրջոնիկիձեի հետևյալ հեռագիրը. «Հենց նոր ստացված տեղեկության համաձայն, Դիլիջանի շրջանի գյուղացիներից ստանալով մասսայական դիմումներ, Հայաստանի Հեղկոմը անցել է սահմանը, որին բնակչությունը դիմավորում է ցնծությամբ: Ձեռնարկեցեք բոլոր միջոցները Երևանը պաշտպանելու համար: Տերտերյանին ու Դրոյին տվեք Հեղկոմի կազմի մեջ մտնելու և դաշնակցության անվտանգությունը ապահովելու երաշխիքներ»[2]: Ռուսական զորքերի Հայաստան մտնելու մասին Օրջոնիկիձեն Լեգրանին տեղյակ չի պահում:

Լեգրանը, ստանալով ռուսական զորքերի Հայաստան մտնելու մասին լուրը, նոյեմբերի 29-ին հեռագրում է Օրջոնիկիձեին այն մասին, որ ռուսական 40 հոգանոց ջոկատը Քարվանսարայում

---

[1] **Ս. Տ. Ալիխանյան**, Գ. Կ. Օրջոնիկիձեն և ..., էջ 42:
[2] Նույն տեղում, էջ 41:

զինաթափել է տեղական կայազորը, ուր հոգու ձերբակալել և հայտնել, որ «Կենտրոնական իշխանությունից հրաման է ստացվել Կարմիր բանակի Հայաստան մտնելու մասին»: Նա անհրաժեշտ է համարում շտապ միջոցներ ձեռք առնել միջադեպը վերացնելու, այդ ջոկատը Քարվանսարայից Ադրբեջան հետ քաշելու համար: Այդպիսի միջադեպերը, Լեգրանի կարծիքով, քայքայում են իրենց ամբողջ աշխատանքը և կարող են խառնել բոլոր հաշիվները: Անհրաժեշտ են վճռական միջոցառումներ՝ կանխելու համար նման միջադեպերը և Ռուսաստանի ու Հայաստանի զորամասերի հնարավոր ընդհարումները: «Նոր կառավարությունը,– հայտնում է Լեգրանը,– պատրաստվում է կամավոր հրավիրելու մեր զորքերին... Այսպիսի պահին անիմաստ ելույթներ ունենալը հանցագործություն է: Մենք դաշնակցություն կուսակցության խոր պառակտման նախօրյակին ենք, խորհրդային թևը տիրում է կառավարությանը և մեծ հաջողություններ ունի: Խնդրում եմ, անհապաղ անհրաժեշտ կարգադրություններ անել Ղազախում գտնվող հրամանատարությանը և այդ մասին հայտնել ինձ, որպեսզի հնարավոր լինի միջադեպն անվնաս վերացնել»[1]:

Լեգրանն անհանգստացած էր, նա ցանկանում էր Հայաստանը խորհրդայնացնել առանց արյունահեղության: Նոյեմբերի 30-ին նա ռադիոյով «հույժ շտապ», «առանց հերթի» հաղորդում է Օրջոնիկիձեին և Չիչերինին.

«Մեր զորքերի և Հեղկոմի առաջխաղացումը պետք է անմիջապես կանգնեցնել և հետաձգել մինչև դեկտեմբերի 3-ը: Դրոն պարտավորություն է վերցրել այդ ժամկետում կատարել բոլոր անհրաժեշտ միջոցառումները, որպեսզի մեր զորքերը հնարավորություն ունենան, առանց կառավարության և բանակի առանձին զորամասերի դիմադրության, մտնել Հայաստան: Պետք է ենթարկվել այդ անհրաժեշտությանը, առանց կարիքի չարագացնել իրադարձությունները, հակառակ դեպքում մեր ներխուժումը կընդունի՝ թուրքերի հետ միասին Հայաստանի դեմ ուղղված թշնամական գործողությունների բնույթ: Այդպիսի դեպքում ես վճռականորեն իմ վրայից հանում եմ իրադարձությունների հետագա զարգացման համար պատասխանատվությունը: Խնդրում եմ, անմիջապես համապատասխան ցուցումներ տալ Հեղկոմին ու տեղական հրամանատարությանը և վերացնել նրանց կողմից

[1] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 262.

չհամաձայնեցված գործողությունների հնարավորությունը: Նույն հեռագրի ստացման և ձեռք առնված միջոցառումների մասին անմիջապես հայտնեք»[1]:

Լեգրանն արյունահեղությունը կանխելու համար Չիչերինին և Օրջոնիկիձեին ակնարկում է ռուս-թուրքական փոխհամաձայնեցված գործողությունները, որի բացահայտումից բոլշևիկները խուսափում էին բոլոր միջոցներով:

Նոյեմբերի 30-ին Լեգրանը հեռագրում է նաև կարմիր բանակի Ղազախի խմբի հրամանատարությանը և «Խորհրդային Հայաստանի Հեղկոմին».

«Քաղաքական իրադրությունը պահանջում է կարմիր բանակի և Հայհեղկոմի հետագա առաջխաղացումը դադարեցնել մինչև դեկտեմբերի 3-ը: Այդ ժամկետում հնարավորություններ կստեղծվեն անարգել շարժման համար: Շարադրվածի մասին շտապ հայտնված է Կովկասյան ճակատի Ռազմահեղափոխական խորհրդի անդամ ընկ. Օրջոնիկիձեին: Մինչև նրանից ցուցումներ ստանալը, պետք է ձեռք առնվեն բոլոր միջոցները, թույլ չտալու գործողություններ, որոնց հետևանքով կարող են առաջանալ զինված ընդհարումներ մեր և հայկական զորամասերի միջև: Ընկ. Բոբրիշչևը գործուղվում է՝ Ձեզ այդ մասին տեղյակ պահելու համար»[2]:

Օրջոնիկիձեն սպասում էր Մոսկվայի կարգադրությանը: Վճռական խոսքը պատկանում էր վերջինիս:

Նոյեմբերի 30-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյի հանձնարարությամբ Լենինը և Ստալինը հեռագրում են Օրջոնիկիձեին. «Քեմալականների հետ Կարսի պատճառով չպետք է պատերազմել, բայց ամեն ինչում նրանց զիջելը ևս անթույլատրելի է: Պետք է քեմալականներից Ալեքսանդրապոլը գրավել խորհրդայնացող Հայաստանի համար: Եթե Խորհրդային Հայաստանը չի պահանջում, որ ռուսական զորքերը մնան Հայաստանում, այդ դեպքում մենք չենք առարկում խորհրդայնացմանը: Խնդրում ենք ստուգել Կարաբեքիրի հայտարարությունը զորքերը (խորհրդային – Լ. Խ.) Հայաստան մտցնելու և թուրքական զորքերը Արևմտյան ռազմաճակատ փոխադրելու մասին, և եթե նրա հայտարարությունը լուրջ դուրս գա, մեզ հիմնավոր տեղեկություն տվեք այդ մասին:

---

[1] Նույն տեղում, թ. 264:

[2] Նույն տեղում, թ. 265:

Կարևոր է ստուգել՝ արդյոք Կարաբեքիրը մեր զորքերը Հայաստան մտցնելու առաջարկությամբ չի՞ մտածում Անտանտի հետ մեզ վաղաժամ կոնֆլիկտի մեջ քաշել և դրանով ազատ արձակել Անտանտի ձեռքերը Բաթումում դեսանտ իջեցնելու համար: Կարելի՞ է արդյոք կարծել, որ քեմալականները չեն հեռացել մեզանից դեպի Անտանտը, ժամանակի՞ն եք համարում արդյոք խոսք բացել քեմալականների և Ռուսաստանի ռազմական դաշինքի մասին, եթե «այո», ապա տվեք հիմքեր: Թուրքիայում, հատկապես քեմալական բանակում, ամբողջ ուշադրությունը կենտրոնացրեք խորհրդային ագիտացիայի վրա, մերկացրեք քեմալականների երկդիմի քաղաքականությունը, թող թուրքական կոմունիստները լայն կամպանիա սկսեն հանուն Ռուսաստանի հետ Թուրքիայի դաշինքի՝ ընդդեմ Անտանտի»[1]:

Ալեքսանդրապոլում Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև պայմանագրի կնքումը խափանելու, Հայաստանի նվաճումն իրականացնելու համար Լենինը և Ստալինը Օրջոնիկիձեին հրահանգում են. «Եթե միջնորդությունից խուսափելը բացառում է Հայաստանի և Թուրքիայի միջև հաշտության բանակցություններին մեր մասնակցելը, ապա ինչպես թուրքերին, այնպես էլ հայերին պետք է հիշեցնել, որ այդ դեպքում Զանգեզուրի և Նախիջևանի հարցը չի կարող հայ-թուրքական կոնֆերանսի առարկա ծառայել, այնքանով, որքանով այդ երկու մարզերն էլ հանդիսանում են վիճելի տարածքներ Հայաստանի և Ադրբեջանի միջև, որի հետ դաշինքի մեջ է Ռուսաստանը»[2]:

Եթե մինչև նոյեմբերի 29-ը Ռուսաստանը կարող էր իր քաղաքականության հիմնական նպատակները վարագուրել դիվանագիտական խաղերով, ապա այժմ նա հարկադրված էր բացել իր խաղաքարտերը:

Հայաստանի համար բախտորոշ այս պահին Լենինը և Ստալինը հրահանգում էին՝ ա) Կարսը թողնել թուրքերին, բ) Հայաստանը խորհրդայնացնել, գ) Ալեքսանդրապոլը տալ Խորհրդային Հայաստանին, դ) Զանգեզուրի և Նախիջևանի հարցը հանել հայ-թուրքական բանակցությունների օրակարգից:

Կարսի հարցում նորություն չկար: Հայաստանի բաժանման ռուս-թուրքական ծրագրով, որին արդեն անդրադարձել ենք, Կարսի ճակատագիրը սկզբունքորեն լուծված էր:

---

[1] **U. S. Ալիխանյան,** Գ. Կ. Օրջոնիկիձեն և…, էջ 44:
[2] РГАСПИ, ф. 85, оп. 14, д. 22, л. 11-12.

Ինչ վերաբերում է ռուսական զորքերով Հայաստանի խորհրդայնացմանը, ապա, ինչպես տեսնում ենք, բոլշևիկյան ղեկավարությունը դեռ շարունակում էր վարել զգույշ քաղաքականություն: Հեռագրում ասվում է, որ Մոսկվան «չի առարկում խորհրդայնացմանը»: Տեքստից նաև երևում է, որ Հայաստանը պետք է խորհրդայնացվեր ռուսական զորքերի ժամանակավորապես Հայաստան մտած ուժերով, որոնք, կատարելով իրենց խնդիրը, պետք է հեռանային այնտեղից: Սակայն, այդ բոլորով հանդերձ, հետագա բարդությունների դեպքում պատասխանատվությունն իր վրայից գցելու հնարավորությունը չկորցնելու համար, Քաղբյուրոն Օրջոնիկիձեին չի հրահանգում՝ զորք մտցնել Հայաստան: Նման պայմաններում Հայաստան զորք մտցնելու ամբողջ պատասխանատվությունն ընկնում էր Օրջոնիկիձեի վրա:

Լենինի և Ստալինի հեռագրից նաև երևում է, որ Քաղբյուրոն այդ ժամանակ համոզված չէր թուրքերի անկեղծության մեջ և հնարավոր էր համարում Անտանտի խառնվելը Անդրկովկասի իրադարձություններին: Հետաքրքիր է նաև հեռագրի այն մասը, որով Քաղբյուրոն արգելում էր Հայաստանին և Թուրքիային տնօրինել Զանգեզուրի և Նախիջևանի ճակատագիրը: Ռուսաստանն այդ հարցը պետք է լուծեր՝ ելնելով կայսրության շահերից:

Օրջոնիկիձեն լավ էր հասկանում իր հետագա կարիերայի համար պահի ճակատագրական լինելը և գործադրում էր բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը իշխանությունն առանց դիմադրության, կամավոր հանձնի բոլշևիկներին:

Ինչպիսի՞ պայմանների դեպքում հայ ժողովուրդը և նրա կառավարությունը կհամաձայնեին առանց կռվի հրաժարվել անկախ պետականությունից և խորհրդայնացնել Հայաստանը: Ստեղծված ծանր իրավիճակում միակ պայմանը, որով կզիջվեր անկախությունը՝ վիճելի համարվող հայկական տարածքները Հայաստանին վերադարձնելու խոստումներ տալն էր: Այդ նպատակին հասնելու համար Օրջոնիկիձեն դիմեց խաբեության:

Նոյեմբերի 30-ին Օրջոնիկիձեի մասնակցությամբ տեղի է ունենում Ադրբեջանի կոմկուսի Քաղբյուրոյի և Կազմբյուրոյի միացյալ նիստ, որը քննարկելով «Հայհեղկոմի հեռագիրը Հայաստանում խորհրդային իշխանություն հռչակելու մասին» հարցը, որոշում է.

«ա) Դաշնակցական դեսպանության ապարատը Հայաստանի

Կենտկոմի և Հայհեղկոմի միջոցով անցնում է Խորհրդային ներկայացուցչությանը: Այդ հրահանգի որոշակի կենսագործումը հանձնարարվում է ընկ. Հուսեյնովին:

բ) Խորհրդի և Հեղկոմի անունից հռչակագրով դիմել հայկական կառավարությանը:

գ) Ուղարկել ողջույն: Մատնանշել, որ Խորհրդային Ադրբեջանի և Խորհրդային Հայաստանի միջև ոչ մի սահման գոյություն չունի:

դ) Զանգեզուրը և Նախիջևանը անցնում են Հայաստանին:

ե) Ղարաբաղի լեռնային մասին ինքնորոշման իրավունք է տրվում:

զ) Խորհրդային Ադրբեջանը Խորհրդային Հայաստանի հետ կնքում է անքակտելի ռազմական և տնտեսական միություն (մասնավորապես նշել նավթի մասին):

է) Այդ հռչակագրի կազմելը հանձնարարել ընկ. Նարիմանովին:

ը) Ռազմածովային ժողկոմին՝ հրաման տալ ամբողջ ճակատով Հայաստանի դեմ ռազմական գործողությունները դադարեցնելու մասին:

թ) Խորհրդի պլենումում Հայաստանում խորհրդային հեղաշրջման մասին հաղորդումը և հռչակագրի հրապարակումը հանձնարարվում է ընկ. Նարիմանովին»[1]:

Այս որոշումն ուներ լոկ մարտավարական նշանակություն, Նարիմանովը հետագայում մինչև վերջ պայքարեց հայկական տարածքներն Ադրբեջանին միացնելու համար:

Որոշման կապակցությամբ ցանկանում ենք ընթերցողի ուշադրությունը բևեռել մի քանի կարևոր հարցերի վրա:

Առաջին. Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ կետը փոփոխված է: Մեզ չհաջողվեց վերականգնել ջնջված և փոխված բառերի բովանդակությունը:

Երկրորդ. Լեռնային Ղարաբաղի բնակչությանը, նույնիսկ վերափոխված տարբերակով, իրավունք էր տրվում ազատորեն ինքնորոշվելու: 95 տոկոս հայ բնակչություն ունեցող Լեռնային Ղարաբաղի հանրաքվեի արդյունքները կասկած չէին հարուցում:

Երրորդ. թե ինչպես են կեղծում պատմությունն Ադրբեջանում, ցույց է տալիս 1989 թվականին Բաքվում Դ. Գուլիևի խմբագրությամբ լույս տեսած Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ նյութերի

[1] Նույն տեղում, ֆ. 17, ց. 12, գ. 2, թ. 50-51.

ժողովածուն, որի մեջ զետեղված վերոհիշյալ որոշման «դ» կետից «Նախիջևանը» պարզապես հանված է, իսկ «ե» կետի վերախմբագրված լինելու մասին ոչինչ չի ասվում[1]:

Չորրորդ. Ադրբեջանի և 11-րդ բանակի զորամասերի կողմից Հայաստանի դեմ ռազմական գործողություններ մղելու մասին Լեգրանի, Չիչերինի և Հայաստանի կառավարության բոլոր պաշտոնական հարցադրումներին Օրջոնիկիձեն պատասխանում էր կտրուկ ժխտումով: Այս որոշմամբ Ադրբեջանի ղեկավարությունը կարգադրում է դադարեցնել Հայաստանի դեմ մղվող ռազմական գործողությունները բոլոր ճակատներում, դրանով իսկ ընդունելով, որ Ադրբեջանը Հայաստանի հետ պատերազմի մեջ է գտնվել:

Հինգերորդ. սույն որոշմամբ Հայաստանի խորհրդայնացումը բնութագրվում է որպես «հեղաշրջում»:

Ադրբեջանի կոմկուսի Քաղբյուրոն և Կազմբյուրոն նոյեմբերի 30-ի նույն նիստում քննարկել են ևս երկու հարց, որոնք առնչվում էին Լեռնային Ղարաբաղի և Զանգեզուրի հետ: Նիստի օրակարգի 5-րդ՝ Շիրվանու հեռագրերը և նրա կողմից Ղարաբաղում կատարված ձերբակալությունները, հարցի վերաբերյալ ընդունվում է հետևյալ որոշումը. «Ղարաբաղի կուսակցական կազմակերպության վիճակը համարել աննորմալ: Կուսակցական աշխատանքի վիճակը պարզելու և կարգավորելու համար ուղարկել 3 հոգանոց հատուկ հանձնաժողով: Ընկ. Շիրվանուն շտապ կանչել զեկուցման և հրահանգավորման համար»:

Օրակարգի 6-րդ՝ Զանգեզուրի փախստականների մասին հարցի վերաբերյալ ընդունվում է հետևյալ որոշումը. «Հանձնարարել Ռազմածովային ժողկոմին՝ կոմիսարիատի կամ դիվիզիայի հրամանատարի միջոցով օգնություն ցույց տալ փախստականներին»[2]:

Երկու որոշումներն էլ միանշանակ ցույց են տալիս, որ Ադրբեջանը, հրապարակայնորեն հայտարարելով Զանգեզուրը, Նախիջևանը և Ղարաբաղը Հայաստանին անցնելու մասին, միաժամանակ, Օրջոնիկիձեի համաձայնությամբ, տարբեր միջոցներով շարունակում էր հայկական տարածքների զավթման իր քաղաքականությունը:

Այն, թե Բաքվի կողմից ինչպես պետք է կարգավորվեր Ղարա-

---

[1] К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР. 1918-1925: Документы и материалы, Баку, 1989, с. 63-64.
[2] РГАСПИ, ф. 17, оп. 12, д. 2, л. 50-51.

բաղի կուսակցական աշխատանքը, բացատրության կարիք չունի: Կարծում ենք, նաև անհրաժեշտություն չկա բացատրել, թե դիվիզիան ինչպես պետք է օգներ Զանգեզուրից փախած ադրբեջանցիներին:

Ինչևիցե, անկախ Ադրբեջանի և Օրջոնիկիձեի իրական ծրագրերից, փաստը մնում է փաստ, որ նոյեմբերի 30-ին Ադրբեջանի կոմկուսի ղեկավարությունը որոշում է ընդունում վիճելի տարածքները Հայաստանին հանձնելու մասին: Դեկտեմբերի 1-ին, հեղկոմի կողմից Հայաստանը խորհրդային հանրապետություն հռչակելու կապակցությամբ, հրավիրվում է Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստ, որտեղ, ողջունելով Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումը, Նարիմանովը և Օրջոնիկիձեն հայտարարում են Զանգեզուրը, Նախիջևանը և Ղարաբաղը Հայաստանին տալու մասին[1]: Դեկտեմբերի 2-ին Օրջոնիկիձեն այդ որոշման մասին հայտնում է Լենինին և Ստալինին[2]: Դեկտեմբերի 4-ին «Պրավդա» թերթում լույս տեսած «Կեցցե՛ Խորհրդային Հայաստանը» վերնագրով հոդվածում Ստալինը ևս հայտնում է այդ տարածքները Հայաստանին հանձնելու մասին[3]:

Բնականաբար, հարց է առաջանում, թե ինչու էին բոլշևիկներն այդպես թմբկահարում Զանգեզուրը, Նախիջևանը և Ղարաբաղը Հայաստանին հանձնելու մասին Ադրբեջանի որոշումը:

Որոշման շուրջ բարձրացված աղմուկն ուներ երկու կողմ: Առաջին՝ Անտանտին, առաջին հերթին Անգլիային, ցույց տալ, որ Ռուսաստանը վիճելի տարածքները տալիս է Հայաստանին, և հայ ժողովուրդն ու դաշնակցությունը իշխանությունը կամավոր հանձնում են բոլշևիկներին, երկրորդ՝ հայ ժողովրդին և դաշնակցությանը ցույց տալ, որ իրենք լուծեցին մի շատ կարևոր խնդիր, որն ի վիճակի չեղավ լուծել Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Բացի դրանից, Օրջոնիկիձեն նոյեմբերի 29-ին Լեգրանին արդեն հայտնել էր նորաստեղծ խորհրդային կառավարության մեջ Դրոյի ու Տերտերյանի մտնելու և դաշնակցությանը անվտանգության երաշխիքներ տալու մասին: Միաժամանակ, Լեգրանին իրավունք էր տրվել դաշնակցության հետ վարվելիք բանակցություններում Հայաստանին Ռուսաստանի անունից որոշ տարած-

---

[1] **Г. К. Орджоникидзе**, Статьи и речи, т. 1, с. 140.
[2] Նույն տեղում, էջ 142:
[3] **Ի. Վ. Ստալին**, Երկեր, հատ. 4, էջ 458-459:

քային զիջումներ խոստանալ:

Խոստումները գրավիչ էին: Հայ ժողովուրդը և Հայաստանի կառավարությունը, եթե նկատի ունենանք թուրքերի անզիջում քաղաքականությունն Ալեքսանդրապոլի բանակցություններում, պետք է ընդունեին այդ առաջարկները և համաձայնվեին խորհրդայնացնել Հայաստանը:

Սակայն, եթե ժողովուրդն արդեն հակվել էր Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուն, ապա Հայաստանի կառավարությունը դեռ տատանվում էր:

Նոյեմբերի 30-ին, Ադրբեջանի կոմկուսի ղեկավար մարմիններ-ի միացյալ նիստից անմիջապես հետո, Օրջոնիկիձեն Լեգրանին հեռագրում է. «Հեղկոմի շարժումը կանգնեցնել ոչ հնարավոր է, ոչ էլ շահավետ, մանավանդ, որ ամեն ինչ ընթանում է անհիվանդագին: Հայկական զորամասերն անցնում են ապստամբների կողմը և մինչև այժմ ոչ մի կրակոց չի եղել: Ադրբեջանն արդեն արձագանքել է և Խորհրդային Հայաստանին է հանձնել Նախիջևանը, Զանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը: Եթե Դրոն քեզ չի խաբում, էլ ինչու սպասել մինչև դեկտեմբերի 3-ը: Բոլոր միջոցները ձեռք առ, որպեսզի նա ճանաչի Հեղկոմը, երաշխավորիր նրա Հեղկոմի մեջ մտնելը և դաշնակների անձեռնմխելիությունը: Այստեղ բոլոր ձերբակալված դաշնակներն ազատվել են»[1]:

Նոյեմբերի 30-ի երեկոյան ժամը 6-ին 11-րդ բանակի զորամասերը գրավեցին Դիլիջանը:

Նույն օրը Օրջոնիկիձեն հեռագրում է Հայհեղկոմին. «Երևանին չլսել և չսակարկել նրա հետ, այլ առաջարկել անձնատուր լինել, որ իշխանությունը հանձնվի կամավոր, առանց որևէ ճղճղոցի ներսում և Եվրոպայում, երաշխավորեցեք նրանց անձեռնմխելիությունը և տվեք հեղկոմի կազմի մեջ մտնելու խոստում, առաջին շրջանում նույնիսկ այդպես էլ արեք»[2]:

Հետաքրքիրն այն է, որ Օրջոնիկիձեն անկեղծ է Հայհեղկոմի հետ, նրանից չի թաքցնում, որ Մոսկվան իշխանությունը Հայաստանում գրավելու նպատակով դաշնակցությանը խաբելու քաղաքականություն է վարում և հետագայում նրան պետք է հեռացնի քաղաքական ասպարեզից: Օրջոնիկիձեն Հայհեղկոմի հետ անկեղծ չէր տարածքային հարցերում, նրան չէր հայտնում, որ այդ բնագավառում ևս վարվում է հայ ժողովրդին և Հայաստանի

---

[1] РГАСПИ, ф. 85, оп. 14, д. 33, л. 11-13.

[2] **Ս. Ս. Ալիխանյան**, Գ. Կ. Օրջոնիկիձեն և .... էջ 46-47:

կառավարությանը խաբելու քաղաքականություն: Նա լավ գիտեր, որ Կասյանը, Մռավյանը, Տեր-Գաբրիելյանը և Բեկզադյանը տարածքային հարցերում դեմ կլինեն Մոսկվայի ծրագրերին:

Դեպքերը զարգանում էին սրընթաց: Կարմիր բանակի զորամասերը շարժվում էին Երևան: Ալեքսանդրապոլի բանակցություններում թուրքերի հետ կապված հույսերն իրենց չարդարացրեցին: Խուսանավել և հարցի որոշումը ձգձգել այլևս հնարավոր չէր: Հայաստանի կառավարությանն անհրաժեշտ էր շտապ և կտրուկ կողմնորոշվել՝ հստակ պատասխան տալ Լեգրանի՝ Հայաստանի խորհրդայնացման նոյեմբերի 29-ի հարցադրմանը:

Վրացյանն այդ մասին պատմում է. «Նոյեմբեր 30-ին, կեսօրից հետո, կառավարությունը մի կարճ նիստում քննեց Լեգրանի դրած հարցը և եկավ եզրակացության, որ Հայաստանի խորհրդայնացումն անխուսափելի է, և երկրի ու ժողովրդի կենսական շահերը պահանջում են այդ ակտը կատարել առանց ցնցումների և արյունահեղության: Բայց վերջնական որոշում տալուց առաջ վճռվեց հարցը քննության դնել նաև կուսակցությունների և խորհրդարանական խմբակների ժողովներում:

Նոյեմբեր 30 լույս դեկտ. 1-ի գիշերը, արտաքին գործոց նախարարության առանձնասենյակում տեղի ունեցավ Հ. Յ. Դաշնակցության Բյուրոյի, Հայաստանի Կենտրոնական Կոմիտեի, խորհրդարանական հատվածի ու կառավարության անդամների և մի շարք պատասխանատու ընկերների համագումար նիստը, լուծելու Լեգրանի առաջադրած խնդիրը:

Նիստի սկզբում ընդհանուր տրամադրությունը անհաշտ էր: Իրար հետևից խոսեցին ընկերներ Հ. Օհանջանյանը, Ս. Արարատյանը, Ա. Հովհաննիսյանը, Ա. Չիլինգարյանը, Վ. Նավասարդյանը և ուրիշներ, որոնք բոլորն էլ անհանդուրժելի էին համարում Լեգրանի պահանջը և առաջարկում էին անմիջապես զենքի դիմել երկիրը բոլշևիկյան նվաճումից պաշտպանելու համար: Ընկերներից մեկը նույնիսկ առաջարկում էր ձերբակալել Լեգրանին ու բոլոր բոլշևիկներին, երկիրը դնել պատերազմական-հեղափոխական վիճակի մեջ և, ինչպես մայիսյան օրերին, հանուն անկախության պաշտպանության, համազգային երկաթե ճակատ ստեղծել կարմիր վտանգի դեմ:

Ճառախոսները հերքում էին այն կարծիքը, թե հայ զինվորը չի կռվի ռուսի դեմ. Հայաստանի անկախության հմայքը այնքան զորավոր է, որ հայ զինվորը կը կռվի բոլոր թշնամիների դեմ: Քաղաքացիական կռիվը անխուսափելի է և վաղ թե ուշ տեղի պիտի ունենա, ավելի լավ է հիմա ընդունել: Թրքական վտանգ. թուրքերը

չեն խփի մեր թիկունքին, որովհետև նրանց համար էլ օգտակար է հակաբոլշևիկ Հայաստանի գոյությունը: Ընկերներից ոմանք համոզված էին, որ մենք հաղթող դուրս կգանք, իսկ ուրիշները հնարավոր էին համարում մեր պարտությունը, բայց գերադասում էին դիմադրել և տեղի տալ միայն բռնի ուժի ճնշման տակ:

Ժողովականներից ոմանք, ինչպես Հ. Քաջազնունին, Դրոն, Ռուբեն Տեր-Մինասյանը ևն. հակառակն էին պնդում և կռիվը բոլշևիկների դեմ համարում էին աղետավոր, որովհետև, շատ հավանական էր, որ կռվի դեպքում կը ստեղծվեր երկու ճակատ, իսկ Հայաստանը անկարող էր միաժամանակ կռվել և՛ բոլշևիկների, և՛ թուրքերի դեմ: Երկիրը կարոտ էր հանգստի, եթե բոլշևիկները կարող են տալ այդ հանգիստը, թո՛ղ տան. չխանգարենք: Մեր պարտականությունն է ժողովուրդը փրկել փոթորիկներից և ո՛չ թե նրան նոր փոթորիկների մեջ նետել:

Բացի այդ, նախորդ զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը հայտնում էր, որ հայ զորքը ի վիճակի չէ որևէ պատերազմ վարելու, իսկ ներկա զինվորական նախարար Դրոն ավելացնում էր, որ, առհասարակ, հայ զորքը չի կռվի ռուս զորքի դեմ: Հետևաբար, կռվի ամեն կոչ ոչ այլ ինչ էր, եթե ոչ աննրելի մի արկածախնդրություն:

Ես էլ էի համոզված, որ մենք խոհեմությունը պիտի ունենայինք խուսափելու նոր պատերազմից, այն էլ Ռուսաստանի դեմ: Քանի որ մեր հաշիվները բոլշևիկների հետ ընդհանուր լեզու գտնելու մասին սխալ էին դուրս եկել, պետք էր հրաժարվեինք իշխանությունից հօգուտ բոլշևիկների՝ գեթ ձևականորեն ապահովելով Հայաստանի անկախության գաղափարը:

Վիճաբանությունները չափազանց բուռն էին ու երկարատև: Կես գիշեր էր արդեն, երբ ինձ կանչեցին ուղիղ հեռագրաթելի մոտ: Ալեքսանդրապոլից, մեր հաշտարար պատվիրակության նախագահ ընկ. Ա. Խատիսյանը հաղորդեց, որ թուրքերը ներկայացրել են հաշտության պայմանները և տվել են վերջնագիր՝ 48 ժամում ընդունելու կամ մերժելու: Ներկայացված պայմանները չափից ավելի ծանր էին: Ընկ. Խատիսյանը խնդրում էր առանց ուշացնելու տալ հրահանգներ, որովհետև թուրքերը շատ էին շտապեցնում: Երևանում կատարվող դեպքերը, որոնց մասին նրանք զարմանալի կերպով լավ էին տեղյակ, ջղայնացնում էին նրանց: Թուրքերը, ըստ երևույթին, վախենում էին իրենց դաշնակից բոլշևիկների խաղերից և շտապում էին օր առաջ ստորագրել հաշտությունը:

Երբ ես վերադարձա հեռագրատնից և կարդացի Քեազիմ Կա-

բաբեքիրի վերջնագիրը և հաշտության պայմանները, սենյակում մի պահ տիրեց խորին լռություն. այդքա՛ն ծանր պայման ոչ ոք չէր սպասում: Առանձնապես սաստիկ վրդովում առաջ բերեց Սուրմալուի պահանջը: Այդ նշանակում էր, որ տաճիկները չէին ուզում հաշտվել անկախ Հայաստանի գոյության հետ: Այդ նշանակում էր նույնպես, որ քաղաքացիական կռիվը կարող է թուրքերի համար առիթ ծառայել ներխուժելու Հայաստան...

Որքան և բուռն լինեին հետագա վիճաբանությունները, թուրքերի վերջնագիրը փաստորեն վճռեց խնդիրը. ժողովականների ճնշող մեծամասնությունը հանգեց այն եզրակացության, որ Լեգրանի վերջնագիրը պետք է ընդունվեր, բայց պետք է ընդունվեր նաև Քեազիմ Կարաբեքիրի վերջնագիրը: Այս վերջին քայլը համարվում էր անհրաժեշտ նրա համար, որ երկիրը զերծ մնա թրքական նոր արշավանքից, որովհետև եթե թրքական պայմանները մերժվեին, մինչև բոլշևիկների հասնելը՝ Երևանը կը գրավվեր ասկյարների կողմից:

Մենք շատ լավ գիտակցում էինք, որ ընդունել Քեազիմ Կարաբեքիրի վերջնագիրը, կը նշանակեր ապագային, անհուն նվաստացումների ենթարկել մեր կուսակցությունը և սուր զենք տալ հակառակորդների ձեռքը: Լեգրանի առաջարկն ընդունելուց հետո մենք կարող էինք մի գեղեցիկ ժեստով հետ մղել թրքական պահանջները, որով յետին աստիճանի ծանր դրության մեջ դրած կը լինեինք բոլշևիկներին, որոնք, կասկած չկա, ստիպված պիտի լինեին տեղի տալ իրենց դաշնակից թուրքերի առջև: Բայց մեր այդ քայլից կը տուժեր հայ ժողովուրդը: Ալեքսանդրապոլի դաշնագիրը ստորագրելով՝ մենք փրկեցինք ժողովուրդը նոր փորձություններից, թեև դրանով ուժեղ հարված հասցրինք մեր վարկին»[1]:

Ժողովում մշակվեցին այն սկզբունքները, որոնցով պետք է տեղի ունենար իշխանության փոխանցումը: Որոշվում է նաև Դրոյին ու Հ. Տերտերյանին առաջարկել, առանց ուշացնելու, կուսակցության ու կառավարության կողմից բանակցությունների մեջ մտնել Լեգրանի հետ: Ժողովը տևում է գրեթե մինչև լուսաբաց: Դրոն և Տերտերյանն անցնում են իրենց պարտականությունների կատարմանը: Դեկտեմբերի 1-ին, ամբողջ օրը տեղի էին ունենում բանակցություններ[2]:

Նոյեմբերի 29-ին, երբ Լեգրանը Վրացյանին բանավոր շարա-

---

[1] **Ս. Վրացյան**, Կյանքի ուղիներով, Ե հատոր, Բեյրութ, 1966, էջ 194-196:
[2] Նույն տեղում:

դրեց իր առաջարկը, վերջինս պահանջեց այդ «վերջնագիրը» ներկայացնել գրավոր: Դեկտեմբերի 1-ին, առավոտյան, Լեգրանը Վրացյանին է ներկայացնում հետևյալ գրությունը. «Վկայակոչելով երեկ Հայաստանի ռազմական նախարար Դրոյի ներկայությամբ Ձեզ հետ ունեցած խոսակցությունը, նկատի ունենալով ՌԿԿ Կենտկոմի ընդունած որոշումը՝ Հայաստանի անկախ հանրապետության ժամանակավոր Ռազմահեղափոխական կոմիտե ստեղծելու մասին, հաստատում եմ Հայաստանում խորհրդային իշխանության ստեղծման հարցի մասին Հայաստանի ներկա կառավարության վերաբերմունքը պարզելու անհրաժեշտությունը»[1]:

Բանակցություններն սկսվում են Լեգրանի սույն փաստաթուղթը Վրացյանին հանձնելուց հետո:

Դեկտեմբերի 1-ին, երեկոյան, երբ բանակցություններն ընթացքի մեջ էին, խորհրդարանի շենքում տեղի է ունենում դաշնակցական ֆրակցիայի նիստը, որի մասին Վրացյանը պատմում է. «Էլեկտրականությունը մարած էր, և մոմի աղոտ լույսի տակ ֆրակցիայի ընդարձակ սենյակը՝ լի պատգամավորներով և կուսակցական պատասխանատու գործիչներով՝ խորհրդավոր կերպարանք էր ընդունել: Կառավարության և Բյուրոյի ներկայացուցիչների զեկուցումներից հետո, գրեթե նույնությամբ, կրկնվեցին նախորդ օրվա վիճաբանությունները, բայց այս անգամ ավելի թույլ էին հնչում կռվի կողմնակիցների հորդորները:

Քվեարկության արդյունքը եղավ. - 7 քվե Լեգրանի առաջարկի դեմ, 22 քվե՝ թեր...

Մինչ տեղի էին ունենում այս վիճաբանություններն ու խորհրդակցությունները, Դրոն ու Հ. Տերտերյանը, ինչպես տեսանք, բանակցում էին Լեգրանի հետ, և դեկտեմբերի 2-ի կեսօրին համաձայնագրի նախագիծն արդեն պատրաստ էր: Կառավարությունը քննեց այդ նախագիծը և որոշ փոփոխություններով հաստատեց»[2]:

Նշենք, որ պաշտոնական բանակցությունները սկսելուց հետո, դեկտեմբերի 1-ին, երեկոյան 8.30-ին Դրոն հեռագրում է Սեպուհին. «Բոլշևիկյան զորքերի հետագա առաջխաղացման դեպքում հրամայում եմ դիմադրություն ցույց չտալ»[3]: Նույն օրը երեկոյան, հարցերի կարգավորման համար, Դիլիջան է մեկնում Լեգրանի

---

[1] Հայաստանի Հանրապետության պատմության կենտրոնական պետական արխիվ (ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 352:

[2] **Ս. Վրացյան**, Կյանքի ուղիներով, Ե հատոր, էջ 200-202:

[3] РГАСПИ, ф. 85, оп. 14, д. 35, л. 14-15.

ռազմական խորհրդական Բոբրիշչևը:

Դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչները և Լեգրանը ստորագրում են «Համաձայնագիր ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցչության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև» փաստաթուղթը՝ հետևյալ բովանդակությամբ.

«2 դեկտ. 1920 թ., մի կողմից ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ ընկ. Լեգրանը ՌԿԿԿԿ-ի լիազորությամբ, ի դիմաց Ռուսաստանի խորհրդային կառավարության, և մյուս կողմից ընկերներ Դրոն և Տերտերյանը ի դիմաց Հայաստանի Հանրապետության կառավարության՝ կնքեցին համաձայնություն հետևյալի մասին.–

1.– Հայաստանը հայտարարվում է անկախ սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն:

2.– Մինչև Հայաստանի խորհուրդների համագումարի հրավիրումը, կազմվում է ժամանակավոր ռազմահեղափոխական կոմիտե, որին կանցնի բովանդակ իշխանությունը Հայաստանում:

3.– Ռուսաստանի խորհրդային կառավարությունը ընդունում է, որ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության հողերի մեջ անվիճելի կերպով մտնում են՝ Երևանի նահանգը իր բոլոր գավառներով, Կարսի նահանգի մի մասը, որ զինվորական տեսակետից կապահովի երկաթուղու տիրապետությունը՝ Ջաջուռ կայարանից Արաքս կայարանը, Գանձակ նահանգի Զանգեզուր գավառը և Ղազախ գավառի մի մասը օգոստոս 10-ի համաձայնության սահմաններում, և Թիֆլիս նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետության տակ էին գտնվում մինչև 1920 թ. սեպտ. 28-ը:

4.– Հայկական բանակի հրամանատարական կազմը չի ենթարկվում պատասխանատվության այն գործերի համար, որ կատարել է բանակի շարքերում մինչև Հայաստանում խորհրդային իշխանության հայտարարումը:

5.– Դաշնակցության և ուրիշ սոցիալիստական կուսակցությունների (ՍՑ, ՍԴ) անդամները ոչ մի հալածանքի չպիտի ենթարկվեն կուսակցության պատկանելու և Կոմունիստական կուսակցության դեմ մղված կռիվներին մասնակցելու ու Խորհրդային Հայաստանի հայտարարությունից առաջ կատարված գործերի համար:

6.– Ռազմահեղափոխական կոմիտեի մեջ մտնում են հինգ անդամներ Կոմունիստական կուսակցության կողմից նշանակված և երկու անդամ ձախ դաշնակցականների խմբակից՝ համա-

ձայնելով Կոմունիստական կուսակցության հետ:

7.– Ռուսաստանի խորհրդային կառավարությունը միջոցներ է ձեռք առնում անմիջապես կենտրոնացնելու Հայաստանի Սոցիալիստական Խորհրդ. Հանրապետության պաշտպանության համար անհրաժեշտ զինվորական ուժեր:

8.– Սույն համաձայնագիրը ստորագրվելուց հետո Հայաստանի Հանրապետության կառավարությունը քաշվում է իշխանությունից: Իշխանությունը ժամանակավոր կերպով, մինչև Հեղափոխական Կոմիտեի գալը, անցնում է զորահրամանատարության, որի գլուխն է կանգնում Դրոն: ՌՍՖՍՀ կողմից Հայաստանի զորահրամանատարության կից կոմիսար է նշանակվում ընկ. Սիլինը:

Պատրաստված է երկու օրինակ:

ՌՍՖՍՀ, լիազոր ներկայացուցիչ՝ Լեգրան:

Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությամբ՝ Դրո և Տերտերյան»[1]:

Այդ բանակցությունների ժամանակ, ինչպես գրում է Վրացյանը, որոշվում է իշխանությունը դեկտեմբերի 2-ին գիշերվա ժամը 12-ին հանձնել Դրոյին, որը խորհրդական ունենալով Սիլինին, պետք է ղեկավարեր երկիրը, մինչև Հայհեղկոմի ժամանումը[2]: Սակայն Վրացյանի կառավարությունն ավելի շուտ է վայր դնում իր լիազորությունները: Հակոբ Տեր-Հակոբյանն այդ մասին գրում է. «Համաձայնությունը ստորագրելու պայմանաժամ տրված էր մինչև դեկտեմբերի 2-ը, գիշերվա ժամը 12-ը, երբ Վրացյանի դահլիճը տեղի պիտի տար և իշխանությունը Դրոյին և Սիլինին պիտի հանձնվեր: Սակայն Լեգրան պատրվակելով, թե շատեր կուզեն փախչիլ, պայմանաժամը կը կրճատե և փոխանակ դեկտեմբերի 2, գիշերվան ժամը 12-ին, կը վերածե դեկտեմբերի 2 կեսօրե ետք ժամը 4-ին»[3]:

Դեկտեմբերի 2-ի համաձայնագիրը կարիք ունի որոշ պարզաբանումների:

1. Չնայած Մոսկվան ամեն կերպ ցանկանում էր խուսափել Հայաստանի խորհրդայնացման ակտը իրեն վերագրելուց, Լեգրանն, այնուամենայնիվ, պաշտոնապես Վրացյանի կառավարությանը հայտնում է, որ ՌԿ(բ)Կ Կենտկոմը որոշել է խորհրդայ-

---

[1] **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, էջ 501-502:

[2] Նույն տեղում, էջ 502-503:

[3] **Հ. Տեր-Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 124-125:

նացնել Հայաստանը և պահանջում է վերաբերմունք ցույց տալ: Այն պայմաններում, երբ ռուսական զորքն արդեն գրավել էր Դիլիջանը, Լեգրանի փաստաթուղթը ստանում էր վերջնագրի նշանակություն: Հայոց պետականության ճակատագրի հարցը որոշված էր, Լեգրանը պարզապես ցանկանում էր իր այդ քայլով խուսափել ավելորդ արյունահեղությունից:

Միաժամանակ, ինչպես ցույց է տալիս Լեգրանի՝ նոյեմբերի 29-ին Վրացյանի հետ ունեցած խոսակցությունը, Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչն այդ ժամանակ, իրոք, տեղյակ չէր Հայհեղկոմի Հայաստան մտնելու մասին և հույս ուներ, որ իշխանության փոխանցումը կկատարվի առանց զինված ուժի, Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկով:

2. Հայաստանի կառավարությունը ձգձգում էր բանակցությունները Լեգրանի հետ, հույս ունենալով Ալեքսանդրապոլում ընդունելի պայմանագիր կնքել թուրքերի հետ և փրկել հայ պետականությունը կործանումից: Սակայն, ինչպես գրում է Վրացյանը, Խատիսյանի հեռագրով, որում շարադրված էին Կարաբեքիրի վերջնագրի ծանր պայմանները, ի դերևս եղան թուրքերի հետ կապված բոլոր հույսերն ու պատրանքները: Մնաց չարիքներից փոքրագույնը՝ Ռուսաստանը, որի հետ և անմիջապես կնքվեց վերը բերված համաձայնագիրը: Հայաստանի կառավարությունը փակուղուց դուրս գալու այլ ուղի և հնարավորություն չուներ, քան իշխանությունն առանց կռվի բոլշևիկներին հանձնելը:

3. Հայկական բանակը լիովին բարոյալքված էր և անմարտունակ, այն ծանր պարտություն կրեց թուրքերից և չէր ուզում ու չէր էլ կարող կռվել ռուսական զորքերի դեմ: Կռվի դեպքում պարտությունն անխուսափելի էր:

Միանգամայն իրատեսական դիրքերում էին գտնվում Հ. Քաջազնունին, Ռ. Տեր-Մինասյանը և Դրոն, ովքեր կարծում էին, որ պատերազմը բոլշևիկների դեմ աղետալի կլինի, հավանական է կստեղծվի երկու ճակատ, իսկ երկու ճակատի վրա Հայաստանն անկարող է կռվել, որ հայ զորքը «ի վիճակի չէ որևէ պատերազմ վարելու», որ «առհասարակ, հայ զորքը չի կռվի ռուս զորքի դեմ: Հետևաբար, կռվի ամեն կոչ ոչ այլ ինչ է, եթե ոչ աններելի մի արկածախնդրություն»:

Վերը շարադրված նյութերից ընթերցողն արդեն տեղյակ է, որ Կարաբեքիրը մի քանի գրություններով Ռուսաստանին առաջարկում էր զինված ուժերով օգնել խորհրդայնացնելու Հայաստանը: Երկու կարծիք չի կարող լինել, որ ռուսներին դիմադրու-

թյուն ցույց տալու դեպքում թուրքերն անպայման, նրանց օգնելու պատրվակով, կներխուժեին Հայաստան, որը հայ ժողովրդի համար կնշանակեր նոր զանգվածային կոտորածներ, գուցե և նոր եղեռն:

4. Լեգրանը դեկտեմբերի 2-ի համաձայնագրով Ռուսաստանի անունից Հայաստանի կառավարությանը տարածքային զիջումների առաջարկներ էր անում, որոնք ստեղծված չափազանց ծանր պայմաններում գրավիչ էին: Սակայն անհրաժեշտ է ընդգծել, որ Մոսկվան նման իրավասություններ Լեգրանին չէր տվել: Նրա տարածքային խոստումները կենտրոնի հետ համաձայնեցված չէին: Ուրեմն, համաձայնագրի տարածքային հարցերին վերաբերող կետը իրատեսական չէր և հետապնդում էր միայն մեկ նպատակ՝ Հայաստանի կառավարությանը համոզել առանց կռվի իշխանությունը հանձնել բոլշևիկներին:

5. Լեգրանի հետ կնքած համաձայնագրով Հայհեղկոմի կազմի մեջ մտնելու էին երկու ձախ դաշնակցականներ: Սակայն բոլորին էլ պարզ էր, որ ենթադրվող թեկնածուները՝ Դրոն և Տերտերյանը, ձախ դաշնակցության հետ որևէ առնչություն չունեին: Հայհեղկոմի մեջ պարզապես մտնելու էին երկու դաշնակցականներ:

Դաշնակցության ներսում գոյություն ուներ ձախ դաշնակցականների խմբակ, որը կապեր էր պահպանում բոլշևիկների, այդ թվում Լեգրանի հետ: Այդ խումբն ընդունում էր խորհրդային իրավակարգը և հարում էր 3-րդ ինտերնացիոնալին, պաշտպանում էր անկախ և միացյալ Հայաստանի պահանջը, իրեն համարում հեղափոխական սոցիալիզմի կողմնակից և այլն:

«Բոլշևիկների Երևան գալուց հետո,– գրում է Վրացյանը,– ոչ կոմունիստ տարրերից միայն «ձախ-Դաշնակցականներն» էին կարողանում ժողովներ գումարել, այդ պատճառով ընկերներից շատերը մտան անոնց շարքերը և աշխատեցին կազմակերպել և առողջ հունի մեջ դնել այդ հոսանքը: Ոմանք հավատում էին, որ բոլշևիկները կը վավերացնեն այդ խմբակը և իրավունք կտան ազատ գործելու, որով հնարավոր կլիներ ունենալ սեփական թերթ և վայելել լեգալ կուսակցության բոլոր առավելությունները: Լեգրանի հետ կնքված համաձայնությունն էլ անհրաժեշտ էր դարձնում այդ հոսանքի օգտագործումը»[1]:

Սակայն Հայհեղկոմը չօրինականացրեց ձախ դաշնակցականների գոյությունը:

---

[1] **Ս. Վրացյան**, Կյանքի ուղիներով, Ե հատոր, էջ 221:

Հայաստանի կառավարությունը դեկտեմբերի 2-ին, Լեգրանի հետ համաձայնագիրը ստորագրելուց հետո, հրաժարվում է իշխանությունից: Այդ մասին ընդունվում է պաշտոնական փաստաթուղթ հետևյալ բովանդակությամբ.

«ԱԿՏ

Ի նկատի ունենալով արտաքին հանգամանքների շնորհիվ երկրում ստեղծված կացությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը իր 1920 թվի դեկտեմբերի 2-ի նիստում որոշեց՝ հրաժարվել իշխանությունից և հանձնել Զինվորական և Քաղաքացիական բովանդակ իշխանությունը զորաբանակի Ընդհանուր հրամանատարին, որպիսի պաշտոնում նշանակել Ռազմական նախարար Դրոյին:

Նախարարների խորհրդի նախագահ Ս. Վրացյան,

Նախարարներ՝ Ա. Հովհաննիսյան, Ա. Խոնդկարյան, Հ. Տերտերյան, Դ. Կանայան»[1]:

Հայաստանը խորհրդայնացավ: Մեծ տառապանքների գնով ձեռք բերված Հայաստանի անկախ Հանրապետությունը դադարեց գոյություն ունենալուց: Իշխանությունը ժամանակավորապես անցնում էր Դրոյին՝ մինչև Հայհեղկոմի ժամանումը:

Իշխանությունից հրաժարվելու «Ակտը» Վրացյանը դեկտեմբերի 2-ին ուղարկում է Դիլիջան՝ Հայհեղկոմին[2]:

Վրացյանը, միաժամանակ, գրություններ է ուղարկում Հայաստանի Հանրապետության արտասահմանյան բոլոր ներկայացուցչություններին՝ հայտնելով Լեգրանի հետ համաձայնագրի կնքման, այդ համաձայնագրի պայմանների և իշխանությունից հօգուտ բոլշևիկների հրաժարվելու մասին: Այդ գրություններում Վրացյանը հատկապես ընդգծում է այն, որ «միջոցներ են ձեռք առնվել քաղաքացիական կռիվները կանխելու համար: Երկրի վիճակը նորմալ է, Երևանում հանգիստ է: Մեր որոշումն է՝ աջակցել նոր իշխանությանը»[3]:

Ստանձնելով իշխանությունը, զինվորական հրամանատարությունը դեկտեմբերի 2-ին արձակում է թիվ մեկ հրամանը, որում ասվում է. «Հայաստանի բոլոր պետական հիմնարկությունները, պաշտոնական անձինք և քաղաքացիները պարտավոր են անհապաղորեն կատարելու ռազմական հրամանատա-

---

[1] Նույն տեղում, էջ 201:

[2] РГАСПИ, ф. 85, оп. 14, д. 35, л. 14.

[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 625, թ. 46:

ության հրամանները: Հրամանատարության կարգադրություններին դեմ գնացողները ենթարկվում են անմիջական պատասխանատվության հեղափոխական ժամանակի օրենքներով:

Ռազմական ուժերի հրամանատար՝ Դրոն

ՌՍՖԽՀ կոմիսար՝ Սիլին»:

Այս հրամանն ուղարկվում է Փարիզ, Վաշինգտոն, Պոլիս և այլ քաղաքներ՝ Հայաստանի Հանրապետության ներկայացուցչություններին[1]:

Դեկտեմբերի 2-ին, ժամը 9.20-ին, Դրոն Հայաստանի սահմանապահ զորքերին հրամայում է.

«Հրամայում եմ Ձեզ մտնել նախկին Դիլիջան-Ղարաքիլիսա ջոկատի հրամանատարության տակ և բանագնաց ուղարկել խորհրդային հրամանատարության մոտ, հայտնելով, որ Հայաստանում հաստատվել են խորհրդային կարգեր, այդ պատճառով էլ հայկական կարմիր զորքերը հետ այսու Խորհրդային Ռուսաստանի բանակի դաշնակիցներն են: Գործնականում ազնիվ շփումներ հաստատեցեք խորհրդային զորքերի հրամանատարության հետ»[2]:

Ճանապարհը բաց էր: Հաղթանակեց Լեգրանի մարտավարությունը: Հեղկոմը և նրան ուղեկցող կարմիր բանակի զորամասերը դեկտեմբերի 3-ի առավոտյան շարժվեցին դեպի Երևան:

Կատարելով իր վրա դրված պարտականությունները, դեկտեմբերի 2-ին, ստորագրելով համաձայնագիրը, Լեգրանը նույն օրը Օրջոնիկիձեին հեռագրով հայտնում է համաձայնագրի բովանդակությունը.

«Հայաստանում հռչակված է խորհրդային իշխանություն, կառավարությունը վայր է դրել իր լիազորությունները, մինչև Հեղկոմի ժամանումը ամբողջ իշխանությունը մեր կողմից հանձնված է ռազմական հրամանատարությանը՝ Դրոյի գլխավորությամբ, նրան կից որպես կոմիսար է նշանակված մեր ընկեր Սիլինը: Հեղկոմի ժամանումը կարելի է սպասել 3-ին»[3]:

Այնուհետև հեռագրում կետ առ կետ շարադրվում է Համաձայնագրի բովանդակությունը: Նկատի ունենալով տարածքային հարցերի բարդությունը, Լեգրանը հատուկ ընդգծում է. «ՌՍՖՍՀ-ի կառավարության անունից հայտարարել եմ, որ այսուհետև Ռուսաստանը Խորհրդային Հայաստանի անվիճելի մասեր է ճա-

---

[1] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 14, թ. 3:

[2] РГАСПИ, ф. 85, оп. 14, д. 35, л. 17-18.

[3] Նույն տեղում, գ. 33, թ. 16:

նաչում Երևանի նահանգը, Կարսի մարզի մի մասը, Զանգեզուրի զավառը, Ղազախի գավառի մի մասը և Թիֆլիսի նահանգի մի մասը»[1]:

Օրջոնիկիձեն բավարարված էր. Հայաստանի նվաճման նրա ծրագիրն իրականացավ: Նույն օրը նա Լենինին և Ստալինին հեռագրում է. «Հենց նոր Երևանից հաղորդում է ստացվել, որ Երևանում հռչակվել է խորհրդային իշխանություն, հին կառավարությունը հեռացվել է, ամբողջ իշխանությունը ժամանակավորապես, մինչև Հեղկոմի ժամանումը, հանձնվել է ռազմական նախարարությանը՝ Դրոյի գլխավորությամբ, Հայաստանի զինվորական կոմիսար է նշանակված Սիլինը: Զորքերին հրաման է տրված Հեղկոմի տրամադրության տակ նրանց անցնելու մասին: Հեղկոմը ներկայումս Դիլիջանում է, վաղն առավոտյան կմեկնի Երևան: Հեղկոմը ողջույնի հեռագիր է ստացել թուրքական ճակատի հրամանատար Կարաբեքիրից և Թուրքիայի ներկայացուցիչ Քյազիմ Բեյից: Հեղկոմը Երևանի ճանապարհին է: Այսօր Ալեքսանդրապոլից ժամանած ընկերը հայտնում է, որ քեմալական զորքերի տրամադրությունը մեր նկատմամբ չափազանց բարեկամական է, զորքերը կրում են կարմիր կրծքանշաններ և իրենց համարում են կարմիր բանակայիններ: Ադրբեջանն արդեն երեկ հռչակել է Նախիջևանի, Զանգեզուրի և Լեռնային Ղարաբաղի հանձնումը Խորհրդային Հայաստանին»[2]:

Օրջոնիկիձեն հասկանում էր, որ Հայաստանի խորհրդայնացման մասին պետք է տեղյակ պահի նաև Չիչերինին: Նա դեկտեմբերի 2-ին հեռագրում է Լենինին և Չիչերինին. «Հենց նոր Երևանից ստացվեց հաղորդում. հին կառավարությունը տապալված է, ամբողջ իշխանությունը, մինչև Հեղկոմի ժամանումը, հանձնված է զինվորական հրամանատարությանը: Հեղկոմը այժմ Դիլիջանում է:

Եվ այսպես, էլի մեկ հանրապետություն (ընդգծումը մերն է – Լ. Խ.): Կեցցե Հայաստանի Սովետական Հանրապետությունը»[3]:

Հայտնելով այդ բոլորի մասին, Օրջոնիկիձեն միաժամանակ խնդրում է.

«1. Պաշտոնապես մեզ թույլատրել Հեղկոմի խնդրանքով Հայաստան մտցնել զինվորական մասեր...

---

[1] **Ս. Ս. Ալիխանյան**, Սովետական Ռուսաստանի դերը..., էջ 206:
[2] **Г. К. Орджоникидзе**, Статьи и речи, т. 1, с. 142.
[3] **Ս. Ս. Ալիխանյան**, Գ. Կ. Օրջոնիկիձեն և .... էջ 53-54:

2. Հենց այսօր Լենինի ստորագրությամբ Հեղկոմի անունով ուղարկել ողջույն»[1]:

Մոսկվան գոհ էր: Ամեն ինչ ընթանում էր նախանշված հունով: Նվաճվեց «Էլի մեկ հանրապետություն»: Բոլշևիկները մեծապետական ձևով լուծում էին ազգային հարցը: Գրեթե վերականգնվում էր ռուսական կայսրությունը՝ բոլշևիկների ղեկավարությամբ:

Նման պայմաններում Հայաստանին արված տարածքային խոստումների մասին Լեգրանի հաղորդումը չհանդիպեց Մոսկվայի դիմադրությանը: Ի վերջո, թե՛ Լեգրանի կնքած համաձայնագիրը, թե՛ Բաքվի հռչակագիրը մարտավարական նշանակություն ունեին:

Դեկտեմբերի 2-ին Երևանում ստացվում է Լենինի՝ Հայհեղկոմին հղված ողջույնի հեռագիրը, որում ասվում էր. «Հանձին ձեզ ողջունում եմ իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Սովետական Հայաստանին: Ձեմ կասկածում, որ դուք կգործադրեք բոլոր ջանքերը՝ Հայաստանի, Թուրքիայի, Ադրբեջանի աշխատավորների միջև եղբայրական համերաշխություն հաստատելու համար»[2]:

Բզկտելով և մասնատելով Հայաստանը, նվաճողներն այժմ մեծահոգաբար զոհին առաջարկում էին «եղբայրական համերաշխություն»:

Դեկտեմբերի 3-ին Օրջոնիկիձեն Ստալինից ստանում է իր առաջին խնդրանքի պատասխանը: Ստալինը Քաղբյուրոյի հանձնարարությամբ նրան տալիս է հետևյալ հրահանգները.

«Մեծ զգուշությամբ մասնակի զորք մտցնելը թույլատրում ենք: Զորքերը պետք է մտցվեն ռազմաճակատի կամ կուսակցության կարգադրությամբ, ռազմաճակատի կամ կուսակցության անունից, բայց ոչ կառավարության:

Պահպանիր մեծ զգուշություն, ոչ մի հապճեպ քայլ թույլ չտաս: Արկածախնդիրներին ազատություն չտաս: Մեզ պատերազմի մեջ ներքաշվել չի կարելի: Մտածիր Հայաստանի նյութական ապահովության մասին, այնտեղ ավելի շատ կոմունիստներ ուղարկիր:

Գործերի ընթացքի մասին պարտադիր կերպով հաղորդիր ամեն օր: Մենք կարծում ենք, որ դու ոչ մի օր չպետք է բացակայես: Պահը շատ կարևոր է, և քո ներկայությունը Բաքվում ան-

---

[1] Նույն տեղում:

[2] **Վ. Ի. Լենին**, ԵԼԺ, հատ. 42, էջ 65:

հրաժեշտ է: Հանդերձանքի առաքման և Էլիավայի մասին կհայտնեմ վաղը»[1]:

Օրջոնիկիձեն Ստալինին պատասխանում է.

«Ամեն ինչ կարվի: Ընկ.ընկ. Միխայլովը և Գեկկերը այսօր գիշերը մեկնում են Ղազախի շրջան և ավելի հեռու: Ի՞նչ կասես այդ մասին: Ես նրանց հետ կապը չեմ կորցնի, իսկ տեղում նրանք կկողմնորոշվեն: Մոսկվայի և Ռուսաստանի այլ քաղաքներից բոլոր կոմունիստ հայերին քշեք»[2]:

Այսպիսով, Մոսկվան միայն դեկտեմբերի 3-ին է Օրջոնիկիձեին հրահանգում՝ առանց պաշտոնական թույլտվության, մասնակի քանակով զորք մտցնել Հայաստան և դա այն դեպքում, երբ կարմիր բանակի զորամասերը Դիլիջանից շարժվել էին դեպի Սեմյոնովկա:

Լեգրանը դեկտեմբերի 2-ին ուղիղ գծով խոսակցություն է ունենում Դիլիջանում գտնվող Կասյանի և Նուրիջանյանի հետ, շտապեցնելով Հեղկոմի ժամանումը Երևան: Պարզվում է, որ Հեղկոմի ոչ բոլոր անդամներն են հասցրել ժամանել Դիլիջան: Լեգրանը Հեղկոմին խորհուրդ է տալիս շտապ մեկնել Երևան[3]:

Մինչ այդ Լեգրանը Հայհեղկոմին էր ուղարկել հետևյալ հեռագիրը. «Հայաստանում հռչակված է խորհրդային իշխանություն: Կառավարությունը հեռացված է, մինչև Հեղկոմի ժամանումը ամբողջ իշխանությունը ժամանակավորապես անցել է ռազմական հրամանատարությանը՝ Դրոյի գլխավորությամբ, ***որը դրված է մեր կողմից*** (ընդգծումը մերն է – Լ. Խ.), կոմիսար է նշանակված Սիլինը»[4]: Այս հեռագրում կարևորը Լեգրանի հաղորդումն է այն մասին, որ Դրոն նշանակված է իրենց կողմից:

Դեկտեմբերի 2-ին, օրվա վերջին, Լեգրանը նորից է ուղիղ գծով խոսակցություն ունենում դեռևս Դիլիջանում գտնվող Կասյանի հետ: Տեղի է ունենում առաջին ընդհարումը: Հայհեղկոմը Բաքվից գալիս էր Հայաստան՝ Օրջոնիկիձեի կողմից հրահանգավորված: Առաջին հերթին, բնականաբար, պետք է չեղյալ հայտարարվեր Լեգրանի կնքած համաձայնագիրը: Նման դեպքում Ռուսաստանը մեխանիկորեն իր վրայից գցում էր Լեգրանի կողմից Հայաստանին տարածքային զիջումներ անելու խոստումների կատարման պարտավորությունը: Հեղկոմը նաև չէր ցանկանում կա-

---

[1] РГАСПИ, ф. 558, оп. 1, д. 3313, л. 4-5.

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, ֆ. 64, ց. 1, գ. 21, թ. 300-301:

[4] Նույն տեղում, ֆ. 85, ց. 14, գ. 34, թ. 6 և հակառակ երեսը:

ռավարության մեջ մտցնել Դրոյին և Տերտերյանին: Նա հատկապես ցանկանում էր ազատվել Դրոյից:

Խոսակցության սկզբում Լեգրանը հայտնում է, որ Դրոյի կողմից ոչ մի բարդություն չի ստեղծվի, որ նա գործում է Սիլինի հետ լիովին համաձայնեցված ծրագրով: Նա Հեղկոմին խորհուրդ է տալիս հռչակագրով դիմել թուրքերին:

Ընթանում է բուռն բանավեճ, որը բերում ենք քաղվածաբար.

«***Կասյան***. Մենք կարծում ենք, որ ոչ թե Դրոն, այլ Հայհեղկոմն է Հայաստանը հռչակել անկախ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն: Հայաստանը խորհրդային հայտարարելով անվավեր է համարվում նաև Ձեր համաձայնագիրը Դրոյի հետ: Հռչակագիրը հիմա ուղարկում ենք Կարաբեքիրին: Մենք կմեկնենք այսօր կամ ավելի ճիշտ վաղն առավոտյան:

Լեգրան. Նկատի ունեցեք, որ մեզ հայտնի է, որ Հեղկոմը Հայաստանում հռչակել է խորհրդային իշխանություն, սակայն այդ բոլորովին չի փոխում գործի էությունը, ոչ ոք իրավունք չունի բեկանելու իմ կողմից ստորագրված համաձայնագիրը: Բացի դրանից, խնդրում եմ նկատի ունենալ, ՌԿԿ Կենտկոմի Կովբյուրոյի որոշմամբ Դրոն և Տերտերյանը մտել են Խորհրդային Հայաստանի Հեղկոմի կազմի մեջ: Ձեզ անհրաժեշտ է շտապ մեկնել այստեղ: Հաղորդեցեք ռազմական հրամանատարությանը, որ Կարաբեքիրը Մդիվանու միջոցով խնդրել է խուսափել ընդհարումներից և թյուրիմացություններից, որպեսզի կարմիր զորամասերը չանցնեն զինադադարով հայկական զորքերի համար նախատեսված սահմանները: Այդ մասին հայտնված է Օրջոնիկիձեին: Սպասում եմ Ձեր հաղորդմանը Երևան մեկնելու մասին, մեքենաները ուղարկվել են Ձեզ ընդառաջ: Առայժմ այսքանը»:

Լեգրանը զայրացած ցանկանում է դրանով էլ սահմանափակել իր խոսակցությունը: Կասյանն անմիջապես մեղմացնում է իր դիրքորոշումը, ասելով.

«Մի քիչ սպասեցեք: Այսօր առավոտյան կարմիր զորամասերը Բաքվից ստացած հրամանով շարժվել են Սեմյոնովկայի և Ղարաքիլիսայի ուղղությամբ, նրանց հե՞տ կանչենք»:

Լեգրանի փոխարեն նրա հետ խոսակցությունը շարունակում է Շիֆֆերսը.

«Ապարատի մոտ Լեգրանի անձնական քարտուղար Շիֆֆերսն է, ընկ. Լեգրանը Ձեզ հաղորդում է. մինչև Օրջոնիկիձեից որոշակի ցուցումներ ստանալը՝ զինադադարի գիծն անցնել խոր-

հուրդ չեմ տալիս»[1]:

Դեկտեմբերի 2-ին, ավելի ուշ, Նուրիջանյանը ուղիղ գծով խոսակցություն է ունենում Օրջոնիկիձեի հետ՝ բողոքելով Լեգրանից: Նա Օրջոնիկիձեին հարցնում է, թե ինչպես վարվեն հաջորդ առավոտյան առանց զորամասերի Երևան մեկնելու վերաբերյալ Հեղկոմին արած Լեգրանի առաջարկի հետ:

Օրջոնիկիձեն պատասխանում է. «Ձեզ հետ վերցրեք Կուռիշկոյի երկու հեծելազորային գնդերը, դիվիզիայի կոմիսարին և հայկական գունդը»:

Դրոյին քաղաքական ասպարեզից հեռացնելու հարցում Օրջոնիկիձեն դեռ չէր շտապում: Նա այդ մասին Նուրիջանյանին պատասխանում է. «Դրոյին դեռ պետք է պահել: Միգուցե կարող է պատահել, որ ամբողջովին մերը դառնա: Ամեն դեպքում Եվրոպայի առջև դա մեծ կռվան է: Նրան այնտեղ գիտեն»[2]:

Բայց, մի քանի օր հետո, Հայհեղկոմի և թուրքերի ճնշման տակ Օրջոնիկիձեն հրաժարվում է այդ տեսակետից և առաջարկում Դրոյին հեռացնել քաղաքական ասպարեզից:

Այսպիսով, քեմալական և բոլշևիկյան զորքերի Հայաստանի վրա կազմակերպած միաժամանակյա հարձակման արդյունքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը հարկադրված էր հրաժարական տալ, վայր դնել իր լիազորությունները և իշխանությունը հանձնել չարյաց փոքրագույնին՝ Խորհրդային Ռուսաստանին:

Հայհեղկոմը ռուսական զորքերի ուղեկցությամբ դեկտեմբերի 4-ին ժամանեց Երևան*:

---

[1] Նույն տեղում, ֆ. 64, ց. 1, գ. 21, թ. 302-303:

[2] Նույն տեղում, ֆ. 85, ց. 14, գ. 34, թ. 9:

* Այստեղ Լենդրուշ Խուրշուդյանի սույն աշխատության շարադրանքը ընդհատվում է – խմբ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ 3
ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ 4
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ 6
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ 36
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ 60
1 Ռուս-հայկական բանակցությունները Մոսկվայում (1920 թ. մայիս-հուլիս) 60
2 Ռուս-հայկական բանակցությունները Թիֆլիսում 107
3 Ռուս-թուրքական բանակցությունները Մոսկվայում. Բեքիր Սամի բեյի պատվիրակությունը 130
4 Տրանզիտի հարցը Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա հարաբերություններում 152
ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ. ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ԽՄԲԻ ՎԵՐՋԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ 174
1 Կոմունիստական Ինտերնացիոնալը Հայաստանը Թուրքիային զոհաբերելու դիրքերում 174
2 Հայաստանի կոմունիստական կուսակցությունը հինգերորդ շարասյան դերում 182
ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ 192
1 Պատերազմի առաջին փուլը 192
2 Հայ-ռուսական բանակցությունները Երևանում. պայմանագրի հոկտեմբերի 28-ի նախագիծը 224
3 Պատերազմի երկրորդ փուլը. հայկական բանակի պարտությունը 243
ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ 256
1 Հայաստանի նվաճման ռուս-թուրքական դիվանագիտական պայքարի վերջին փուլը 256
2 Բանակցությունները Երևանում և Ալեքսանդրապոլում: Հայաստանի բռնի խորհրդայնացումը 284

ԼԵՆԴՐՈՒՇ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ 1920 ԹՎԱԿԱՆԻՆ

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հրատ. խմբագիր՝ Ա. Հովակիմյան, Վ. Դերձյանի
Համակարգչային շարվածքը և էջադրումը՝
Վ. Պապյանի, Կ. Չալաբյանի
Շապիկի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի

Տպագրված է «Արման Ասմանգուլյան» ԱՁ-ում:
ք. Երևան, Հր. Ներսիսյան 1/125

Ստորագրված է տպագրության՝ 21.12.2017:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 22 + 1 էջ ներդիր:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2017
publishing.ysu.am